


ԼՐԱԳՐՈՂԻ

ԱՅԴԻՆ ՄՈՐԻԿՅԱՆ

ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱ

ԻՆՉ
ԻՆՉՈՒ
ԻՆՉՊԵՍ



*Երկրորդ՝ բարեփոխված եւ լրանջակված
հրատարակություն*

ԵՐԵՎԱՆԻ
ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

Երևան 2008

ՀՏԴ 070
ԳՄԴ 76.1
Մ 921

Այդին Մորիկյան Ø 921
ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱ. ԻՆՉ. ԻՆՉՈՒ. ԻՆՉՊԵՍ
*Երկրորդ՝ բարեփոխված եւ լրամշակված
հրատարակություն*
- Եր.: «ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ» հ/կ,
2008.- ??? էջ

ISBN 99941-2-018-2

ԳՄԴ 76.1

Այդին Սորիկյանի «Ժուռնալիստիկա. ինչ. ինչպես. ինչու» գիրքը լրագրության համընդգրկուն ձեռնարկ ստեղծելու առաջին փորձն էր մեզանում, թեպետ հեղինակն ինքն այն ոչ դասագիրք, ոչ էլ ձեռնարկ էր համարում, այլ ընդամենը ուղեցույց նրանց համար, ովքեր կընտրեն դեպի լրագրություն տանող հեղինակի տեսած ուղին:

2006 թվականին հրատարակված գրքի 500 օրինակը շատ արագ սպառվեց. հատկապես ուսանողության շրջանում նման հրատարակության պահանջարկը շատ մեծ էր: Եվ այժմ ընթերցողներին է ներկայացվում գրքի երկրորդ՝ բարեփոխված եւ լրամշակված հրատարակությունը:

Գիրքն օգտակար կլինի ոչ միայն ուսանողների, այլև դասախոսների ու լրագրողների համար:

Գիրքը հրատարակվում է Երևանի մամուլի ակումբի՝
**«Ռեսուրսների զարգացում ազատ և որակյալ
լրատվամիջոցների համար»** ծրագրի շրջանակներում:

Ծրագիրն իրականացվում է Բաց հասարակության
ինստիտուտի ֆինանսական աջակցությամբ:

Խմբագիր՝ Սեսրոպ Զարությունյան
Համակարգչային ձեւավորումը եւ էջադրումը՝ Նարա Սենդեյանի
Ծրագրի ղեկավար՝ Բորիս Նավասարդյան



© Երևանի մամուլի ակումբ
2008

ԷԶԱՆԻՇ

Ծանոթագրութեան փոխարէն	7
ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ	
ԻՆՉԸ՝ ԻՆՉՊԵՍ, ԻՆՉՈՒ ԵՎ ԵՐԲ	15
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՍԿՍԿՈՒՄ Է	17
ԳՐԱԿՈՐ ՍԿԻՋԲ	22
ԵՐՐՈՐԴ ՈՒ ՎԵՐՋԻՆ ՍԿԻՋԲԸ. XV - XVI ԴԱՐԵՐ	36
ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՆԴԻՑ Ի ՎԵՐ XVII ԵՎ ՏՊԱԳԻՐ ՄԱՍՈՒԼԻ ԱՌԱՋԻՆ ԴԱՐԸ	46
ԴԱՐ XVIII. ԱՆՅԱՏԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՅԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ	61
ԴԱՐ XIX. ՊՐՈՖԵՍՈՆԱԼ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՍԿՋԲՆԱԿՈՐՈՒՄԸ	97
ԴԱՐ XX. ՄԵՉ ՀԱՅՏՆԻ ԵՎ ԱՆՀԱՅՏ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՆ	143
ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ ՀԱՅՈՑ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ	206
ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ	
ԻՆՉՈՒ	237
ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ «ՏԵՍԱԿՆԵՐԸ»	239
ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ	244
ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ	248
ԳՐԿԱԾ, ՉԳՐԿԱԾ, ԵՎ ԳՐՎԵԼԻՔ ՕՐԵՆՔՆԵՐ	263

ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԺԱՆՐԵՐԸ	267
ԺԱՆՐԵՐԻ ՌԱԴԻՈԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	323
ԺԱՆՐԵՐԻ ՀԵՌՈՒՄՏԱՏԵՍԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	325
ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ ԻՆՉՊԵՍ	329
ԻՆՔՆԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ	331
ԺՈՒՌՆԱԼԻՍՏԱԿԱՆ ՓԱՍՏ, ԴԻՏԱՆԿՅՈՒՆ, ՁԵՎ	339
ԳՐԱՎՈՐ ԵՎ ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	349
ԻՆՉԻՑ, ԻՆՉՊԵՍ ԵՎ ԻՆՉՈՒ Է ՍԿՍՎՈՒՄ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ	354
ԵՐԵՔԱԿԱՆ ԴԱՍ	358
ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ- ՀԵՏԱՁՆՏՈՒԹՅՈՒՆ-ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՉԱՓՕՐԻՆԱԿ	371
ԱՄԵՆՕՐՅԱ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ	381

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՐԵՆ

Ժուռնալիստական կրթությունը՝ տեսականորեն և գործնականում, իրականացվում է երեք հիմնական եղանակով. համալսարանական ընդհանուր կրթություն, մասնագիտական լրագրողական կրթություն (երբ ինչ-որ մասնագիտության տիրապետած ուսանողն է այնուհետև տիրապետում նաև լրագրության նրբություններին՝ դառնալով, հիմնականում, մեկնաբան-լրագրող՝ որոշակի մասնագիտացմամբ) և որպես զուտ ստեղծագործական մասնագիտություն՝ ստեղծագործական խմբի սկզբունքներով:

Չնսեմացնելով կրթական այդ համակարգերից և ոչ մեկը, նշենք, սակայն, որ դրանցից առավել արդյունավետն ու հուսալին երկրորդ տարբերակն է թվում, և ահա թե ինչու:

Ժուռնալիստիկան այն տեսական դիսցիպլիններից չէ, որին տիրապետելու համար անհրաժեշտ է համալսարանական կրթական համակարգի ամբողջական «կիրառումը»: Լրագրությունն իր թե պատմության և թե տեսության առումով հիմնվում է գործնականի վրա: Պրակտիկան է, որ հետո և պատմություն է դառնում, և տեսական ընդհանրացումների առարկա: Մինչդեռ համալսարանական կրթության դեպքում մասնագիտական որոշ դիսցիպլիններ պարզապես արհեստականորեն բարձրացվում են «տեսականի» մակարդակի, արհեստականորեն «զիտակաճացվում են»: Տխուր հետևանքներն ակնհայտ են:

Ստեղծագործական խումբն առաջին հայացքից կարող էր համարվել լրագրողական կրթության ամենարդյունավետ ձևը: Բայց միայն առաջին հայացքից: Որովհետև այդ պարագայում նվազագույնը մի այնպիսի եռամիասնություն է պահանջվում (անհրաժեշտ արդյունք ապահովելու նպատակով, իհարկե), որը խիստ հազվադեպ կարող է հանդիպել: Ստեղծագործական խմբի ղեկավարը, պետք է. 1. օժտված լինի մանկավարժ-հոգեբանի անուրանալի ձիրքով, 2. լրագրության ոչ միայն պրակտիկ «մասին» լավագույնս տիրապետի, այլև նրա պատմությանն ու տեսությամբ: Եվ, վերջապես, 3. վերը նշված երկու կարևորագույն հանգամանքներից զատ՝ «դասավարդ» ոչ միայն պետք է ունե-

նա պրակտիկ լրագրողի շնորհք, որպեսզի ի վիճակի լինի ուսանողներին ապացուցել իր սովորեցրածի և գործի միասնականությունը, այլև պետք է անցած լինի հիերարխիկ գոնե մի շարք աստիճաններով: Եթե այս ամենին հավելենք նաև, որ խիստ ցանկալի կլինի, որ մաստեր-կլասը վարողը լինի նաև գործող լրագրող, ապա միանգամայն ակնհայտ կդառնա, որ այդքան «երանի» մեկտեղ չի կարող կամ էլ խիստ հազվադեպ կարող է լինել:

Երկրորդ տարբերակը՝ մի շարք մասնագետների ներգրավմամբ, (պատմության, տեսության և պրակտիկայի առանձին մասնագետներ) կարող է իրապես ցանկալի ու ակնկալվող արդյունք տալ: Դա շատ ավելի դյուրին է կիրառել այսօր՝ բակալավրիատի և մագիստրատուրայի պայմաններում և մագիստրոսական երկու տարին լիովին բավարար է ոչ միայն որակյալ լրագրող-մեկնաբաններ, այլև թեմատիկ խիստ լայն ընդգրկում ունեցող պրոֆեսիոնալներ պատրաստելու համար: Պարզապես պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձվի ուսանող-ապագա լրագրողների ինտելեկտուալ լայն մտահորիզոնի, ինքնուրույն ու ինքնատիպ մտածելակերպի և ընդգրկում աշխարհայացքի ձևավորմանը, առանց որոնց որևէ ուսումնառություն չի հանգեցնի ակնկալվող արդյունքի: Որի իմաստն, ի վերջո, համաշխարհային տեղեկատվական ուղեծրից դուրս չմնալու հրամայականն է:

Գիրքը հենց այդ՝ երկրորդ սկզբունքի պահանջներն է հաշվի առել: Միաժամանակ այն ամենն էլ դասագրքի հավակնություն չունի և իր խորքում ուղեցույց է: Ճանապարհի ուղեցույց: Չեղիմակի ընտրած և տեսած ճանապարհի: Ընդամենը:

I.

Այն ամենը, ինչ այստեղ որպես մամուլի պատմություն է ներկայացվում, ոչ միայն ամենաարժեքավորն ու ամենաեականն է, այլև, ու ամենաառաջին հերթին, այն, ինչը նպաստել է մարդկության ողջ պատմության զարգացմանն ու առաջընթացին. երբեմն-երբեմն անգամ՝ որոշակիորեն պայմանավորելով այն: Ու նաև. զարգացման տրամաբանության պատմությունն է այս՝ մեկ աննշան բացառությամբ. հայոց մամուլի: Իսկ այն ամենը, ինչը եղել է և կամ էլ՝ առկա է, սակայն իր տեղն ու արտացոլումը չի գտել այս շարադրանքում՝ մեր կարծիքով, զարգացման, աճի

գործոն չի հանդիսացել և որևէ կերպ չի նպաստել ինչպես ոլորտի, այնպես էլ ընդհանուր պատմության թե ընթացքին, թե տրամաբանության ամբողջացմանը: Դրանք պարզապես անդրադարձային երևույթներ և իրողություններ են եղել՝ կոչված սպասարկելու տվյալ փոքրիկ տարածքն ու տվյալ ժամանակահատվածը միայն, ի տարբերություն զարգացման ինքնուրույն դրսևորումների, որոնք իրենց ետևից էլ են զարգացումներ բերել, որոշակիորեն պարտադրել են այդ զարգացումները կամ էլ, նվազագույնը, փորձել են ապահովել դրանք:

Գնահատականների կամ անգամ ձևակերպումների նույնականությունները, որոնք կարող են և հանդիպել պատմության շարադրանքում՝ կամ միտումնավոր են, կամ էլ ընդհանուր տրամաբանությունն է հանգեցրել որոշակի նույնականացման, որոնք, ի դեպ, քիչ չեն մաս մեզ համար որպես սկզբնաղբյուր հանդիսացած գրքերում:

Այս հրատարակությունը լրացված է մաս յուրաքանչյուր ժամանակահատվածի կամ տվյալ դարաշրջանին նախորդած կարևորագույն իրադարձությունների թվարկմամբ՝ բացառությամբ փոքր ու մեծ պատերազմների, քանի որ վերջիններս ոչ միայն հիշատակում, այլև պատճառահետևանքային լուրջ վերլուծություններ են ենթադրում, որոնց տեղը, սակայն, այստեղ չէ: Ընտրված բոլոր դեպքերը, դեմքերն ու երևույթները ևս բազմա-գործառույթ են:

II.

Տեսությունը, ինչպես և արդեն նշեցինք, պատմության հետ մեկտեղ՝ հիմնված է պրակտիկայի վրա: Չարժե, իհարկե, ընդհանրապես ժխտել նրա դերը, սակայն բացարձակացնել ևս անիմաստ է ու անօգուտ: Տեսական առումով մեր կարևորած բոլոր ասպեկտներն էլ ջանացել ենք առավելագույնս «մաքրել» կեղծ գիտականությունից և նշանակության ուռճացումներից՝ առավելապես կիրառական և գործնական նշանակություն հաղորդելով դրանց:

Ժուռնալիստիկայի ժանրերին անդրադառնալիս, օրինակ, խուսափել ենք ինչպես ժուռնալիստիկայի ռուսական դպրոցում արմատավորված «խոր գիտական ընդհանրացումներից և վերլուծություններից», այնպես էլ ամերիկյան դպրոցի «ժանրաժխտությունից», ընտրելով, մեր կարծիքով, առավել օպտիմալ ճանա-

պարիզ, որն էլ իր արտահայտությունն է գտել գլխի վերնագրում:

Որովհետև ժանրը՝ որոշակի, կայուն արտահայտչաձև է այնուամենայնիվ, ստեղծված ու ձևավորված դեռևս անհիշելի ժամանակներում, և չնայած այսօր ստացող իր նոր բովանդակությանն ու փոխներթափանցումներին, այն իրավամբ կոչում են նաև մշակույթի, ավանդույթների ամրագրված հիշողություն:

Որպես այդպիսին կարելի է հիշատակել բազմաթիվ այրապատկերներ և ժայռապատկերներ, որոնք էլ իրենց առանձնահատկություններն են փոխանցել ժանրային այսօրվա մեր պատկերացումներին (նկարներ 1-5): Արժե ուշադրություն դարձնել նաև աշխարհագրությանը, ու նաև՝ թե ում նախնիներն են դրանց հեղինակները. էսկիմոսներ, հայեր, իսպանացիներ, հյուսիսի այլ ժողովուրդներ...

Նկ.1



Ք. Շ. Ա. VIII - III հազարամյակ

Նկ. 2




Ք. Շ. Ա. III հազարամյակի վերջ
Հայաստան, Փոքր Պայտասար

Նկ. 3




Շիշկիհնո, Արևելյան Սիրիոյ. Վաղ քարե դար, մինչև VI հազարամյակ Ք. Շ. Ա.

Նկ. 4



Գատուլյա, Իսպանիա. Վաղ քարե դար, մինչև VI հազարամյակ Ք. Շ. Ա.



Կուեվա Դել Ագուա Ամարգա, Իսպանիա. Վաղ քարե դար, մինչև VI հազարամյակ Ք. Շ. Ա

Բերված օրինակները այսօր մեզ հայտնի ժանրերի նախատիպերն են նաև ու ապացուցում են, որ դեռևս անհիշելի ժամանակներից նարդ-արարածին անհրաժեշտ էր իր հղացած որոշակի միտքը անպայմանորեն որոշակի և հստակ ձևի մեջ դնել:

Առաջ ընկնելով նշեմ, որ կարելի է նշված պատկերների մասին հենց իրենց բնորոշ լրագրային ժանրով պատմելու հնարավորություն տալ ուսանողներին. կարծում եմ՝ խիստ հետաքրքիր և ուշագրավ դիտարկումներ կստացվեն:

Ի դեպ. հրապարակախոսությունը որպես առանձին ժանր չի դիտարկվել՝ ինչպես կհամոզվեք հետագայում, և մի պարզ պատճառով. կարծում ենք, որ որպես ինքնուրույն, անկախ և ինքնաբավ արտահայտչաձև՝ այն գոյություն չունի: Սկիզբ առնելով բանավոր տեսքով՝ որպես հռետորություն, այն գրավորի վերածվելիս զուգակցվել է տարբեր այլ արտահայտչաձևերի հետ և այսօր ոչ թե հրապարակախոսության կամ հրապարակագրության մասին է պետք խոսել, այլ ժանրի ներքին ուղղվածության՝ սկսած հողվածից, ակնարկից, էսսեից մինչև, անգամ՝ թղթակցություն կամ հարցազրույց (մանավանդ նրա մենախոսական տեսակը): «Հրապարակախոսություն» կարող է լինել անգամ ու նաև բանաստեղծությունը: Ջորջիանակ՝ Ադամ Միցկևիչի «Կուեիկների ողբը անկախության վրա» (1912) ստեղծագործությունը՝ Դովհաննես Թումանյանի թարգմանությամբ.

Գեղը գեղ չի՝ թե նման է մեր գեղին:
 Ցեղը ցեղ չի՝ թե նման է մեր ցեղին:
 Աստված էսպես, երբ որ պատիժ ուզեց մեզ՝
 Մեզնից հանեց առաջնորդներ սևերես.
 Գնան-բերեն օտարներին մեր աշխարհի,
 Որ չափեին մեր հանդերը ծաղկահաս,

Մեր հողերի պլանները հանեին,
Մեր սարերում սիպտակ բերդեր շինեին:
Մեր սարերում սիպտակ բերդեր շինեցին
Մեր հողերի պլանները հանեցին.
Հիմա բացվեն կոկոնները ծառերի՝
Պիտի տեսնի նոր գարունը մեզ գերի:

III.

Մեր Տեր Հիսուս Քրիստոսը ճշմարտությունները գերազան-
ցապես առակների ձևով էր մատուցում մահկանացուներին, և դա
բնավ էլ պատահական չէր: Ապրված-գիտակցված-իմաստավոր-
ված գիտելիքը (ինչպես լինում է առակը լսելու-հասկանալու-ըն-
կալելու ընթացքում) շատ ավելի խոր և հիմնավոր արմատներ է
ձգում մարդու մտքում և հոգում, քան պարզապես մատուցված
ճշմարտությունը, որն իմաստավորելու խնդիր ինքնին չի էլ առա-
ջանում, և, որպես հետևանք, շատ հնարավոր է, որ այդպես էլ
երբևէ քոնը չդառնա, քանի որ դու այն ընկալել կամ ընդունել ես
ոչ թե մտածելու, համադրելու, հակադրելու, վերլուծելու, միով
բանիվ՝ նաև քոնը դարձնելու ճանապարհով, այլ ուղղակիորեն՝
որպես մատուցված իրողություն. գրքի երրորդ մասը փորձ է՝
մտածել սովորեցնելու:

Որովհետև չկա լավ կամ վատ գրող: Կա լավ կամ վատ մտա-
ծող: Գրելը հենց վերջինի հետևանքն ու արդյունքն է: Եվ այդ մա-
սում, ինչպես նաև մնացյալ բոլոր բերված օրինակները մի քանի
գործառույթներ իրականացնելու են կոչված: Որոնցից առաջինը՝
մտածել տալն է: Երկրորդը՝ ճանապարհ ելնելու ցանկություն
առաջացնելը, որովհետև մինչև ճանապարհ չելնես՝ տեղ չես
հասնի: Եվ երրորդը՝ ինքնատիպ լինելը կամ դառնալը. երբեք
չվախենալով դրա դրսևորումներից, եթե, իհարկե, այն հիմնա-
վորված է ու գիտակցված: Քանզի այդ դեպքում է միայն, որ կա-
րող ես հաջողությամբ հասնել:

Իսկ ուսուցիչն էլ, կարծում եմ, նպատակ պետք է դարձնի սո-
վորել սովորեցնելը:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԻՆՉԸ՝ ԻՆՉՊԵՍ, ԻՆՉՈՒ ԵՎ ԵՐԲ

ԿԱՄ

ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ

ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՍԿՍՎՈՒՄ Է

Ժուռնալիստիկան, միանգամայն անարդարացիորեն, համարում են աշխարհի երկրորդ հնագույն մասնագիտությունը: Այն բնավ էլ երկրորդը չէ ու չի էլ կարող լինել: Առաջինն է: Դեռևս միայն այն պատճառով, որ այսօր աշխարհի առաջին հնագույն մասնագիտությունը համարվող մարմնավաճառությունը՝ որպես այդպիսին, կարող էր կայանալ միայն ու միայն դրա մասին պատմող կամ այն լուսաբանող ու, ինչու ոչ, նաև՝ գովազդող տեղեկությունների տարածման արդյունքում լոկ:

Տեղեկությունների փոխանցումը կամ տարածումը որոշակի շրջանակներում մարդկային զարգացման ամենակարևոր խթաններից ու նախապայմաններից է: Քանզի որքան այսօր է տեղեկությունը ամենաթանկարժեք կապիտալը, այնպես էլ եղել է դարեր ու հազարամյակներ առաջ և շարունակ: Այն ժամանակ գուցե թե՛ առավել թանկ, քանզի այդ ժամանակներում տեղեկությունները լուծել են նաև մահու և կենաց խնդիրներ, ի տարբերություն, ենթադրենք, մեր օրերի, երբ վերջիններս սոսկ կամ առավելագույնը որակական նոր մակարդակների կամ աստիճանների խնդիրներ են լուծում:

Ամեն ինչ սկսվել է պատի թերթերից: Բառի բուն իմաստով: Որովհետև բոլոր այն ժայռապատկերներն ու այրապատկերները, որոնք անհիշելի ժամանակներից պահպանվել են մինչև մեր օրերը և որոշակի տեղեկություններ են պարունակում, «պատի թերթեր» են՝ նախատեսված որոշակի, ամփոփ, սակայն, մատուցվող տեղեկությունների տեսակետից, շահագրգիռ և դրանց անհրաժեշտությունը զգացող հանրույթի համար:

Արդեն իսկ որոշակի «մեջբերումներ» արել ենք նույն այդ «պատի թերթերից». նմանությամբ հանդերձ, բերված պատկերներից ակնհայտ է, թե դրանք միմյանցից ինչով, ինչպես և ինչու են տարբերվում: Նկատի ունենք ասելիքը, ընդգրկումն ու կառուցվածքը:

Բերված այրապատկերներն ու ժայռապատկերները մանրամասն մեկնաբանությունների կարիք չունեն, որովհետև այն տեղեկությունները, որոնք պատկերված են՝ առավել քան ակնհայտ են:


Սկսվելով որպես տեղեկատվական գործընթաց՝ «պատի թերթերը»՝ իրենց բոլոր տարատեսակներով հանդերձ, միայն ժամա-

Մակի ընթացքում են սպառել իրենց տեղեկատվական գործառույթները, դրանք փոխանցելով բանավոր շփումների կամ գրավոր տեքստերի փոխանակումների (գրի, պատկերների կամ հիերոգլիֆների տեսքով) ուրուտին և ապա միայն սկսել փոխակերպել ավելի հոգևորի ու գեղարվեստականի:

Այրապատկերներն ու ժայռապատկերները իսկապես «պատի թերթեր» են՝ թե իրենց ձևով ու բովանդակությամբ, թե հետապնդած նպատակներով, թե ակնկալող կամ էլ առկա արդյունքներով:

Այլապես ստորև բերվող ժայռապատկերը որևէ բացատրություն չէր ունենա բնավ. ընդհակառակը՝ «հեղինակին» կարելի էր մեղադրել իր անհեթեթ գեղարվեստական փորձերի մեջ, նաև՝ անհետևողականության, միջնդեռ հեղինակը պարզ մի հայտարարություն է տվել ընդամենը. առ այն, որ որսի ժամանակ սպանված 30-31 կուղբերը պատրաստ է փոխանակել մեկ ցուլի, մեկ ծովասամույրի և մեկ ոչխարի հետ: Եվ հենց այդ պատճառով էլ չի նկարել բոլոր կուղբերին, այլ մեկին միայն պատկերելով՝ հասկացրել է մյուսների ինչ լինելը: Բացի այդ. այս հայտարարությունից ակնհայտ է, որ այդ կուղբերը նաև տարբեր չափեր ունեն և տարբեր ծավալներ, ինչպես նաև՝ որ հնարավոր է, դրանք արդեն նաև մորթազերծված են և որպես մորթի են փոխանակվում (նկար 6):

Նկ. 6



Ք. Շ. Ա. VIII - III հազարամյակ

Պատկերագրության անուրանալի առավելություններից է այն, որ սովորելու ջանք չի պահանջել, ինչպես նաև որոշակի պարտադրվածություն, որովհետև օգտագործվել են ոչ միայն տվյալ հանրությին հայտնի և գրեթե բոլորին ծանոթ պատկերները, այլև միանգամայն ընկալելի և հարազատ սյուժեներ:

Հիշելի և այսօրվա տեսանկյունից «վերականգնվող» պատմությունը, բնականաբար, այսքանով չի «սահմանափակվել»: Մարդկության «մանկության» ժամանակշրջանից հիշատակման են արժանի նաև այլ երևույթներ, որոնք ոչ միայն առանցքային են եղել իրենց ժամանակին, այլև մեծապես պայմանավորել են նաև հետագա զարգացումները, հետևաբար և՛ մեր այսօրը:

Քրիստոսի ծննդից շուրջ 40000 տարի առաջ մարդկությանը հասու է դառնում կրակի արհեստական ստացման գաղտնիքը, որն ինքնին շատ ու շատ բան է պայմանավորելու հետո, որովհետև եփված, մշակված կամ խորոված սնունդը, դանադաղորեն՝ ճիշտ է, բայց էապես փոխելու է մարդ արարածի աշխարհընկալումը, վերաբերմունքը իրեն շրջապատող աշխարհի հանդեպ, իր իսկ ինքնագնահատականը նաև. ջերմությունը որոշակիորեն երկարացնելու և որակ է հաղորդելու նրա ֆիզիկական գոյությանը, ինչպես նաև շրջապատի հանդեպ նրա գերիշխանությանը տալու է ավելի նյութական և հիմնավորված բնույթ:

Ք.Ծ. մոտ 12000 տարի առաջ մարդն ինքն իր համար հայտնագործեց նետն ու աղեղը, 10000 տարի առաջ՝ նավակն ու թիակը, 4000 տարի առաջ՝ անիվը, իսկ երեք դար առաջ՝ արդեն ջրաղաց էր կարողացել կառուցել: Այս ամենի նշանակությունն ու հետևանքները ինքներդ կարող եք ձեզ և ձեր շրջապատի համար բացահայտել. իհարկե՝ այսօրվա դիտանկյունից:

Նյութական այս նվաճումներից զատ՝ մինչև Օժյալ Փրկչի ծնունդը, հոգևոր ու մտավոր ոլորտում ևս էական առաջընթաց է արձանագրվել:

Հիշատակենք փաստերից ամենակարևորները (մեր կարծիքով՝ իհարկե: Յուրաքանչյուրդ կարող է փնտրել և գտնել իր կարծիքով առավել էականները և հիմնավորել իր ընտրությունը): Ք.Ծ. շուրջ 30000 տարի առաջ են այսօր Ֆրանսիայի տարածքում գտնվող Շովեի քարանձավում արվել հանրահայտ որմնապատկերները: Մի փոքր ավելի ուշ՝ 1-2 հազարամյակ անց, Կոսկերի քարանձավի որմնապատկերներն են արվել, որոնք, սակայն, այսօր գտնվում են ջրի տակ: 15000 տարի առաջվանով են թվագր-

վում Լասկոյի, 12000 տարի առաջվանով՝ Ալթամիրա քարանձավի որմնապատկերները: Մոտ 2778 թ. Եգիպտոսի Ջոսեր փարավոնի խորհրդական Իմհոթեփը առաջին աստիճանավոր բուրգը կառուցեց: Դրան հաջորդել են Քեոփսի, Քեֆրենի, Միքերինի մեծ բուրգերի, ինչպես նաև Սֆինքսի կառուցումը, սակայն ճարտարապետության սկիզբը, անշուշտ, Ջոսերի բուրգի կառուցումն էր: Մոտ 1700-ական թվականներին ստեղծվում են առաջին բառարանները՝ շումերերենից-աքքադերեն: 1372-1356 թվականներն է ընդգրկում Ամենհոտեպ IV (Էհնաթոն) փարավոնի գահակալությունը Եգիպտոսում, որը հիմնադիրը եղավ միաստվածության՝ հաստատելով Աթոնի պաշտամունքը:

Մոտ 1500-ական թթ. Նամիբիայում ևս ժայռապատկերներ են ի հայտ գալիս: 1700-1200 թվականներին ստեղծվում են չինական հիերոգլիֆները, մոտ 850 թ. գրի են առնվում Հոմերոսի «Իլիական» ու «Ոդիսական» պոեմները: 776 թ. Հունաստանում կայանում են առաջին Օլիմպիական խաղերը՝ նվիրված ամենակարող Ջևսին: 753 թ. Ռոմուլոսը հիմնադրում է հավերժական քաղաքը՝ Հռոմը: 221-206 թթ. Ցի Շիհուանդին միավորեց չինական իշխանությունը և սկսեց Չինական պատի կառուցումը: Նա սահմանեց միասնական չափաքանակներ, միասնական դրամական համակարգ և միասնական գիր: 2 թվականին առաջին անգամ Չինաստանում տեղի ունեցած մարդահամարը պատկառելի թիվ գրանցեց՝ ավելի քան 57 միլիոն բնակիչ: Ավելորդ չենք համարում նշել, որ ընդամենը մոտ 2500 թվականից սկսվեց Սահարայի անապատացումը:

Մինչև Քրիստոսի ծնունդն ընկած ժամանակահատվածը նաև լուրջ քաղաքական և սոցիալական բարենորոգումների ժամանակահատված կարելի է համարել: Այսպես օրինակ. 507 թվականին Կալեսթինեսը, չնայած արիստոկրատների լուրջ դիմադրությանը, Աթենքում դեմոկրատիա հաստատեց:

326 թվականին տրիբուն Պետելիասի Սենատին պարտադրած օրենքով արգելվում էր Հռոմի քաղաքացիների ստրկացնել՝ պարտքերի պատճառով: 301 թ. Դեոկլետիանոսը եղիկտ հրապարակեց, որով ողջ Հռոմեական կայսրության տարածքում սահմանվում էին սննդամթերքի առավելագույն գները: 134 թ. Չինաստանի թագավոր Ու Դին պետական պաշտոն զբաղեցնել ցանկացողների համար հատուկ քննակարգ հաստատեց: 123-122 թվականներին տրիբուն Գայոս Գրակքոսը դարձավ այն

օրենքի նախաձեռնողը, ըստ որի չքավորների համար հացը երաշխավորվում էր նվազագույն գնով:

Ահա և, հիմնականում, այն խճանկարը, որը նախորդել է Յիսուս Բրիստոսի մարդեղենացմանը. այն, անշուշտ, ամենամեծ, ամենանշանակալի և ամենաեական իրադարձությունն է ողջ պատմության ընթացքում, որը, սակայն, վերաշարադրանքի կարիք չունի. նրան անհրաժեշտ է բնագրով ծանոթանալ:

ԳՐԱՎՈՐ ՍԿԻԶԲ

Տեղեկությունների տարածման դրդապատճառն ու հիմքը մեկն է. այն պետք է անհրաժեշտ ու շահավետ լինի տարածողին և միայն այդ դեպքում կտարածվի: Եվ, եթե անհիշելի ժամանակներում՝ պատկերագրերի ժամանակաշրջանում, տեղեկությունների ոչ այնքան տարածում, որքան փոխանցում ու փոխանակում էր ընթանում, և այն էլ՝ հիմնականում սահմանափակ հանրության շրջանակներում, ապա արդեն հիշելի և հատկապես թվագրվող ժամանակներում, երբ փոքրիկ հանրության փոխարինելու է գալիս արդեն շատ ավելի ընդգրկում հանրությամբ՝ հասարակությունը, իր հստակ ձևավորված ինստիտուտներով, տեղեկությունների տարածումը աստիճանաբար սկսում է ձեռք բերել մասնագիտական հատկանիշներ:

ՍԿԻԶԲՆ, ամեն դեպքում, դիցաբանությունից պետք է լիներ: Համարյա բոլոր ժողովուրդների դիցարաններում գոյություն ունեն առասպելական «տեղեկատվական աստվածներ»՝ գերագույն աստվածների մուսեոսիկները: Ըստ ավանդության՝ նրանք էին իրականացնում կապն աստվածների ու մարդկանց միջև: Հույների համար այդ աստվածը Հերմեսն էր, հռոմեացիների համար՝ Մերկուրիոն, եգիպտացիների՝ Թոթը, սկանդինավների՝ Օդինը: Ռուսական վեդայական առասպելաբանության մեջ նշվածի համարժեքն իմաստության աստված Վելեսն էր և Գամայուն գուշակ թռչունը, քրիստոնեական փիլիսոփայության մեջ այդ դերը կատարում էին հրեշտակապետերը, հրեշտակները և հրեշտակային հիերարխիայի մյուս անդամները: Հայկական հեթանոսական դիցարանում այդ աստվածը Տիրն էր:

Այդ առասպելական կերպարներից ամենահետաքրքիրը Հերմեսն է՝ Ջևահի և լեռների դիցուհի Մայայի որդին: Հույները նրան պաշտում էին իբրև աստվածների մուսեոսիկ ու ճանապարհորդների հովանավոր: Նա նաև առևտրի ու անասնապահության աստվածն էր, հանգուցյալների հոգին հանդերձյալ աշխարհ ուղեկցողը: Հերմեսին պատկերում էին թևավոր սանդալներով և ոսկե գավազանով: Լուկիանոսի «Երկխոսություններում» Հերմեսը մորը՝ Մայային, բողոքում է, որ հայրը անթիվ ու ուժից վեր գործեր է բարդել իր ուսերին. **«Հազիվ եմ հասցնում կարգի բերել արոտատեղերը և ամեն ինչ դասավորել ինչպես հարկն է, պետք**

է ներկայացնամ Ձևսին և երկիր հասցնեմ նրա հրամանները՝ առանց հոգնելու զնալ-զալով... Եվ ամենաահավորը՝ ես միակ աստվածն եմ, որ չի քնում գիշերները, այլ Պլուտոնին է հանձնում հանգուցյալների հոգիները և ներկա է լինում ստորգետնյա դատին: Բայց իմ ցերեկային հոգսերը ավելի շատ են՝ ես ներկա եմ բոլոր հանդիսություններին, մունեստիկ եմ ծառայում ժողովրդական ժողովներում, հռետորներին ուսուցանում եմ ելույթ ունենալ: Հանգուցյալների գործերը կարգավորելը ևս իմ պարտականությունն է»: Այսինքն՝ թվարկված պարտականություններին ավելանում է մունեստիկի ու հռետորների ուսուցչի դերը, որ ուղղակիորեն կապված է տեղեկատվական գործունեության հետ: Հերմեսի հիմնական հոմանիշը **լրատուն** է:

Հռոմեական դիցաբանության մեջ հիշատակվում է նաև Ֆաման, որը, ըստ Վերգիլիոսի, հարյուր աչք և հարյուր ականջ ունեւեր, բնավ չէր քնում, տեսնում և լսում էր միշտ և ամեն ինչ և տարածում ու տարփողում էր ինչպես ճշմարտությունն, այնպես էլ՝ կեղծիքը:

Թարգմանաբար այն նշանակում է համբավ, լուր, խոսք ու գրույց, ասեկոսե: Նրան Վերգիլիոսից ավելի կենդանի պատկերել է Շեքսպիրը՝ «Հենրի Զորրորդի» երկրորդ մասի նախամուտքում.

«Վորկվորթ: Ներթեմբերլենդի ամրոցի առաջ:
Ստնում է Համբավը՝ վրան անհամար լեզուներ նկարված:

ՀԱՄԲԱՎ

*Ամենքդ լսեք. ո՞վ է հանդգնում ականջը փակել,
Երբ որոտածայն Համբավն է թնդում:
Հողմը փոստային մժույգ արած ինձ՝
Ես արշավում եմ արևակողմից մինչև արևմուտք,
Ամենքին ի լուր ազդարարելով այս երկրի վրա
Հարածան բացվող դեպքերի մասին:
Իմ լեզուներով աշտանակում է զրպարտանք անդուլ,
Որոնք գոռում են բյուր բարբառներով
Մարդկանց ականջը խճողած խարդախ հաղորդումներով.
Ես խաղաղության մասին եմ խոսում,
Մինչդեռ դարանած թշնամությունը
Ապահովության ժպիտով ծածկված՝ աշխարհն է քանդում:
Ուրիշ ոչ մեկը, միայն Համբավը, միայն ես եմ ձեզ*

*Բարձրաձայն գոռում՝ մեծ պաշտպանության զորք կազմել
ահեղ,
Երբ ժամանակի արգանդն է հղի,
Ոչ թե անողորմ գոռ պատերազմով, ինչպես կարծում եք,
Այլ մի ավելի անհայտ աղետով: Ես ի՞նչ եմ - շեփոր,
Կռահումներով, տազնապով, խանդով, կասկածանքով լի.
Եվ այնքան հեշտ է, այնքան դյուրալի շեփորով փչել,
Որ բութ հրեշը բազմազլխանի՝
Այդ ամբոխն երկմիտ ու անմիաբան,
Կարողանում է վրան նվազել: Սակայն ի՞նչ հարկ կա
Ինքս ինձ այսպես անդամազննել
Ի տես ենթակա հպատակներիս»:*

(Թարգմ. Խաչիկ Դաշտենցի)

Այստեղ կանգ առնենք և բացատրենք, որ «ենթակա հպատակները»՝ հանդիսատեսն է, ունկնդիրը, որն իր տիրոջից՝ Համբավից լսածը պարտավոր է տարածել հնարավոր ամեն տեղ:

Առաջին և երկրորդ սկիզբների միջև, սակայն, ոչ միայն այս դիցքի երևան գալն է էականը:

Ժայռապատկերները և այրապատկերներն իրենց տեղը զիջեցին պատկերագրություններին, այնուհետև ի հայտ եկավ հանգուցային գիրը, հետո գաղափարագիրը, ապա հիերոգլիֆները, սեպագրերը և այդպես՝ մինչև մեզ ծանոթ ու հարազատ հնչյունային գիր, որն իր վերջնական ձևակերպումն ստացավ Փյունիկյան գրով (Քրիստոսի ծննդից առաջ՝ երկրորդ հազարամյակի կեսեր), որն էլ ակունքն ու սկիզբն է հանդիսացել ինչպես եվրոպական ողջ գրային համակարգի, այնպես էլ հրեական, արաբական գրի, ինչպես նաև՝ Կենտրոնական Ասիայի և Հնդկաստանի ժողովուրդների գրերի համար:

Առաջին կանոնակարգված հնչյունային այբուբենը ստեղծեցին հին հույները Ք.Ծ.Ա. XIII - IX դդ.:

Ի դեպ. խիստ ուշագրավ մի ավանդություն կա գրչության սկիզբն ու անհրաժեշտությունը բացահայտող: Շումերների լեզենդը պատմում է, որ արքա Ուրուկ Էնմենկարը, որպես իմտելետուալ զբաղմունք, տևական ժամանակ շփվում և «բանավիճում» էր Արատտա քաղաքի իշխանի հետ, որ հեռու արևելքում էր գտնվում: Նրանք իրենց բանագնացների միջոցով միմյանց

հանելուկներ էին առաջադրում-փոխանցում և ըստ դրանց լուծման արդյունավետության էլ որոշվում էր հաղթողը: Հանելուկներից մեկն այնքան բարդ է ստացվել, որ բանագնացը հանձն չի առել այն ճշգրտությամբ փոխանցելը և ստիպված է եղել այդ հանելուկը պատկերների տեսքով «գրի առնել»: Խոսքը Ք. Ծ. Ա. III հազարամյակին էր վերաբերում:

Մենք չենք խորանա նշված փաստերի պատմաքաղաքական, սոցիալ-տնտեսական ու հոգեբանական առանձնահատկությունների մեջ, քանզի դա մեր քննարկելիք հարցից դուրս է: Իսկ հիշատակությունն անհրաժեշտ էր, որպեսզի պարզ լինեն ոչ միայն զարգացումներն ու նրանց հիմնական ուղղությունները, այլև որպեսզի ժամանակաշրջանները գնահատված լինեն իրենց պատմական իրական համապատկերում:

Մինչ գրերի հնարավորինս մատչելի համակարգերի ստեղծումը մարդկային քաղաքակրթության զարգացման պատմությունն ընթացել է, ըստ էության, բանավոր հունով, որոնցից մեզ հայտնի են հիմնականում նրանք, որոնք հնարավոր է եղել գրային ինչ-որ համակարգով ամրագրել գրքերի մեջ կամ էլ դրանց փոխարինող կավե կամ այլ սալիկների, պապիրուսների կամ մագաղաթների վրա:

Հայտնի է, որ Ասորեստանի արքա Աշուրբանիպալի գրադարանը կազմված է եղել 25000 կավե սալիկների վրա կատարված գրություններից (Ք.Ծ.Ա. 7-րդ դար): Իսկ նույն թվագրության առաջին դարի կեսերին Ալեքսանդրիայի գրադարանում 700000 հատոր գիրք էր հաշվվում: Ք.Ծ.Ա. երկրորդ դարում արդեն Յոնում բազմաթիվ էին այն գրատները, ուր ստրուկները զբաղված էին գրքերի արտագրությամբ: Գրավաճառությունը գործունեության պատվավոր ու շահութաբեր ոլորտ էր դառնում, իսկ գրավաճառի կրպակները՝ ժամանակի լուսավոր ու իմտելեկտուալ մարդկանց հավաքատեղին:

Հունաստանում և Հռոմում իր բուռն ծաղկումն էր ապրում հռետորական արվեստը:

Քրիստոսի ծննդից առաջ 5-րդ դարում Հունաստանում սկսում են օգտագործել փոստային աղավնիներ, իսկ 4-րդ դարում Եգիպտոսում ի հայտ են գալիս առաջին անձնական նամակները՝ գրված պապիրուսի վրա: Երրորդ դարում Եգիպտոսում փոստային կայարաններում սկսում են գրանցել հրատապ թղթակցությունները:

Իսկ Չոռնուն, ինչպես նշում է Գ. Պրուսոսկովը. *«Բանավոր ճարտասանությանը զուգահեռ ... զարգանում է դեռ Խոսկրատուսի փառաբանած նամակի ժանրը, որ չկար էլլադայում (Չունաստանում): Չարուստ հռոմեացիները, մեկնելով հեռավոր նահանգներ, Չոռնուն թողնում էին իրենց ստրուկներին կամ վարձում էին ազատ մարդկանց, որ գրագետ էին, և իրենց տերերին կանոնավոր տեղեկություններ էին հաղորդում մայրաքաղաքի անցուդարձի մասին՝ թե քաղաքական նորությունների, թե քաղաքային ասեկոսեների: Չաճախ մեկ մարդն աշխատում էր մի քանիսի համար և դա, փաստորեն, լրատվական գործակալության նախատիպն էր, որի աշխատանքի սկզբունքը տեղեկություններ հավաքելու ու սպառողներին հասցնելու մեջ էր: Չեղինակները հնարավորություն ունեին իրենց նամակներում դատողություններ անել և այդ դատողությունները ոչ միայն որոշակի հասցեատիրոջը ուղղել, այլև ընթերցողների ավելի մեծ շրջանակի»:*

Այդ «թղթակիցներից» ոմանց, իրենց պատվիրատուների միջնորդությունների հիման վրա, իհարկե, թույլ էին տալիս անգամ մասնակցել Սենատի նիստերին, գրում է Կարլ Բուխերը, որից էլ տեղեկություններ էին հաղորդում դրանով հետաքրքրված իրենց պատվիրատուներին: Այդպիսի մարդիկ ուներ, զորօրինակ, Անտոնիոսը, որոնցից նա հաշվետվություններ էր ստանում ոչ միայն Սենատի որոշումների, այլև սենատորների ելույթների, քվեարկությունների ընթացքի և արդյունքների, ինչպես նաև այնտեղ կատարված այլ իրադարձությունների մասին:

Բայց, մինչ շարունակելը, անդրադառնանք մի խիստ ուշագրավ գրության, որը, երևի թե, կարելի է մինչև օրս մեզ հայտնի ամենահին ռեպորտաժը և ժուռնալիստի աշխատանքը գնահատող գիրը համարել: Չեթիին էլ՝ ամենահին ժուռնալիստը:

Չին Եգիպտոսի XII դինաստիայի ժամանակաշրջանում (1991-1785 թթ. Բ.Ճ.Ա.) ապրած և գործած գրիչ Չեթին այսպես է նկարագրում տարբեր մասնագիտությունների և արհեստների տեր մարդկանց.

«Ես տեսա դարբնին՝ իր աշխատանքի պահին: Նրա մատների մաշկը պատված է կնճիռներով՝ ինչպես կոկորդիլոսի կաշին: Քարագործը մշտապես պայքարում է կարծր քարի դեմ:

Վարսավիրը սափրում է մինչև գիշեր և միայն այն ժամանակ, երբ նստում է ուտելու՝ հենվում է արմունկների վրա, որ հանգստանա:

Նավավարը լողում է... որպեսզի փող վաստակի իր աշխատանքի դիմաց:

Ջուլիանը ծնկներով անընդհատ սեղմում է իր ստամոքսը և մաքուր օդ չի շնչում:

Դեսպանն իր ունեցվածքը կտակում է զավակներին, երբ պատրաստվում է հեռավոր երկրներ մեկնել, քանզի վախենում է վայրի գազանների կամ էլ ավազակների հետ հանդիպումից:

Կոշկակարը դժբախտ է. անընդհատ հոգոցներ է հանում՝ երբ կաշի է դաբաղում:

Գրողի մասնագիտությունը, մինչդեռ, ամենակարևորն է, քանզի այս աշխարհում պարապ ու դատարկ խոսքեր չկան: Ով մանկուց կհասկանա դա՝ հարզված մարդ կդառնա»:

«Մեկնաբանություններն, իրոք, ավելորդ են» ծեծված բառակապակցության փոխարեն, այստեղ ամենաճշգրիտը Նապոլեոնի խոսքերն են՝ ուղղված իր զորքին. «Ձեզ նայում են և ձեզ հետ խոսում են անցած 40 դարերը»:

Դե իսկ հասկանալն՝ արդեն յուրովսանն:

Գրեթե նույն ժամանակաշրջանին է վերաբերում նաև սիրո առաջին գրավոր խոստովանությունը, որը, սակայն, ի հայտ է գալիս Ատրեստանում. «Ես հիմա ապրում եմ Բաբելոնում: Այն մեծ քաղաք է, բայց ես տխուր եմ, որովհետև դու չկաս: Հայտնիր, թե երբ ես գալու, որ սիրտս ուրախանա...»,- այս գրությունը ԴԱՍԱ-ԽՈՍ, Մտավորական և Արտիստ Լևոն Ներսիսյանը համարում էր աշխարհի ամենամեծ պոեմը ու համոզված էր, որ ով որքան էլ ծառայի մուսամներից, միևնույն է՝ ավելին ասել երբեք չի կարող...

Սա նաև առաջին ու ամենաարժեքավոր նամակը կարելի է համարել առայժմ հայտնի ու պահպանված պատմության ընթացքում:

Թեև հին Եգիպտոսում՝ փարավոնների արքունիքում էլ, պապիրուսի վրա դրոշմված տեղեկություններ էին տարածվում, ինչպես և Միջագետքի ու նախկին հին քաղաքակրթությունների մայրաքաղաքներում, սակայն բնական է, որ առաջին՝ համեմատաբար զանգվածային, տեղեկատվամիջոցը պետք է ի հայտ գար Հին Հռոմում, քանզի հենց նա էր ոչ միայն քաղաքակրթության օրրաններից մեկն ու այդ ժամանակներում հիմնականը, այլև աշխարհի երկի թե առաջին գլոբալացման (Ալեքսանդր Մեծի տիրապետության կարճատևությունը, մեր կարծիքով, այն դուրս է դնում

«գլորալացուն» եզրույթով բնորոշվող երևույթի շրջանակներից) նախանձախնդիրն ու նախաձեռնողը:

Այստեղ բոլորովին ավելորդ չենք համարում նշել, օրինակ, որ Քրիստոսի ծննդյանը նախորդած շրջանում Հռոմեական կայսրությունը գրավում էր 3,3 միլիոն քառակուսի կիլոմետր տարածք և ուներ 54 միլիոնի հասնող բնակչություն, որոնցից իտալացիներ էին 16 միլիոնը, Հռոմի քաղաքացիություն ուներ 5 միլիոնը: Կայսրության տարածքում ի հայտ էին գալիս արդեն երկու-երեք հարկանի շինություններ, ավելի քան 100 քաղաքներ ջուր էին ստանում ագուգաներով (ակվեդուկ), պալատներում վերելակներ են սկսում օգտագործվել, կանանց իրավունքները գրեթե հավասարեցված էին տղամարդկանց իրավունքներին, սափրվելը դառնում էր անենօրյա սովորություն, հռոմեացիք օգտվում էին ատամի խոզանակներից և փոշուց՝ եղջերվի եղջյուրներից սարքված, ստրուկների արտագրած գրքերի տպաքանակները հասնում և անցնում են 1000 օրինակը, ստեղծվում էր ճանապարհների կանոնավոր ցանց՝ ավելի քան 80000 կիլոմետր երկարությամբ, ճանապարհներին ուղեցույցներ և նշաններ էին հայտնվում և այլն:

Իսկ հիմա՝ բուն ժուռնալիստիկայի գրավոր ծննդի մասին:

Գայոս Սվետոնիուսը իր «Տասներկու կեսարների կյանքը» գրքի «Աստվածային Հուլիոսը» գլխում նշում է. **«Պաշտոնը (կոնսուլի՝ Բիբուլոսի հետ, 59 թ. Ք. Շ. Ա. - հեղ.) ստանձնելուց հետո առաջինը նա հրամայեց կազմել և հրապարակել ամենօրյա հաշվետվություններ սենատի և ժողովրդի մասին»:**

Պատմությունը մեզ է հասցրել նաև այդ իրադարձության պատճառները և որոշակի մանրամասներ, որոնք էական են տեղի ունեցածն իր ամբողջության մեջ ոչ միայն ընկալելու, այլև գնահատելու համար: Արժե անպայման հիշատակել տվյալ օրերի նաև ընդհանուր վիճակն ու բնութագիրը. մեկ անգամ ևս մեջբերենք Սվետոնիուսին. **«Այդ ժամանակից Կեսարը միայնակ էր վարում բոլոր գործերը պետության մեջ, իր կամքով: Որոշ սրամիտ անձինք, թղթերում ստորագրելով որպես վկաներ, անգամ կատակով դրանք թվագրում էին ոչ թե Կեսարի և Բիբուլոսի կոնսուլությանը, այլ՝ Հուլիոսի և Կեսարի, նշելով, այդպիսով, մեկ մարդու՝ երկու անունով, իսկ շուտով ժողովրդի մեջ տարածվեց նաև այսպիսի ոտանավոր.**

Այդ Կեսարի կոնսուլության և ոչ թե Բիբուլոսի կոնսուլության ժամանակ է եղել.

Բիբուլոսի կոնսուլության ժամանակ, բարեկամ, ուղղակի ոչինչ չի եղել»:

Սվետոնիուսը նշում է նաև այս ամենի պատճառները. *«Եվ երբ նա (Յուլիոս Կեսարը-հեղ.) օրինագիծ մտցրեց հողի մասին, իսկ նրա գործակիցը կասեցրեց այն՝ վկայակոչելով վատ նախանշանները, նա զենքի ուժով վտարեց նրան ֆորումից: Հաջորդ օրը վերջինս գանգատ ներկայացրեց սենատին, բայց ոչ մեկի մոտ արհուլթյուն չգտնվեց զեկույցով հանդես գալու նման բռնության մասին կամ զեթ միջոցներ առաջարկելու, որոնք սովորական են անգամ նվազ անկարգությունների ժամանակ: Դա Բիբուլոսին այնպիսի հուսահատություն պատճառեց, որ նա այլևս տնից դուրս չէր գալիս մինչև իր կոնսուլության վերջը և միայն եղիկտներում էր արտահայտում իր բողոքը»:*

Ըստ եւթյան լինելով միապետ և ընդդիմություն չունենալով, Յուլիոս Կեսարը (նա առաջին հռոմեացին էր, ում կոչեցին Հայր Հայրենյաց և նրանից հետո Կեսար անվանումը դարձավ հասարակ անուն՝ կոչում, բնորոշելով տիրակալներին) այնուամենայնիվ, կարևորել է հասարակական կարծիքը, որի արդյունքն էր հենց «Acta diurna senatus ac populi»-ն:

Առիթը հողային օրենքների բարեփոխումներն էին կամ՝ նոր հողային օրենքները, որոնցով նախատեսվում էին էական բարեփոխումներ՝ հօգուտ Հռոմի հասարակ քաղաքացիների և հաղթանակով վերադարձած զորավար Պոմպեոսի վետերանների: Մասնավորապես. *«Ստելատյան հողամասը, որ նախնիները հռչակել էին անձեռնմխելի, և Կամպանյան դաշտը, որ թողնված էր վարձակալության՝ լրացնելու համար գանձարանը, առանց վիճակահանության նա բաժանեց 20000 քաղաքացիների միջև, ովքեր ունեին երեքական և ավելի զավակներ: Նա իջեցրեց կապալառուների կապալագումարի մեկ երրորդը, որոնք խնդրում էին զիջողություն և բոլորի ներկայությամբ խնդրեց նրանց չափավոր լինել, երբ ստիպվումք լինի ավելացնել նոր կապալների գինը: Ընդհանրապես նա առատաձեռնորեն բաժանում էր այն ամենը, ինչ էլ որ նրան խնդրելիս լինեին, չհանդիպելով հակազործողության կամ ճնշելով այն սպառնալիքներով»* (Սվետոնիուս, նույն տեղը):

Ակներև է, որ սենատորներից շատերը պետք է դեմ լինեին նման օրենքների ընդունմանը, քանզի դա ոտնահարում էր ոչ միայն իրենց նյութական շահերն ու նկրտումները, այլև բարոյա-

կան հարվածներ էր հասցնում, մինչդեռ Յուլիոս Կեսարի և Ժողովրդի շահերը այդ պարագայում միանշանակ համընկնում էին. Ժողովրդի բարեկեցությունն էր բարձրանում: Իսկ «Աստվածային Յուլիոսը» անդամաճան ու հավերժ դաշնակիցներ էր ձեռքբերում՝ հանձին նույն Ժողովրդի: Եվ հենց այդ պատճառով էր, որ սկսվեց վերոհիշյալ «Acta diurna senatus ac populi» պարբերականի «հրատարակումը», որի անվանումն արդեն հուշում է նրա բնույթը՝ «Սենատի և հռոմեական Ժողովրդի ամենօրյա արձանագրություններ»: Ժամանակի ընթացքում այս մեկ պարբերականը բաժանվեց երկուսի՝ «Acta senatus» («Սենատի արձանագրություններ») և «Acta publica diurna populi Romani» («Յոմնի Ժողովրդի ամենօրյա տեղեկագրի»): «Acta senatus»-ում, որը կախվում էր ֆորումի շենքում և այնուհետև միայն «տիրաժավորվում», տեղ էր գտնում սենատի անցուդարձը՝ ելույթներ, քննարկումներ, հարց ու պատասխան, միով բանիվ՝ այն ամենը, ինչ տեղի էր ունենում սենատում, իսկ «Acta diurnia»-ն կախվում էր շուկաներում, հրապարակներում և մարդաշատ այլ վայրերում ու նաև տիրաժավորվում էր՝ յուրաքանչյուրին հնարավորինս հասանելի և մատչելի դառնալու համար: Երկու պարբերականներն էլ «լույս էին տեսնում» սպիտակեցված կավե տախտակների վրա (հիշենք, որ մարդուն էլ Արարիչը կավից ստեղծեց), բնականաբար, ձեռագիր, այնուհետև արտագրվում էին ստրուկների կողմից և տարածվում:

«Acta diurnia»-ն գրում էր ամեն ինչի մասին, լակոնիկ և հնարավորինս մատչելի: Մարդիկ, ովքեր լուրեր էին մատակարարում գրագիրներին «diurnalist» էին կոչվում, որն էլ, մենք ևս կարծում ենք, հենց «Ժուռնալիստ» բառի նախատիպն է, քանզի այդ մարդիկ Ժուռնալիստին բնորոշ գործառնություններ էին իրականացնում:

Ժողովրդական տեղեկատուն հրապարակում էր ամենատարբերույթ տեղեկությունները՝ եղանակի տեսություն, զմեր, քաղաքական իրադարձություններ, հասարակությանը հուզող հիմնախնդիրներ, գրական ստեղծագործություններ, գլադիատորական մարտերի արդյունքներ, անեկդոտներ, քաղաքային ուշագրավ նորություններ և անդրադարձ՝ մի խոսքով ամեն ինչ:

«Ամենօրյա տեղեկագիրը» լուրջ հեղինակություն է վայելել: Բավական է մեջբերել Կոռնելիոս Տացիտուսի «Տարեգրության» երրորդ գլխից մի փոքր հատված. **«Ոչ պատմաբանների մոտ, ոչ «Ամենօրյա տեղեկագրերում» ես չգտա ոչ մի հիշատակություն**

այն մասին, որ Գերմանիկոսի մայրը՝ Անտոնիան, նշանակալից մասնակցություն է ունեցել հուղարկավորման ծեսին, մինչդեռ մյուս արեւնակից ազգականները, էլ չխոսելով Ագրիպինայի, Դրուզոսի և Կլավդիայի մասին, անվանապես նշված են. գուցե նրան խանգարել է հիվանդությունը, գուցե նրա վշտից փշրված հոգին ի վիճակի չի եղել այդքան մեծ դժբախտությանը ականատես լինել»:

Վերոհիշյալ մեջբերումն ակնհայտորեն ցույց է տալիս, թե հիշարժան առօրյան ինչպիսի մանրամասնությամբ է արտահայտված եղել «Ամենօրյա տեղեկագրի» մեջ, որի շնորհիվ էլ այն կարող էր որպես հիմք ընդունվել պատմաբանի կողմից:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել նաև, որ պարբերականը հատուկ տեղ է ունեցել իր ժամանակի մեջ: Ինչպես և ներկայումս, նրան վերապահվել է միայն օրվա, անկախ կարևորությունից, անցողիկը վավերագրողի դերը, անանցն ու մնայունը վերապահելով ավելի «որակյալ», տվյալ դեպքում պատմական գրքերին:

«Ներոնի կոնսուլությունը (երկրորդը) և Լուցիուս Պիզոնի կոնսուլությունը այնպիսի իրադարձություններով հագեցած չէր, որոնք արժանի են հիշատակման. թերևս գտնվեն այնպիսիք, ովքեր կցանկանան գրքեր գրել՝ փառաբանելով Մարսյան դաշտում Կեսարի կառուցած վիթխարի ամֆիթատրոնը, նրա հիմքն ու այդ նպատակին ծառայած գերանները, բայց յուրաքանչյուրին հասկանալի է, որ Յոնի ժողովրդի վեհությանը հարիր է, որ պատմությունը հիշատակի առավել նշանակալից գործերը, իսկ մնացածները գրվում են Յոն քաղաքի «Ամենօրյա տեղեկագրերում»:

Ի վերջո, Տացիտուսի այս գնահատականն արդիական ու կիրառելի է նաև մեր օրերում: Ավելորդ չենք համարում նաև մեկ այլ հիշատակում. հռոմեացի հայտնի փիլիսոփա Սենեկան նորությունների բովանդակության մասին ևս հիշատակություն է թողել: Իր «Բարեգործությունների մասին» բարոյախոսական տրակտատում նա գրում է. «Շիկնո՞ւն է գեթ մեկ կին ամուսնալուծությունից, այն պահից ի վեր, երբ ամենահայտնի և ամենաազնվական մատրոնաները տարիները հաշվում են ոչ թե կոնսուլներով, այլ ամուսինների թվով: Հիմա, երբ ոչ մի «Acta» չկա, ուր ամուսնալուծության մասին տեղեկություն չլինի, նրանք սովորել են անել այն, ինչի մասին առաջ միայն լսում էին»: Բավականին ուշագրավ ճակատագիր ունեցան երկու պարբերականներն էլ:

Առաջինը՝ «Acta senatus»-ը Տիբերիոսի կողմից պարզապես արգելվեց Քրիստոսի ծննդից հետո 15 թվականին՝ այն պատճառով, որ սենատում բուռն քննարկումներ էին ընթանում մասնավորապես պետական դավաճանության հարցի շուրջ, որոնց ընթացքում խիստ անշահեկան ելույթներ էին հնչում ինչպես կառավարման կերպի՝ որպես այդ ամենը ծնող պատճառների, այլև նույն Տիբերիոս կայսեր անձի վերաբերյալ: Սա կարելի է համարել գրաքննության և պարբերականի արգելման առաջին և ամենակոպիտ կիրառումը մարդկության պատմության ընթացքում: Այսինքն՝ ինչպես Յուլիոս Կեսարի անձնական շահը՝ որպեսզի ժողովուրդն իմանա իր բարեկամներին և թշնամիներին (քանզի ինքը բարեկամների թվում էր և ժողովրդահաճո ոչ միայն ելույթներ էր ունենում, այլև գործեր էր անում) ստեղծեց այդ պարբերականը, այնպես էլ Տիբերիոս կայսեր անձնական շահը՝ որպեսզի ժողովուրդը չիմանա իր բարեկամներին և թշնամիներին, պատճառ դարձավ նրա դադարեցմանը:

Մյուսը՝ «Ամենօրյա տեղեկագիրը», քանզի շարունակում էր համապատասխանել հրատարակչի՝ կայսեր շահերին՝ հասարակական կարծիքն ըստ ցանկության ուղղորդելու առումով, շարունակեց իր գոյությունը մինչև, փաստորեն, Յոմեական կայսրության անկումը, որից հետո էլ շարունակեց հրատարակվել Կոստանդնուպոլսում, սակայն որոշ ժամանակ անց պարզապես անհետացավ կայսրության թե քաղաքական, թե մշակութային թատերաբեմից: Երկու տարբերակներն էլ ընդհանուր առմամբ սահմանափակվում էին փաստերի հաղորդմամբ. միտումն արտահայտվում էր միայն այն առումով, որ անցանկալի մասին լռություն էր պահպանվում: Բովանդակությունը, ինչպես և առաջ, ծայրագավառներ էր փոխանցվում թղթակցությունների միջոցով: Իսկ այնտեղ, Տացիտոսի խոսքերով, գիտեին ուշադրություն դարձնել ոչ միայն գրված, այլև չգրվածի վրա. կարդում էին նաև տողատակերը: Տողամեջերը՝ ևս:

Այսպես է և այսօր:

Ուշագրավ և շատ կարևոր ենք համարում Պավել Բերլինի 1903 թ. Սանկտ Պետերբուրգում հրապարակված «Պարբերական մամուլը Արևմուտքում» հոդվածների ժողովածուում տեղ գտած «Ժամանակակից լրագրության ակնարկներ» հոդվածը: Մինչև Բերլինը և նրանից հետո էլ մամուլի պատմության գրեթե բոլոր մասնագետները համարում են, որ հիշյալ կեսարյան պար-

բերականներից և ոչ մի նմուշ չի պահպանվել: Մինչդեռ Պավել Բերլինը ոչ միայն գտնում է հակառակը, այլև մեջքերում է անում դրանից. «Նման թերթերից ժամանակակից հնագիտությունը գտել է մի քանիսը: Նրանցից մեկը կոչվում էր «Acta diurna Urbis» և մեծ տարածում ուներ: Այս թերթում հրապարակվում էին սովորական նյութեր, որ տպագրվում են ներկա պաշտոնաթերթերում. տպագրվում էին տիրակալների հրամանագրերը, Սենատի կարգադրությունները, տարատեսակ նշանակումները, պարզևատրումները և այլն, տեղեկություններ զոհաբերությունների, հարսանիքների, տոնակատարությունների և ընթացիկ կյանքի այլ խոշոր փաստերի մասին: Թերթի հաղորդումները չոր պաշտոնական էին, տեղեկությունները հաղորդվում էին չհամակարգված, խայտաբղետ՝ մեկը մյուսի հետևից: Օրինակ՝ մի քանի լուրեր, որ հրապարակվել էին հին հռոմեական թերթում և թարգմանել են ժամանակակից հնագետները.

«Կոնսուլ Սարինուսը այսօր ստանձնեց իր պաշտոնական պարտականությունները»:

«Երեկ քաղաքի վրա ուժեղ կայծակներ էին: Վելիայի մոտ մի կաղնի կայծակից այրվեց»:

«Գինետանը մեծ ծեծկոտուք է եղել: Գինետան տերը վիրավոր է»:

«Լուսնայափոխ Անգիդիոսը փախել էր՝ մեծ գումար վերցնելով հետը: Նրան բռնել են և գումարն էլ գտել են»:

«Վերջերս կալանավորված ավազակ Դենիոֆանոսն այսօր առավոտյան մահապատժի ենթարկվեց»:

Հինավուրց թերթում մենք գտնում ենք նույն այն տեղեկությունները, որով հաճախ փայլում են այսօրվա թերթերը: Օրինակ՝ մենք կարողում ենք, որ «Տիտանիոսը պատժի դատապարտեց այն մսագործներին, ովքեր միսը վաճառում էին՝ առանց նախնական փորձաքննության»: Նման խայտաբղետ ռեպորտյորական նոթերը, պաշտոնական հրամանագրերի, ցուցումների ու նշանակումների հետ, կազմում էին հին հռոմեական թերթի սովորական բովանդակությունը: Թերթի ժամանակակից աշխատակիցը հպարտությամբ կարող է ասել, որ իր նախնիների մեջ այնպիսի մարդիկ են եղել, ինչպիսիք էր նշանավոր Պլինիոսը: Պլինիոսի գրչին է պատկանում հռոմեական թերթի մի ամբողջ ակնարկաշար: Նա «Acta»-ի էջերում շարադրել է առասպելն այն մասին՝ ինչպես Միլոսի դատավարության ժամանակ, որ մե-

դադրվում էր Կլավդիոսի սպանության մեջ, Յոռնի տարբեր հատվածներում աղյուսների կարկուտ է թափվել»:

Քանի որ չի հստակեցվում՝ հիշատակումը Պլինիոս Ավագի, թե կրտսերի մասին է, նշենք, որ խոսքը վերաբերում է I-II դարերին:

Ցավոք՝ Պ. Բերլինը չի նշում իր հիմնադրյուրը և մենք ստիպված ենք բավարարվել ընդամենը այս հիշատակմամբ: Այստեղ հարց կարող է առաջանալ. գուցե նույն պարբերականի մասին չէ խոսքը՝ դատելով անվանման «քաղաքային» բնույթից: Եթե անգամ այդպես է, ապա, կարծում ենք, որ էական ոչինչ չի փոխվում դրանից. եթե անգամ զուգահեռաբար «լույս տեսնող» պարբերականներ են եղել դրանք՝ բնույթով և բովանդակությամբ հաստատապես նմանատիպ են եղել կամ էլ այդ «համարը» նույն թերթի «քաղաքային» թողարկումն է: Բացի այդ՝ պետք չէ մոռանալ, որ ՔԱՂԱՔԸ՝ ի սկզբանե, նաև ամբողջի խորհրդանիշն էր... Եվ, բացի այդ, «Acta»-ների նշված անունները ոչ թե թերթերի անվանումներն են, այլ՝ բովանդակության բնութագրումը:

«Գրավոր սկիզբը» թերի և անկատար կլիներ առանց ևս մեկ կարևոր հիշատակման. ըստ ավանդագրույցի՝ 618 թվականին Չինաստանում, ավելի կոնկրետ՝ հենց Պեկինում (Վերներ Շտայն, «Համաշխարհային քաղաքակրթության ժամանակագրություն», Մոսկվա, «Սլովո», 2003 թ.) սկսում է լույս տեսնել «Լրատուն» («Պաօ»): Մինչև 1361 թվականը այն լույս է տեսնում անկանոն, սակայն հիշյալ թվականից հստակվում է նրա պարբերականությունը և այն դառնում է շաբաթաթերթ: Ի դեպ՝ «Պաօ»-ն իր նախորդներից՝ Յուլիոս Կեսարի հիմնադրած պարբերականներից ունի երեք հիմնական տարբերություններ. այն ստեղծման օրից ՏՊԱԳՐՎՈՒՄ է (ի տարբերություն հռոմեական ձեռագրի), տպագրվում է ԹՂԹԻ վրա և ունի ԱՆՈՒՆ՝ վերնագիր: 1800 թ. «Պաօ»-ն արդեն օրաթերթ էր: Երկար ժամանակ այն միայն արքայական հրամանագրեր է հրատարակել, որոշ արքունական լուրեր, սակայն 1884-ից որոշակի վերափոխումներ էին տեղի ունեցել և թերթը սկսել է լույս տեսնել երեք թողարկումներով. որպես «Գործարար թերթիկ», որպես «Կառավարական թերթիկ» և որպես «Երկրամասային թերթիկ», որոնցից երկրորդն էր ըստ էության հանդիսանում հնագույն թերթի բուն իրավահաջորդը՝ իր բովանդակային առումով: Այդ երեք թողարկումների խմբագրումն իրականացնում էին գիտությունների ակադեմիայի վեց անդամներ:

Ուշագրավ է, որ չինական թերթի հրատարակումը ևս նման է «Acta»-ների ստեղծման պատմությանը: Լի Յուանը, որը գահը զբաղեցրել էր Թայգուան անունով, հիմնեց Տան դինաստիան, և նրան, որը նոր էր փաստորեն նվաճել իշխանությունը անգիջում պայքարում, անհրաժեշտ էր իր գաղափարների տարածումը, մանավանդ, որ նա իր համար գերխնդիր էր դրել չինական հողերի միավորումը:

Պարբերականին նախորդել էր գրեթե նույնը, ինչ «Acta»-ներին Յոնում. գրագրության բուռն վերելք (Չինաստանում թուղթը և տպագրությունը հայտնագործել էին ավելի վաղ), տեղեկությունների տարածման և փոխանակման անհրաժեշտություն, մտավորական խավի ձևավորում: Թերթը լույս է տեսել մինչև 1911 թվականը, մինչև Ցին դինաստիայի կառավարման ավարտը: Ավելորդ չէ նշել նաև, որ թերթի հիմնադրման ժամանակները համընկնում են Չինաստանին ենթակա տարածքների ամենաընդգրկուն ժամանակահատվածին՝ մինչև Կասպից ծով, և չինական մշակույթի և արվեստի ծաղկման ժամանակաշրջանին:

Ի դեպ՝ Յուլիոս Կեսարին վերագրվում է նաև շաբաթաթերթի ստեղծումը՝ «Կոմենտարիոս րերում նովարում» («Գրառումներ նոր իրադարձությունների մասին») վերնագրով (Վ.Վ.Վորոշիլով, «Ժուռնալիստիկա», Վ.Միխայլովի հրատարակչություն, Սանկտ Պետերբուրգ, 2004 թ.), որը արտագրում էին 300 ստրուկներ, սակայն, քանզի հիշատակումից գատ այլ տվյալների և մանրամասների մասին չի խոսվում, ինչպես նաև չեն նշվում անմիջական կամ միջնորդավորված աղբյուրներ, մենք ձեռնպահ ենք մնում տեղեկության հավաստիությունը երաշխավորելուց: Պետք է ենթադրել, որ տեղեկությունների տարածման, փոխանցման և փոխանակման այլ համակարգված ձևեր ևս եղել են. այլապես դժվար է պատկերացնել քաղաքակրթությունների զարգացումը Ասորեստանում, Բաբելոնում, Չին Եգիպտոսում և Չնդկաստանում կամ էլ նույն Չինաստանում, սակայն դրանց վերաբերյալ հավաստի գրավոր տեղեկությունների ու նկարագրությունների բացակայությունը գոնե առայժմ հնարավորություն չի տալիս դրանց մասին խոսել որպես ժուռնալիստական կամ նախաժուռնալիստական երևույթների և կամ դրանց սկզբնավորման: Այնպես որ այս պատմությունը կարելի է կոչել նաև պարզապես ՊԱՅՊԱՆՎԱԾ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ:

ԵՐՐՈՐԴ ՈՒ ՎԵՐՋԻՆ ՍԿԻՋԲԸ. XV - XVI դարեր

Երրորդ սկզբի պատճառը գրատպությունն էր: Ավելի շուտ՝ գրատպության և թղթի արդյունաբերության բացահայտումը և կիրառությունը Եվրոպայում, քանզի տպագրական արվեստը վաղուց ի վեր կիրառվում էր Կորեայում ու Չինաստանում: Նույնը վերաբերում է թղթին, որի ստացումն արդեն 105 թվին հայտնագործել էր Ցոյ Լյունը Չինաստանում: Ճիշտ է, դա դեռևս և ամբողջությամբ մեր պատկերացրած թուղթը չէր՝ իր այսօրվա տեսքով ու արտադրության սկզբունքներով, սակայն, էպետ մատչելի էր թե գնի, թե արտադրության տեսակետից մինչ այդ հայտնի մնացյալ բոլոր նյութերից՝ պապիրուս, մագաղաթ, քարե, կավե, փայտե տախտակներ և այլն: Վեց հարյուրամյակ անց՝ ոչ ուշ, քան 704 թվականին, ներկայիս Կորեայի տարածքում լույս է տեսնում առաջին տպագիր գիրքը՝ փայտե կաղապարների միջոցով, 8 630 գլանաթղթի վրա: Գիրքը հայտնաբերվել է 1866 թվականի հոկտեմբերի 14-ին Կիոնգում (այժմ՝ Չարավային Կորեա): Շարժական տառածների միջոցով տպագրված առաջին գիրքը, որի 28 օրինակներ են հասել մեր օրերը, տպագրվել է 1234 թվականին:

Արժե, թերևս, հենց այստեղ էլ անդրադառնալ ժուռնալիստիկայի երկրորդ և երրորդ սկիզների միջակայքում տեղի ունեցած, ինչպես նաև XV և XVI դարերը բնութագրող էական քաղաքակրթական իրադարձություններին:

Ինչպես արդեն նշեցինք՝ 105 թվականին չինացի Ցոյ Լյունին հաջողվում է թղթի նախատիպը ստանալ գործածությունից դուրս եկած հին ցանցերից: 300 թվականին նույն Չինաստանում սկսվում է բուսական հումքից թղթի արտադրությունը: Նույն թվականին հնդիկ իմաստուն Վաթսյանա Մալանահան կազմում է «Կամասուտրան»՝ սիրո ուղեցույցը: 337 թվականին Կոնստանտինոս Մեծը քրիստոնեություն ընդունեց: Մոտ 653 թվականին վերջնականապես ամբողջանում է Ղուրանի կանոնական տեքստը: 784 թվականին Բաղդադում ևս սկսեցին թուղթ արտադրել: Մոտ 800 թ. ճավա կղզում ավարտվեց Բարաբուդուր սրբավայրի կառուցումը: Ավելի վաղ Չնդկաստանում ստեղծվում է շախմատ

տը, որը VI դարից սկսած արաբների միջոցով տարածվում է նաև Պարսկաստանում, ապա մահմեդական աշխարհում և նոր միայն՝ Եվրոպայում:

8-9 դարերում իր ծաղկմանն է հասնում մայաների քաղաքակրթությունը, որը սակայն 1-2 դար անց կործանվում է տուլտեկների կողմից, որոնց պետության կենտրոն է դառնում Չեչենիցան:

1000 թվականին վիկինգ Լայֆ Էրիքսոնը ասի է իջնում Յյուսիսային Ամերիկայում: 1096-1099 թթ. տեղի է ունենում Խաչակրաց առաջին արշավանքը: 1024 թվականին Չինաստանում գործածության մեջ են դրվում թղթադրամները: 1200 թ. Պերուի հյուսիսում սկսվում է Հարավային Ամերիկայում ամենամեծ՝ Չիմա պետության կազմավորումը: Նույն թվականին սկսվում է նաև ինկերի պետության ձևավորումը: Մանկո Կապակը՝ առաջին ինկը, հիմնում է Կուսկո քաղաքը, որը հետագայում դառնում է ինկերի պետության կենտրոնը: 1370 թ. Տենոչտիտլան քաղաքի հիմնադրմամբ սկսվեց ացտեկների պետության կազմավորումը: 1453 թվականին Կոստանդնուպոլիսը գրավվեց օսմանների կողմից: 15-րդ դարի սկզբներին Չինաստանում ավարտվում է 11095 հատորներ ընդգրկող «Համընդհանուր հանրագիտարանի» հրատարակումը: 1492-93 թթ. Քրիստափոր Կոլումբոսի առաջին ճանապարհորդությունը տեղի ունեցավ, որի ընթացքում եվրոպացիների համար հայտնագործվեցին Կուբան և Հաիթին: 1493-96 թթ. երկրորդ ճանապարհորդության ընթացքում Կոլումբոսը հասավ Ամերիկյան մայրցամաքին՝ ասի իջնելով ներկայիս Վենեսուելայի հյուսիսիսում: 1499 թ. Ամերիգո Վեսպուչին հասավ Վենեսուելայի և Գայանայի ափերին: 1519-1521 թթ. Մագելանը կատարեց իր շուրջերկրյա ճանապարհորդությունը: 1543 թ. մայիսին լույս տեսավ Կոպեռնիկոսի «Երկնային գնդերի պտույտի մասին» գիրքը, որում նա պնդում էր, որ Տիեզերքի կենտրոնն Արևն է:

Տպագրական հաստոցի, ավելի ճիշտ շարժուն տառաձևերով տպագրության ձևի Եվրոպայում հայտնագործման հեղինակը գերմանացի Յոհան Գուտենբերգն էր: Տպագրության այս տիպը իր նախապատմությունն ու նախաձևերն ուներ՝ նկատի ունենք անհիշելի ժամանակներից հայտնի տարբեր արքայական կմիքները և դրան հաջորդած դրամահատությունը, որը հայտնի է Բ.Ծ.Ա. 7-րդ դարից ի վեր:

1445 թվականին Գուտենբերգն իրականացրեց իր առաջին տպագիր հրատարակությունը, որը բանաստեղծություն էր Ահեղ դատաստանի մասին: Տպարանները շատ արագ տարածվեցին ողջ Եվրոպայում: 1458 թվականին Ստրասբուրգում տպարան բացվեց, 1465-ին՝ Քյոլնում, 1467-ին՝ Յոննում, մեկ տարի անց՝ Բարսելոնում և Պլզենում, 1469-ին՝ Ուտրեխտում և Վենետիկում, 1470-ին՝ Փարիզում և Նյուրնբերգում, 1471-ին՝ Նեապոլում, Բոլոնիայում և Ֆլորենցիայում, 1473-ին՝ Բուդապեշտում, Կրակովում և Մեսինայում, 1474-ին՝ Ջենովայում, Թուրինում և Վալենսիայում, 1475-ին՝ Վրոցլավում, 1476-ին՝ Լոնդոնում, 1477-ին՝ Պալերմոյում, 1481-ին՝ Լայպցիգում, 1482-ին՝ Վիեննայում և Մյունխենում: Առաջատարը Իտալիան էր, ուր 1500 թվականին ամենափոքր քաղաքներում անգամ տպարաններ կային: Մոտավորապես 40 տարվա ընթացքում բացվեցին ավելի քան 1100 տպագրատներ, որոնք լույս ընծայեցին շուրջ 40000 անուն տարբեր հրատարակություններ՝ 10-12 միլիոն ընդհանուր տպաքանակով: Եվ դա այն դեպքում, երբ մինչտպագրական Եվրոպայում կար ընդամենը 30000 օրինակ գիրք:

Տպագրության հայտնագործումը և տպագրատների տարածումը ողջ Եվրոպայով, ըստ էության, տեղեկատվական հեղափոխության և պայթյունի սկիզբ դարձավ: Եվրոպական մշակույթը կտրուկ և այլևս անդառնալի վերափոխում ապրեց: Տպագիր խոսքը, որը տարածվում էր գրեթե աներևակայելի արագությամբ և ծավալներով, անհրաժեշտություն դարձրեց գրագիտության նույնքան արագ տարածումը, վերջինս՝ էական բարեփոխումներ, եթե չասենք՝ հեղափոխություն էր պահանջում կրթության բնագավառում՝ բերելով իր բարերար արդյունքները բացարձակապես բոլոր բնագավառներում:

Բարերար հետևանքներ կարելի է համարել ոչ միայն հասարակության սոցիալական կառուցվածքի և ընդհանուր արժեհամակարգի բարեփոխումները՝ գիտելիքների և իմացության առաջնահերթության արժևորումն ու գնահատումը՝ սոցիալական ծագման նկատմամբ, սկզբունքների և բարոյական նոր համակարգի հաստատումը և դրանց հնարավորինս լայն ընդգրկման ապահովումը, այլև՝ հասարակական-քաղաքական, գիտատեխնիկական և մշակութային տեղեկատվության արագացող փոխանակման և տարածման պայմաններում նորանոր հայտնագործությունների խթանումն ու հասարակական-քաղաքական և գիտատեխնիկական նոր և առավել առաջադեմ համա-

կարգերի ներդրումը, որոնք իրական առաջընթաց էին ապահովում ողջ հասարակության համար և իրական մրցակցության նախապայմաններ ստեղծում:

Ակնհայտ է, որ հենց նման իրավիճակներում է առավել գնահատվում և արժևորվում ցանկացած տեղեկատվություն. քանզի այն, հետաքրքրասիրությունը բավարարելուց զատ և դրանից առաջ, անհրաժեշտ տեղեկացվածություն է ապահովում, դրանով իսկ՝ գործունեության հաջողություն: Խոսքը գործունեության ցանկացած ոլորտի է վերաբերում:

Հենց այս ամենով էր պայմանավորված ԵՐՐՈՐԴ ՍԿԻԶԲԸ, որը, բարեբախտաբար, ի տարբերություն նախորդ երկուսի, ընդհատում չունեցավ, այլ, ընդհակառակը, զարգացում ապրեց՝ ընդլայնելով ոչ միայն իր ընդգրկման շրջանակները, այլև խորքային և բովանդակային փոփոխություններ կրելով, ու, նաև՝ պարտադրելով:

Սրանով հանդերձ, սակայն, այս ԵՐՐՈՐԴ ՍԿԶԲԻ սկիզբն էլ նման էր երկրորդին. պարզապես գրեթե կրկնվում էին իրավիճակները և, բնականաբար, պետք է կրկնվեին նաև համանման խնդիրների լուծման արդեն իսկ երկու անգամ գտնված տարբերակները:

Տեղեկությունների, ինչպես արդեն նշել ենք՝ խիստ բազմաբնույթ և տարասեռ, կարևորությունն օրավուր մեծանում էր: Իսկ պահանջարկն, ինչպես հայտնի է, ծնում է նաև համարժեք առաջարկ. միջնադարյան քաղաքներում ի հայտ էին գալիս անհատներ կամ էլ անհատների խմբեր, որոնց բուն անելիքը տարաբնույթ տեղեկությունների հավաքումն էր ինչպես մասնավոր անձանցից, այնպես էլ ճանապարհորդներից, վաճառականներից, նաև նավահանգիստ մտնող նավերի անձնակազմերից, քանզի այդ դարերում նավերն էին ճամփորդության ամենաարագ միջոցները և դրանցով ժամանած անձինք ամենատեղեկացվածներն էին կամ, զոնե՝ արժեքավոր և անհրաժեշտ տեղեկությունների էին տիրապետում: Այդ բոլոր տեղեկությունները, ըստ ցանկության կամ էլ ըստ ճաշակի տեսակավորվում էին, բազմացվում (արտագրվելով) և վաճառվում էին ինչպես տոնավաճառներում, այնպես էլ ուղարկվում էին տարբեր քաղաքներ ու այլ բնակավայրեր՝ նրանց, ում կարող էին հետաքրքրել այդ տեղեկությունները կամ էլ նրանց, ովքեր վճարում էին տվյալ մարդկանց՝ այդ տեղեկությունները հավաքելու և տեղ հասցնելու համար:

Միջին դարերում Վենետիկը Եվրոպայի գլխավոր առևտրական կենտրոնն էր ու նավահանգիստը: Հենց դա էր պատճառը, որ այն մեխանիկորեն դառնում էր նաև տեղեկությունների կուտակման կենտրոն: Խոսքն ինչպես Արևելքի մասին է՝ Հնդկաստան, Չինաստան, արաբական երկրներ, Թուրքիա, այլև՝ նույն Հռոմի, Վատիկանի, կայսերական Վիեննայի, Բրիտանական կղզիների և գրեթե մնացյալ ողջ հայտնի աշխարհի մասին:

Վենետիկում կուտակվող այդ հսկայական տեղեկատվությունը, բնականաբար, համակարգման անհրաժեշտություն էր առաջացնում, որն էլ իր հերթին լուրջ և նույնպես համակարգված վերաբերմունք էր պահանջում: Յուրաքանչյուրը, ով ժամանում էր Վենետիկ՝ իր հետ, ըստ էության, բերում էր անգնահատելի և մնացյալին դեռևս անհայտ տեղեկություններ, միաժամանակ, սակայն, ցանկանալով տիրապետել նորերին, որոնք կարող են պետք գալ իրեն՝ քաղաքական, գործարար կամ էլ այլ գործունեություն առավել արդյունավետ և նպատակասլաց իրականացնելու նպատակով:

Առկա այս պահանջարկն էլ, ի վերջո, ձեռագիր թերթերի ստեղծման պատճառը դարձավ: Քաղաքի հենց կենտրոնում, հիմնականում դրամափոխների և ոսկերիչների ջանքերով ու նախաձեռնությամբ մի գրասենյակ ստեղծվեց, որի նպատակը տարաբնույթ տեղեկատվության հավաքումն էր, համակարգումը և դրա հետագա տարածումը: Այդ թերթիկները (*notizie scritte*), որոնց վրա արտագրվում էին հավաքված տեղեկությունները, այնուհետև վաճառվում էին *gazzetta* կոչվող մանրադրամով, որից էլ, ըստ էության, առաջացել է թերթերի անվանումը բազմաթիվ լեզուներում:

Gazzetta-յով և այնտեղ հրապարակվող լուրերով հետաքրքրվողների շրջանակը հետևողականորեն ընդլայնվում էր, որն էլ անհրաժեշտություն էր առաջացնում ընդլայնել նաև նորություններ հավաքողների, համակարգողների, արտագրողների, տարածողների շրջանակը: Անհրաժեշտություն է առաջանում, հարաճուն պահանջարկը բավարարելու նպատակով, առավել պրոֆեսիոնալ մոտենալ գործին և շուտով ստեղծվում է «Նորություններ գրողների» («*Serittor d'avvisi*») համքարությունը, այսօրվա լեզվով՝ արհեստակցական միությունը: Կարելի է արձանագրել, այսպիսով, որ Վենետիկում առաջին տեղեկատվական բյուրոն հայտնվել է 1530 թվականին:

Արժե մի պահ ընդհատել շարադրանքը և անդրադառնալ հարուցվող խոչընդոտներին, քանզի դրանք մամուլի պատմության բաղկացուցիչ մասերն են և ուղղված էին նրան, որպեսզի լայն զանգվածներից հեռու պահեն ինչպես անցանկալի հավերժական արժեքները (նկատի ունենք՝ գրքերը), այնպես էլ անցավորը (ճիշտ է՝ երրորդ անգամ, բայց այդ ժամանակների համար՝ նոր-նոր ստեղծվող թերթերը):

Եվրոպայում, գրեթե ամենուր, նախնական գրաքննություն մտցվեց: «Առաջամարտիկը» Իսպանիան էր, ուր արդեն 1502 թվականին ընդունվեց մի օրենք, համաձայն որի բոլոր տպագիր հրատարակությունները պետք է նախնական գրաքննության ենթարկվեին: Գրաքննական գործառույթները վերապահված էին պետական և եկեղեցական կառույցներին: Դեռևս 1473 թվականին հոգևոր իշխանությունը «հորդորում» և ստիպում էր հետևել բոլոր տպարաններին, որպեսզի այնտեղից դուրս չգա որևէ անցանկալի բան:

Խիստ ուշագրավ մի փաստ է նշում Պավել Բերլինը արդեն իսկ հիշատակված հոդվածում. *«Առաջին թերթերի հետ համարյա միաժամանակ հայտնվում են և պամֆլետները, որ դաժանորեն հարձակվում էին պարբերական մամուլի վրա, որի մեջ վիթխարի ուժ էին կանխազգում: Այդ առումով շատ հետաքրքիր է լատինական «*Usus et abusus novellarum*» շարադրանքը, որի հեղինակ ոմն Կասպար Շլիբելը սարսափում էր, թե ինչպես են իշխանությունները հանգիստ վերաբերվում թերթերի լույս աշխարհի գալուն: Նա խորհուրդ էր տալիս լուրջ ուշադրություն դարձնել և անհապաղ միջոցներ կիրառել «չարագույժ նորարարների»՝ փոստատարների դեմ, որ հնարել են «ամբոխի» հետ զրուցելու տիանար նորամուծությունը և խոթում են իրենց քիթը՝ «ուր պետք չէ»: Ինչպես տեսնում եք՝ արդեն առաջին թերթերը թշնամիների պակաս չէին զգում»:*

1559 թ. Զոռնում հայտնվեց առաջին «Արգելված գրքերի ցանկը», որն, ըստ էության արգելում էր կաթոլիկ աշխարհի երկրներում շրջանառվող որոշակի գրքեր և պատիժներ էր նախատեսում ոչ միայն արգելված գրքերը հրատարակելու և տարածելու, այլև դրանք կարդալու և պահպանելու համար: Անգլիայում 1538 թ. օրենք ընդունվեց, ըստ որի, ցանկացած հրատարակիչ պետք է իր գործունեության համար ստանար արքայական արտոնագիր, իսկ «Գրահրատարակիչների ընկերությունը»

պարտավոր էր ոչ միայն տպագրական նյութերը գրաքննության ներկայացնել, այլև հետևել իր համքարության անդամների գործունեությանը: 1585 թ. հրապարակված արքայական հրամանագիրը կանոնակարգում էր տպագիր արտադրանքի թողարկումը և որոշակիացնում էր թագավորության տարածքում գործող հրատարակչությունների թիվը (ոչ ավելի, քան 20): Գրաքննությունն Անգլիայում իրականացնում էր արքային կից Գաղտնի խորհրդի Ստորին պալատը, որը 16-17-րդ դարերում հրատարակչական կոմիտեի դեր էր կատարում: Գլխավոր գրաքննիչներն էին Լոնդոնի և Քենթրբերիի արքեպիսկոպոսները, առանց որոնց թույլտվության որևէ տեքստ չէր կարող տպագրվել: Ֆրանսիայում 1561 թ. ընդունված օրենքը նախատեսում էր ծաղկել պամֆլետներ և «գրպարտիչ» թերթիկներ տարածողներին, իսկ կրկնակի խախտման դեպքում՝ նույն օրենքով մահապատիժ էր սահմանված:

Չոռնի իրարահաջորդ Պապեր Պիոս 5-րդը (1566-1572 թթ.) և Գրիգորիոս 13-րդը (1572-1585 թթ.) հատուկ բուլլաներով արգելում են ցանկացած բնույթի ձեռագիր թերթերի լույսընծայումը: Բանադրելով և թերթը, և այն ստեղծողներին՝ Պապերը հայտարարում էին, որ ցանկացածը, ով կհամարձակվի թերթ տպագրել կամ էլ գրել նրա համար, դաժանորեն կխարանվի և կուղարկվի տաժանակրության:

Ամենազատ երկիրը Եվրոպայում Չոլանդիան էր, որն, ի դեպ, իր այդ իմիջը գրեթե բոլոր առումներով պահպանել է մինչև օրս: Լավ հիմքերի վրա դրված գրատպության և հրատարակչական գործը՝ «գաղափարախոսական ազատության և անկախության» պայմաններում, Չոլանդիային հնարավորություն տվեց, ինչպես կտեսնեք հետագայում՝ 17-րդ դարից սկսած, բավականին մեծ շահույթներ ստանալ տպագիր արտադրանքից և հարևան երկրներում դրանց վաճառքից: Ահա թե ինչ է գրում 1684 թվականին ֆրանսիացի փիլիսոփա և հրապարակախոս Պիեռ Բեյլը, որ քաղաքական ապաստան էր խնդրել և ստացել Ռոտերդամում. **«Չոլանդիայի Չանրապետությունը առավելություն ունի, որ չունի ոչ մի այլ երկիր. այնտեղ հրատարակիչները բավականին մեծ ազատություն ունեն և նրանց են դիմում Եվրոպայի բոլոր ծայրերից մարդիկ, որ իրենց հանդիպած բարդություններից հոգնած՝ փորձում են ստանալ իրենց ստեղծագործությունները տպագրելու իրավունք»:**

Բայց սա հետո: Իսկ առայժմ Եվրոպայում 16-րդ դարն էր: Ուր, չնայած գրաքննչական արգելքներին և կաթոլիկ եկեղեցու հովվապետերի բանադրանքներին, այնուամենայնիվ, շարունակվում են գրվել և տպագրվել գրքեր և թերթեր, քանզի դրանք առաջացել էին ոչ թե ինչ-որ մեկի կամ մի քանիսի քմահաճույքով կամ էլ, պարզապես, վաստակելու ցանկությամբ, այլ ժամանակի հերթական հրամայականով:

Պարբերականները աստիճանաբար վեր էին ածվում նաև մտավոր և հոգևոր անհրաժեշտության, իսկ այդ դեպքերում հատկապես՝ արգելքները չեն կարող անհրաժեշտ կամ էլ ակնկալվող արդյունք ապահովել:

Ուշագրավ են այդ ժամանակների որոշ թերթերի «վերնագրերը» ևս, որոնք բավականաչափ բան են ասում նաև դրանց բովանդակության մասին. «Ցնցող տեղեկագիր աննախադեպ ջրհեղեղի մասին, որ տեղի ունեցավ Բեռն քաղաքում: Լուրեր Ֆրանսիայից և այլն: Տպագրել է Նիկոլաս Կնորը» կամ «Յավաստի նորագույն տեղեկագիրը Մասստրիխտից... (հետևում է քաղաքների քվարկումը) պարունակում է հերոսական գրոհների, հրածագությունների, բախումների, հարձակումների և այլ հետաքրքրաշարժ իրադարձությունների նկարագրությունը՝ պաշարման սկզբից մինչև ընթացիկ 1579 թ. հուլիսի 11-ը: Ստացված է Ալեսն քաղաքից հուլիսի 12-ին լավ բարեկամից: Տպագրված է Քյոլնում 1579 թվականին»: Կամ «Նորագույն տեղեկագիր անաբապտիստների մասին Մյունստերից: Վիտենբերգ, Իոսիֆ Կլեր, 1535 թ.»:

Ձեռագիր նորությունները՝ թերթերի տեսքով տարածվում էին ողջ Եվրոպայով, սակայն դրանք ստեղծվում էին հիմնականում կամ Իտալիայում, կամ Գերմանիայում, կամ Յուլանդիայում, որն, ինչպես արդեն նշեցինք, ամենաազատ երկիրն էր ողջ Հին աշխարհում:

Գերմանական ձեռագիր թերթերից հիշատակման է արժանի նաև Գերմանիայում խոշորագույն՝ Ֆուգերների առևտրավաշխառուական տան հրատարակությունը, որը լույս էր տեսնում «*Ordinari-Zeitungen*» անվանմամբ (1568-1605 թթ.): Այդ հրատարակությունը հագեցած էր տարաբնույթ, սակայն կանոնավոր տեղեկություններով՝ ընդգրկելով, միաժամանակ, լայն աշխարհագրական տարածք՝ Եվրոպա, Պարսկաստան, Չինաստան, ճապոնիա, Ամերիկա և այլ հեռավոր ու համեմատաբար մոտ

երկրներ: Թերթում կարելի էր հանդիպել ինչպես գործարար ցուցումների, այնպես էլ քաղաքական նորությունների և վերլուծությունների, անգամ գրախոսությունների, ուր հիշատակվում էր նոր գրական ստեղծագործությունների և թատերական բեմադրությունների մասին: Այնտեղ կարելի էր հանդիպել նաև տեղեկություններ բերքի և դրանց գների մասին, երբեմն նաև որոշակիորեն հայտարարություններ հիշեցնող նյութեր՝ «Ինչպես և որտեղ է այժմ հնարավոր Վիեննայում գնել տարբեր ապրանքներ»: Ի դեպ, պարբերաբար լույս ընծայվող «Ordinari-Zeitungen»-ի հետ մեկտեղ լույս էին տեսնում նաև դրա հավելվածները, որոնք պարունակում էին ամենաթարմ նորությունները և կրում էին «Extraordinari-Zeitungen» անվանումը: Շնորհիվ իրենց մեծ կապերի և նույնքան, եթե ոչ ավելի՝ հարստության, Ֆուգերները կարողանում էին իրենց բերքի համար թղթակիցներ պահել աշխարհի ցանկացած հայտնի և իրենից որևէ արժեք ներկայացնող վայրում: Չենց դրանով էր բացատրվում Ֆուգերների լայն տեղեկացվածությունը, որը նմանատիպ ցանկացած ձեռնարկի անկյունաքարն է: Ֆուգերները տեղյակ էին Եվրոպայի և աշխարհի բոլոր էական գործարար և քաղաքական նորություններին: Տեղեկությունները նրանց համար կողմնորոշիչ և հոգեմտավոր գործառույթներից զատ ձեռք էին բերել այլևս որոշակի առանցքային նշանակություն, որն էլ նրանք համապատասխան «փաթեթավորմամբ» նաև վաճառում էին: Ֆուգերների այս ձեռնարկը որոշակիորեն, տեղեկատվական գործակալության և ընդհանրապես մեդիա կոնցեռնի նախատիպը կարելի է համարել:

Ֆուգերների թերթը, ըստ Լ.Սալամոնի, առանձնահատուկ էր ոչ միայն իր բովանդակության հարստությամբ, այլև տեղեկատվության հաղորդման բացառիկ բարեխղճությամբ: Այն օրերի համար բազում աղմկահարույց իրադարձություններ, ինչպիսին է, գործրինակ նաև՝ Ֆրանսիայի թագավոր Չենրիխ 4-րդի վրա կատարած Շանտելի մահափորձը և դրան առնչվող ճիզվիտական ուխտի գործունեության բավականաչափ ուշագրավ բացահայտումներն այդպես էլ հանրությանը չէին հասնի, եթե չլիներ Ֆուգերների թերթը:

Անհրաժեշտ է նշել տվյալ ժամանակահատվածին բնորոշ մեկ այլ հանգամանք ևս. թերթերի և այլ հրատարակությունների պարբերական տպագրությունը «ձգձգվում էր» մի պարզ պատճառով. դրանք չէին կարող անհրաժեշտ տպաքանակներ ապա-

հովել գրագիտության պակասի, տարածման անհրաժեշտ օպերատիվության, զովագրի բացակայության պատճառով, դրանով իսկ վնասաբեր էին: Տպագրվում էին միայն հատուկեմտ «համարներ», որոնք նախատեսված էին կոնկրետ տոնավաճառների կամ այլ հանդիսությունների ժամանակ վաճառելու համար և այդքանով իսկ իրենց արդարացնում էին: Նման «համարներից» ամենահինը, ըստ Պ.Բերլինի, վերաբերում է 1493 թվականին ուր խիստ մանրամասն հաշվետվություն է հրապարակված Ֆրիդրիխ 3-րդ կայսեր հուղարկավորության մասին:

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ չնայած լրագրության և տպագրության առումով առաջատար էին համարվում Իտալիան և Գերմանիան, այնուամենայնիվ, Ֆրանսիան ևս ջանում էր ետ չմնալ: 1461 թ. Փարիզում սկսեց լույս տեսնել «Սկանդալային ժամանակագրություն» պարբերականը, որը գոյություն ունեցավ մինչև 1483 թվականը: Իսկ 1515 թվականից մինչև 1536-ը, ինչպեսև՝ 1409-1444 թվականներին, Ֆրանսիայում հրատարակվում էր «Փարիզյան բուրժուայի թերթ» պարբերականը:

1513 թվականին Անգլիայում տպագրվեց անգլո-շոտլանդական ճակատամարտին նվիրված մի գրքույկ, որն էլ, փաստորեն, անգլիական տպագրության սկիզբը կարելի է համարել:

1553 թվականին Ռուսաստանում հիմնվեց առաջին տպագրատունը, թեև տեղեկատվամիջոցներն այնտեղ ստեղծվեցին միայն 18-րդ դարում:

Ահա և թերևս 15-16-րդ դարերի տեղեկատվական-հրատարակչական-տպագրական այն հիմնական իրադարձությունները, որոնք էլ հենց ԵՐՐՈՐԴ ՍԿԻՋԲԸ հանդիսացան՝ սկզբնավորելով մեկ ընդհանուր շարունակությունը՝ ըստ էության, 18-րդ դարից ի վեր:

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՆԴԻՑ Ի ՎԵՐ XVII ԵՎ ՏՊԱԳԻՐ ՄԱՍՈՒԼԻ ԱՌԱՋԻՆ ԴԱՐԸ

17-րդ դարն անցումային շրջան կարելի է համարել մամուլի համար, քանի որ գոնե սկզբնամասում միմյանց հետ խաղաղ գոյակցում էին ձեռագիր ու տպագիր պարբերականները:

Բայց, մինչ այդ՝ դարի ընդհանուր պատկերը: Բավականին դաժան դար էր և սկսվեց Ջորդանո Բրունոյի ողջակիզմամբ 1600-ին: 1619-ին Վիրգինիա նահանգ հասան առաջին 20 նեգրերը, որով էլ ստրկատիրության հիմքը դրվեց: 1633 թ. Գալիլեո Գալիլեյը հրաժարվեց իր ուսմունքից՝ ինկվիզիցիայի դատարանի առջև, սակայն, ինչպես վկայում է լեգենդը, վերջում նա բացականչել է. «Միևնույն է՝ նա (երկիրը) պտտվում է»: 1637 թ. ճապոնիան «փակվեց» աշխարհի առջև. այնտեղ մուտք ու ելք կարող էին ունենալ միայն չինացիները և հոլանդացիները: 1637 թ. Չինաստանում հրապարակվեց տեխնիկական հանրագիտարանը՝ նվիրված հայտնի արհեստներին «Երկնքի կողմից ստեղծված արդյունքների մասին, որոնք ստեղծվում են աշխատանքով» վերնագրով: 1648 թ. ավարտվեց Թաջ Մահալի կառուցումը: 1664 թ. անգլիացիները գրավեցին Նոր Ամստերդամը՝ այն վերանվանելով Նյու Յորք: 1666-ին Իսահակ Նյուտոնը բացահայտեց երկրի ձգողականության օրենքը: Նույն տարում Ֆրանսիայում բազմազավակ ընտանիքներին տվեցին մի շարք հարկային արտոնություններ: 1632 թ. Չինաստանի կայսր Կոնսին արքայական հրամանագրով երաշխավորեց դավանանքի ազատությունը:

Մինչ Եվրոպային անդրադառնալը նշենք ոչ նվազ մի կարևոր հանգրվան մամուլի պատմության մեջ. հենց դարասկիզբը՝ 1603 թվականը կարելի է համարել ճապոնական մամուլի պատմության սկիզբը: Տոկագավա դինաստիայի օրոք հանրությանն ի տես և ի լուր, մարդաշատ վայրերում սկսեցին կախել տպագիր թերթիկներ, որոնք նորություններ էին պարունակում ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ինչպես քաղաքական, այնպես էլ սոցիալական և տնտեսական կյանքի մասին (մեկ անգամ ևս

արժե հիշել Յուլիոս Կեսարի ստեղծած պարբերականները):

Մինչև տպագրական տեխնիկայի ի հայտ գալը ճապոնիայում գոյություն ունեին «թերթեր»՝ շարվածքներ կավե թրծված տախտակներից: Ամենահին նման թերթը 1615 թվականի «Իոմիուրի Կավարաբան» է («Կարդալ և շարվածքը փոխանցել»): Անգլիայում տարածվում էին «News Letters» ձեռագիր թերթիկները, իսկ Ռուսաստանում ամբողջ 17-րդ դարում ցարական արքունիքում թողարկվում էին ձեռագիր «Կուրանտներ» (ֆրանսերեն «courant»-ընթացիկ բառից), որոնք նաև կոչվում էին «Լուրեր», «Սյունակներ»:

Վերադառնանք Եվրոպա, որն աշխարհի ամենագարգացած և զարգացող երկրամասն էր այն օրերին. 16-րդ դարավերջի և հատկապես 17-րդ դարասկզբի Եվրոպայի տնտեսական, սոցիալական և քաղաքական կյանքի աշխուժացումը արդեն իսկ պարտադրում էր տեղեկությունների համակարգման, փոխանակման և տարածման նոր համակարգերի ստեղծում: Օրավուր աճող տեղեկությունների, լուրերի և նորությունների քանակը բոլորովին այլ և նոր պահանջներ էր առաջադրում, որոնք, չնայած գրաքննչական արդեն իսկ նշված սահմանափակումներին, մինևույն է, իրենց լուծումներն, այնուամենայնիվ, գտնում էին:

16-17-րդ դարերում Եվրոպայի բազմաթիվ երկրներում հայտնվեցին արդեն պրոֆեսիոնալ փոստային ծառայություններ, որոնք ոչ միայն ոյուրացնում, այլև մեծապես արագացնում էին տեղեկությունների փոխանակումն ու տարածումը, որոնք այնքան անհրաժեշտ էին ինչպես առևտրաարդյունաբերական գործունեություն ծավալողների համար, այնպես էլ էապես խթանում էին գիտատեխնիկական առաջընթացը:

Եվ չնայած Նիդեռլանդներում 1605 թվականին Աբրահամ Վերհովենի հրատարակությամբ սկսեց լույս տեսնել «Nieuwe Tijdingen» թերթը, սակայն եվրոպական տպագիր մամուլի ծննդյան թվականը համարվում է 1609 թվականը, ծննդավայրը՝ Գերմանիան, իսկ «նորածինը»՝ Ստրասբուրգում հրապարակված թերթը, որի վերնագիրն էր. «Տեղեկագիր (Relation) բոլոր նշանակալից և հիշարժան իրադարձությունների մասին, որ կատարվել են Վերին և Ստորին Գերմանիաներում, Ֆրանսիայում, Իտալիայում, Շոտլանդիայում, Անգլիայում, Իսպանիայում, Յունգարիայում, Լեհաստանում, Վալախիայում, Մոլդավիայում և Թուրքիայում սույն՝ 1609 թվականին: Բոլոր տեղեկությունները տպագր-

ված են այն տեսքով, ինչ տեսքով ներկայացվել են»: Այս վերնագիրը՝ գեղեցիկ նկարով շրջանակված, զբաղեցնում էր թերթի ամբողջ առաջին էջը և ամրացված էր թերթի առաջին համարին:

Մյուս պարբերականը, որ լույս տեսավ նույն՝ 1609 թվականին, տպագրվեց Ստրասբուրգում և կրում էր հետևյալ անվանումը. «Avisa-Տեղեկագիր կամ Թերթ այն մասին, ինչ կատարվել է Գերմանիայում, Իսպանիայում, Նիդեռլանդներում, Անգլիայում, Ֆրանսիայում, Յունգարիայում, Ավստրիայում, Շվեդիայում, Լեհաստանում և բոլոր գավառներում, Արևմտյան Հնդկաստանում և այլուր: Տեղ է հասցված հունվարի 15-ին: Տպագրված է 1609 թվականին»:

Խմբագիրը, ամենայն հավանականությամբ, Լուկա Շուլտեսն է եղել, քանի որ, երբ 1625 թվականին թերթի հրատարակումն ընդհատվեց, հենց նա սկսեց հրատարակել «Աուզբուրգյան թերթի շարունակություն» անվանումը կրող պարբերականը, որը 1609 թվականին լույս տեսած պարբերականի գրեթե կրկնությունն էր՝ չափսերով, թղթով, տառատեսակներով, տեղեկությունների կազմման և մատուցման կերպով, ինչպես նաև իր քաղաքական միտումներով, որոնք, ինչպես արդեն նշեցինք, բնորոշ էին նաև նախորդ հրատարակությանը:

Առաջին թերթերում լրահոսի մատուցումը կախված էր ոչ թե լուրի հրատարակությունից կամ էլ այլ բովանդակային կամ գաղափարական արժանիքներից, այլ ընդամենը ստացման ժամկետներից: Դրանք չէին մեկնաբանվում և ներկայացվում էին առանց որևէ համակարգման, առանց խորագրերի և, ինչպես երևում է նույն այդ թերթերից, քաղաքական լուրը իրադարձությունների մասին պատմող լուրերը և ասեկոսեները կարող էին հայտնվել իրար կողքի:

Հետագա մի քանի տարիների ընթացքում նման շաբաթաթերթերը տարածվեցին ամբողջ Եվրոպայում. 1610 թվականին տպագիր շաբաթաթերթ սկսեց լույս տեսնել Բագելում, 1615 թվականին Բագելին «միացան» Մայնի Ֆրանկֆուրտը և Վիեննան: 1616 թվականին տպագիր թերթեր հայտնվեցին Համբուրգում, 1617-ին՝ Բեռլինում, 1618-ին՝ Ամստերդամում, 1620-ին՝ Անտվերպենում, Մագդեբուրգում, Նյուրնբերգում, Ռոստոկում, Բրաունշվեյգում, Քյոլնում:

1630 թվականին շաբաթաթերթեր հայտնվեցին արդեն Եվրոպայի 30 քաղաքներում: Պարբերականների նման արագ տարա-

ծուևը բացատրվում է նախ տպագրական տեխնիկայի զարգացմամբ, ապա նաև՝ քաղաքների աճով և քաղաքաբնակների կողմից տեղեկությունների համդեպ պահանջարկի էական մեծացմամբ:

Այս շրջանի թերթերի լեզուն և ոճը, ինչպես նաև նյութերի ընդգրկման շրջանակը գրեթե նույնն է, ինչ կեսարյան թերթերինը:

Թերթերը շատ արագ մեծ տարածում ստացան: 1616 թվականին Յոհան Մեյերը Համբուրգում սկսեց հրատարակել «Ամենշաբաթյա տեղեկագրեր»-ը: 1630 թ. նրան մրցակից դարձավ փոստատեր Կլեյնհաուզը՝ համբուրգյան «Փոստային տեղեկությունների» տերը: 1640 թվականին նրանց միացավ «Նոր համբուրգյան շաբաթաթերթը»: Եվ, վերջապես, 1643 թվականին հիմնադրվեց ամենահաջողակ ու հանրաճանաչ համբուրգյան թերթը՝ «Կուրյերը», որի հիմնադիր Ֆոնա ֆոն Վիրինգենը կարողացավ օգտագործել ոչ միայն գերմանական լրագրության փորձը, այլև՝ ֆրանսիական ու անգլիական թերթերի:

Լրագրական գործը արագ զարգանում էր և Լայպցիգում: 1659 թվականին գրավաճառ Ռիցցին սաքսոնյան կառավարությունից թերթի հրատարակության թույլտվություն ստացավ, որը սկսեց տպագրվել 1660 թվականի հունվարի 1-ից: Դա առաջին գերմանական քաղաքական թերթերից մեկն էր: Ի դեպ, առաջին շաբաթաթերթը Եվրոպայում հայտնվել է նույնպես Լայպցիգում:

17-րդ դարավերջին թերթերը գրավեցին Գերմանիան: Թերթերի օգտակարությանն ու անհրաժեշտությանն այլևս ոչ ոք չէր կասկածում, լուսավորված մարդիկ ընդգծում էին թերթերի հատուկ նշանակությունը: 1697 թվականին Համբուրգում տպագրված «Թերթ կարդալու օգուտի մասին» գրքում կային հետևյալ տողերը. **«Ով ցանկանում է իմաստավորված կյանք վարել, ով ցանկանում է լինել հասարակության հարգարժան անդամ և իր մասնակցությունն ունենալ պետական, առևտրական ու քաղաքացիական գործունեությանը, նա պարտավոր է հետաքրքրվել թերթերով, պարտավոր է դրանք կարդալ և կարդացածը ծանրութեթև անել, պետք է կարողանա իմացածը գործի մեջ կիրառել»:**

Այս մտքերն արժե համադրել անգլիացի Ռոբերտ Բերտոնի «զգացումներին» նույն թեմայով, որը նա արձանագրել է «Մելամաղձի անատոմիան» գործում.

«Ամեն օր ես նոր լուրեր եմ լսում. սովորական լուրեր պատերազմի, ժամտախտի, հորեհների, ջրհեղեղների, կողոպուտի,

սպանությունների, մորթվածների, գիսաստղերի, ուրվականների, հրաշքների, դիակների մասին, Ֆրանսիայի, Գերմանիայի, Թուրքիայի գրավված կամ պաշարված քաղաքների մասին, գորահավաքների և պատերազմին ամենօրյա նախապատրաստության և այլնի մասին, իրադարձություններ, որ իրենց հետևից տանում են մեր բուռն ժամանակը՝ հաղթած ճակատամարտերը, այսքան-այսքան սպանվածները, նավաբեկությունները, ծովահենությունը, ծովամարտերը, աշխարհը, լիգաները, ռազմավարությունները և նոր տազնապալի լուրերը՝ խոստումների, երդումների, ցանկությունների, գործողությունների, հրամանների, խնդրանքների, գործընթացների, պաշտպանությունների, կոչների, բողոքների, կորուստների չլսված խառնուրդ՝ ահա թե ինչ է ամեն օր սղոցում մեր լսողությունը: Դրանց հետևում են լուրերը սպանությունների, դիմակահանդեսների, տոնակատարությունների, հորեյլանների, դեսպանատների, ծիարշավների, հաղթահանդեսների, ռազմավարի, շքերթների, խաղերի, թատերական ներկայացումների մասին: Այսօր մենք տեղեկանում ենք, որ նոր լորդեր ու պաշտոնյաներ են հայտնվել, վաղը՝ որ պաշտոնազրկվել են: Մեկն ազատվել է, մյուսը բանտարկվել է: Մեկը գնում է, մյուսը վճարունակ չէ, մեկը կարողություն է ստացել, մյուսի հարևանը սնանկացել է: Այստեղ լիություն է, այնտեղ՝ սով ու թանկություն: Ամեն օր ես հասարակական ու մասնավոր լուրեր եմ ստանում»:

«Հասարակական ու մասնավոր լուրերը» Լոնդոնում առաջին անգամ հայտնվեցին 1621 թվականի սեպտեմբերի 21-ին՝ «Լուրեր կամ ամենշաբաթյա նորություններ Իտալիայից, Գերմանիայից, Հունգարիայից, Լեհաստանից, Բոհեմիայից, Ֆրանսիայից և այլ երկրներից» անվանումով:

Անգլիական թերթը կողմնորոշված էր դեպի իր գերմանական և հոլանդական նախատիպերը, որն ակնհայտ է հենց թեկուզև թերթի անվանումից:

Անգլիական մամուլին մատուցման նոր ոճ փաստորեն պարտադրեց Թոմաս Գեյնսֆորդը, որին Բոռնի-Արչերն ու Բաթլերը՝ 1622 թվականին միավորվելուց հետո հրավիրեցին որպես համատեղ հրատարակություն հանդիսացող շաբաթաթերթի գլխավոր խմբագիր:

Գեյնսֆորդը, որն արդեն անցել էր իռլանդական պատերազմների բովոյվ և բավականաչափ շատ էր ճանապարհորդել, ոչ միայն խմբագրի անուրանալի տաղանդ ուներ, այլև ժանրակշիռ փորձ, որի շնորհիվ էլ մանուկի պատմության բազմաթիվ մասնագետներ նրան համարում են անգլիացի առաջին պրոֆեսիոնալ լրագրողն ու խմբագիրը, մինչդեռ ժամանակակիցները նրան ընդամենը «նորությունների վաճառական» էին կոչում: Հենց նրա շնորհիվ էլ թերթի էջերում փոխվեցին նորությունների մատուցման ձևը և ոճը: Գիշտ է՝ լուրերի գերակշիռ մասը դարձյալ ստացվում էր Ամստերդամից, սակայն Գեյնսֆորդի ջանքերի շնորհիվ նրանք տպագրվելուց առաջ արդեն նաև գնահատականներ և բնութագրեր էին «ծեռք բերում»:

Ուշագրավ են նաև ժամանակակիցների գնահատականները իրենց իսկ ժամանակակիցներին, որոնցից, մասնավորապես, Բեն Ջոնսոնը իր «Նորությունների պահեստ» կատակերգությունում (1625 թ.) Նաթանայիլ Բաթլերի հրատարակությունն անվանում է «ամենշաբաթյա խաբեություն՝ հանուն շահույթի», իսկ նման ժուռնալիստիկան պատկերում որպես մի դարաշրջանի ծնունդ, որը *«կարող է տեսնել իր խելահեղությունը կամ քաղցն ու ծարավը նորությունների տպագիր գրքույկներով, որ տպագրվում էին ամեն շաբաթ. ինքնագիր, մասից ծծած և ճշմարտության ոչ մի բառ չպարունակելով, իսկ ավելի մեծ դժբախտություն բնության մեջ կամ ավելի վատ բիծ դարի վրա լինել չի կարող»:*

Ֆրանսիայում պարբերական հրատարակությունները հայտնվեցին շատ ավելի ուշ, քան Գերմանիայում ու Իտալիայում, սակայն ամենօրյա կյանքը ձգում և հետաքրքրում էր ինչպես Ֆրանսիայի ժամանակագիրներին՝ ռեպորտյորներին, այնպես էլ բնականաբար՝ ֆրանսիացի ընթերցողին:

Ժամանակակից լրագրության էական տարրեր կային արդեն իսկ հիշատակված թե «Փարիզյան բուրժուայի թերթ»-ում, թե ժան դը Թրուայեի «Սկանդալային ժամանակագրություն»-ում:

Ֆրանսիական պարբերականների զարգացման վրա էական ազդեցություն ունեցան բելգիացի ու հոլանդացի հրատարակիչները, հատկապես Աբրահամ Վերհովենը, ով 1605 թվականին հրատարակում էր «Վերջին նորությունները» («Nieuwe Zyd-ingen»): Վերհովենի թերթը, Ֆրանկֆուրտում տպագրվող գալ-

լո-բելգիական «Մերկուրիոն»՝ օրինակ էին 1611 թվականին ֆրանսիական «Մերկուրիի» տպագրության համար: Այդ տարեգրի առաջին համարում պատմվում էր Ֆրանսիայում ու նրա սահմաններից դուրս տեղի ունեցած իրադարձությունների մասին՝ սկսած 1605 թվականից: «Ֆրանսիական Մերկուրիոն» սկսեց հրատարակել ժան Ռիշարը, նրա գործը շարունակեցին էտյեն Ռիշարը և Սլիվիե Վարենը:

Ֆրանսիայի հասարակական կյանքի վրա «Մերկուրիոն» լուրջ ազդեցություն ուներ: Կարդինալ Ռիշելյեն Ֆրանսիայի առաջին պետական գործիչն էր, ով գիտակցեց հասարակական կարծիքի վրա գաղափարական ներգործության անհրաժեշտությունը: Գալով իշխանության, այսինքն՝ դառնալով Ֆրանսիայի նախարար, կարդինալ Ռիշելյեն «Մերկուրիոն» իր աշխատանքային գործիքներից մեկը դարձրեց: 1624-1631 թվականներին «Ֆրանսիական Մերկուրիի» աշխատանքները ղեկավարում էր կարդինալի դրածո պադրե ժոզեֆը, որին ժամանակակիցները անվանում էին «գորշ բարեճնություն»: Միաժամանակ՝ կարդինալը հասարակական կարծիքի վրա համակարգված ներգործության միջոց էր որոնում, իսկ դրա համար անհրաժեշտ էր այլ կարգի պարբերական, քանի որ նախորդը այդ պահանջները չէր բավարարում:

Այսպիսին էր ֆրանսիական պարբերական մամուլի վիճակը մինչև 1631 թվականը, երբ ի հայտ եկավ Թեոֆրաստ Ռենոդոյի «La Gazette»-ն: Արքունիքում Ռենոդոն պաշտոն ստացավ շնորհիվ պադրե ժոզեֆի հովանավորության, որն արքայական բժիշկ Ռենոդոյին ներգրավեց «Մերկուրիի» աշխատանքներում: Այնտեղ տաղանդավոր լրագրողին նկատեց Ռիշելյեն և առաջարկեց նոր պարբերական հրատարակել: 1630 թվականին Ռենոդոն ձևակերպեց պաշտոնական թույլտվությունը՝ «Հասցեների գրասենյակ» ունենալու և ստացավ նաև Ֆրանսիայի ամբողջ տարածքում տեղեկություններ հավաքելու մենաշնորհը:

«Թեոֆրաստ Ռենոդոն սկիզբ դրեց առաջին թերթին՝ այսօրվա իմաստով քաղաքական ու պաշտոնական թերթին»՝ Շարլ Սենտ Բյովի այս խոսքերը ընդգծում են Ռենոդոյի ծառայությունները ոչ միայն ֆրանսիական, այլև համաշխարհային լրագրության առաջ:

Թերթը լույս տեսավ 1631 թվականի մայիսի 30-ին, որպես չորս էջով տպագրվող շաբաթաթերթ: Առաջին համարը նորություններ էր պարունակում Հռոմից, Պրահայից, Կոստանդնու-

պոլսից: Հիմնական թեմաներն էին առևտրական գները, պատերազմական ժամանակագրությունն ու նորությունները, արքունական քրոնիկոնը, դիվանագիտական լուրերը: Տարեվերջին հրատարակվեց թերթի տարեկան ամփոփագիրը:

Արքան ոչ միայն թերթի ընթերցողներից էր, այլև աննախադեպ քայլի էր դիմել՝ դրամական պարզև նշանակել խմբագրին իր գործունեության համար: Թերթը համարվում էր կառավարական թերթ և արդեն 1762 թվականից այն տպագրվում էր իբրև պաշտոնաթերթ՝ «Լա գազետա դե Ֆրանս» անվանումով, ու՝ մինչև 1944 թվականը:

Ռիշելյեն թերթի միջոցով ջանում էր տեղեկատվական ու գաղափարախոսական մեծատիրություն հաստատել, ինչպես և ամեն ոք՝ համոզված, որ ճիշտ է և օգտակար միայն այն տեսանկյունը և այն ընկալումները, որն ունի ԻՆՔԸ, և այդ իսկ պատճառով էլ թերթի ստացած բոլոր լուրերը ենթարկվում էին ամենախիստ և ամենաբժախնդիր խմբագրման, ասել է՝ թե գրաքննության: Նաև այդ հանգամանքն էր կարողինալին դրդել, որ ոչ միայն ինքը թղթակցի թերթին, այլև արքային՝ Լյուդովիկոս 13-ին էլ «լրագրող» դարձնի:

Իտալիայում առաջին պարբերականը լույս տեսավ 1636 թվականին՝ որպես շաբաթաթերթ և հրատարակիչներն էին Ամադորե Մասսին և Լորենցո Լանդին: Սակայն այդ պարբերականը որոշակի անուն չունեց: Անուն ունեցող առաջին թերթը, որ լույս տեսավ Իտալիայում, «Sincero»-ն էր («Անկեղծը»), որի հրատարակիչը Լուկա Ասարիոն էր: Թերթը հրատարակվում էր Ջենովայում և գոյություն ունեցավ 40 տարի՝ 1642-1682 թվականներին:

1641 թվականի նոյեմբերին անգլիացիներն առաջին անգամ խորհրդարանական նորությունների մասին տեղեկացան Սենյուել Պեկի «The Heads of Several Proceedings In This Present Parliament» («Մեր խորհրդարանում տեղի ունեցող հիմնական իրարածությունները») թերթից:

Ակնհայտ է, որ պատմությունը սիրում է կրկնվել, բայց ոչ ամբողջությամբ: Արքային անհաճո էր նման թերթի երևան գալը, սակայն այն շարունակեց հրատարակվել: Ավելին. նույն տարվա դեկտեմբերին հայտնվեց նաև նոր պարբերական. «The Diurnall.

of The Heads of all the Proceedings in Parliament» («Դիուռնալի-ա՝ կամ խորհրդարանում տեղի ունեցող հիմնական իրադարձու-թյունները»): 1642 թվականին Լոնդոնում արդեն նման հինգ շա-բաթաթերթեր էին տպագրվում: Ակնհայտ էր նաև, որ խորհրդա-րանական նորությունները լավ պահանջարկ վայելող ապրանք էին, և հենց այդ պատճառով էլ առաջարկները չուշացան: Սա-կայն ոչ բոլոր պարբերականները դիմացան ժամանակների քննությանը. անգլիական լրագրությանը որոշ պարբերականներ պարզևեցին միայն մեկ համար:

Որպես օրինակներ կարելի է նշել «խորհրդարանի հետա-խույզը», որն սկսեց հրատարակվել 1643 թվականին և լրագրու-թյուն բերեց նորությունը՝ ինֆորմացիան, այն փնտրելու և գտնե-լու համար ջանք թափելու անհրաժեշտությամբ հանդերձ: Պար-բերականը ընթերցողներին խոստանում էր, որ ծրագրում է **«Թա-գավորության մեծ խաղի մեջ սովորական խաբեբայությունները բացահայտել: Այդ նպատակն իրականացնելու համար պետք է գործել գաղտնի»:**

Չնայած դրան՝ բացահայտ գործող մամուլի միջոցների թիվն անշեղորեն ավելանում էր: 1644 թվականին՝ դրանք 17-ն էին, իսկ հինգ տարի անց՝ արդեն 24-ը:

Ռոյալիստների և խորհրդարանի կողմնակիցների սուր հա-կամարտությունն իր միանգամայն օրինաչափ արձագանքներն ունեցավ մամուլում:

Արքայի շահերը պաշտպանում էր Ջոն Բերկենհեդի խմբագ-րած «Mercurius Aulicus»-ը («Պալատական մերկուրի»), որը հարուցում էր Ջոն Միլտոնի գայրույթը: «Արեոպագիտիկայում» Միլտոնը գրել է. **«Մի՞թե մենք շարաթը մի անգամից պակաս չենք կարդում անվերջանալի արքունական զրպարտությունները խորհրդարանի ու հասարակության մասին, որ տպագրվում են (ինչը վկայում են դեռ չչորացած էջերը) և տարածվում են մեր մեջ՝ չնայելով ոչ մի գրաքննության»:**

Խորհրդարանական մամուլը գլխավորում էր լրագրող Մարչ-մոնտ Նիդհենը. նա էր խմբագրում «Mercurius Britannicus» («Բրիտանական Մերկուրի») շաբաթաթերթը, որը շատ ավելի կատարյալ էր մատուցում իր նյութերը՝ Նիդհենը նյութերը դաս-դասում էր ըստ կարևորության, այլ ոչ թե ժամանակագրական կարգով:

Արքայի մահապատժից և Անգլիայում հանրապետություն հաստատվելուց հետո մամուլի ազատության մասին «մոռացան»։ հալածանքներ սկսվեցին Ջորջ Ուորտոնի ռոյալիստական «Mercurius Elencticus» («Գթառատ Մերկուրի») և Սեմյուել Շեպարդի «Mercurius Pragmaticus» («Խրապաշտ Մերկուրիի») նկատմամբ։ 1649 թվականին ընդունվեց «Տպագրության կարգավորման մասին ակտը», որն ի վերջո հանգեցրեց արքայական մամուլի անհետացմանը ասպարեզից։

Մարչնոնտ Նիդհեմը խելամիտ համարեց անցնել նոր վարչակարգի կողմը, ուստի հեռանալով «Mercurius Pragmaticus»-ից՝ 1650 թվականին սկսեց հրատարակել «Mercurius Politicus»-ը։ Նա այժմ նույն եռանդով պաշտպանում էր Կրոմվելին և նրա շտաբանդական գործերին խառնվելը։ Ջորջ Քլիվլենդը ռոյալիստական մամուլում Նիդհեմին անվանեց «երկու սեռերի և երեք կուսակցությունների խայտառակություն», չնայած իր բավականին բարձրագույն հայտարարություններին, թե «Իմ կառավարությունը ոչինչ չէր արժենա, եթե չկարողանար դիմանալ թղթային կրակոցներին»։

1656 թվականին Օլիվեր Կրոմվելը գրաքննչական սահմանափակումները վերականգնեց։ Անգլիայում այդ ժամանակ երկու պաշտոնաթերթեր էին հրատարակվում «Mercurius Politicus»-ը և «Weekly intelligenser of the Commonwealth»-ը («Չամագործակցության ամենշաբաթյա տեղեկատու»)։ Երկուսն էլ խմբագրում էր Մարչնոնտ Նիդհեմը։ Նորոյա գովազդի առաջին օրինակները ի հայտ եկան հենց նրա թերթում։ 1658 թ. սեպտեմբերին «Mercurius Politicus»-ում անգլիացիները կարդացին, որ. ***«հատուկ, բոլոր բժիշկներից երաշխավորված չինական թեյը, այսպես կոչված՝ թշեան, այլ ժողովուրդների լեզվով՝ չայը, կարելի է ստանալ...» (նշվում էր հասցեն)։***

Անգլիական մամուլի վիճակն ավելի վատացավ ռեստավրացիայի ժամանակ։ Կառլոս Երկրորդի «Ակտը տպագրության մասին» (1662 թվական) բավականին խիստ էր, քանի որ. ***«Վերջին ժամանակների ընդհանուր ամենաթողությունը թույլ տվեց, որ շատ չարամիտ դեմքեր հանդգնեն տպագրել և տարածել հերետիկոսական և ապստամբական բովանդակության գրքեր»։*** Տպագրվում էին ընդամենը երկու պաշտոնաթերթեր՝ «The Intelligenser»-ը և «The News»-ը, որոնց հրատարակիչը համոզված միապետական Ռոջեր Լ'Էստրանժն էր. բնութագրական է, որ նա

համատեղում էր Անգլիայի գլխավոր գրաքննիչի պարտականությունները և ժուռնալիստի աշխատանքը:

Իրավիճակը փոխվեց մեծ ժանտախտի ժամանակ՝ 1665 թվականին: Խուսափելով ժանտախտից՝ Կառլոս Երկրորդն արքունիքը տեղափոխեց Օքսֆորդ: Լոնդոնից հեռու գտնվելով՝ արքան և արքունականները նորություններին տեղեկանալ էին ցանկանում, բայց վախենում էին ձեռք տալ Լոնդոնում հրատարակված թերթերին: Այդ պատճառով համալսարանական տպագրիչ Լեոնարդ Լիտչֆելդին հրահանգվեց նոր թերթ տպագրել: 1665 թվականի նոյեմբերի 14-ին տպագրվեց «The Oxford Gazette»-ի առաջին համարը և 11 ամիս թերթը լույս տեսավ շաբաթը երկու անգամ՝ երկուշաբթի և հինգշաբթի օրերին: Ի տարբերություն այլ թերթերի՝ «The Oxford Gazette»-ն բավականին հարուստ էր տեղեկատվությամբ:

«The Oxford Gazette»-ն շեշտադրում էր անկողմնակալ տեղեկատվությունը, էջերը չէր տրամադրում վերամբարձ բանավեճերի, ուստի արագ լուրջ մրցակից դարձավ պաշտոնաթերթերին: Արքայի Լոնդոն վերադառնալուց հետո, թերթը ևս տեղափոխվեց Լոնդոն, խմբագիր նշանակվեց Թոմաս Նյուկոմը և թերթը վերանվանվեց «The London Gazette», բայց շարունակում էր հին համարակալունը (առաջին համարը լույս տեսավ 1666 թ. փետրվարի 5-ին իբրև թիվ 24): «The London Gazette»-ն տպագրվում է մինչև հիմա և համարվում է Եվրոպայի ամենահին թերթերից մեկը:

1688 թվականի «փառավոր հեղափոխությունից» հետո Անգլիայում վերացավ նախնական գրաքննությունը, իսկ 1699 թվականին ընդունվեց «Իրավունքների մասին օրենքը»: Նախնական գրաքննության վերացումը մամուլի վրա առանձնապես մեծ անդրադարձ չունեցավ, բայց դրական զարգացումներն ակնհայտ էին. Թոմաս Մակոլեյի դիտարկումով Վիլիելմ Երրորդի գահակալության շրջանում արքայի ու արքունիքի վրա հարձակումները նվազել էին՝ քաղաքական մամուլը ընտելանում էր խոսքի ազատությանը: Մակոլեյը գրում էր. **«Կառավարության դեմ գրելու սովորույթը ինքնին վնասակար ներգործություն ունի: Քանզի նրանք, ովքեր ընտելացել էին կառավարության դեմ գրելուն, սովորել են օրենք խախտել, իսկ օրենքը, թեկուզև անհմաստ օրենքը, խախտելու սովորույթը մարդկանց մեջ կարող է զարգացնել լիակատար անօրինականություն: Ինչքան էլ մաքսային տուրքն անհեթեթ է՝ մաքսանենզը խաբերա է բոլոր դեպքերում»:**

17-րդ դարի կեսերից թերթերում հայտնվեց գովազդը, որը դառնալու էր լրագրային բիզնեսի կարևոր մաս: Արդեն 1673 թվականին Համբուրգում տպագրվում է հայտարարությունների թերթ՝ «Hamburger Relations Courier»-ը («Համբուրգյան տեղեկագիրը»):

Եվրոպայի առաջին օրաթերթը՝ «Einkommende Zeitung» («Եկող թերթ») լույս ընծայվեց 1650 թվականին Լայպցիգում:

Անգլիայի առաջին օրաթերթը «The Daily Courant»-ն էր («Ամենօրյա տեղեկագրեր», 1702 թվական), Ֆրանսիայինը՝ «Journal de Pari»-ն («Փարիզյան հանդես»-ը, 1777 թվական), Իտալիայինը՝ «Gazetta di Genova» («Ջենովայի թերթը», 1798 թվական):

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև եվրոպական մի քանի երկրների մամուլի պատմության հանգուցային թվերը. շվեդական առաջին թերթը՝ «Ordinari Post-Zijdender»-ը լույս է տեսել 1645 թվականին: Հետագայում այն դարձավ թագավորության պաշտոնաթերթը, խմբագրում էին շվեդ հայտնի գրողները (այդ թվում՝ Ա.Սթրինդբերգը): Նույն թվականին սկսեց լույս տեսնել նաև «Post-och inrikes Tidningar» թերթը, որի հիմնադիրը Շվեդիայի Քրիստինա թագուհին էր: Թերթի մեծագույն առանձնահատկությունն այն էր, որ մինչև վերջոս՝ 2007-ի փետրվար ամիսը կանոնավորապես հրապարակվում էր, դրանով իսկ հանդիսանալով աշխարհի տպագիր ամենահին թերթը: Դրանից հետո այն դարձավ էլեկտրոնային: Դանիայում արդեն 1770 թվականին արքան հռչակեց մամուլի ազատությունը, իսկ առաջին թերթը Կոպենհագենում հրատարակվեց 1663 թվականին՝ գերմաներեն: Երեք տարի անց լույս տեսավ դանիերեն առաջին թերթը: Նորվեգական առաջին թերթը հիմնադրվել է 1763 թվականին:

Եվրոպական հանդեսների ի հայտ գալը պայմանավորված էր 17-րդ դարի ինտելեկտուալ մթնոլորտով:

«Ժուռնալ» բառը ծագում է լատիներեն diurnalis «ամենօրյա» բառից, որ հիշեցնում է Հուլիոս Կեսարի հիմնադրած «Diurna»-ները: Եվրոպական առաջին հանդեսները գերազանցապես գիտական ուղղվածություն ունեին՝ գիտական նամակագրությունը բազմաթիվ մարդկանց համար դառնում էր հաղորդակցության միջոց: Հանդեսի տեղեկատվական-քարոզչական հնարավորությունները թե ծավալների և թե ընդգրկվումների առումով թերթերի նկատմամբ անհամեմատ մեծ էին:

Եվրոպական առաջին հանդեսը «Journal des Savants»-ն էր («Գիտնականների հանդեսը», 1665-1828 թվականներ), որի հիմնադիրը Ֆրանսիայի ֆինանսների նախարար Ժան Բատիստ Կոլբերն էր. նրան հաճախ համենատուն էին կարդինալ Ռիշելյեի հետ: Կոլբերնի պարբերականը լուսաբանում էր Եվրոպայի ինտելեկտուալ վերնախավին հետաքրքրող գիտական, քննադատական, գրական հիմնահարցերը:

«Journal des Savants»-ի առաջին համարը լույս ընծայվեց 1665 թվականի հունվարի 5-ին, Փարիզում: Խմբագիրն ու հրատարակիչը Դենի դե Սալլոն էր: «Ժուռնալը» տպագրվում էր սկզբում շաբաթը մեկ, հետո՝ երկու շաբաթը մեկ՝ 12 էջով. այն լրացնում էր գիտական հաղորդակցության, տեղեկատվության փոխանակման, բանավեճերի պակասը: Նյութերը տպագրվում էին իբրև նամականի: Հանդեսը նախընտրում էր գիտական բանավեճը: Դենի Սալլոյին օգնում էին ֆրանսիական մշակույթի հայտնի դեմքերը՝ Սառլեն Լեռոյ դե Գամբերվիլը և Ժան Շապլենը: 1666-1674 թվականներին հանդեսի խմբագիրն էր հունարենի պրոֆեսոր, արքատ Ժան Գալուան:

1665 թվականին Անգլիայում հայտնվեց «Philisopical Transactions of the Royal Society» («Թագավորական ընկերության փիլիսոփայական աշխատություններ») հանդեսը, որը Լոնդոնի Թագավորական ընկերության պաշտոնական օրգանն էր և տպագրվում էր ամիսը մեկ, խմբագիրն էր Հենրի Օլդենբերգը: Առաջին համարի տասը հոդվածներից վեցը թարգմանված էին «Journal des Savants»-ից:

1668 թվականին Հռոմում տպագրվեց իտալական առաջին հանդեսը՝ «Il Giornale de” Letterati» («Գրականագետների հանդեսը»): Խմբագիր Ֆրանչեսկո Նադգարիի համար օրինակ էր ծառայել դարձյալ «Journal des Savants»-ը: «Il Giornale de” Letterati»-ին հրատարակվեց մինչև 1679 թվականը և տպագրում էր գրականագիտական, լեզվաբանական, փիլիսոփայական հոդվածներ:

1682 թվականից մինչև 1731 թվականը Լայպցիգում տպագրվում էր լատինալեզու հանդես՝ «Acta Eruditorium»-ը («Գիտական երկտողեր»), առաջին խմբագիրն էր պրոֆեսոր Օտտո Մենկեն): Հանդեսն արագ արժանացավ համաեվրոպական ճանաչման, հանդեսի աշխատանքներին մասնակցում էր և իր հոդվածներ էր տպագրում Գոտֆրիդ Վիլհելմ Լեյբնիցը:

1696 թվականին «Mercure galant» ամսագրում հայտնվեց Շառլ Պերոյի «Քնած գեղեցկուհին» հանրահայտ հեքիաթը (ժամանակի համար հատկանշական է, որ Պերոն հեքիաթը տպագրեց անանուն, որովհետև չէր ուզում իր անունը կապել «ցածր ժանրի» հետ, որպիսին այդ ժամանակ, իշխող կլասիցիզմի օրենքներով, համարվում էր հեքիաթը): «Mercure galant»-ի հրատարակման թագավորական արտոնությունը ավելի ուշ ստացավ Շառլ Դյուֆրենին: Հենց նա առաջին անգամ լրագրության մեջ կիրառեց սեփական իրականությունն օտարերկրացու աչքերով դիտարկելու հնարքը՝ իր հրապարակումների հերոս դարձնելով Սիամի մի բնակչի, ով պատահաբար հայտնվել էր Փարիզում: «Սիամցու լուրջ և երգիծական արկածները» շարքում պատմվում էր մի մարդու մասին, ով բացարձակապես անծանոթ լինելով եվրոպական բարքերին, անհեթեթ իրավիճակներում է հայտնվում: Այդ հնարքով Դյուֆրենին ընթերցողների ուշադրությունը հրավիրում էր առօրյա կյանքի բացասական երևույթներին: Նրա այդ մեթոդը օգտագործեցին Լուսավորության դարաշրջանի հրապարակախոսները՝ Շառլ Մոնտեսքյոն «Պարսկական նամակներում», Օլիվեր Գոլդսմիթը՝ «Աշխարհի քաղաքացին կամ Լոնդոնում ապրող չին փիլիսոփայի նամակները Արևելքի իր բարեկամներին» և ուրիշներ:

17-րդ դարում Հյուսիսային Ամերիկայում տպագրության առաջատարը բացահայտորեն Նոր Անգլիան էր:

1638 թվականին հյուսիսամերիկյան գաղութներում հայտնվեց առաջին տպագրական հաստոցը. Նոր Անգլիայում Քենբրիջում (Մասաչուսեթսի նահանգ) բացվեց Հարվարդի քոլեջը և սեփական տպագիր արտադրանք ունենալու խնդիր դրվեց: 1640 թվականին Հյուսիսային Ամերիկայի բրիտանական գաղութներում հայտնվեց տպագիր առաջին գիրքը՝ «Սաղմոսների առաջին գիրքը՝ բարեպատվությամբ անգլիական չափի բերված», որի հրատարակության վրա աշխատել էին պուրիտան հեղինակները՝ Ռիչարդ Մեզերը, Ջոն Էլիոթը և այլք:

Իսկ Փենսիլվանիա նահանգի առաջին հրատարակությունները սկսվեցին 1685 թվականից: Նյու Յորքում տպագրական հաստոցը հայտնվեց 1693 թվականին, Վիրջինիայում՝ 18-րդ դարում՝ 1730 թվականին:

Հյուսիսային Ամերիկայի գաղութներում գրաքննչական սահմանափակումների առաջին դրսևորումը դարձան Ուիլյամ Պիմ-չընի «Մեր ապաշխարության հարգարժան գինը» (1650 թվական) կրոնական պամֆլետին հետևած գնահատականները՝ պամֆլետը հայտարարվեց «սխալ ու հերետիկոսական» և դատապարտվեց Բոստոնի շուկայի հրապարակում դահճի ձեռքով հրկիզման:

Անգլիայի կառավարությունը Հյուսիսամերիկյան գաղութների տպագիր արտադրանքի վերահսկումը հանձնարարել էր արքայական նահանգապետերին: Նահանգապետերի համար նախատեսված պաշտոնական հրահանգներում (1686 թվական) կար այսպիսի ենթակետ. **«Եվ քանի որ մեծ անհարմարություններ կարող են ծագել մեր վերոհիշյալ տարածքում մեր կառավարության օրոք ազատ հրատարակության հետևանքով, դուք պարտավոր եք ձեռնարկել միջոցներ, օգտագործելով բոլոր անհրաժեշտ հրամանները, որպեսզի ոչ ոք չպահի ոչ մի տպագրական հաստոց և որպեսզի ոչ մի գիրք, գրքույկ կամ որևէ այլ արտադրանք չտպագրվի առանց նախապես ստացած հատուկ թույլտվության կամ արտոնագրի»:**

Այս պայմաններում բնականաբար՝ Հյուսիսամերիկյան բրիտանական գաղութներում առաջին թերթի տպագրությունը գրաքննչական բարդությունների հանդիպեց: Առաջին թերթը ծնվեց Բոստոնում. 1690 թվականի սեպտեմբերի 25-ին՝ 1686 թվականին Լոնդոնից Բոստոն եկած Բենջամին Չարիսը տպագրեց «Pablick Occurrences Both Foreign and Domestick» («Հասարակական իրադարձություններ՝ ինչպես արտասահմանյան, այնպես էլ տեղական») թերթը: Չարիսին հաջողվեց տպագրել միայն մեկ համար, որովհետև Մասաչուսեթսի նահանգապետը իր կարգադրությամբ կասեցրեց թերթի տպագրությունը. պատճառաբանությունը համապատասխան արտոնագրի բացակայությունն էր և «տարբեր կասկածելի ու ոչ արժանահավատ հաղորդագրությունների» տպագրումը:

ԴԱՐ XVIII. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՉԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամերիկյան երկրորդ թերթի լույսընծայման վայրը ևս Բոստոնն էր: Բայց մինչ այդ՝ ինչպես և նախորդ գլուխներում, դարի ընդհանուր պատկերը՝ համառոտ:

1703 թ. Պետրոս Մեծը հիմնադրեց Պետերբուրգը: 1722 թ. հռլանդացի ծովագնաց Յակոբ Ռոզեվանը Եվրոպայի համար հայտնագործեց Ջատկի կղզին: 1770 թ. Ջեյմս Կուկը հասավ Ավստրալիայի արևելյան ափերին: 1775-ին ԱՄՆ-ում՝ Ջորջ Վաշինգտոնի գլխավորությամբ, սկսվեց պայքարը հանուն անկախության, որը հռչակվեց հաջորդ տարի: 1787-ին ընդունվեց ԱՄՆ-ի Սահմանադրությունը: 1788-ին Ավստրալիան ամբողջովին նվաճեցին բրիտանացիները: 1789-ին ԱՄՆ առաջին նախագահ ընտրվեց Ջորջ Վաշինգտոնը՝ նախագահելով մինչև 1797 թվականը:

Վերադառնանք Բոստոն:

1704 թվականի ապրիլի 27-ին հրապարակ եկած «Boston News Letter» («Նորությունների բոստոնյան թերթիկ») շաբաթաթերթի խմբագիրն ու հրատարակիչը Բոստոնի փոստատան կառավարիչ Ջոն Քեմպբլն էր: Թերթը մինչ այդ ստեղծված և որոշակի տարածում գտած ձեռագիր թերթիկներն ուներ հիմքում: Թերթում հրատարակվող նորություններն ու այլ նյութեր հիմնականում լոնդոնյան թերթերից էին վերցվում, և, բնականաբար, լուսաբանում էին անգլիական ու եվրոպական իրադարձությունները: Բացի այդ՝ թերթում տեղ էին գտնում նաև տեղեկություններ նավահանգիստ մտնող նավերի մասին, լուսաբանվում էին տարերային ու տեխնածին աղետները, տարաբնույթ իրադարձություններ և պատահարներ, հրապարակվում էին նաև ծովահենության և ավազակային հարձակումների մասին պատմող նյութեր, ինչպես նաև հայտարարություններ և գովազդ, որոնք խիստ անհրաժեշտ և կարևոր էին Բոստոնի պես նավահանգստային քաղաքի համար: Այդ ժամանակ Բոստոնը նոր կազմավորվող Ամերիկյան Միացյալ Նահանգների համար առևտրական և ծովային կենտրոններից մեկն էր: Իսկ, ինչ-

պես հայտնի է մարդկության գոնե հիշելի պատմությունից, հենց առևտրաարդյունաբերական կենտրոններն ու խաչմերուկներն են, որ հետագայում նաև ընդհանուր քաղաքակրթական կենտրոնների են վերածվում, զարգացում, արժեքներ ու չափանիշներ «պատրաստելով» երկրի այլ հատվածների համար ևս: Ամերիկացիները ենթադրում են, որ Քենսլեյի նախածեռնությունը բավականին կենսունակ էր. թերթը գոյատևեց 72 տարի:

Ամերիկյան երրորդ թերթը ևս Բոստոնում հայտնվեց: 1719 թ. դեկտեմբերի 21-ին Ուիլյամ Բրուկերը, որ փոստատան պետի պաշտոնում փոխարինել էր Քենսլեյին, լույս ընծայեց «The Boston Gazette» («Բոստոնի թերթը»): Հաջորդ իսկ օրը՝ դեկտեմբերի 22-ին, Ֆիլադելֆիայում, հրատարակիչ և խմբագիր Էնդրյու Բրեդֆորդը տպագրեց «American Weekly Mercury»՝ առաջին թերթը Բոստոնի սահմաններից դուրս:

1721 թվականին Բոստոնում արդեն երեք թերթ կար՝ տպագրվող երկուսին ավելացավ «New England Courant»-ը, որը հրատարակում էր Ջեյմս Ֆրանկլինը:

Ջեյմս Ֆրանկլինի հրատարակած թերթը պետական վերահսկողությունից ազատ առաջին թերթն էր:

Նախընթաց կիսապաշտոնական թերթերից Ֆրանկլինի թերթն էապես և շահեկանորեն առանձնանում էր իր անկախ տեղեկատվությամբ, ուր արտացոլվում էր գաղութներում իրերի իրական վիճակը, ինչպես նաև՝ քննադատական վերլուծության էր ենթարկվում գաղութային վարչակարգի գործունեությունը, որն էլ, իր հերթին, առաջացնում էր իշխանությունների անբարյացկամ վերաբերմունքը: Եվ, չնայած նրան, որ նախնական գրաքննությունն արգելվել էր արդեն 1723 թվականին, Մասաչուսետս նահանգի իշխանությունները Ջեյմս Ֆրանկլինին արգելեցին տպագրել կամ հրատարակել իր թերթը «կամ էլ ցանկացած պամֆլետ կամ էլ այլ նմանատիպ թերթիկ, եթե այն նախապես չի կարդացվել և չի արտոնվել տվյալ գավառի քարտուղարի կողմից»:

«New England Courant»-ը Մասաչուսետս նահանգի հասարակական-քաղաքական կյանքի էական ու նշանակալից երևույթ կարելի է համարել և, ամենաառաջին հերթին այն պատճառով, որ այն պաշտպանում էր ազատության, և մասնավորապես, ազատ խոսքի արտահայտման մարդու անօտարելի իրավունքները:

Ջեյմս Ֆրանկլինի ոչ հարազատ եղբայրը՝ Բենջամին Ֆրանկլինը, ով, սկսած 1722 թվականից, ակտիվորեն համագործակցում էր թերթի հետ, իր էսսեներից մեկում գրում էր. **«Առանց մտքի ազատության չի կարող լինել այնպիսի իրողություն, ինչպիսին իմաստնությունն է, և չկա հասարակական ազատություն առանց խոսքի ազատության. որևէ մարդու իրավունքը չպետք է խախտի կամ ճնշի այլ մարդու իրավունքները»:**

Խոսքի և մամուլի ազատության խնդիրն այդ ժամանակներից դառնում է աշխարհամասի քաղաքակրթության նոր ձևավորվող գլխավոր և կենսական խնդիրներից մեկը: Ի պատիվ ամերիկացիների՝ անհրաժեշտ է նշել, որ նրանք հստակորեն գիտակցում և գնահատում էին խոսքի և մամուլի ազատության արժեքը, այն համարելով մյուս բոլոր ազատությունների հիմնաքարը: Եվ դա ոչ միայն գիտակցությունն ու ցանկությունն էր նրանց համար, այլ ամենօրյա գործունեությամբ ամրապնդվող կենսակերպ ու հոգեվիճակ:

1725 թվականին Նյու Յորքում սկսեց լույս տեսնել Ուիլյամ Բրեդֆորդի «The New York Gazette» -ն («Նյույորքյան թերթ»), իսկ ընդամենը հինգ տարի անց՝ 1730-ին, չորս գաղութներում կանոնավոր տպագրվում էին յոթ պարբերականներ: 1735 թվականին միայն Բոստոնում հինգ թերթ էր տպագրվում, որն այն տարիների համար հիրավի տպավորիչ քանակ էր:

1729 թվականին վերադառնալով Անգլիայից՝ Բենջամին Ֆրանկլինը Բոստոնից տեղափոխվեց Ֆիլադելֆիա՝ նախաձեռնելով «The Pennsylvania Gazette»-ի («Փենսիլվանիայի թերթ») տպագրությունը՝ այն դարձնելով առավել պրոֆեսիոնալ, տեղեկատվությամբ հագեցած, հետաքրքիր ու շահույթ բերող թերթը գաղութներում: 1729 թվականի հոկտեմբերի 2-ին տպագրվեց «The Pennsylvania Gazette»-ի առաջին համարը:

Ինչպես և թելադրում էին «անհատական ժուռնալիզմի» չգրված, բայց բոլորի կողմից ընդունված կանոնները, Ֆրանկլինն իր թերթում հանդես էր գալիս միաժամանակ երեք դեմքով. տպագրիչ-հրատարակչի, խմբագրի և հիմնական հեղինակի: Ուշագրավ են Բենջամին Ֆրանկլինի մտքերն ու պատկերացումները լրագրողին և խմբագրին առաջադրվող պահանջների մասին. **«Թերթի էջերում հանդես եկող հեղինակը (առաջադեմ ու լուսավորյալ մարդկանց տեսանկյունից) պետք է ճկուն լեզու ունենա, տիրապետի գրավոր խոսքի ձիրքին և իրադարձություննե-**

րը նկարագրի պարզ, հասկանալի, սեղմ... Նա պետք է հասու լինի իր ժամանակի աշխարհագրությանը, պատմությանը, տեղյակ լինի թագակիր անձանց ու պետության շահերին, արքունիքի գաղտնիքներին, բոլոր ժողովուրդների սովորույթներին ու ավանդույթներին»:

Առաջինը հենց այդ թերթը սկսեց աչքի ընկնել լրագրային ժանրերի բազմազանությամբ, հետաքրքիրը, օգտակարն ու անհրաժեշտը համատեղելու կարողությամբ: Հենց նա էր ուշագրավ պատմություններ հրատարակում և միաժամանակ տարածում լուսավորության գաղափարները, որոնց քարոզիչն Ամերիկայում դարձավ Բենջամին Ֆրանկլինը: Բացի լուսավորչական խնդիրները, նպատակ էր դրվում ընթերցողներին պատկերացում տալ ամերիկյան նոր ազգի ու ազգային միասնության մասին: Այդ թերթում առաջին անգամ տպագրվեց հետագայում հանրահայտ դարձած նկարը, ուր պատկերված էր յոթ մասերի բաժանված օձը (գաղութների թվով)՝ «Միավորվիր կամ մեռիր» մակագրությամբ: «The Pennsylvania Gazette»-ն դարձավ Ամերիկայի ամենահանրահայտ թերթը և օրինակ էր ծառայում նոր ստեղծվող թերթերի համար: Հասկանալի է, որ ոչ բոլոր հրատարակիչներն ունեին Ֆրանկլինի տաղանդը, բայց բոլորը նրա թերթի օրինակով ջանում էին համադրել տեղակատվությունը, վերլուծական և ժամանցային նյութերը՝ ուշադրություն դարձնելով մաս շարադրանքի ոճին:

Ֆրանկլինը վարում էր խմբագրական խելամիտ ու հեռատես քաղաքականություն՝ թերթում զետեղելով նորություններ գաղութի կյանքից և արտասահմանից՝ դրանք սերտորեն շաղկապելով փենսիլվանացիների առօրյա ու կենսական շահերի հետ: Նա ինքն իրեն՝ որպես խմբագրի, նամակներ էր գրում, հրատարակելով դրանք թերթում, ապա՝ որպես խմբագիր՝ դարձյալ հրապարակավ, պատասխանում էր դրանց:

Հետագայում, վերհիշելով ու գնահատելով այդ փաստը, Ֆրանկլինը գրում էր. *«Ձարգացող նամակագրությունը բարելավում էր իմ թերթը, մեծացնում տպաքանակը, մասն` գովազդային հայտարարությունների թիվը, որը, այդպիսով, ինձ համար նշանակալից եկամուտ էր ապահովում: Իմ հին մրցակցի թերթը համապատասխանաբար անկում էր ապրում»:* Հրատարակելով բազմաթիվ և տարաբնույթ ընթերցողներին ուղղված թերթ՝ Ֆրանկլինը ձգտում էր ձերբագատվել քաղաքական կամ անձ-

նական հաշվեհարդարներից՝ մերժելով այդ կարգի մյուսերը: Այդ մասին նա գրել է. *«Բաժանորդների հետ կապվելով նրանց կամ հետաքրքիր կամ օգտակար ընթերցանությամբ ապահովելու պարտականությամբ, ես չեմ կարող նրանց վիրավորել՝ թերթը լցնելով ինչ-որ մեկի բարբաջանքով, որը բոլորովին չի առնչվում իմ ընթերցողին»:*

Ուշագրավ և արժանահիշատակ է նաև այն հանգամանքը, որ Ֆրանկլինի Ֆիլադելֆիա տեղափոխվելով, ինչպես ապացուցում են ոչ միայն ժամանակի իրադարձությունները, այլև նրա իսկ ժամանակակիցներից շատերը, առժամանակ գոնե այնտեղ է տեղափոխվում նաև բրիտանական գաղութների ինտելեկտուալ և ժուռնալիստական կենտրոնը: Ժամանակների և ժամանակակիցների համար ակնառու է նաև, որ Ֆրանկլինի հրատարակած և հեղինակած թերթը ոչ միայն Փենսիլվանիայում ազդեցություն ու կշիռ ուներ:

1732 թվականին նա սկսեց հրատարակել գերմանալեզու «Philadelphia Zeitung» («Ֆիլադելֆյան թերթ») պարբերականը, որն առաջին օտարալեզու թերթն էր գաղութներում:

Ֆրանկլինի հրատարակչական և գաղափարական հետաքրքրությունների շրջանակը, սակայն, Փենսիլվանիայով չէր սահմանափակվում: Նա հնարավորինս նպաստել է նաև մյուս գաղութներում թերթերի հրատարակությանը, որոնք նրա ոչ միայն մասնագիտական բավարարվածության զգացումին էին հազուրդ տալիս, այլև հստակ գործարար նպատակներ էին հետապնդում, քանի որ նա իր աջակցությամբ բացված թերթերի փայտտերն էր հանդիսանում: «Ինքնակենսագրության» մեջ Ֆրանկլինը մանրամասն նկարագրում է՝ ինչպես 1733 թվականին իր *«Ենթավարպետներից մեկին ուղարկում է Չարլսթոն, որ Հարավային Կարոլինայում է, ուր տպագրիչ էր անհրաժեշտ: Ես նրան ապահովեցի հաստոցով ու տառատեսակներով՝ ինչպես ընկերության հետ պայմանագիրն էր, որի համաձայն ինձ էր հասնում տպագրության եկամուտների մեկ երրորդը, ես ինձ վրա էի վերցնում ծախսերի մեկ երրորդը»:* Խոսքը Լյուիս Թիմոթիի մասին է, որը Չարլսթոնում հրատարակում էր «The South Caroline Gazette»-ն («Հարավային Կարոլինայի թերթ»): 1738 թվականին Լյուիս Թիմոթիի մահից հետո թերթի հրատարակությունը ստանձնեց նրա այրին՝ Էլիզաբեթ Թիմոթին՝ դառնալով առաջին կինը Ամերիկայում, ում վիճակված էր թերթ խմբագրել ու հրատարակել:

Բենջամին Ֆրանկլինին լիովին կարելի է համարել նաև ամերիկյան հանդեսների կնքահայրը: Իբրև օրինակ ընտրելով լոնդոնյան «The Gentleman's Magazine» («Ջենտլմենի հանդեսը»), Ֆրանկլինը որոշեց իր նոր նախատեսվող հանդեսի խմբագիր նշանակել իրավաբան Ջոն Ուեբին, ով ժամանակին էսսեներ էր գրել «The Pennsylvania Gazette»-ի համար: Սակայն Ուեբը (ակնկալելով ավելի բարձր տոկոս եկամուտներից) այդ նախագիծը փոխանցեց Ֆրանկլինի հին մրցակից Էնդրյու Բրեդֆորդին: 1740 թվականի նոյեմբերի 6-ին իր «American Weekly Mercury» («Ամերիկյան շաբաթական տեղեկագիր») թերթում նա հայտարարեց, որ նտադիր է հրատարակել «The American Magazine, or a Monthly View of the Political State of the British Colonies» («Ամերիկյան հանդես կամ Բրիտանական գաղութների քաղաքական գործերի ամենամսյա տեսություն») հանդեսը:

1740 թվականին նոյեմբերի 13-ին՝ մի շաբաթ անց, Ֆրանկլինը «The Pennsylvania Gazette»-ում ազդարարեց «The General Magazine and Historical Chronicle for All the Britist plantations in America»-ի («Ամերիկայի բրիտանական բոլոր գաղութների իրադարձությունների ժամանակագրության համընդհանուր հանդես») հրատարակման մասին: Ֆրանկլինը մրցակցին ու նախկին աշխատակցին մեղադրեց անազնվության մեջ. *«Մեր հանդեսը, որ ստեղծվում է անգլիական հանդեսների օրինակով, երկար ժամանակ նախապատրաստական փուլում էր գտնվում, մենք նամակագրական կապ էինք հաստատել գաղութի առավել գրագետ մարդկանց հետ: Այդ պատճառով ավելի վաղ այն չէր կարող տպագրվել, թեպետ ոմն մեկը (անձնապես տեղեկացված լինելով մեր ծրագրերի մասին), նախընտրեց հանդեսի մասին իրազեկել «The Mercury»-ի նախորդ համարում՝ առանց մեր համաձայնության, հավանաբար, կարծելով, որ կանխելով մեզ սեփական հրատարակության մասին հայտարարությամբ, կստիպի հրաժարվել մեր ծրագրերից և մեր ցանած ամբողջ բերքն ինքը կհավաքի»:*

Սկսվեց մրցակցությունը՝ Ուեբը և Բրեդֆորդը հայտարարեցին, որ իրենց հանդեսն ավելի էժան է լինելու, ի պատասխան Ֆրանկլինը տարեկան բաժանորդագրություն չկատարեց, այլ ամբողջ տպաքանակը վաճառեց վեցական պենսով: Ուեբն ու Բրեդֆորդը կարողացան Ֆրանկլինից երեք օրով առաջ ընկնել՝ 1741 թ. փետրվարի 13-ին լույս ընծայվեց նրանց «The American Magazine»-ը, փետրվարի 16-ին Ֆրանկլինի «The General Mag-

azine»-ը, որի շապիկին տպված էր հունվար` դա Ֆրանկլինի պոստֆակտում ռևանշն էր:

Երկու հանդեսներն էլ իրենց նախատպագրական աղմուկին հակառակ` կարճ կյանք ունեցան. Բրեդֆորդի «The American Magazine»-ը տպագրվեց երեք ամիս, Ֆրանկլինի «The General Magazine»-ը` վեց ամիս: Երկու հանդեսներն էլ առանձնանում էին նյութի բովանդակության ու ընտրության ձևով: Բրեդֆորդինը քաղաքական վերլուծությունն էր շեշտադրում` խորհրդարանական իրադարձություններ, գաղութների քաղաքական կյանք: Ֆրանկլինը (լինելով հրատարակիչ և խմբագիր) գրական-քաղաքական ձևն էր նախընտրել. «The General Magazine»-ի էջերում քննարկվում էին Անգլիայի ու Իսպանիայի պատերազմին առնչվող քաղաքական իրադարձությունները, տնտեսական (օրինակ` թղթադրամների շրջանառության մասին), կրոնական խնդիրներ: Գաղութների ընթացիկ քաղաքական կյանքը ներկայացվում էր տեղական թերթերի նորությունների արտատպությամբ (ներառյալ ամենահեռավոր նահանգները): «Պատմական ժամանակագրություն» խորագրով Ֆրանկլինը ներկայացնում էր բոլոր իրադարձությունների ժամանակագրությունը` ամսական կտրվածքով, որ հատկապես մեր օրերում ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ` որպես պատմական վավերագիր: Գրական բաժնում տպագրվում էին տեղացի և անգլիացի հեղինակների էսսեներ, բանաստեղծություններ:

Ամերիկյան մամուլի քաղաքականացվածության և առավել արմատական-հեղափոխական դառնալու առիթը 1765 թվականին բրիտանական խորհրդարանի ընդունած օրենքն էր` «Ջինանշանի կիրառման հարկման» մասին, համաձայն որի հարկվում էին նաև բոլոր տպագիր և պարբերական հրատարակությունները: Ամերիկյան արդեն իսկ կայացող և հեղինակություն վայելող մամուլը դրան արձագանքեց միակամ` հակաբրիտանական բուռն հրապարակումներով: Եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ ամերիկյան մամուլն արդեն իսկ որոշակիորեն հասարակական կարծիք ձևավորողի, քարոզչի և, ինչու, ոչ, նաև կազմակերպչի գործառույթներ էր իրականացնում, ապա պետք է խոստովանենք, որ այս իրադարձությունները ևս որոշակիորեն կազմակերպեցին ու նախապատրաստեցին ընդամենը մեկ տասնամյակ անց իրենց գագաթնակետին հասած անկախության նվաճմանն ուղղված ամերիկացիների պայքարը:

Անհրաժեշտ է նաև նշել, որ դա հրապարակախոսների և լրագրողների տաղանդի ոչ միայն ծաղկման, այլև բացահայտման մի շրջանն էր, երբ հանդես էին գալիս Բենջամին Ֆրանկլինը, Ջեյմս Օտիսը, Ջոն Դիկինսոնը, Թոմաս Պեյնը, Թոմաս Ջեֆերսոնը, Ալեքսանդր Չամփլտոնը, Ջոն Ադամսը, Սեմյուել Ադամսը, Դանիել Դյուլանին, Սեմյուել Սիբերին:

Հենց նրանք էլ առաջ քաշեցին «բնական իրավունքների» գաղափարը՝ հիմքում ունենալով Ջոն Լոկի ու Ջեյմս Հարինգտոնի հեղինակությանը:

Բոստոնցի փաստաբան Ջեյմս Օտիսը 1764 թվականի օգոստոսի 20-ին «The Boston gazetta» -ում («Բոստոնի թերթում») տպագրեց «Բրիտանական գաղութների հավաստված և ապացուցված իրավունքները» պամֆլետը՝ պաշտպանելով գաղութների իրավունքները. *«Ձևակերպելով գաղութաբնակների բնական իրավունքների գաղափարը, ես ապացուցված եմ համարում այն փաստը, որ նրանք մարդիկ են՝ նույն Արարչի ընդհանուր երեխաները, ինչպես Մեծ Բրիտանիայի իրենց եղբայրները: Բնությունը բոլորին պարզևել է հավասար ու կատարյալ ազատություն, որպեսզի գործեն օրենքի շրջանակներում՝ որոշարկված բնությամբ և բանականությամբ, կախում չունենալով այլ մարդկանց կամքից, տրամադրությունից, կրքից կամ կամայականությունից»:*

Ջինանշանի հարկման օրենքի դեմ բուռն ընդվզումները հանգեցրին 1766 թվականին նրա վերացմանը, սակայն մեկ տարի անց բրիտանական խորհրդարանը՝ ֆինանսների նախարար Չարլզ Թաունշենդի առաջարկով, օրենսդրական փաթեթ ընդունեց, որը նախատեսում էր նոր մաքսատուրքեր՝ գաղութներ ներմուծվող ապրանքների համար: Հարկվող ապրանքների ցանկում էին թեյը, ապակին, թուղթը, ներկերը: Քանի որ ամերիկյան տարածքները գերազանցապես օգտագործում էին Եվրոպայից ներմուծվող թուղթը, Թաունշենդի օրենսդրական փաթեթը ամերիկյան մամուլում լուրջ դժգոհություն հարուցեց: Որոշ ժամանակ անց՝ անգլիական կառավարության հարկադրական քայլը՝ 1771 թվականին Թաունշենդի օրենսդրական փաթեթի չեղյալ հայտարարելը, այլևս ուշացած էր: Մինչ այդ՝ 1768 թվականին արդեն, Սեմյուել Ադամսի և Ջեյմս Օտիսի նախաձեռնությամբ սկսվել էր անգլիական ապրանքների բոյկոտը, որն ակտիվորեն պաշտպանել էին ամերիկյան բոլոր զանգվածային տեղեկատվամիջոցները:

րը և որն արդեն իրապես զանգվածային բնույթ էր ստացել: Թերթերի էջերում հայտնվում էին կարգախոսներ հետևյալ բովանդակությամբ. **«Ամբոխ պետք չէ, ապստամբություններ պետք չեն, հանգիստ թողեք ձեր ամենաստեղի թշնամիներին և նրանց սեփականությունը: Պահպանեք փողերը և դուք կպահպանեք ձեր երկիրը»:** Իր խորքում խիստ արդյունավետ և, միաժամանակ, խիստ շահավետ կոչ, որը խիստ համահունչ էր տիրող տրամադրություններին և դրանով իսկ՝ կիրառման ու կենսագործման օրավուր աճող ներուժ ուներ: Շնորհիվ զանգվածային տեղեկատվամիջոցների նպատակամետ գործունեության՝ հասարակական գիտակցության մեջ արդեն իսկ ձևավորվել էր Ամերիկայի զարգացման սեփական և իմքնատիպ ուղու, և որպես դրա անհրաժեշտ նախապայման՝ անկախության գաղափարի անհրաժեշտությունը:

1773 թվականին «The Massachusetts Spy» («Մասաչուսետսի հսկիչ») թերթը հռետտորական հարց էր առաջադրում. **«Ինչպե՞ս կարող է ԲՐԻՏԱՆԻԱ կզղին շահագործել այնպիսի վիթխարի մայրցամաք, ինչպես ԱՄԵՐԻԿԱՆ է, որն ավելի քան ինն անգամ գերազանցում է նրա սահմանները: Ամբողջ աշխարհը զարմանում է այդ մեծագույն անհեթեթությունից»:** Այդ ժամանակ Լոնդոնում գտնվող Բենջամին Ֆրանկլինը անգլիական թերթերում հրապարակում էր սուր պամֆլետներ («Ուղեցույց՝ ինչպես մեծ կայսրությունից ստեղծել փոքրը», «Պրուսիայի արքայի հրամանը» և այլն) և անխնա քննադատում էր Բրիտանիայի կայսերական նկրտումներն ու նախազգուշացնում գաղութների հանդեպ անխոհեմ քաղաքականության հետևանքներից: Ֆրանկլինը, մասնավորապես, գրում էր. **«Առաջին հերթին, ջենտլմեններ, դուք պետք է հիշեք, որ մեծ կայսրությունը մեծ կարկանդակի մեծան հեշտ է կոտրատել եզրերից»:**

Ամերիկյան մամուլի նախահեղափոխական ու հեղափոխական հրապարակախոսությունը, փաստորեն, խաչակրաց արշավանք էր հայտարարել Բրիտանիայի դեմ, որը բնորոշվում էր ծայրահեղականությամբ, կտրուկությամբ ու աներերությամբ: Հասարակական-քաղաքական իրավիճակի ցանկացած, անգամ չնչին, փոփոխությունն օգտագործվում էր քարոզչական նպատակներով: 1773 թվականին «The Boston Gazette»-ի խմբագրի տանը հղացված «Բոստոնյան թեյախմությունը» առավել սրեց վիճակը: Բրիտանական կառավարության հրատարակած «Ան-

հանդուրժելի գործողությունները», բոստոնյան նավահանգստի շրջափակումը հանգեցրին Առաջին մայրցամաքային կոնգրեսին, որ տեղի ունեցավ 1774 թվականի սեպտեմբեր-հոկտեմբերին Ֆիլադելֆիայում: Կոնգրեսը հավանություն տվեց անգլիական ապրանքների բոյկոտին, ընդունեց «Իրավունքների մասին Յոթնամյա հրահրանք» և մամուլին կոչ արեց ակտիվ լուսաբանել իրերի իրական վիճակը: Մամուլը, Ֆրանկլինի խոսքերով, ոչ միայն երկաթը սկսեց տաք-տաք ծեծել, այլև՝ շիկացնել այն՝ կռելու և կոփելու համար:

«Ամերիկացի», «ամերիկյան» բառերը ընդգծված հաճախ էին հայտնվում պամֆլետների տեքստերում, կոչերում, այդ ժամանակի բաց նամակներում ու հոդվածներում, որպեսզի արժևորվեր գաղութների միասնականությունը՝ ընդդեմ բրիտանական սպառնալիքի: Կոնգրեսի նիստերից մեկի ժամանակ Պատրիկ Յենրին հայտարարեց. **«Այլևս տարբերություններ չկան վիրջինիացու, փենսիլվանիացու, նյույորքցու և Նոր Անգլիայի բնակիչների միջև: Հետայսու ես վիրջինիացի չեմ, այլ՝ ամերիկացի»:**

1775 թվականի ապրիլի 19-ի զինված ընդհարումները Լեքսինգտոնում ու Կոնկորդում սկիզբ դրեցին անկախության համար պատերազմին (ամերիկյան հեղափոխությանը): Ջանգվածային լրատվամիջոցների դերը, հրապարակախոսական և հռետորական հրապարակումների նշանակությունը շրջադարձային պահերին հատկապես կարևոր էին և են ազգի համախմբման նպատակով:

1776 թվականի հունվարի 10-ին Թոմաս Պեյնը (սկզբում անանուն) հրապարակեց «Ողջախոհություն» պամֆլետը, որ ամերիկյան պատմության մեջ իր ուրույն դերն էր կատարելու: Ճակատագրի հեգմանքով հեղինակն ամերիկացի չէր, և ընդամենը մեկ տարի առաջ էր Անգլիայից Ֆիլադելֆիա տեղափոխվել: Ուշագրավ է, որ «Ողջախոհություն» պամֆլետը երեք անսվա ընթացքում վաճառվեց ավելի քան 120000 տպաքանակով և Պեյնը միանգամից դարձավ ամենահանրահայտ անձանցից մեկը:

«Սեփական կառավարություն ունենալը մեր բնական իրավունքն է»՝ հաստատում էր Պեյնը: 1776 թվականի հուլիսի 2-ին մայրցամաքային երկրորդ կոնգրեսը Ֆիլադելֆիայում քվեարկեց Բրիտանիայից լիակատար անկախության օգտին, հուլիսի 4-ին ընդունվեց Թոմաս Ջեֆերսոնի հեղինակած «Անկախության Յոթնամյա հրահրանք»: **«Սենք ելնում ենք այն ակնհայտ ճշմարտություն»**

նից, որ Արարիչը բոլոր մարդկանց հավասար է ստեղծել՝ որոշակի անօտարելի իրավունքներով, որոնց թվին են պատկանում կյանքը, ազատությունը և երջանկության ձգտումը»: Անկախության Յուճակագրի այս հանրահայտ խոսքերն ամփոփում էին Լուսավորության դարաշրջանի քաղաքական մտքի զարգացման որոշակի փուլը:

1783 թվականին Անկախության համար պատերազմի ավարտը նշանակում էր կարևոր գործընթացի ավարտ, որը նշանակալից փոփոխությունների բերեց ամերիկյան ժողովրդի ինտելեկտուալ կյանքում: Էդմունդ Սորգանը դիպուկ է նկատել. *«1740 թվականի Ամերիկայի առաջատար ինտելեկտուալները հոգևորականներն էին, որոնց մտքերը ուղղված էին աստվածաբանությանը, 1790 թվականին առաջատար ինտելեկտուալներ դարձան պետական գործիչները, որ մտածում էին քաղաքականության մասին»:*

Անկախության առաջին իսկ օրերից ամերիկյան մամուլում լայնորեն սկսեց քննարկվել սահմանադրության նախագիծը: Այդ թվականների անհամար հրապարակումներում մանրամասն քննարկվում էին բոլոր թեր և դեմ տեսակետները:

Այդ հրապարակումների մեջ հատուկ տեղ ունի քաղաքական 85 էսսեների շարքը, որ հետո միավորվեց «Ֆեդերալիստ» խորագրով: Այդ էսսեները գրել են 1787-1788 թվականներին պետական երեք նշանավոր գործիչներ Ալեքսանդր Յամիլտոնը, Ջեյմս Մեդիսոնը, Ջոն Ջեյր: Էսսեները տպագրվում էին տարբեր թերթերում «Պուբլիոս» կեղծանունով:

Կառավարման հանրապետական ձևի մասին արմատական հարցը քննարկվում էր 39-րդ էսսեում, որը գրել էր Ջեյմս Մեդիսոնը. *«Ինքնին ծագող առաջին հարցը՝ զուտ հանրապետական պիտի լինի մեր կառավարումը՝ ըստ ձևի ու բովանդակության: Միանգամայն ակնհայտ է, ու կառավարման միայն այդ, և ոչ թե որևէ այլ ձևն է համապատասխանում ամերիկյան ժողովրդի ոգուն, հեղափոխության հիմնարար սկզբունքներին կամ ազնիվ ձգտումներին, որով լի են ազատության բոլոր ջատագովները՝ կառուցել մեր քաղաքական փորձը մարդկության ինքնակառավարման ընդունակության վրա»:*

Սահմանադրության տեքստը նոր երկրի քաղաքացիներին ազատության լիակատար երաշխիքներ չէր տալիս: Թոմաս Ջեֆերսոնը իր «Ինքնակենսագրության» մեջ գրում է, որ սահմա-

նադրության տեսքով իրեն տազնապ էր պատճառում այն *«հստակ արտահայտված, որոշակի դրույթների բացակայությունը, որոնք պետք է կոչված լինեին ապահովելու հավատի, մամուլի, անձի ազատությունը, որ գտնվում է Habeas corpus-ի մշտական պաշտպանության տակ»*:

Թոմաս Ջեֆերսոնի, Ջեյմս Մեդիսոնի և հասարակական-քաղաքական այլ գործիչների ճնշմամբ 1789 թվականին Սահմանադրությանը հավելվեցին տասը լրացումները («Իրավունքների մասին օրենքը»): Ամերիկայի զանգվածային լրատվամիջոցների գոյության համար հատկապես կարևոր էր առաջին լրացումը, որը հաստատագրում էր. *«Կոնգրեսը չպետք է ընդունի որևէ օրենք, որը սահմանափակում է խոսքի և մամուլի ... ազատությունը»*:

Ջորջ Վաշինգտոնի կառավարության ֆինանսների նախարար Ալեքսանդր Յամիլտոնը, ով նաև ֆեդերալիստների կուսակցության գաղափարախոսն էր, 1789 թվականի ապրիլին հիմնեց «The Gazette of the United States»-ը («Միացյալ Նահանգների թերթ»), որի խմբագիրը Ջոն Ֆենոն էր: «The Gazette of the United States»-ը փաստորեն դարձավ ԱՄՆ-ի վարչակարգի պաշտոնաթերթը և ակտիվորեն աջակցում էր Յամիլտոնի քաղաքական բոլոր նախաձեռնություններին:

Ի պատասխան 1791 թվականի հոկտեմբերին Ջեֆերսոնը և Մեդիսոնը Ֆիլադելֆիայում սկսեցին հրատարակել «The National Gazette»-ն («Ազգային թերթ»): Որպես Յանրապետականների թերթի խմբագիր հրավիրվեց հայտնի բանաստեղծ Ֆիլիպ Ֆրենոն: Ջեֆերսոնն այդ թերթում չէր տպագրվում, «The National Gazette»-ի էջերը տրամադրվում էին ֆեդերալիստների քաղաքականությունից դժգոհ մարդկանց: Յականարտող թերթերի պատերազմը շարունակվեց երկու տարի: Թոմաս Ջեֆերսոնը տարիներ անց գրեց, որ «The National Gazette»-ն *«փրկեց մեր սահմանադրությունը, որն արագ քայլերով ընթանում էր դեպի միապետություն և արդյունավետ միջոց դարձավ այդ «առաջընթացը» արգելակելու համար»*:

1798 թվականին, Ֆրանսիայի հետ հարաբերությունների սրման ժամանակ, ֆեդերալիստների հսկողության տակ գտնվող կոնգրեսը ընդունեց և նախագահ Ջոն Ադամսը ստորագրեց մի օրենք, որը սահմանափակում էր մամուլի ազատությունները («Օրենք զրպարտության մասին»): Այդ օրենքում գրված էր.

«եթե որևէ անձ ստեղծի, տպագրի, արտասանի կամ հրատարակի... սուտ, սկանդալային կամ չարամիտ գրություններ Միացյալ Նահանգների կառավարության դեմ կամ կոնգրեսի պալատների դեմ կամ նախագահի դեմ՝ նրանց վարկաբեկելու կամ հեղինակությունը վտանգելու նպատակով, կամ նրանց դեմ հարուցի Միացյալ Նահանգների բարեպաշտ քաղաքացիների ատելությունը, այդ անձը պետք է պատժվի մինչև 2000 դոլար տուգանքով և բանտարկությամբ՝ մինչև երկու տարի ժամկետով»:

Այդ օրենքը լիովին հակասում էր Սահմանադրության առաջին ուղղմանը, ուստի Բենջամին Ֆրանկլին Բեյչի հանրապետական «Aurora» («Ավորա») թերթը տպագրեց օրենքի տեքստը Սահմանադրության առաջին լրացման տակ՝ առանց որևէ մեկնաբանության: Ակնհայտ էր, որ օրենքը թույլ էր տալիս կառավարության կամ նախագահի հասցեին ուղղված ցանկացած քննադատություն համարել չարամիտ զրպարտություն ու ապստամբության կոչ:

1800 թվականին Ջեֆերսոնի հաղթանակը նախագահական ընտրություններում բացատրվում էր նաև խոսքի ազատության վերականգնման համար հանրապետականների ակտիվ պայքարով: *«Ես Աստծո խորանում երդվել եմ հավերժական թշնամին լինել մարդու բանականության վրա բռնապետության ցանկացած ձևի»*՝ ժամանակին գրել էր Ջեֆերսոնը և այդ սկզբունքով աշխատում էր իր նախագահության տարիներին, վերացնելով գրաքննչական բոլոր արգելքները:

Լավագույնս պատկերացնելով մամուլի դերը կառավարության քաղաքականության լուսաբանման գործում, Ջեֆերսոնը համոզեց ֆիլադելֆիացի հրատարակիչ Չարիսոն Սմիթին տեղափոխվել Միացյալ Նահանգների նոր մայրաքաղաք՝ Վաշինգտոն: 1800 թվականի հոկտեմբերի 31-ին տպագրվեց «The National Intelligenser» («Ազգային տեղեկատու») թերթի առաջին համարը. առաջին վաշինգտոնյան ազդեցիկ թերթը տպագրվեց մինչև 1870 թվականը:

Ահա մոտավորապես Նոր աշխարհի մեզ հայտնի երրորդ և լրագրական լիարժեք առաջին դարը, որն առայժմ իր հիմքում ձին Աշխարհից եկող ձևն ու բովանդակությունն ուներ և միայն հաջորդ՝ Քրիստոսի ծննդից հետո 19-րդ դարում էր նոր որակ ապահովելու, իսկ մեկ դար անց էլ՝ թելադրելու, որոշելու և պահանջելու:

Իսկ մինչ այդ, Հին Աշխարհը՝ Եվրոպան, լրջագույն տնտեսական, սոցիալ-քաղաքական և գաղափարական հեղաբեկումներ էր ապրում. մենիշխանական վարչակարգերն աստիճանաբար ժողովրդավարական էին դառնում, ֆեոդալական արտադրատնտեսական հարաբերություններն աստիճանաբար վերափոխվում էին կապիտալիստականի, առաջնային էին դառնում հոգևոր, մտավոր և ինտելեկտուալ արժեքները, չափանիշներն ու սկզբունքները, որոնք բոլորովին այլ արժեհամակարգեր էին այլևս արմատավորում ողջ Եվրոպայում:

Գիտության մեջ առաջնային էին դառնում ռացիոնալիզմի, քաղաքական և կրոնական ասպարեզում՝ հանդուրժողականության սկզբունքները, հոգեմտավոր կյանքն առաջնորդվում էր «Լուսավորչականություն» բանականության լույսի շնորհիվ» սկզբունքով:

Սակայն, ի հակակշիռ նման կառուցողական գաղափարների, (կամ էլ հենց դրանք արմատավորելու անհրաժեշտությունից դրդված) Հին Աշխարհի 18-րդ դարը վերածվեց ցնցումների, արյունալի հեղափոխությունների և անկախության համար մղվող պատերազմների դարաշրջանի: Հենց այս խորապատկերի վրա էլ իր զարգացումն էր ապրում մամուլն ու ժուռնալիստիկան ընդհանրապես՝ արտացոլելով կատարվող իրադարձությունները և, հընթացս էլ, զարգանալով ու հարթելով իր ուրույն ճանապարհը:

18-րդ դարը անհատական ժուռնալիզմի սկիզբն էր: Յուրաքանչյուր գրող և մտածող իր պարտքն էր համարում լուսավորել իր հայրենակիցներին, «ճիշտ և ապագա ապահովող ճանապարհի բերել» նրանց:

Եվ այդ էր պատճառը, որ գերիշխող դարձան այն ժանրերը և մարդիկ, ովքեր և որոնք, այսպես ասած, գտնվում էին գրականության և ժուռնալիստիկայի ճամփաբաժանին: Խոսքը, մասնավորապես, պամֆլետի, ակնարկի, էսսեի մասին է: Եվ այնպիսի անունների, ինչպիսիք էին Դանիել Դեֆոն, Ջոնաթան Սվիֆտը, Ջոզեֆ Ադիսոնը, Ռիչարդ Ստիլը, Պիեր դե Մարիվոն, Անտուան Ֆրանսուա Պրևոս և ուրիշներ:

Հենց նրանք էլ ձևակերպեցին և հետևողականորեն իրականացնում էին լուսավորչական լրագրության խնդիրները՝ հասարակության արատները շտկել լուսավորության տարածման միջոցով: Դա էր պատճառներից մեկը նաև, որ նոր հրատարակությունների լեզուն և ոճը բավականաչափ պարզ էր և մատչելի հնարավորինս լայն զանգվածների համար:

Դանիել Դեֆոն խոստովանել է. *«Եթե ինձ հարցնեն՝ ո՞ր ոճն եմ լավագույնը համարում, ես կպատասխանեմ՝ այն ոճը, որով կարելի է խոսել ամենատարբեր մասնագիտությունների տեր հինգ հարյուր մարդու հետ՝ բացառյալ ապուշներին ու խելագարներին, և հասկանալի լինել բոլորի համար»:*

Դեֆոն բոլորի կողմից ընդունված էր իբրև փորձառու պամֆլետագիր և բանավիճող, նրա սատիրական հարձակումները հաճախ էին հասնում իրենց նպատակին: Դ. Դեֆոյի «Այլախոհների հետ հաշիվները նաքրելու կարճագույն միջոցը» (1702 թվական) ուղղված էր անգլիական եկեղեցու կղերական հետապնդումների դեմ, բայց Դեֆոն այնպես էր գրել, որ մոլորության մեջ էր գցել նրանց, ում դեմ գրված էր պամֆլետը: Պատասխանը եղավ դատը պամֆլետի հեղինակի դեմ, գտնված օրինակների հրապարակային հրկիզումը, տուգանքը և երեք անգամ անարգանքի սյունին գամելը: Բայց Դեֆոյին հաջողվեց քաղաքացիական մահապատիժը վերածել հաղթահանդեսի: Բանտում Դեֆոն գրեց «Հիմն անարգանքի սյանը» (1703 թվական), որը վաճառքի հանվեց դատավճռի իրականացման օրը և հրապարակում հավաքվածները ծափողուններով ու ծաղկեփնջերով դիմավորեցին Դեֆոյին:

Դեֆոն ոչ միայն փայլուն պամֆլետների հեղինակ ու բանավեճերի նախածեռնող էր, այլև արդեն 1740-ից սկսեց հրատարակել իր սեփական հանդեսը՝ «The Weekly Review», որը լույս էր տեսնում շաբաթական չորս համար պարբերականությամբ և համարվում էր ժողովրդական թերթ:

18-րդ դարի անգլիական լրագրության մեջ հիմնականում երկու ուղղություններ էին ուրվագծվել, որոնք կոչված էին շտկելու հասարակական բարքերը. երգիծական և բարոյախոսական: Այդ երկու ուղղություններն էլ ունեին իրենց ընդգծված առաջնորդները՝ Ջոզեֆ Ադիսոն, Ռիչարդ Ստիլ և Ջոնաթան Սվիֆտ, ում հրաշալիորեն բնութագրել է Ուիլյամ Թեքերեյը. *«Ադիսոնը «փափուկ» երգիծաբան է, Մա երբեք արգելված հարվածներ չի հասցնում. Մա բարեգութ դատավոր է և պատժում է միայն ժպիտով: Մինչդեռ Սվիֆտը կախում է առանց խնայելու»:*

Պամֆլետը նաև Սվիֆտի նախասիրությունն էր: Նույնիսկ նրա ամենահայտնի վեպը՝ 1726 թվականին գրված և հրապարակված «Գուլիվերի ճանապարհորդությունը», մի ընդարձակ պամֆլետ է, որը, սակայն, ի տարբերություն նրա առավել փոքր գործերի, չի կենտրոնանում սոսկ մեկ խնդրի վրա, այլ բարձրաց-

նուն է հիմնահարցերի մի ողջ ընդարձակ տարապատկեր՝ ընդգրկելով բրիտանական ողջ կյանքը:

Ռիչարդ Ստիլի «The Tatler» («Շատախոս») հանդեսը ոչ միայն անգլիական, այլև համաեվրոպական բարոյախոսական ժուռնալիստիկայի հիմքը դրեց:

1710 թվականից Ջոզեֆ Ադիսոնը սկսեց Ստիլին ուղարկել իր հոդվածներն ու էսսեները: Ադիսոնի աշխատակցությամբ «The Tatler»-ը դարձավ նոր որակի ու մակարդակի հանդես: Նրա շատ էսսեներ այժմ էլ վերահրատարակվում են և համարվում են անգլիական էսսեի լավագույն նմուշներ: Սովորաբար մեկ էսսեն դառնում էր «The Tatler»-ի մեկ համարի առանցքը: Էսսեն գրում էին Ստիլը կամ Ադիսոնը՝ ընտրված դիմակի անունից և լուսաբանում էին լոնդոնյան կյանքի տարբեր իրողություններ: Էսսեից բացի համարում գետեղվում էին փոքր հայտարարություններ և դիտարկումներ: «The Tatler»-ը լույս էր տեսնում շաբաթը երեք համար պարբերականությամբ:

1711 թվականին, երբ «The Tatler»-ը գրավչության գագաթնակետին էր, զգուշանալով, որ Իսահակ Բիկերստաֆի դիմակը կարող է ձանձրալի դառնալ հասարակության համար, Ադիսոնը և Ստիլը դադարեցրին հանդեսի տպագրությունը: Բայց բարենպաստ պահը չէր կարելի կորցնել, ուստի հենց 1711 թվականին Ադիսոնը և Ստիլը լույս ընծայեցին նոր հանդես՝ «The Spectator»-ը («Չանդիսատես»), որ գերազանցեց «The Tatler»-ին իր և մակարդակով, և ընթերցողների շրջանում հաջողությամբ: Այս անգամ «հանդիսատեսին» ընթերցողին ներկայանում էր դիմակների ամբողջ մի շարք. բոլորը ոչ մեծ ակունքի անդամներ էին, հավաքվում էին քննարկելու քաղաքական, գրական, փիլիսոփայական, թատերական, բարձրաշխարհիկ կյանքի ամենատարբեր հարցերը: Իսկական հայտնագործություն էր «Չանդիսատեսի» կերպարը՝ սըր Ռոջեր դե Կովերլիի, ով բարեկիրթ ջենտլմեն էր գավառից, միջին վիճակագրական անգլիացի, որ աշխարհին նայում է հետաքրքրությամբ ու խոհականությամբ լի հայացքով. *«Այդպես էլ ապրում եմ ես աշխարհում, ավելի շատ իբրև Չանդիսատես, որ ուսումնասիրում է մարդկությունը, քան իբրև այդ մարդկության ներկայացուցիչներից մեկը. այդպիսով ես դարձա խորաթափանց պետական գործիչ, զինվորական, առևտրական և արհեստավոր՝ երբեք չխառնվելով կյանքի գործնական կողմին: Տեսականորեն ես հիմնալի գիտեմ ամուսնու կամ հոր դերը*

և նկատում են սխալները տնտեսության մեջ, գործարար կյանքում ու զվարճանքներում շատ ավելի լավ նրանցից, ովքեր զբաղվում են այդ ամենով՝ այդպես կողմնակի դիտորդը նկատում է հետքերը, որոնք հաճախ վրիպում են նրանց ուշադրությունից, ովքեր կան այդ գործերում: Կարճ ասած. ես իմ կյանքի բոլոր ոլորտներում մնում եմ իբրև դիտորդ և այդ դերը մտադիր եմ շարունակել մաս այստեղ»:

«The Spectator»-ի տպաքանակը հասավ 14000-ի: Եվրոպայում ու գաղութներում ընթերցողներն անհամբերությամբ էին սպասում ամեն համարի լույսընծայմանը: «The Spectator»-ը հրատարակվեց երկու տարի (555 համար), ինչպես «The Tatler»-ի դեպքում, այնպես էլ այս անգամ Ադիսոնն ու Ստիլը ընթերցողական հետաքրքրության գագաթնակետին դադարեցրին հանդեսի հրատարակությունը՝ վերջին համարում հայտարարելով, որ հերոսներից մեկը հանկարծամահ է եղել, մյուսն ամուսնացել է և ակումբի անդամները ցրվել են: Ադիսոն-Ստիլ լրագրական համագործակցությունը 1713 թվականին դադարեց, 1714 թվականից Ադիսոնը մենակ շարունակեց հրատարակել «The Spectator»-ը՝ մինչև 635-րդ համարը:

«The Spectator»-ի և Ադիսոնի մյուս ամսագրերի ազդեցությունը անգլիական և եվրոպական լրագրային ավանդույթի զարգացման վրա էական էր և զգալի. միայն Անգլիայում նրանք տասնյակ հետևորդ-մանակողներ ունեին:

«The Wispeper» («Շշնջացող», 1709 թվական), «The Grumbler» («Փնթփնթացող», 1715 թվական), «The Grouler, or Diogenes robb'd of His Tub» («Փնթփնթացող կամ Դիոգենեսը, ում վտարել էին իր տակառից», 1711 թվական), «The Female Tatler» («Շատախոս կինը», 1709-1710 թվականներ), «The Entertainer» («Զվարճացնողը», 1717-1718 թվականներ), «Critic for the Year MDCCXVIII» («1718 թվականի քննադատը», 1718 թվական), «The Intelligenser» («Տեղեկատուն», 1728 թվական), որ հրատարակում էր Թոմաս Շերիդանը՝ նշանավոր դրամատուրգի հայրը, Ջոնաթան Սվիֆտի աջակցությամբ, «The Parrot» («Թութակը», 1728 թվական), «The Universal Spectator» («Յամընդհանուր հանդիսականը», 1728-1746 թվականներ), որ հրատարակում էր Յենրի Բեյքերը՝ Դեֆոյի փեսան, և բազում այլ թերթոններ մրցակցում էին միմյանց հետ՝ հասարակության ուշադրությանն արժանակու համար:

1731 թվականին Էդվարդ Քեյվը առաջարկեց Ադիսոնի հրատարակչական մոդելից տարբերվող նոր մոդել՝ հրատարակելով «Gentleman's Magazine» («Ջենտլմենի հանդեսը»), որ առավելագույնս համապատասխանում է հանդեսի մասին ժամանակակից պատկերացումներին՝ իր բազմազանությամբ ու խորագրերով:

1738 թվականին Անգլիայի խորհրդարանի իրադարձությունների լուսաբանման արգելքից հետո ամենամեծ քաղաքական սկանդալը (մամուլի հետ կապված) լրագրող Ջոն Ուիլկսի գործն էր:

1757 թվականին նա Համայնքների պալատի անդամ էր դարձել, արդեն ճանաչված էր որպես վիզերի կուսակցության կողմնակից և հանգամանքների բերումով հայտնվեց «շաբաթաթերթերի պատերազմի» (1762-1763 թվականներ) հենց կիզակետում: Պատերազմող կողմերը, ինչպես և բնական էր՝ տորիներն էին և վիզերը:

Տորիների կաբինետի քաղաքականությունը պաշտպանում էր «The Brition» շաբաթաթերթը, որի խմբագիրը հայտնի վիպասան և հրապարակախոս Թոբայաս Սնոլետն էր: Ուիլկսը սկսեց հրատարակել «The North Brition» շաբաթաթերթը, որ ֆինանսավորում էին վիզերը: Սկսված լրագրական գործունեությունը ավելի հանրահայտ դարձրեց Ուիլկսի անձը, մանավանդ, որ հասարակական կարծիքը, իր գերակշիռ մասով, պաշտպանում էր այն քաղաքականությունը, որի ջատագովն էր վերջինս:

Իր իսկ խմբագրած և հրատարակած թերթում նրա հրապարակումները հիմնականում սկանդալային բնույթի էին և, ի վերջո, հասան իրենց բուն նպատակին՝ կառավարությունը հրաժարական տվեց: Սակայն իր այդ սկանդալային և վիրավորանք պարունակող հրապարակումների համար Ուիլկսը հետապնդումների ենթարկվեց, որոնց պատճառով էլ նա ի վերջո ստիպված էր ապաստան գտնել Ֆրանսիայում:

«Ուիլկսի գործի» ամենաթեժ շրջանում հանկարծ հրապարակ իջավ փայլուն մի վերլուծաբան-հրապարակախոս, ում իրական անունն այսօր էլ հայտնի չէ. նա «Յունիոնս» կեղծանվամբ նամակներ էր հրապարակում «The Public Advertiser» ամսագրում: Նամակներն այդ ուղղված էին Գեորգ Երրորդ արքայի և իր նախարարների դեմ, և նամակների թե ոճից, թե բովանդակությունից ակնհայտ էր, որ «նամակագիրը» քաջ գիտե թե արքային, թե նրա շրջապատը, թե այնտեղ կատարվող ամեն ինչը և ոչ սոսկ ասեկոսեների մակարդակով:

Յունիուսը լրագրության ասպարեզում հայտնվեց ամենապատեհ պահին, երբ քաղաքական պայքարը գագաթնակետին էր հասել, և Լոնդոնի ամբողջ բնակչությունը բացահայտ ապստամբել էր նախարարների ու խորհրդարանի դեմ: Այդ ժամանակ Անգլիայում տիրող վիճակը լիովին բնութագրել է Բոկլը. *«Այն ամենը, ինչ ուղղված էր ազատության սկզբունքների ոտնահարմանը, խրախուսում էր արքան անծամբ, ընդունում էր խորհրդարանը և այդ «ուսմունքների» հետ համապատասխանեցված օրենքները բռնի կենսագործում էին դատարանները»*: Չնայած ժողովրդի անսահման ատելությանը, նույն նախարարները շարունակում էին ղեկավարել ժողովրդին: Գեորգ թագավորը, որ սահմանափակ ու համառ մարդ էր, սոսկ զենք էր իր նախարարների ձեռքին, թեև համակված էր արքայազնի գաղափարներով և իր գործը համարում էր համարյա թե «Տեր Աստօտ գործ»՝ ինքն իրեն համարելով Աստօտ Օծյալ: Բնականաբար, այդ պայմաններում Յունիուսի մարտահրավերը նախարարներին ու նույնիսկ արքային, վիթխարի տպավորություն պիտի թողներ: Իր առաջին նամակում Յունիուսը գրում է. *«Ժողովրդի կործանումը կամ նրա ծաղկումը այնքան են կախված կառավարությունից, որ որևէ նախարարության աշխատանքի մասին ճիշտ պատկերացում կազմելու համար պետք է ուսումնասիրել ժողովրդի վիճակը: Եթե տեսնում ենք, որ ժողովուրդը ենթարկվում է օրենքներին, որ արդյունաբերությունը ծաղկում է, որ ներսից հանդարտ է, իսկ դրսում հարգանք է վայելում, մենք կարող ենք լիակատար արդարացիությամբ համարել, որ նրա գործերը վարում են փորձառու, տաղանդավոր ու ազնիվ մարդիկ: Եթե հակառակը՝ մենք տեսնում ենք համընդհանուր անվստահության և դժգոհության ոգին ժողովրդի մեջ, առևտրի արագ անկում, պետության բոլոր մասերում կուսակցությունների բաժանում և հարգանքի լիակատար կորուստ այլ պետությունների աչքում, ապա կարող ենք, առանց դույզն ինչ տատանսելու ասել, որ այդ երկրի կառավարությունը թույլ է, խելամիտ չէ և այլասերված է: Բոլոր երկրներում ժողովրդական զանգվածները համբերատար են մինչև որոշ սահմանը: Վատ վերաբերմունքը կարող է ուժեղացնել դժգոհությունը և հասցնել մինչև միջադեպերի, այնուամենայնիվ, դժգոհության պատճառը մնում է կառավարությունը»*: Ապա Յունիուսը մատնանշում է Անգլիայի ողբալի վիճակը, առևտրի անկումը, կուտակված պարտքերը, վարչակարգի բոլոր շերտերը

ներթափանցած այլասերումը: «Եթե Նախախնամության անմիջական միջամտության հետևանքով մեզ հաջողվի ճգնաժամից, սարսափներից ու հուսաբեկությունից խույս տալ, ապա սերունդները չեն հավատա մեր դարաշրջանի պատմությանը. նրանք կեզրակացնեն, որ կամ մեր տառապանքներն էին հնարված, կամ մենք երջանկություն ունեինք ղեկավարվել ազնվագույն ու իմաստնագույն մարդկանց կողմից: Նրանք երբեք չեն կարող պատկերացնել, որ իրականում մենք վերապրել ենք մման անհույս վիճակներ ու կարողացել ենք հաղթահարել, երբ հերցոգ Գրեֆտոնն առաջին նախարարն էր, լորդ Պորզը՝ զանձապետ, Ուեյմուզը և Գիլտորոն՝ պետական քարտուղարներ, Գրենբին՝ գլխավոր հրամանատար, Սենսֆիլդը՝ գլխավոր քրեական դատավոր թագավորությունում», - գրում էր Յունիուսը:

«Ժողովրդի տառապանքները մեծանում են այն չարաշահումների հետևանքով, որ նա ստիպված է հանդուրժել,- գրում է Յունիուսը մեկ այլ նամակում,- նրա բողոքները ոչ միայն անուշադրության են մատնվում, այլև մերժվում են: Այն ամենը, ինչի դեմ ապստամբում է ժողովուրդը, վայելում է արքայի վճռական աջակցությունը: Այսպիսի պահին ոչ մի ազնիվ մարդ չի կարող լռել կամ անտարբեր մնալ: Որչափ էլ մեզ բաժանեն դիրքը և հարստությունը, այնուամենայնիվ, մենք հավասար ենք, երբ խոսքը վերաբերում է ազատության իրավունքներին: Եվ որովհետև մենք անգլիացիներ ենք, մեզմից ամենավերջինը նույնքան է հետաքրքրված երկրի սահմանադրությամբ ու օրենքներով, որքան ամենաազնվական լորդը, և նույնքան պատրաստ է պաշտպանել դրանք իր ունեցած բոլոր միջոցներով, հոգով լինելով այդ գործի հետ, բանականությամբ ղեկավարելով ու ձեռքերով օգնելով: Դա ընդհանուր գործ է, որում շահագրգիռ ենք բոլորս ու որին բոլորս պիտի մասնակցենք: Սարդը, որ տագնապալի ճգնաժամի պահին լքում է այդ գործը՝ իր հայրենիքի թշնամին է և, որ ես համարում եմ անսահմանորեն նվազ կարևոր, դավաճանում է իր արքային: Հպատակը, պետության գլխի իսկապես նվիրյալ հպատակը, երբեք նրան խորհուրդ չի տա դիմել կամայական միջոցառումների և երբեք չի ենթարկվի այդ միջոցառումներին: Լոնդոնի Սիթին տվեց օրինակ, որին, անկասկած, կհետևի ամբողջ թագավորությունը»:

«Ազգի վիճակը բնականորեն հանգեցնում է արքայի վիճակի քննարկմանը,- շարունակում է Յունիուսը:- Սարդկանց առանձ-

Մահատուկ դասը օգտվում է իրեն «արքայի բարեկամ» համարելու թույլտվությունից, կարծես մնացած ժողովուրդը արքայի թշնամիներն են, կամ կարծես թե արքան հարկադրված է որոնել իր փոքրաթիվ սիրելիների օգնությունն ու աջակցությունը, որովհետև մնացած հպատակները նրան անհարգալից ու անբարյացկամ են վերաբերվում: Էդուարդը և Ռիչարդը մույնպիսի տարբերություններ էին դնում ժողովրդի ու գահը շրջապատած արգահատելի կուսակցության միջև: Նրանց վարքագծի հետևանքները կարող էին նախազուշացում լինել իրենց հետնորդների համար: Բայց նրանց մոլորությունները կարելի է ներել: Նրանք ավելի քիչ կեղծ բարեկամներ չունեին, քան մեր ներկա բարեգութ արքան... Արքայի պահվածքի համար չի կարելի սովորական կանոններ կիրառել: Նրա դիրքը առանձնահատուկ է: Կան սխալներ, որ նրան պատիվ են բերում և առաքինություններ, որ ամոթալի են նրա համար: Խառնվածքի անգույն անտարբերությունը չի կարող ոչ առաքինություն, ոչ արատ համարվել ինքնին վերցրած: Բայց այն ապահովում է արքայի ենթարկումը այն մարդկանց, ում նա հարգում է սովորության համաձայն և նրան վտանգավոր զենք է դարձնում այդ մարդկանց փառասիրական նկրտումների համար: Վաղ մանկությունից կտրված լինելով ամբողջ աշխարհից՝ դաստիարակվելով հանրահայտ տոհմի մարդկանց կողմից ու հանրահայտ հասկացություններով, արքան չի կարող իր սիրտը բացել մոր կապերի համար և իր միտքը բացել լավագույն ուսմունքների առաջ: Այդպիսի խառնվածքը ամենահարմար հիմքն է համառ քաղքենության քաղաքականությունն իրականացնելու համար, որը սկսվում է բանակարության զոհաբերման փառաբանումից և ավարտվում է արքայական տառապալիքն կառավարման բարձրացնելով»:

18-րդ դարի վերջին խոսքի ազատության վիճակն Անգլիայում որոշ չափով բարելավվեց, հատկապես 1771 թվականից հետո, երբ երկու պալատներն էլ համաձայնություն տվեցին իրենց քննարկումները հրապարակել, որն էլ փաստորեն դարձավ թերթերի հիմնական խնդիրներից մեկը: Այդ ժամանակից ի վեր ոչ մեծաքանակ ընթերցողները լավ տեղեկացված էին տարվող ընթացիկ քաղաքականության մասին, քանի որ խորհրդարանական մատաշրջանների ժամանակ թերթի կեսից ավելին տրամադրվում էր հաշվետվություններին: Մեծ տարածք՝ ամբողջ էջ տրամադրվում

էր վճարովի հայտարարություններին, հրատարակված գրքերի, համերգների, ներկայացումների, հագուստների գովազդին, տարբեր ծառայությունների և ծառաների կարիք ունեցող մարդկանց մասին տեղեկատվությամբ:

Նախահեղափոխական Ֆրանսիայում գրաքննչական արգելքները «հրեշավոր» բնույթ ունեին՝ թագավորական դեկլարացիաներից մեկը (1757 թվական) մահապատիժ էր նախատեսում **«բոլոր նրանց համար, ով կբացահայտվի այն ստեղծագործությունները կազմելիս ու հրատարակելիս, որոնք պարունակում են հարձակումներ կրոնի վրա կամ մտքերի խառնակություն են հարուցում, վիրավորում են թագավորական իշխանությունը և վտանգում են կարգուկանոնն ու հանգստությունը պետության մեջ»:**

Գրաքննչական հետապնդումների ենթարկվեց անգամ Դենի Դիդրոյի և Ժան դ'Ալլամբերի «Հանրագիտարանը»:

Ֆրանսիայում նախնական համատարած գրաքննության պատճառով անկախ քաղաքական մամուլ փաստորեն գոյություն չուներ մինչև ֆրանսիական հեղափոխությունը: Այնուամենայնիվ, լուսավորչական գաղափարներն ինչ-որ կերպ գտնում էին դեպի ընթերցող տանող ճանապարհը:

Քաղաքական ազատության մասին ուսմունքը, որ մշակեց Շառլ Լուի Մոնտեսքյոն և զարգացրին «հանրագիտարանի» հեղինակները, հատուկ նշանակություն էր ստանում միապետության մեջ:

«Օրենքների ոգու մասին» (1748 թվական) աշխատության մեջ Մոնտեսքյոն ազատություն հասկացությունը կապում էր խելամիտ սահմանված օրենքների հետ: Նա գրում էր, որ **«քաղաքացու համար քաղաքական ազատությունը հոգեկան հանգստություն է, որ հիմնված է իր անվտանգության համոզմունքի վրա: Այդ ազատությունն ունենալու համար այնպիսի կառավարում է պետք, որ մի քաղաքացին չվախենա մեկ այլ քաղաքացուց»:** Մոնտեսքյոն կարծում էր, որ պետական միջամտությունը մասնավոր անձանց կյանքում պետք է սահմաններ ունենա, պետք է տարաբաժանվեն օրենսդիր, գործադիր, դատական իշխանությունները: Եվ այդ ամենն ասվում էր դաժան գրաքննության պայմաններում:

Գրահրատարակչական արգելքների պատճառով Բաստիլում հայտնվեցին Վոլտերը, Դիդրոն, Մարմոնտելը և այլք: Դարձյալ,

ինչպես և նախորդ դարում, ամենաազատ երկիրը Նիդեռլանդներն էր:

Դրոյզենը գրում է. «Նիդեռլանդական հանրապետությունը քաղաքական լուրերի, ասեկոսենների, միտումնավոր դատողությունների կենտրոնական բորսան էր, բայց նա, միաժամանակ նաև այն կետն էր, որտեղից եվրոպայի հասարակական կարծիքը ստանում էր իր սնունդը, նշանակալից չափով նաև ուղղվածությունը»:

Ֆրանսիայում Ադիսոնի և Ստիլի գաղափարների հետնորդները դարձան Պիեռ դե Մարիվոն և աբբատ Պրևոն:

Մարիվոն հիշյալ գաղափարները սկսեց իրականացնել «Le Spectateur francais» («Ֆրանսիացի հանդիսատես», 1722-1723 թթ.) ամսագրում, որի անվանումն իսկ հիշեցնում է անգլիական նախատիպը, ինչպես նաև «L'indigent philosophe» («Աղքատ փիլիսոփան», 1728), «Le Cabinet du philosophe» («Փիլիսոփայի կաբինետը», 1734) հանդեսներում, որոնց հիմնական ձգտումն ու նպատակը ֆրանսիացի ընթերցողին Անգլիայի մշակույթին և ավանդույթներին ծանոթացնելն էր:

Մարիվոն, սակայն, նմանակող չէր՝ նրա ամսագրերն իսկապես աչքի էին ընկնում նորամուծություններով: Այդ առումով առանձնահատուկ հիշատակման են արժանի ամսագրերի լեզուն և ոճը՝ նրբանկատ այլաբանություններով և նորաբանություններով առանձնացող, որն էլ ստացել էր «մարիվոյաժ» անվանումը:

Ֆրանսիայում գործող գրաքննչական արգելքներից և հետապնդումներից աբբատ Պրևոն ժամանակավորապես ապաստան գտավ սկզբում Յուլանդիայում, ապա՝ Անգլիայում, ուր 1733 թվականին «The Spectator»-ի օրինակով սկսում է հրատարակել ամենշաբաթյա «Le Pour et le Conte» («Կողմ և դեմ», 1733-1740 թվականներ) հանդեսը: Լոնդոնում հրատարակվող հանդեսը տարածվում էր ամբողջ Ֆրանսիայում:

Մոտեցող հեղափոխությունը կտրուկ քաղաքականացրեց իրավիճակը Ֆրանսիայում: Մեծացավ տպագիր մամուլի դերը: Գյուստավ Լանտոնը գրում էր, որ **«այդ շրջանի հիմնական երևույթը թերթային գրականության ծնունդն էր: Առաջ էլ թերթեր կային, բայց նրանց իշխանությունը սկսվեց հեղափոխությունից»:**

Քաղաքական թերթը Ֆրանսիայում ծնվեց հենց 1789 թվականին, երբ գործնականում բոլոր քաղաքական կուսակցությունները գիտակցեցին պարբերական մամուլի կարևոր նշանակությունը: Հեղափոխության համարյա բոլոր առաջնորդները հանդես էին գալիս իբրև սեփական թերթերի խմբագիրներ՝ Միրաբոն, Մառատը, Բաբյոֆը, Ռոբեսպիերը, Դեմուլենը:

Այդ շրջանի տաղանդավոր լրագրողներից մեկը՝ Կամիլ Դեմուլենը իր «Les Revolutions De la Franse et de Brabant» («Ֆրանսիայի և Բրաբանտի հեղափոխությունները») թերթում գրում էր. **«Այսօր լրագրողները հասարակական իշխանություն են: Նրանք մերկացնում են, դեկրետներ են գրում, կառավարում են զարմանալի ձևով՝ արդարացնելով կամ մեղադրելով: Ամեն օր նրանք ամբիոն են բարձրանում, նրանք ձայնը լսում են 83 դեպարտամենտներում: Երկու սուռվ կարելի է լսել այդ հռետորին: Թերթերն ամեն առավոտ երկնային մանանայի նման թափվում են և ինչպես արև՝ ամեն օր դուրս են գալիս լուսավորելու հորիզոնը»:**

Պամֆլետներից սկսած Դեմուլենը լրագրական դպրոց անցավ կոմս Միրաբոնի թերթերում: Միրաբոն հեղափոխության լավագույն հռետորներից մեկն էր: Նրա հրապարակախոսությունն առանձնանում էր կուռ տրամաբանությամբ՝ **«սեղմ, ուժեղ, անկեղծության, հաճախ՝ սոփեստական նրբերանգներով, միշտ ինքնավստահ և ամենուր գլխավոր փաստարկներն ու օգտակար ասպացույցները ընդգրկող»:** Այդ երկաթյա տրամաբանությունը Միրաբոնից սովորել էր Դեմուլենը, երբ սկսեց հրատարակել իր սեփական՝ արդեն իսկ հիշատակված շաբաթաթերթը:

Ֆրանսիական հեղափոխության առաջին փուլում (1789 թվականի մայիս-1792 թվականի օգոստոս) տեղի ունեցավ մի խիստ կարևոր իրադարձություն, որը խթանեց պարբերական հրատարակությունների զարգացումը: Մամուլի ազատությունը իրավաբանորեն ամրագրվեց «Մարդու և քաղաքացու իրավունքների Հռչակագրում» (1789 թվականի օգոստոսի 26), որի արդյունքը դարձավ պարբերական մամուլի նաև քանակական աճը (1788 թվականին Ֆրանսիայում կային 60 պարբերականներ, 1789-1792 թվականներին՝ 500 թերթեր):

«Մարդու և քաղաքացու իրավունքների Հռչակագրում» հստակորեն ամրագրվեց. **«Մտքերի և տեղեկությունների ազատ շրջանառումն ու փոխանակումը՝ մարդու առավել թանկարժեք**

իրավունքներից մեկն է, և այդ իսկ պատճառով էլ ցանկացած քաղաքացի կարող է ազատ խոսել, գրել և տպագրել, միայն թե նա պետք է պահպանի այդ ազատության չարաշահման համար պատասխանատվության պայմանը...»:

Ամերիկայից Ֆրանսիա վերադարձած Ժան Պիեռ Բրիսոն դարձավ հեղափոխական մամուլի նշանավոր գործիչներից մեկը. նրա խմբագրած «Patriot Français» («Ֆրանսիայի հայրենասեր») թերթը, որ լույս էր ընծայվում 1789-1793 թվականներին, դարձավ Ֆրանսիայում կատարվող բարեփոխումների խորհրդանիշը:

Հատկապես հանրաճանաչ դարձավ Ժան Պոլ Մարատը, ում շուրթերով «խոսում էր չորրորդ խավը» (սովորական մարդիկ): Հասարակական կարծիքի վրա ներգործելու համար Մարատն առավելագույն արդյունավետությամբ օգտագործում էր իր խմբագրած «l'Ami du peuple» («Ժողովրդի բարեկամ», 1789-1793 թվականներ) թերթի հնարավորությունները:

Լուի Անտուան-Սեն Ժյուստը գրում էր. *«Մամուլը չի լռում, մամուլը անընդհատ հնչող անկիրք ձայն է, որ փառասերից պոկում է դիմակը՝ մերկացնելով նրա խորամանկությունը և նրան դարձնում է համընդհանուր քննարկման առարկա: Մամուլը բոցավառ հայացք է, որ տեսնում է բոլոր հանցագործությունները և նկարագրում դրանք չխուճացող գույներով: Մամուլը ինչպես ճշմարտության, այնպես էլ կեղծիքի զենքն է: Մամուլի հետ՝ ոնց մենամարտում. եթե նրա դեմ օրենքներ ընդունես, դրանք կլինեն վատ օրենքներ՝ նրանք կհարվածեն չարին, բայց չարիքի աղբյուրից շատ մեծ հեռավորության վրա»:*

1793 թվականին ֆրանսիական հեղափոխությունը թևակոխեց «սեփական զավակներին խժռելու» փուլը: Կոնվենտի ընդունած նոր դեկրետներից մեկը ազդարարում էր, որ ժողովրդական ներկայացուցչության ազատ արձակման կամ թագավորական իշխանության վերականգնման օգտին արտահայտվող հեղինակներն ու հրատարակիչները ենթակա են մահապատժի: Իսկ 1797 թվականին ստորագրված հրամանագիրն արտոնում էր գնդակահարել յուրաքանչյուրին, ով կջանա թագավորական իշխանությունը վերականգնել:

Այս ամենի հետևանքն այն էր, որ իրար հետևից կառավիճաբան էին բարձրանում նրանք, ում Կոնվենտը ոչ վաղ անցյալում աստվածացնում էր: Յակոբինյան ահաբեկչության շրջանում մա-

հապատժի ենթարկվեց Բրիսոն, նրան հետևեց ժան Ռենե Էբերը, որ հանրաճանաչ «Le Pere Dushene» («Հայրիկ Դյուշենը», 1790-1794 թվականներ) թերթն էր հրատարակում: Գոնկուր եղբայրները նրա պարբերականը համարում էին «հեղափոխության միակ իսկապես տպավորիչ թերթը»: 1794 թվականի ապրիլին Դանտոնի կողմնակիցների հետ գլխատվեց նաև Դեմուլենը, որ քննադատում էր յակոբինյան բռնությունները իր նոր «La Vieux Corde-lier» («Ծեր կորդելիերը») թերթում:

Այս առիթով Սեն Ժյուստը գրել է. **«Այդ գրողները և հռետորները մտցրել էին գրաքննություն, որ բանականության ու համարյա միշտ ճշմարտության դեսպոտիզմ էր, պատերը խոսեցին, ինտրիգները արագ բոլորի համար ակնհայտ դարձան, առաքինությունների կրողներին հարցաքննում էին, հոգիները հալվում էին քուրայում»:**

Բուլորովին անսպասելի չէր, որ 1799 թվականի բրյունների 18-ին Դիրեկտորիայի սիրելի գորահրամանատար, հեղափոխական գեներալ Բոնապարտը, գործնականում չհանդիպելով դիմադրության, իրեն հայտարարեց Ֆրանսիայի առաջին կոնսուլ: Արագ գրված «Ութերորդ տարվա Սահմանադրությունը» (1799 թվական) կոնսուլատի վրա դրեց իշխանությունը: Մամուլի մասին այդ ժամանակ ընդհանրապես հիշատակում չէրավ: Բայց արդեն 1800 թվականի հունվարի 17-ին հրապարակված «Կոնսուլատի հրամանագիրը թերթերի մասին» հանգեցրեց Փարիզյան 73 թերթերից 60-ի փակմանը: Ոստիկանության նախարարին հանձնարարված էր վերահսկել, որ Փարիզի ու Սենայի դեպարտամենտների տարածքում ոչ մի նոր թերթ չհայտնվի, իսկ թերթերի խմբագիրները պարտավոր էին լինել «անկաշառելի, բարոյական ու հայրենասեր»:

Սկզբում Բոնապարտը գրաքննությունը վերականգնելու նպատակ չուներ, բայց տպագիր բոլոր օրգանները վերահսկել ձգտում էր: Նա հիանալի հասկանում էր մամուլի ուժը, պատահական չէ, որ նրան է պատկանում հայտնի արտահայտությունը. **«Թշնամարար տրամադրված չորս թերթերն ավելի վտանգավոր են, քան հարյուր հազար սվինը»:** Հենց այդ դիրքորոշումն էլ կանխորոշեց Ֆրանսիայի պարբերական մամուլի հետագա ճակատագիրը:

Հաղթական պատերազմները Շվեյցարիայում ու Իտալիայում Բոնապարտին հնարավորություն ընձեռեցին իրեն ցմահ կոնսուլ հայտարարելու: 1804 թվականին Սենատը նրան հռչակեց

Ֆրանսիայի կայսր՝ Նապոլեոն անվամբ: 1804 թվականի մայիսի 18-ին ընդունված կայսրության սահմանադրության մեջ չորս հոդվածներ երաշխավորում էին մամուլի ազատությունը, իսկ իրականում այդ ազատությունը ոչնչացնում էին:

Կայսերական Ֆրանսիայի մամուլի առավել ակնառու ներկայացուցիչներից էր Լուի Ֆրանսուա Բերտենի թերթը, որը մտել է նաև 19-րդ դարի ֆրանսիական լրագրության պատմության մեջ:

Հեղափոխության շրջանում Բերտենը համագործակցում էր «Jornal Francais» («Ֆրանսիայի հանդեսի») և «Eclair» («Կայծակի») հետ: Նրա քաղաքական իդեալը սահմանադրական միապետությունն էր: Բերտենը պաշտպանում էր Դիրեկտորիայի ժամանակների ռոյալիստական շարժումը: 1797 թվականին «Eclair»-ն արգելվեց և Բերտենը հարկադրված էր՝ ձերբակալությունից խուսափելու համար, թաքնվել: Եղբոր՝ Պիեռ Լուի Բերտենի հետ, ով նույնպես հրապուրված էր քաղաքական ու լրագրական աշխատանքով, նա 1800 թվականին գնեց «Jornal des Debates politiques et litteraires» («Քաղաքական և գրական բանավեճերի հանդեսը»), որը 1789 թվականին էր ստեղծվել Փարիզում: Այն կառավարությանը երբեք չէր փառաբանում, ուստի և ֆրանսիացիների շրջանում անաչառ լրատվամիջոցի հեղինակություն էր վաստակել: Անկախության ու համարյա անթաքույց ռոյալիստական հայացքների պատճառով Բերտենը ինն ամսով բանտարկվեց, ապա և արտաքսվեց Իտալիա: Իտալիայում նա բարեկամացավ մեկ այլ վտարանդու՝ Ֆրանսուա Ռենե դե Շատոբրիանի հետ: 1804 թվականին նա Ֆրանսիա վերադառնալու արտոնություն ստացավ և սկսեց հրատարակել «Jornal de l'Empire» վերանվանված թերթը: Նրան կցվեց հատուկ գրաքննիչ: 1811 թվականին թերթը, որ արդեն 32000 տպաքանակ ուներ, պետականացվեց, Բերտենին հայտարարվեց, որ ինքն արդեն «բավականաչափ հարստացել է»:

Բերտենի թերթը արժանահիշատակ է ոչ միայն Նապոլեոնի իշխանությանը դիմակայությամբ, այլև լրագրական նոր ձևերի ու ժանրերի կիրառումով, որոնք հետագայում տարածվեցին եվրոպական լրագրության մեջ ևս: Խոսքը հատկապես ֆելիետոնի մասին է: 18-րդ դարում նման ժանր Ֆրանսիայում չկար և այդ բառն էլ չկար. ֆելիետոն բառը հայտնվեց 1800 թվականին, երբ «Jornal des Debates» թերթում հայտնվեց հավելված՝ լրացուցիչ թերթիկներ (feuilleton-թերթիկ):

Շվեյցարացիներ Յոհան Յակոբ Բոդմերի և Յոհան Յակոբ Բրեյտինգերի «Discourse des Mählern» («Փեղանկարիչների գրույցները», 1721-1723 թվականներ) շաբաթաթերթը, որն իր հիմքում ուներ Ադիսոնի և Ստիլի լրագրական ավանդույթները, ուշադրություն էր գրավում գեղագիտական հայացքների նորարարությամբ և հայտնի գերմանացի բանաստեղծների քննադատությամբ:

Իտալիայում անգլիական բարոյախոսական լրագրության գաղափարների շարունակողը դարձավ հայտնի բանաստեղծ Գասպարո Գոցցին, որը 1760 թվականին հրատարակեց «Gazzetta Veneta»-ն («Վենետիկյան թերթը»)՝ տպագրելով սեփական ստեղծագործությունները:

Գերմանիայում անգլիական լուսավորչական լրագրության ավանդույթները շարունակեցին բարոյախոսական հրատարակությունները՝ «Der Vernunflier» («Խելամիտը», 1713-1714 թվականներ), «Die lustige Fatna» («Ուրախ ասեկոսեներ», 1718 թվական), «Der Freigest» («Ազատամիտը», 1745 թվական), «Der Hypochondrist» («Չիպոխոնդրիկը», 1762 թվական):

Գերմանիայի լուսավորչական լրագրության մեջ հատուկ տեղ ունի «Hamburgische Dramaturgie» («Համբուրգյան դրամատուրգիա») հանդեսը, որ հրատարակում էր Գ.Լեսինգը: Նա հանդես էր գալիս ազգային թատրոնի ստեղծման օգտին և գրում էր, որ իր հանդեսը *«կլինի քննադատաբար վերլուծողը բոլոր պիեսների, որոնք կրենադրվեն, և կիետևի բոլոր քայլերին, որ այդ ասպարեզում կանեն բանաստեղծներն ու դերասանները: Եթե ցանկանում են ողջանտությամբ օժտված մարդու ճաշակը զարգացնել, պետք է միայն նրան բացատրեն, թե ինչու ինչ-որ բան իրեն դուր չի եկել»*: Ամսագրի խնդիրը դարձավ ազգի թատերական ճաշակի ձևավորումը: Թեպետ հանդեսը հրատարակվեց երկու տարի (1767-1768 թվականներ), սովորական հանդեսի շրջանակներից դուրս եկավ: «Համբուրգյան դրամատուրգիան» դարձավ գերմանական լուսավորության դարաշրջանի գեղագիտական մտքի խոշորագույն հուշարձանը:

18-րդ դարը գերմանական քաղաքական մամուլի համար կարելի է սահմանավորման և ձևավորման դար համարել: Լ. Սալամոնը, անդրադառնալով 18-րդ դարասկզբի գերմանական մամուլին՝ գրում է. *«Առաջին երկու տասնամյակներում միակ քաղաքա-*

կան օրգանը գրահրատարակիչ Յոհան Լորենցի միայնակ ու ոչ մշանակալից «*Berlinische ordinare Zeitung*»-ն էր: 1721 թվականին նրա գործընկերը դարձավ Յոհան Անդրեաս Ռյուդիգերը (ծնվել է 1683 թվականին) հրատարակելով «*Berlinische Privilegierte Zeitung*»-ը, որը հետագայում և հրատարակչի, և անվան փոփոխությամբ դարձավ «*Vossische Zeitung*»: 1710 թվականին հայտնվել էր «*Berlinische Nachrichten von Staats und Gelehrten-sachen*», որի հրատարակիչը Ամբրոզիո Գաուդեն էր. մինչ այդ թերթը տպագրվում էր «*Spenereche Zeitung*» անվամբ: Ծայրագավառներում մեծ հաջողություն ունեին «*Magdeburgische Zeitung*»-ը, որ 1730 թվականին ձեռք էր բերել Ֆաբերը, 1742 թվականին Բրեսլավում Կորնի հիմնադրած «*Schlesische Zeitung*»-ը, «*Konigsberger Hartungshe Zeitung*»-ը, որ այն ժամանակ կոչվում էր «*Konigliche Preussisch-Staats-Krieg-und Friedenszeitung*» և 1751 թվականից Հարտունգների ընտանեկան սեփականությունն էր:

Շնորհիվ իր տպագրած առևտրական ու քաղաքական լուրերի, մեծ տարածում էր ստացել «*Hamburgische Unparteiliche Korrespondent*»-ը, որը Համբուրգի մերձակա Շիֆբեկ գյուղում 1710 թվականի հիմնադրված «*Schiffbeeker Posthorn*» ամենօրյա թերթի շարունակությունն էր:

Ուշագրավ է Ֆրիդրիխ Երկրորդի և ինչպես 1734 թվականին Յոհան Ռոդերքակի կողմից Քյոլնում հիմնադրված «*Gazetta de Cologe*», այնպես էլ 1741-1768 թվականներին հրատարակվող «*Gazetta d'Eirlangen*» (խմբագիր՝ պրոֆեսոր Յոհան Գրոսս) հասկամարտությունը, որում արքան ակներևաբար պարտություն էր կրում: Եվ Պրուսիայի թագավորը ստիպված էր ապավինել 1763 թվականից Կլևում հրատարակվել սկսած «*Courier de Gotha*» թերթին, որը, սակայն, չունեւր այն տարածումն ու ազդեցությունը, ինչպես հակաթագավորական նախորդ երկուսը, որոնց «բերանները փակել» ոչ մի կերպ չէր հաջողվում:

Հարավում և հարավ-արևելքում ևս գերմանական լրագրությունը ծաղկում չէր ապրում: Այնտեղ հրապարակվող թերթերը ոչնչով աչքի չէին ընկնում և որևէ արժանահիշատակ հրապարակում կամ էլ հետևողական որևէ ուղղվածություն պարզապես հնարավոր չէ արձանագրել:

Քաղաքական թերթերի սաղմնային վիճակը, նրանց վրա ուժեղացող ճնշումները, ինչպես նաև ոչ մի կերպ չկայացող գաղափարական միասնականությունը հանգեցրին նրան, որ քիչ թե շատ էական և կարևոր հարցերի քննարկումները փոխադրվեցին ամսագրերի կամ հանդեսների էջեր, որոնց արդեն իսկ անդրադարձել ենք: Դրանցում արժարժվող թեմաները ընտանեկան հարաբերություններից և դրանց պարզաբանումից աստիճանաբար սկսեցին վեր բարձրանալ, ընդգրկելով արդեն քաղաքակրթական լուրջ և համընդհանուր հիմնախնդիրներ:

Դարավերջին ամսագրերում և հանդեսներում ավելի ու ավելի մեծ տեղ էր հատկացվում քաղաքական հետաքրքրություններին, որոնք էլ աստիճանաբար սկսեցին տիրապետող դառնալ: Անցումը գրական ամսագրերից քաղաքականին արտահայտվեց «Deutscher Merkur» հանդեսի հիմնադրմամբ՝ 1733 թվականին Վայմարում, որը շարունակեց լույս տեսնել մինչև 1810 թվականը: Խմբագիրն ու հրատարակիչը Վիլեմայն էր:

18-րդ դարավերջին բազմաթիվ քաղաքական հանդեսներ ևս հրատարակվում էին գերմանական հողերում, սակայն դրանք էական ազդեցություն չունեին ոչ միայն հասարակական կարծիքի ձևավորման վրա, այլև ինտելեկտուալ ու հոգևոր որոնումների առումով: Նույն այդ ժամանակաշրջանում գերմանական հասարակությունն ասես սկսում էր «հոգնել» քաղաքականությունից, փորձելով վերադառնալ հոգևորին և ոգեղեն կյանքին: 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին այդ կոչերն ավելի շատ և պահանջկոտ էին դառնում:

Երիտասարդ Շիլլերը հիմադրեց «Horen»-ը՝ ուղղակի նպատակ ունենալով **«նորացնել քաղաքական իրադարձությունների որոտներից խլացած և գաղափարական տարածայնություններից մշուշված բանականությունը՝ առավել բարձր համընդհանուր գաղափարներով»:** Գյոթեն իր «Propulaen» հանդեսում ցանկանում էր **«անհրապույր իրականությունից սլանալ դեպի պոեզիայի բարձրաթռիչք թագավորություն»:**

Այդ օրերին և այդ տրամադրությունների համար խիստ համահունչ էր 1787 թվականին Վայմարում Յուստաս Բերտախի հիմնադրած «Journal des Luxus und der Mode» հանդեսը, որի հրապարակումներն ու քննարկումները հսկայական հետաքրքրություն էին առաջացնում ընթերցողների շրջանում, քանի որ առավելագույնս էին համապատասխանում ժամանակի պա-

հանջներին: Եվ, չնայած այս ամենին, գրաքննչական ամենատեսաչքը չէր քնում: Ահա թե ինչպես է բնութագրվում այդ ժամանակահատվածը «Wörterbuch der französischen Revolutionssprache» («Ֆրանսիական հեղափոխական լեզվի բառարան») պամֆլետում, որը լույս է տեսել 1783 թվականին, Հռենոսի՝ ֆրանսիացիներին պատկանող ձախ ափում. **«Յուրաքանչյուրն ազատ է գրել՝ ինչ ցանկանում է, բացառությամբ այն բանի՝ ինչ մտածում է և ինչը կարող է բացել ժողովրդի աչքերը: Այս պայմանների խախտման դեպքում տպագրական հաստոցը առգրավվում է, իսկ քաղաքացի գրողն անհապաղ հայտնվում է հեռավոր կղզիներից մեկում»:**

Ինչպես և գրեթե ցանկացած առաջադեմ, անհրաժեշտ և զարգացում ապահովող երևույթի դեպքում, Ռուսաստանում լրագրության հիմնադիրը և Պետրոս Մեծն է: Դրան, իհարկե, որոշակի իրադարձություններ նախորդեցին, որոնք էլ առավելապես պայմանավորեցին մամուլ ունենալու անհրաժեշտությունը: Պետրոս Մեծի պետական, սոցիալ-տնտեսական, ռազմական բարեփոխումները, որոնք նաև մշակութային և գաղափարական առաջընթացի հիմքը դրեցին, ընդգրկում էին ողջ պետական համակարգի վերակառուցումը, կենտրոնական և տեղական կառավարչական համակարգերի կատարելագործումը, տպարանների և արդյունաբերական հիմնարկների բացումը, կանոնավոր բանակի և նավատորմի ստեղծումը և այլն: Հենց Պետրոս Մեծի օրոք Ռուսաստանը սկսեց ինքն իրեն դիտարկել որպես աշխարհաքաղաքական լուրջ և կարևոր գործոն և ըստ դրա էլ պլանավորել ու իրականացնել կայսրությանը բնորոշ ռազմավարական հաշվարկված և հիմնավորված քաղաքականություն: Քաղաքականություն, որի հետ այլևս պարտավոր էին հաշվի նստել ոչ միայն հարևանները՝ անկախ իրենց ռազմաքաղաքական հզորությունից, այլև տարբեր աշխարհամասերում նոր-նոր կազմակերպվող կամ էլ արդեն իսկ հզորացող ազգային պետությունները:

Հենց այս ռազմավարական ու հեռանկարային խնդիրների իրականացման շուրջ էր անհրաժեշտ համախմբել հասարակությունը, որի համար էլ անհրաժեշտ էր տեղեկատվությունը: Եվ նրա նպատակամետ տարածումը:

Քաղաքական-տնտեսական-մշակութային առաջին պարբերականը Ռուսաստանում «ԹպՊՏՎՏրՑՌ»-ն էր («Տեղեկագիրը»), որը լույս տեսավ 1702 թվականին Պետրոս Մեծի հրամանով:

Խնդիրները, որ թե գիտակցաբար, թե ենթագիտակցորեն դրվում էին պարբերականի առջև, բազմաթիվ էին և տարաբնույթ. նախևառաջ անհրաժեշտ էր աշխարհում հավաստել և ամրապնդել Ռուսաստանի քաղաքակրթական ինքնատիպությունը, միաժամանակ ակնառու կերպով ցույց տալով, որ Ռուսիան համաքայլ է աշխարհի զարգացմանը: Պարբերականը կոչված էր նաև ժողովրդականացնելու լեզուն, մշակույթը, մատչելի դարձնելու կրթությունը: Եվ, որ խիստ կարևոր է ցանկացած իշխանության համար՝ կոչված էր սպասարկելու կառավարության ներքին և արտաքին քաղաքականությունը, ժողովրդական զանգվածներին առավելագույնս բացատրելու կատարվող քայլերի ճշմարտացիությունն ու անքննարկելիությունը: Թերթը հրատարակվում էր Պետրոս Մեծի անմիջական վերահսկողությամբ և պարտ էր իրականացնել կայսեր սահմանած գործառույթները. **«Որպեսզի տպագրվեն ի փառս մեզ՝ մեծ թագավորի, մեր արքայական մեծության ու բարձրագույն անվան ու մեր ամբողջ ռուսական թագավորության՝ միջեվրոպական թագավորությունների կենտրոնում ծաղկող, վասն առավելագույն զովասանքի և համաժողովրդական օգուտի ու շահի»:**

Թերթը գունավոր տպագրության առաջին փորձ կատարողն էր նաև. շվեդների դեմ Պոլտավայում տարած հաղթանակին նվիրված Պետրոս Մեծի նամակի առաջին պարբերությունը տպագրվել էր գունավոր, որով և շեշտվում էր նյութի կարևորությունը:

«ԹպՊՏՎՏրՑՌ»-ն հիմնականում տեղեկատվական բնույթ ունեցող էր, որը և շատ բնական էր: Լինելով «լուրերի թերթ»՝ «ԹպՊՏՎՏրՑՌ»-ին ուներ քաղաքական նպատակներ՝ ոչ միայն փաստերի միտումնավոր ընտրությամբ, այլև մեկնաբանություններով: Օրինակ, Յյուսիսային պատերազմում Պետրոս Մեծի անհաջողությունների մասին թերթը չգրեց, փոխարենը հաղթանակների տեղեկությունները հաղորդվում էին առաջին էջում, երբեմն էլ հատուկ համարներով: Իսկ «հակառակ լուրերը»՝ ըստ իրենց «արժանիքի»: Օրինակ՝ Բուլավիմի ապստամբության ներկայացման ձևն ու մեկնաբանությունը. **«Դոմի կազակ Կոնդրաշկա Բուլավիմը մտածել է... բունտ անել: Կանչել է մի քանի գողերի և համախոհների ու ուղարկել է գեղեցիկ նամակներ շատ քաղաքներ ու գյուղեր՝ կոչ անելով գողին համախոհ դառնալ»** (1703 թվական, 20 հուլիսի):

Մինչև 1711 թվականը «ԹպՊՏՎՏրՑՌ»-ն տպագրվում էր Մոսկվայում, այնուհետև փոխադրվեց Սանկտ Պետերբուրգ։ Պետրոս Մեծի մահից հետո թերթը դադարեց լույս տեսնել և ընդհանրապես տպագրական գործն անցավ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի և Մոսկվայի համալսարանի իրավասությանը։

1728 թվականին հրատարակվեց «հոլվՍՑ կպՑպրոցրչրՍՌպ ԶպՊՏՎՏրՑՌ»-ն, որի առաջին խմբագիրը Գ.Ֆ.Միլլերն էր։ 1728-1742 թվականներին տպագրվում էր նաև թերթի «Պատմական, ծագումնաբանական և աշխարհագրական դիտարկումներ» հավելվածը։ 1755 թվականին Մոսկվայի համալսարանը սկսեց տպագրել «ԾՏրՍՏԶրՍՌպ վՏԶՏրՑՌ»-ն։ Նույն թվականի հունվարին տպագրվեց նաև «Ամենամայա շարադրանքները, որ ծառայում են օգուտին և զվարճանքին» (խմբագիրը դարձյալ Միլլերն էր)։ *«Ընթերցողը անգիտակցաբար տրամադրվում է, երբ որոշված ժամին հանկարծ ստանում է մի քանի թերթիկներ, և այդ հորդորը սովորաբար նրա մեջ ամուր նստում է, ավելի ամուր, քան մեծ ու հաստափոր գրքերի ընթերցանությունը։ Նրա հետաքրքրասիրությունը անընդհատ ավելանում է՝ մինչև լույս է ընծայվում նոր թերթիկը։ Հազիվ թե գտնվի մեկը, որ չջանկանա դրանք կարդալ, քանի որ իր հակիրճությամբ ոչ մեկին չի կարող ծանծրացնել և հազիվ թե որևէ մեկը ձեռքից վայր դնի սկզբից մինչև վերջ չկարդացած»*, - գրում էր Միլլերը։

Լրագրության առանձնահատկության, լրագրողի բարոյական կերպարի, հասարակության մեջ տեղի, ստեղծագործական ազատության հարցերը առաջինը բարձրացրել է Միխայիլ Լոմոնոսովը «Դատողություններ լրագրողների ազատության մասին, երբ նրանք շարադրում են երկեր, որ կոչված են աջակցելու փիլիսոփայության ազատությանը» հոդվածում (տպագրվել է Ամստերդամում, 1755 թվականին)։

Նրա կարծիքով՝ լրագրողի աշխատանքը գործունեության առանձնահատուկ տեսակ է, ստեղծագործություն, որ ծառայում է ճշմարտությանը։ Լոմոնոսովը գրում էր. *«Ուժեր և բարի կամք՝ ահա ինչ է նրանցից պահանջվում։ Ուժեր, որպեսզի հիմնավոր և գործի իմացությամբ քննարկի այն բազմաթիվ և բազմազան հարցերը, որ իր ծրագրում են, կամք՝ որպեսզի ծառայի միայն ճշմարտությանը, ոչ մի զիջումներ չանի ոչ կանխամտածումին, ոչ կորքերին»*։ Նրա կարծիքով՝ իր պարտականությունները հաջող

կարող է կատարել միայն «գիտակ, հեռատես, արդարամիտ և համեստ» լրագրողը, որ պիտի կարողանա որսալ «նորն ու էականը», ում միտքն ազատ է կանխակալությունից, ով ուշադիր է այն ստեղծագործությունների հանդեպ, որ հրատարակության արժանի են ճանաչել այն մարդիկ, ում **«միացյալ գիտելիքները բնականաբար պետք է գերազանցեն լրագրողի իմացությանը: Նա չպետք է շտապի դատապարտել հիպոթեզները, չպետք է գողանա գրչակիցների արտահայտած մտքերն ու դատողությունները, իր գերազանցության մասին չպետք է մեծ պատկերացում ու կարծիք ունենա»:**

Լրագրության մասին ներհակ հայեցակարգերի պայքարն արտացոլեց Եկատերինա Երկրորդի և Նիկոլայ Նովիկովի բանավեճը: Կողմերը փորձում էին հասարակական կարծիք ձևավորել և դառնալ դրա արտահայտիչը. այդ պատճառով էլ նրանք հաճախ էին դիմում ժողովրդին, նամակներ էին տպագրում ժողովրդի անունից: Եկատերինա Երկրորդի հետ բանավեճում լրագրողը հաջողության հույս կարող էր ունենալ միայն հասարակական կարծիքի աջակցությամբ. **«Յուրաքանչյուր գրող պետք է կարողանա երկու բան. առաջին՝ սովորեցնել և օգտակար լինել, երկրորդ՝ ուրախացնել և հաճելի լինել. գերակա է նա, ով հարգում է երկուսն էլ և երջանիկ է համատեղել երկու կարողություններն էլ»**, - գրում էր Նովիկովը: Նա կարևոր տեղ էր տալիս լրագրողի անձին: «կցրՅՏԿպսՖ» (1770 թվական) հանդեսի առաջին համարի նախաբանում նա գրում է. **«Որպեսզի նա կարողանա լավ շարադրել, պետք է խելոք լինի, ունենա սուր միտք, ողջախոհություն, լավ ճաշակ, ռուսերենի առանձնահատկությունների և քերականության կանոնների իմացություն, և վերջապես՝ իրական պատկերացում իրերի մասին»:** Լրագրողի այս արժանիքների մասին գրել է նաև Միխայիլ Լոմոնոսովը: Լրագրողի՝ Նովիկովի բարոյական կողքսում նշված են նաև այլ որակներ, որ բխում են նրա հայեցակարգից՝ քննադատական տաղանդը («ճիշտ և ճշակով քննադատելը նույնքան դժվար է, որքան լավ գրելը»), հասարակական ակտիվությունը («Ոչինչ չկա, որ ենթակա չլինի քննադատության. լրագրողը պարտավոր է խառնվել քաղաքական գործերին»):

Եկատերինա Երկրորդը կազմել էր ստեղծագործողի պարտականությունների և անձնական հատկանիշների սեփական կանոնները: Նրա կարծիքով՝ ստեղծագործողը նախևառաջ պիտի բոցավառվի «սիրով ու հավատարմությամբ» առ պետության դե-

կավարը: Այս դիրքերից էր նա որոշում ստեղծագործողի անձնական հատկանիշները՝ հոգու գեղեցկություն, անարատություն, առաքինություն, բարեպաշտություն, խաղաղասիրություն: Կայսրուհու կարծիքով՝ հազվադեպ անդրադառնալով արատների՝ լրագրողը չպիտի նշի որոշակի անուններ՝ «չնատնանշել անձանց, այլ միայն նրանց արատները»: Ստեղծագործողներին ուղղված նրա ցուցումները բավականին կտրուկ էին. **«Առաջին՝ թուլությունները երբեք արատ չանվանել, երկրորդ՝ մարդասիրությունը պահպանել բոլոր դեպքերում, երրորդ՝ չմտածել, թե հնարավոր է կատարյալ մարդիկ գտնել, և դրա համար՝ չորրորդ՝ խնդրել Աստծուն, որ մեզ տա հնազանդության և բարեպաշտության ոգի»:**

18-րդ դարի վերջին քառորդի մամուլի մասին պատկերացումները հարստացրեց Նիկոլայ Կարամզինը, ով իր լրագրական աշխատանքը սկսեց Նովիկովի «Մանկական ընթերցանություն» սրտի և մտքի համար» հանդեսում, երբ այնտեղ քննարկվում էին անհատի ինքնաճանաչման ու ընթերցողի վրա ներգործության գաղափարները:

1790-ական թվականներին Կարամզինի անվան հետ կապվեց և լեզվական բարեփոխումը: Այդ ժամանակ ուժեղանում է հետաքրքրությունը մամուլի լեզվի հանդեպ: Ալեքսանդր Ռադիշչևը Ալեքսեյ Վորոնցովին հղած նամակում (1798 թվական, հոկտեմբեր) գրում է. **«Բոլոր ժամանակագրական թերթերում, ֆրանսերեն թե գերմաներեն, որ ձեռքս են անցել վերջին տասնամյակում, ոչ մեկը չկա, որ գրված լինի նույնքան սեղմ, նույնքան ուժեղ ու ինքնատիպ, ինչքան «Լոնդոնյան Մերկուրի»:** Հակիրճությունը, արտահայտչականությունը, բովանդակության հետ կապը՝ հրապարակվող նյութերի լեզվին վերաբերվող այս պահանջները Ռադիշչևը ձևակերպում է՝ հենվելով ռուսական պարբերականների նախընթաց փորձի վրա:

1798 թվականին նամակներից մեկում Ռադիշչևը «Լոնդոնյան Մերկուրիի» մասին գրում է. **«Թեպետ ավելին չէ, քան թերթը, կարող է պատվավոր տեղ զբաղեցնել իր ժամանակի պատմաբանների շարքում»:**

Պարբերականի նշանակությունը «ներկա ժամանակի պատմությունը» շարադրելու մեջ է, այս կարծիքն է արտահայտել Ի. Բոգդանովիչն իր «Նորությունների ժողովածու» հանդեսի նախաբանում. **«Ներկա ժամանակի պատմությունը, այսինքն՝ մեր մերձավոր ու մեզ շրջապատող իրականության իմացությունը,**

մնում է անուշադրության մատնված և մենք հագիվ ենք տեղեկանում Եվրոպայի ամենամշամակալից իրադարձությունների մասին, մինչդեռ այդ մասին պետք է իմանալ»:

Ռադիշչևը գտնում էր նաև, որ ժողովուրդը կարող է և պետք է ուժով հաստատի և պաշտպանի իր իրավունքները. *«Շատ է գրվել ժողովուրդների իրավունքների մասին: Բոլոր ժամանակների օրինակները վկայում են, որ իրավունքն առանց ուժի միշտ «դատարկ բան» է եղել»:* Այս մտքերը արտահայտված են Ռադիշչևի «Ճանապարհորդություն Պետերբուրգից Մոսկվա» գրքում, որի համար Եկատերինա Երկրորդը նրան Պուգաչովից ավելի վտանգավոր ապստամբ հայտարարեց և աքսորեց Սիբիր:

18-րդ դարի վերջին քառորդը ռուս լրագրության մեջ նոր գաղափարների ու ձևերի բուռն որոնման ժամանակ էր: Հայտնվում են նոր ամսագրեր. թատերական՝ «ՀցրրՍՌռ ՑպՈՑՐ» (1786 թվական), գրական-քննադատական՝ «ՕՏրՍՏՉրՍՌռ ՋցՐՎՈս» (1791-1792 թվականներ), պատմական՝ «ՀցրրՍՌռ ՋցՐՎՈս» (1792-1794 թվականներ): Տպագրվել սկսեցին նոր որակի շաբաթաթերթեր. քննադատական-մատենագիտական՝ «Սանկտպետերբուրգյան գիտական տեղեկագրերը» (1777 թվական), բժշկական՝ «Սանկտպետերբուրգյան բժշկական տեղեկագրեր» (1792-1794 թվականներ): Ստեղծվեցին ալմանախներ. գրական՝ «Ազլայա» (1794 թվական), երաժշտական՝ «Երաժշտության սիրահարների գրպանի գիրք 1775 թվականի» (1775 թվական): Առաջին անգամ տպագրվում են մասնավոր երկրագիտական ամսագրեր գավառներում: Որոշարկվեց պարբերականների կողմնորոշումը ընթերցողների շրջանակների ուղղությամբ. կանացի «Ամենամսյա մոդայիկ հրատարակություն կամ կանացի արդուզարդի գրադարան» (1779 թվական), մանկական՝ «Մանկական ընթերցանություն՝ հոգու ու սրտի համար» (1785-1789 թվականներ): Մեծացավ պարբերական մամուլի հետաքրքրությունը արվեստի, պատմության, փիլիսոփայության նկատմամբ:

ԴԱՐ XIX. ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

XIX դարը խիստ առաջադեմ և մարդասեր էր՝ իր բոլոր նախորդների համեմատ, լի բազմաթիվ և բազմազան իրադարձություններով, որոնցից, սակայն, ներքոշարադրյալները նպատակահարմար գտանք հիշատակել միայն:

1812-ին Շապսելը ստեղծեց առաջին լուցկիները: 1819-ը Բրայյան այբուբենի ստեղծման տարին էր, որը հնարավորություն տվեց կույրերին շփվել գրականության, ընդհանրապես՝ տպագիր խոսքի հետ: 1823 թ. ԱՄՆ նախագահ Ջեյմս Մոնրոն հրապարակեց իր հայտնի դոկտրինը, ըստ որի բացառվում էր եվրոպացիների միջամտությունը ամերիկյան գործերին և հակառակը: 1832 թ. Լոնդոնում տիկին Տյուսոն բացեց իր մոմե արձանիկների թանգարանը: 1840-ին տեղի ունեցավ Վերին և Ներքին Կանադաների միավորումը: Նույն թվականին Անգլիայում, Վիկտորիա թագուհու նկարով, տպագրվեցին առաջին նամականիշները: 1844-ին Վաշինգտոնից Բալթիմոր ուղարկվեց Մորգեի այբուբենով գաղտնագրված առաջին հեռագիրը: 1845-ին ստեղծվեց ոտնակներով հեծանիվը: 1851-ին Լոնդոնում բացվեց տեխնիկայի և մշակույթի նվաճումների առաջին համաշխարհային ցուցահանդեսը: 1854-ին ԱՄՆ-ում հիմնադրվեց Հանրապետական կուսակցությունը, որն իր հիմնական նպատակն էր համարում պայքարը ստրկատիրության դեմ: 1861-ին Ռուսաստանում վերացվեց ճորտատիրությունը: 1867-ին ԱՄՆ-ը Ռուսաստանից 7,2 միլիոն դոլարով գնեց Ալյասկան: 1869-ին տասնամյա շինարարությունից հետո բացվեց Սուեզի ջրանցքը: 1865-ին ստրկատիրությունը վերացավ ԱՄՆ-ում. սպանվեց դրա նախաձեռնողն ու իրականացնողը՝ նախագահ Աբրահամ Լինքոլնը: 1871-ին Յոնոն դարձավ Իտալիայի մայրաքաղաքը: 1890-ին Լոնդոնում գործարկվեց առաջին մետրոն: 1895-ը կինոյի ծննդյան տարեթիվը կարելի է համարել. ցուցադրվեց Լյումյեր եղբայրների նկարահանած առաջին ֆիլմը: 1896-ին ՅուՆԱՍՏԱՆԻ մայրաքաղաք Աթենքում, Պիեռ դե Կուբերտենի նախաձեռնությամբ, մեկնարկեցին նոր ժամանակների առաջին Օլիմպիական խաղերը:

19-րդ դարում ևս երկրների և մարդկության պատմությունն էր որոշում ժուռնալիստիկայի զարգացման միտումներն ու ուղղությունները, և միայն 20-րդ դարում է, որ ժուռնալիստիկան ինքը կձևավորի իր զարգացման օրակարգը, որոշ դեպքերում նաև ստիպելով, որպեսզի զանազան իրադարձություններ, երևույթներ ու դեպքեր հետևեն իր նախընթաց զարգացմանը:

Նշվածի խիստ դիպուկ օրինակը 19-րդ դարի Ռուսաստանն է, ուր դարամուտն իսկ նշանավորվեց պալատական խարդավանքներով ու հեղաշրջումներով:

Դրանց արդյունքում իշխանության գալով, սակայն հենց դրանց հետագա հավանականությունը նվազեցնելու նպատակով, Ռուսիո կայսր Ալեքսանդր Առաջինը նախածեռնեց և իրականացրեց մի շարք բարեփոխումներ, որոնք տիրող քաղաքական, տնտեսական և սոցիալական իրավիճակի պայմաններում խիստ հրատապ էին դարձել: Ալեքսանդր Առաջին 23-ամյա կայսրը, ով գահ բարձրացավ 1801 թվականին, որոշակիորեն հարազատ էին ֆրանսիական լուսավորչականության դավանած և քարոզած գաղափարներն ու արժեքները, և դա էր պատճառը, որ նրա իրականացրած բարեփոխումների շնորհիվ քաղաքացիական իրավունքներ ստացան հազարավոր քաղաքական բանտարկյալներ, վերացվեց մինչ այդ գործող գրքերի ներմուծման արգելքը, վերաբացվեցին մասնավոր տպարանները: Իրականացված բարեփոխումների արդյունք էր նաև 1804 թվականին ընդունված գրաքննչական նոր կանոնադրությունը, ըստ որի թեև զգալիորեն դյուրին էր դառնում մամուլի հրատարակության գործը, սակայն, միաժամանակ, օրինականացվում էր նախնական գրաքննության կարգավիճակը, որը, հանրահայտ է, բավականին գործուն արգելք է տեղեկությունների ազատ տարածման ճանապարհին:

Ինչպես և ժողովուրդների պատմության ցանկացած այլ ճգնաժամային իրավիճակ, 1812 թվականի Չայրենական պատերազմը էպես նպաստեց ռուս ժողովրդի համախմբմանը, նրա ազգային ինքնագիտակցության զարթոնքին, մշակութային առանձնահատկությունների վերագնահատմանը: Առաջնային արժեքներից մեկը դարձավ ազգային պատմության իմացությունն ու նորովի գնահատումը, որն էլ արտահայտվեց ռուս հայտնի գրողների Պուշկինի, Կարամզինի, Ռիլենի, Լաժեչնիկովի և այլոց գործերում:

19-րդ դարի առաջին քառորդում երևան եկան 150 նոր պարբերականներ՝ պաշտոնական ու մասնավոր, մայրաքաղաքային ու նահանգային: Դա ավելին էր, քան մինչ այդ հրապարակվող բոլոր թերթերն ու ամսագրերը՝ համախուժք:

Հանդեսները, կարծես շարունակելով 18-րդ դարի անգլիական և ֆրանսիական ավանդույթները, ավելի գերիշխող դիրքեր էին գրավում պարբերական մամուլի շուկայում և հաստատել ու ամրապնդել էին ինչպես իրենց, այնպես էլ իրենց աշխատակիցների սոցիալ-հասարակական և մասնագիտական բավականին բարձր կարգավիճակը:

1802 թվականին Կարամզինի հիմնադրած գրական-քաղաքական «ԹարՅվՈՍ ԺՂՏտօ» («Եվրոպայի լրատու») հանդեսը, արտահայտելով ժամանակի ձևավորված պահանջարկը, էապես կողմնորոշված էր դեպի եվրոպական իր նախատիպերը, ինչը վկայում է թե պարբերականի անվանումը, թե հրատարակչի դիմումը տասներկու անգլիական, ֆրանսիական և գերմանական ամսագրերի՝ ցանկալի թարգմանություններն արտոնելու խնդրանքով: **«Շատերը չեն ստանում արտասահմանյան ամսագրեր, բայց շատերն են ցանկանում իմանալ՝ ինչ և ինչպես են գրում եվրոպայում: Լրատուն կարող է բավարարել սույն հետաքրքրասիրությունը, որոշ օգուտ տալով լեզվին և ճաշակին»**, - գրում էր Կարամզինը, և հենց այս դիտարկումն էր պատճառը նաև, որ հանդես ներմուծվեց նաև քաղաքական անցուդարձի վերլուծությունը՝ դրանով իսկ այն դարձնելով առավել հրատապ և բազմաբովանդակ:

Այդ ժամանակների համար բավականին երկարակյաց կարելի է համարել նաև 1812-1852 թվականներին Սանկտ Պետերբուրգում հրատարակվող «հօվ ԿՑպիպրՅՉՈ» («Որդի Հայրենյաց») հանդեսը, որի բովանդակությունը և անգամ ձևավորումը ծառայում էին գլխավոր նպատակին՝ ընթերցողների սրտերում հայրենասիրության և ազգային արժանապատվության արմատավորմանը: Պատերազմը ներկայացվում էր իբրև ժողովրդի ազատագրական պայքար օտարի լծի դեմ՝ հանուն անկախության և ազատության:

Ռազմական գործողությունների ավարտից հետո «հօվ ԿՑպիպրՅՉՈ»-ն սկսեց համագործակցել ռազմադաշտից վերադարձած սպաների, երիտասարդ տաղանդավոր գրողների ու հրապարակախոսների (նրանցից շատերը հետագայում դար-

ծան դեկաբրիստներ)՝ Ֆ. Գլինկայի, Ա. Բեստուժևի, Ն. Մուրավյովի, Կ. Ռիլենկի, Ն. Տուրգենևի, Վ. Կյուխելբեկերի, Ա. Գրիբոյեդովի, Ա. Պուշկինի և այլոց հետ:

«Մի քանի մտքեր պոեզիայի մասին» հոդվածում Ռիլենը հանդես եկավ ստրկական նմանակման դեմ՝ հանուն քաղաքացիական ուղղվածության ազգային գրականության: Փաստորեն Հայրենական պատերազմը և պատերազմում ռուս ժողովրդի տարած հաղթանակը լավագույնս օգտագործվեց «տարածքի ազգաբնակչությանը» որպես ժՈՂՈՎՈՒՐԴ կայացնելու, նրա ազգային ինքնատիպությունն ընդգծելու և արժևորելու նպատակով, որին իր անուրանալի նպաստը բերեց նաև «հով ԿՑպփպրՑՉՈ» հանդեսը:

Այդ տարիներին զարգացում ապրեց նաև գերատեսչական և մասնագիտական մամուլը. ներքին գործերի նախարարությունը հրատարակում էր «Սանկտպետերբուրգյան հանդեսը», գիտությունների ակադեմիան՝ «Տեխնոլոգիական հանդեսը», հրետանավորների ժամանակավոր կոմիտեն՝ իր հանդեսը:

Նոր թերթերից հիշատակման է արժանի նախևառաջ 1813 թվականի փետրվարին Սանկտ Պետերբուրգում Պեզարովիուսի հիմնադրած «ՀցրոՍՈռ ԼվՉՈսՈՊ»-ը («Ռուս հաշմանդամը»): Թերթի բաժանորդների թիվն արագ աճում էր (1813 թվականի ապրիլի վերջին՝ արդեն 800 օրինակ էր), որը բացատրվում էր պատերազմական գործողությունների բացառիկ օպերատիվ լուսսաբանմամբ: Զգալով ռազմական տեղեկատվության նկատմամբ ընթերցողների վիթխարի և աճող հետաքրքրությունը, Պեզարովիուսը սկսեց հրատարակել «Արտակարգ հավելվածները», որտեղ հաղորդվում էր նապոլեոնյան զորքերի դեմ ռուսական բանակի հաղթական ճակատամարտերի մասին:

«ԿՏս'ՐվՈ՛ ջՉպջՊՈ»-ն բազմաթիվ ընթերցողների հետաքրքրության կենտրոնում էր. ավանախի առաջին գրքույկը հրատարակվեց 600, երկրորդն արդեն 1500 օրինակով, այսինքն՝ տպագրական ծախսերը փակելով ու շահույթ բերելով: Ավանախի հրատարակիչներ Կ. Ռիլենը և Ա. Բեստուժևը հեղինակներին հոդվածների համար սկսեցին նաև հոնորար վճարել:

Դեկաբրիստների ապստամբությունից հետո (1825 թվական) ընդունվեց գրաքննչական նոր կանոնադրությունը, որը ժամանակակիցները որակեցին «չուզունե» բառով: Նոր կանոնադրու-

թյունն արգելում էր տպագրության թույլատրել «երկակի իմաստ» ունեցող գրությունները, եթե գրաքննիչը կասկածում էր հեղինակին՝ հետին մտքեր ունենալու մեջ: 1828 թվականի նոր կանոնադրությունը այդ հրահանգը չեղյալ հայտարարեց:

1832 թվականից նոր պարբերականների տպագրությունը թույլատրում էր Նիկոլայ Առաջինը: Նրա իշխանության օրոք ուժեղանում էր կառավարական մամուլը: Մասնավոր թերթերի ու հանդեսների որոշ հրատարակիչներ պաշտպանում էին կառավարության ճնշումները՝ ցանկանալով խուսափել պատժիչ գործողություններից:

Նման հրատարակիչներից էին Ֆ. Բուլգարինը և Ն. Գրեչը: 1825 թվականի դեկտեմբերի 14-ից (դեկաբրիստների ապստամբության օրը) հետո Բուլգարինը դարձել էր գաղտնի ոստիկանության հասարակական կարծիքը վերահսկող երրորդ բաժնի գործակալ:

1825 թվականին Բուլգարինի հրատարակած «Կաշպովո՝ տփպսո» («Հյուսիսային մեղու») թերթը քաղաքական տեղեկատվություն տպագրելու արտոնություն ստացավ, որը միանգամից ապահովեց մեծ թվով ընթերցողներ (թերթը 3000 բաժանորդ ձեռք բերեց):

ժամանակի պահանջներն առաջինն զգաց ու արագ արձագանքեց Ն.Պոլևոյը: «ՕՏՏՐՍՏՂՍՈՒ ՑպսպՑՈՒռ» («Մոսկովյան հեռատիպ») հանդեսում նա հայտարարում էր, որ հանդեսի նպատակն է նպաստել լուսավորության տարածմանը, եվրոպական կրթական համակարգ արմատավորելուն:

1831 թվականին Ալեքսանդր Պուշկինը լրագրողներին անվանում էր «պետական մարդկանց ծիլեր»: Նա գտնում էր, որ լրագրողները կառավարում են հասարակական կարծիքը և չէր ընդունում պաշտոնական թերթերի ու ամսագրերի «հասարակական կարծիքին ցուցումներ տալու» մենաշնորհը, որովհետև գտնում էր, որ այդ պարբերականները հասարակական կարծիքի խոսափողը չեն: **«Հարցնում եմ՝ ի՞նչ իրավունքով է «Հյուսիսային մեղուն» ռուս հասարակության ընդհանուր կարծիքը ղեկավարում, կամ՝ ի՞նչ ձայն կարող է ունենալ «Հյուսիսային Սերկուրին», գրում էր նա:**

«ՉպսպրՍՏ»-ի («Աստղադիտակ») խմբագիր Ն. Նադեժդինը, տպագրելով Պուշկինի ֆելիետոնները, գտնում էր, որ լուսավորության տարածումը լրագրության կարևոր նպատակն է:

«ՉպսպրՍՏտ»-ը տպագրում էր պրոֆեսորներ Մ. Պավլովի, Մ. Պոգոդինի, Ա. Մաքսիմովիչի, Ա. Վոստոկովի փիլիսոփայական, իրավաբանական, պատմական, բանասիրական հոդվածները:

«Հասարակությունը և լրագրողը» հոդվածում Ֆ. Բուլգարինը հայտարարում էր հասարակության անունից, որ իրեն հետաքրքրում է միայն նորությունը, իսկ եթե նորություն չկա, այն պետք է հնարել. **«Ներկայացրեք ինձ որքան հնարավոր է արտառոց, զարմանալի, հազվագյուտ, տարօրինակ, անբնական, սարսափելի, զվարճալի, անհեթեթ լուրեր»:**

«Առևտրական ուղղվածության» պարբերականներում մեծ դեր ուներ բացահայտ կամ թաքնված գովազդը:

Հոդվածագրի աշխատանքի դիմաց տրվող վճարը Բելինսկին համարում էր ժամանակին բնորոշ փաստ՝ չնայած «հնարավոր բացասական հետևանքներին»: Լրագրողի աշխատանքի վարձատրությունը նա համարում էր պարբերականի մասնագիտական մակարդակի բարձրացման միջոց և օրինակ էր բերում եվրոպական փորձը. **«Մի՞թե փողի շնորհիվ չեն անգլիական ու ֆրանսիական ամսագրերը հասել այս բարձր մակարդակին»:** գրում էր նա: Սամուլի պրոֆեսիոնալացման տեսակետից նա առանձնացնում էր երեք գործոններ՝ հեղինակի աշխատանքի բարձր վարձատրությունը, հրապարակման ճիշտ պահի ընտրությունը, ընթերցողի ուշադրությունը գրավելու ունակությունը: **«Հաջողություն ասելով մենք հասկանում ենք ոչ թե բաժանորդների թիվը, այլ հասարակության վրա բարոյական ներգործությունը»:** գտնում էր Բելինսկին:

Բելինսկու հոդվածը «ՉպսպրՍՏտ»-ում հայտնվեց պարբերականի արգելման նախօրեին: 1836 թվականին Պյոտր Չաադակի «Փիլիսոփայական նամակի» տպագրության համար (Չաադակը ժխտում էր Ռուսաստանի պատմական դերը այլ պետությունների շարքում) «ՉպսպրՍՏտ»-ը արգելվեց, խմբագիր Նադեժդինը աքսորվեց, Չաադակին հայտարարեցին «խելակորույս»:

Իր թե գրական հանճարի, թե քաղաքացիական ու մասնագիտական դիրքորոշման առումով աննախադեպ է Ալեքսանդր Պուշկինի դերը ռուս իրականության, գրականության ու լրագրության մեջ:

Նրա «հՏԶԲպվպվՌՍ» («Ժամանակակից») հանդեսի նպատակը գեղարվեստական իրական ու բարձր արժեքների պահ-

պանունն էր, գիտության, մշակույթի և արվեստի այնպիսի մասսայականացումը, որպեսզի դրանք չմնան սոսկ որպես հայեցողական արժեքներ, այլ դառնան կյանքի նորմ և ուղեմիջներ:

1836 թվականին մեծ դժվարությամբ ստանալով սեփական հանդես հրատարակելու թույլտվություն, Պուշկինը ստիպված էր համաձայնել գրաքննության առաջադրած պայմաններին, ըստ որոնց նա իրավունք չուներ անդրադառնալու հասարակական-քաղաքական թեմաներին և ստիպված էր սահմանափակվել սոսկ գրական հանդեսի ընձեռած հնարավորություններով: Սակայն, չնայած դրան, Պուշկինը, այնուամենայնիվ, դրեց «հաստափոր» հանդեսի հիմքը, որը բազմաթիվ սերունդների մտքերի տիրակալը դարձավ: Անկասկած հանճարեղ բանաստեղծի ողբերգական մահը խափանեց նրա նաև հանդեսի հետ կապված բազմաթիվ նախանշումների իրականացումը, այլապես ռուս լրագրությունը ոչ միայն շատ ավելի ակնառու փաստ կարծանագրեր իր ժամանակի մեջ, այլև՝ զարգացման առավել արագ և արդյունավետ ընթացք: Այսօր, ցավոք, կարելի է միայն պատկերացնել. թե ինչպիսին կարող էր լինել Պուշկինի հրապարակած թերթը, որին նա այդքան ձգտում էր, և որը, սակայն, կրկին չիրականացավ գրաքննության հարուցած խոչընդոտների պատճառով:

Ու նաև Պուշկինի «հՏՉՐպվավվՌՍ»-ի շնորհիվ էր, որ 1840-ական թվականներին էապես աճեց մամուլի դերն ու ազդեցությունը Ռուսաստանի ոչ միայն մշակութային, այլև, ընդհանրապես, հասարակական-քաղաքական կյանքում: Վիսարիոն Բելինսկին գրում էր. **«Ժուռնալիստիկան մեր ժամանակներում ամեն ինչ է. և Պուշկինը, և Գյոթեն, և ինքը՝ Յեզեյը, լրագրող են: Հանդեսն ամբի-ոնի դեր ունի»:**

Գրաքննության հարուցած ինչպես «օրինական», այնպես էլ «լրացուցիչ» արգելքների պատճառով նոր պարբերականներ հիմնադրելու և հրատարակելու հնարավորությունները զրեթե բացառվում էին: Այնուամենայնիվ՝ իրենց տեսակետները և կարծիքները ժողովրդին հասցնելու նպատակով, դեմոկրատ լրագրողները փնտրում և հիմնականում գտնում էին հնարավոր միջոցներն ու ճանապարհները:

Այսպես. նրանք աստիճանաբար սկսեցին առաջատար դիրքեր զբաղեցնել «ԿՑպիպրՑՉպվվօպ ջՌտՌրՍՌ» («Հայրենական գրառումներ») և «Современник» («Ժամանակակից»)

հանդեսներում, որոնք արդեն հրատարակում էին, համապատասխանաբար, Ա. Կրասակին և Ն. Նեկրասովն ու Դ. Պանակը: Բավական է որպես օրինակ նշել, որ «ԿՑպիպրՑՉպվվօպ ջՈտՈրՍՈ» հանդեսի գրաքննադատության բաժինը վարում էր Բելինսկին: Նա հրապարակում էր քննադատական հոդվածների շարք՝ նվիրված Պուշկինին, Լերմոնտովին, Գոգոլին: Ամսագրում հոդվածներ էին տպագրում Լերմոնտովը, Տուրգենևը, Դուտոսկին, Դալը, Գերցենը, Օգարյովը և այլք: Արևմտյան մշակույթը ներկայացվում էր Շեքսպիրի, Գյոթեի, Դիկենսի, Յայնեի, Սանդի ստեղծագործություններով:

Բելինսկին ընդունում էր ժողովրդավար «ԿՑպիպրՑՉպվվօպ ջՈտՈրՍՈ»-ի ազդեցությունն ամբողջ ռուս մամուլի վրա: Նրա խոսքերով. **«Լրագրության բնագավառում «ԿՑպիպրՑՉպվվօպ ջՈտՈրՍՈ»-ն կենտրոնի դեր է խաղում, որին ուղղվում են բոլոր այլ պարբերականների հարվածները և որտեղից նորանոր մտքեր են տարածվում՝ թեպետ և աղավաղված, դեպի այլ ամսագրեր»:**

Անհրաժեշտ է նշել, որ 19-րդ դարակեսը, փաստորեն, նաև այն ժամանակաշրջանն էր, երբ թե մտավոր ու գեղարվեստական էլիտայում, թե հասարակության մեջ լուրջ խնորումներ էին ընթանում Ռուսաստանի ընտրելիք ճանապարհի շուրջ և իրոք, այդ հսկայական երկիրը, որից էապես կախված էր նվազագույնը երկու աշխարհամասերի զարգացումների ճակատագրի գոնե որոշ մասը, լուրջ ճամփաբաժանի առջև էր հայտնվել:

Եվ շնորհիվ աստիճանաբար տարածվող տեղեկատվամիջոցների, այդ քննարկումները նաև հասարակության լայն շերտերին էին հասու դառնում, ընդգրկում նաև նրանց:

Սլավոնաֆիլներին Ի. Կիրենսկուն, Ս. Խոմյակովին, Յ. Սամարինին, Աքսակով եղբայրներին միավորում էր Ռուսաստանի զարգացման սեփական և յուրահատուկ ճանապարհ գտնելու գաղափարը՝ ուղղափառության և համայնքային զարգացման հենքի վրա: Պետրոս Մեծի բարեփոխումները (ըստ սլավոնաֆիլների) խանգարեցին այդ ճանապարհով Ռուսաստանի առաջընթացին: Նրանք դեմ էին արևմտյան ճանապարհին ու դեպի Արևմուտք կողմնորոշմանը: Նրանք նաև ուրույն կարծիք ու տեսակետ ունեին ինչպես ժամանակի, այնպես էլ ընդհանրապես ժուռնալիստիկայի մասին: Մասնավորապես Ի. Կիրենսկին ընդունում էր մամուլի դերը հասարակական կարծիքի ձևավորման գործում: Նրա կարծիքով. **«Գրականության մեջ ժուռնալիստի-**

կայի գերակայությունն ապացուցում է, որ ժամանակակից կրթության մեջ վայելելու ու իմացության պահանջը զիջում է դատելու պահանջին՝ սեփական վայելքն ու գիտելիքը միասին դիտարկելու, ինքն իրեն հաշվետու լինելու, կարծիք ունենալու պահանջին»: Եթե առաջ «գրական հետաքրքրությունները ժողովուրդների գիտակցական շարժման զսպանակներից մեկն էին», ապա պատկերը փոխվել է՝ **«ժուռնալիստիկայի գերակայությունը գրականության մեջ նույնն է, ինչ փիլիսոփայության գերակայությունը գիտությունների մեջ»:**

Հակառակ սլավոնաֆիլների՝ արևմտականները (Բելինսկին, Գերցենը, Գրանովսկին, Կավերինը, այլք) Ռուսաստանն ու Եվրոպան համարում էին պատմամշակութային մեկ ամբողջություն: Նրանք հանդես էին գալիս ճորտատիրական Ռուսաստանում մարդու իրավունքների, ժողովրդավարական ազատությունների հաստատման պաշտպանությամբ: Բելինսկին «Նամակ Գոգոլին» հոդվածում (1847 թվական) գրում է. **«Ռուսաստանում հիմա ամենակենսական, ժամանակակից ազգային հարցերն են՝ ճորտատիրական իրավունքի և մարմնական պատիժների վերացումը, օրենքների, գոնե նրանց՝ որ արդեն գործում են, խստիվ կատարումը»:**

19-րդ դարի կեսերի հեղափոխական իրադարձությունները, որոնք սկսեցին ծավալվել արևմուտքում, ցարական կառավարությանը լուրջ և էական կանխարգելիչ քայլերի դրդեցին: Սահմանափակումները, բնականաբար, ուղղված էին իշխանություններին ընդդիմադիր, այսինքն՝ ազատական տեղեկատվամիջոցների դեմ:

Նիկոլայ Առաջինը իշխան Մենշիկովի գլխավորությամբ հատուկ մի կոմիտե հիմնադրեց, որի գործառույթը մայրաքաղաքային պարբերականները վերահսկելն էր: Սահմանափակումները, ինչպես և սպասվում էր, ուղղված էին «Отечественные записки» և «Современник» հանդեսների դեմ: Հատուկ կոմիտեն հանդեսների խմբագիրներից պահանջում էր. «հանդեսներին հաղորդել մեր կառավարությունների տեսակետների հետ լիովին համապատասխանող ուղղություն», այլապես նրանց սպասում էր «պետական հանցագործի» կարգավիճակն ու ճակատագիրը: «Отечественные записки»-ում Սալտիկով-Շչեդրինի «Խճճված գործ» վիպակի տպագրությունից հետո հեղինակը վյատկա արքային գրած նամակում արգելեց սլավոնաֆիլների «Մոսկովյան հավաքածուն», աշխատակիցների վրա ուստիկանությունը վերահսկողություն սահմանեց:

Ռուսական լրագրության մեջ սկսված լճացման և տեղապտույտի շրջանը դադարեց Ալեքսանդր Երկրորդի գահ բարձրանալով, որը խիստ կարևորում էր գյուղացիական հարցի լուծումը Ռուսաստանում և ներքին մղումներով նաև՝ տրամադիր էր էական բարեփոխումների: Միապետին դա էին պարտադրում նաև «արտաքին» գործոնները. ահագնացող հուզումները գյուղացիության շրջանում, ճորտատիրական աշխատաձևի խիստ ցածր արդյունավետությունը, որն էական խոչընդոտ էր երկրի տնտեսական զարգացման ճանապարհին, ինչպես նաև առաջադեմ Եվրոպայի քանահրական վերաբերմունքը երկրում դեռևս պահպանվող կարգերին:

Սիրելով որսորդությունը՝ Ալեքսանդր Երկրորդը, ըստ ժամանակակիցների, կարդացել էր Իվան Տուրգենևի «Որսորդի գրառումները» գիրքը և հետագայում էլ հաստատում էր, որ Տուրգենևն իր գրառումներով նպաստեց Ռուսաստանում ճորտատիրության վերացմանը:

Նոր ցարի իշխանության առաջին տարիները ցույց էին տալիս, որ Ռուսաստանում հասարակական կյանքի լուրջ բարեփոխումներ են նախապատրաստվում (աքսորավայրերից ազատ արձակվեցին պետրաշևականներն ու դեկաբրիստները, մասնավոր ամսագրերին թույլ տրվեց քաղաքական բաժիններ ունենալ և նրանք սկսեցին գյուղացիության հարցերը քննարկել նաև):

Բարեփոխումներին նախորդած հինգ տարիներին 150 նոր թերթեր, հանդեսներ ու ամսագրեր էին տպագրվում: Տարածում էր ստանում ժողովրդավարական մամուլը: Այլ պարբերականների համար օրինակ էր Նեկրասովի «Современник»-ը: 1858 թվականին հանդեսի բաժանորդագրության հայտարարության մեջ Նեկրասովը գրում էր. **«Եթե մեկ բառով բնորոշենք՝ ինչ հանդես է ցանկանում խմբագրությունն ունենալ, ապա՝ հասարակական»:** Մեկ տարի անց հանդեսին թույլատրվեց նաև քաղաքական բաժին բացել, ուր իրենց հողվածներն էին տպագրում Ն. Չեռնիշևսկին ու Ն. Դոբրոյուբովը:

Դոբրոյուբովն անհրաժեշտ էր համարում անդրադառնալ հասարակական ու մշակութային կյանքի հրատապ հարցերին, խնդիր չհամարելով մանրիկ մերկացումները ու փաստերից եզրահանգումները: Ս. Սլավոտինսկուն ուղղված նամակում Դոբրոյուբովը գրում է. **«Մենք պետք է խմբավորենք ռուսական կյանքի փոփոխություններ ու բարելավումներ պահանջող փաստերը.**

պետք է ընթերցողների ուշադրությունը հրավիրել իրենց շրջապատող իրականության վրա, պետք է աչքները ծակել բոլոր ստորություններով, հետապնդել, տանջել՝ հանգիստ չտալ այնքան, որ ընթերցողին զգվելի դառնա հասարակության այս ամբողջ աղտեղությունը, և որպեսզի նա՝ դանակը ոսկորին հասած՝ վեր թռչի ու բղավի՝ «Էս ինչ, հասկանում ես, տաժանք է: Լավ է հոգիս կործանվի, քան թե ես ճահիճի մեջ խեղդվեմ»:

Ի հակադրություն «հաստափոր» հանդեսների՝ առավել ճկուն պարբերականների որոնումը հանգեցրեց 1859 թվականին Սանկտ Պետերբուրգում «ԼրՄՐՈ» պատկերազարդ շաբաթաթերթի ստեղծմանը (հիմնադիրներ՝ Վ.Կուռնչկին, Ն.Ստեպանով):

Երգիծական շաբաթաթերթերի վրա իր ներգործությունն ունեցավ Գերցենի «Колокол»-ը: Գերցենը ռուսական ազատ այդ պարբերականը հրատարակում էր Լոնդոնում և հանդես էր գալիս «պայքարի արյունալի մեթոդների» դեմ: «Полярная звезда» (1855-1862 թվականներ) և «Колокол» (1857-1867 թվականներ) հանդեսներում նա Ալեքսանդր Երկրորդ ցարին կոչ էր անում բարեփոխումների ճանապարհն ընտրել, գյուղացիներին հողով ազատագրել, որը պետությունը պիտի գներ նրանց համար, պահանջում էր ժողովրդավարական ազատություններ:

1861 թվականի փետրվարի 19-ին Ալեքսանդր Երկրորդը ստորագրեց ճորտատիրական իրավունքի վերացման մասին մանիֆեստը: 1860-1870-ական թվականներին բարեփոխումները նպաստեցին Ռուսաստանում եվրոպական ճանապարհի և պետականության քաղաքակիրթ ձևերի զարգացմանը:

Ֆյոդոր Դոստոևսկին առաջադրեց «համամարդկային համաշխարհային միավորման» գաղափարը, որ հնարավոր է ազգային ու համամարդկային շահերի միահյուսումով «խսկական մեծ սիրո», նարդկանց «եղբայրության, անհատապաշտությունից հրաժարումի ճանապարհով»: *«Բայց միայն առանց թռիչքների և առանց վտանգավոր salto mortale-ների պետք է կատարվի այդ անցումը դեպի ճշմարիտ ճանապարհ»*, - գրում էր Դոստոևսկին «Ժամանակ» հանդեսի բաժանորդագրական հայտարարության մեջ (1863 թվական): Գշմարտությունը Դոստոևսկու համար գոյություն ուներ «իբրև Աստվածային ճշմարտություն», «Քրիստոսի ճշմարտություն»՝ իբրև ժողովրդական զանգվածների բարձրագույն իդեալ:

Դրանք այն ժամանակներն էին, հիրավի, երբ ճշմարտության և ուղու նպատակամետ փնտրտուքներ էին ընթանում և խիստ դրական էր, որ այդ ընթացքում չէր մոռացվում, ընդհակառակը՝ առաջին պլան էր մղվում պարզ ու սովորական մարդը՝ քաղաքացին:

Ստորև առանց մեկնաբանության ներկայացվող երկու մեջբերումները ևս դրա ապացույցն են:

Պիսարևը գրում էր. «Չրապարակախոսը պետք է մշտապես կանխատեսի իր ընթերցողի բոլոր հարցերը, կասկածները և առարկությունները: Նա պետք է առաջադրի և լուծի այդ խնդիրները»: Նրա կարծիքով՝ ազատական լրագրողները շեղում են հասարակության ուշադրությունը արմատական խնդիրների լուծումից:

Գերցենը, որը նաև ռուս լրագրության մեջ առաջնորդողի հիմնադիրն ու տեսաբանն էր, կարծես թե շարունակում էր նրան, բայց միայն՝ կարծես. **«Մենք պետք է երգչախմբին բացատրենք իր սեփական ձգտումները, իր խառնաշփոթ մտքերը, նրա առաջարկած նախադրյալներին սիլոգիզմներ ավելացնենք, վերջակետենք նրա մտքերը: Եթե մենք նրանից հեռու գնանք, նա մեր հետևից չի գա, եթե շեղվենք, նա մեզ կթողնի, եթե հետ մնանք, նա կամ կտրորի կանցնի կամ կշրջանցի մեզ: Նրա շահերը չի կարելի հնարել կամ «կառուցել»՝ ինչպես ամուսն էին գերմանացիները, այլ պետք է վերցնել նրանցից ու զարգացնել... Ոչ վերացական մտածողությունը, ոչ հեռավոր իդեալները, ոչ տրամաբանական խստությունը, ոչ կտրուկ հետևողականությունը ինքնին վերցրած կենցաղային քարոզչության գործին չեն օգնի, եթե այնտեղ արտահայտված չեն զանգվածների մերձակա իդեալները, օրվա ձգտումները, կասկածները»:**

1881 թվականի մարտին՝ Ալեքսանդր Երկրորդի սպանությունից հետո, Ալեքսանդր Երրորդի կառավարությունը երկրում կարգուկանոնը վերականգնելու և ամրապնդելու բավականին կոշտ միջոցառումներ սկսեց իրականացնել:

1882 թվականի օգոստոսի 27-ի «Տպագրության մասին ժամանակավոր կանոնները» չեղյալ էին հայտարարում Ալեքսանդր Երկրորդի սահմանած արտոնությունները: Այլևս չորս նախարարներ էին (նրանց թվում ներքին գործերի նախարար Դ. Տոլստոյը և Սինոդի օբեր-դատախազ Կ. Պոբեդոնոսցևը) որոշում «ցանկացած» հրատարակության գոյություն ունենալ-չունենալու հարցը: 1884 թվականին չորս նախարարների կոմիտեն ար-

գելեց «Отечественные записки»-ն՝ «վնասակար ուղղվածությամբ» պատճառով:

Արդյունաբերության զարգացումը, բանվորների թվի բազմապատկումը հաստատում էին, որ երկրում տեղի է ունեցել հասարակական ուժերի վերախմբավորում: Հենց հասարակական ուժերի վերադասավորման հետ էին իրենց հույսերը կապում նախկին նարոդնիկներ Գ.Պլեխանովը և իր համախոհները, որոնցից ոմանք էլ 1883 թվականին ժնևում ստեղծեցին «Աշխատանքի ազատագրում» խմբակը:

Սոցիալիստական շարժումն Արևմուտքում ու Ռուսաստանում մարքսիստական ուղղվածություն էր ստանում:

1894 թվականին՝ Ալեքսանդր Երրորդի մահից հետո, գաիը ժառանգեց Ռոմանովների դինաստիայի վերջին ցարը՝ Նիկոլայ Երկրորդը: ***«Նա ոչ մեծ զորավար էր, ոչ մեծ տիրակալ: Նա միայն հավատարիմ, պարզ մարդ էր՝ միջին ընդունակությունների տեր, բարեհամբույր և կյանքում հենվում էր հավատի ու Աստծո վրա»***, - ասել է նրա մասին Ռևինստոն Չերչիլը:

Դարի վերջին տասնամյակը Ռուսաստանում տնտեսական աճով նշանավորվեց. արդյունաբերական արտադրանքի տարեկան միջին աճով Ռուսաստանն առաջ անցավ եվրոպական երկրներից և հավասարվեց ԱՄՆ-ին: Ֆինանսների նախարար Վիտեն դրամական բարեփոխում անցկացրեց, որը կայունացրեց ռուսական ռուբլին ու ամրապնդեց պետական ֆինանսները:

Բնականաբար՝ արդյունաբերության զարգացումը նպաստում էր բանվորական շարժման զարգացմանը. ձևավորվում էին նոր կառույցներ, ի հայտ էին գալիս նոր ղեկավարներ: 1895 թվականին Վլադիմիր Ուլյանովը (արտասահմանում Գեորգի Պլեխանովի հետ հանդիպելուց հետո) Սանկտ Պետերբուրգում ստեղծեց «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միություն» կազմակերպությունը, որի նախաձեռնությամբ 1898 թվականին Մինսկում հավաքվեցին մարքսիստական խմբակների 9 ներկայացուցիչներ և հայտարարեցին ռուսական սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության ստեղծման մասին:

Այդ ժամանակի ռուսական պարբերական մամուլում իրենց տեղն էին ամրապնդում ազատական-նարոդնիկական «Русское богатство» («Ռուսաստանի հարստություն»), «Русская мысль» («Ռուսական միտք»), ազատական-բուրժուական «Вестник

Европы» («Եվրոպայի լրատու») պարբերականները: Աճում էին թերթերի տպաքանակները. առավել մեծ պահանջարկ ունեին Սուվորինի «Новое время»-ն («Նոր ժամանակ»), Կրասնկու «Голос»-ը («Ձայն»), Կատկովի «Московские ведомости»-ին («Մոսկովյան տեղեկագրեր»):

1889 թվականին «Новое время»-ի տպաքանակը 35000 էր, իսկ 1897 թվականին արդեն 50000:

Արտասահմանում էր տպագրվում ազատական-ժողովրդավարական «Свободное слово»-ն («Ազատ խոսք», 1898-1899 թվականներ): Խմբագիրներն էին Վ. Չերտկովը և Պ. Բիրյուկովը: Լինելով Լև Տոլստոյի համակիրներ՝ նրանք տպագրում էին Տոլստոյի ստեղծագործությունները:

«Մարդկանց կյանքի բարելավման միակ իսկական ճանապարհը բարոյական կատարելագործման ճանապարհն է», - այս եզրակացությանն էր հանգել Լև Տոլստոյը: Կյանքի իմաստի մասին իր դատողություններում նա հանգում էր «ճշմարտության» գաղափարին (հիշեցնենք, որ Ֆյոդոր Դոստոևսկին ևս ճշմարտության որոնումների մեջ էր և այդ ճանապարհին հանգում էր Աստծո գաղափարին): Տոլստոյի համար ճշմարտությունն այն էր, ինչը բարոյական է: Չարի պատճառները նա կոչ էր անում տեսնել ոչ թե մարդուց դուրս, այլ հենց մարդու մեջ, ուստի բարոյական ինքնակատարելագործումը համարում էր չարի վերացման միջոց: Ըստ Տոլստոյի՝ լրագրությունը կոչված էր ծառայելու անհատի բարոյական կատարելագործմանը, իբրև հետևանք ունենալով բոլոր անհատների համախումբ՝ մարդկության կատարելագործումը: Այս դիրքերից նա լրագրության մեջ դատապարտելի էր համարում այն ամենը, ինչն առիթ էր տալիս ժուռնալիստիկան անվանել հնագույն մասնագիտություններից մեկը. **«Չկա ավելի մեծ մեղք, քան խոսքով շնամալը»**, - գրում էր նա:

«Русская мысль» ամսագրում (1893 թվական, 10-11 համարներ և 1894 թվական, 2, 3, 5-7 համարներ) տպագրվեցին Անտոն Չեխովի ակնարկները ռուս արքայալուսի մասին, որոնց հիման վրա 1895 թվականին տպագրվեց «Սախալին կղզին» գիրքը: Աքսորյալների մասին հավաստի տեղեկություններ հավաքելու համար Չեխովը մեկնեց Սախալին (ինչն այդ ժամանակ այնքան էլ անվտանգ չէր կյանքի համար), անձամբ գրուցեց տասնյակ հազարավոր սախալինցիների հետ, լրացրեց յուրաքանչյուրի վիճակագրական թերթիկը, նրանց պատասխանները իր հարցաշարին:

«Իմ սրբությունն սրբոցը մարդու մարմինն է, առողջությունը, խելքը, տաղանդը, ոգևորությունը, սերը և բացարձակ ազատությունը՝ ազատությունը կեղծից ու ստից, որտեղ էլ նրանք արտահայտվեն»,- գրել է Չեխովը Ա .Պլեշչենկին ուղղված նամակում:

Մարդու միջից կաթիլ-կաթիլ դուրս մղել ստրուկին, դաստիարակել զգացմունքների ու պահվածքի կուլտուրա, կատարելագործել բարքերը՝ այս էր հորդորում Չեխովը իր հազարավոր ընթերցողներին:

Սա էր մամուլի դեմքն ու դիրքը Ռուսաստանում, մինչդեռ գերմանական ողջ մամուլը պարտավոր էր ենթարկվել Նապոլեոնի միանձնյա կամքին, որը տեղերում արտահայտում էին ոստիկանները:

Հռենոսյան Միության և Պրուսիայի թերթերից ևս պահանջվում էր, որ պաշտպանեն ֆրանսիական քաղաքականությունը: 1809 թվականին Նապոլեոնի դեկրետով սահմանվում էր, որ **«Չի թույլատրվում թերթերում օգտագործել կտրուկ արտահայտություններ և հարձակումներ հասարակական ու մասնավոր անձանց հասցեին»**, իսկ 1811 թվականին նա գրավյալ տարածքների գերմանական թերթերին զգուշացնում էր. **«Նախարեցում է սպառնում յուրաքանչյուր թերթի, որն իր քաղաքական հաղորդումները կքաղի այլ աղբյուրից, բացի «Moniteur»-ից, իսկ խմբագիրները անձնական պատասխանատվություն են կրում այդ հաղորդումների համար»:**

Եվ միայն 1814 թվականից հետո ողջ Գերմանիայում հույս արթնացավ «իին գերմանական փառքի և վեհության» վերածննդի հանդեպ: Այս տրամադրությունները իրենց արձագանքը գտան նաև այդ օրերի գերմանական պարբերականներում, որոնք այդ ժամանակահատվածում օգտվում էին գրեթե ոչ մի բանով այլևս չսահմանափակվող ազատություններից:

Առավել պերճախոսությամբ և ոգևորությամբ ազգային նոր խնդիրները քննարկվում էին «Pheinischer Merkur» թերթում, որ տպագրվում էր 1814 թվականի հունվարից Կոլբենցում Ի. Գերե-սի խմբագրությամբ:

Նապոլեոնյան 100 օրերի ընթացքում, երբ կայսրը վերադարձել էր և Գերմանիային նորից սպառնում էր ֆրանսիական արշավանքը, նա գերմանացի իշխաններին խնդրում էր իրենց համար առաջնորդ՝ ղեկավար ընտրել և միասնական պետության

հիմք դնել: Բայց այդ ելույթները գերմանական կառավարության սրտով չէին, և Պրուսիայի պետական կանցլեր Յարդենբերգը 1815 թվականի մայիսի 16-ին նամակով դիմեց Գերեսին, որում պահանջում էր վերջ տալ իր չարաղետ գործունեությանը, որի նպատակը «կոթեր բորբոքելն» էր և «քարոզչությունը՝ հանուն գերմանական կայսրության վերստեղծման»: Այդ և նմանատիպ հորդորները, սակայն, արդյունք չտվեցին և 1816 թվականի հունվարի 3-ից պարբերականը դադարեց հրատարակվել:

1815 թվականին Գերմանիայում դաշնային ակտով հայտարարվեց, որ դաշնային բոլոր պետությունների համար կմշակվի մանուլի ազատության միատեսակ օրենսդրություն, բայց խոստումն այդ անկատար մնաց: Միայն 1819 թվականին ընդունվեց տպագրության մասին օրենքը, որը համարյա բառացի կրկնում էր 1814 թվականի ֆրանսիական օրենքի սկզբունքները: Գերմանական մանուլը հարկադրված էր խոսքի ազատությանը սպասել մինչև 1848 թվականը:

Բեռլինյան թերթերը դեռևս գտնվում էին գրաքննության խիստ հսկողության տակ և իրավունք չունեին, փաստորեն, քաղաքական հարցեր քննարկել:

Կառավարության տպագիր միջոցի աճող անհրաժեշտությունը, որի միջոցով իշխանությունը կարող էր անմիջական ազդեցություն ունենալ հասարակական կարծիքի վրա, որը կհաղորդեր տեղական ու արտասահմանյան թերթերի նորությունները և կհերքեր «թերթային գրչակների հապճեպ դատողությունները», դրդեց կառավարությանը 1819 թվականին հիմնել «Allgemeine Preussische Staatszeitung»-ը: Գլխավոր խմբագրի պաշտոնում նշանակվեց հայրենասեր ու ազատասեր գրող Ֆրիդրիխ Ավգուստ ֆոն Շտեգենմանը:

Ի տարբերություն Բեռլինի, Սաքսոնիայում և Թյուրինգիայում, օրինակ, մանուլը խիստ արտոնյալ պայմաններում էր:

Սաքսոն-Վայմարյան մեծ հերցոգությունում էդիկտ Կառլ Ավգուստը 1816 թվականին հայտարարեց մանուլի լիակատար ազատության մասին: Գրահրատարակիչ Ֆրիդրիխ Յուստուս Բերտոլդը Վայմարում ազատական թերթ հիմնադրեց, որը սկսեց տպագրվել 1817 թվականի հունվարի 1-ից «Oppositions-Blatt.Weimarisches Zeitung» անվանումով: Թերթը պաշտպանում էր ազատագրական շարժման գաղափարները: Հոդվածները նվիրված էին դաշնային սեյմի նիստերին, գերմանական դաշնա-

յին պետությունների պետական համակարգին, Գերմանիայի տնտեսական վիճակին և գերմանական մամուլին: Ցավոք, այս ազատությունն այնքան էլ երկար չտևեց:

Քաղաքական կյանքի համատարած անդորրը անսպասելիորեն խախտվեց 1830 թվականին, երբ Ֆրանսիայում զահրնկեց արվեց նախահեղափոխական ժամանակների կարգերը վերահաստատելու ձգտումներ ունեցող հետադիմականների հենարան համարվող Կարլոս Տասներորդը և զահ բարձրացով Լյուդովիկոս Ֆիլիպը, ով բավականաչափ ազատամիտ էր: Որոշակի ազատություններ տրվեցին նաև մամուլին: Խոսքը հատկապես Արևմտյան Գերմանիային է վերաբերում: Սակայն ընդհանուր ոգևորությունը, կառավարության «օգնությամբ» իհարկե, շուտով մարեց և Մետերնիխը ձեռնամուխ եղավ մամուլին զսպաշապիկ հազցնելուն: Մետերնիխին հաջողվեց հասնել նրան, որ Պրուսիայի միութենական կառավարությունները 1832 թվականի հուլիսի 28-ին ընդունեցին «Գերմանական հեղափոխությունը կանխելու միջոցների մասին» համատեղ որոշումը, որի շնորհիվ էլ գերմանական մամուլում քաղաքական խնդիրների քննարկումը փաստորեն անհնարին դարձավ:

1814-1848 թվականների գերմանական հանդեսները ընդհանուր առմամբ կիսում էին քաղաքական մամուլի ճակատագիրը: Համընդհանուր ոգևորության պահին քաղաքական անսագրերը մեծ դեր կատարեցին: Հայտնվեցին Լուդենսի «Nemesis»-ը, Ֆոսիի «Kieler Blatter»-ը և «Die Zeiten»-ը, Օլենի «Hermann»-ը և «Isis»-ը, Բեռնեի «Die Wage»-ն ու «Zeitschwingen»-ը, «Seutsche Blatter»-ը, Ռոտեկի «Das neue Deutschland»-ը:

Երբ 1830 թվականի ցնցումից հետո մտավոր կյանքը գերակշիռ նշանակություն ստացավ նորից, հանդեսներն ու անսագրերը առավել բովանդակալից դարձան: Խոսքը հատկապես վերաբերում է Կոտի «Morgenblatt»-ին, ապա նաև «Europa»-ին, Ռուգեի «Jahrbucher»-ին և Կուռանդի «Grenzboten»-ին:

1848 թվականի փետրվարի 24-ին, երբ Ֆրանսիայում ընկավ միապետությունը, ողջ Գերմանիայում հզոր քաղաքացիական շարժում սկսվեց՝ հանուն բարեփոխումների և մամուլի ազատագրման և ազատականացման: Մայնի Ֆրանկֆուրտում միստեր գումարող դաշնային սեյմի նախագահությունը, հռչակագրով դիմեց գերմանացի ժողովրդին, որտեղ փաստում էր, որ «Գերմանիան պիտի բարձրանա իրեն վայել աստիճանի»: Եվ

տալիս էր «բարձրացնելու» իր դեղատոմսն ու պատկերացումները: Այդ ժողովից հետո՝ մարտի 3-ին, որոշում ընդունվեց, որով դաշնային պետություններին թույլ էր տալիս պարզեցնել նախնական գրաքննությունը և մամուլի ազատություններ արտոնել: «Հիմնական գերմանական իրավունքներում» հռչակվում էր այն սկզբունքը, որը հիշեցնում էր 1789 թվականի «մարդու իրավունքները»: 1848 թվականի դեկտեմբերի 21-ի հռչակագրում ասվում էր. **«Յուրաքանչյուր գերմանացի իրավունք ունի խոսքով, նամակով, մամուլում և ցանկացած գեղարվեստական ստեղծագործության մեջ արտահայտելու իր կարծիքը: Մամուլի ազատությունը չի կարող ոչ սահմանափակվել, ոչ առկախվել, ոչ վերացվել կանխարգելիչ միջոցներով, ինչպիսիք են գրաքննությունը, տուգանքները, գրքերի տպագրության և վաճառքի սահմանափակումը, բարդությունները փոստային և այլ հարաբերություններում»:**

Մի քանի շաբաթից Կարլսբադյան որոշումները չեղյալ հայտարարվեցին: Դրան հետևեց մամուլի քանակական աննախադեպ աճը երկրի համարյա բոլոր բնակավայրերում:

Առավել խայտաբղետ էին Բեռլինի և Վիեննայի թերթերը: Համընդհանուր նշանաբանը ժողովրդականությունն ու ինքնատիպությունն էր: Թերթերի անվանումներն իսկ պիտի այդ մասին խոսեին: Օրինակ Բեռլինում տպագրվում էին «Volks-Stimme» («Ժողովրդի ձայն»), «Der Demokrat» («Ժողովրդավար»), «Der Berliner Krakehler» («Բեռլինյան ծաղրածու») «Tante Voss mit dem Besen» («Տիկին Ֆոսսն իր ավելով»), «Die Tribune» («Ամբիոն»), «Die Barrikade» («Բարիկադ»), «Berliner Grossmaul» («Բեռլինյան ապուշ»), «Buddehneeyer Zeitung» («Շատակերների թերթ») և այլ թերթեր:

Վիեննան նույնպես չէր զիջում Բեռլինին, տպագրվում էին «Die Constitution» («Սահմանադրություն»), «Das Panier des Fortschritts» («Առաջադիմության նշանաբանը»), «Das junge Ossterrisch» («Օստերիչի պատանին»), «Der politische Kellner im neuen Gasthofe zum freien Mann» («Քաղաքական մատուցողը ազատ մարդու նոր հյուրանոցում»), «Opposition fur Volk und Recht» («Ընդդիմություն հանուն ժողովրդի ու իրավունքի»), «Der politische Esel» («Քաղաքական ավանակ»), «Der Radikale» («Արմատական»), «Der Demokrat» («Ժողովրդավար»), «Schild und Schwert» («Սուր և վահան») պարբերականները:

Մյունխենում տպագրվում էին «Konstitutionelle Zeitung» («Սահմանադրական թերթը»), «Neue Munchener Zeitung»-ը, «Munshener neueste Nachrichten»-ը:

Ֆրանկֆուրտում հին թերթերի հետ տպագրվում էին Յուրգենսի «Reichstagszeitung»-ը և «Hugblatter»-ը:

Բեռլինյան հեղափոխական մամուլից հետագայում գոյատևեցին միայն «National Zeitung», «Uhrwähler Zeitung» (հետագայում՝ «Volks-Zeitung»), «Kreuz Zeitung», «Kladderadatsche, Organ für und von Bummel» թերթերը:

«National Zeitung»-ը գրում էր. **«Մեր ցանկությունը հանգում է հետևյալին. մենք ձգտում ենք տեսնել ուժեղ, միացյալ Գերմանիա, որը վախ է ներշնչում արևելքին ու արևմուտքին: Հայրենիքի ներքին անվտանգությունն ու հզորությունը, մեր կարծիքով, ամրանում է այնքանով, որքանով ժողովրդի գիտակցության մեջ ներմուծվում է այն համոզումը, որ յուրաքանչյուր ազգի շահերը պետք է ուղղված լինեն խաղաղ նվաճումների՝ հողագործության, արհեստագործության ու արդյունաբերության ոլորտներում: Բայց ժողովրդի հզորությունն ամբողջությամբ խարսխվում է նրա քաղաքական հասունության գիտակցման վրա»:**

Այսպիսին էր Գերմանիայի այն ժամանակվա այլևս ազատագրված մամուլի հավատո հանգանակը:

Ավստրիական մամուլի վիճակի եական բարելավումը սկսվեց 1863 թվականի մարտի 9-ից հետո, երբ ուժի մեջ մտավ մամուլի մասին նոր օրենքը: Հենց հաջորդ տարվանից սկսվեց տպագրվել Վիեննայի առաջին մեծ թերթը՝ «Neue Freie Presse», որի հիմնադիրներն էին երեք բազմակողմանի զարգացած և կրթված անձնավորություններ՝ Մաքս Ֆրիդլենդերը, Միխայիլ Էտիենը և Ադոլֆ Վերտները:

Խիստ ուշագրավ է ավստրիացի փիլիսոփա Շլեդերի՝ թերթերին տված բնութագիրը. **«Թերթեր. խորագույն հարգանքի զգացումով են արտաբերում այդ բառը, թերթերը մեկն են այն մեծագույն մշակութային միջոցներից, որոնց շնորհիվ մենք՝ եվրոպացիներս, դարձանք եվրոպացիներ»:** Այս կարծիքն, անշուշտ, հիմնված է 1781 թվականին Իոսիֆ Երկրորդ կայսեր հրատարակած զրաքննության խիստ ու առաջադեմ արտոնագրի վրա, ուր մասնավորապես ասվում էր. **«Քննադատությունը, եթե միայն դրանք կոպիտ պամֆլետներ չեն, ոչ մի կերպ չի կարող արգել-**

ված լինել՝ ում էլ դրանք վերաբերվեն՝ սկսած պետության գլխից մինչև վերջին հպատակը, քանզի յուրաքանչյուրը, ով ցանկանում է իմանալ ծշմարտությունը, կարող է միայն ուրախանալ՝ այդ ճանապարհով ճանաչելով այն»։ «Ամբողջ շարադրանքներ և պարբերական հրատարակություններ չեն կարող արգելվել առանձին անհարմար համարված հատվածների պատճառով»։ «Թերթերը... պետք է ենթարկվեն խորհրդի միայն կարճառոտ ուսումնասիրմանը և ապահովվեն տպագրության թույլտվությամբ»։

Սամուլի հանդեպ Նապոլեոն Բոնապարտի վերաբերմունքին որոշակիորեն ծանոթացանք նախորդ գլխում։ 19-րդ դարի ընթացքում ևս նրա տեսակետներն այդ առումով որևէ փոփոխություն չկրեցին։ Թե բուն Ֆրանսիայում, թե բլոր այն երկրներում, ուր նրա գերիշխանությունն էր, գործում էին նույն մեթոդները։ Որպես համաշխարհային պատմության խոշոր անհատականության, ուշագրավ և հետաքրքիր են մամուլի տեղի, դերի և գործառույթների նկատմամբ ունեցած նրա պատկերացումները, որոնք, անշուշտ, մաս ամբողջացնում են նրա կերպարը։

Նապոլեոնին հատկապես նյարդայնացնում էր այն փաստը, որ թերթերը, ցանկանալով հաճոյանալ, հաճախ խանգարում էին գործին։ Օրինակ՝ կայսրության վերջին շաբաթներին, փարիզյան թերթերը, փառաբանելով կայսեր մի հաղթանակը, հիացմունքով գրում էին, որ այն առավել քան փառքի է արժանի, որովհետև ֆրանսիացի մի զինվորի դեմ կռվում էին հակառակորդի երեք զինվորներ։ *«Թերթերը խմբագրվում են առանց հասկացվելու*, գայրույթով գրում է Նապոլեոնը Ոստիկանության նախարար Սավարիին։ *- Վայելո՞ւչ է այս պահին գրել, որ ես քիչ զորք ունեմ, որ ես հաղթեցի անակնկալ հարձակվելով թշնամու վրա, որ մենք կռվում էինք մեկը երեքի դեմ։ Պետք է, որ իրոք, Փարիզում բռնորդ գլուխներդ կորցրած լինեք, որ նման բաներ խոսեք, երբ ես ամենուր ասում եմ, որ 300000 զորք ունեմ և հակառակորդդ դրան հավատում է և այդ մասին պետք է խոսել մինչև գերհագեցում։ Ես ստեղծել եմ թերթերը ղեկավարելու բյուրո, ինչո՞ւ այդ հողվածները չեն տեսնում։ Դուք կարող էիք հասկանալ նաև, որ... խոսքը դատարկ փառաբանության մասին չէ և պատերազմի առաջին օրերնքը այն է, որ պիտի մեծացնես, այլ ոչ թե փորձացնես քո ուժերը։ Բայց ինչպես դա հասկացնես բանաստեղծներին, որ ջանում են հաճոյանալ ինձ ու ազգային ինքնասիրու-*

թյունը շոյել՝ գործ անելու փոխարեն: Ինձ թվում է... եթե դուք դրան ուշադրությամբ վերաբերվեիք, նման հողվածները, որոնց էությունը ոչ միայն տխմարությունն է, այլ՝ կործանարար տխմարությունը, երբեք էլ չէին տպագրվի» (ի դեպ՝ նմանատիպ ցուցումներ իր «Տեղեկագրերին» տվել է նաև Պետրոս Մեծը):

Իսկ 1809 թվականին Նապոլեոնը գրում է. *«Կարծում եմ, որ օգտակար կլիներ հրաման տալ գրելու մի քանի լավ հողված, որոնք կհամենատեին 1709 թվականին Ֆրանսիան տանջող դժբախտությունը և կայսրության ծաղկուն վիճակը 1809 թվականին»:* Եվ շարունակում. *«Չարցը պետք է դիտարկել տարածքների և բնակչության, ներքին հաջողությունների և արտաքին փառքի, ֆինանսների տեսակետից»:* *«Դուք մարդիկ ունեք, որ ի վիճակի են այս շատ կարևոր թեմայով 5-6 լավ հողվածներ գրել, որոնք ճիշտ ուղղվածություն կտան հասարակական կարծիքին»:* Չետո նշվում է զուգահեռը՝ Լյուդովիկոս Տասնչորսերորդը կառուցում էր Վերսալը և որսորդական տնակներ, իսկ նա՝ Նապոլեոնը, բարելավում ու վերակառուցում է Փարիզը: *«Սրանից սկսելով՝ կարելի է խոսել մեր հաստատությունների կատարելագործման մասին»*, երջանիկ փոփոխությունների, որ տեղի են ունեցել բոլոր բնագավառներում. Լյուդովիկոսը հալածում էր բողոքականներին, Նապոլեոնը հանդուրժողականություն էր հաստատում և այլն: *«Կարելի է գրել ամեն ամիս մեկ հողված՝ մինևույն վերնագրով՝ «1709-1809»:*

Նապոլեոնը նաև հասկանում էր, որ որքան անթաքույց երևա ոստիկանության ուղղորդող ձեռքը, այնքան քիչ են հավատալու թերթերի հրապարակումներին. *«Քանի որ բանակի մասին թերթերի բոլոր հողվածները անտակտ են գրված, ես կարծում եմ, որ ավելի լավ կլինի՝ ընդհանրապես այդ մասին չգրեն: Առավել ևս՝ հայտնի է, որ այդ հողվածները գրված են ոստիկանության ներգործությամբ: Մեծ սխալ է երևակայելը, թե Ֆրանսիայում այս ճանապարհով կարելի է զաղափարներ անցկացնել»:*

Նոր էր սկսվել Իսպանիայի նվաճումը, երբ, անմիջապես, Մադրիդում գտնվող Մյուրատին Նապոլեոնը ցուցում տվեց. *«Ձեր ձեռքը դրեք տպագիր խոսքի վրա: Պետք է հասարակական կարծիքին լավ հասկացնել, որ արքան այլևս չկա»:* *«Ձեր իշխանության տակ վերցրեք թերթերը և կառավարումը»:* Նա հրամայում է հեղեղել Իսպանիան գահընկեց արված դինաստիայի մասին պանֆլետներով և նոր կարգերի փառաբանությամբ: Մարշալ Բեսսերը համարում էր, որ դա անօգուտ է և անիմաստ: *«Դուք*

ասում եք,- գրում է նա Բեսսերին,- որ պամֆլետները Իսպանիայում ոչ մի բանի չեն ծառայում: Դրանք ասեկոսներ են: Իսպանացիները, ինչպես մյուս բոլոր ժողովուրդները, առանձնահատուկ դասակարգ չեն: Տարածեք Գալիցիայում այն գրությունները, որ ես ուղարկել եմ ձեզ»:

Նապոլեոնն իրեն ենթակա կառավարություններից պահանջում էր, որ նրանք անհրաժեշտության դեպքում պարզապես ստեն իրենց թերթերում: Բնականաբար, անհրաժեշտությունը որոշում և սահմանում էր ինքը: Եվ ոչ միայն անհրաժեշտությունը: Ստի ձևը, չափը, տեսակը, քանակը ևս ինքն էր որոշում: Նա Մոսկվայից (1812 թվականին) կարգադրում էր Ավստրիայի, Բավարիայի, Վյուրտեմբուրգի արքաներին. **«ես ոչ միայն ցանկանում եմ, որ դուք օգնություն ուղարկեք. ես ցանկանում եմ նաև, որ չափազանցվի այդ օգնությունը, որ արքաները ստիպեն իրենց թերթերին, որպեսզի նրանք տեղեկություններ հրապարակեն զորական ջակջութայան մեծ թվերի մասին՝ կրկնապատկելով դրանց քանակը»:**

Ահա այսպես՝ ոչ ավել, ոչ պակաս:

Կայսերը վայել ցուցում: Ինչպես և մնացյալ դեպքերում:

Այնպես որ բնավ էլ պատահական չէր, որ Նապոլեոնից հետո Ֆրանսիայում ընդունված ցանկացած օրենք կամ կարգ, որը մանուկն էր վերաբերում, նապոլեոնյան սահմանափակումների և սկզբունքների համեմատ խիստ ազատական էր թվում:

Ուշագրավ և մանուկի «գիտակցական» զարգացմանը հետևելու առումով խիստ հետաքրքիր են Նապոլեոնի վերադարձի «100 օրվա» արձագանքները: Ջգալով և տեղեկանալով նաև, որ հասարակության մեջ Բուրբոնների նկատմամբ մեծանում է դժգոհությունը, Նապոլեոնը որոշում է վերադառնալ իշխանության:

1815 թվականի մարտի 1-ին նրան հաջողվում է փախչել Էլբայից և ջոկատով ափ իջնել ժուլանի նեղուցում: Շարժվելով դեպի Փարիզ՝ Նապոլեոնն իր կողմն էր գրավում նորանոր վաշտեր: Իշխանությունները խուճապի մեջ էին: «Մոնիտյոր» պաշտոնաթերթը Նապոլեոնի փախուստի մասին միայն մեկ շաբաթ անց և այն էլ երրորդ էջում գրեց: Որքան Նապոլեոնը մոտենում էր մայրաքաղաքին, այնքան փոխվում էր «Մոնիտյորի» հաղորդումների ոճը և տոնը: Առաջին հաղորդումը ասում էր. «Կորսիկացի իրեշը ափ է իջել ժուլանի նեղուցում»: Հաջորդը՝ «Մարդակերը շարժվում է դեպի Գրասս»: Մի քանի օրից «Մոնիտյորը» իր ընթերցողներին հա-

ղորդում էր. «Բռնակալը մտավ Գրենորբլ»: Եվ երկու օրից՝ «Բռնակարտը գրավեց Լիոնը»: Այա՛ «Նապոլեոնը մոտենում է Ֆոնտենբլոյին»: Վերջապես՝ «Նորին կայսերական մեծությանը այսօր սպասում են իրեն հավատարիմ Փարիզում»: 1815 թվականի մարտի 21-ին «Մոնիտյորը» գրում է. «Արքան և արքայազուները փախան գիշերվա քողի ներքո: Նորին կայսերական մեծությունը երեկոյան ութին ժամանեց իր Տյուիլրի պալատը»:

Արդեն 1824 թվականին Փարիզում հրատարակվում էին 12 շաբաթաթերթեր՝ 54000 ընդհանուր տպաքանակով: Մամուլի գործունեության կանոնակարգման առումով բավական է նշել, որ 1814-1830 թվականներին ֆրանսիական կառավարությունը նվազագույնը յոթ անգամ փոխեց գրաքննչական կանոնները:

Ռեստավրացիայի շրջանում Բերտենը կարողացավ վերադարձնել իր թերթը, անգամ անվանումը վերականգնեց և «Jornal des Debates...»-ը դարձավ ռոյալիստական մամուլի առաջատարն ու միապետության հենասյունը:

Կառլոս Տասներորդի դեմ գրած հոդվածի համար, որն ավարտվում էր «Տարաբախտ Ֆրանսիա: Տարաբախտ արքա» բառերով, Բերտենը ենթարկվեց դատաքննության, բայց արդարացվեց: Իսկ նախարար Շատոբրիանի պաշտոնաթողությունից հետո «Jornal des Debates...»-ը անցավ «սահմանադրական» ընդդիմության կողմը և նպաստեց Բուրբոնների անկմանը:

Օնորե դը Բալզակը «Խորտակված անուրջներ» (1837-1843) վեպում ցույց է տվել, թե ինչպես է փոխվել ֆրանսիական մամուլը Ռեստավրացիայի դարաշրջանում: Մամուլն այլևս չի ծառայում ոչ երևույթների մեկնաբանությանը, ոչ հասարակության լուսավորությանը, ոչ կարծիքների ձևավորմանը: **«Թերթը, փոխանակ բարձրանա մինչև հասարակությանը ծառայելը, դարձել է գործիք կուսակցությունների ձեռքին»** ասում է վեպի հերոսներից մեկը՝ լրագրող Կլոդ Վինյոնը: Բալզակն արդեն արձանագրել էր մամուլի ձևավորվող հզորությունը: «1821 թվականին թերթերը որոշում էին մտքի բոլոր արգասիքների և հրատարակչական ձեռնարկների ճակատագիրը: Մի քանի տողանոց հայտարարությունները, որ խցկված էին փարիզյան պատահարների ժամանակագրության մեջ, ահռելի փողեր արժեին», - գրում է Բալզակը:

Ֆրանսիայում խոսքի ազատության երաշխիքների հնարավոր եղավ հասնել միայն 1830 թվականի հուլիսյան դեպքերից հետո, երբ վրդովված Կառլոս Տասներորդի մամուլի հանդեպ դրսևորած վերաբերմունքից, որի հետևանքն էին հինգ հրամա-

նագրերը, ըստ որոնց արքան իր անձնական իշխանությամբ, առանց խորհրդարանի պալատների մասնակցության անգամ, ձևափոխել էր ընտրությունների անցկացման կարգը, ինչպես նաև խստագույն գրաքննական կարգ էր սահմանել գրքերի և հատկապես թերթերի նկատմամբ, լրագրողները «National» թերթի խմբագիր Արման Կարելի նախաձեռնությամբ ընդվզեցին արքայի հրամանագրերի դեմ և թերթերը թողարկեցին առանց գրաքննչական թույլտվության: Փարիզը բարիկադավորվեց՝ արքայի կողմնակիցների և հակառակորդների: Արքան փորձեց փրկել իրավիճակը՝ չեղյալ հայտարարեց հրամանագրերը, պաշտոնանկ արեց որոշ անցանկալի նախարարների, որոնց ժողովուրդը դժկամությամբ էր հանդուրժում, սակայն այլևս ուշ էր՝ արքայի համար դեպքերի այլևս խիստ անցանկալի ընթացքը հնարավոր չէր կասեցնել:

Ժամանակավոր կառավարությունը, որը կազմված էր առաջատար և հասարակության շրջանում անվերապահ համակրանք ու հարգանք վայելող պատգամավորներից ու նաև լրագրողներից, որոշեց իշխանությունը հանձնել Լյուդովիկոս Ֆիլիպ Օռլեանցուն, որը բացարձակ միապետական իշխանության նկրտումներ չունեի: Սկսվեց Դուլիսյան միապետության ժամանակաշրջանը, որի առաջին իսկ գործը Սահմանադրական հրովարտակի ընդունումն էր, ուր, մասնավորապես մամուլի առնչությամբ հստակ նշված էր. **«Գրաքննությունն այլևս երբեք չի կարող վերականգնվել»:**

Եմիլ դե Ժիրարդենը՝ 19-րդ դարի Ֆրանսիայի առավել հետաքրքիր լրագրողներից ու խմբագիրներից մեկը, ֆրանսիական «*premier press*»-ի հիմնադիրն ու առաջատարն էր. նա լավ զգում էր ժամանակի լրագրական քաղաքականության զարգացման ուղղություններն ու միտումները: Ժիրարդենն սկսեց նորաձևությունների հանդեսից «*Le Mode*»-ից («Նորաձևություն», 1829-1854 թվականներ): «*Le Mode*»-ն սկզբում զուտ բարձրաշխարհիկ հանդես էր. աստիճանաբար Ժիրարդենն ամսագրում սկսեց քաղաքական նորություններ ևս տպագրել՝ պահպանելով նորաձևության բաժինը բարձրաշխարհիկ կյանքի լուսանկարներով, որպեսզի չկորցնի իր մշտական ընթերցողներին:

Նրա ամենահաջողված թերթը դարձավ «*La presse*»-ն («Մամուլ»), որը տպագրվել սկսեց 1836 թվականից և քաղաքական էր իր բնույթով: Թերթի 40 ֆրանկ բաժանորդագինը երկու անգամ

էժան էր համանման հրատարակություններից: Ժիրարդենը գտնուում էր (և չէր սխալվում), որ բաժանորդների մեծ թիվը նաև մեծ թվով հայտարարություններ կբերի և հայտարարությունների գնով կփոխհատուցվի թերթի ցածր բաժանորդագինը: Նոր թերթը ոչ միայն էժան էր, այլև հետաքրքիր՝ այնտեղ էին աշխատում ժամանակի ամենաճանաչված լրագրողները (օրինակ՝ Թեոֆիլ Գոթին Կարում էր գեղարվեստական-քննադատական և ֆելիետոնի բաժինը):

19-րդ դարավերջին Ֆրանսիայում մամուլն արդեն դառնում էր հզոր հասարակական-քաղաքական գործոն, որը որոշակիորեն նաև օրակարգ կարող էր պարտադրել: Այդ առումով ամենատիպական օրինակը Ալֆրեդ Դրեյֆուսի գործի հասարակական-ժուռնալիստական անդրադարձներն էին, որոնք ֆրանսիական հասարակության համար մեծ, եռամիասնական խնդիր կարողացան լուծել. նախ ազատեցին հանիրավի դատապարտված մարդուն և վերականգնեցին նրա պատիվը, ապա՝ ցույց տվեցին մամուլի և հասարակական կարծիքի ուժն ու զորությունը, ապա՝ հանրությանը հավատ ու վստահություն ներշնչեցին սեփական ուժերի հանդեպ, ապացուցելով, որ երբ նպատակն ազնիվ է և ճիշտ, հասարակությունն էլ համախուժք դրա շուրջ՝ հաղթանակը երաշխավորված է: Իսկ գործի համառոտ պատմությունը հետևյալն էր. լրտեսության մեջ մեղադրանքով ձերբակալվել էր Ֆրանսիայի գլխավոր շտաբի հրեա սպա Ալֆրեդ Դրեյֆուսը, ապա և հանիրավի դատապարտվել, չնայած նա իրեն մեղավոր չէր ճանաչել: Համարյա բոլոր թերթերը ճիշտ էին համարում դատավճիռը, անգամ ավստսանք էին հայտնում, որ Դրեյֆուսը մահվան չի դատապարտվել: Դատավճռից երկու տարի անց՝ 1896 թվականին Ֆրանսիայի հակահետախուզության նոր ղեկավարը ապացույցներ ներկայացրեց, ըստ որոնց իրական մեղավորը գլխավոր շտաբի բոլորովին այլ մի սպա էր: Դրանից հետո Դրեյֆուսի գործի վերաքննման շարժում սկսվեց, որի առաջամարտիկներն էին Ֆրանսիայի պարբերականները՝ «Առավոտ», «Ֆիգարո», «Ավրորա» և այլն: Քիչ չէին նաև հակառակորդները, որոնք հիմնականում հակասեմիտական և ազգայնական պարբերականներն էին: Այդ ժամանակ միանգամայն անհասկանալի պայմաններում ինքնասպանություն գործեց գլխավոր շտաբի գաղտնի բաժնի պետը, որը նախապես ղեկավարությանը խոստովանել էր, որ կեղծել է այն փաստաթուղթը, որն էլ Դրեյֆուսի

դեմ մեղադրանքի հիմք էր դարձել: Դրեյֆուսի գործը ողջ Ֆրանսիան երկու հակամարտող ճամբարների էր բաժանել: Եվ հենց մամուլի շնորհիվ էր, որ վերացվեց Դրեյֆուսի մեղադրանքը և դրանում խիստ մեծ էր էմիլ Զոլայի դերը, որը 1898 թվականին «Ավրորա» թերթում հրապարակեց իր հանրահայտ բաց նամակը հանրապետության նախագահին «Ես մեղադրում եմ» վերտառությամբ: Հանգամանորեն շարադրելով գործի էությունը, Զոլան այդ գործում ընդգծում էր այլատյացության, հակասեմիտական և հակաժողովրդական դրսևորումների վտանգները ֆրանսիական հասարակության համար և զգուշացնում դրանց հետագա զարգացումից:

Դրեյֆուսի գործը վերանայվեց: Եվ 1899 թվականին նախագահը ներեց ու ազատ արձակեց նրան: Դրեյֆուսի տիկնոջն ուղղված նամակում Զոլան գրում էր. **«Ես ենթարկվում էի միայն իմ սրտի թելադրանքին, ես օգնության էի շտապում դժբախտության մեջ հայտնված մարդուն՝ լինելու նա հրեա, կաթոլիկ թե մահմեդական: Այն ժամանակ ես մտածում էի, որ խնդիրը դատական սխալն է, ես դեռ չէի տեսել այդ մարդուն շղթայակապ արած չարագործների հանցանքի վիթխարի չափերը: Ամենասկզբից ես ծառայում էի միայն մի գործի՝ մարդասիրությանը»:** Դրեյֆուսի գործը դարձավ Ֆրանսիայում քաղաքացիական հասարակության ձևավորման ամբողջական և վճռական փուլ, ցուցադրելով մամուլի կարևոր դերը ժողովրդավարական արժեքների պաշտպանության գործում:

Ժիրարդենի անվան հետ է կապված եվրոպական պարբերական մամուլում նաև «թաքնված գովազդի» առաջին կիրառումը: Նա խոստովանել է. **«Մամուլի իսկական անունը մոռացումն է: Տասը ժամ հմուտ օգտագործված իշխանությունն ավելին արժեքան լրագրական աշխատանքի տասը տարին»:** Իշխանության և ֆինանսների՝ որ իշխանություն են տալիս, նկատմամբ սերը, Ժիրարդենի ամբողջ գործունեության իսկական շարժիչն էր:

Գրեթե այդ նույն ժամանակներում էապես ընկնում էր լրագրողի վարկը: Ժյուլ Ժանենի «Ժուռնալիստ» (1841 թվական) ակնարկը ոչ միայն փորձում էր վերականգնել այն, պաշտպանել ժուռնալիստին հանիրավի վարկաբեկումից, այլև որոշակիորեն ցույց էր տալիս նաև նրա իրական կեցվածքը. **«Հիմա մոդայիկ է դարձել, գրում է ժանենը, - մերժել լրագրությունը, այդ ազնիվ զբաղմունքը, որի ներկայացուցիչներն իրենց հետևից են տանում հասարակու-**

թյունը վճռականապես ամեն ինչում. խելքով, տաղանդով, խիզախությամբ. ամենուր միայն լսում ես, որ թերթը ընդամենը երեկվա դուրսադուրկն է՝ առանց տոհմ ու ցեղի»:

Ժամենը ստիպված էր հերքել նաև լրագրողներին ներկայացվող վաճառվածության մեղադրանքը: Իբրև փաստարկ, որ լրագրողները ազնիվ մարդիկ են, նա մեջբերում էր մի գործարարի խոսքը. **«Եթե մամուլը վաճառվեր, խոստովանում եմ, որ ես վերջին հիմարը կլինեի, եթե չգնեի»:** «Եվ այդ մարդը ճիշտ է,-գրում էր ժամենը,- նա, ով երկու օրով ձեռք կբերի այս երկրի մամուլը, կդառնա շատ ավելի հզոր, քան երբևէ եղել է կայսր Նապոլեոն Բոնապարտը»:

19-րդ դարասկիզբն Անգլիայում պարբերական մամուլի բուռն զարգացմամբ է բնորոշվում: 1810-ական թվականներին Լոնդոնում տպագրվում էին 30 ամսագրեր, 1820-ական թվականներին՝ արդեն 100 և ավելի: Էդինբուրգը դառնում է Անգլիայի ինտելեկտուալ երկրորդ կենտրոնը՝ ստանալով «շոտլանդական Աթենք» անվանումը:

Մեծաթիվ պարբերականներից առանձնանում էին չորս առավել ազդեցիկները հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքում՝ «The Edinburgh Review» («Էդինբուրգյան տեսություն», 1802-1929 թվականներ), «The Quarterly Review» («Եռամսյակային տեսություն», 1809-1967 թվականներ), «Blackwood's Magazine» («Բլեքվուդյան հանդեսը»), «The London Magazine» («Լոնդոնյան հանդեսը», 1820-1826 թվականներ), և որակյալ մամուլի հոմանիշ դարձած «The Times» թերթը:

Եռամսյա «The Edinburgh Review»-ն սկսեց տպագրվել 1802 թվականի հոկտեմբերին, Էդինբուրգում (Շոտլանդիայի մայրաքաղաքը)՝ իբրև վիգերի կուսակցության օրգան: Թերթի հիմնադիրներից էին Ֆրենսիս Ջեֆրին, Սիդնի Սմիթը, Յենրի Բրոուզհենը: Ամսագրի հրատարակիչը Արչիբալդ Կոնստեբլն էր, նա առաջիններից մեկը Անգլիայում սկսեց բարձր հոնորարներ վճարել իր հանդեսին աշխատակցող հեղինակներին:

1809 թվականին Լոնդոնում հիմնադրվեց դարձյալ եռամսյակը մեկ տպագրվող «The Quarterly Review»-ն: «The Quarterly Review»-ն պահպանողականների պարբերականն էր: Հովանավորը Ջոն Մյուրրեի հրատարակչատունն էր, որ հանուրի համաձայնությամբ հռչակված էր գրահրատարակիչների արքա: Պարբե-

րականի կնքահայրը Վալտեր Սկոտն էր, առաջին խմբագիրը՝ հրապարակախոս և երգիծաբան Ուիլյամ Գիֆորդը (1809-1824 թվականներ), որ ժամանակին հանրահայտ էր դարձել «The Anti-Jacobin» («Հակայակոբինական», 1797-1798 թվականներ) շաբաթերթով:

1817 թվականից էդինբուրգում տպագրվում էր «Blackwood's Magazine»-ը և դարձել էր «երիտասարդ տորիների» օրգանը: Գաղափարական ոգեշնչողը դարձյալ Վալտեր Սկոտն էր, ֆինանսավորողը՝ Ուիլյամ Բլեքվուդի հրատարակչատունը (թերթի անվանման մեջ հնչում էր հրատարակչի անունը):

18-19-րդ դարերի Անգլիայում հասարակական կարծիքի վրա թերթերի ներգործությունը զգալիորեն զիջում էր ամսագրերի և հանդեսների ներգործությանը: Բայց այդ ընթացքում հայտնվեցին այն թերթերը, որոնք հիմա համարվում են բրիտանական գործող մամուլի հոմանիշները: Ջոն Ուոլտերը 1785 թվականին սկսեց հրատարակել «Universal Daily Register»-ը («Ամենօրյա բազմակողմանի հանդեսը»), 1788 թվականին թերթը վերանվանվեց «The Times» և հենց այդ անունով մտավ համաշխարհային մամուլի պատմության մեջ:

Ջոն Ուոլտերի խնդիրն էր «The Times»-ը դարձնել այնպիսի թերթ, որ հետաքրքրում է ընթերցողների հնարավորինս մեծ շրջանակի: Խմբագրական առաջին հրապարակման մեջ նա հայտարարեց, որ **«Թերթը պետք է լինի ժամանակի տարեգիրը, մարդկային բանականության բոլոր դրսևորումների հավատարիմ ժամանակագիրը, չպետք է կենտրոնանա միայն մեկ իրադարձության վրա, այլ լավ սպասքավորած սեղանի նման՝ պետք է ունենա ճաշատեսակներ ցանկացած ճաշակի ու քիմքի համար, և ծայրահեղություններից խուսափելով՝ պահպանի ոսկե միջինը»:**

Ջոն Ուոլտերի ժամանակներում լրագրությունը դեռևս եկամտաբեր չէր, միակ առավելությունը քաղաքական ներգործությունն էր: Բրիտանական թերթերի տպաքանակներն էլ մեծ չէին՝ 1795 թ. «The Times»-ի 4800 տպաքանակը առավելագույնն էր:

19-րդ դարում արդեն «The Times»-ը դարձավ համազգային ու համաեվրոպական ազդեցիկ թերթ: 1803 թվականին «The Times»-ի խմբագիր դարձավ Ջոն Ուոլտեր Երկրորդը: Նրա օրոք թերթն ամբողջ Անգլիայում ամենատեղեկացվածն էր: «The

Times»-ի հրապարակումներն ու դիրքորոշումը վճռական դեր խաղացին 1832 թվականին, երբ քննարկվում էր խորհրդարանական առաջին բարեփոխումը: Առաջին անգամ Անգլիայում ձայնի իրավունք էր տրվում մանր ու միջին բուրժուազիային:

Հանրաճանաչության գագաթնակետին թերթը հասավ Ղրիմյան պատերազմի տարիներին՝ Ջոն Դիլեյնի խմբագրությամբ: Ռազմական գործողությունները լուսաբանելու ուղարկված հայտնի լրագրող Ուիլյամ Ռասելը բրիտանական մամուլի պատմության մեջ դարձավ առաջին ռազմական թղթակիցը: Մարտական գործողությունների վայրերից Ռասելի ռեպորտաժները ոգևորում էին բանաստեղծներին, ընթերցողները նրա ռեպորտաժներից թևավոր խոսքեր էին առանձնացնում:

19-րդ դարի կեսերին «The Times»-ը ստացավ «շանթառաք» մականունը: Տպաքանակը արդեն հասել էր 60000-ի (ամենալուրջ մրցակցի 6000 տպաքանակի պարագայում): Ռեպորտաժների ճշգրտությունը, իրադարձությունների լուսաբանման օպերատիվությունն ու մակարդակը, դիպուկ առաջնորդներն ու փաստարկված վերլուծականները, եվրոպական քաղաքականության ուղղություններին ու խոհանոցին մանրամասն տեղեկացվածությունը «The Times»-ին ոչ միայն մրցակցությունից դուրս էին դնում, այլև՝ չափանիշ էին դարձնում եվրոպական պարբերական մամուլի համար: Եվրոպայի մայրաքաղաքներում թերթի թղթակիցներին օտարերկրյա դեսպանների պես էին վերաբերվում: Փաստորեն ի դեմս «The Times»-ի մամուլն իրոք դարձել էր «չորրորդ իշխանություն»: Այդ էին վկայում աշխարհի հզորները նաև. Աբրահամ Լինկոլնի համար «The Times»-ը «աշխարհի մեծագույն ուժերից մեկն էր», իսկ Վիկտորիա թագուհին անգամ դժգոհում էր թերթի ազդեցիկությունից:

Ֆինանսական միջոցների առկայությունը «The Times»-ին հնարավորություն էր տալիս ուշադիր լինել տեխնոլոգիական նորությունների ու նորամուծությունների, ձևավորման հանդեպ: 1806 թվականին թերթում առաջին անգամ հայտնվեցին իլյուստրացիաները՝ այդպես ներկայացվեց ծովակալ Նելսոնի հուղարկավորությունը: Եվրոպայում առաջինը «The Times»-ն օգտագործեց տպագրական շոգեհաստոցը, որ 1810 թվականին սաքսոնացի տպագրիչ Ֆրեդերիկ Կենիգն էր ստեղծել: Նրա նորարարությունը չորս տարի կիրառություն չէր գտնում, 1814 թվականին «The Times»-ը օգտագործեց Կենիգի շոգեհաստոցը, որը

հնարավոր դարձրեց մեկ ժամում 300-ի փոխարեն տպագրել 1100 օրինակ: Դա տեխնոլոգիական հեղափոխություն էր:

Հրատարակչական գործի հաջորդ նորությունը ռոտացիոն տպագրական մեքենայի հայտնագործումն էր (1844 թվական, ամերիկացի Ռիչարդ Յոու): 1848 թվականին «The Times»-ը արդեն օգտագործում էր այդ մեքենան, որը թղթի գլանների կիրառությամբ միաժամանակ տպագրում էր թղթի երկու երեսներն էլ՝ ժամում 8000 օրինակ տպաքանակ արագությամբ: Տեխնոլոգիական այս մի հեղափոխության արդյունքում միայն թերթի տպագրության ծախսը 25 տոկոսով նվազեց:

«The Times»-ը 1881 թվականին առաջինն օգտագործեց Ֆրեդերիկ Ուիլկսի արտոնագրված գյուտը՝ տողաշար մեքենան:

Անհրաժեշտ ենք համարում մի խիստ ուշագրավ և անպայման կարևոր քաղաքերում կատարել Դ.Սատուրիին «Ակնարկ Անգլիայի պարբերական մամուլի» բավականին ծավալուն հրատարակումից, որը տպագրվել է 1903 թվականին Սանկտ Պետերբուրգում, «Պարբերական մամուլն Արևմուտքում» հոդվածների ժողովածուում: Սատուրիինը գրում է. *«Ի՞նչ է իրենից ներկայացնում այդ հրեշավոր ֆաբրիկան, որ կոչվում է «The Times» հրատարակչություն:*

Նախևառաջ՝ «The Times» թերթը, 20-28 վիթխարի էջերից է բաղկացած, թերթի տեսքտերում բառերի միջին թիվը 113000 է («Hazzell's Annual»-ի գնահատմամբ): Այդ թվի մեջ հաշվի չեն առնված հայտարարությունները, որ ամեն համարում 60-80 սյուն են կազմում: Ամենօրյա «The Times»-ից բացի այդ ֆաբրիկան տպագրում է թերթի հետ կապված հավելվածներ. «The Mail» (գինը 2 պենս), որը լույս է տեսնում շաբաթը երեք անգամ և իրենից ներկայացնում է երկօրյա «The Times»-ի սեղմագիրը, «Times Weekly Edition» (գինը 2 պենս), տպագրվում է շաբաթը մեկ անգամ և ամփոփում է մեկ շաբաթվա ընթացքում թերթում տպագրված առավել կարևոր տեղեկություններն ու հոդվածները, «Literature»-ն (գինը 6 պենս) ներկայացնում է համաշխարհային զրականության քննական տեսությունը: «The Times»-ին են պատկանում նաև այլ հավելվածներ. «Times Law Reports»՝ այսինքն՝ իրավաբանական թերթ, կիսամյա երկու զրքեր՝ «Issues»՝ այսինքն՝ բոլոր նոր բաժնետիրական ընկերությունների ցուցակները, «Financial Half Year»՝ այսինքն՝ ֆինանսական կիսամյակի ամփոփումը: Վերջապես այդ թերթն է հրատարակել

հիասքանչ «Times Atlas»-ի 26 թողարկումները, «Encyclopedia Britannica»-ի հատուկ հրատարակությունը (1899 թվական), որ առաջին տարում երկու անգամ ավելի շատ վաճառվեց, քան այդ վիթխարի հանրագիտարանը վաճառել էր տպագրության անցած ինը տարիներին: Ավելացրեք՝ «Ceintury Dictionnary»-ին, ապա՝ 6 հատորով «History of the War in South Africa»-ն: «Encyclopedia Britannica»-ի տասներորդ հրատարակությունը՝ 35 վիթխարի հատորներով, ևս տպագրվում է «The Times»-ում:

Չեշտ է պատկերացնել՝ ինչքան մեծ պետք է լինի «The Times»-ի տպարանն ու խմբագրատունը, որպեսզի կարողանա կատարել տպագրական ու հրատարակչական այս ծավալի աշխատանքները: Հավելենք, որ «The Times»-ը (ընկերությունը) ինքն է արտադրում իր իսկ կատարելագործած տպագրական մեքենաները, տառատեսակները՝ այն ամենը, ինչ պետք է տպագրության համար, բացի թղթից:

«The Times»-ը սեփական հեռատիպով կապված է Բեռլինի ու Փարիզի հետ: Նրա թղթակցությունները եվրոպայից, Ամերիկայից, Հարավային Աֆրիկայից, Ավստրալիայից ըստ եւթյան իրենցից ներկայացնում են հեռագրեր, որոնք թերթից վիթխարի ծախսեր են պահանջում: Օրինակ, Բեռլինյան պայմանագիրը (1878 թվական) անհապաղ տպագրվեց թերթում՝ հենց որ մեծ տերությունների ներկայացուցիչները Բեռլինում ստորագրեցին փաստաթուղթը: Հեռագիրը, որով թերթին ուղարկվեց պայմանագիրը, 8000 ռուբլի արժեր: «The Times»-ի փարիզյան թղթակից պարոն Բլովիցը պատմում է, որ 1882 թվականին Կոլոմբոյից ուղարկված մեկ հեռագրի գինը 40000 ֆրանկ է կազմել: Նույն թվականին Եգիպտոսից ուղարկված հեռագրերը կես միլիոն ֆրանկ գին են ունեցել: Բայց այս թվերը ոչինչ են, եթե համեմատում ենք Հարավային Աֆրիկայի վերջին պատերազմի օրերին «The Times»-ի և լոնդոնյան մյուս թերթերի ծախսերը: Ամեն օր նրանք տպագրում էին հրեշավոր երկար հեռագրեր իրենց սեփական թղթակիցներից՝ իրադարձությունների վայրերից և ամեն բառը երեք շիլինգ արժեր: Այդ ծախսերին պետք է հավելել ռազմական թղթակիցների ծախսերը, որոնք վիթխարի գումար են կազմում, քանի որ անգլիացի ռազմական թղթակիցները վարժվել են փող չխնայել, երբ խոսքը վերաբերում է տեղեկություններ հայթայթելուն և մրցակիցներից առաջ դրանք իրենց թերթին ուղարկելուն:

Անգլիայի խորհրդարանում «The Times»-ը 16 սղագրող ունի: Պետք է նկատել, որ խորհրդարանը չի տպագրում իր սղագրական հաշվետվությունները և այդ բացթողունը վաղուց լրացվում է շնորհիվ «The Times»-ի հնարամտության: Նստաշրջանների ժամանակ 16 սղագրողներ հերթափոխում են միմյանց: 15 ռուպեն մեկ սղագրողը մոտենում է «The Times»-ի հետ միացված հեռախոսին և կարդում է իր գրառած հատվածը: Տպարանում գրաշարները (որ միմյանցից բաժանված են աղմուկը խլացնող հատուկ միջնորմներով), մաս առ մաս հավաքում են սղագրողների թելադրած հատվածները: Հավաքվելուց հետո այդ դեբատները փոխանցվում են գլխավոր խմբագրին, նա էլ անմիջապես հանձնարարություններ է տալիս թերթի առաջնորդողի ցանկալի թեմաների մասին: Առաջնորդող գրողները գիշերվա ժամը 12-ին իրենց առանձին սենյակներում նստած կազմում են առաջնորդողները և 10 ռուպեն մեկ՝ մաս-մաս ցրիչները տանում են տպարան, ուր աշխատում են գրաշարների չորս հատուկ խմբեր՝ չորս առաջնորդողների համար: Խորհրդարանի նիստերը հաճախ ձգվում են կեսգիշերից անց և նրանց հաշվետվությունները ստացվում են գիշերվա 2-2.30-ին, այնուամենայնիվ, առավոտյան 5-ին «The Times»-ի առաջին հրատարակությամբ հատուկ գնացքները արդեն մեկնում են Բիրմինգհեմ, Լիվերպուլ, Մանչեստր, Գլազգո, Էդինբուրգ և մյուս քաղաքները»:

Սի քանի փաստեր ևս նշենք, որ վկայում են անգլիական թերթերի հնարագիտությունը: 1810 թվականին Պիտըր հրահանգել էր փոստատանը պահել «The Times»-ի մայրցամաքից եկած բոլոր նամակները ու թղթակցությունները, որպեսզի նախարարական թերթերը կարողանան նորություններն ավելի շուտ տպագրել: Այդ ժամանակ «The Times»-ի խմբագիր Ջոն Ուոլտերը սեփական փոստ, սեփական հեռատիպ բացեց և սեփական ցրիչներ վարձեց՝ ապահովելով իր անկախությունը կառավարությունից:

19-րդ դարի վերջին Անգլիան արդեն դառնում էր առավել «թեթևամիտ» և «նոր ժուռնալիզմի» ուղղությունը կարծես թե սկսվեց հենց դրանից, ընկալելով այդ և արձագանքելով այդ միտումների:

Ինչպես ասում են՝ No Comment:

Առաջին անգամ «նոր լրագրություն» բառակապակցությունը («new journalism») օգտագործել է Մեթյու Առնոլդը՝ իր հոդվածներից մեկում՝ նկարագրելով 1880-ական թվականների անգլիա-

կան մամուլի նորահայտ միտումները: «Նոր լրագրությունը» շատ անմշան ուշադրություն էր դարձնում ներքաղաքական կամ միջազգային նորություններին և իր խնդիրը չէր համարում ընթերցողներին ներկայացնել անաչառ և հարուստ տեղեկատվություն, իրադարձությունների խոր վերլուծություն: Ընթերցողին մատուցվում էին համընդհանուր հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվության հեշտ ընկալելի հատվածները: «Նոր լրագրության» որոշ պարբերականների անվանումները բավականին պերճախոս են՝ «Պելլ-Մելլ գազետ» (pall-mall՝ գնդերով հնագույն խաղի անվանումն է), «Տիտիթս» («Յամեղ պատառներ», «Նրբաճաշակ նորություններ»), «Ամսերգ» («Պատասխաններ») և այլն: Այդ պարբերականներում կային ասեկոսների ու բամբասանքների սյունակներ, էջեր կանանց և մարզասերների համար, տպագրվում էին սենսացիոն բացահայտումներ, ամեն ինչ ներկայացվում էր լավ պատկերազարդված: Միջազգային նորությունները շատ սեղմ էին ներկայացվում: «Նոր լրագրության» առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ բանավեճը մղվում էր ոչ թե քաղաքական տարբեր կողմնորոշումներ ունեցող պարբերականների միջև, այլ մեկ թերթի ներսում, որն իր էջերը տրամադրում էր տարբեր դիրքորոշումներ ու տեսակետներ ունեցողներին:

Այդ ժամանակներում հաղորդակցության ոլորտի էական և խիստ կարևոր նորություններից էր տեղեկատվական գործակալությունների ի հայտ գալը:

1835 թվականին Փարիզում բացվեց աշխարհի առաջին տեղեկատվական գործակալությունը, որի տերը Շառլ Լուի Գավասն էր: Իր գործունեությունը նա սկսել էր թարգմանչական բյուրոյից, որի նպատակն էր ֆրանսիական մամուլն ապահովել արտասահմանյան հրատարակությունների արագ ու ճշգրիտ թարգմանությամբ: Հետագայում Գավասի տեղեկատվական գործակալությունը նորությունները ստանում էր արդեն արտասահմանյան թերթերից, նաև սեփական թղթակիցներից: Նա այդ տեղեկությունները վաճառում էր և փարիզյան, և գավառների թերթերին, և արտասահմանյան պարբերականներին: Քանի դեռ երկաթուղին հաղորդակցության դանդաղընթաց միջոց էր, իսկ հեռագիրը նոր էր հաստատվում թերթային ու տեղեկատվական գործընթացներում, Գավասի գործակալությունը օգտագործում էր փոստային աղավաղներ:

Գավասի երկու խելացի և օժտված աշխատակիցներ Բ.Վոլֆը և Պ.Ռոյթերը շարունակեցին նրա գործը. 1848 թվականին Բ. Վոլֆը տեղեկատվական գործակալություն հիմնեց Գերմանիայում, իսկ 1851 թվականին Ռոյթերը նույնն արեց Անգլիայում:

1859 թվականին, Շառլ Լուի Գավասի մահից հետո, երեք խոշորագույն տեղեկատվական գործակալությունների միջև ազդեցության ոլորտները որոշարկող պայմանագիր կնքվեց: Տեղեկատվական շուկան, ըստ 1859 թվականի հուլիսի 15-ի պայմանագրի՝ բաժանվում էր հետևյալ կերպ. «Գավասը» պարտավորվում էր նորություններ մատակարարել Ֆրանսիայից, Միջերկրածովյան երկրներից և Ամերիկայից, «Ռոյթերը»՝ Մեծ Բրիտանիայից և Մերձավոր Արևելքից, իսկ «Վոլֆը»՝ Գերմանիայից, Ավստրո-Յունգարիայից և սլավոնական երկրներից, ներառյալ Ռուսաստանը:

1870 թվականի հունվարի 17-ին կնքվեց նոր համաձայնագիր, ըստ որի «Գավասի» բացառիկ իրավունքն էր նորություններ հաղորդելը Ֆրանսիայից, Իտալիայից, Իսպանիայից, Պորտուգալիայից, «Ռոյթերը»՝ մենատիրություն էր ստանում տեղեկատվություն հավաքելու և տարածելու Անգլիայից ու Յուլանդիայից: «Վոլֆինն» էին Գերմանիան, Սկանդինավիան, Ռուսաստանը: «Գավասի» ու «Ռոյթերի» համատեղ աշխատանքի տարածքներն էին Օսմանյան կայսրությունը, Եգիպտոսը, Բելգիան: Բոլոր մյուս երկրները, ներառյալ ԱՄՆ-ը, համարվում էին չեզոք գոտիներ, որտեղ բոլոր երեք գործակալություններն էլ տեղեկատվություն հավաքելու իրավունք ունեին:

«Ռոյթեր» լրատվական գործակալության հայտնությունն անգլիական լուրերի շուկայում փաստորեն «The Times»-ին զրկեց մեհիշխանությունից, իսկ «The Daily Telegraph» և «The Guardian» թերթերը աստիճանաբար սկսեցին մրցունակ դառնալ և ընդլայնել իրենց ընթերցողների և բաժանորդների շրջանակները:

1801 թվականին Նյու Յորքում սկսեց լույս ընծայվել «The Evening Post»-ը, որը շատ արագ դարձավ ազդեցիկ թերթ՝ իր անփոփոխ խմբագիր Ուիլյամ Բրայենտի շնորհիվ:

Բրայենտի առաջադրած գեղագիտական ու մասնագիտական բարձր չափանիշները որոշակի ներգործություն ունեցան ամերիկյան անկախ լրագրության զարգացման վրա: Նա Ձեֆերսոնի գաղափարների ժառանգորդն էր, և «The Evening Post»-ի խմբագրի պաշտոնում 50 տարի պաշտպանում էր խոսքի ազատությունն ու մարդու իրավունքները:

Այդ շրջանի ամերիկյան մամուլի ընթերցողական շուկայի պատկերը հետևյալն էր. 1800 թվականին կանոնավոր տպագրվում էր 12 ամսագիր կամ հանդես, 1810 թվականին՝ 40, 1825 թվականին՝ 100:

Պարբերականներից առավել հետաքրքիր ու ազդեցիկ էին Իսայի Թոմասի «The Massachusetts Magazine» («Մասաչուսետսի հանդեսը», 1789-1796 թվականներ), «The North American Review» («Հյուսիսամերիկյան մեկնաբանություն», Բոստոն, 1815-1877, ապա՝ 1878-1940, Նյու Յորք), Ֆիլադելֆիայում Չարլզ Բրոկդեն Բրաունի «American Review and Literary Journal» («Ամերիկյան մեկնաբանություն և գրական հանդես», 1799-1802 թվականներ), Ջոզեֆ Դենիի «The Port Folio»-ն («Պորտֆոլիո», 1801-1815 թվականներ):

19-րդ դարասկզբին շատ քիչ պարբերականներ կարող էին եկամտաբեր լինել, այդ պատճառով ֆինանսական մեծ աջակցություն ստացող կուսակցական մամուլին այլընտրանք դարձան այն հրատարակությունները, որոնք իրենց էջերը տրամադրում էին առևտրային հայտարարություններին և կիրառում էին ժամանակի տեխնիկական նորարարությունները:

1825 թվականին սկսեց կիրառվել Նապիի տպագրական նորացված շոգեհաստոցը, որը Նյու Յորքում տպագրվող «The Daily Advertiser»-ին («Ամենօրյա գովազդային թերթ») հնարավորություն տվեց կազմակերպել ժամում 2000 օրինակ տպագրություն: Դա հրատարակչական նոր հեռանկարներ էր բացում:

Քանի դեռ Ամերիկայի առաջատար մտածողները ամսագրերի և հանդեսների էջերում պաշտպանում էին ազգային ինքնատիպությունն ու մշակութային անկախությունը՝ անհաշտ պայքար մղելով բրիտանական ինտելեկտուալ մտքի գերիշխանության դեմ, ամերիկյան թերթերը իրենց համար բացահայտեցին գովազդային շուկայի անսահման հնարավորությունները:

Թերթերում քննարկումներ էին ընթանում Ամերիկայի Հարավի ու Հյուսիսի գաղափարախոսական ու բարոյական հակամարտության թեմաներով, որը բացատրվում էր Միացյալ Նահանգների տարածքի մեծ մասում ստրկատիրական համակարգի առկայությամբ: Աբուլիցիոնիզմը (շարժում հանուն ստրկատիրության վերացման) մեծ թափ էր հավաքել: 1830 թվականին տպագրվում էին հակաստրկատիրական գաղափարներ պաշտպանող 50 պարբերականներ: Առավել նշանակալից հրատարակություններ-

րից էին Բենջամին Լանդի «The Genius of Universal Emansipation»-ը («Համընդհանուր ազատագրության ոգին», լույս էր ընծայվում Բալթիմորում, 1821-1839 թվականներին), Բոստոնի «The Liberator» («Ազատարար», 1831-1865 թվականներ, խմբագիրն էր Ուիլյամ Լլոյդ Չարիսոնը): Թեպետ թերթի տպաքանակը 3000 էր, չափազանց մեծ էր ներգործությունը հասարակական կարծիքի վրա: Չարիսոնի տպագրած հոդվածների հասարակական արձագանքի մասին կարելի է դատել միայն այն փաստով, որ Ջորջթաունում օրենքով արգելվեց ազատ նեգրերին փոստով ստանալ «The Liberator»-ը՝ տուգանքի կամ ազատագրկման սպառնալիքով: Չարավային նահանգներում թերթերն արգելված էին, իսկ Ջորջիա նահանգում Չարիսոնի գլխի համար 5000 դոլար պարգևավճար էր նշանակված:

Նրա թերթի հաջողությունները պայմանավորված էին մի շարք հանգամանքներով, որից առաջինն ու հիմնականը հետևյալն էր. թերթում հնչում էին նաև ընդդիմախոսների կարծիքները. տպագրվում էին պլանտացիաների տերերի նամակները, որոնք պաշտպանում էին կենդանի «սեփականության» իրենց իրավունքը, արտատպվում էին հակաաբուլիցիոնիստական նյութեր այլ պարբերականներից: Չարիսոնը ցանկանում էր «The Liberator»-ի ընթերցողներին լիարժեք տեղեկատվություն տալ ստրկության հիմնախնդրի շուրջ՝ ներկայացնելով նաև ստրկության վերացման հակառակորդների փաստարկները: Տպագրվող տարատեսակ նյութերը անպայման ուղեկցվում էին Չարիսոնի մեկնաբանություններով: Նրա հոդվածներն ու մեկնությունները բնորոշվում էին հանդիսավոր ու կրքոտ ոճով, հնչում էին քարոզչական նոտաներ: **«Ես չեմ ցանկանում մտածել, խոսել կամ գրել ստրկության մասին չափավոր արտահայտություններով: Ոչ, ևս մեկ անգամ ոչ: Մի՞թե կարելի է խորհուրդ տալ հանգիստ տազմապ հնչեցնել այն մարդուն, ում տունը հրդեհի մեջ է կամ համոզել այն մորը, ում երեխան կրակի մեջ է մնացել, որ չչտապի նրան փրկել... Նույն կերպ անօգուտ է ինձ չափավորության կոչ անել այսպիսի հարցում»:**

«The Liberator»-ը վիթխարի դեր կատարեց սևամորթ բնակչության ինքնագիտակցության ձևավորման և ԱՄՆ-ի հասարակական կարծիքի արթնացման գործում:

Աբուլիցիոնիստական մամուլում առանձնանում էր նաև նեգրական «Freedom's Journal» («Ազատության հանդես»), որի

առաջին համարը լույս ընծայվեց 1827 թվականի մարտի 16-ին Նյու Յորքում՝ Ջոն Ռասվերմի խմբագրությամբ (նա առաջին սևամորթն էր, որ բարձրագույն կրթություն էր ստացել ԱՄՆ-ում):

Աբրիլիցիոնիստական պարբերականները, հատկապես Չարավում, միարժեք չէին ընդունվում: Շատ հաճախ այդ պարբերականները իրենց հրապարակումներով գնահատվում էին իբրև ոտնձգություն հասարակական կայունության ու կարգուկանոնի դեմ: Այդ իսկ պատճառով հարձակումներ էին լինում խմբագրությունների ու տպարանների վրա: 1837 թվականի նոյեմբերի 7-ին նման մի հարձակման ժամանակ անկառավարելի դարձած ամբոխը սպանեց արևելիցիոնիստական «Alton Observer» («Օլտոնյան մեկնաբան») թերթի խմբագիր, հոգևորական Էլայջի Լավջոյին, ով հրաժարվել էր վերջ տալ իր հրապարակումներին և հեռանալ քաղաքից: Սպանության նախօրեին նա թերթում գրել էր. *«Ինչո՞ւ պիտի ես փախչեմ Օլտոնից: Մի՞թե Օլտոնը ազատ նահանգ չէ: Մի՞թե տեսակետ հայտնելու իրավունքը պաշտպանված չէ օրենքներով: Դուք կարող եք ինձ կախել, դուք կարող եք ինձ կենդանի այրել, ինչպես այրեցիք Մակինտոշին Սենտ Լուիսում, դուք կարող եք մազուկ քսել ու փետուրների մեջ գցել ինձ կամ նետել Միսիսիպի, ինչպես սպանում էիք, բայց դուք չեք կարող ինձ պատվազրկել: Ես և միայն ես կարող եմ պատվազրկել ինձ, իսկ խորագույն պատվազրկությունը մեր ժամանակներում հրաժարումն է Աստուծուց, եթե ես լքեմ նրան հաճո գործը»:*

Ամերիկյան Չարավի առաջին ազդեցիկ պարբերականներից էին. «The Southern Review» («Չարավային մեկնաբանություն», 1828-1832 թվականներ), «The Southern Literary Messenger» («Չարավային գրական տեղեկատու», 1832-1864 թվականներ), «The Southern Quarterly Review» («Չարավային եռամսյակային մեկնաբանություն», 1842-1857 թվականներ), «Magnolia» («Մագնոլիա», 1840-1843 թվականներ): «The Southern Literary Messenger»-ի խմբագիրն էր ամերիկյան մշակույթի նշանավոր գործիչ Ուիլյամ Գիլմոր Սիմսը:

Չարավ-Յյուսիս փոխհարաբերություններում, այդ շրջանում, կարևորվում էր Չարավի առանձնահատուկ ճանապարհի որոշարկումն ու Յյուսիսի մշակութային անկախության հաստատումը:

Մինչպատերազմյան շրջանի Չարավի մամուլում կարևոր տեղ ուներ 1846 թվականին Ջեյմս Դե Բաուի Նոր Օռլեանում

հիմնադրած «De Bow's Commercial Review of the South and West» («Դե Բաուի առևտրական մեկնաբանությունները Հարավի և Արևմուտքի») հանդեսը: Քաղաքացիական պատերազմի նախօրեին «De Bow's Commercial Review of the South and West»-ը դարձել էր Հարավի անջատողական գաղափարների ջատագովը, այնտեղ տպագրվում էին Էդմունդ Ռաֆինի, Ջորջ Ֆիցխյուի հոդվածները: Հանդեսը բավականին տարածված էր, բայց տպաքանակը 5000 օրինակը չէր գերազանցում, և ֆինանսական դժվարությունների պատճառով տպագրությունը մի քանի անգամ ընդհատվեց:

1830-ական թվականներին սկսված հակամարտությունը ամերիկյան մամուլում լուրջ երևույթ էր՝ Հյուսիսը դեմ էր ստրկատիրությանը, Հարավը հանդես էր գալիս հոգուտ ստրկատիրության պահպանման: Այս հակամարտությունը, բնականաբար, քաղաքականացնում էր մամուլը:

Քաղաքականացմանը զուգահեռ մամուլում նաև այլ «հայտնագործություններ» էին կատարվում, մասնավորապես՝ կին ընթերցողների վիթխարի լսարանի բացահայտումը: Կանանց համար հրատարակվող ամսագրերի ավանդույթը 1830 թվականին հաստատեց «Godey's Lady's Book» («Գոդիի կանացի գիրքը», որ լույս էր ընծայվում Ֆիլադելֆիայում, Լուիս Գոդիի խմբագրությամբ): «Godey's Lady's Book»-ը լավ վարվեցողության կանոններ էր մշակում և ուսուցանում, ուղղված էր միջին դասին և կայուն պահանջարկ ուներ: 20 տարում հանդեսի տպաքանակը հասավ 150000: Նույն հաջողությամբ «Godey's Lady's Book»-ը տպագրվեց մինչև դարավերջ:

Ընդհանրապես պատկերազարդ ամսագրերը մեծ տարածում ստացան ձեռք բերելով որոշակի ընթերցողական լսարան: Ցինցինատիում և Բոստոնում տպագրվում էին նույնանուն ամսագրեր՝ «Ladie's Repository» («Կանացի գաղտնիքներ»), Չիկագոյում տպագրվում էր «Lady's Western Magazine and Garland of the Valley» («Արևմտյան կանացի հանդես և դաշտավայրի պսակ») երկարաշունչ անվանումով հանդեսը:

1830-ական թվականների ամերիկյան լրագրության առանձնահատկություններից մեկն էլ հասարակության աղքատ խավերի «ներգրավումն» էր:

Այդ միտումը, ինչպես արդեն անդրադարձել ենք, կար և եվրոպական լրագրության մեջ:

Աղքատ ընթերցողներին հասցեագրված էժանագին թերթերը շատ ավելի մեծ սպառում ունեին, ուստի ավելի եկամտաբեր էին հրատարակիչների համար: Առավելագույնս էժան ու հանրամատչելի մամուլի՝ penny press-ի ի հայտ գալը ամերիկյան լրագրության նշանակալից երևույթներից էր: Այդ ոլորտում առաջատար էր Բենջամին Դեյը. 1833 թվականին Նյու Յորքում նա սկսեց հրատարակել «The Sun» («Արև») թերթը, որի նշանաբանն էր՝ «Արևը լուսավորում է բոլորին»: Թերթի զինը մեկ ցենտ էր, չորս ամսում տպաքանակը հասավ 5000 օրինակի (համեմատության համար նշենք, որ այդ ժամանակ ամենամեծ տպաքանակն ուներ Նյու Յորքում հրատարակվող «The Courrier and Enquirer» («Տրիչ և տեղեկատու») թերթը՝ 4500 օրինակ):

«The Sun»-ը տպագրում էր պարզ գրված պատմություններ կատարված սպանությունների ու այլ հանցագործությունների, սկանդալների մասին: Երբ իրականում նման դեպքեր չէին լինում, անթույլատրելի չէր համարվում միստիֆիկացիաներին դիմելը: Միստիֆիկացիայի դասական օրինակ դարձավ Լուսնի վրա հայտնաբերված կյանքի մասին ռեպորտաժների շարքը. իբր Բարեհուստ հրվանդանում տեղակայված գերիզոր աստղադիտակով անգլիացի աստղագետ Ջոն Գերշելը Լուսնի վրա քաղաքակրթություն է հայտնաբերել՝ մարդանման արարածներ, որոնք ունեն չորս ֆուտ հասակ, չղջիկների նման թևեր և մարմիններն էլ պատած է շեկ բրդով:

Բենջամին Դեյի հետ մրցակցում էր շոտլանդացի Ջեյմս Գորդոն Բենետը: Նա Ամերիկա էր տարագրվել 1819 թվականին, 16 տարի Յալիֆաքսում աշխատել էր իբրև ռեպորտյոր ու խմբագիր և փայլուն տիրապետում էր լրագրության նրբություններին: Չարլստոնում ու Ֆիլադելֆիայում նա հիմնադրեց «The New York Herald» («Նյու Յորք Հերալդ») թերթը: Բենետի նախնական կապիտալը ընդամենը 500 դոլար էր, սակայն շուտով նրա «The New York Herald»-ը դարձավ ամենատարածված ու հարուստ նորարարական թերթը ամերիկյան լրագրության պատմության մեջ: 1836 թվականին «The New York Herald»-ի տպաքանակը 20000 էր, մեկ համարն արժեր երկու ցենտ:

«The New York Herald»-ի հաջողության գաղտնիքը մեկն էր՝ հնարավորինս արագ հաղորդել նորն ու հետաքրքիրը՝ ոչ մի դժվարություն հաշվի չառնելով:

Նորանուծությունները ևս Բենետի համար լրագրության պահանջներից էին՝ 1836 թվականի ապրիլին նա ամերիկյան լրագ-

րության պատմության մեջ հրապարակեց առաջին լրագրական հետաքննությունը. «The New York Herald»-ը իր ընթերցողներին մանրամասն պատմեց նյույորքցի 23-ամյա մարմնավաճառ էլեն Ջուդիթի սպանության հանգամանքները:

Բենետը ոչ միայն խելացի և նախաձեռնող էր, նա հավատում էր մամուլի բարձր առաքելությանը: Նա ասում էր. **«Թերթը կարող է հանդես գալ իբրև ղեկավար՝ մարդկային մտքի ու քաղաքակրթության կարևորագույն ոլորտներում: Նա կարող է ավելի շատ հոգիներ տանել դրախտ ու փրկել դժոխքից, քան Նյու Յորքի բոլոր եկեղեցիները»:**

1841 թվականի ապրիլի 10-ից penny press-ի նյույորքյան շուկայում հայտնվեց Յորաս Գրիլիի «The New York Tribune» («Նյու Յորք Թրիբյուն») թերթը:

Այլ թերթերի համապատկերում Յորաս Գրիլիի penny press-ն առանձնանում էր լայն մտահորիզոնով, հստակ արտահայտված գաղափարախոսական դիրքորոշումներով. Գրիլին հայտնի էր ժողովրդավարական ու սոցիալիստական գաղափարներին իր նվիրվածությամբ, պաշտպանում էր ֆեմինիստական ու աբոլիցիոնիստական շարժումները:

Նորությունները, որ տպագրվում էին penny press-ում, հաճախ հավաստի կամ ճշգրտված չէին, փաստերը ներկայացվում էին լավատեսորեն, ցանկալին ընդունվում էր իրականի ու արդեն կատարվածի տեղ:

Այնուամենայնիվ, տպագիր խոսքի նկատմամբ վստահությունն այնքան մեծ էր, որ ամեն ինչ ընդունվում էր որպես ճշմարտություն: Բազմահազար ընթերցողների համար թերթը դեպի մեծ աշխարհ բացված միակ պատուհանն էր՝ արտաքին աշխարհի իրադարձություններին տեղեկանալու միակ միջոցը, բացի այդ՝ արագ փոփոխվող դարաշրջանի մշակութային տարածքում միակ կողմնորոշիչը:

Գրիլիի ու Բենետի թերթերի ներգործությունը տարածվում էր Նյու Յորքի սահմաններից դուրս և համազգային էր դառնում: Յորաս Գրիլին Յանթապետական կուսակցության ստեղծման ակունքներում էր և զգալի էր նրա աջակցությունը Աբրահամ Լինկոլնին՝ 1860 թվականին իշխանության գալու գործում: Գաղափարական առումով «The New York Tribune»-ը հակաստրկատիրական խիստ ուղղվածություն ուներ և իր ողջ գործունեությունը գլխավորապես նպատակաուղղել էր հակաստրկատիրական գաղափարների քարոզին: Օրինակ, 1852 թվականին այդ թերթում

կարելի էր կարդալ. *«Մենք ստրկատիրությունը դիտարկում ենք իբրև մեծագույն բարոյական և սոցիալական չարիք, իբրև արատի ու դատարկամտության աղբյուր բոլոր այն վայրերում, որտեղ ստրկատիրություն գոյություն ունի... Մենք պնդում ենք, որ ստրկատիրությունը մեծագույն անարդարություն է և որ ոչ մի մարդ իրավունք չունի օգտագործելու այլ մարդու՝ իբրև շարժական գույք կամ վաճառի այլ մարդու՝ սեփական շահույթի համար»:*

1844 թվականին Սենյուել Մորգեի հայտնագործած հեռագրի առավելությունները առաջինը գնահատեցին մանուլի ու բորսայի աշխատողները:

Տեղեկատվության արագ հաղորդման հնարավորությունը լրագրության պատմության նոր փուլ էր նշանավորում: Հեռագիրը փոխեց թերթի նյութերի և դրանց ներկայացման բնույթը: Կարևորագույն ու կարճ լուրերը տպագրվում էին հատուկ իրենց հատկացված սյունակներում՝ «Վերջին նորությունները հեռագրով», «Մորգետտիպ», «Կայծակ» և համանման խորագրերով:

Բնականաբար՝ հեռագրով հաղորդված տեղեկությունները բավականաչափ թանկ էին, բայց օպերատիվությունը փոխատուցում էր ծախսերը: Ջեյմս Բենետը երբեք ժլատություն չէր անում ծախսելիս, քանի որ փորձով գիտեր, որ սենսացիոն նորությունները միշտ եկամտաբեր են: Քրեստոմատիական օրինակ է դարձել «The New York Herald»-ում Ուելսի արքայազնի 1860 թվականին ԱՄՆ այցելության լուսաբանումը: *«Ինչպես հայտնի է՝ «Herald»-ի թղթակիցները հայտնվեցին Նիագարայի մոտ և հեռատիպով հաղորդեցին, որ Ուելսի արքայազնը Ամերիկա է գալիս և որոշել է անպայման Նիագարան տեսնել: Արքայազնը ուշանում էր և որպեսզի իր հերթը ու զբաղեցրած դիրքը պահպանի, թղթակիցը կարգադրեց հեռագրել Մովսեսի առաջին գիրքը: Երբ առաջին գիրքն ամբողջությամբ հաղորդված էր, իսկ արքայազնը դեռ չէր ժամանել, անցան Մովսեսի երկրորդ գրքին: Երբ արքայազնը վերջապես ժամանեց, թղթակիցը հասցրեց նորությունն առաջինը հաղորդել՝ այդ խորամանկությունն արժեցավ ընդամենը մի քանի հազար դոլար»:*

Հեռագրական ոճի լակոնիզմն ընդգծելու և ժամանակի ժուռնալիստական առանձնահատկություններն իրենց փայլուն արտահայտությունն են գտել ևս մեկ քրեստոմատիական օրինակում: Խոսքը Հերստի և իր աշխատակցի «նամակագրությանն» է վերաբերում իսպանա-ամերիկյան 1898 թվականի պատերազմի

նախօրյակին. Ռեմինգտոն. *«Ամեն ինչ հանգիստ է: Ոչինչ չի կատարվում: Պատերազմ չի լինի: Ուզում եմ վերադառնալ»*:
Չերստ. *«Խնդրում եմ մնալ: Ապահովեք նկարները: Ես կապահովեմ պատերազմը»*:

1840 թվականին Ամերիկայում հայտնվեցին առաջին գովազդային գործակալությունները (1841 թվականին աշխատանքները սկսեց Պալմերի գովազդային գործակալությունը Ֆիլադելֆիայում), որոնք սերտ ու փոխշահավետ կապեր հաստատեցին մամուլի հետ: Գովազդը դառնում էր տնտեսական գործունեության տեսակ. գովազդի դիմաց արվող ֆինանսական ներդրումների շնորհիվ զարգացավ գովազդային գործակալությունների ու լրատվամիջոցների համագործակցությունը:

1848 թվականին Նյու Յորքում տպագրվող թերթերի մեծ մասը միավորվեց «Ասոշյատեդ պրեսս» ասոցիացիայում, որի հիմնական նպատակը տեղեկությունների «աղբյուր» հանդիսացող շոգենավի ծախսերը համատեղ վճարելն էր:

19-րդ դարակեսին թելադրող դիրքերում էր Նյու Յորքի, Ֆիլադելֆիայի, Բոստոնի ու Վաշինգտոնի մամուլը: 1851 թվականին նյույորքյան penny press-ի մրցակցության մեջ ներգրավվեց ևս մեկ թերթ՝ Չորաս Գրիլիի նախկին օգնական Չենրի Ռեյմոնդը սկսեց լույս ընծայել նոր թերթ՝ «The New York Times» («Նյու Յորք Թայմս»), որն արագորեն դարձավ հավաստի տեղեկատվություններ պարունակող ու փնտրված թերթ ամբողջ երկրում:

Չետաքրքիր փաստեր կան ինչպես 15 տարում փոխվեց նոր հրատարակություն սկսելու համար անհրաժեշտ մեկնարկային կապիտալի չափը. 1835 թվականին Ջեյմս Բենետը 500 դոլարով սկսեց «The New York Herald»-ը, 1841 թվականին Չորաս Գրիլին 3000 դոլարով սկսեց «The New York Tribune»-ը, 1851 թվականին Չենրի Ռեյմոնդը 70000 դոլարով սկսեց «The New York Times»-ը:

Այլ քաղաքներում տպագրվող մեծ թերթերը մայրաքաղաքում ունեին սեփական թղթակիցներ՝ ընթերցողներին տեղյակ պահելու համար «իշխանության միջանցքների» անցուղարձին:

1850-ական թվականներին ամենամեծ տպաքանակն ունեին երկու թերթեր՝ «The New York Herald»-ը և «The New York Tribune»-ը: Սպառումը հիմնականում մայրաքաղաքից դուրս էր: «The New York Tribune»-ի կիրակնօրյա 176000 տպաքանակը տարածվում էր ԱՄՆ-ի և Յուսիսում, և Չարավում:

1850-1865 թվականներին թերթերն արդեն ամսագրերից և հանդեսներից ավելի շատ ընթերցողներ ունեին:

Ամսագրերի լուրջ քննարկումներին փոխարինել էր օրվա լրահոսը:

Օրաթերթերին զուգահեռ տպագրվում էին նաև շաբաթաթերթեր:

1854 թվականին Կանգաս-Ներբասկայի օրենքի ընդունումը, Կանգասի պատերազմը, Հանրապետական կուսակցության ձևավորումը, Ջոն Բրաունի գինված ջոկատի հարձակումը Վիրջինիա նահանգի վրա ու ջոկատի ջախջախումը, Ջոն Բրաունի ու նրա կողմնակիցների մահապատիժը՝ բոլոր այս իրադարձությունները հասարակությունը բաժանել էին երկու հակամարտող բանակների: Այդ ամենի բարձրակետը դարձավ 1860 թվականի նոյեմբերի 6-ը, երբ արևելիցիոնիստների օգնությամբ Աբրահամ Լինքոլնը ընտրվեց նախագահ՝ առաջադրված լինելով Հանրապետական կուսակցության կողմից:

Աբրահամ Լինքոլնը, ԱՄՆ բազմաթիվ նախագահների նման, փայլուն հռետոր էր: Իր հրապարակային ելույթներում և մամուլի հրապարակումներում Լինքոլնը լակոնիկ է, հաճախ աֆորիստիկ: 1857 թվականի սեպտեմբերի 8-ին Քլինթոնի իր ելույթում Լինքոլնը արտաբերեց իր նշանավոր խոսքերը. **«Կարելի է որոշ ժամանակ խաբել ողջ ժողովրդին, կարելի է ամբողջ ժամանակ խաբել ժողովրդի մի մասին, բայց անհնար է ամբողջ ժամանակ խաբել ամբողջ ժողովրդին»:**

Լինքոլնի ընտրությունը ստրկատիրական Հարավը ընդունեց իբրև պառակտումի ու պատերազմի ազդանշան: Ատլանտայի «Կոնֆեդերեյսի» թերթը գրում էր. **«Թող լինի, ինչ լինում է. գուցե Պոտոմակ գետը կարմիր դառնա արյունից, իսկ Փենսիլվանիան տասը սաժեն բարձրությամբ ծածկվի խեղված մարմիններով, ամերիկյան մայրցամաքից վերանան ազատության վերջին մնացորդները, բայց Հարավը երբեք չի համաձայնի նման ստորացումի և ամոթանքի, ինչպես Աբրահամ Լինքոլնի նախագահի պաշտոնակալության հանդիսավոր արարողությունը»:**

Ի պատասխան Լինքոլնի ընտրության՝ Հարավային Կարոլինան դուրս եկավ միության կազմից, որին հետևեցին ևս 10 նահանգներ: 1861 թվականի փետրվարի 18-ին կազմվեց Համադաշնություն՝ ժամանակավոր նախագահ Ջեֆերսոն Դևիսի գլխավորությամբ:

Նույն Չարալվն էլ, փաստորեն, նախաձեռնեց քաղաքացիական պատերազմը, որը սկսվեց 1861 թվականի ապրիլին: Ռազմական գործողությունների պահին նախագահ Լինքոլնի կողմն անցավ «The New York Times»-ը: Այս իրադարձությունը կարևորվում էր նաև այն պատճառով, որ մինչ այդ թերթի խմբագիր Չենրի Ռեյնոնդը քննադատաբար էր վերաբերվում Աբրահամ Լինքոլնին:

Պատերազմը թելադրում էր իշխանություններ-մամուլ նոր փոխհարաբերություններ: Խոսքի ազատությունը սահմանափակվում էր՝ Չամադաշնությունը փակեց մի քանի թերթեր, արգելվեց Դեմոկրատական կուսակցության մի քանի կազմակերպությունների գործունեությունը:

Միաժամանակ Լինքոլնը մերժեց ամերիկացի հրատարակիչների՝ իրեն հենարան դառնալու բազմաթիվ առաջարկները ոչ այն պատճառով, որ զգուշանում էր ուղղակի հովանավորել այս կամ այն թերթը, այլ այն պատճառով, որ իր քաղաքական կարիերայի ընթացքում այնքան շատ լրագրողների էր ճանաչել, որ հասկանում էր՝ ինքն ուղղակի տանուլ կտա, եթե հարաբերություններ պահպանի նրանցից միայն մի մասի հետ: Դա հետևանք էր նաև այն խոր համոզումի, որ **«Այն իշխանությունը, որը սերված է ժողովրդից, ձևավորված է ժողովրդի կամքով, և գործում է հանուն ժողովրդի՝ երբեք չի կործանվի»:**

1863 թվականին Աբրահամ Լինքոլնը ստորագրեց «Սևամորթների ազատագրման հռչակագիրը», իսկ 1865 թվականի հունվարի 31-ին ընդունվեց Սահմանադրության 13-րդ լրացումը, որը վերացնում էր ստրկությունն ԱՄՆ-ում: Դա արելիցիոնիստների երկարամյա պայքարի արդյունքն ու հետևանքն էր: Ուիլյամ Չարիտոնը իր առաքելությունը ավարտված համարելով՝ հայտարարեց, որ փակում է 34 տարի տպագրվող «The Liberator» թերթը. **«Նպատակը, որին նվիրված էր թերթը, ստրկական աշխատանքի վերացումն էր: Նպատակը լիովին կատարված է, և ես կարծում եմ, որ թերթի գոյությունը համընկավ մեծագույն ու պատմական պայքարի շրջանին, էնանսիպացիայի դեռ մնացած խնդիրները կլուծվեն այլ միջոցներով (հույս ունեմ, որ կարող եմ օգտակար լինել), նոր դեկավարության օրոք, հարյուրի փոխարեն միլիոնավոր դաշնակիցների հետ»:**

1865 թվականի ապրիլի 14-ին Վաշինգտոնի «Ֆորդ» թատրոնում մահափորձ կատարվեց ԱՄՆ-ի նախագահ Աբրահամ Լինքոլնի դեմ: Մահափորձի և նախագահի մահացու վիրավորված

լինելու լուրը թերթերն ակնթարթորեն տարածեցին ամբողջ երկրում: Թղթակիցները ջանում էին առավելագույնն ասել մեկ նախադասությամբ: «The New York Tribune»-ը նախագահի մահափորձի հաղորդագրությունը վերնագրել էր. **«Այսօր երեկոյան թատրոնում կրակել են նախագահի վրա և գուցե մահացու վիրավորել»:** Այդպես թերթերում ձևավորվում էր նորությունների մատուցման նոր ոճը, որ կոչվեց շրջված բուրգ:

1866 թվականին հաջողությամբ տեղակայվեց տրանսատլանտյան հեռագրական մալուխը (առաջին փորձը, որն արվել էր 1858 թվականին՝ ձախողվել էր), որն Ամերիկան միացրեց Եվրոպային:

1867 թվականին առաջին անգամ սկսեցին թուղթ ստանալ փայտանյութից (մինչ այդ թուղթն արտադրվում էր կտորեղենից), դա հանգեցրեց պարբերականների ինքնարժեքի և գնի նվազեցման:

1868 թվականին Քրիստոֆեր Շոուլզը հայտնագործեց գրամենքեման, որը փոխեց լրագրության մասին ավանդական պատկերացումները: 1868-1873 թվականներին Քրիստոֆեր Շոուլզը, Կառլոս Գլիդենը և Ջեյմս Դենսմորը տարբեր մոդելներ էին առաջարկում: 1873 թվականին ստեղծվեց սերիական արտադրության պահանջները բավարարող մոդելը: 1874 թվականին Մարկ Տվենը գրամենքեմայով մասակ գրելիս արձանագրում էր. **«Կարծես թե նա ավելի արագ է տպագրում, քան ես կարող եմ գրել: Կարելի է հանգիստ ընկողմանել բազկաթռոչին ու աշխատել գրամենքեմայով: Նա բազմաթիվ բառեր է տեղավորում մեկ էջում: Ոչինչ չի փչացնում, թանաքաբծեր չի թողնում, և, իհարկե, խնայում է թուղթը»:**

1869 թվականին ավարտվեց տրանսատլանտյան երկաթուղու շինարարությունը, որը միացրեց Խաղաղ ու Ատլանտյան օվկիանոսները, իսկ 1876 թվականին Ալեքսանդր Բելը հայտնագործեց հեռախոսը:

Տեխնիկական այս նորամուծությունները փոխում էին կյանքն, ու, բնականաբար, փոխվում էին նաև թերթերը: Լրագրական ասպարեզից հեռանում էին դարաշրջանի նշանավոր դեմքերը, ովքեր նպաստել էին ամերիկյան մամուլի զարգացմանը, նշանավորել էին այդ զարգացման կարևորագույն փուլերը:

Նրանց փոխարինելու էր գալիս նոր սերունդը՝ Չարլզ Անդերսոն Դանը, Մենտոն Մարբլը, Ուայտլոու Ռիդը, Յենրի Ուոտերսոնը, Սյուրատ Յոլստեդը, Ջոզեֆ Պուլիտցերը:

ԱՄՆ-ում զարգանում էր նաև օտարալեզու մամուլը: Եթե 1880 թվականին ԱՄՆ-ում ընդամենը 15 օտար լեզուներով 799 պարբերականներ էին հրատարակվում, ապա 1900 թվականին պարբերականների քանակը գրեթե կրկնապատկվեց և դրանք արդեն տպագրվում էին 25 լեզուներով:

ԴԱՐ XX. ՄԵՋ ՀԱՅՏՆԻ ԵՎ ԱՆՀԱՅՏ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՆ

XX դարում երևի թե ավելի շատ էական իրադարձություններ են տեղի ունեցել, ավելի շատ բացահայտումներ են կատարվել, մարդկային քաղաքակրթությունն ավելի արագ առաջընթաց է արձանագրել, քան նախորդ բոլոր դարերում համախումբ:

Դարի պատկերը՝ պարզ տարեգրությամբ: 1901 թ. տեղի ունեցավ առաջին Նոբելյան մրցանակների հանձնումը: 1903-ին Ռայթ եղբայրները սկսեցին թռչել՝ ավիացիայի հիմքը դնելով: 1911-ին Ռաուլ Ամունդսենը՝ առաջին մարդն աշխարհում, հասավ հարավային բևեռ: 1912-ին կործանվեց «Տիտանիկը»: 1914-ին սկսվեց առաջին համաշխարհային պատերազմը: Ամմիջապես դրանից հետո ԱՄՆ-ը հայտարարեց այդ պատերազմում իր չեզոքության մասին, և միայն 1917-ին խախտեց չեզոքությունը՝ պատերազմ հայտարարելով գերմանացիներին: 1917-ին Ռուսաստանում տեղի ունեցան փետրվարյան, ապա և՛ հոկտեմբերյան հեղափոխությունները: 1922-ին կազմավորվեց ԽՍՀՄ-ը: 1924-ին Փարիզում տեղի ունեցան առաջին ձմեռային Օլիմպիական խաղերը: 1926-ին Ռուլթ Դիսենի շնորհիվ «ծնվեց» Միկկի Մաուսը: Նույն թվականին դժբախտ պատահարից վախճանվեց հանճարեղ ճարտարապետ Անտոնիո Գաուդին: 1929 թ. Հոլիվուդում Ամերիկայի կինոակադեմիան հիմնեց «Օսկար» մրցանակը: 1936 թ. Մեծ Բրիտանիայում և ԱՄՆ-ում սկսվեցին կանոնավոր հեռուստահաղորդումները: Նույնը՝ երկու տարի անց տեղի ունեցավ նաև ԽՍՀՄ-ում և Գերմանիայում: 1939-ին սկսվեց երկրորդ համաշխարհային պատերազմը: Ինչպես և նախորդ անգամ, Համաամերիկյան կոնֆերանսի ժամանակ բոլոր ամերիկյան պետությունները՝ բացառությամբ Կանադայի, հայտարարեցին երկրորդ համաշխարհային պատերազմում իրենց չեզոքության մասին: 1945-ին Սան Ֆրանցիսկոյում ստորագրվեց ՄԱԿ-ի կանոնադրությունը: Նույն թվականին Հերոսիման և Նագասակին ատոմային ռմբահարման ենթարկվեցին: 1948-ին հռչակվեց Իսրայելի պետությունը: 1949-ին Գերմանիայի տեղում պաշտոնապես երկու պետություններ առաջացան՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը և Գերմանիայի Ժողովրդավարական Հան-

րապետությունը: Նույն թվականին ստեղծվեց ՆԱՏՕ-ն: 1952-ին ստեղծվեց առաջին ջրածնային ռումբը: 1956-ին ԽՄԿԿ 20-րդ համագումարում Նիկիտա Խրուշչովը պսակագերծեց Ստալինի անձի պաշտամունքը՝ բացահայատելով դրա անմարդկային և ողբերգական հետևանքները: 1957-ին ԽՍՀՄ-ից երկրամերձ ուղեծիր դուրս բերվեց Երկրի առաջին արհեստական արբանյակը: Մեկ ամիս անց առաջին կենդանին՝ Լայկա շունը Երկրի երկրորդ արհեստական արբանյակով թռավ տիեզերք: 1961-ին Ջոն Քենեդին ստանձնեց ԱՄՆ նախագահի պաշտոնը: Նույն թվականին՝ առաջին մարդը՝ Յուրի Գագարինը, թռավ տիեզերք: Նույն այդ թվականին կառուցվեց Բեռլինյան պատը: 1962-ին առաջին ամերիկացին՝ Ջոն Գլենը թռավ տիեզերք: 1963-ին սպանվեց Ջոն Քենեդին: 1965-ին վախճանվեց հանճարեղ ճարտարապետ Շառլ Լը Կորբյուզեն: 1968-ին լույս տեսավ «Ընթացիկ իրադարձությունների տարեգրությունը»՝ առաջին ինքնահրատ (րՈՎՈՋՊՈՑ) պարբերականը ԽՍՀՄ-ում, ուր խոսվում էր երկրում մարդու իրավունքների ոտնահարման մասին: 1969-ին առաջին երկրաբնակները ոտք դրեցին Լուսնի վրա. ամերիկացիներ Նիլ Արմսթրոնգը և Էդվին Օլդրինը: 1973-ին պայթեց «Ուոթերգեյթյան» սկանդալը, որը ԱՄՆ նախագահի պաշտոնանկության պատճառ դարձավ: 1985-ին Սիխայիլ Գորբաչովը դարձավ ԽՄԿԿ գլխավոր քարտուղար: 1989-ին մեկը մյուսի ետևից կործանվեցին Եվրոպայի կոմունիստական վարչակարգերը: Քանդվեց Բեռլինյան պատը և Գերմանիաները վերամիավորվեցին: 1991-ին ԽՍՀՄ-ում ձախողվեց ռեակցիոն հեղաշրջման փորձը, որին հետևեցին կոմունիստական կուսակցության ղեկավար և առաջնորդող դերի էական նվազումը, ԽՍՀՄ բոլոր հանրապետությունների անկախությունների հռչակումը, որպես հետևանք՝ ԽՍՀՄ-ի փլուզումը:

Արժե նշել նաև դարի թերևս ամենամահավանական և զավեշտալի իրադարձություններից մեկը. 1987 թ. մայիսի 28-ին աշխարհի ամենապաշտպանված քաղաքներից մեկի՝ Մոսկվայի ամենապաշտպանված վայրում՝ Կարմիր հրապարակում անարգել վայրէջք կատարեց գերմանացի 19-ամյա Մաթիաս Ռուստը՝ իր «Սենա-172» մարզական ինքնաթիռով: Երևույթն այնքան անհավանական էր, որ սկանատեսները այն համարեցին կինոնկարահանման նպատակով կատարված վայրէջք...

Իսկ հիմա վերադառնանք ժուռնալիստիկային:

Տպագիր մամուլ

20-րդ դարի մամուլի յուրահատուկ և ինքնատիպ ֆենոմեն կարելի է համարել, անշուշտ, ռուսական մամուլը, որը եթե դարասկիզբը սկսեց որպես վերելք ապրող կապիտալիզմի ուղեկից և քարոզիչ, ապա դրանից գրեթե անմիջապես հետո ու ավելի քան 70 տարի առաջնորդվեց ու ղեկավարվեց միայն կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի, նրա քաղբյուրոյի, համագումարների և պլենումների որոշումներով ու ցուցումներով: Ու եթե տատանվեց, ապա «միայն կուսակցության գծի տատանումներին համընթաց», եթե շեղվեց, ապա միայն կուսակցության գծի ուղղությամբ, և միայն դարավերջին փորձեց վերադառնալ կապիտալիզմի վերելքի լուսաբանմանն ու նպաստելուն՝ դարասկզբին որդեգրած իր գործելակերպին, որն, ինչպես արդեն նշեցինք, ավելի քան 70-ամյա դադար էր տվել:

Ռուսաստանում 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին տպագրվում էին 102 պարբերականներ, որոնցից ավելի քան կեսը՝ Սանկտ Պետերբուրգում և Մոսկվայում: Գրաքննությունը գործում էր նույն ծավալներով և նույն թափով, որն էլ, ըստ էության, պարտադրել էր, որ եղածի ճնշող մեծամասնությունը պաշտոնական, կառավարական և կառավարամետ պարբերականներ դառնան:

Արևմտյան երկրներում տեղի ունեցած հեղափոխությունները լուծել էին իրենք իրենց առաջադրած խնդիրները, և պետությունները վաղուց ի վեր արդեն պետական-ազգային իրենց կայացման ճանապարհին էին: Ռուսաստանը որպես պետական կայացման ճանապարհ էր ընտրել բարեփոխումները, որոնք, սակայն, այնքան էլ արդյունավետ չեղան ի վերջո, քանի որ էական ու սկզբունքային փոփոխություններ չէին իրականացվում և, մասնավորապես, տնտեսական ոլորտում չէին լուծվում սոցիալ-տնտեսական հասունացած բազմաթիվ խնդիրները, որոնք էլ հեղափոխության պահանջ էին առաջացնում նույն այդ խնդիրները լուծելու նպատակով: Կուսակցությունների գործունեության արգելքը, գրաքննության համատարած և ճնշող բնույթը էապես նպաստում էին դժգոհությունների ալիքի ահագնացմանը: Հեղափոխությունը գրեթե անխուսափելի էր դառնում: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև միապետության խիստ դանդաղ ռեֆորմացվող (օբյեկտիվորեն) բնույթը, ինչպես նաև դրսի շահագրգռությունը՝

նույն այդ ռուսական հեղափոխության իրականացման գործում, որին բնականաբար ավելի ձեռնտու էր թույլ, հեղափոխական բոցերի մեջ այրվող, անկայուն և խախուտ հարևան, որը իրենից որևէ էական վտանգ չէր ներկայացնի: Ամեն դեպքում՝ նույն այդ հեղափոխության շնորհիվ Ռուսաստանը հացահատիկ արտահանող երկրից վերածվեց ներմուծող երկրի:

Ահա հիմնական այն խորապատկերը, որի վրա էլ զարգանում էր 20-րդ դարասկզբի ռուսական մամուլը:

Պաշտոնական-պետական մամուլի ներկայացուցիչներն էին «կրճիռնափայտ ՉարձվՈՒՄ»-ը («Կառավարական տեղեկատու») և «հավՈՅՐՍՈՒԿ ՉպՊՏՎՏՐՅՈՒՄ»-ն («Սենատի տեղեկագիր»), նահանգային և շրջանային «ԹպՊՏՎՏՐՅՈՒՄ»-ները («Տեղեկագրերը»), տարաբնույթ հանդեսները, ամսագրերը և հոգևոր-եկեղեցական մամուլը:

Դրանց ի հակակշիռ, քանի որ Ռուսաստանում, փաստորեն, արգելված էր կուսակցությունների գործունեությունը, կուսակցական թերթերը ստեղծվում և հրատարակվում էին արտասահմանում:

1900 թվականին ստեղծված «ԼրՍՐՈՒ» («Կայծ») պարբերականը, որը հրատարակվեց մինչև 1905 թվականը, էպպես նպաստեց Ռուսաստանի և արտասահմանյան մարքսիստական խմբակների միավորմանը: Դա առաջին համառուսական անլեզավ մարքսիստական թերթն էր, որը հրատարակում էին Վլադիմիր Լենինը, Գեորգի Պլեխանովը, Յուրի Մարտովը, Վերա Չասուլիչը, Պյոտր Աքսելռոդը, Ալեքսանդր Պոտրեսովը: Ընդգծելով թերթի առանձնահատուկ միավորիչ ու համախմբող դերը, Լենինը հենց այդ փուլում տվեց հայտնի ձևակերպումը, որ հետո՝ մի քանի տասնամյակ, օգտագործվում էր իբրև թևավոր խոսք, և որը ավելորդ չենք համարում երկրորդել. **«Թերթը ոչ միայն կոլեկտիվ պրոպագանդիստ է և կոլեկտիվ ազիտատոր, այլև կոլեկտիվ կազմակերպիչ»:**

Ռուսաստանի սահմաններից դուրս այդ շրջանում ձևավորվեցին նաև մյուս՝ առաջատար և քաղաքական կյանքում ոչ այնքան էական նշանակություն ունեցող կուսակցությունների պարբերականները: Նախահեղափոխական արդեն ոչ միայն տրամադրությունները, այլև՝ բուռն իրադարձությունները, ինչպես նաև մոտալուտ հանգուցալուծման շունչը, որն ականայից և ենթագիտակցորեն զգում են ինչպես դեպի հեղափոխություն գնացողները, այնպես էլ նրանից խուսափողները, հանգեցրին երկրի վա-

րած ներքին քաղաքականության էական փոփոխությունների, որոնք չէին կարող չազդել մամուլի վրա: 1905 թվականի հոկտեմբերի 17-ին հռչակված ցարական մանիֆեստով ազդարարվում էր միապետի անսասան և անհողողող կամքը *«քնակչությանը շնորհել քաղաքացիական ազատության անխախտ հիմքերը՝ անհատի անձեռնմխելիություն, խղճի, խոսքի, ժողովների և միությունների իրական ազատության հիմքի վրա»*: Շուտով ընդունվեցին նաև «Մամուլի մասին ժամանակավոր օրենքները», որոնք արմատապես փոխեցին մամուլի իրավական կարգավիճակը՝ բնականաբար, հանգեցնելով մամուլի բովանդակային փոփոխությունների նաև, ինչն էլ, իր հերթին, սկզբնավորեց ռուս ժուռնալիստիկայի զարգացման նոր փուլը:

Ընդհանուր և հոգևոր նախնական գրաքննության վերացումը, պարբերականների գրանցման ներկայացուցչական կարգի հաստատումը, մամուլի վրա վարչական ներգործության արգելումը, մամուլում տեղ գտած սխալների համար պատասխանատվությունը միայն դատական կարգով որոշելը, հրատարակչական գործունեության համար գրավների ու ցենզերի վերացումը Ռուսաստանում հանգեցրին թերթաամսագրային վերելքի:

1905-1907 թվականներին թերթերի և ամսագրերի թիվը դարասկզբի համեմատ երեք անգամ ավելացավ՝ հասնելով 3300-ի: Եվ դա՝ ոչ միայն երկու մայրաքաղաքներում, այլև՝ նահանգներում:

Ռուս լրագրության մեջ լեզավ կուսակցական մամուլը սկզբունքորեն նոր երևույթ էր: Հեղափոխական շարժման ընդհանուր վերելքի ալիքի վրա ընդհատակից դուրս եկան սոցիալ-դեմոկրատները (բոլշևիկները և մենշևիկները), անարխիստները, էսեռները, կադետները, որոնցից յուրաքանչյուրը սկսեց հրատարակել իր պարբերականը:

Հետհեղափոխական շրջանում լայն տարածում ստացավ «անկախ», «վերկուսակցական» մամուլը, որ ուղղված էր մասնական ընթերցողին:

Ֆինանսական ամենամեծ շրջանառություններ ունեցող հրատարակչատներից էր Ի. Սիտինի ընկերությունը, որ 1914 թվականին տպագրում էր Ռուսաստանում տպագրվող գրքերի մեկ քառորդը: Սիտինի «ՀցորՍՏպ ռսՏՏՏ»-ն («Ռուսական խոսքը») ամենահանրաճանաչ թերթն էր և 1914 թվականին ուներ 500000 օրինակ տպաքանակ: Ընթերցողների շրջանում թերթը հեղինա-

կություն էր ստեղծել տեղեկատվության բաժնի լավ աշխատանքով: Թերթը ոչ միայն բազմաթիվ սեփական թղթակիցներ ուներ երկրում ու արտասահմանում, այլև համաձայնագրեր էր կնքել եվրոպայի խոշորագույն թերթերի հետ՝ տեղեկատվության փոխանակման մասին: «ՅցրրՍՏպ րսՏՉՏ»-ում տպագրված գովազդից Սիտինը վիթխարի եկամուտներ ուներ (1908 թվականին՝ մոտ մեկ միլիոն ռուբլի), որը հնարավորություն էր տալիս տպագրել նեղ մասնագիտական լսարանին հասցեագրված թերթեր՝ «Դպրոցական տեղեկատու», «Ժողովրդական ուսուցչի համար», «Գյուղի կարիքները» և այլն, որոնք չէին կարող իրենց ծախսերը հատուցել: Նույն սկզբունքով էր գործում նաև Սուվորինի հրատարակչությունը, ուր հրատարակվող «ԾՏՉՏպ ՉՐպվ՝» («Նոր ժամանակ») ամենօրյա թերթն ուներ ամենաբարձր տպաքանակներից մեկը երկրում և շուրջ մեկուկես միլիոն ռուբլու օգուտ էր բերում հրատարակչին:

Ռուսական լրագրության զարգացման հզոր ազդակ դարձավ առաջին համաշխարհային պատերազմը (1914-1917 թվականներ). երկու-երեք անգամ մեծացան համարյա բոլոր հրատարակությունների տպաքանակները, խոշոր քաղաքներում լույս ընծայվեցին նոր թերթեր: 1914 թվականին Ռուսաստանում արդեն կային 431 նոր թերթեր և 411 նոր հանդեսներ ու ամսագրեր:

1917 թվականի փետրվարին զանգվածային կազմակերպված գործադուլը վերաճեց զինված ապստամբության, որն էլ, ըստ էության, հասավ իր գերնպատակին՝ ցարական իշխանության տապալմանը: Իշխանությունն անցավ ժամանակավոր կառավարությանը, որի կազմում էին բուրժուական մի շարք կազմակերպությունների ներկայացուցիչներ: Միապետական մամուլը փակվեց: Լույս տեսավ նոր իշխանության նոր պաշտոնաթերթը՝ «ԹպրՅվՐՍ ՉՐպվպվՍՅՏ տՐՈՉՈՑպսՖրՅՉՈ» («Ժամանակավոր կառավարության լրատուն»):

Փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխությունը Ռուսաստանի զարգացման նոր փուլի սկիզբն էր՝ երկիրը մի կարճ ժամանակ դարձավ աշխարհում ամենաազատ երկրներից մեկը: Մարտի 5-ին կառավարությունը հայտարարեց խոսքի, տպագրության, միությունների, ժողովների ու գործադուլների ազատության մասին: Ապրիլի 26-ին ընդունվեց մամուլի մասին օրենքը, որը վերացրեց գրաքննությունը և մամուլի գործերին վարչական միջամտությունը: Քաղաքական բոլոր ուժերը սեփա-

կան մամուլ ունենալու իրավունք ստացան: Մեծացավ հասարակական-քաղաքական բոլոր թերթերի տպաքանակը՝ «ՅցրրՍՏպրսՏՏ»-ն 1200000 տպաքանակ ուներ: 1917 թվականին 4000 անուն թերթ, ամսագիր ու հանդես էր տպագրվում:

Ռուսական թերթերն ու ամսագրերը հիմնականում հիացմունքով ընդունեցին փետրվարյան հեղափոխությունը՝ բացառությամբ բոլշևիկյան մամուլի, որը նոր իշխանության նկատմամբ առաջին իսկ օրից ընդդիմադիր կեցվածք որդեգրեց: Բոլշևիկյան պարբերականները զինվորներին, բանվորներին ու գյուղացիներին կոչ էին անում պայքարել ժամանակավոր կառավարության դեմ՝ իշխանությունը խորհուրդներին հանձնելու համար: Բոլշևիկների ակտիվ հակապատերազմական քարոզչությունը հատկապես հաջողություն ուներ բանակում՝ խրամատներում զինվորները հրաժարվում էին հրամաններ կատարել ու լքում էին դիրքերը:

Կադետների մամուլը, որոնք ժամանակավոր կառավարության իշխանության օրոք կառավարող կուսակցություն էին համարվում, պահանջում էր անհապաղ ձերբակալել Լենինին ու նրա կողմնակիցներին, փետրվարյան հեղափոխությունից հետո վերացված մահապատիժը վերականգնել բանակում՝ կանխելու համար մասսայական դասալքությունը: Ժամանակավոր կառավարությունը ընդդիմադիր մամուլի նկատմամբ հարկադրված եղավ կոշտ քայլերի դիմել՝ հուլիսի 12-ին փակվեցին բոլշևիկյան «Պրավդա», «Զինվորական պրավդա», «Խրամատների պրավդա» թերթերը: Բոլոր թերթերը ողջունեցին բոլշևիկների առաջնորդների ձերբակալությունները՝ «Խոսքը» բացահայտ գոհունակությամբ գրում էր. **«Բոլշևիզմը մեռավ, այսպես ասած, հանկարծամահ եղավ»:** Ցավոք, դրանք միայն պատրանքներ էին: Երկրում բռնապետության հաստատման սպառնալիքը, ռազմաճակատի ծանրագույն վիճակը հանգեցրին ժամանակավոր կառավարության հեղինակության անկմանը: Առավել արմատական հեղափոխական գաղափարները, դրսի ուժերի ակտիվ աջակցությամբ, մեծ թվով կողմնակիցներ էին ձեռք բերում. 1917 թվականի աշնանը ՌՍԴ(բ)Կ-ն արդեն 24000 անդամ ուներ: Հոկտեմբերի 25-ի հեղաշրջման նախօրեին բոլշևիկյան անլեգալ տպագրվող մամուլը (75 թերթեր) զինված ապստամբության կոչ էին անում:

1917 թվականի հոկտեմբերի 25-26-ի զինված հեղաշրջումից ու ժամանակավոր կառավարության պաշտոնանկությունից հետո մամուլը բաժանվեց երկու մասի՝ բոլշևիկյան և նրանց ընդդի-

մադիր: Լենինի գլխավորությամբ բուլշևիկները դարձան իշխանության կուսակցություն: Նրանց առաջին քայլերից մեկը կուսակցական-սովետական մամուլի ստեղծումն էր և այդ մամուլի ճնշմամբ անցանկալի մամուլի ասպարեզից հեռացումը: Իշխանության գրավման հաջորդ օրը ժամանակավոր հեղափոխական կոմիտեի կարգադրությամբ փակվեցին առավել ազդեցիկ 10 թերթերը, այդ թվում՝ «Ռուսական խոսքը», «Նոր ժամանակը», «Խոսքը», «Կոպեկը», «Բորսայական տեղեկագրերը», «Ռուսական ազատությունը»: Նրանց հրատարակչություններն ու տպարանները պետականացվեցին: Մինչև 1918 թվականի հունիսի 30-ը պետականացվեց ու ազգայնացվեց 150 հրատարակչատուն:

Սովետական իշխանության մամուլի վերաբերյալ առաջին օրենսդրական ակտը ժողովրդական կոմիսարների խորհրդի հոկտեմբերի 27-ին ընդունած Մամուլի մասին դեկրետն էր, որն օրինականացնում էր հակահեղափոխականների դեմ ուղղված միջոցառումները: Դեկրետում նաև նշված էր, որ հենց նոր կարգերը ամրապնդվեն, մամուլի վրա վարչական ներգործության միջոցները կդադարեցվեն, կհաստատվի լիակատար ազատություն դատարանի առաջ պատասխանատվության սահմաններում՝ համաձայն այդ առումով ամենաառաջադեմ ու ամենաազատ օրենքի: Այնուհանդերձ, մինչև 1991 թվականը վարչական միջամտությունները, այլակարծության դեմ պայքարը մնացին որպես սովետական լրագրության հետ կոմունիստական կուսակցության աշխատանքի հիմնական ձևերը:

Բուրժուական ու ընդդիմադիր հրատարակությունները միաձայն հանդես եկան մամուլի մասին դեկրետի քննադատությամբ:

1917 թվականի նոյեմբերին Սովնարկոմը «Չայտարարությունների պետական մոնոպոլիա սահմանելու մասին» դեկրետ ընդունեց, որի նպատակն էր ընդդիմադիր մամուլը սնանկացնել՝ զրկելով հայտարարություններից ու գովազդից ստացվող ֆինանսական միջոցներից:

Եթե 1918 թվականի տարեսկզբին 154 պարբերականներ դեռ արտացոլում էին մենշևիկների, էսէռների, անարխիստների և այլոց հայացքները, ապա սեպտեմբերի սկզբին մնացել էին 50-ը, տարեվերջին՝ մի քանիսը միայն: 1917 թվականի հոկտեմբերից մինչև 1918 թվականի հունիսը իշխանությունները փակեցին 470 պարբերականներ:

Ազատ խոսքին փոխարինելու էր գալիս կուսակցական-սովետական մամուլը, որն ինքնին միանգամայն նոր երևույթ էր ժողովրդականության համար, որն այլևս չէր կարող լինել հանրապետականության անկասկածելի ապացույց։

1917 թվականի վերջից սկսվում է տեղական և ազգային-կուսակցական մամուլի բուռն զարգացումը։ 1918 թվականի սկզբին Սովետական Ռուսաստանի տարածքում տպագրվում էին կուսակցական ու տեղական խորհուրդների օրգանները՝ 884 թերթեր և 753 ամսագրեր։ Ակտիվացել էին և ազգային պարբերականները՝ հանրապետական, նահանգային, քաղաքային։ 1918 թվականի կեսին ազգային 40 թերթեր էին տպագրվում մի մասը Ռուսաստանում ապրող ժողովուրդների ազգային լեզուներով։

Լեճիկը նոր լրագրությունը նախևառաջ համարում էր «սոցիալիստական շինարարության գործիք», «բնակչության տնտեսական դաստիարակության օրգան», այլ ոչ թե «քաղաքական նորությունների հաղորդման» սովորական միջոց։

Երիտասարդական մամուլը հիմնականում ներկայանում էր ամսագրերով։ Ռուսաստանի կոմունիստական երիտասարդական միության ստեղծումից հետո (1918 թվական, հոկտեմբեր) երիտասարդական մամուլի ցանցը շատ արագ տարածվեց. 1918 թվականին՝ 23, 1919 թվականին՝ 115, 1920 թվականին՝ 346 պարբերական։

Սովետական մամուլին տեղեկատվական նյութերի կենտրոնացված տրամադրման նպատակով 1918 թվականի սեպտեմբերին կազմակերպվեց Ռուսաստանի հեռագրական գործակալությունը (ՅԿԻՉԸ) իր ստորաբաժանումներով, 1920 թվականի մայիսին գործում էին 68 նահանգային և շրջանային, 50 մարզային և 500 տեղական թղթակցական կետեր։

Սպիտակգվարդիական մամուլը ինչ-որ չափով մնան էր կուսակցական-սովետականին, հաճախ համընկնում էին նաև հակամարտող կողմերի գործունեության մեթոդները։ Սպիտակ շարժման գաղափարները քարոզում էին նրանց պաշտոնաթերթերը՝ «Ազատ Կուբան», «Ստավրոպոլյան նահանգային տեղեկագրեր», «Դոնի լրատու»։ «Յյուսիսային շրջանի գլխավոր կառավարման տեղեկագիր», «Ազատ Ռուսաստան», «Գերագույն շրջանի տեղեկատու»։ Սպիտակ բանակն ուներ նաև լավ զարգացած բանակային մամուլ (բանակի, գնդի, կայազորի մակար-

դակներով): Տպագրվում էին թերթեր՝ հակառակորդ բանակի զինվորների համար, ճակատամերձ շրջանների բնակիչների համար տպագրվում էին առանձին թերթեր, թուլցիկներ, գրքույկներ, պլակատներ:

Սպիտակգվարդիական քարոզչությունը, բնականաբար, օգտագործում էր հայտնի բոլոր մեթոդները՝ օրինակ, թուլցիկների, կոչերի հրատարակումը սովետական իշխանության անունից: Նման մի դեպքի մասին նշվում է 11-րդ բանակի հեղափոխական կոմիտեի շրջաբերական հեռագրում 1918 թվականի վերջին: Բանակի բոլոր ստորաբաժանումներին տեղեկացվում էր, որ **«Դեմիկիմյան կադետները տպագրում են «Կարմիր բանվոր» սադրիչ թերթը, որի վերնագիրն ու խորագիրը 11-րդ բանակի հեղկոմի տպագրած «Կարմիր բանվորի» ճշգրիտ կրկնությունն են»:**

Սպիտակ շարժման պարտությունից հետո՝ քաղաքացիական պատերազմի ավարտով սպիտակգվարդիական մամուլը դադարեց գոյություն ունենալ: Որոշ պարբերականներ վերահրատարակվեցին արտասահմանում՝ դառնալով տարագիր մամուլի մաս:

1918 թվականի կեսին Սովետական Ռուսաստանում հաստատվեց միակուսակցական քաղաքական համակարգ և 20-ական թվականներին ամբողջությամբ վերացվեցին կոմունիստական կուսակցության հետ կապ չունեցող քաղաքական ու հասարակական կազմակերպությունների պարբերականները: Լրագրողների բազմամարդ ջոկատը ներկայացնում էր միայն կոմունիստական-կուսակցական մամուլը: Նոր ձևավորված հասարակական կազմակերպությունների՝ կոմերիտմիության, արիմիությունների, նույնիսկ գիտատեխնիկական հրատարակությունները քաղաքականացված էին:

Կուսակցության 12-րդ համագումարի բանաձևում որոշարկվեց մամուլի տարաբաժանման սկզբունքը. **«Ընթերցողների ամեն մի հիմնական շերտի համար ստեղծել թերթի հատուկ տեսակ: Ունենալով թերթերի համակարգ՝ կուսակցությունը պետք է առավել կամ պակաս ճշգրիտ տեղաբաշխի նրանց գործունեության ոլորտը, որպեսզի յուրաքանչյուր թերթ կողմնորոշվի գերազանցապես ընթերցողների որոշակի զանգվածի ուղղությամբ»:**

1921 թվականին երկրում տպագրվում էր 856 հանդես: 1925 թվականին՝ 1612: Տպաքանակը՝ 150 միլիոն: Ամսագրերը և

հանդեսները ամենատարբեր բնույթի էին՝ տեսական («Պրոլետարական հեղափոխություն», «Բուլշևիկ», «Մարքսիզմի դրոշի ներքո»), գրական-գեղարվեստական և հասարակական-քաղաքական («Երիտասարդ գվարդիա», «Զվեզդա», «Նոր աշխարհ»), ընտանեկան ընթերցանության («Օգոնյոկ»), կանանց («Կրեստ-յանկա»), մանկական («Մուրզիկա»), երգիծական («Կրոկոդիլ»):

1922 թվականին ստեղծվեց Գլավլիտը. դրա հիմնական խնդիր հռչակվեց պետական գաղտնիքի պահպանությունը, սակայն փաստացի այլակարծության դեմ պայքարը դարձավ Գլավլիտի հիմնական գործը և իրականում էլ այն հենց քաղաքական գրաքննության օրգան էր:

Եթե 1925 թվականին Ռուսաստանում տպագրվում էին 1120 թերթեր (8,1 միլիոն մեկանգամյա տպաքանակով), առաջին հնգամյակի ավարտին (1932 թվական) նրանց թիվը հասավ 7500-ի (35,5 միլիոն տպաքանակով): Երկրորդ ու երրորդ հնգամյակներում մամուլի զարգացումը շարունակվեց, բայց ոչ այդքան մեծ ծավալներով. 1940 թվականին տպագրվում էին 8800 թերթեր՝ 38 միլիոն տպաքանակով (կենտրոնական թերթերի տպաքանակը 8,7 միլիոն էր):

Պարբերականների թիվը մեծացավ ֆաբրիկաների ու գործարանների թերթերի հաշվին, որոնք ի հայտ եկան արդյունաբերական խոշոր ձեռնարկությունների շինարարության ու գործարկման արդյունքում:

Գյուղատնտեսության կուլեկտիվացումը հանգեցրեց կոլտոզային ու սովխոզային մամուլի զարգացմանը: Ստեղծվեցին շրջանային թերթերը (1928 թվականին՝ 46, 1932 թվականին՝ 1918):

Զարգանում էին նաև գիտական ամսագրերը, որոնց հրատարակիչը հիմնականում Գիտությունների ակադեմիան էր:

1940 թվականին տպագրվում էր 1800 ամսագիր ու հանդես՝ 250 միլիոն տպաքանակով:

Զանգվածային ինքնակառավարման ձևերից մեկը դարձել էր բանվոր ու գյուղացի թղթակիցների շարժումը:

20-30-ական թվականներին Ռուսաստանում լրագրությունը զարգանում էր համաշխարհային գործընթացներից մեկուսացած: Երկիրն ու մամուլը գնում էին «սեփական ճանապարհով», որի նպատակը կոմունիզմի կառուցումն էր:

Կոմունիստական կուսակցությունը ստեղծեց զանգվածային լրատվամիջոցների համակարգ՝ իրականացնելով կազմակերպական մեկ սկզբունք՝ հասարակության քաղաքական կազմակերպման ինստիտուտի յուրաքանչյուր առանձին օղակ պետք է ունենա իր մամուլը: Միասնական նույնականացված մոդելը հնարավոր դարձրեց լրագրությունը ծառայեցնել սովետական վարչակարգին՝ ընդհուպ մինչև 1991 թվականը:

Պատերազմական ժամանակի առաջադրած նոր խնդիրները զգալիորեն փոխեցին մամուլի համակարգը: Նկատելիորեն կրճատվեց քաղաքացիական մամուլը: Եթե մինչև պատերազմը հրատարակվում էին 39 կենտրոնական թերթեր, ապա պատերազմի ժամանակ՝ ընդամենը 18: Հասարակական-քաղաքական պարբերականները կրճատում էին նաեւ ծավալներն ու տպաքանակները՝ «Պրավդան» վեցից անցավ չորս էջի, հանրապետական, մարզային, շրջանային թերթերը սկսեցին տպագրվել երկուական էջով, շրջանային թերթերը շաբաթական մեկ անգամ էին լույս տեսնում:

1941 թվականի հունիսի 24-ին ընդունվեց կուսակցության կենտկոմի և կառավարության համատեղ որոշումը՝ «Սովետական ինֆորմացիոն բյուրոյի ստեղծման մասին», որտեղ նշվում էին հիմնական խնդիրները՝ *«ա.Սովետական Միության ներքին կյանքի և միջազգային իրադարձությունների մամուլում և ռադիոյով լուսաբանման ղեկավարություն, բ.գերմանական և այլ թշնամական քարոզչության դեմ հակաքարոզչության կազմակերպում, գ.իրադարձությունների և ռազմական գործողությունների լուսաբանում, Գլխավոր հրամանատարության նյութերով ռազմական տեղեկագրերի կազմում և հրապարակում»*: Խնդիրների շարադրման հաջորդականությունը վկայում է, որ ղեկավարությանն առաջին հերթին անհանգստացնում էր ամբողջ տեղեկատվության վերահսկելիության հարցը:

Պատերազմի առաջին օրերից ռազմական հրատարակությունների լայն ցանց ստեղծվեց: Բոլոր պարբերականների և անգամ բոլոր հրապարակումների կարգախոսը մեկն էր. «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ՝ հանուն հաղթանակի»: Ակնհայտ է, թե ինչպես է իրեն պահում մամուլը և քարոզչամեքենան ընդհանրապես պատերազմի ժամանակ, եթե հավելենք սովետական կուսակցական ապարատի վերահսկողությունն ու ուղղորդումը ևս, ապա միանգամայն պարզ կդառնա Հայրենա-

կան Մեծ պատերազմի ընթացքում սովետական մամուլի ընդհանրական և սկզբունքային տարապատկերը:

Այստեղ միանգամայն տեղին է հիշեցնել Օտտո Բիսմարկի հանրահայտ աֆորիզմը. **«Երբեք այնքան չեն ստում, ինչպես ընտրություններից առաջ, պատերազմի ժամանակ և որսից հետո»**: Ու, չնայած այդ ամենին, Հայրենական Մեծ պատերազմի ժամանակաշրջանի հրապարակախոսությունը լուրջ, ծանրակշիռ և մնայուն արժեքներ ստեղծեց: Եվ դա պատահական չէր: Իրենց քաղաքական և հայրենասիրական պարտքը թերթերի էջերում էին կատարում սովետական հանրահայտ գրողները՝ Ալեքսեյ Տոլստոյը, Միխայիլ Շոլոխովը, Իլյա Էրենբուրգը, Կոնստանտին Սիմոնովը, Ալեքսանդր Տվարդովսկին, Նիկոլայ Տիխոնովը, Անդրեյ Պլատոնովը, Վասիլի Գրոսմանը, Բորիս Գորբատովը և շատ ու շատ ուրիշներ:

ՄՄԿԿ 20-րդ համագումարից հետո էականորեն փոխվեց սովետական լրագրության թեմատիկան: Նիկիտա Խրուշչովի «Անձի պաշտամունքի և դրա հետևանքների մասին» զեկուցումը հնչեց փակ նիստի ժամանակ և մամուլում չիրապարակվեց, բայց արդեն մի քանի օր անց հայտնվեց «New York Times»-ի, հունիսի 6-ին՝ «Le Monde» էջերում: 20-րդ համագումարում Նիկիտա Խրուշչովի զեկուցումից հետո կոմունիստներին ծանոթացրին դրա բովանդակությանը, «Պրավդան» շարադրեց հիմնական դրույթները: Այդ ամենը վիթխարի արձագանք գտավ երկրում:

Կուսակցական կյանքի փոփոխությունները, ղեկավարման վարչահրամայական մեթոդների հաղթահարումը անմիջականորեն կապվում էին աշխատանքի լեճինյան սկզբունքների ու նորմերի վերականգնման հետ՝ հայտարարվում էր «վերադարձ ակունքներին»:

«Հալոցքի» տարիներին արձանագրվում է հոգեկան վերածնունդ՝ մեծանում է հետաքրքրությունը մարդու ներաշխարհի նկատմամբ, կարևորվում են հոգևոր և ինտելեկտուալ որոնումները: Թերթերի ու ամսագրերի հրապարակումները դառնում են ավելի «մարդկային» ու հոգեբանական: Սակայն, դարձյալ, մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության ելույթների գլխավոր ուղղությունները որոշվում էին կուսակցության առաջադրած խնդիրներով ու նպատակներով: ԽՍՀՄ ղեկավարների տեսակետների փոփոխության հետ փոխվում էր նաև ՁԼՄ-ների բովանդակությունը, այս կան այն խնդրի շուրջ տեսակետները:

Առաջվա նման՝ երկրի քաղաքական ղեկավարությունը քննադատությունից վեր էր, բոլոր տատանումները, չնտածված, կիսատ-հատվածական որոշումներն անդրադառնում էին մարդկանց ճակատագրերի վրա: Այս իրավիճակն էլ ճշմարիտ տեղեկատվության որոնումների և տարածման պահանջարկ էր ստեղծում:

60-ական թվականների վերջի և 70-ական թվականների սկզբի ինքնահրատ (րՈՎՌԶՊՈՑ) ամենավառ դրսևորումներից մեկը «Ընթացիկ իրադարձությունների ժամանակագրությունն» է, որ պատրաստվում էր Մոսկվայում, նաև փոխանցվում էր Արևմուտք և տպագրվում էր Նյու Յորքում, որից հետո նորից բերվում էր ԽՍՀՄ: Ալեքսանդր Սոլժենիցինը «Ընթացիկ իրադարձությունների ժամանակագրության» մասին 1973 թվականին իր մի հարցազրույցում ասում է. **«Մի քանի տարի անձնագրի «Ընթացիկ իրադարձությունների ժամանակագրությունը» հագեցնում էր մարդկային բնական ծարավը՝ իմանալ, թե ինչ է կատարվում: Նա հաղորդում էր, թեպետ ոչ ամբողջական ծավալով, ազգանուններ, թվեր, վայրեր, բանտային ժամկետներ, հալածանքների ձևեր, նա չիմացության հորձանքից մակերես էր հանում մեր սարսափելի պատմության ինչ-որ մասը: Այդ իսկ պատճառով ջախջախվեց և ոտնահարվեց»:**

«Լճացման» տարիների լրագրությանը բնորոշ էր նախևառաջ քանակական աճը (ինչպես սովետական իշխանության հաստատման առաջին տարիներին): 1970 թվականին ԽՍՀՄ-ում 7250 թերթեր էին տպագրվում (նրանց մեկանգամյա տպաքանակը 140 միլիոն էր): 1977 թվականին տպագրվում էին 7985 թերթեր (նրանց մեկանգամյա տպաքանակը 168 միլիոն էր): 1977 թվականին 7000 ամսագրեր էին տպագրվում (3 միլիարդ տարեկան տպաքանակով):

Աշխատելով խիստ սահմանափակումների պայմաններում՝ սովետական հայտնի ժուռնալիստները՝ Ա.Ագրանովսկին, Վ.Պեսկովը, Գ.Ռադովը, Ի.Ռուդենկոն, Յ.Չերնիչենկոն, այլք ստեղծում էին գործեր, որոնք հարուցում էին հասարակական լուրջ արձագանք, պայքարում էին հանուն արդարության:

1985 թվականին հայտարարված վերակառուցումը, ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Միխայիլ Գորբաչովի նախաձեռնած քաղաքական ու սոցիալ-տնտեսական բարեփոխումները վիթխարի ներգործություն ունեցան ԽՍՀՄ-ի պատմական

զարգացման ընթացքի վրա: Սկսվեց հասարակական շարժում միակարծությունից դեպի բազմակարծություն, ամբողջատիրությունից դեպի ժողովրդավարություն անցնելու համար, որն ավարտվեց սրընթաց ճեղքումով և արմատական փոփոխություններով պետության ու մամուլի կյանքի բոլոր էական ոլորտներում:

Երբ 1990 թվականին փոխվեց ԽՍՀՄ Սահմանադրության 6-րդ հոդվածը, որ հաստատում էր ԽՄԿԿ ղեկավար դերը սովետական հասարակության մեջ, ապա նաև ընդունվեց ԽՍՀՄ օրենքը «Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին», մամուլի համակարգում սկսվեցին հիմնարար փոփոխություններ: Վերացավ գրաքննությունը, ներմուծվեց գրանցման, այլ ոչ թե թույլտվության համակարգ ՏՁՏՄ-ների (տեղեկատվության զանգվածային տարածման միջոց) հիմնադրման համար, պարբերականների հրատարակման և ծրագրի ստեղծման իրավունքներն անցան խմբագրակազմերին, տարբեր կազմակերպությունների, անհատ քաղաքացիների: Երկրում մամուլի ազատության համար տեղծվեցին իրավաբանական հիմքեր :

Ռուսաստանում սկսվեց նոր մամուլի զարգացման բուռն շրջանը: 90-ական թվականների սկզբից հայտնվեցին նոր թերթեր՝ «Սեզոդնյա» («Այսօր»), «Նեզավիսիմայա գազետա» («Անկախ թերթ»), «Նովայա էֆեդնեվնայա գազետա» («Նոր ամենօրյա թերթ»), «Դելովոյ միռ» («Գործարար աշխարհ»), «Կոմերսանտ» («Գործարար») և այլն: «Օբշչայա գազետան» («Ընդհանուր թերթը») սկսեց լույս ընծայվել երկրի կյանքի դրամատիկական իրադարձություններից հետո՝ 1991 թվականի օգոստոսից: Պուտչի հաջորդ օրը: Օգոստոսի 19-ին լույս տեսան միայն ԽՄԿԿ Կենտկոմի մի քանի պարբերականներ՝ «Պրավդան», «Իզվեստիան», «Տրուդը», «Կրասնայա զվեզդան»: Պուտչի երկրորդ օրը անկախ 11 թերթերի համատեղ ջանքերով տպագրվեց նոր պարբերական՝ ընդհանուր թերթ, որ ամբողջությամբ նվիրված էր մայրաքաղաքում տեղի ունեցող իրադարձություններին:

1997 թվականին Ռուսաստանում տպագրվում էին 2199 ամսագրեր 327 միլիոն մեկանգամյա ընդհանուր տպաքանակով, շարունակվում էին տպագրվել հայտնի ամսագրերը («Օգոնյոկ», «Նովիյ միր», «Ինոստրաննայա լիտերատուրա», «Կրեստյանկա», «Վեսյոլիե կարտինկի», «Նաուկա ի ժիզն»), թեպետ դրանց տպաքանակները մի քանի անգամ կրճատվել էին:

90-ական թվականների սկզբին Ռուսաստանում սկսեցին տպագրվել ամսագրեր, որոնք մի քանի տասնամյակ տպագրվում էին արտասահմանում և ԽՍՀՄ-ում տարածվում էին անլեզալ (դրանք թվում էին 1945 թվականին հիմնադրված «Պոսևը», 1946 թվականին հիմնադրված գրական-հրապարակախոսական «Գրանին»): Ռուսական շուկա մտան արտասահմանյան խոշոր հրատարակչատները՝ «Ինդեպենդենտ մեդիան» սկսեց հրատարակել «Կոսմոպոլիտանը», «Ընտանեկան օջախը», «Ցուցափեղկը», «Փլեյբոյը», «Հարպերս բազարսը»: «Բուրդան» դեռևս վերականգնման ժամանակ էր սկսել Ռուսաստանում աշխատել և «Բուրդա մոդենն» ու «Լիզան» հաստատուն դիրքեր ունեին կանանց հասցեագրված ամսագրերի ցանկում:

Ի տարբերություն ռուսական մամուլի, որ սկզբում «քանակական», ապա և՛ միայն գաղափարական քայլերով էր առաջ ընթանում, Արևմուտքում մամուլը 20-րդ դարում տևական որակական վերափոխումներ ապրեց, և նրա պատմությանն այլևս բնորոշ էին ոչ թե «քանակական» զարգացումները, այլ, ըստ էության, այնպիսի փոփոխությունները, որոնցից շատերն էլ հենց բնորոշում էին համաշխարհային մամուլի կայացման ու զարգացման գործընթացները, մեծապես պայմանավորելով ինչպես դրանք, այնպես էլ ընդհանրապես համաշխարհային զարգացման միտումներն ու ինքնին այդ զարգացումը և:

Բոլորովին այլ, սկզբունքորեն տարբեր ճանապարհներով էր զարգանում Եվրոպայի և ԱՄՆ-ի մամուլը: Եթե վերջինս գնում էր նորարությունների ու հայտնագործությունների ճանապարհով, ապա առաջինն ավելի շատ խորքային զարգացումներ էր արձանագրում, իր հետ միասին փորձելով վերափոխել նաև հասարակությունը:

Ի դեպ, ի տարբերություն նախորդ դարերի՝ երկու համաշխարհային պատերազմները աշխարհի առաջատար երկրներին պարտադրեցին համարյա «նույն» պատմությունը, զարգացման գրեթե նույն օրինաչափությունները, դրանով իսկ՝ տարբեր առումներով, զարգացման գրեթե համահունչ չափանիշներ:

Սակայն, ի տարբերություն Ռուսաստանի, որտեղ դարասկիզբը բնորոշվում էր հեղափոխական տրամադրությունների ձևավորմամբ և անձնավորմամբ, Ամերիկայի և Եվրոպայի դարասկիզբը ավելի շատ տնտեսական կայունության ու զարգացման պատմություն է հիշեցնում: Դրան անհրաժեշտ է հավելել

նաև մարդկանց հարաճուն հոգևոր պահանջմունքների ոչ միայն դրսևորումները, այլև դրանց բավարարման ուղիների որոնումը:

19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին պարբերական մամուլը սկսեց զանգվածային լսարան ձեռք բերել, սկսվեց նաև նրա կայացումը իբրև սոցիալական ինստիտուտի: Դա հնարավոր դարձավ մի շարք գործոնների ազդեցությամբ. ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ հոգևոր, կրթական և տեխնիկատնտեսական:

Կապիտալիզմը ազատ շուկայական հարաբերություններ էր ենթադրում և մրցակցություն, ապրանքների և ծառայությունների կտրուկ աճ ու դրանց իրացման նորանոր շուկաների որոնում, անհրաժեշտ և համապատասխան կրթություն, նոր տեխնիկական և տեխնոլոգիական հնարավորություններ՝ տպագրական, ռադիո, հեռուստատեսային, որոնք ոչ միայն զարգացման բարձր տեմպեր ապահովեցին տեղեկատվամիջոցների համար, այլև, ամենակարևորը՝ ձևավորեցին անհրաժեշտ և կայուն պահանջարկ, որն ինքնին խթան է՝ ապահովելու և երաշխավորելու համար հանրության զարգացումները:

Դարասկզբի և ընդհանրապես 20-րդ դարի մամուլի զարգացմանն էապես նպաստել են բազմաթիվ գործոններ, որոնց համալիրն էլ, ի վերջո, ապահովեց նրանց աննախադեպ զարգացումն ու ազդեցության տարածումը միլիոնավոր մարդկանց վրա:

Ֆրանսիայում օրաթերթերի թիվը 28-ից (1865 թվական) 20-րդ դարասկզբին դարձավ 471, Անգլիայում 14-ից (1846 թվականին)՝ 247: ԱՄՆ-ում դարասկզբին հրատարակվում էին 200 օրաթերթեր, քաղաքներում՝ տպագրվում էին մեկ կամ երկու օրաթերթեր: Գերմանիայում այդ ժամանակ լույս էին ընծայվում 7000 տարբեր պարբերականներ:

1910 թվականին ԱՄՆ-ում տպագրվում էին արդեն 2600 օրաթերթեր. դրանց տպագրությունը հասավ գագաթնակետին և սկսեց նվազել: Դետագա 20 տարում երկրի բնակչությունն ավելացավ 30 միլիոնով, ուրբանիզացիայի հետևանքով կրկնապատկվեց մեծ ու միջին քաղաքների թիվը: Սակայն օրաթերթերի թիվը կրճատվեց մինչև 1942-ի: Նյու Յորքում, օրինակ, 1912-1925 թվականներին օրաթերթերի թիվը 14-ից նվազեց մինչև 9-ի:

Մամուլի զանգվածային լսարանի ձևավորմանը նպաստեց պատկերազարդ հրատարակությունների աճը: 1850-ական թվա-

կաններին Անգլիայում հայտնագործված կիսատոնային կլիշե-
ների տեխնոլոգիան երկար ժամանակ կատարելագործվում էր:
Այդ տեխնիկան հնարավոր դարձրեց արագ և որակյալ թերթային
կլիշեների պատրաստումը, ընդ որում՝ կիսատոնային կլիշեն 10-
15 անգամ էժան էր նույն չափի ձեռքով փորագրությունից. դա էլ
իր հերթին նպաստեց հրատարակությունների էժանացմանը:

Մեծացավ պատկերազարդ պարբերականների թիվը: Լու-
սանկարիչները փոխարինեցին նկարիչներին, որոնց մինչ այդ
խոշոր պարբերականները գործուղում էին իրադարձությունների
վայրեր:

1910 թվականից հետո տարածվեց բազմագույն հանդեսների
տպագրության տեխնոլոգիան, որը թույլ տվեց բարձրացնել
նկարազարդումների որակը:

Այստեղ, կարծում ենք, արժե նշել նաև ամերիկացիներին բնո-
րոշ որոշ հիմնական հոգեբանական առանձնահատկություննե-
րը, որոնք ավելի ընկալելի և հիմնավորված կդարձնեն նաև հե-
տագա շարադրանքը՝ արդեն բուն տեղեկատվամիջոցներին
նվիրված:

ԱՄՆ-ը էթնիկ առումով աշխարհի ամենախայտաբղետ երկր-
ներից է: Բնականաբար, այդ գործոնն իր ազդեցությունն է թողել
նրա բնակիչների բնավորության վրա: Ամերիկացիները, անկաս-
կած, ժառանգել են առաջին վերաբնակիչների լավագույն հատ-
կանիչները՝ եռանդը, լավատեսությունը, անկախությունը, նա-
խաձեռնողականությունը, աշխատասիրությունը: Ամերիկացինե-
րը մեծ հայրենասերներ են: Նրանք հարգում են իրենց զինանշա-
նը, դրոշը, հիմնը: Եթե երկրում քաղաքական հակամարտություն
է ծագում, ամերիկացիները գնում են իրենց ազգային դրոշը և
կախում ոչ միայն տան մուտքին, այլև տանը՝ արտահայտելով
իրենց աջակցությունը նախագահին ու կառավարությանը:

Ամերիկացիները բնավորությամբ ինքնուրույն են ու անկախ:
Վաղ մանկությունից նրանք սովորում են ամուր կանգնել սեփա-
կան ոտքերին՝ հույսները դնելով միայն իրենց ուժերի վրա:
Նրանք չեն սիրում սնապարծությունը, նախընտրում են ամենօր-
յա հարմարավետ հագուստը, միմյանց դիմում են պարզ, ոչ պաշ-
տոնական՝ նույնիսկ եթե զրուցակիցների մեջ տարիքային ու հա-
սարակական դիրքի մեծ տարբերություն կա: Թեպետ նրանց
պահվածքը միանգամայն բնական է (իրենց տեսակետից), կող-
քից նայողին կարող է թվալ հավակնոտ ու պարտադրող:

Ամերիկացիների մեծամասնության համար ուղիղ, անկեղծ խոսակցությունը ազնվության ու վստահության նշան է, ակնարկներով խոսակցությունը գնահատվում է իբրև անազնվության ու անվստահության դրսևորում: Նրանք սովոր են ենթակայներին տալ ուղղակի հրամաններ, ոչ ուղղակի հրահանգները գնահատվում են իբրև հնարավոր բացասական արդյունքների դեպքում պատասխանատվությունից խուսափելու փորձ:

Այլ ժողովուրդներից ամերիկացիների գլխավոր տարբերություններից մեկը հասարակության ներփակվածությունն է: Նրանք կենտրոնացած են հիմնականում իրենց երկրի կյանքի վրա, այլ ժողովուրդները նրանց գործնականում չեն հետաքրքրում: Ունեն սեփական «տեղական» կուռքերը՝ բասկետբոլիստներ, բեյսբոլիստներ, գոլֆիստներ, ռեգբիստներ, լրագրողներ, գրողներ, դերասաններ: Ցանկացած օտարերկրացի ամերիկացիների մասին ավելին գիտի, քան ամերիկացին որևէ այլ երկրի մասին: Թերևս դրա պատճառը ամերիկացիների գիտակցության մեջ ամրակայված մտայնությունն է, որ ամենակարևոր, ամենահիրաշալի, ամենահետաքրքիր իրադարձությունները տեղի են ունենում հենց իրենց երկրում: Ամերիկացիներն օրինապահ ժողովուրդ են՝ նրանք հարգում են իշխանություններին ու օրենքները:

Սա, այսպես ասած, փակագծի մեջ: Այժմ կրկին վերադառնանք ամերիկյան մամուլին:

Ինդուստրիալ հեղափոխության սոցիալ-տնտեսական հետևանքների և հրատարակչական գործի արդյունաբերացման ազդեցությամբ ձևավորվեց «մասսայական մամուլը»՝ իր բնորոշ գծերով. սենսացիաներ, իրադարձությունների մակերեսային լուսաբանում, փաստերի աղավաղում, անտակտ ներխուժումներ մարդկանց անձնական կյանքը, զվարճանքների շեշտադրում:

Ձանգվածային հրատարակությունների դասական օրինակ դարձան Ջորջ Պուլիտցերի «New York World» և Ուիլյամ Յերստի «New York Journal» թերթերը, որոնք հասցեագրված էին ցածր կրթական ու մշակութային մակարդակ ունեցող ընթերցողներին: Լսարանի ինտելեկտուալ ու մշակութային զարգացմանը նպաստելու փոխարեն, նրանք իջնում էին չզարգացած և ոչ ինտելեկտուալ զանգվածի նախապաշարումների ու բնագրային դրսևորումների աստիճանին:

Պուլիտցերը և Յերստը ընթերցողներ ներգրավելու համար խայտաբղետ էին ձևավորում թերթերը: «New York World» և «New York Journal» թերթերում տպագրվող «դեղին տղա» կոմիկսները դարձան համանման հրատարակությունների խորհրդանիշ՝ «ապահովելով» նրանց «դեղին մամուլ» անվանումը:

Իսկ «որակյալ մամուլը» շարունակեց էլիտար մամուլի ավանդույթները մի շրջանում, երբ մամուլը դառնում էր տեղեկությունների զանգվածային տարածման միջոց: Երկար ժամանակ որակյալ մամուլի օրինակ էր Լոնդոնում տպագրվող «The Times»-ը, որը հասցեագրված էր պետական ու քաղաքական էլիտային, բիզնեսմեներին, մտավորականներին: Սակայն շուկայական հարաբերությունների զարգացման, տնտեսական մեխանիզմների և տնտեսության կառավարման համակարգի բարդացման հետևանքով ծագեց այնպիսի թերթերի անհրաժեշտությունը, որոնք ուղղված էին որոշակի լսարանի, որը ներառում էր ֆինանսական շրջանակներ, սակարաններ, արդյունաբերողներ, բանկային ու ապահովագրական բիզնեսի կառավարիչներ: Յենց այդ մարդկանց էր ուղղված 1888 թվականին Լոնդոնում հիմնված «Financial Times» թերթը, որ մասնագիտացած էր ֆինանսատնտեսական հարցերի լուսաբանման ուղղությամբ և սերտ կապեր ուներ լոնդոնյան Սիթիի գործարար շրջանակների հետ: 1889 թվականին Նյու Յորքում Դուուի և Ջոնսի ղեկավարությամբ ստեղծվեց համանման թերթ՝ «Wall Street Journal», որը տեղեկատվության հուսալի աղբյուր դարձավ ամերիկացի ֆինանսիստների և կառավարիչների համար:

ԱՄՆ-ի քաղաքական ու գործարար շրջանակները կարիք ունեին մամուլի լավ տեղեկացված և ազդեցիկ օրգանի՝ անգլիական «The Times»-ի նման, որը ոչ միայն լուսաբաներ տնտեսությանն ու ֆինանսներին առնչվող հարցերը, այլև ընթերցողներին զինեց անաչառ ու լիակատար տեղեկատվությամբ՝ ներքին ու արտաքին քաղաքականության, հասարակական ու մշակութային կյանքին վերաբերող: Նման տեղեկատվությունն անհրաժեշտություն էր՝ անվերջ փոփոխվող իրավիճակում կողմնորոշվելու և սեփական կառավարչական որոշումներն ու վճիռները կայացնելու համար: Գավառական փառասեր հրատարակիչ Ա. Օքսը, որ զգացել էր այդ պահանջը, 1896 թվականին գնեց «New York Times» թերթը, որպեսզի վերածի կառավարությունից անկախ լրատվամիջոցի՝ երկրում և արտասահմանում տեղի ունեցող

իրադարձությունների մասին հիմնավոր, անաչառ տեղեկատվություն և ապահովելու համար:

«New York Times»-ի ծրագրային հայտարարության մեջ Օքսը ընդգծեց, որ թերթը կառաջարկի տպագրության արժանի բոլոր նորությունները և դրանք կշարադրի միանգամայն անաչառ. **«Չաշվի չառնելով ոչ կուսակցություններին, ոչ աղանդներին, ոչ որևէ այլ խմբի»:** Հրատարակության հիմնարար սկզբունքներից մեկը հայտարարվեց նորությունների և նրանց մեկնաբանությունների հստակ տարաբաժանումը:

Մեր օրերում էլ «New York Times»-ը մնում է միջազգային իրադարձություններին գերարագ արձագանքող թերթերից մեկը:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ամերիկյան թերթերի տեղեկատվության հիմնական մասը ռեպորտյորների օպերատիվ հաղորդագրություններն էին: Շոտլանդացի հրատարակիչներից մեկը, որը 1887 թվականին այցելել էր ԱՄՆ, գրում է. **«Անգլիայում մամուլը պատկանում է ականավոր հրապարակախոսներին, իսկ ամերիկյան մամուլը ռեպորտյորներին է»:** Հենց սա էլ, ըստ էության, տարբերակում էր եվրոպական մամուլն ամերիկյանից:

Լրագրության զարգացումը նպաստեց ռեպորտաժի տարբեր ոճերի ի հայտ գալուն: 20-ական թվականներին «Թայմսի» խմբագրական հայեցակարգի ներգործությամբ տեղի ունեցավ ռեպորտաժի ժանրի փոփոխություն. ռեպորտաժը դարձավ առավել սուբյեկտիվ, ոճով ու կառուցվածքով առավել ազատ:

19-րդ դարում հարցազրույցի ժանրը ժուռնալիստիկայում քիչ էր տարածված: Լրագրողները զրուցում էին քաղաքական գործիչների, դիվանագետների հետ՝ տեղեկություններ ստանալու նպատակով, բայց հազվադեպ էին հղում կատարում տեղեկատվության աղբյուրին՝ սահմանափակվելով զրույցի էության փոխանցմամբ: Նախագահ Աբրահամ Լինքոլնը, օրինակ, լրագրողների հետ մտերմիկ զրույցներ էր վարում, պատասխանում էր նրանց հարցերին: Բայց հարցազրույցի ձևով կառուցված լրագրական հրապարակումներ չէին լինում՝ նախագահի խոսքին հղումներ կամ մեջբերումներ չէին արվում:

Բրիտանացի նշանավոր լրագրող Ուիլյամ Ստիդը 1902 թվականին հարցազրույցն անվանեց «ամերիկյան հայտնագործություն»: Նա էր Անգլիա ուղարկում առաջին հարցազրույցները՝ ամերիկյան մամուլի փորձից օգտվելով: Հետագայում նույն

անգլիացիները խոստովանեցին, որ 1900 թվականից հետո իրենք ընդունեցին և համակերպվեցին հարցազրույցի ժանրին: Լրագրության գերմանացի տեսաբան Է. Դովիֆատը 1927 թվականին գիրք էր գրել ԱՄՆ-ի լրագրության մասին և հարցազրույցը որակում էր իբրև զուտ ամերիկյան նորամուծություն:

Նախկինում լրագրողը դիմազրկված էր և նույնանում էր թերթի հետ, իսկ հարցազրույց վարող լրագրողը ձեռք էր բերում ինքնուրույն դեմք և դառնում էր հասարակական կարևորության անձ: Ինտելեկտը, հեզմանքը, սարկազմը, հարցազրույցի հմտությունը, գրուցակցից տեղեկատվություն կորզելու կարողությունը ընթերցողին հարգանք էին ներշնչում լրագրողի նկատմամբ:

Նույն շրջանում ԱՄՆ-ի լրագրության մեջ ձևավորվեց մի ուղղություն, որի ներկայացուցիչներն իրենք իրենց խնդիր էին առաջադրել պայքարը հասարակական արատների դեմ՝ չարաշահումների բացահայտմամբ և դրանց վրա հասարակության ուշադրության բևեռմամբ: Նրանց կարծիքով՝ չարիքի մերկացումը պետք է օգներ մարդկանց՝ հասկանալու չարիքի էությունն ու սկզբնապատճառները, հասարակության մեջ բարեփոխումների նախադրյալներ ստեղծել, որոնք կամայականությունների, խաբեության ու կաշառքի վերջը կտային: Նրանք քննարկում էին արդարության, պատվի իդեալները՝ իբրև սոցիալապես կազմակերպող ուժ: Կրոնական բարոյախոս Բ. Ֆլաուերը իր 1887 թվականին հիմնադրած «Arena» ամսագրում խիստ քննադատում էր հասարակական-տնտեսական հաստատված կարգը: 1901 թվականին տպագրված ծրագրային հոդվածում նա հաստատում էր, որ երկիրը օրավուր հեռանում է իրական ազատության իդեալից, որի վկայությունը հարուստների ու աղքատների միջև խորացող անջրպետն է, կաշառառությունն ու չարաշահումները, իշխանության կախումը պլուտոկրատիայից (հարուստների և փողի գերիշխանությունից):

1906 թվականին ԱՄՆ-ի նախագահ Թեոդոր Ռուզվելտը, ում նյարդայնացում էր պետական ապարատին ուղղված լրագրողների քննադատությունը, նրանց անվանեց մակրեյկերներ, որ նշանակում է աղտեղություն քրքրողներ, կեղտոտ բամբասանքների սիրահարներ:

1902 թվականին Լինքոլն Ստեֆենսը սկսեց հրատարակել «McClure's» հանդեսը, որը դարձավ մաքրեյքերների շարժման առաջատարներից մեկը: Նրա համոզիչ, լավ փաստարկված հոդ-

վածները Սենտ Լուիսի և ԱՄՆ-ի մյուս խոշոր քաղաքների քաղաքային իշխանությունների կաշառակերության և չարաշահումների, պետական կառավարման համակարգի ժողովրդավարացման ու մաքրման անհրաժեշտության մասին, հասարակական մեծ հետաքրքրություն էին հարուցում և դարձան մերկացնող շարքեր՝ «Քաղաքների խայտառակությունը» (1904 թվական), «Պայքար ինքնակառավարման համար» (1906 թվական): 1903 թվականին «McClure's»-ը պարբերաբար հրապարակում էր «ադտեղությունները քրքրող» այլ հեղինակների նյութերը՝ Իդա Տարբելի, որ հետաքննում էր «Ստանդարտ Օյլ Կոմպանիի» անօրինական գործողությունները, Ռեյ Ստենարդ Բեյքերի, որ մերկացնում էր երկաթուղային ընկերությունների կամայականությունները: Այդ հրապարակումների արդյունքում «McClure's»-ի տպաքանակը հասավ կես միլիոնի:

Նորությունների հանրագիտարան համարվող «New York Times» թերթի օրինակով այլ խոշոր թերթերի խմբագրությունները 20-րդ դարասկզբից ստեղծեցին համակարգված արխիվներ և փաստագրական բաժիններ, որոնք նպաստում էին տեղեկատվության հավաքման ու ստուգման կատարելագործմանը: Խմբագրություններում հայտնվում էին մեքենագրական բյուրոներ և հեռախոսային ծառայություններ:

20-րդ դարի սկզբին արդեն խմբագրական աշխատանքը ծրագրված բնույթ էր ստանում: Ծրագրվում էին տեղեկատվական տարբեր կամպանիաների կազմակերպումն ու անցկացումը, նրանց տեխնիկական ու ֆինանսական ապահովումը:

Հենց այդ ժամանակ էլ որոշակիորեն ձևավորվում են թերթերի այսօր արդեն ընդունված տարատեսակները.

Տաբլոիդներ. փոքր (տաբլոիդ) չափի թերթերը հրատարակվում էին նաև 19-րդ դարում: ԱՄՆ-ում սենսացիոն-տաբլոիդային մամուլի զարգացումը համընկավ 1919 թվականին Նյու Յորքում առաջին խոշոր տաբլոիդի՝ Պատերսոնի ու Մակկորմիկի «Illustrated Daily News»-ի ստեղծմանը (հետագայում illustrated-պատկերազարդ բառն անվանումից հանվեց): Տաբլոիդն արագ տարածվեց և դարձավ ամենամեծ տպաքանակն ունեցող թերթը՝ չնայած 1930 թվականի տնտեսական ճգնաժամին, թերթը տպագրվում էր մեկ ու կես միլիոն տպաքանակով:

«Daily News»-ի հաջողությունը լրագրային շուկայում մրցակիցներին դրդեց ուշադիր վերաբերվել տաբլոիդին: 1924 թվա-

կանին Չերստը Նյու Յորքի թերթային շուկա է բերում իր թերթը՝ «Daily Mirror»-ը՝ անգլիական մոդելից յուրացնելով ոչ միայն հրատարակչական մոդելը, այլև անվանումը: Մի քանի ամիս անց տաբլոիդների պայքարին խառնվեց հրատարակիչ Մակֆադենը, որ ընթերցողներին ներկայացրեց նույնատիպ նոր թերթ՝ «Daily Graphic»-ը:

Տաբլոիդների համար սովորական, հնարովի և շինծու լուրերը, ասեկոսենները և սկանդալները սպառողներին գրավելու միջոց էին: **«Ես նրանց տալիս եմ այն, ինչ նրանք պահանջում են»**՝ հայտարարում էր տաբլոիդների հայտնագործող Չարմսուրտը:

Նորությունների ամենշաբաթյա հանդեսներ. 20-րդ դարի 20-30-ական թվականներին ձևավորվեց լրագրային պարբերականների տիպաբանական մի մեծ խումբ՝ նորությունների ամենշաբաթյա հանդեսները: Այդ տեսակի հիմնադիր ու ակնառու ներկայացուցիչ համարվում էր «Time»-ը, որ 1923 թվականին հիմնադրել էին Խ. Լյուսը և Բ. Չադենը:

Ամերիկյան համալսարանների ու քոլեջների շրջանավարտների մեծ մասը 20-ական թվականներին լրացնում էր միջին դասը և ծանրաբեռնված չէր իրենց նեղ մասնագիտությունից դուրս հիմնարար գիտելիքներով: Այդ պատճառով նրանց ուղղված նոր հանդեսը հասցեագրված էր ոչ թե «փորձագետներին», այլ «զբաղված մարդուն»՝ իր բիզնեսով տարված, կրթված միջին ամերիկացուն, ով ժամանակ չունեի կարդալու բազմաթիվ թերթերն ու ամսագրերը՝ գտնելու իրեն հետաքրքրող «առանցքային» տեղեկատվությունը: Պարբերականի երիտասարդ հեղինակները հայտարարում էին, որ չնայած բովանդակալից պարբերականների գերառատությանը ԱՄՆ-ում, «ԱՄՆ-ի ժողովուրդը հիմնականում վատ է տեղեկացված»: Նրանք առաջարկում էին նյութի համակարգված ընտրություն և խիստ կազմակերպում երկու տասնյակ թեմատիկ բաժիններով, որը հնարավորություն էր տալիս ընթերցողին լավ կողմնորոշվել շաբաթվա իրադարձությունների համապատկերում:

Իրադարձությունների մասին տեղեկատվության ընտրությունը կատարվում էր առաջնությունը տալով այն նորություններին, որի մասնակիցները քաղաքականության, բիզնեսի, գվարճանքի ոլորտի «աստղերն» են: Խմբագրությունն աշխատում էր «Անունները նորություններ են ստեղծում» սկզբունքով: Չանդեսի՝ անձ-

նավորման էֆեկտն ուժեղացնող հայտնագործությունը դարձավ «Տարվա մարդու» ընտրությունը՝ ամեն տարի «Time»-ը անվանում էր տարվա նորությունների հերոսին՝ հիմնականում իր հերոսների շարքից:

«Time» հասարակական-քաղաքական պատկերազարդ ամենշաբաթյա հանդեսը 30-ական թվականներին ուներ շատ մեծ պահանջարկ, և դարձավ աշխարհի ամենաբազմաքանակ հանդեսներից մեկը՝ տարածվելով աշխարհի բազմաթիվ երկրներում: Հիմա «Time»-ը տպագրվում է 40 երկրներում, ներառյալ եվրոպական տարբերակը: 1960 թվականին ընդհանուր տպաքանակը 2,5 միլիոն էր, 1970 թվականին 4 միլիոն, 2005-ին հինգ միլիոն:

«Time»-ի տեսակը և խմբագրական հայեցակարգը բազմաթիվ նմանակումներ ունեցան և ԱՄՆ-ում, և արտասահմանում: Տիպաբանական կրկնօրինակ ու նրցակից «Time»-ին դարձավ 1933 թվականին ԱՄՆ-ում հրապարակված «Newsweek»-ը («Շաբաթվա նորություններ»): Այս երկուսի միջև շատ էին ընդհանրությունները՝ ծավալի, ձևավորման, ներքին կառուցվածքի և բովանդակության բաղկացուցիչների առումով:

Գերմանիայում 1947 թվականին «Time»-ի օրինակով ստեղծվեց «Der Spiegel»-ը («Հայելի»): 1948 թվականին արևմտագերմանական նորությունների շուկայում հայտնվեց «Quick»-ը, որ նույնպես հենվում էր ամերիկյան նորությունների լրագրության փորձի վրա: Նույն փորձով ոգևորված Իտալիայում լույս ընծայվեցին «Espresso»-ն և «Tempo»-ն:

Ֆրանսիայում «Time»-ի և «Newsweek»-ի օրինակով ստեղծվեցին մի քանի պարբերականներ: Առաջինը ամերիկյան ոճը յուրացրեց «L' Express»-ը, որ 1953 թվականին ստեղծել էր Ժ.-Ժ.Սերվան-Շրեյբերը: Անդրօվկիանոսյան օրինակին հետևելը հատկապես զգացվեց 1964 թվականին լրագրի վերակազմավորումից հետո: Նույն գաղափարը ոգևորեց նաև «Le Nouvel Observateur» հանդեսի հրատարակիչներին (հանդեսը սկսել էր լույս ընծայվել 1964 թվականին Ժ.Դանիելի գլխավորությամբ):

Թե ամերիկյան, թե արևմտաեվրոպական նորությունների ժամանակակից շաբաթաթերթերի բովանդակության բնութագրական հատկանիշը մեկ առանցքային հատուկ ռեպորտաժի (կամ հոդվածի) առկայությունն է, որը նվիրված է հրատապ նորության կամ կենսական հիմնահարցի՝ քաղաքական, տնտեսական, հասարակական կյանքին վերաբերող:

Ժամանակակից պատկերագրող հրատարակությունները տարածվում են բազմամիլիոն տպաքանակներով և մեծ ծախսեր են պահանջում, բարձրորակ ու թանկ թուղթ, որակյալ գունավոր տպագրություն: Այդուհանդերձ՝ զանգվածային պատկերագրող ամսագրերը գովազդատուներին գրավում են միանգամից բազմամիլիոն լսարանին դիմելու մեծ հնարավորություններով և դարձել են գովազդում ֆինանսական ներդրումների նախընտրելի տարբերակ, ապահովելով հրատարակիչների ընդհանուր շահույթների 80-90 տոկոսը: Գովազդային գործունեության նշանակակից ներհուսքը թույլ է տալիս ոչ միայն ամբողջությամբ մարել տպագրության ու տարածման ծախսերը, այլև ապահովում է հրատարակչական բիզնեսի շահութաբերությունը ու հնարավորություն է տալիս ընթերցողին պարբերականը հասցնել հաճախ նույնիսկ ինքնարժեքից ցածր գնով: «Life»-ի մեկ օրինակը 1938 թվականին, ենթադրենք, վաճառվում էր 10 ցենտով, որ հասանելի էր ընթերցողների բավականին մեծ շրջանակի:

60-ական թվականների սկզբին «Life»-ի տպաքանակը 6 միլիոնից անց էր: 1946 թվականին Փարիզում տպագրվում էր նրա երկշաբաթյա եվրոպական տարբերակը, 1953 թվականին սկսեց հրատարակվել «Life En Espanol»-ը՝ իսպանալեզու տարբերակը, որ հասցեագրված էր լատինամերիկացի ընթերցողին:

20-30-ական թվականներին առավել ճկուն քաղաքականություն վարող հրատարակիչները ուշադրություն դարձրին գործարար աշխարհի որոշակի մասի անբավարարվածությանը տնտեսական ու քաղաքական ընտրախաղին ուղղված որակյալ հրատարակություններից: Այն ժամանակվա որակյալ մամուլին բնորոշ չմեկնաբանված փաստերի առատությունը բիզնեսմեներն ու արդյունաբերողները մեծ առավելություն չէին համարում, նրանք գերադասում էին ստանալ առավել սեղմ, համակարգված գործնական ու քաղաքական տեղեկատվություն՝ հարակից մեկնաբանությամբ: Լսարանի այդ հատվածի պահանջները բավարարելու համար ստեղծվեց «Business Week» («Գործարար շաբաթ») ամենշաբաթյա լրագիրը:

Մասնագիտական, ճանաչողական ամսագրերից են «Geo»-ն, «National geographic»-ը և այլն:

1890 թվականին Անգլիայում ստեղծվեց ամենշաբաթյա «Library Digest» հանդեսը, որը խնդիր ուներ մեծ լսարանին իրագեկել «Ժամանակակից մտածողության ու հետազոտությունների

մասին, որ ներկայացված են համաշխարհային մամուլում»: Այս պարբերականի մեկ համարն արժեր 10 ցենտ, հրապարակումների հիմքը կազմում էին ԱՄՆ-ի, Կանադայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի մամուլում տպագրված հոդվածների սեղմագրերը, շաբաթվա ընթացիկ նորությունները, որ պատրաստվում էին հարցազրույցների, հոդվածների հիման վրա:

Դայջեստների հանրահայտությունը և տնտեսական արդյունավետությունը գրավեցին ընթերցողների ուշադրությունը: Հրատարակիչ ամուսիններ Ուոլլեսները 1922 թվականին սկսեցին հրատարակել «Rider's Digest» հանդեսը, որը հասցեագրված էր ընթերցողների մեծ լսարանի:

Հետևելով գիտելիքներին, մշակույթի գանձերին առնչվելու միջոցով անհատի կատարելագործման սկզբունքային հնարավորությամբ՝ «Rider's Digest»-ի առաջին խմբագիրներից մեկը հայտարարեց. **«Մարդը կարող է ինքն իրեն բարեփոխել, իսկ մենք կարող ենք նպաստել»:**

Հանդեսի հեղինակները հայտարարում էին, որ խմբագրությունը ոչ միայն առաջարկելու է ամերիկյան մամուլի ամենամսյա վերլուծությունները, այլև ընտրելու է «ամանց արժեքների ու շահերի» պահանջներին համապատասխանող հրապարակումներ, որ չեն հնանա բավականին երկար ժամանակ: Որոշարկված էր «մշտական հետաքրքրության» շրջանակը, որ ներառում էր արկածներ ու հայտնագործություններ, բիզնես, քաղաքականություն, «ապրելու արվեստ», նշանավոր մարդկանց կենսագրություններ, ժամանց, սպորտ, առողջություն, հումոր, սեռերի փոխհարաբերություններ, երեխաների դաստիարակություն, օգտակար խորհուրդներ և այլն:

«Rider's Digest»-ի տպաքանակը (ներքին տարբերակը և արտասահմանյան 36 հրատարակությունները) 80-ական թվականներին հասավ 18 միլիոնի:

Մինչ եվրոպական մամուլի պատմության ընդհանուր զօտերին անդրադառնալը մի ուշագրավ տեղեկատվություն. ըստ «Մոնդի» 1996 թվականի մայիսի 22-ի համարի՝ ամենակարդացողը շվեդներն են. 1000 բնակչին այստեղ 600 օրինակ թերթ է բաժին ընկնում: Ճապոնիայում այդ թիվը հավասար է 567-ի, Ֆինլանդիայում՝ 464-ի, Շվեյցարիայում՝ 365-ի, Լյուքսեմբուրգում՝ 338-ի, Ավստրիայում և Մեծ Բրիտանիայում՝ 317 է, Գերմանիայում՝ 314, Ֆրանսիայում՝ 156, ԱՄՆ-ում՝ 225:

Ուշագրավ է նաև նույն համարում հրատարակված մեկ այլ վիճակագրական տեղեկանք. ըստ դրա ամենօրյա թերթերի վաճառքի առաջատարը ճապոնիան է՝ 72 միլիոն օրինակ: Նրան հաջորդում են Ռուսաստանը՝ 30 միլիոն օրինակ, Գերմանիան՝ 25,4 միլիոն, Յնդկաստանը՝ 23,8 միլիոն, Սեծ Բրիտանիան՝ 18,3 միլիոն, Ֆրանսիան՝ 8,9, Բրազիլիան՝ 6,5, Իտալիան՝ 6,2 միլիոն: Այժմ բուն պատմությունից:

Եթե հիշում եք, «Թայմս» թերթին նախորդ գլխում բավականին ծավալուն ու հանգամանակից հատված էր նվիրված: Ինչպես այդ ժամանակ, այնպես էլ ողջ 20-րդ դարում ու մինչև օրս, թերթը անգլիական որակյալ մամուլի առաջատարն է համարվում և տարածվում է ողջ երկրով մեկ:

Բացի «Թայմսից» որակյալ մամուլի կարգին են դասվում նաև այլ օրաթերթեր՝ «The Daily Telegraph» («Դեյլի թեյեգրաֆ»), «The Guardian» («Գարդիան»), «Financial Times» («Ֆայնենշլ թայմս»), «Independent» («Ինդեփենդենթ»): Այս կարգի մամուլը բովանդակակից է, պարունակում է բարձրարժեք, հավաստի տեղեկատվություն և համեմատաբար բարձր տպաքանակ չունի (թերևս բացառություն է «Դեյլի Թեյեգրաֆը», որի տպաքանակը 1,3 միլիոն է):

Չանգվածային կամ այլ խոսքով՝ հանրամատչելի մամուլը, որի խնդիրը առավելագույն տպաքանակներն են և ընթերցողների ընդլայնվող լսարանը, հրապարակում է շատ ավելի քիչ վերլուծություններ և շատ ավելի ժամանցային ու թեթև նյութեր:

Նմանատիպ որոշ պարբերականների տպաքանակները հասան և ինչ-որ ժամանակ գերազանցեցին հինգ միլիոնը: Այդպիսի թերթերից են «Սան»-ը («The San»-«Արև»), «Միրոր»-ը («The Mirror»-«Չայեյլի», 1903), «Դեյլի էքսպրես» («Daily Express» -«Ամենօրյա ճեպընթաց», 1900), «Դեյլի մեյլ» («Daily Mail», «Ամենօրյա փոստ», 1896) թերթերը: Տասնամյակներ շարունակ այդ կարգում տաբլոիդների շարքում առաջատար էր համարվում «Դեյլի միրորը», որի տպաքանակը հաճախ գերազանցել է 5,5 միլիոնը, սակայն ներկայումս այն երկու անգամ նվազել է: Ու չնայած դրան, որակյալ թերթերի տպաքանակների համեմատությամբ այն շատ բարձր է: Այժմ երևի թե ճիշտ ժամանակն է անդրադառնալ անգլիացիների հոգեբանության հիմնական և սկզբունքային որոշ գծերի, որոնք, անպայմանորեն, հնարավորություն կտան ավելի լավ հասկանալ վերջիններիս:

Անգլիացիներն իբրև ազգ ձևավորվել են՝ ներառելով բազմաթիվ հակասական գծեր: Միայն պատմությունը կարող է ճիշտ պատասխան տալ, թե ինչպե՞ս մեկ ազգը միաժամանակ կարող է լինել այդքան արիստոկրատ և այդքան դեմոկրատ, ինչպե՞ս ավանդույթների պահպանությունը կարող է համատեղվել գործնականության հետ, ինչպե՞ս են համատեղվում մանրավաճառն ու նվաճողը, քաղքենին ու երագողը:

Անգլիացիների բնավորության մեջ միատեղվել են անգլոսաքսոնական գործնականությունն ու կելտական երազկոտությունը, վիկինգների ծովահենական խիզախությունն ու նորմանների կարգապահությունը:

Առաջին և ականառու գիծը՝ բնավորության տարրերի կայունությունն ու մշտականությունն է, նրանք բոլորից քիչ են ենթակա ժամանակին ու ժամանակի հովերի ներգործությանը:

Անգլիացիներն առանձնանում են չափավորությամբ, որի մասին չեն մոռանում ոչ աշխատանքի, ոչ զվարճանքի պահին: Անգլիացին ցուցադրական համարյա ոչինչ չունի, նա ապրում է նախևառաջ ու ամենից շատ ինքն իր համար: Սիրում է բնություն, կարգուկանոն, հարմարավետություն, մտավոր աշխատանք, լավ տրամսպորտ, նորացված կոստյում, հարուստ զրադարան:

Անգլիացիները հանդուրժող են այլոց կարծիքների և տեսակետների նկատմամբ: Դժվար է պատկերացնել, թե նրանք ինչ կիրք ունեն գրագների հանդեպ: Ինքնատիպ ֆենոմեն է ակումբների տարածվածությունը: Ակումբը համարվում է տուն, սրբավայր, որի գաղտնիքները ոչ ոք չի կարող անպատիժ գաղտնազերծել: Ակումբից վտարվելն անգլիացու համար մեծագույն խայտառակություն է:

Անգլիացու իդեալը անկախությունն է, կրթվածությունը, արժանապատվությունը, ազնվությունը, անշահախնդրությունը, տակտը, բարեկիրթ պահվածքը, քաղաքավարությունը, հանուն լավ գործի ժամանակ ու դրամ զոհաբերելը, ղեկավարելու ու ղեկավարվելու կարողությունը, նպատակին հասնելու հաստատակամությունը, սնապարծության բացակայությունը:

Սա՝ անգլիացիների մասին: Այժմ՝ 20-րդ դարի անգլիական մամուլի:

Նույն դասակարգումը՝ որակյալի ու զանգվածայինի, գործում է նաև անգլիական կիրակնօրյա պարբերականների առումով: Որակյալ հրատարակություններից են՝ «Սանդի Թայմսը» («The

Sanday Times»- «Կիրակնօրյա ժամանակ», 1822), «Սանդի թե-լագրաֆը» («Sanday telegraph», «Կիրակնօրյա հեռագիր», 1961), «Օբսերվերը» («The Observer»-«Դիտորդ», 1791), զանգվածային «Նյուս օֆ ուորլդ» («News of The World»-«Աշխարհի նորություններ», 1843), «Մեյլ օֆ սանդի» («The Mail of Sanday»-«Կիրակնօրյա փոստ», 1982), «Սանդի միրորը» («Sanday Mirror», «Կիրակնօրյա հայելի», 1915), «Փիփլը» («People», «Մարդիկ», 1881):

Հրատարակվող ինչպես խոշոր, այնպես էլ բավականին համեստ տպաքանակներ ունեցող թերթերից շատերը հակվում են դեպի Անգլիայում գոյություն ունեցող երկու խոշոր կուսակցություններից որևէ մեկը: Այսպես. պահպանողական կուսակցությանն աջակցում և նրա դավանած գաղափարներն են հիմնականում քարոզում «Թայմսը» և «Սանդի թայմսը», «Դեյլի թեյեգրաֆը» և «Սանդի թեյեգրաֆը», «Սան», «Դեյլի էքսպրես», «Դեյլի մեյլ», «Նյուս օֆ ուորլդ» թերթերը:

Լեյբորիստներին համակրում և նրանց հայացքներն ու գաղափարներն են քարոզում «Միրորը», «Սանդի միրորը», «Օբսերվերը», «Գարդիանը» և «Փիփլը»:

Համաշխարհային միտումը, երբ թերթերի ընթերցանությունն աստիճանաբար փոխարինվում է ինտերնետային ընթերցումներով, զգալի է նաև Անգլիայում և իր անդրադարձն է ունենում տպաքանակների նվազման տեսքով: Սակայն, և այստեղ, ամենայն հավանականությամբ իր դերն է խաղում անգլիացիների բնորոշ հոգեկերտվածքը, էսպես նվազում են զանգվածային պարբերականների տպաքանակները, մինչդեռ ստավորականությանը, ընտրանուն, և անգամ միջին դասին «հասցեագրված» պարբերականների տպաքանակները աննշան են նվազել:

Խոսքն, անշուշտ, 20-րդ դարավերջի և 21-րդ դարասկզբի մասին է:

«Ֆայնենշլ թայմսը», որը Մեծ Բրիտանիայի ամենատրակյալ թերթերից մեկն է և որպես հիմնական հասցեատեր գործարար շրջանակներն ունի, անգամ ավելացրել է իր տպաքանակը՝ 300-ից 500 հազարի հասցնելով:

Կիրակնօրյա թերթերից տպաքանակն ավելացրել են միայն «Օբսերվերը» (410000-ից 440000 օրինակ) և «Սանդի թայմսը» (1375000-ից 1440000): Կիրակնօրյա մյուս թերթերի տպաքանակները նվազել են:

Ամենօրյա որակյալ խոշորագույն թերթն է մնում «Դեյլի թելեգրաֆը» (1 միլիոն): «Սանդի թելեգրաֆի» տպաքանակը 800000 է, «Թայմսինը»՝ 712000 (1999 թվականին 720000 էր):

20-րդ դարի ֆրանսիական մամուլին ևս բնորոշ էին համընդհանուր այնպիսի երևույթներ, ինչպիսիք էին մամուլի առևտրայնացումն ու արդյունաբերականացումը, որի հետևանքով նույն պարբերականներն իրենք իսկ վերածվում էին առևտրաարդյունաբերական ձեռնարկությունների. սկսում էր անջրպետ առաջանալ որակյալ և զանգվածային պարբերականների միջև, որն էլ զնալով խորանում էր՝ ըստ էության ծնունդ տալով երկու տարբեր տիպի պարբերականների:

20-րդ դարի ֆրանսիական լրագրության առաջնեկը կարելի է համարել «Պըտի Պարիզիեն» («Փոքրիկ փարիզեցին») թերթը, որը համարվում էր այդ ժամանակների ամենամեծ տպաքանակն ունեցող պարբերականը՝ 1,8 միլիոն 1903 թվականին, 3 միլիոն՝ 1918 թվականին:

Հաջորդը 1904 թվականին ժան Ժորեսի հիմնադրած «Յունանիտեն» էր («Մարդկություն»), որը 1921 թվականին դարձավ ֆրանսիական կոմկուսի պաշտոնաթերթը՝ ֆրանսիական լրագրության մեջ հիմք դնելով մարքսիստական ուղղությանը:

Ֆրանսիական լրագրության մեջ աննախադեպ երևույթ էր նաև «Պարի սուար» («Երեկոյան Փարիզ») երեկոյան ամենօրյա թերթի լույսընծայումը 1931 թվականին, որն առանձնանում էր ինչպես թեմատիկ բազմազանությամբ, այնպես էլ իրադարձային լուսանկարների առատությամբ:

Այսօր Ֆրանսիայում տպագրվում են բազմաթիվ ընդհանուր բնույթի թերթեր՝ «Ֆիգարո» («Le Figaro», հիմնադրվել է 1826 թ.), «Մոնդ» («Le Monde», 1944), «Լիբերասիոն» («Liberation», 1973), մասնագիտական՝ երիտասարդական, կանանց, գիտական, տեխնիկական, էրոտիկ և այլն, տնտեսական՝ «Էկո» («Les Echos», 1908), «Տրիբյուն» («La Tribune»), «Նուվել էկոնոմիստ» (Le Nouvel Economiste, 1975), ժամանցային՝ գերակշռում են պատկերազարդ շաբաթաթերթերը, ինչպես «Պարի մատչը» («Paris-Match», 1949): Անկախ մամուլից կենտրոնամետ դիրքեր ունեն «Մոնդը» և «Մոնդ դիպլոմատիկ» («Դիվանագիտական աշխարհ», 1954) անսաթերթը, «Կոտիդիեն դե Պարի» («Le Quotidien de Paris», 1974): Ֆրանսիայի մամուլում կան եկեղեցական

ագղեցիկ պարբերականներ՝ կաթոլիկ «Կրուա» («La Croix»-«Խաչ», 1880) օրաթերթը, «Վիյ» («La Vie»-«Կյանք», 1945) շաբաթաթերթը: Համեմատաբար ոչ մեծ տպաքանակներ ունեն ֆրանսիական կոմկուսի թերթերը՝ «Յունանիտեն» և «Ռևոլյուսիոն» («Revolution», 1980) շաբաթաթերթը:

Եվրոպայում դժվար է գտնել ավելի էթնիկ միատարր ազգ, քան ֆրանսիացիներն են:

Անցյալում Ֆրանսիան նշանակալից ներգործություն է ունեցել եվրոպական վարվելակերպի ձևավորման վրա, ֆրանսերենը դիվանագիտական գրագրության լեզուն էր բավականին երկար ժամանակ: Ու նաև Ռուսաստանի պես մեծ ու հզոր երկրում 18-19-րդ դարերում ֆրանսերենի չիմացությունն ու չգործածելը տգիտության և անբարեկրթության նշան էր համարվում: Այդ ամենը չէր կարող չներգործել ազգային բնավորության վրա:

Ֆրանսիացիների բարեկրթությունը, նրբանկատությունը, օգնության ձեռք մեկնելու պատրաստականությունը նրանց սիրելի են դարձրել այլ ժողովուրդների համար: Մեղալի հակառակ երեսը՝ ֆրանսիացիների ունայնամտությունն է, բավականաչափ մտածված քայլեր անելու համբերության պակասը, արտաքին փայլը գերադասելը հաստատուն որակներից, հաճելին՝ օգտակարից: Այս հատկանիշների ուղղակի հետևանքն է նոր նախածեռնություններով արագ հրապուրվելը և նույնքան արագ հիասթափվելը՝ մի ծայրահեղությունից սահուն անցնելով հակառակ ծայրահեղության:

Այլ երկրներում հայտնված ֆրանսիացիները, ի տարբերություն անգլիացիների, հեշտ ընտելանում են այլազգիների և կյանքին, և սովորություններին:

Իմանուիլ Կանտը նշում էր, որ ֆրանսիացին ***«նրբանկատ է, քաղաքավարի, սիրալիր, հաղորդակցության մեջ անկաշկանդ է ու կատակասեր, բայց շատ արագ դառնում է տնավարի»:***

Եվ ահա այդ հատկանիշներով օժտված ազգի վերաբերմունքը տեղեկությունների զանգվածային տարածման միջոցներին որոշելու համար 2000 թվականին անցկացված սոցիոլոգիական հարցման արդյունքները ցույց տվեցին, որ ընթերցողների վստահությունը տպագիր մամուլի հանդեպ 1999 թվականի համեմատությամբ նվազել է 8 տոկոսով, հեռուստատեսության հանդեպ՝ 11 տոկոսով: Որքան էլ տարօրինակ էր՝ վստահության ամենաբարձր աստիճանն ուներ ռադիոն՝ 55 տոկոս, թիվ, որը, սակայն,

մեկ տարի առաջվա համեմատ նվազել էր դարձյալ 8 տոկոսով:

Գերմանիայի 20-րդ դարի առանձնահատկություններից են առավոտյան թերթերի ընդգծված դերակատարությունը և հրատարակությունների տարածքային բնույթը: Պարբերականների շուրջ 95 տոկոսը տեղական են, ինչը բացատրվում է երկրի «հողերի» ավանդական տարանջատվածությամբ, որոնք մեկ պետության մեջ են միավորվել միայն 19-րդ դարի վերջին: Տեղական լրահոսներին մեծ տեղ են հատկացնում նաև համապետական տեղեկատվամիջոցները:

Օրինակ՝ ամենամեծ տպաքանակն ունեցող «Բիլդ ցայտունգը» 33 հրատարակություն ունի, որոնք միմյանցից տարբերվում են տեղական ժամանակագրությամբ և տեղական բնույթի գովազդով: Բեռլինյան պատի վերացումը և գերմանական երկու պետությունների միավորումը էական փոփոխությունների հանգեցրին տպագիր մամուլի շուկայում: 1994 թվականի սկզբին երկրում կային 1601 պարբերականներ՝ 25 միլիոն ընդհանուր տպաքանակով: Ցանկացած պետության լրատվամիջոցների թվում կան այնպիսի պարբերականներ, որոնք ներկայացնում են ոչ միայն այդ երկրի մամուլը, այլև ազգն իր ընդհանրության մեջ: Այդպիսիք են «Թայմսը» Մեծ Բրիտանիայում, «Սոնդը» Ֆրանսիայում, Գերմանիայում նման լրատվամիջոցներից են «Ֆրանկֆուրտեր ալգեմայնե ցայթունգը», «Շպիգելը», «Ցայթը»: «Ցայթ» օրաթերթի առաջին համարը լույս է ընծայվել 1946 թվականի փետրվարին՝ ութ էջով, այսօր թերթի ծավալը 85-100 էջ է: Կողմնորոշված լինելով դեպի կրթված ու հասարակայնորեն ակտիվ ընթերցողը՝ այս շաբաթաթերթը ոչ միայն տեղեկացնում է իրադարձությունների մասին, այլև հրատապ թեմաների շուրջ հիմնարար մեկնաբանություններ է տպագրում՝ լուրջ վերլուծություններ և անկախ գնահատականներ:

2000 թվականին Գերմանիայում տպագրվում էին 389 օրաթերթեր՝ ընդհանուր մեկանգամյա 28,5 միլիոն տպաքանակով, 25 շաբաթաթերթեր՝ 2 միլիոն տպաքանակով, 852 հասարակական ամսագրեր՝ 130,7 միլիոն տպաքանակով, 1090 մասնագիտական պարբերականներ՝ 17,7 միլիոն տպաքանակով: Երկրում գրանցված են 39,16 միլիոն ռադիոընդունիչ և 34,72 միլիոն հեռուստացույց: Լրագրային շուկայի առաջատարն է մնում Ա. Շպիդերի կոնցեռնը՝ նրան է պատկանում վաճառվող յուրաքանչ-

յուր չորրորդ թերթը: Կոնցեռնը առաջատարն է նաև բուլվարային թերթերի շուկայում: Եթե 1987 թվականին արևմտագերմանացի հեռուստադիտողները ամեն օր հեռուստատեսության հաշիվները էին միջինը 139 ռուպե, ապա այն ժամանակվա ԳԴՀ-ի բնակիչները՝ մոտավորապես 130 ռուպե, 1997 թվականին միջին վիճակագրական գերմանացին միացյալ Գերմանիայում հեռուստատեսության հաշիվները է անցկացնում 180 ռուպե:

Եվ վերջում՝ գերմանացիներին բնորոշ որոշ հոգեբանական առանձնահատկություններ:

Գերմանացիները ֆլեգմատիկ են, նրանց բնորոշ է սառը կշռադատվածությունը և համբերատար նպատակամիտվածությունը, նաև նպատակին հասնելու ճանապարհին դժվարություններին դիմանալու կարողությունը: Սրամտությամբ և գեղարվեստական ճաշակով գերմանացիները զիջում են անգլիացիներին, ֆրանսիացիներին և իտալացիներին:

Կենցաղում գերմանացիները համեստ են: Ավելի, քան այլ ժողովուրդներ, հակված են ուրիշների լեզուները սովորելուն, գիտության մեջ առաջամարտիկներ են, նրանց հայտնագործությունների ու ուսումնասիրությունների արդյունքները հետագայում օգտագործում են ուրիշները: Ազգային ընդգծված հպարտություն չունեն: Բացասական գծերը՝ նմանակելու հակումը, իրենց ինքնատիպության մասին ոչ բարձր կարծիքը (ի տարբերություն, օրինակ, անգլիացիների), տարբեր տիտղոսներ հնարելու կիրքն են:

Ոչ մի ժողովուրդ այդքան համատեղ չի գործում, այդքան չի սիրում զանգվածային շարժումներ, որքան գերմանացիները: Ազգի «ընդհանրական» առանձնահատկությունն ամեն տեղ և ամեն ինչում դրսևորվում է: Գերմանացիները մեծ հաջողությամբ միասին աշխատում են դաշտում, ձեռնարկություններում և շատ ավելի արագ են ավարտում աշխատանքը, քան ֆրանսիացիներն ու իտալացիները: Գերմանացին հավասարապես բարեխիղճ է աշխատում և օրվա սկզբին, և օրվա վերջին:

Գերմանացիների առավել արտահայտված գծերից մեկը ճշտապահությունն է, որ երբեմն հասնում է ծայրահեղության: Օրինակ, եթե ամառային ժամանակին անցնելու համար գիշերվա ժամը 2-ին ժամացույցի սլաքը մեկ ժամ պետք է առաջ տանել, բժախնդիր գերմանացին այդ կանխի հենց գիշերվա ժամը 2-ին ոչ շուտ, ոչ ուշ:

Գերմանացու կարևորագույն գիծը կարգավորվածության ձգտումն է: Եթե ուրիշներն ասում են. «Թող աշխարհը կործանվի, բայց արդարությունը պիտի հաղթանակի», գերմանացիների համար կարգուկանոնը ամեն ինչից վեր է: Ինչպես սիմֆոնիայի հիմնաքեմա, կարգուկանոնի ձգտում ունեն բոլոր ժողովուրդները, բայց գերմանացիների համար կարևոր է և քանակային, և որակական կողմը: Գերմանացին երբեք չի շարժվի դեղին լույսի տակ և փողոցը չի հատի կարմիրի տակ: Փողոցի երկու կողմերում քարանում են մարդկանց խմբեր՝ սպասելով կանաչ լույսին, թեպետ ոչ մի մեքենա չի անցնում ու չի էլ երևում:

Գերմանական ավտոբուսների օգտագործված գազերի արտանետման խողովակը ոչ թե ներքևում է, այլ վերևում՝ տանիքի մակարդակին և գազերի արտանետումը կատարվում է մթնոլորտի մեջ՝ շրջանցելով ուղևորների թոքերը: Բացի այդ՝ խողովակն անցնում է ամբողջ ավտոբուսով՝ ջեռուցելով այն ձմռանը:

Իտալիան, որն ինն առանձին պետություններից որպես մեկ ամբողջություն կայացավ ու ձևավորվեց 1870 թվականին, մինչև 1946 թվականը միապետություն էր: Ժամանակակից թերթի այն տիպը, որն այսօր գոյություն ունի Իտալիայում, ձևավորվել է անգլիական ու ֆրանսիական մամուլի ազդեցությամբ:

Սակայն դրանց այսօրվա զարգացումները այլևս դուրս են այդ ազդեցություններից և ավելի շատ կրում են իրենց բնորոշ ազգային առանձնահատկությունների դրոշմը՝ ոչ միայն բովանդակային, այլև ուղղվածության և ընդհանուր դիմագծի առումով:

Իտալացիների խառնվածքում գերիշխում է հուզականությունը, նրանք հակված են բացահայտ դրսևորել իրենց զգացումները: Սիրել ու ատել, ուրախանալ կամ տխրել, զայրանալ կամ զարմանալ՝ նրանց պատկերացումներով նշանակում է ներքուստ ու արտաքուստ ամբողջությամբ տրվել այդ զգացումներին: Զույգերը զսպելը կամ ճնշելը, թաքցնելը նրանք համարում են անբնական ու նույնացնում են երեսպաշտության հետ:

Իտալացու կարևոր հատկանիշը մարդկայնությունն է: Նա լիակատար հարգանքի իրավունք ունի՝ շնորհիվ իր խելքի, համարձակության, գեղեցիկի նուրբ ընկալման, բնությունից օժտված գեղարվեստական անկրկնելի ճաշակի: Գավառաբնակ իտալացին անգամ ձեզ կզարմացնի իր քաղաքավարությամբ, խելամտությամբ, երբեք փակուղի չի մտցնի իր բթությամբ: Նա

միշտ և ամենուր ժամանակ է գտնուում հիանալու բնությամբ ու արվեստով:

Իտալացիներն առանձնանում են երաժշտության նկատմամբ սիրով: Փողոցներում հաճախ կարող ես բարձրաձայն երգեցողություն լսել գիշերները, և դա ոչ մեկին չի զարմացնում կամ զայրացնում: Ամբողջ աշխարհին են հայտնի իտալական ժողովրդական ու դասական երաժշտությունը, նեապոլիտանական հնագույն երգերը: Գեղեցիկ երգեցողության ունակությամբ նպաստում են ծովային տաք կլիման և բարեհունչ, երգեցիկ լեզուն:

Եթե ֆրանսիացիներն ավելի սիրում են մասնավոր զվարճանքները, իտալացիները նախընտրում են հրապարակայինը՝ դիմակահանդեսները, շքեղ երթերը, շքերթային ներկայացումները, տոնախմբությունները (ամբողջ աշխարհին են հայտնի Վենետիկի դիմակահանդեսները): Նրանց շատ են հուզում վրձինով արված կտավները, մոզաիկան, հինավուրց բարձրաճաշակ ստեղծագործությունները, ճարտարապետությունը: Իտալացիների համար ճարտարապետությունը, նկարչությունը, գրականությունը, երաժշտությունը միաձուլյ արվեստներ են: Նրանք սիրում են այդ ամենը դիտել ու ցուցադրել: Իտալիան անցալում անվանում էին շքեղության երկիր, իսկ Հռոմը հիմա էլ անվանում են Հավերժական քաղաք:

Այսօր Իտալիայի լրատվական դաշտում առաջատարներից են «Կորիերե դե լա սեռա»-ն («Corriere della Sera»-«Երեկոյան տեղեկատու», 1876 թվական, 680000 տպաքանակ), «Լա Ռեպուբլիկան» («La Repubblica»-«Հանրապետություն», 1976 թվական, 380000 տպաքանակ), հանդեսներից՝ «Օջին» («Oggi»-«Այսօր», 1945 թվական, 900000 տպաքանակ): Հանդեսների մեկնագանյա տպաքանակը էապես գերազանցում է թերթերի տպաքանակներին: Չանգվածային շատ լրատվամիջոցներ քաղաքական կուսակցությունների ու արհմիությունների սեփականությունն են: Ռադիոհեռարձակումն էլ Իտալիայում սկսվել է 1924 թվականից, իսկ հեռուստատեսայինը՝ 1954 թվականից:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո լրագրության բոլորովին նոր մի ֆենոմեն առաջացավ՝ Արևելյան Եվրոպայի մամուլը, որն իրենից սոցիալիստական ճամբարի երկրների մամուլի համախումբն էր ներկայացնում:

Արևելյան Եվրոպայի երկրներում գերմանական ֆաշիզմի լուծը թոթափելուց գրեթե անմիջապես հետո նախևառաջ վերականգնվեցին երկրորդ համաշխարհայինից առաջ լույս տեսնող

այն պարբերականները, որոնք չէին համագործակցել զավթիչների հետ: Ստեղծվեց նաև նոր մամուլ, որի հիմնական առանցքը կոմունիստական կուսակցությունների պարբերականներն էին: Ի տարբերություն ԽՍՀՄ-ի, սոցիալիստական երկրներում ազատությունների սահմանափակումներն այդքան համատարած բնույթ չէին կրում, ուստի ազատական և այլ ժողովրդավարական կուսակցությունները, որոնք, սակայն, բոլորն էլ սոցիալիստական բնույթ ունեին և չէին հավակնում հաստատված իշխանական համակարգը փոխելուն, հրատարակում էին իրենց պարբերականները: Տպագիր մամուլ ունեին նաև հասարակական կազմակերպություններն ու հայրենասիրական տարբեր ճակատները: Որոշ տոկոս էին կազմում նաև մասնավոր հրատարակչական ընկերությունների ու խմբերի պարբերականները, ինչպես նաև կղերական մամուլը:

Արևելյան Եվրոպայում կոմունիստական ու աշխատավորական կուսակցությունների իշխանության գալով՝ 40-ական թվականների վերջին վերացվեցին ոչ միայն նրանց քաղաքական հակառակորդների մամուլը, այլև մասնավոր պարբերականները: Ռադիոհեռարձակող կազմակերպությունները ազգայնացվեցին: Արևելյան Եվրոպան աշխարհի մեծ մասից սահմանազատող «երկաթե վարագույրը» անհնար դարձրեց արևմտյան մամուլի ներթափանցումը սովետական ազդեցության գոտի:

40-50-ական թվականների սահմանագծին Արևելյան Եվրոպայի երկրներում իշխող կոմունիստական ու աշխատավորական կուսակցությունները հռչակեցին սոցիալիզմի շինարարություն՝ սովետական օրինակով:

Արևելյան Եվրոպայի երկրների մամուլի ազգային համակարգերը ձևավորվում էին սովետական փորձի ներգործությամբ: Ինչպես ԽՍՀՄ-ում, նրանց ձևավորման վրա վճռական նշանակություն ունեցավ այն սկզբունքը, ըստ որի պարբերականների կառուցվածքը պետք է համապատասխանի քաղաքական համակարգի կառուցվածքային օղակներին:

Ինչպես և ԽՍՀՄ-ում, ազատ մամուլն այդ երկրներում կարող էր գոյություն ունենալ միայն ինքնահրատ տեսքով (րՈՎՈՉՊՈՑ):

Արևելյան Եվրոպայի պետությունների ներքին իրավիճակի, միջազգային կյանքի մասին անաչառ լրատվության պակասը բնակչության մեջ անվստահություն էր սերմանել ազգային

լրատվամիջոցների նկատմամբ և այլընտրանքային լրատվամիջոցների (գլխավորապես՝ արևմտյան) որոնումը՝ իբրև տեղեկատվության աղբյուրի: Արևմտյան պետություններին աշխարհագրական մերձությունը մատչելի էր դարձնում նման աղբյուրները՝ Արևելյան Եվրոպայի երկրներում համեմատաբար հեշտ էր լսել հարևան Ավստրիայի, ԳԴՀ-ի, Արևմտյան Բեռլինի, Մեծ Բրիտանիայի ու ԱՄՆ-ի ռադիոհեռարձակումները, որսալ արտասահմանյան ռադիոալիքները: Արդյունքում՝ Արևելյան Եվրոպայում ձևավորվեց մեծ լսարան, որ ուղղորդված էր դեպի տեղեկատվության արևմտյան աղբյուրները: Լսարանի մասնակի հետազոտությունների արդյունքներով՝ 80-ական թվականների կեսերին արևմտյան ռադիոկայաններ ունկնդրում էր Հունգարիայի բնակչության 72 տոկոսը, լեհերի 86 տոկոսը, ռումինների 82 տոկոսը, բուլղարների 39 տոկոսը, Չեխոսլովակիայի բնակչության 79 տոկոսը: Դա արագացնում էր սոցիալիստական ճակատի կազմաքանդման գործընթացը 80-ական թվականների վերջերին:

90-ական թվականների սոցիալիզմի փլուզման գործընթացներն ուղեկցվում էին գաղափարական ճգնաժամի մեջ գտնվող, նախկինում իշխող քաղաքական դիրք զբաղեցնող պարբերականների տպաքանակների արիեստական և սրընթաց կրճատմամբ, ի հակադրություն ազգային և ազատ նոր-նոր առաջացող պարբերականների, որոնք թե ազդեցության, թե տպաքանակների աննախադեպ և կտրուկ աճ էին արձանագրում: Այդ ժամանակները հենց ազգային-ժողովրդավարական մամուլի սկզբնավորման և կայացման ժամանակաշրջան կարելի է համարել: Միանգամից երևան է գալիս նաև մասնավոր մամուլը, որը աստիճանաբար, բայց հետևողականորեն սկսում է իշխող դիրքեր գրավել ընդհանուր տեղեկատվական միջավայրում:

Անհրաժեշտ է նշել Արևելյան Եվրոպայի երկրներին բնորոշ և նրանց ԽՍՀՄ հանրապետություններից հստակորեն տարբերակող մի քանի հատկանիշներ:

Նախ՝ այդ երկրներում դեռևս ամբողջությամբ չէ, որ մոռացվել էին ազատ և ժողովրդավարական մամուլի ավանդույթները, այն պարզ պատճառով, որ նրանք շատ ավելի կարճ ժամանակահատված էին գտնվում ԽՍՀՄ «հայրական և հոգատար» ձեռքերում:

Երկրորդ՝ նրանցից յուրաքանչյուրը կարողացել էր, թեկուզև մեծագույն դժվարությունների և մաքառումների զնով, առավելագույնս պահպանել իր ազգային ինքնատիպ դիմագիծը, չձուլ-

վել ընդհանուր «ճամբարին», որն էլ էական նշանակություն ունեցավ արագ վերականգնման առումով:

Եվ վերջապես՝ երրորդ, ազատ աշխարհի սահմանակցությունը, որը ևս նվազ կարևոր հանգամանք չէր այդ կենսական խնդիրները լուծելու ճանապարհին:

Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի մամուլը ևս համաշխարհային մամուլի պատմության անքակտելի մասն է, նրա ինքնատիպ նրբերանգը, սակայն անհրաժեշտ է փաստել, որ ինչպես և սոցիալիստական ճամբարի երկրների մամուլը, այն ևս որևէ էական ազդեցություն չի ունեցել թե ժամանակակից մամուլի պատմության, թե առավել ևս նրա զարգացման առումով: Նրանք հիմնականում ձևավորվել և զարգացել են ամերիկատերության ազդեցություններով՝ սպասարկելով, սակայն, տեղական բնույթի խնդիրներ և հիմնահարցեր:

Գաղութների մամուլը, ընդհանուր առմամբ, բնութագրվում էր հստակ դասակարգմամբ. պարբերականներ գաղութարարների համար, բարձրաշխարհիկ մամուլ՝ տեղաբնակների համար (այն զանգվածային չէր կարող լինել մեկ պարզ պատճառով՝ տեղաբնակների գրագիտության բացակայության), կրոնական, նաև միսիոներական պարբերականներ՝ տեղաբնակների համար, որն էլ, ըստ էության, վերը նշված պատճառով գալիս էր ընդամենը լրացնելու մամուլի նախորդ խումբը: Անհրաժեշտ է նշել, որ այս պայմաններում աստիճանաբար՝ անկազմակերպ, սաղմնային վիճակում, բայց ևայնպես ծնունդ էր առնում նաև ազգային մատչելի մամուլը:

Հիմնականում մշակութային, կուլտուրլուսավորչական, համակողմանի աջակցության խնդիրներ իրականացնող այս պարբերականների դասակարգումն իսկ լիարժեք պատկերացում է տալիս նրանց հետապնդած նպատակների և իրականացրած գործառույթների մասին:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբներին աստիճանաբար իրենք իրենց հաստատող ազգային պարբերականներում հիմնական շեշտը դրվում էր ազգային կրթության վրա հիմնված վերածննդի վրա: Որքան էլ տարօրինակ է, բայց առաջին տպագիր թերթ ստեղծած երկիրը՝ Չինաստանն էլ, դարերի ճամփաբաժանին կանգնած էր այդ խնդիրները կրկին լուծելու հրամայականի առջև: 1896 թվականի հունվարի 12-ից Շանհայում

տպագրվող «Ցյան- սուէբա» («Պետության հզորացման թերթ») պարբերականի հրատարակիչ Կան Յուվէյը առաջին իսկ համարի առաջնորդողում գրում է. **«Ավելի լավ է գիտելիքները կիսել մարդկանց խմբի հետ, քան օգտագործել միայնակ, բայց ավելի լավ է գիտելիքները կիսել միլիոնների հետ, քան օգտագործել մի խմբի սահմաններում»:**

Եվ այդ խնդրի առավելագույնս իրականացումն էր համարում ինչպես թերթի, այնպես էլ այն ստեղծողների ու հեղինակների հիմնական առաքելությունը:

Բարենորոգչական շարժման խորացման մեջ մեծ դեր խաղաց «Շիուբաո» («ժամանակի ոգի») շաբաթաթերթը՝ պետության ամրապնդման Շանհայի ասոցիացիայի ոչ պաշտոնական օրգանը, որն այդ անունով տպագրվում էր 1896 թվականից: «Շիուբաոյի» խմբագիրը Լյան Ցիչաոն էր: Նա համոզում էր չինացիներին գիտակցել բարենորոգումների անհրաժեշտությունը և կենսագործել սեփական ուժերով, այլապես փոփոխությունները կհարկադրեն օտարերկրացիները, որի հետևանքով Չինաստանը վերջնականապես կվերածվի գաղութի: Լյան Ցիչաոն կոչ էր անում երկրում ստեղծել «գիտական ընկերությունների» լայն ցանց՝ լուսավորչական կազմակերպություններ, որոնք պիտի տարածեին գիտական ու տեխնիկական գիտելիքներ, դրդեին երիտասարդներին դեպի կրթություն: Ժողովրդի կրթության գործը նա անհրաժեշտ էր համարում՝ քաղաքական իրավունքներ ձեռք բերելու տեսանկյունից: Քանի դեռ երկրում իշխում է տգիտությունը, արևմտյան օրինակով ժողովրդավարության ու պառլամենտարիզմի ներմուծումը միայն անարխիայի կիսագեցնի: Լյան Ցիչաոն գրում էր. **«Մեր չլուսավորված ժողովրդի մեջ քչերն են հասկանում ազատության իսկական իմաստը: Եթե հեղափոխություն բռնկվի, ոչ միայն հաջողություն չի բերի, ինչպես ԱՄՆում, այլև ավելի մեծ ավերածություններ կառաջացնի, քան Ֆրանսիայում ու Իսպանիայում»:** «Շիուբաոն» 1898 թվականի ապրիլից դարձել էր Չինաստանի ամենախոշոր պարբերականը, հրապարակվում էր 100000 տպաքանակով և տարածվում էր ամբողջ Չինաստանում:

Բնիկների ինքնագիտակցության զարգացմանը զուգընթաց՝ չափավոր ընդդիմադիրներին, բարենորոգչական-լուսավորչական պարբերականներին փոխարինեցին առավել արմատական

պարբերականները, որոնք բացահայտորեն պահանջում էին ազգային անկախություն, արտահայտում էին հակազաղութային ուժերի քաղաքական ու գաղափարական դիրքորոշումները:

Տարբեր երկրներում, մասնավորապես ազգային մամուլի զարգացման նախադրյալներն ու տեմպերը խիստ անհատական և ինքնատիպ էին, այնպես որ խոսել գաղութների և կիսագաղութների մամուլի զարգացման մասին ընդհանրապես, գրեթե անհնարին է: Սակայն ընդհանրական միտումներն ու դրսևորումները, որոնք նշվել են վերը, համընդհանուր բնույթ էին կրում:

Ռադիո

Առանց «անմիջական» կապի՝ այսինքն մալուկի (ինչպես հենագիրն ու հեռատիպն էր) կամ որ ավելի ճիշտ է՝ էլեկտրամագնիսական ալիքների միջոցով տարածության վրա տեղեկությունների փոխանցման սկզբունքը, որի հայտնագործության պատիվը ռուսները վերագրում են Պոպովին, իսկ Արևմուտքը՝ Մարկոնիին, կապի նոր միջոցի՝ ռադիոյի ստեղծման հիմքը դարձավ:

1906 թվականին ամերիկացի Լի դե Ֆորեստը հայտնագործեց աուդիոնը՝ էլեկտրոնային-վակուումային լամպը, որի կիրառումը ռադիոսարքավորումներում թույլ էր տալիս փոխանցել հաղորդումներ, երաժշտություն, ձայնային էֆեկտներ: 1908 թվականին գյուտարարը կազմակերպեց պատմության մեջ առաջին երաժշտական հաղորդումը. Փարիզի էյֆելյան աշտարակից տարածվող ռադիոազդանշանները սփռվում էին 500 մղոն շրջագծով: Կատարելագործված էլեկտրոնային-վակուումային լամպերի օգտագործումը ռադիոտեխնիկայում անհամեմատելի մեծացրեց ռադիոյի տեղեկատվական և արտահայտչական հնարավորությունները, նպաստեց հասարակության հետաքրքրության առաջացմանը: Աշխարհի շատ երկրներում ծնվեց ռադիոսիրողների շարժումը:

Ռադիոկապի արժեքն ու կարևորությունն անհամեմատ մեծացավ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, քանզի հենց դրա շնորհիվ էր ապահովվում օպերատիվ կապը տարբեր զորամիավորումների միջև: Ռադիոհաղորդումները սկսեցին այդ օրերից ի վեր նաև իրենց քարոզչական, տեղեկատվական և ապատեղեկատվական «բուն» գործունեությունը: Ռադիոտեխ-

նիկայի արտադրությունը, որը սկսվեց հենց այդ ժամանակներից, աննախադեպ հաջողություններ և շահույթներ գրանցեց:

20-ական թվականների սկզբին ԱՄՆ-ում և Արևմտյան Եվրոպայի երկրներում շարժման մեջ դրվեցին հարյուրավոր փորձարարական ու սիրողական հաղորդիչներ: 1920 թվականի նոյեմբերին KDKA (Պիտսբուրգ) փորձարարական ռադիոկայանը, որ պատկանում էր «Կեստինգհաուզ» էլեկտրատեխնիկական կորպորացիային, իրականացրեց առաջին նախապես հայտարարված հաղորդումը ԱՄՆ-ում նախագահական ընտրությունների մասին, որին հետևեցին կանոնավոր հաղորդումները:

Ռադիոհաղորդակցության իբրև տեղեկությունների զանգվածային տարածման միջոցի, զարգացման բեկումնային փուլ էին 1922-1923 թվականները, երբ աշխարհի շատ երկրներում սկսեցին փորձարարական ու պարբերական հաղորդումները:

Մի փոքրիկ օրինակ միայն. եթե 1922 թվականի առաջին կիսամյակում ԱՄՆ-ում հաղորդակցական գործունեություն իրականացնելու 300 արտոնագիր էր տրվել, ապա տարեվերջին այդ թիվը կրկնապատկվեց: Եվս մեկ թիվ. 1923 թվականին ԱՄՆ-ում օգտագործվում էին ավելի քան 500000 ռադիոընդունիչներ:

Հեռարձակման առաջին տարիներին ռադիոհաղորդումների կանոնավոր ծրագրերը հազվադեպ էին, հաղորդումների ձևը և բովանդակությունը՝ խայտաբղետ: Դրանք ստուդիաներից համերգներ էին, գրական ընթերցումներ, բեմադրություններ, եթերում զրույցներ, գրամոֆոնային ձայնագրություններ: Դրվեցին ռադիոհարցազրույցների և ռադիոռեպորտաժների հիմքերը: Ռադիոյի արշալույսին Պիտսբուրգի KDKA ռադիոն ուղիղ հաղորդումներ էր հեռարձակում բեյսբոլի բարձրագույն խմբի խաղերից, որոնք շատ էին նման ռեպորտաժի: 1922 թվականից ռադիոեթերում սկսվեցին գովազդային թողարկումները, որոնք կարևոր ազդեցություն ունեցան հաղորդումների բնույթի ու ժանրային առանձնահատկությունների ձևավորման վրա:

Մեկ անգամ ևս մամուլի անցած ճանապարհը կրկնվում էր՝ ռադիոծրագրերը ուսումնալուսավորչական էին, կրոնական, բանավիճային, մշակութային և այլն, այսինքն՝ ճիշտ այնպիսի պատկեր էր, ինչպիսին էր վիճակը տպագիր մամուլի արշալույսին՝ թերթերի և, հատկապես, ամսագրերի ու հանդեսների պարագայում:

1927 թվականին ԱՄՆ-ում ընդունված ռադիոյի մասին օրենքը կոչված էր կանոնակարգելու հաղորդակցական քառասյին գործունեությունը շուկայական միջավայրում: Օրենքի համաձայն ստեղծվեց դաշնային հանձնաժողով, որի պարտականությունների մեջ էր մտնում հաղորդակցական գործի տեխնիկական խնդիրների լուծումը, հաղորդման հաճախականությունների բաշխումը: Կայաններին լիցենզիա տրվում էր՝ ըստ հաղորդակցության չափերի ու տեսակների դասակարգման:

1930 թվականին ԱՄՆ-ում արդեն 6000 ռադիոկայաններ հաղորդումներ էին հեռարձակում՝ 12 միլիոն ընդունիչների համար: Հեռահաղորդակցության դաշտում ընդգրկված էր (այս կամ այն կերպ) ամերիկյան ընտանիքների 40 տոկոսը:

Եվրոպայում ևս մասայական հաղորդակցության հաստատումը տեղի ունեցավ 20-ական թվականների սկզբին: Ռադիոագրանշանների փոխանցման հաջող փորձերը հանգեցրին գործող ռադիոկայանների թվի մեծացմանը Մեծ Բրիտանիայում, որտեղ 1923 թվականին ձևավորվեց Բրիտանական հաղորդակցական ընկերությունը՝ BBC-ն: Համարյա միաժամանակ ռադիոկայաններ հայտնվեցին Եվրոպական մյուս երկրներում՝ Գերմանիայում, Ֆրանսիայում, այլուր:

Ռադիոյի տարածումը, սակայն, նման չէր տպագիր մամուլի տարածման ընթացքին. եթե վերջինս շատ ավելի դանդաղ էր ընդլայնում իր տարածման շրջանակները և դժվարությամբ էր նվաճում հատկապես երկրորդ և երրորդ աշխարհի երկրները, ապա ռադիոն խուսափել էր այլևս այդ խոչընդոտներից. գրեթե հավասարաչափ տարածում էր գտնում ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող և դեռևս գաղութային երկրներում: Խոսքն, անշուշտ, Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրներին է վերաբերում, որտեղ ևս 20-ական թվականները ռադիոյի տարածման, կայացման և հետագա զարգացման տարիներ հանդիսացան:

1926 թվականին լատինամերիկյան բոլոր երկրներում կանոնավոր հեռարձակումներով նվազագույնը մեկական ռադիոկայան էր գործում: 20-ական թվականների երկրորդ կեսին Լատինական Ամերիկայում արագ աճում էր ունկնդիրների թիվը, ձևավորվում էր մեծ ռադիոլսարան:

1922 թվականին փորձարարական ռադիոհաղորդումներ սկսվեցին Ասիայի շատ երկրներում՝ Ճապոնիայում, Չինաստանում, Ինդոնեզիայում, Ֆիլիպիններում:

Ասիական պետությունների մեծ մասում ռադիոհեռարձակումների զարգացումը կասեցնում էին գաղութային իշխանությունները: Հնդկաստանում, ֆրանսիական Հնդկաստանում, Ասիայի մի քանի երկրներում ստեղծված ռադիոհաղորդումների համակարգերը գլխավորապես նախատեսված էին գաղութներում ապրող մետրոպոլիտանների քաղաքացիների՝ եվրոպացիների համար: Կոմերցիոն ռադիոհաղորդումների զարգացումը կասեցվում էր քաղաքական ու տնտեսական պատճառներով: Տեղական գովազդային շուկայի փոքրությունը մասնավոր կայանների տնտեսական զարգացման հույսեր չէր ներշնչում:

Աֆրիկայում և արաբական երկրներում ռադիոհեռարձակման զարգացումը բարդացնում էին քաղաքական ու տնտեսական գործոնները, որոնցից գլխավորը գաղութային իշխանությունն էր, որ մի շարք երկրներում պահպանվել էր մինչև 60-ական թվականները (իսկ Պորտուգալիայի գաղութներ Անգոլայում ու Մոզամբիկում՝ 70-ական թվականների կեսերը, Չինբաբվեում՝ մինչև 1980 թվականը, Նամիբիայում՝ 80-ական թվականների վերջը, երբ վերացվեց հարավաֆրիկյան օկուպացիան): Աֆրիկյան մայրցամաքի առաջին ռադիոկայանը եթեր դուրս եկավ Յիհանեսբուրգում (Հարավային Աֆրիկա) 1920 թվականին: Այդ կայանը, ինչպես բրիտանական Հարավային Աֆրիկայում 20-30-ական թվականներին ստեղծված մյուս կայանները, գլխավորապես ծառայում էր անգլիացիներին:

20-րդ դարի 20-30-ական թվականներին ռադիոհաղորդումներ էին հեռարձակվում աշխարհի 70 երկրներում, ռադիոունկնդիրների համաշխարհային լսարանն ընդգրկում էր 140 միլիոն մարդ:

30-ական թվականներին աճում էր մրցակցությունը ռադիոկայանների և տպագիր մամուլի միջև: Մամուլը ձեռք էր բերել հզոր մրցակից, որը կարող էր օպերատիվ ներգործել մեծ տարածքում ցրված ունկնդրի վրա՝ գովազդատուների միջոցների զգալի մասը սեփականելով: 1933 թվականին թերթերի հրատարակիչների ամերիկյան ասոցիացիան (ANPA), մտահոգված կոմերցիոն հաղորդիչ կազմակերպությունների արագ զարգացմամբ՝ լրատվական գործակալություններին հորդորում էր դադարեցնել ռադիոընկերություններին նորություններ հաղորդելը:

Ռադիոընկերությունների հետ մրցակցության հետևանքները մեղմելու ձգտումը հրատարակիչներին ստիպում էր որոնել նրանց հետ համագործակցելու նոր ուղիներ: Մեծ տարածում գտավ հրատարակչական ընկերությունների՝ ռադիոընկերու-

թյուններ գնելու կամ նրանց հետ պայմանագրային-գործընկերական հարաբերություններ հաստատելու պրակտիկան: 1940 թվականին ԱՄՆ-ի ռադիոկայանների մեկ երրորդը կամ պատկանում էր թերթերի հրատարակիչներին, կամ նրանց հետ մեկ ընդհանուր միության մեջ էր:

Ռադիոյի հնարավորությունները լավ օգտագործում էին քաղաքական գործիչները: Մեծ մասայականություն էին վայելում «նոր քաղաքականության» հեղինակ ԱՄՆ-ի նախագահ Ֆրանկլին Դելանո Ռուզվելտի ռադիոդիմումները ամերիկացի ժողովրդին: Նախագահի «Զրույցներ բուխարու մոտ» շարքը լուրջ ներգործություն ուներ ազգային ու միջազգային քաղաքականության խնդիրների շուրջ հասարակական կարծիքի ձևավորման վրա:

Բացի կոմերցիոն ռադիոկայաններից, որոնց բնորոշ է նաև երաժշտական-տեղեկատվական-զվարճանքային-ժամանցային ծրագրային քաղաքականությունը, գործում էին նաև պետական ռադիոկայաններ կամ էլ այնպիսիք, ուր պետությունը ևս ուներ իր մասնաբաժինը:

Աշխարհի շատ երկրներում պետական ռադիոկայանները զարգանում էին պետական բյուջեից կատարվող ֆինանսավորման շնորհիվ և պետական բյուրոկրատիայի վերահսկողությամբ, որը անդրադառնում էր, բնականաբար, խմբագրական-ծրագրային քաղաքականության վրա: Հեռահաղորդակցության պետական մոդելը բավականին գրավիչ էր կենտրոնացված պլանային տնտեսություն ունեցող պետությունների ու բռնապետական, ֆաշիստական վարչակարգերով երկրների համար: Դրա վառ օրինակը աշխարհի մեկ վեցերորդ մասը կազմող ԽՍՀՄ-ն էր, ուր թե ռադիոն, թե հեռուստատեսությունը գործում էին նույն սկզբունքով, ինչ տպագիր մամուլը՝ կոմունիստական կուսակցության ցուցումով:

Պետական ռադիոկայանները լայնորեն տարածված էին Աֆրիկայում: Հաղորդակցությունը վարում էր պետությունը՝ տեղեկատվության նախարարությունների կամ հարակից վարչական կառույցների վերահսկողությամբ: Ռադիոհաղորդակցական նման ծառայություններ կային Չադում, Տանզանիայում: Պետական ռադիոկայանները փաստորեն տեղեկատվական հաստատություններ էին, որ գործում էին տեղական բյուրոկրատիայի քաղաքացիական ու ռազմական ընտրանու շահերի թելադրանքով:

Անկախություն ձեռք բերելուց հետո ռադիոհեռարձակումներ կազմակերպվեցին աֆրիկյան բոլոր պետություններում: Թեպետ զարգացել է նաև հեռուստատեսությունը, Աֆրիկայում հիմա էլ ռադիոն առաջատար լրատվամիջոց է: Նիգերիայում ու Ջիմբաբվեում ուսումնասիրությունները պարզեցին, որ հեռուստատեսության հնարավորությունները չեն խլում ռադիոունկնդրին. նրանց լսարանը անփոփոխ մեծ է մնում: Ռադիոն ավելի հոգեհարազատ է աֆրիկացիներին, քանի որ նրանք ունենին և պահպանել են բանավոր խոսքի ավանդույթը: Եթե դրան հավելենք նաև ընկալման մատչելիությունը, ապա պատկերը կամբողջանա:

Ռադիոյի հանրամատչելիությունը և միանգամից բազմամիլիոն լսարան ընդգրկելու հնարավորությունը ձևավորեցին նոր հասարակական ինստիտուտ՝ ռադիոհաղորդակցությունը:

20-ական թվականներին ԱՄՆ-ում առաջին ռադիոկայանների մի մասը ստեղծվեց համալսարաններում ու քոլեջներում, ուր նրանք կազմակերպում էին կրթական ու լուսավորչական հաղորդումներ հասարակության լայն շերտերի համար: Սակայն հետագայում տնտեսական դժվարությունների և կոմերցիոն հաղորդակայանների ճնշմամբ (որոնք շահագրգռված էին ուսումնական հաստատություններից խլել նրանց ռադիոհաճախությունները)՝ նրանց թիվը բավականին կրճատվեց: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին եթեր էին հեռարձակվում ընդամենը 25 միջինալիք հանրային ռադիոկայաններ: 1945 թվականին ԱՄՆ-ի հաղորդակցության դաշնային հանձնաժողովը (FCC) 20 գերկարճ ալիքներ հատկացրեց ոչ կոմերցիոն կայաններին:

Չանրային ռադիոյի զարգացումը կասեցնում էր ֆինանսների պակասը (ֆինանսավորումը կատարվում էր բացառապես բարեգործական հիմնադրամից, գլխավորապես՝ Ֆորդի): Մինչև 1960-ական թվականների կեսերը պետությունը ֆինանսապես չէր աջակցում կրթական կայաններին: Իրավիճակը փոխվեց 1967 թվականին, երբ տարբեր ռադիոկայանները միավորվեցին համապետական համակարգում՝ ստեղծելով Ազգային հանրային ռադիո (NPR): 90-ական թվականներին ոչ կոմերցիոն ռադիոհաղորդումներ ԱՄՆ-ում վարում էին 1400 կայաններ:

Ռադիոհաղորդակցության մի առանձին ուղղություն էլ միջազգային ռադիոհաղորդումներն են:

Դեռ ռադիոյի արշալույսին առաջին ռադիոկայանների հաղորդումները կարող էին տարածվել այն երկրից դուրս, որտեղ

գտնվում էր հաղորդիչը: Ռադիոազդանշանին բնորոշ` տեղեկատվությունը մեծ տարածությունների վրա փոխանցելու հատկանիշը, հաղթահարելով ազգային սահմանների պատնեշը, առաջացրեց տեխնիկական, քաղաքական ու իրավաբանական բազում խնդիրներ: Միջազգային ռադիոէթերի ձևավորումը պարտադրեց նաև այդ ոլորտի կանոնակարգման անհրաժեշտությունը:

1927 թվականին Վաշինգտոնի միջազգային կոնֆերանսում փորձ արվեց բաժանել հաղորդիչները աշխարհի տարբեր պետությունների միջև` կանոնավորելով ռադիոհաղորդակների գործունեությունը և կանխելով ռադիոազդանշանների համընկնումը եթերում: Սակայն հաճախությունների միջազգային բաժանումը պաշտոնական կարգավիճակ ստացավ միայն 1932 թվականի Սադերիդի կոնֆերանսից հետո: Հետագայում հարցը կարգավորվում էր հեռահաղորդակցության միջազգային կոնվենցիայով:

Արտասահմանցի ունկնդրին հասցեագրված նպատակային հաղորդումներ սկսեցին հեռարձակվել 20-ական թվականների կեսերից: 1924 թվականին կազմակերպվեցին ռադիոհաղորդումներ ԱՄՆ-ից դեպի Լատինական Ամերիկայի երկրներ. դրանք իրականացվում էին Պանամերիկյան միության հովանու ներքո: 1929 թվականին հյուսիսամերիկյան հաղորդիչ NBS և CBS կորպորացիաները կազմակերպեցին կարճալիք հաղորդումներ` Լատինական Ամերիկայի համար: 30-ական թվականների երկրորդ կեսին ամերիկացի միլիոնատեր Ռոկֆելլերի ֆինանսավորմամբ ստեղծված Համաշխարհային ռադիոհաղորդակցական հիմնադրամը կազմակերպեց հաղորդումներ` Լատինամերիկացի ու եվրոպացի ունկնդիրների համար: 1936 թվականին ԱՄՆ-ում ստեղծված արտասահմանյան տեղեկատվության ծառայությունը նպաստեց պանամերիկյան գաղափարների տարածմանը Լատինամերիկյան լսարանում` օգտագործելով արտասահմանյան հաղորդումների հնարավորությունները:

Միջազգային ռադիոհաղորդումների առաջին կազմակերպողներից էր Սովետական Միությունը. արտասահմանյան ունկնդրի համար հեռարձակվող մոսկովյան ռադիոյի հաղորդումները, սկսվելով 1927 թվականից, արդեն 1930 թվականին եթեր էին տրվում 58 լեզուներով: 1938 թվականին, երբ ռադիոհաղորդումների սովետական ծառայությանը տրամադրվեց 120

կիլովատաանոց կարծալիք հզոր հաղորդիչ, Մոսկվայից ազդանշանի ընդունումը հնարավոր դարձավ բոլոր հինգ մայրցամաքներում:

Արևմտաեվրոպական պետություններից առաջինը կանոնավոր արտասահմանյան ռադիոհաղորդումներ կազմակերպեցին գաղութարար պետությունները:

Այդ ժամանակ սկսվեց BBC-ի կրթամշակութային և մարզական հաղորդումների արտահանումը արտասահմանյան երկրներ (բացառությամբ ԱՄՆ-ի և եվրոպական պետությունների), որը հետագայում մեծ թափ ստացավ: 1935 թվականին BBC-ին կազմակերպեց ԱՄՆ-ի ռադիոկայանների վերահեռարձակումը անգլիական ներքին ցանցում: Միաժամանակ՝ կորպորացիայի հաղորդումները փոխանցվում էին ամերիկյան ռադիոյին:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիները նշանավորվեցին հակահիտլերյան կռալիցիայի անդամ պետությունների ռադիոժառայությունների և «Բեռլին-Յոն-Տոկիո» առանցքի երկրների արտասահմանյան հաղորդումների միջև միջազգային եթերում ակտիվ պայքարով: Այդ փուլում զարգացան արտասահմանյան ունկնդրի և թշնամու զորքերի վրա քարոզչական ու հոգեբանական ներգործությունների տարբեր մեթոդներն ու միջոցները: 1942 թվականի փետրվարի վերջին սկսվեցին «Ամերիկայի ձայնի» առաջին հաղորդումները՝ գերմաներեն ու իտալերեն: Հատուկ ուշադրություն էր հատկացվում ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի (որտեղ ԱՄՆ-ը ռազմական գործողություններ էր մղում) զորքերին ու բնակչությանը: Սան Ֆրանցիսկոյում կառուցվեց հսկայական ռադիոկայան, որը հաղորդումներ էր հեռարձակում ճապոներեն, չինարեն, կորեերեն: Այդպես պատերազմի տարիներին ձևավորվեց արտասահմանյան հաղորդումների խոշորագույն ծառայություններից մեկը:

90-ական թվականներին BBC-ի համաշխարհային ծառայությունը (չաբաթը 820 ժամ հաղորդումների ծավալով, 140 միլիոն մշտական ունկնդիրներով) դարձավ գործող ամենախոշոր ռադիոկայաններից մեկը, որն արտասահմանյան հաղորդումներ էր թողարկում: Գործունեության գլխավոր նպատակներ էին հռչակված նորությունների տարածումը, Անգլիայի կյանքի ու մշակույթի, գիտության ու արդյունաբերության նվաճումների լուսաբանումը, անգլիացիների կարծիքների արտացոլումը համաշխարհային կյանքի կարևոր իրադարձությունների շուրջ:

«Ամերիկայի ձայն» ռադիոկայանը 90-ական թվականներին շաբաթական 1300 ժամ հաղորդումներ էր հեռարձակում 43 լեզուներով՝ 120 միլիոն ունկնդրի համար: Իր գոյության տարիներին ռադիոկայանը նշանակալի դեր կատարեց ազատականացման ու շուկայական բարեփոխումների համար այն երկրներում, որոնք առաջ խորհրդային ճամբարի մաս էին կազմում:

50-ական թվականների սկզբին ԽՍՀՄ-ում հեռարձակման նպատակով ստեղծվեց «Ազատություն» ռադիոկայանը: Դեպի Արևելյան Եվրոպայի և Մերձբալթիկայի երկրներ հաղորդումների հեռարձակման համար ստեղծվեց «Ազատ Եվրոպա» ռադիոկայանը: Մինչև 70-ական թվականների կեսերը երկու ռադիոկայաներն էլ, որ շտաբ-բնակարան ունեին Մյունխենում, գործում էին անկախ տեղեկատվական հաստատությունների ցուցանակով: Երբ ԱՄՆ-ի Կոնգրեսը և կառավարությունը ճանաչեցին ռադիոկայանի իրավական կարգավիճակը, 1976 թվականին տեղի ունեցավ նրանց միավորումը մեկ կազմակերպության մեջ (RFE/RL, Inc): «Ազատ Եվրոպա»-«Ազատություն» ռադիոկայանը դարձավ առաջատար ծառայություն ԽՍՀՄ և սովետական բլոկի երկրներ հաղորդումներ հեռարձակելու նպատակով:

1953 թվականին սկսվեցին ԳՖՀ-ի «Deutsche Welle» («Գերմանական ալիք») ռադիոկայանի հաղորդումները, որը մեծ նշանակություն էր տալիս արևելաեվրոպական լսարանին: Աշխարհի առավել զարգացած յոթ երկրներից խոշոր ռադիոկայաններ՝ արտասահմանյան հաղորդումների համար, ստեղծեցին նաև Ֆրանսիան ու ճապոնիան (80-ական թվականներին «ճապոնիայի ռադիոն» հեռարձակվում էր 23 լեզուներով):

Դեռ 20-ական թվականների վերջին ԽՍՀՄ-ի հարևան շատ երկրներում ակտիվորեն քննարկվում էր արտասահմանյան երկրներ հեռարձակվող մոսկովյան ռադիոկայանների խլացման հարցը՝ համաշխարհային սոցիալիստական հեղափոխության քարոզչությունը դադարեցնելու նպատակով: 1930 թվականին նուլենիսկ այդ խնդրին նվիրված քննարկումներ եղան բրիտանական խորհրդարանի երկու պալատներում: 1933 թվականին Ավստրիայի կառավարության որոշմամբ խլացվում էին Գերմանիայից հեռարձակվող հաղորդումները, որոնք ավստրիացիներին կոչ էին անում միավորվել մեկ միասնական պետության մեջ: Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին Իտալիան խլացնում էր BBC-ի արաբերեն հաղորդումները, Գերմանիան՝ մոսկովյան ռադիոյի հաղորդումները:

Նախապատերազմյան շրջանում և պատերազմի ժամանակ արտաքին ռադիոհաղորդումները հակամարտող կողմերը ամբողջությամբ օգտագործում էին քայքայիչ քարոզչության ու հոգեբանական պատերազմի համար: Պատերազմի ժամանակ նացիստական պետությունները խլացնում էին BBC-ի հաղորդումները եվրոպացիների համար, սակայն բրիտանական իշխանությունները, համոզվելով հիտլերյան քարոզչության ոչ արդյունավետության մեջ, հրաժարվեցին պատասխան քայլից և գերմանական ռադիոհաղորդումները չխլացրին Անգլիայի տարածքում:

1948 թվականին, սառը պատերազմի տարիներին, Ստալինի որոշմամբ սկսվեց BBC-ի և «Ամերիկայի ձայնի» խլացումը ԽՍՀՄ-ում ու Արևելյան եվրոպայում:

Հեռուստատեսություն

20-30-ական թվականներին աշխարհի մի քանի երկրներում պատկերը տարածության վրա փոխանցելու փորձարկումների արդյունքում երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին պարբերական հեռարձակումներ սկսվեցին Մեծ Բրիտանիայում, Գերմանիայում, ԱՄՆ-ում, ԽՍՀՄ-ում:

Հեռուստատեսային լսարանն այդ ընթացքում խիստ սահմանափակ էր: Հեռուստատեսության ի հայտ գալուն հաջորդած երկրորդ համաշխարհային պատերազմը, բնականաբար, արգելք հանդիսացավ նրա հետագա զարգացմանն ու տարածմանը, քանի որ աշխարհը զբաղված էր շատ ավելի «կարևոր և կենսական» գործով՝ տարածքների և ազդեցության ոլորտների վերաբաժանմամբ: Եվ անգամ իր տարածքում ռազմական գործողություններ չունեցող Ամերիկայի Միացյալ Նահանգներում հեռուստատեսությունը վերելք չապրեց. պատերազմի ավարտին երկրում ընդամենը 5000 հեռուստացույց կար:

Հեռուստատեսությունը, որպես տեղեկությունների զանգվածային տարածման միջոց, կայացավ հետպատերազմյան տասնամյակներում և դարավերջին շատ երկրներում արդեն հիմնական տեղեկատվամիջոցն էր:

Առավել զարգացած երկրներում հեռուստահաղորդումները ավելի մեծ լսարան ունեն, քան մանուկն ու ռադիոն, իսկ հեռուս-

տադիտումների միջին տևողությունը օրական 5-8 ժամ է: Հեռուստատեսության համաշխարհային լսարանն այսօր ավելի քան 3 միլիարդ մարդ է ընդգրկում: Այսինքն՝ աշխարհի ողջ բնակչության գրեթե կեսը, որը հսկայական թիվ է: Նորեյլան մրցանակի դափնեկիր Իոսիֆ Բրոդսկին մի ուշագրավ միտք է հայտնել. նրա կարծիքով ամերիկացիներին ազգ է դարձնում հենց հեռուստատեսությունը: Անշուշտ, այստեղ էական ճշմարտություն կա: Սակայն դա վերաբերում է ոչ միայն Ամերիկային, այլև ցանկացած այլ երկրի և: Հեռուստատեսության տարածվածության, նրա ազդեցիկության, բուն էության համախմբող նշանակությունը, կարծում են, մինչև օրս էլ թերագնահատված է մնում:

Հետպատերազմյան շրջանում առավել արագ հեռուստատեսությունը զարգանում էր ԱՄՆ-ում, որտեղ 1939 թվականին Նյու Յորքի նահանգի մայրաքաղաք Օլբանիում սկսվել էին առաջին կանոնավոր ռադիոհաղորդումները NBS ռադիոկորպորացիայի ստեղծած կայանից: ԱՄՆ-ի հեռուստատեսության զարգացման համար լուրջ խթան հանդիսացավ հեռահաղորդակցության ֆեդերալ հանձնաժողովի (FCC) որոշումը, որը 1941 թվականին թույլ տվեց հեռուստահաղորդումներում կոմերցիոն գովազդ օգտագործել:

Այդ տարիներին հեռուստահաղորդումներ սկսեց CBS ռադիոկորպորացիան, իսկ երկու տարի անց՝ ABC խոշորագույն կորպորոցիան: Հենց այս կոմերցիոն գործակալությունները, որոնք հեռուստատեսության ոլորտում գիտատեխնիկական մշակումներ ունեին, դարձան ԱՄՆ-ի հեռուստատեսային արդյունաբերության առաջատարները: Նրանց դիրքերն ամրագրվեց FCC-ի որոշումով, ըստ որի՝ 1948 թվականի սեպտեմբերից մինչև 1952 թվականի ապրիլ, ժամանակավորապես, դադարեցվեց հեռահաղորդիչ կայաններին արտոնագրեր տալը՝ հեռահաղորդակցության ոլորտում կարգուկանոն հաստատելու ու գունավոր հեռուստատեսության ազգային ստանդարտները մշակելու նպատակով: Դա գործող ընկերություններին հնարավորություն տվեց համախմբել ուժերը, ամրապնդել դիրքերը՝ դիմակայելու համար նոր մրցակիցներին: Արտոնագրերի մորատորիումի ավարտից հետո NBS, CBC, ABC կորպորոցիաներն այնքան էին հզորացել, որ մինչև 80-ական թվականների կեսերը գերիշխում էին ազգային հեռուստացանցում:

Հենց այդ կորպորացիաները վճռական ներդրում ունեցան ԱՄՆ-ի կոմերցիոն հեռուստատեսության ձևավորման գործում, որը ներկայանում է կազմակերպական երեք տարբերակներով.

1. Ազգային հեռուստացանցեր, որոնք հեռուստաալիքների խումբ են, որ պատկանում են առաջատար հեռուստաընկերություններին և ղեկավարվում են նրանց կողմից: 80-ական թվականների եթերային հիմնական հեռուստացանցերի եռյակին՝ NBS, CBS, ABC, ընդհուպ մոտեցավ 1986 թվականին մեդիա մագնատ Ռուպերտ Մերդոկի ստեղծած Fox խոշոր ցանցը:

2. Հեռուստացանցերի մասնաճյուղեր (հեռուստակայաններ, որ «ասոցիացված են» ցանցերի հետ), որոնց առանձին հեռուստակայանները հեռուստացանցերի տերերի սեփականությունը չեն և նրանց հետ կապված են պայմանագրային հարաբերություններով: Իբրև օրենք՝ դրանք տեղական կայաններն են, որ չունեն սեփական արտադրական հզոր բազա: Ցանցերը մասնաճյուղերին կոմերցիոն հիմունքերով ապահովում են հաղորդումների ծրագրերով՝ երաշխավորելով իրենց կոմերցիոն գովազդ ներգրավելու իրավունքը:

3. Անկախ կայաններ, որ կապված չեն հեռուստացանցերին և ձևավորում են ծրագրերը սեփական ուժերով կամ գնում են այլ հեռուստաընկերություններից (երբեմն ծրագրերը նաև փոխանակում են): Նրանց դիմացկունությունն ու շահութաբերությունը գլխավորապես ապահովվում է լոկալ գովազդային շուկային մոտ լինելով ու նրա առանձնահատկությունները լավ իմանալով:

Գովազդային գործունեությունից ստացած եկամուտներն օգտագործելով իբրև ֆինանսավորման հիմնական միջոց՝ կոմերցիոն հեռուստաընկերությունները շահագրգռված են գովազատուներից առավելագույնը ստանալ: Գովազդի գները կախված են հեռուստաընկերության վարկանիշից:

Բարձր վարկանիշ ապահովելու ձգտումը կոմերցիոն հեռուստաալիքներին ստիպում է հրաժարվել որակյալ, բայց ցածր վարկանիշ ունեցող հաղորդումներից հօգուտ այն ծրագրերի, որոնք ապահովում են մեծ հեռուստալսարան՝ վիկտորիաններ, մրցույթներ, շոուներ, «օճառային օպերաներ» և այլ հանրահայտ հեռուստաֆիլմաշարեր ու կինոֆիլմեր, որոնք ոչ շատ խստապահանջ հեռուստադիտողին են հասցեագրված:

Բարձր վարկանիշի ձգտումը կոմերցիոն հեռուստաալիքներին ստիպում է նաև հաղորդումներում օգտագործել անձնավորման հնարքը, հրավիրելով «անկորների» (անգլերեն the anchor բառից, որ նշանակում է խարիսխ, խայծ) հանրահայտ հեռուստանեկնաբանների և հաղորդավարների, հեռուստատեսության աստղերի: Նորությունների ծրագրերում բարձր վարկանիշի ձգտումը հանգեցնում է պատկերվող իրադարձությունների ողբերգականացմանը: Նախապատվությունը տրվում է սենսացիոն հեռուստասյուժեներին, որ առանձնանում են ցուցադրության առումով, մինչդեռ ոչ դիտարժան սոցիալական իրադարձությունները անտեսվում են կամ երկրորդ պլան են մղվում նորությունների ծրագրերում:

80-90-ական թվականներին հեռուստատեսության հետագա առևտրայնացման ազդեցությամբ զվարճանքի տարրեր են հայտնվում նաև հեռուստալրագրության «լուրջ» ժանրերում՝ ձևափոխելով դրանք: Նորությունների ծրագրերում առաջանում է **ինֆորտեյնմենթի** երևույթը (հասկացությունը ձևավորվել է ինֆորմացիա և զվարճանք՝ information+entertainment բառերից և նշանակում է այնպիսի նյութեր, որտեղ նորությունների անվան տակ առաջարկվում են տեղեկատվական նորությունների նշանակություն չունեցող զվարճալի սյուժեներ): **ինֆորտեյնմենթ** են նաև տեղեկատվական-զվարճալի հաղորդումները՝ շոուների և թոք-շոուների տեսքով, որոնք նվազագույն հանրորեն նշանակալից տեղեկատվություն են պարունակում:

Վերջին 25 տարում մալուխային հեռուստատեսության զարգացմամբ հեռուստադիտողին առաջարկվում են նաև տասնյակ մասնագիտացված ալիքներ, մեծացել է նաև կոմերցիոն գովազդի հասցեականությունը: Այդ առումով տարածվել են **ինֆերմերշիալսները** (infotmation-տեղեկատվություն և commercials-գովազդային հայտարարություն բառերից)՝ վճարովի գովազդ, որ ներկայացվում է հեռուստաշոուի տեսքով և հասցեագրվում է որոշակի լսարանի:

Արևմտյան կոմերցիոն հեռուստաընկերություններում տարածված է ևս մի ժանր՝ փաստագրական կամ վավերագրական դրաման (դոկումենտալ դրամա), որը նշանակում է իրական իրադարձությունների ցուցադրություն՝ տեսաշարով ու լուսանկարներով՝ համադրված դրամատիկ իրադարձությունների հետ: Նման հաղորդումներում նկարահանվում են դերասաններ,

որոնց խաղը պիտի համոզիչ դարձնի փաստագրված իրադարձությունների վերարտադրությունը: Դոկուդրամաները օգտագործվում են, օրինակ, պատմական կամ քրեական տեսարանները վերարտադրելու համար: Ինչպես եւ նախորդ շատ դեպքերում՝ այս ժանրը եւս իր նախատիպերն ու նախածեւերն ունի. որպես դասական օրինակ, կարելի է հիշատակել «Համլետի» շրջիկ դերասանախմբի բեմադրությունը՝ հիմնված ինչպես իրական իրադարձությունների, այնպես էլ ընկալումների եւ վարկածների վրա:

Ելնելով հեռուստահաղորդումները լսարանի կրթությանը ծառայեցնելու անհրաժեշտությունից՝ ԱՄՆ-ում 50-ական թվականների սկզբին որոշվեց պահուստային հաճախականություններ ունենալ կրթական հասարակական հեռուստատեսության համար: Առաջին ոչ կոմերցիոն կրթական հեռուստակայանը ստեղծվեց Յուլուստոնում, 1953 թվականին: Ընդհուպ մինչև 60-ական թվականների վերջը հեռուստատեսության այս տեսակը թույլ էր զարգացած, գլխավորապես ֆինանսների պակասի պատճառով, քանի որ հեռուստահաղորդումները իրականացվում էին հիմնականում մասնավոր դոնորների նվիրատվությունների շնորհիվ:

1967 թվականին հիմնվեց Հասարակական հաղորդումների ծառայությունը (PBS), որը կրթամշակութային ծրագրերը և դրանց փոխանակումը բարելավելու նպատակով միավորում էր երկրի բազմազան ոչ կոմերցիոն հեռուստակայանները: PBS-ը առաջինը ԱՄՆ-ում օգտագործեց արբանյակային հեռուստատեսության հնարավորությունները՝ կրթամշակութային ծրագրերը երկրի ամբողջ տարածքում սփռված ոչ կոմերցիոն կայաններին հաղորդելու համար:

Իրականում կրթական ալիքները ապահովում են հաղորդումների մասնագիտական բարձր մակարդակ՝ մասայական հեռուստալսարանին առաջարկելով բովանդակալից գիտահանրամատչելի ծրագրեր, հասարակական սուր հիմնահարցերի քննարկումներ:

Եվրոպական երկրներում հանրային հեռուստատեսությունը կազմակերպվում եւ գործում է այլ սկզբունքներով: Հանրային հեռուստակազմակերպությունները պարտավոր են հաշվետվություն ներկայացնել խորհրդարաններին ու քաղաքացիներին իրենց գործունեության արդյունքների մասին (օրինակ, բրիտանական խորհրդարանը BBC-ի գործունեության արդյունքների

պարբերական ունկնդրումներ է անցկացնում: Այս կորպորացիան ամեն տարի հրապարակում է մանրամասն հաշվետվություններ իր գործունեության մասին մամուլում ու ինտերնետում՝ տեղեկացման ու քննարկումների համար, BBC-ի կառուցվածքում գործում է առանձին բաժին բողոքների ու հեռուստադիտողների քննարկումների համար):

Հանրային հեռուստատեսությունների հետաքրքիր փորձ է կուտակված ԳԴՀ-ում: Գերմանիայում հեռուստահաղորդումները սկսվեցին 1935 թվականին՝ նացիստական իշխանության ժամանակ և նրանց վերահսկողությամբ: 1936 թվականին ամառային օլիմպիական խաղերի հեռարձակումը Բեռլինից նացիստները առիթ դարձրին գերմանական գիտության ու տեխնոլոգիաների առավելությունների քարոզչության համար: Պատերազմի ժամանակ Բեռլինյան հեռուստատեսային համալիրը ավերվեց:

Հետպատերազմյան շրջանում ԳԴՀ օրենսդրության մակարդակով ամրակայվեցին երկրում հաղորդակցական գործունեության իրականացման նոր սկզբունքներ: 1948 թվականին ընդունված Սահմանադրության, ապա նաև հեռարձակման մասին օրենքների մեջ ամրակայվեց անկախ «հանրային-իրավական» կարգավիճակը: Օրենսդրության մշակման համար հաշվի առնվեց անցյալի տխուր փորձը, երբ գերմանական լրատվամիջոցները հայտնվել էին նացիստական կուսակցության և գեբեյսյան նախարարության քաղաքական վերահսկողության տակ: Ըստ նոր օրենսդրության՝ հեռարձակող կազմակերպությունները չէին կարող պատկանել ոչ պետությանը, ոչ որևէ քաղաքական կուսակցության, ոչ առևտրային հաստատությունների: Հաղորդումները ԳԴՀ-ում պիտի իրականացնեին «հանրային-իրավական ռադիոհեռուստատեսային կազմակերպությունները», որ ստեղծվել էին ըստ տարածքների՝ երկրի դաշնային կառուցվածքին համապատասխան: Հեռարձակման հանրային բնույթի պահպանման նպատակով ստեղծվեցին դիտորդական մարմիններ, որոնք ներկայացնում էին սոցիալական տարբեր խմբերի ու քաղաքական կազմակերպությունների հեռուստատեսությունում ու ռադիոյում՝ հեռարձակող խորհուրդներ, որոնց կազմում էին քաղաքական կուսակցությունների, քաղաքացիական տարբեր միավորումների, տարածքային խորհրդարանների, արհմիությունների, եկեղեցու, մշակույթի ու գիտության ներկայացուցիչներ: Նրանք խորհուրդներ էին տալիս հեռարձակող կազմակերպություններ-

րին ծրագրային քաղաքականության կազմակերպման հարցերում, ուսումնասիրում էին բյուջեի կատարման հաշվետվությունները, մասնակցում էին կադրային հարցերի լուծմանը:

Ինչպես և 1950 թվականին ստեղծված ARD-ն, հիմնականում նույն սկզբունքով էր գործում 1961 թվականին ԳԴՀ-ում հիմնադրված հանրային երկրորդ ալիքը՝ ZDF-ը: ZDF-ի համար էլ են գործում հանրային հեռուստատեսության համար բնորոշ սահմանափակումները գովազդի հեռարձակման առումով: Օրինակ՝ գովազդ չի հեռարձակվում հանգստյան օրերին:

20-րդ դարավերջը բնորոշվում է եվրոպական համարյա բոլոր երկրներում հեռարձակման առևտրային ձևերի տարածմամբ, հանրային ու մասնավոր հեռուստաընկերությունների աճող մրցակցությամբ: Առևտրայնացված հեռուստատեսությունը 70-ական թվականների երկրորդ կեսին արագ տարածվեց Իտալիայում, 80-ական թվականներին՝ Ֆրանսիայում, ապա նաև այն երկրներում, որտեղ մինչ այդ գոյություն չուներ: Բայց զվարճանքային մասնավոր հեռուստաընկերությունները, որ հեռուստադիտողից ընկալման ինտելեկտուալ ջանքեր չէին պահանջում, Եվրոպայում շատ ավելի քիչ կողմնակիցներ ունեն, քան օվկիանոսից անդին: Օրինակ, Ավստրիայում հանրային երկու հեռուստաընկերություններն էլ՝ ORF-1 և ORF-2, որ գործում են «լսարանի ընդլայնում՝ ծրագրերի որակի պահպանմամբ» կարգախոսով (այսինքն՝ հրաժարվում են որոշ հաղորդումներից, մասնավորապես՝ բռնություններով հագեցած), պահպանում են մեծ հեռուստալսարան, մինչդեռ նրանց ամենալուրջ կոմերցիոն մրցակցին՝ RTL-ին բաժին է հասնում հեռուստադիտողների 8,4 տոկոսը: Անգլիական կոմերցիոն ITV հեռուստաընկերությունների խմբի մրցակցային ճնշմանը և մասնավոր արբանյակային հեռուստատեսություններին հակառակ՝ բրիտանացի հեռուստադիտողների կեսը նախընտրում է BBC-ն:

Հեռարձակման պետական մոդելը գերակայում է ասիական, արաբական ու աֆրիկյան երկրներում, որտեղ, փաստորեն, նաև շատ ուշ սկսվեցին հեռուստահաղորդումները, և որտեղ այսօր էլ բազմաթիվ են օտարերկրյա արտադրության հաղորդումները (հիմնականում ամերիկյան և եվրոպական զարգացած երկրների):

Սակայն հեռուստատեսությունն անշեղորեն զարգանում էր ու շարունակում է զարգանալ՝ միայն իրեն բնորոշ օրինաչափություններով ու ծավալներով:

1962 թվականի հուլիսին Telstar հեռարձակիչ արբանյակի շնորհիվ, որ մշակել էր ամերիկյան ATT կորպորացիան, սկսվեց տիեզերական հեռուստատեսության դարաշրջանը, հնարավոր դարձան ուղղակի հեռարձակումները ԱՄՆ-ի ու Եվրոպայի միջև: Արբանյակային հեռարձակումների միջազգային մասշտաբով զարգացումը պահանջեց աշխարհի շատ պետությունների միջոցների ու ջանքերի միավորումը: 60-70-ական թվականներին ձևավորվեցին արբանյակային կապի միջազգային մի շարք կազմակերպություններ, որոնք ապահովում էին կապի արբանյակների ուղեծիր դուրս բերումը, շահագործումը, տիեզերական կապի ալիքների փորձարկումն այն երկրներում, որոնք դեռևս չուներին անհրաժեշտ տեխնիկան ու սարքավորումները:

Սակայն, ինչպես ամեն ինչ՝ սկզբում, արբանյակային հեռուստակապը ևս իր ձևավորման փուլում խիստ թանկ հաճույք էր, քանի որ ողջ տեխնոլոգիական ցիկլը ամբողջացնելու համար, բացի թանկարժեք կապի արբանյակներից և դրանց շահագործումից, պահանջվում էին նաև երկրի վրա կառուցվող խիստ նյութատար և ծախսատար հսկայական ընդունող կայանքներ, որոնք էլ էապես բարձրացնում էին մատուցվող ծառայությունների ինքնարժեքն ու գինը:

80-ական թվականների կեսերից սկսվում է անմիջաբար արբանյակային հեռուստահեռարձակման շրջանը, որը չի պահանջում թանկարժեք երկրային ընդունիչ համալիրներ և թույլ է տալիս ազդանշանն ընդունել փոքր ու ոչ թանկ անհատական ընդունիչներով, որոնք ունեն պարաբոլիկ ակտիվացնելի «ափսեներ», որոնց գինը, ի դեպ, 1980 թվականից հետո ընկած երկու տասնամյակի ընթացքում 10000 դոլարից նվազեց 10-20 անգամ:

Հեռուստատեսությունը, սակայն, ավելի շատ ոչ այնքան որպես տեղեկատվամիջոց, որքան որպես լրատվամիջոց է դիտարկվում: Հենց այդ է պատճառը, որ բազմաթիվ հեռուստաընկերություններ իրենց հիմնական գործը նորությունների հաղորդումն են դարձրել:

Այդպիսին է, օրինակ, Cable News Network (CNN) հեռուստաընկերությունը, որը վնասով աշխատող հեռուստաընկերությունից (80-ական թվականներ) ընդամենը մեկ տասնամյակի ընթացքում դարձավ հեռուստալուրերի գլոբալ և շահութաբեր ծառայություն: Այժմ նրա հաղորդումները դիտում են աշխարհի ավելի քան 200 երկրների շուրջ 200 միլիոն ընտանիքներ:

CNN-ը համարյա չի մեկնաբանում, չի ընդհանրացնում, կարծիք չի հայտնում: Նա ցույց է տալիս այն, ինչ կատարվում է իրական ժամանակում: Վերհիշենք, թեկուզև Իրաքյան պատերազմը 2003 թվականին, որը կարելի է անվանել «Պատերազմ ուղիղ եթերում» կամ 2005-ին Յոնի Բենեդիկտոս 16-րդ պապի ընտրությունը: Կամ, անգամ, մահերը՝ ուղիղ եթերում. թուրք ահաբեկչի՝ Անկարայում և երկու ֆուտբոլիստների՝ հենց խաղի ընթացքում:

CNN-ի եվրոպական «գործընկերը» Euronews-ն է, որը արդյունք է, անշուշտ, համաեվրոպական ինտեգրացիոն խոր գործընթացների:

Բազմազգ Euronews արբանյակային ծառայությունը հեռարձակվում է 1993 թվականի հունվարի 1-ից: Euronews-ի բաժնետերեր են 12 երկրների հեռուստակազմակերպություններ՝ հիմնականում Միջերկրածովյան. ներառյալ Ֆրանսիան, Իտալիան, Իսպանիան, Յունաստանը, Պորտուգալիան, Կիպրոսը, Բելգիան, Ֆինլանդիան, Եգիպտոսը: Euronews-ը ստեղծվել է Եվրոպական հեռարձակողների միության նախաձեռնությամբ՝ Եվրամիության քաղաքական ու ֆինանսական աջակցությամբ:

Ստահլացված լինելով իբրև ամերիկյան CNN-ի եվրոպական այլընտրանք՝ Euronews-ը հիշեցնում է համաեվրոպական մեդիա-ռևյու: Euronews-ի պարբերական, մշտապես համալրվող թողարկումները ընդմիջվում են քաղաքականության, բիզնեսի, բնապահպանության, գիտատեխնիկական նվաճումների, մշակույթի, արվեստի, սպորտի, կինոյի, նորաձևության մասին հաղորդումներով:

90-ական թվականներին ձևավորվեցին համաեվրոպական նորությունների հեռուստահեռարձակման երեք հիմնական կենտրոններ, որոնք մրցակցում էին միմյանց հետ՝ արբանյակային հեռուստատեսություն եվրոպական բազմազգ լսարանի համար (Euronews), բրիտանական (BBC World) և գերմանական (Deutsche Welle):

Euronews-ի նման համակարգերից է Arabsat-ը՝ արաբական արբանյակային հեռուստատեսային կազմակերպությունը, որի ստեղծման գաղափարին աջակցել են 1967 թվականին Թունիսում արաբական երկրների նախարարների խորհրդակցության մասնակիցները: 1976 թվականի ապրիլին արաբական երկրների կապի նախարարները Կահիրեում ստորագրեցին համաձայնա-

գիր, որով արաբական երկրների լիգայի հովանու ներքո ստեղծվեց արաբական արբանյակային կապի համակարգը (Arabsat)՝ իբրև միջպետական կազմակերպություն, որն ապահովում է հեռուստատեսային հեռարձակումները, հեռախոսային խոսակցությունները կապի արբանյակների միջոցով և լիգայի անդամ երկրների տեղեկատվության փոխանակումը: Arabsat-ի հիմնական բաժնետերերը դարձան հինգ երկրներ՝ Սաուդյան Արաբիան, Լիբանանը, Եգիպտոսը, Քուվեյթը, Արաբական Միացյալ էմիրությունները:

Համաարաբական այդ հեռուստաալիքի շնորհիվ տարածաշրջանում հնարավորություն ստեղծվեց դիմակայել արևմտյան հեռուստատեսության մենիշխանության տարածմանը, որը կարող էր սպառնալիք դառնալ այդ երկրների համար՝ մշակութային համահարթեցման առումով:

Ամնիջական հեռարձակման տարածմամբ Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի զարգացող շատ երկրներ արբանյակային սեփական հեռուստատեսության ստեղծման շահագրգռություն դրսևորեցին: 1985 թվականին Բրազիլիան ուղեծիր դուրս բերեց կապի սեփական Brasilsat արբանյակը, որ 24 ալիքով հեռուստահեռարձակման հնարավորություն է տալիս: Մեքսիկական Televisa հեռուստացանցն ապահովում է իր հաղորդումների հեռարձակումը դեպի Լատինական Ամերիկա, ԱՄՆ, Եվրոպա՝ PanAmSat-ի՝ աշխարհում առաջին միջազգային մասնավոր համակարգի միջոցով: Անդյան խմբի Լատինամերիկյան երկրները հաղորդումներ են հեռարձակում Condor արբանյակների համակարգի միջոցով: Աֆրիկյան երկրները օգտագործում են Afrosat արբանյակային համակարգի արբանյակային կապի հնարավորությունները, որը պիտի բարելավի հեռուստահաղորդումների տարածումը մայրցամաքում: 1993 թվականին ՅՈՒՆԵՍԿՕ-ի և միջազգային ու արտասահմանյան կազմակերպությունների աջակցությամբ ուղեծիր դուրս եկավ «Afrostar» կապի արբանյակը, որն Afrosat-ի շրջանակներում պիտի ապահովի համաաֆրիկյան արբանյակային հեռարձակումը: Աֆրիկյան միասնության կազմակերպության հովանու ներքո ստեղծված համաաֆրիկյան արբանյակային հեռուստատեսության համակարգը ապահովվելու է մայրցամաքի հեռուստաընկերությունների ծրագրերի ուղիղ փոխանցումը:

Ահա իր հիմնական բնորոշիչներով այսպիսին է 20-րդ դարի տեղեկատվական համապատկերը: Դար, որը մարդու կենսագործունեության բոլոր ոլորտներում՝ հոգևոր, մտավոր և նյութական, աննախադեպ և թռիչքային զարգացում արձանագրեց, ավելի սերտ և անմիջական դարձնելով այդ ոլորտների և նրանց յուրաքանչյուր բաղադրիչի փոխկապակցվածությունն ու փոխայամանավորվածությունը, որակական աննախադեպ աճ և հագեցվածություն ապահովելով դրանցից յուրաքանչյուրում:

Այս ամենում իր անուրանալի դերն ու նշանակությունն ունեցավ հաղորդակցության միջոցների զարգացումն ու կատարելագործումը, որն էլ, ինքնին, նաև որոշակի զարգացումներ պարտադրեց:

Նշենք նաև, որ XX դարի վերջին աշխարհում կար 2,2 միլիարդ ռադիոընդունիչ, 1,2 միլիարդ հեռուստացույց, 10 հազար անուն օրաթերթ էր լույս տեսնում, 4 հազար գեղարվեստական ֆիլմ էր թողարկվում, գրքերի ընդհանուր տպաքանակն անցնում էր 10 միլիարդը:

Հաղորդակցության զարգացումն ու տեղեկությունների զանգվածային տարածման միջոցների ազդեցության աննախադեպ աճը պայմանավորված էր դեպի վեր տանող երեք հիմնական խոշոր աստիճաններով, որոնցից առաջինն, անշուշտ, տպագիր տեղեկատվամիջոցների իրապես զանգվածային բնույթ ստանալն էր, որն իր հերթին էական խթան հանդիսացավ կուտակված փորձի և գիտելիքների, ինչպես նաև նորությունների արագ ու արդյունավետ տարածման և փոխանակման համար: Թերթերն ու ամսագրերը հենց դրա շնորհիվ կորցրին միայն էլիտային սպասարկելու իրենց գործառնությունը և վերածվեցին առանձնահատուկ սոցիալական ինստիտուտի, որն արդեն ոչ միայն զարգանում էր սեփական օրինաչափություններով, այլև իր առանձնահատկությունների շնորհիվ՝ էապես պայմանավորում էր նաև համընդհանուր այլ զարգացումներ:

Երկրորդ խոշորագույն քայլը՝ «աստիճանը» ռադիոյի, ապա և՛ հեռուստատեսության գյուտն էր և նրանց զանգվածային տարածումը, որն էլ ավելի «փոքրացրեց» և մատչելի դարձրեց Երկիր մոլորակը, անհամեմատ ընդլայնեց միմյանց հետ հաղորդակցության հնարավորություն ու ցանկություն ունեցողների քանակը, վերացրեց ցանկացած սահման և, ի տարբերություն անգամ

ամենօրյա թերթերի, որոնք օրը մեկ կամ երկու-երեք անգամ էին «հանդիպում» իրենց ընթերցողներին (նկատի ունենք որոշ խոշոր թերթերի առավոտյան, կեսօրյա և երեկոյան թողարկումները) ռադիոն և հեռուստատեսությունը իրենց հավատարիմ ունկնդրի և ակնդրի հետ են շուրջօրյա՝ ցանկացած պահի: Իսկ նրանց բազմազանությունն ու օրավուր ավելի ու ավելի դյուրին դարձող մատչելիությունը կատարյալ է դարձնում ինչպես նրանց ներգործությունը իրենց լսարանի վրա՝ հասարակական կարծիքի ձևավորման ու ուղղորդման տեսքով, այնպես էլ լսարանի ընտրության ընդլայնվող իրավունքները: Անհրաժեշտ է հիշատակել նաև արբանյակային հեռուստատեսությունը, որը բոլորին վերջնականապես մերձեցրեց բոլորին:

Երրորդ խոշորագույն աստիճանը, իհարկե, Ինտերնետն էր, որը սաղմնավորվեց 1986 թվականին: Համակարգչային գլոբալ ցանցը, որը պարզապես անսահմանափակ հնարավորություններ ունի: Հենց այս երեք խոշոր աստիճաններն էլ, փաստորեն, ապահովեցին հասարակությունների «բացումը»:

2000 թվականին «համաշխարհային սարդոստայնից» (ինչպես հաճախ անվանում են Ինտերնետը) օգտվում էին ավելի քան 200 միլիոն բաժանորդներ, իսկ առաջիկա մեկ-երկու տարում նրանց թիվն արդեն կանցնի մեկ միլիարդից:

Այս երրորդ աստիճանի զարգացման տեմպերն ու արդյունքները պարզապես աննախադեպ են: Գրեթե մեկ-երկու տարում ստեղծվեցին հազարավոր ցանցային «թերթեր» ու «ամսագրեր», որ տեսականորեն հասու են ցանկացածին, ով մուտք ունի ցանց՝ աշխարհի որ երկրում էլ լինի:

Էլեկտրոնային մամուլը հատկապես արագ էր զարգանում 1995 թվականից ի վեր: 1996 թվականին ԱՄՆ-ում արդեն կային 1300 ցանցային թերթեր, հարյուրավոր հանդեսներ ու ամսագրեր: Էլեկտրոնային տարբերակներ ունեին 400 թերթեր, հարյուրավոր ամսագրեր: Այդ շրջանում ամեն օր 10 նոր էլեկտրոնային պարբերական էր հայտնվում: 2000-ի սկզբին ԱՄՆ-ի 1500 օրաթերթերն ու 18000 ամսագրերն ու հանդեսները սեփական web կայքեր ունեին: Տեղեկատվական շատ գործակալություններ, հեռուստաընկերություններ ու ռադիոկայաններ բացեցին իրենց web հանգույցները: Իրականություն դարձան ցանցային հեռուստահաղորդումները և ռադիոհաղորդումները:

Ինչպես և պետք էր սպասել՝ համաշխարհայնացումը, որն արտահայտվում է նաև Երկիր մոլորակի «փոքրացմամբ», ժուռնալիստիկայում աստիճանաբար «հակառակ» գործընթացի սկիզբ է դառնում նաև՝ տարբեր տեղեկատվամիջոցների խիստ մասնագիտացման, քանի որ միայն դրանով հնարավոր կլինի պահպանել իրական զանգվածայնությունը. մակրոուրերին փոխարինելու են գալիս միկրոուրերը: Եվ դա շատ բնական է: Տեղեկությունների, գիտելիքների, նորությունների այն անախտադեպ ծավալը, որն այժմ առկա է, անհնարին է ընկալել և, առավել ևս՝ յուրացնել: Ուստի առաջարկվող ընտրությունը (ցանկացած ձևի) էական դյուրացնում է լսարանի գործը և դրանով իսկ ոչ միայն ավելի մատչելի, այլև ավելի հրապուրիչ է դառնում նրա համար: Եվ դա բնորոշ է բոլոր ՁԼՄ-ներին, իրենց բոլոր դրսևորումներով:

20-րդ դարավերջին բնորոշ և այսօր էլ շարունակվող միտումներից մեկն էլ տեղեկությունների զանգվածային տարածման միջոցների գլոբալացումն ու ընդհանրացումն է, որը նրանց հնարավորություն է տալիս ոչ միայն շահութաբեր գործունեություն ծավալել, այլև, ընդարձակվելով, անհամեմատ ավելի մեծ լսարաններ նվաճել, գաղափարաքաղաքական գործունեություն ևս ծավալել, որն իր բացահայտ կամ էլ թաքնված տարբերակներով նաև քաղաքական շահաբաժին է ենթադրում ու ապահովում:

Խոշորագույն մեդիա կորպորացիաներին պատկանող պարբերականները (ամերիկյան «International Gerald Tribune», «USA Today», «Wall Street Journal», անգլիական «Financial Times», ֆրանսիական «Le Monde», գերմանական «Frankfurter Allgemeine Zeitung», քերթերը, «Time Newsweek», «Reader's Digest» ամերիկյան հանդեսները) մեծ տպաքանակներով տարածվում են աշխարհի շատ երկրներում, մեծամասնությունն ունի արտասահմանյան տարբերակներ՝ հաճախ լինելով տեղական լեզուներով՝ հարմարեցված տեղական լսարանի առանձնահատկություններին: Նման քերթերի ու հանդեսների առկայությունը, տարածման վեր և համազգային համակարգով, որոշ հետազոտողների մոտեցումներով, որ ձևավորվել են «միջազգային» կամ «գլոբալ» խմբերի հրատարակություններ:

Միավորումների հետևանքով մեդիա բիզնեսի համաշխարհային հիերարխիայում առանցքային դեր ունեցող խոշորագույն կոնցեռնների թիվը 1987 թվականին կրճատվեց մինչև 29, 1990-ին՝ դարձավ արդեն 23, 1992-ին՝ 14, 1997-ին՝ 10:

Մեդիա հսկաներից առաջինն ու ամենախոշորը «AOL Time Warner» կոնցեռնն է, որ ներառում է AOL-ը, «Time», «Fortune», «Sports Illustrated», «People», «Entertainment Weekly» և այլ ամսագրեր (33 խոշորագույն հրատարակություններ) NBO, CNN, TBS, TNT, Cartoon Network հեռուստակայանները, կինոընկերություններ, համակարգչային կառույցներ (Compuserve, Netscape): Անհրաժեշտ է ավելացնել նաև խոշոր գրահրատարակչական և վաճառքի ցանցերը, ինչպես նաև՝ բոլորին հայտնի «Warner Brothers» և «New Line Cinema» կինոընկերությունները, որ մեծ ու փոքր էկրանի կինոարտադրության համաշխարհային առաջատարներ են:

20-րդ դարավերջին մեդիա հսկաներից երկրորդը «Ուոլտ Դիսնեյ» կորպորացիան է, որին 1995 թվականից, ի թիվս բազմաթիվ այլ ընկերությունների, պատկանում է ամերիկյան ASC հեռուստացանցը:

Մեդիա օլիգարխների մեծ վեցյակի մեջ էին Ռուպերտ Մերդոկի «Նյուս կորպորեյշն» կորպորացիան (նրան պատկանում են «Fox» հեռուստացանցը և նորությունների «Fox News Channel» ալիքը), «Ջեներալ էլեկտրիկ» կոնցեռնը, որի սեփականությունն են NBS հեռուստացանցը և մալուխային CNBC-ն, «Մայկրոսոֆտ» կորպորացիան, որը «Ջեներալ էլեկտրիկի» հետ շուրջօրյա մալուխային հեռուստատեսային MSNBS ալիքի տերն է:

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ ՀԱՅՈՑ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

18-րդ դարավերջը նաև հայ լրագրության սկզբնավորումը նշանավորեց՝ թող որ իր սաղմնային վիճակով: 1794 թվականին Մադրասում Հարություն քահանա Շնավոնյանը հրատարակեց առաջին հայ պարբերականը՝ «Ազդարարը»:

Ու չնայած Հարություն Շնավոնյանի նպատակներից էր նաև խոհեմության քարոզը, որպեսզի իր ընթերցողը որքան հնարավոր է հեռու մնա Եվրոպայում տարածված հեղափոխական տրամադրություններից, այնուամենայնիվ, «Ազդարարը» ազգային ինքնագիտակցության զարթոնքի և լուսավորության տարածման ջատագով դարձավ: Սակայն ակնհայտ է, որ ընդամենը մի քանի տասնյակ բաժանորդ ունեցող և զնալով ավելի ու ավելի անմատչելի դարձող գրաբարով հրատարակվող «Ազդարարը» չէր կարող էական ազդեցություն ունենալ և ոչ մի ասպարեզում: Այն հիմնականում նվիրված էր «բարեպաշտ պարոնաց և մաքրակենցաղ տիկնանց Մադրասիս Հայոց», թեպետ Հարություն Շնավոնյանը փորձում էր հանդեսը տարածել Մադրասից դուրս նաև՝ նա Կ.Պոլսում, Նախիջևանում, Էջմիածնում ավելի շատ բաժանորդներ ուներ: 18-րդ համարից հետո՝ 1796 թվականին «Ազդարարարը» դադարեց լույս ընծայվել:

1819 թվականին Կալկաթայում, Մարտիրոս Մկրտչյանի խմբագրությամբ, լույս տեսավ «Շտենարան» պարբերականը, որը կարելի է զարգացման մեկ քայլ համարել «Ազդարարի» համեմատությամբ:

Ուշագրավ են հնդկահայ գաղութի մյուս պարբերականները ևս. «Օճանասփյուռ», «Եղբայրասեր», «Ազգասեր», «Ազգասեր Արարատյան», որոնցից ամենանշանակալին Մեսրոպ Թաղիադյանի խմբագրությամբ հրատարակվող «Ազգասերն» էր (1845-1848 թվականներ), որն այնուհետև վերանվանվեց «Ազգասեր Արարատյան»-ի և հրատարակվեց մինչև 1852 թվականը: Մեսրոպ Թաղիադյանի նպատակն ու նվիրումն էլ էր ազգի լուսավորությունը, որը նաև ու անպայման ժողովրդավարություն էր ենթադրում, հատկապես անիրավված մարդու շահերի պաշտպանության, ազատության ու անկախության ձգտում և նվաճում:

Ֆրանսիական հեղափոխության գաղափարների ջատագովը դարձավ նաև 1848-1849 թվականներին Մադրասում հրատարակված «Բանասեր» պարբերականը, որն իր հենց այդ դիրքորոշման պատճառով էլ խիստ կարճ կյանք ունեցավ:

Վենետիկում Մխիթարյանները 1799 թվականին սկսեցին պարբերաբար հրատարակել «Տարեգրություն» կոչվող փոքրիկ տետրակները, որոնց 1803 թվականին փոխարինեց «Եղանակ Բյուզանդյան» տարեգիրքը (մինչև 1820 թվականը): Ղուկաս Ինճիճյան վարդապետի հրատարակած «Եղանակ Բյուզանդյանը» ուներ «գուշակությունք փոփոխությանց լուսնո, փոխանակությունք եղանակաց, աստեղաց դիրքին, մետեորական մարմնոց», ինչպես նաև՝ բարոյագիտական բաժին, ուր աշխարհաբարով փոքրիկ պատմություններ, առակներ էին տպագրվում:

1812 թվականին Կ.Պոլսում կազմակերպվում է «Արշարունյաց ընկերությունը»՝ նպատակ ունենալով «**Ազգի մեջ ընթերցանություն տարածել, հրատարակելով գրքեր ու լրագիրներ**»: Ընկերությունը որոշում է Վենետիկում հրատարակել մի լրագիր՝ վարդապետների խմբագրությամբ: Եվ 1812 թվականին Վենետիկի Սուրբ Ղազար կղզում տպագրվում է «Դիտակ Բյուզանդյանը»՝ ամիսը երկու համար պարբերականությամբ: «Դիտակ Բյուզանդյանը» մեծ տեղ էր հատկացնում ճանաչողական բնույթի գիտելիքների քարոզչությանը, տարբեր երկրների առօրյային ու առանձնահատկություններին, այնտեղ ի հայտ եկած տարբերույթ, սակայն առաջընթաց և զարգացում խորհրդանշող նյութերին ու երևույթներին: Առավելությունը նախորդներից այն էր, որ «Դիտակ Բյուզանդյանը» տպագրվում էր զուտ ժողովրդական լեզվով (խմբագիրներն ասում էին՝ «ռամկորեն»), որպեսզի հասկանալի լինի ոչ միայն «գրոց» մարդկանց, ովքեր տիրապետում էին գրաբարին, այլև՝ ընթերցողների շատ ավելի լայն շրջանակի: «Դիտակ Բյուզանդյանն» ուներ նաև քաղաքական բաժին, ուր տպագրվում էին թարգմանական հոդվածներ ու տեղեկություններ Նապոլեոն Բոնապարտի պատերազմների մասին, նշում է Գարեգին Լևոնյանը: Քանի որ գործունեության հիմն գաղափարն էր՝ «Արշարունյաց ընկերությունը» դադարում է գոյություն ունենալ, 1816 թվականին փակվում է և վենետիկյան «Դիտակ Բյուզանդյանը»:

1831 թվականին լույս է տեսնում Կ. Պոլսի առաջին հայ լրագիրը. Ա.Բլակը սկսում է հրատարակել «Moniteur Ottoman» («Օս-

մանյան Ազգարար») ֆրանսերեն թերթը՝ որպես Բարձր Դռան պաշտոնական օրգան: 1832-ից կարևոր է նկատվում պաշտոնաթերթը հրատարակել պետական լեզվով՝ թուրքերեն, և լույս է ընծայվում «Թագվին Վագային»: Այս թերթի խմբագրությունն էլ հենց հայերեն հայտարարություն է տպագրում «ի գիտություն մայրաքաղաքի հայ բազմաթիվ հասարակության», որ հրատարակվելու է նաև հայերեն լրագիր: Թուրքերեն թերթի 12-րդ համարի հետ լույս է տեսնում հայերեն «Լրո գիր Մեծի Տերութեանն Օսմանեան» պարբերականը, որը վերանվանվում է «Չայտարար», ապա նաև՝ «Սուրհանդակ Բյուզանդյան»:

Ամերիկացի բողոքական քարոզիչները Թուրքիայի ծովափնյա քաղաքների քրիստոնյաներին (հիմնականում հայերին) «լույս հավատքի բերելու» «բարձր առաքելությամբ»՝ հայ եղբայրներին ավետարանական լույսը քարոզելու համար, սկսում են հրատարակել «Շտեմարան պիտանի գիտելեաց» հանդեսը (1839 թվական Ջնյուռնիա, Իզմիր): «Շտեմարանի» խմբագրությունն իր ընթերցողին հաղորդում էր. *«Ասանկ գործեր հողագնդի երեսի վրա ամեն լուսավոր ազգերու ու երկրներու մեջ ալ կան հիմա: Ուրեմն ինչո՞ւ համար հայոց ազգին քաջ, մշակյալ, հարուստ և զարդարուն լեզուն մենակ մնա... Մեր Շտեմարանը աշխարհաբար լեզվով պիտի ըլլա. գրաբար լեզվին գերազանց ճոխությանը և գեղեցկությանը վրա տգետ չենք, բայց քանի որ ան ազնիվ ազգին մեծ մասը չի հասկանար, արժան դատեցանք, որ Շտեմարանը ռամկորեն ըլլա»*: «Շտեմարան պիտանի գիտելեաց» հանդեսը Իզմիրում հրատարակվում է մինչև 1842 թվականը, ապա մինչև 1854 թվականը մի քանի համար հրատարակելով միայն՝ տեղափոխվում է Կ.Պոլիս և 1855 թվականին վերանվանվում է «Ավետաբեր, շտեմարան պիտանի գիտելաց» և 60 տարի ևս շարունակում տպագրվել:

1840 թվականին Ջնյուռնիայում Դուկաս Պալտազարյանը հիմնում է «Արշալույս Արարատյան» բանասիրական և առևտրական լրագիրը, որ առաջին իրական քաղաքական-հասարակական հայ թերթը կարելի է համարել: Պալտազարյանի լրագիրը բավականին արագ մեծ ընդունելության է արժանանում. Թուրքիայի մեծ քաղաքներից ու գավառներից բացի թերթը տարածվում է Կովկասի, Յնդկաստանի, Պարսկաստանի հայերի շրջանում՝ մշակութային կապեր հաստատելով նաև հեռավոր շրջանների հետ: Թերթը հիմնում է նաև իր սեփական տպարանը, որը

սակայն այրվում է 1855 թվականին Իզմիրի մեծ հրդեհի ժամանակ: Ղուկաս Պալտազարյանի մահից հետո «Արշալույս Արարատյանի» հրատարակության իրավունքը ժառանգում է որդին և թերթը շարունակում է լույս ընծայվել Հարություն Սվաճյանի խմբագրությամբ մինչև 1887 թվականը, երբ Սվաճյանը բանտարկվում է:

1840 թվականին Պոլսում սկզբում աշխարհաբար, ապա գրաբար, հրատարակվում է «Ազդարար Բյուզանդյան» շաբաթաթերթը: Լեզվի փոփոխության անհրաժեշտությունը պայմանավորված էր բաժանորդների խիստ սակավությամբ, սակայն այդ փոփոխությունն էլ իրավիճակը չփրկեց. պարբերականը շուրջ մեկ տարի գոյատևեց ընդամենը:

Անշուշտ, 1843 թվականին լույս ընծայված «Բազմավեպը», որին աշխատակցել է նաև հանրահայտ Ղևոնդ Ալիշանը, 19-րդ դարակեսի ամենաազդեցիկ պարբերականը կարելի է համարել հայոց մեջ: «Բազմավեպի» առաջին խմբագիրը Գաբրիել Այվազովսկին էր՝ նշանավոր ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու եղբայրը: «Բազմավեպը», որ տպագրում էին Վենետիկի Մխիթարյան միաբանության հայրերը, հայագիտական, ակադեմիական հանդես էր: Հրատարակման սկզբում, մինչև 1860 թվականը «Բազմավեպն» առավել աշխարհիկ միտում է ունեցել, քան 60-70-ական թվականներին, երբ, կրկին հայերի դրդմամբ, Վատիկանը սկսեց առավել մեծ ուշադրություն դարձնել Սուրբ Ղազար կղզում Մխիթարյանների վարած գրական-ազգային-բանասիրական գործունեությանը:

1843 թվականին Իզմիրում Նոր Նախիջևանցի Խ. Մելիքսեւլունյանի խմբագրությամբ հրատարակվեց «Հայրենասեր» քաղաքական, բանասիրական և առևտրական լրագիրը՝ ամիսը երկու համար պարբերականությամբ, որը հինգ տարվա կյանք ունեցավ և 1848 թվականին դադարեց տպագրվել:

1845 թվականին Կալկաթայում Արարատյան ընկերության միջոցներով սկսեց հրատարակվել Մեսրոպ Թաղիադյանի «Ազգասեր» ամունը կրող «քաղաքական, տնտեսական, բնական և բարոյական գիտելյաց» շաբաթաթերթը: «Ազգասերը» տպագրվում էր նախ աշխարհաբար, ապա՝ «ըստ ցանկության պատվելի ընթերցողաց», վերադառնում է գրաբարին: 1848 թվականին, երբ Արարատյան ընկերությունը դադարում է գոյություն ունենալ, Թաղիադյանը մասնավոր նպաստներ ստանալով՝

վերսկսում է հանդեսի տպագրությունը՝ կոչելով «Ազգասեր Արարատյան»: Սակայն նյութական միջոցները սպառվում են և Թադիադյանը օգնության կոչով դիմում է ընթերցողներին: Իզմիրի «Արշալույս Արարատյանը» ևս աջակցում է նրան, բայց ստացված միջոցները բավարարում են ընդամենը մեկ տարի և 1852 թվականին հանդեսը փակվում է:

Արևելահայ առաջին պարբերականը կարելի է համարել 1816 թվականին Հաշտարխանում հրատարակված «Արևելյան ծանուցմունք» թերթը, որը փաստորեն «ԹՏՐՅՏՖԻՍՎՕԿ ՌԶԱՐՅՈՒՆ» ռուսերեն պաշտոնաթերթի հայերեն թարգմանությունն էր:

1846 թվականին Թիֆլիսում Կոնստանտինովի խմբագրությամբ տպագրվում է «ԽՈՉՍՈՉ» ռուսերեն շաբաթաթերթը: Իշխան Սիխայիլ Վորոնցովը, նշանակվելով Կովկասի փոխարքա, ձգտում էր երկիրը «կուլտուրական նոր հունի» մեջ դնել. նա խնդիր ուներ գրականության և գեղարվեստի միջոցով ամրապնդել միապետության հիմքերը ծայրագավառում, ուստի Թիֆլիսում նախաձեռնում է թե լրագրության, թե թատրոնի հիմնադրումը: Ժամանակի պատմաբանների գնահատականով՝ «ուսումնասեր և բարի» փոխարքան ցանկանում է, որ, «Կովկասին» զուգահեռ, Թիֆլիսում հրատարակվեն հայերեն, վրացերեն, թուրքերեն թերթեր: Սակայն վրացերենի համար հարմար խմբագիր չի գտնվում, թուրքերենի համար՝ տպարան, և սկսում է հրատարակվել միայն հայերենը՝ Հակոբ Կարենյանի և Սիքայել Պատկանյանի խմբագրությամբ: Իր «չորուցամաք» պաշտոնական տեղեկություններով և գրաբարով թերթը մեծ ընդունելություն չի գտնում: Երբեմն միայն բանասիրական բաժնում տպագրվում են «բարոյական պատմություններ» կամ տարբեր բարբառներով հողվածներ: «Կովկասի» բաժանորդների թիվը 300 էր, 1847 թվականին այն դադարում է տպագրվել:

1850 թվականին, ի տարբերություն նախորդների, որոնք գրաբարով էին հրատարակվում, աշխարհաբարով լույս է տեսնում Գաբրիել քահանա Պատկանյանի խմբագրած «Արարատ» պարբերականը, որի էությունն ու հրապարակումներն ավելի առաջավոր, ընդգրկուն և լայնախոհ էին, քան նախորդ պարբերականները:

Մինչև 50-ական թվականները՝ 1846 թվականից, Կ.Պոլսում Տերոյան-Չամուռճյան Պատվելու խմբագրությամբ տպագրվում է «Հայաստանը», որը Ազգային ժողովի պաշտոնաթերթն էր

համարվում, 1847 թվականից Վիեննայում Մխիթարյանները 16 տարի տպագրում են «Եվրոպա» քաղաքական և ուսումնական շաբաթաթերթը, երկու տարի Մադրասում տպագրվում է «Քանասեր» 10-օրյա հանդեսը, իսկ Սինգապուրում՝ «Ուսումնասեր» երկշաբաթաթերթը: «Ուսումնասերի» խմբագիրը Գրիգոր Գալստանյանն էր, թերթն ուներ 30 բաժանորդ՝ 7-ը Սինգապուրում, 23-ը այլ քաղաքներում: Նա ջանում էր «քաղաքական, գրագիտական և առևտրական գիտելիքներ» տարածել «իր ազգի և հայրենյաց մեջ»: Երբ անգլերեն թերթերը գրում են, որ Ավստրալիայի ինչ-որ քաղաքում ոսկու հանքեր են գտնվել, նա թերթում քարոզում է, որ հայերը շտապեն Ավստրալիա՝ օր առաջ տեր կանգնելու ոսկու հանքերին և տեսնելով, որ հայերը տեղից չեն շարժվում, 1853 թվականի մայիսի 27-ի վերջին համարում կարծես թե ստիպված արձանագրում է. **«Քանի որ ոչ ոք չի կամենա հետևել մերոցս ազգասեր և բարեմիտ հորդորանաց, ուստի և մենք, ի սեր ազգիս և առաջադիմության նորին՝ հուսացյալ ի խնամս և յողորմության նախախանամողին մերոյ, ստանձնեցաք զայս դժվարին ճանապարհորդություն»:** Գալստանյանը փակում է թերթը և մեկնում Ավստրալիա...

1850-1860-ականներին նոր հիմնված պարբերականներից էին Կ.Պոլսում Հիսարյանի «Քանասեր» (1851-1859 թթ.) ամսաթերթը, Կարապետ Ութուճյանի «Մասիս» լրագիրը(1852-1912 թթ.): «Մասիսը» արևմտահայերի մտավոր-հասարակական կյանքի վրա մեծ ներգործություն ուներ: Խմբագիրն ավելի ազատամիտ էր այլ խմբագիրներից և ժամանակի լավագույն գրական-հրապարակախոսական ուժերը խմբված էին թերթի շուրջ: «Մասիսը» հետագայում շատ խմբագիրներ ունեցավ, փոխվելով և ըստ ձևի ու ծավալի՝ հրատարակվելով երբեմն իբրև օրաթերթ, երբեմն՝ շաբաթաթերթ, ապա և՛ հանդես: Կ.Պոլսում էր տպագրվում «Նոյյան աղավնին» (1852 թ.), Իզմիրում այդ տարիներին տպագրվում էր «Արփի Արարատյանը» (1853 թ.): Այս երկու պարբերականներն էլ կարճ կյանք ունեցան:

Սկրտիչ Խրիմյանի «Արծվի Վասպուրականի» առաջին համարը լույս տեսավ Կ.Պոլսում 1855 թվականին: 1857-ին Պոլսին հրաժեշտ տալով, նա վերցնում է տպագրական մեքենան, թուղթ և տպագրությանն անհրաժեշտ պարագաները ու մեկնում Վասպուրական: Խրիմյանն այսպես է նկարագրում տեսածը.

*Ուտենք զմիս և զմատաղ, զխորոված գառան կարմրած,
Ուտենք զծաշ, զխարհսա իւղն ի վերայ լիճ լիճ լցյալ.
Ուտենք զկաթն մաքյաց և զմածունն սերակապ,
Ուտենք զանհալն կարագ և ծագուց մեղր զհետ նորա՝
Ուտենք և յափրանամք ննջենք ի խուց, խորտամք անհոգ:*

Երիտասարդ վանականը վիճակը փոխելու երեք հիմնական միջոցներ էր տեսնում՝ կենդանի խոսքը (քարոզը պարզ ոճով ու երգիծական «համեմունքներով»), ազդու գրիչը և տպագիր մամուլը: Վարագա վանքում նա հաստատում է իր տպարանը և 1858 թվականից լույս ընծայում «Արծվի Վասպուրականին», որը միայն վանական պարբերական չէր և արծարծում էր հասարակական բազում խնդիրներ: Խրիմյանը գրում էր. *«Կգա՞ արդյոք մի օր, երբ մեր գյուղացին հանգիստ կերպով վայելե իր հալալ աշխատանքը և այս երկրում տիրե արդարություն և խաղաղություն: Կգա՞ արդյոք մի օր, երբ մեր այս ձորերում, ուր միայն ավազակների հրացանի տրաքոցն է լսվում, լսվի երկաթուղու շոգեկառքի սուլոցը և մենք էլ ունենանք հեռագիր, փոստ, դպրոցներ, համալսարան»:*

1850-ական թվականների հայ պարբերականներից ուշագրավ են Ստեփան Ոսկանի Փարիզում հրապարակած «Արևելք» (1858 թվական) և «Արևմուտք» (1859 թվական) թերթերը, որոնք արևմտահայ հասարակական կյանքի վրա էական ազդեցություն են ունեցել և իրենց ժամանակին ըստ կարելիւոյն շահագրգիռ քննարկում էին հայ ժողովրդի արևմտյան և արևելյան հատվածների մերձեցման կենսական հարցերը: Փարիզում 1855 թվականից հրատարակվում էր «Մասյաց աղավնի» հայերեն-ֆրանսերեն պատկերազարդ հանդեսը, որը չորս տարի անց խմբագիր Գաբրիել վարդապետ Այվազովսկու հետ տեղափոխվում է Թեոդոսիա և դառնում հայերեն-ռուսերեն երկշաբաթաթերթ՝ հրատարակվելով մինչև 1865 թվականը: 1857-1867 թվականներին Կ.Պոլսում տպագրվում էր Չամուռճյանի «Երևակ» կրոնական, ուսումնական և բանասիրական հանդեսը, Հարություն Սվաճյանի, ապա նաև Հակոբ Պարոնյանի խմբագրությամբ տպագրվում էր «Մեղու» եռօրյա երգիծական թերթը (1856-1874 թթ.):

1858 թվականին Մոսկվայում Ստեփանոս Նազարյանցի խմբագրությամբ լույս տեսավ «Հյուսիսափայլ» «ամսատետրակը», որը որպես խորագիր ուներ «Օրագիր ընդհանուր ազգային լուսավորության ու դաստիարակության» ձևակերպումը, իսկ առա-

ջին համարի շապիկին Ստեփանոս Նազարյանցի հավատո հանգանակն էր. *«Այսուհետև ոչինչ Եզիպտոսեան խորամանկ քուրմեր, որ կամէին լինել գիտութեան միայնակ պահապանքը. այսուհետև ոչինչ չհնէական պարիսպ, որ պիտոյ է փակէր լուսաւոր գաղափարների մուտքը ազգերի մէջ: Այսուհետև լոյս և ճշմարտութիւն և ազատութիւն խաւարի բարելոնեան գերութենից»:*

Իր առջև դրած խնդիրներով, իրեն աշխատակցողների նվիրվածությամբ՝ Միքայել Նալբանդյան, Սմբատ Շահագիզ և այլք, «Հյուսիսափայլն» ամեն դեպքում, չնայած իր խիստ նվազ տպաքանակին, լուսի շող էր՝ առաջադիմության ջահակիր: Խոսքը ոչ միայն ազատական գաղափարներին և սկզբունքներին է վերաբերում, այլև միասնական լեզվի մշակմանը, որի նախաձեռնողն ու իրականացնողը հենց Ստեփանոս Նազարյանցն էր: Նա ռուսահայ մտավոր զարգացման վերածննդի գործիչներից էր, հրապարակախոս՝ եվրոպական իմաստով ու չափանիշներով: Նազարյանցը իր հայացքներով ու գաղափարներով շատ նման էր Խաչատուր Աբովյանին՝ նա նախանձախնդիր էր հայերենի զարգացմանն ու պահպանմանը, քրիստոնեությունը՝ «ավետարանական լույսը» համարում էր «մայր և սկիզբ ամեն դաստիարակության»: *«Ամեն ազգ իր եկեղեցու, իր հավատի որդին է և իր մտածելիքների ամբողջ նյութը կրոնապաշտականից ունի աղբյուրացրած... կրոնը ամենայն ազգերի դաստիարակիչ մայրը լինելով, հիմն է ամենայն ազգային լուսավորության»*, - գրում էր Նազարյանցը:

«Հյուսիսափայլի» արժեքը հասկանալ հնարավոր է միայն նրա համարները կարդալով և դրանք ժամանակի այլ պարբերականների հետ համեմատելով, սակայն մի կարևոր փաստ անհրաժեշտ ենք համարում անպայման հիշատակել. «Հյուսիսափայլի» ախոյանների թվաքանակն ու նրա դեմ պայքարի ձևերը ևս որոշակի գնահատականներ են հենց իր՝ «Հյուսիսափայլի» համար: Ն. Աղբալյանը գրում է. «Հյուսիսափայլի» շրջանում... Նազարյանը առիթ ունեցավ մի անգամ ևս քննության առնելու հայ ազգի գոյության երկու գլխավոր ազդակները՝ կրոնը և լեզուն և պահանջելու եկեղեցու և լեզվի վերանորոգություն: Իր քարոզած գաղափարները, որ նա պաշտպանում էր զարմանալի համարձակությամբ, ստեղծեցին մի փոքրիկ համակիր շրջանակ, բայց և առաջ բերին մի գորեղ ընդդիմադիր խմբակցություն, որ թե Կովկասում, և թե Մոսկվայում կազմակերպվեց «Հյուսիսա-

փայլի» դեմ և ստեղծեց «Մեղու Հայաստանի» և «ճռաքաղ» թերթերը»: Ավելացնում, որ. «Հակառակորդ ուժերի հարուցած հալածանքների հետևանքով ամսագրի գործերը շատ վատ ընթացք ստացան»: Ն. Աղբալյանը «Հյուսիսափայլը» համարում է ռուսահայոց առաջին ամսագիրը՝ բառի եվրոպական իմաստով: Եվ առաջին հերթին, կարծում ենք՝ խնդիրների ընդգրկման առումով: Դրանք այն բոլորն էին, որոնք դեռևս առաջին համարում նախատեսել էր Նազարյանցը.

...«Հյուսիսափայլ» օրագիրը կը բաժանվի չորս առանձին յօդուածի, պարունակելով իւր մէջ ճառեր այսպիսի նիւթերի վերայ:

ԱՌԱՋԻՆ ՅՕԴՈՒԱԾ.

Սորա մէջ գրվելու են ճառեր ընդհանուր Երկրագիտութեան, ուշադիր լինելով Հայաստանի և Ռուսաստանի աշխարհագրութեան ու Ստատիստիկային. այլև զանազան աշխարհների նկարագրութիւնք, նոցա բնական կերպարանութիւնքը և դոցանից յառաջացած հետևանքը ազգային քաղաքակազորութեան մասին: Տեղեկութիւնք աշխարհագրական յայտնագործութենների վերայ և հարցասիրութեան արժանի հատուածներ աշխարհի հինգ բաժինների մէջ ճանապարհորդած մարդերի գրուածներից:

ԵՐԿՐՈՐԴ ՅՕԴՈՒԱԾ.

Սորա մէջ կը պարունակվին համաշխարհային պատմութեան վերայ ճառեր, ուշադիր լինելով Ռուսաց ազգի պատմութեանը: Այստեղ լինելու են յիշատակի արժանաւոր անցքերը համաշխարհական պատմութեան մէջ, վարքագրական պատկերացոյցք երեւելի մարդերի թե Եւրոպայի, թէ Ասիայի և թէ Ռուսաստանի մէջ յատկապէս: Հայրենական ազգի պատմութիւնը, ինչքան որ Հայք կարողացել են գործ կատարել աշխարհի հրապարակումը, քաղաքական հանդէսի մէջ, պիտոյ է այս տեղ աւանդվի ազգին, ցոյց տայ Հայերին իւրեանց նախահարց արդիւնարարութիւնը և վնասաբերութիւնը ազգին, նոցա պարծանքը և ամօթը, որպէս ուսումն և խրատ յետագայ Հայերին:

ԵՐՐՈՐԴ ՅՕԴՈՒԱԾ.

Սորա մէջ կը պարունակվին բնագիտական ճառեր, այսինքն խօսք և զրոյց այն օրէնքների վերայ, որ ներգործում են մարմնէնդէն աշխարհի մէջ և այդ օրէնքների գործադրութիւնը ընկերական կեցութեան համար. ճառեր զանազան ֆիզիկական յայտնութենների վերայ, հասարակախօս Աստեղաբաշխութեան, Քիմիայի, Հանքաբանութեան և Ֆիզիօլօգիայի մասին: Այս տեղ կը լինի նոյնպէս բանախօսութիւն տնկական կեանքի վերայ, գիտութեան արժանի բոյսերի մասին աշխարհի զանազան սահմաններումը, նոցա տնկարկութեան և ներգործութեան մասին հասարակաց որպիսութեան վերայ: Բաց ի սորանից, նկարագրութիւն օգտակար գիւտերի և յայտնագործութենների թէ ճարտարութեան և թէ բնութեան մէջ:

ՉՈՐՐՈՐԴ ՅՕԴՈՒԱԾ.

Բարոյական, գեղեցիկ բանասիրական ճառեր. այս տեղ դրվելու են առաւել պատուական մտածութիւն և առավել պատուական զգացողութիւնք թէ ոտանաւոր և թէ արձակ ոճով. ընտիր ընտիր թարգմանած հատուածք հին հայկական լեզուից և եւրոպական մատենագրութենից. այլև քննողական ճառեր թէ նոր և թէ հին հայերէն հրատարակած գրքերի վերայ, փախչելով ամենայն վիճասիրութենից, անաչառապէս դատելով արժանաւորութիւնը ամենայն աշխատութեան, որ բղխած էր հայկական հանճարից»:

Պոլիսը ևս անմասն չմնաց «Հյուսիսսփայլի» դեմ պայքարից, իրենց «Ներդրումն» ունեցան «Երևակ» և «Արևելյան դար» պարբերականները: Որքան էլ ցավալի, նույնքան էլ տարօրինակ է, որ հակասությունները չէին վերաբերում ՆՊԱՏԱԿԻՆ, ՃԱՆԱՊԱՐՀԻՆ կամ էլ ԸՆԹԱՑՔԻՆ, այլ, ավելի շատ, այս կամ այն երևույթի կամ եզրույթի բնութագրմանն ու ընկալմանը: Այսպէս, օրինակ, Մարս մոլորակի վրա կյանք լինելու վարկածը պաշտպանող Նազարյանցի տեսակետները քննադատվում և չէին ընդունվում, բայց ոչ բնավ գիտական հիմնավորումներով կամ էլ ուսումնասիրությունների հիմնավորվածության պատճառով: Կամ՝ «Նյութը զորություն է, զորությունը՝ կյանք» Նազարյանցի՝

ամբողջական ենթատեքստից կտրված այս մի արտահայտությունը կարող էր լուրջ քննարկման ու բանավեճի նյութ՝ մի քանի «լուրջ» հրապարակումների առիթ դառնալ: Այստեղ ավելորդ չէ վերհիշել վերն արված ակնարկը «Յուսիսափայլ»-ի նվազ տպաքանակների մասին. պարբերականի բաժանորդների թիվը 300-ի (երեք հարյուրի) կարգի է եղել ընդամենը:

Պահպանողական գաղափարների ջատագովներից Յ. Չերքեյանն էլ «Մեղու Հայաստանի» պարբերականում դատափետում էր Ստեփանոս Նազարյանցին, որ վերջինս համարձակվել էր իր հողվածներից մեկում գրել, թե հայերը պատկանում են հնդեվրոպական ցեղախմբին, մինչդեռ, ըստ ընդդիմախոսի՝ Մովսես մարգարեն նախաստեղծ մարդու բնակավայրը սահմանել է Եփրատի և Տիգրիսի շրջակայքում, ուստի դրախտը եղել է Հայաստանում և հայերն են առաջին ժողովուրդը երկրագնդի վրա: Կարծում ենք՝ խիստ կարևոր, բայց, ցավալիորեն, մոռացված դիտարկում է...

Ահա այսպիսի բանավեճեր: Ու, երկի թե, բնական է նաև. երբ չկա, չի երևում ՆՊԱՏԱԿԸ, երբ չկան ԽՆԴԻՐՆԵՐԸ, որոնք իրենց իրականացման համար համապատասխան ՄԻՋՈՑՆԵՐ կպահանջեն՝ ամեն ինչ էլ ինքնանպատակ է դառնում:

1860 թվականին Թիֆլիսում հրատարակվում է «Կռունկ Հայոց աշխարհի» հանդեսը, որտեղ ևս, ինչպես «Յուսիսափայլում», հանդես էին գալիս տարբեր գաղափարներ և սկզբունքներ ունեցող աշխատակիցներ: Հանդեսն առաջին հերթին գրական ստեղծագործություններ էր հրատարակում, ինչպես բնագրեր, այնպես էլ թարգմանություններ:

Հոգևոր մամուլը ձևավորվեց Կոստանդնուպոլսում: 1846 թվականին պատրիարքարանը հրատարակում էր «Հայաստան» շաբաթաթերթը, ուր տպագրվում էին պատրիարքարանի որոշումները, կարգադրությունները, կրոնադավանաբանական նյութեր, ինչպես նաև ինքնուրույն ու թարգմանական երկեր, պատմաբանասիրական հետազոտություններ:

Երուսաղեմի հայ միաբանության տպագրած «Սիոն» հանդեսը ինքնին յուրատեսակ խթան էր կրոնական հրատարակությունների համար և 1868 թվականին Գևորգ Չորրորդ կաթողիկոսը հիմնադրում է «Արարատ» «կրոնական, բարոյական, պատմական, բանասիրական և ազգային» հանդեսը, որը հետագա-

յուն դառնում է Մայր աթոռի պաշտոնական օրգանը և տպագրվում է մինչև 1918 թվականը: Տպագրության 50 տարիներին «Արարատը» հասարակական, մտավոր զարգացման վրա նկատելի ազդեցություն չունեցավ, բայց հանդեսին հաջողվեց իր շուրջը համախմբել ժամանակի հայտնի մտավորականներին՝ Գալուստ Մկրտչյան, Կարապետ Կոստանյան, Ստեփանոս Մալխասյան, Մանուկ Աբեղյան, Սարգիս Կանայան, Հրաչյա Աճառյան, Նիկողայոս Ադոնց, Կոմիտաս վարդապետ և այլք:

Պահպանողական կուսակցության գլխավոր օջախը Կովկասում՝ Պետրոս Սիմոնյանի «Մեղու Հայաստանին», իր համախոհներն ուներ՝ «Մասիսը» Պոլսում և «Արշալույս Արարատյանը» Իզմիրում:

Արևմտահայ մամուլը, ինչպես և եվրոպայում, բուռն զարգացում ապրեց Ղրիմի պատերազմից հետո, երբ 1858 թվականին ներքին և արտաքին իրադարձությունների թելադրանքով, սուլթանը նոր ռեֆորմներ հրապարակեց: Նույն այդ թվականից Պոլսում սկսեցին լույս տեսնել «Մեղու» պարբերականը՝ Հարություն Սվաճյանի խմբագրությամբ և «Զվարճախոս» երգիծաբերթը: Հրատարակվեցին «Մուսայք Մասյաց» թատերական և «Քնար արևելյան» երաժշտական հանդեսները:

Զմյուռնիայում լույս տեսնող բազմաթիվ թերթերից էր նաև «Ծաղիկ» պարբերականը, որն ընդգծված ազատական, ժողովրդավարական ուղղվածություն ուներ:

Հիշատակման են արժանի նաև Գաբրիել Այվազովսկու խմբագրած «Մասյաց աղավնին», Ա. Մուրադյանցի «Փարիզ» շաբաթաթերթը, ինչպես նաև Խրիմյան Հայրիկի ջանքերով 1855 թվականին Կոստանդնուպոլսում հրատարակված «Արծվի Վասպուրականի» պարբերականը, որի հիմնական նպատակը գավառական կյանքի լուսաբանումն ու արտացոլումն էր, և Գարեգին Սրվանձոյանի «Լրատար արծվիկ Տաթևա» պարբերականը, որը, սակայն, խիստ սահմանափակ տարածում ուներ (1863-1865 թվականներ):

19-րդ դարի երկրորդ կեսին հիմնադրվել են շուրջ 250 հայերեն պարբերականներ:

Պոլսում 1870 թվականից Մ.Մելիքյանը սկսում է հրատարակել «Հայրենիք» ազգային, գրական և քաղաքական օրաթերթը, երկու տարի անց թիֆլիսում Գ. Արծրունին հիմնում է «Մշակը»:

«Հյուսիսափայլից» հետո ազատական գաղափարներ կրող մամլո միջոց կարելի է համարել առաջին հերթին «Մշակը», որը, ինչպես արդեն նշեցինք, 1872 թվականին հիմնադրել էր հանրահայտ հրապարակախոս Գրիգոր Արծրունին:

«Մշակը»՝ հավատարիմ իր կոչմանը, քննադատում էր ամեն հետամնացը, ջանալով ճանապարհ հարթել նորի և առաջավորի համար՝ լինելով դա կրթության բնագավառում, թե տնտեսության մեջ և կամ էլ ազգային տարատեսակ խնդիրներում: «Մշակը» իր էջերում տեղ էր տալիս ոչ միայն քաղաքականությանը, հասարակական կյանքի լուսաբանմանը, սոցիալ-տնտեսական խնդիրների քննարկմանը, այլև գրականությանը, մշակույթին և արվեստին: Հանրահայտ է Ռաֆֆու բնորոշումը, ըստ որի «Մշակուն» **«պուրլիցիստիկան և բելլետրիստիկան ձեռք ձեռքի տված էին ընթանում»**: Թերթը չէր թաքցնում նաև իր խիստ բացասական վերաբերմունքը բանվորական շարժումների և ընդհանրապես սոցիալիստական գաղափարների նկատմամբ: Վերջինիս առումով մանավանդ Գրիգոր Արծրունին խիստ կտրուկ էր. **«Սոցիալիզմը հակառակ է մեր բնավորությանը»** («Մշակ», 1879 թվական, թիվ 48):

«Մշակը» կովկասահայ լրագրության մեջ մեծ տեղ է գրավում թե իր ազդեցությամբ, թե երկարատև գոյությամբ՝ մոտ 50 տարի: Գրիգոր Արծրունին մինչև մահը՝ 1892 թվականը թերթի խմբագիրն էր: 1893 թվականից թերթի խմբագիր է դառնում Ալեքսանդր Քալանթարը և խմբագրում է այն մինչև 1913 թվականը: Նրա մահից հետո հրատարակչի իրավունքներն անցնում են Համբարձում Առաքելյանին, ով ևս պաշտոնավարում է մինչև մահը՝ 1918 թվականը: Առժամանակյա դադարից հետո «Մշակը» տպագրվում է իբրև ժողովրդական կուսակցության օրգան՝ Լեոյի խմբագրությամբ: Եվ երկու տարի լույս ընծայվելով՝ 1920 թվականին թերթը դադարեցնում է գոյությունը՝ սովետական զորքերի թիֆլիս մտնելու նախօրյակին:

1880 թվականին լույս է տեսնում Երևանի առաջին պարբերականը՝ «Պսակ» լրագիրը՝ Վասակ Պապաջանյանի խմբագրությամբ, ապա նաև՝ 1881 թվականին «Առողջապահական թերթը»՝ բժիշկ Տիգրանյանի խմբագրությամբ:

Այս թվերին են տպագրվում նաև մանկական հանդեսները՝ «Բուրաստան մանկանց» (1882 թ. Կ.Պոլիս) և «Աղբյուր» (1883 թ. Թիֆլիս), մանկավարժական հանդեսները՝ Ն. Խոսրովյանի

«Վարժարան» (1882 թ., Թիֆլիս) և Յ.Տեր-Յովհաննիսյանի «Մանկավարժանոց» (1884 թ. Պետերբուրգ), Հակոբ Պարոնյանի «Խիկար» երգիծական թերթը (1884 թ., Կ.Պոլիս):

1889 թվականին Թիֆլիսում իր հրատարակությունն սկսած «Մուրճը» ևս լիբերալ-բուրժուական գաղափարների կրողն ու ջատագովն էր, հիմնականում գաղափարական-վերլուծական ուղղվածություն ուներ և իր էջերում տեղ էր տալիս ինչպես տնտեսագիտական, հասարակական-քաղաքական, մշակութային հետազոտություններին և ուսումնասիրություններին, այնպես էլ առօրյայի վերլուծությանը:

Արևելահայ ազգային-պահպանողական հոսանքի գլխավոր օրգաններն էին Սպանդար Սպանդարյանի «Նոր դար» (1883-1906 թվականներ), Աբգար Յովհաննիսյանի «Փորձ» (1876-1881 թվականներ) և «Արձագանք» (1882-1898 թվականներ) պարբերականները:

Դրանցից ամենաերկարակյացի՝ «Նոր դարի» խմբագիր Սպանդար Սպանդարյանի հավատո հանգանակն էր ազգությունը. **«Մեր նպատակը ազգությունն է, -գրում էր նա 1882 թվականին,- կրոնը, լեզուն, ցեղը միջոցներ են միայն, որոնց օգնությամբ մենք մեր նպատակին հասնել ենք ձգտում»:**

1876 թվականին ասպարեզում հայտնվում է արևելահայ երկրորդ գրական-հասարակական պարբերականը՝ «Փորձ» հանդեսը (նախ՝ եռամսյա, ապա ամսական պարբերականությամբ): «Փորձ», ապա նաև «Արձագանք» պարբերականները հրատարակում էր Աբգար Յովհաննիսյանը (1849-1904 թվականներ): Նա նույնպես պաշտպանում էր ազգային-պահպանողական հոսանքի գաղափարական գիծը և, ինչպես Սպանդարյանը, պետականություն չունեցող հայ ժողովրդի հարատևման հիմնական գործոններն էր համարում մայրենի լեզուն և եկեղեցին:

Հոգևոր-կրոնական մամուլը ներկայացնում էին «Հովիվը» (1906-1910 թվականներ, Թիֆլիս, խմբագիր-հրատարակիչն էր Եզնիկ ավագ քահանա Երզնկյանը), «Բարի լուրը» (1906-1907 թվականներ, Բաքու, հրատարակում էր Պատվական Թառայանը), «Հովիտը» (1910-1917 թվականներ, Թիֆլիս, խմբագիր-հրատարակիչն էր դարձյալ Եզնիկ ավագ քահանա Երզնկյանը):

Դարավերջին, կուսակցությունների առաջացման հետ միաժամանակ, ծնունդ է առնում նաև կուսակցական մամուլը:

Ազգային-քաղաքական ուղեգիծ ունեին Սկրտիչ Փորթուզալ-յանի հիմնած «Արմենիան» Մարսելում (1885 թ.), որից սկսում է առաջին «քաղաքական կուսակցությունը» մեր ժամանակներում (արմենականներ), Մ.Սվազյանի «Հայաստանը» Լոնդոնում (1888 թ.), որ ավելի չափավոր էր և Եվրոպայից ուզում էր «վայելուչ և օրինավոր եղանակով պահանջել 61-րդ հոդվածի իրականացումը», ավելի արմատական էր ժնկում տպագրված «Հնչակը» (1887 թ.), որ հնչակյան կուսակցության քաղաքական օրգանն էր:

Կուսակցական մամուլի սկզբնավորմամբ մեր պարբերականներում ծնունդ առավ «բանավեճի» մի նոր տեսակ՝ կուսակցական «բանավեճը»: Չակերտներով անշուշտ, որովհետեւ դա ոչ թե բանավեճ էր, այլ դիմացինին «սեւացնելու» եւ իրեն «սպիտակեցնելու» պարզ գործընթաց միայն: Յուրաքանչյուր կուսակցության հարող թերթ աշխարհի հիմքում, առանցքում եւ ընդհանրապես ամենուր՝ յուրայիններին էր տեսնում միայն, դիմացինին ոչ թե մրցակից կամ հակառակորդ, այլ՝ ռիսերիմ թշնամի համարելով: Դարձյալ ստիպված ենք կրկնել, որ նպատակի, խնդիրների, ընդհանուր գործին նվիրումի բացակայությունը հանգեցնում է հիվանդագին հատվածայնության, որը երբեւէ դրական արդյունք ունենալ չի կարող:

Ինչեւէ: Շարունակենք փաստերի թվարկումը:

1890-ական թվականներին Թիֆլիսում կազմակերպվում է դաշնակցություն կուսակցությունը, 1891 թվականին լույս է ընծայվում նրա պաշտոնաթերթ «Դրօշակը»: **«Դաշնակցությունը կազմակերպվում է Արծրունու մշակականության, Բաֆֆու, Գամառ-Քաթիպայի գաղափարախոսության և մի հայտնի չափով ռուսական սոցիալիստ-նարողնիկական հոսանքների զորեղ ազդեցությունների տակ»**,-ասում է Արկոմեդը՝ իր հիշողությունների մեջ դաշնակցության գաղափարախոսների ռոմանտիկ մտածելակերպի օրինակներ բերելով:

Հնչակյանները հրատարակել են 180 պարբերականներ, այդ թվում՝ «Հնչակ» (1887-1896 թվականներ), «Գաղափար» (1894 թվական), «Երիտասարդ Հայաստան» (1903, ԱՄՆ), «Պայքար» (1907 թվական, Թիֆլիս), «Հայկաշեն» (1917-1918 թվականներ, Թիֆլիս), «Շեփոր» (1918 թվական, Բաքու), «Գործավոր» (1919 թվական, Թիֆլիս):

Դաշնակցության պաշտոնաթերթը «Դրօշակն» էր (1890 թվական, Թիֆլիս), տպագիր օրգաններից էին «Ալիք» (1906 թվական, Թիֆլիս), «Հռոաջ» (1906 թվական, Թիֆլիս), «Խարիսխ» (1907 թվական, Թիֆլիս), «Կովկասի առավոտ» (1907 թվական, Թիֆլիս), «Փայլակ» (1907 թվական, Թիֆլիս), «Անիվ» (1908 թվական, Բաքու), «Գործ» (1908-1909 թվական, Թիֆլիս), «Հորիզոն» (1909-1918 թվականներ, Թիֆլիս), «Նոր հոսանք» (1913-1915 թվականներ, Թիֆլիս), «Հայաստանի աշխատավոր» (1917-1919 թվականներ, Երևան), «Ապառաժ» (1917-1919 թվականներ, Շուշի), «Ժայռ» (1917-1918 թվականներ, Ալեքսանդրապոլ), «Շարժում» (1917-1918 թվականներ, Ախալցխա), «Որոտան» (1918-1919 թվականներ, Գորիս), «Սյունիք» (1918-1920 թվականներ, Գորիս), «Հռոաջ» (1919-1920 թվականներ, Երևան) պարբերականները:

Ռամկավար-ազատական հոսանքն իր գաղափարական ակունքներում ունենալով Մկրտիչ Փորթուզալյանի «Արմենիան» (1885-1925 թվականներ), հետագայում հրատարակեց «Հայաստանի ձայն» (1919-1920 թվականներ, Երևան), «Նոր կյանք» (1919 թվական, Ալեքսանդրապոլ) և այլ թերթեր, որ ռամկավարական գաղափարներ էին քարոզում:

Ժողովրդավարական ավանդույթներն իրենց շարունակությունը գտան 20-րդ դարի անկուսակցական, մշակութալուսավորչական մամուլում. «Հասկեր» (1905-1916 թվականներ, Թիֆլիս), «Աշխատանք», «Նոր աշխատանք» (1906-1907 թվականներ, Թիֆլիս), «Երկրի ձայնը» (1906-1908 թվականներ, Թիֆլիս), «Գեղարվեստ» (1908-1921 թվականներ, Թիֆլիս), «Գյուղատնտես» (1909-1917 թվականներ, Թիֆլիս), «Նոր դպրոց» (1908-1913 թվականներ, Թիֆլիս), «Նոր ուղի» (1912-1916 թվականներ, Ալեքսանդրապոլ), «Արագած» (1912 թվական, Ալեքսանդրապոլ), «Թատրոն և երաժշտություն» (1910-1917 թվականներ, Բաքու), «Նոր մամուլ» (1913 թվական, Երևան), «Մեր կյանքը» (1910-1912 թվականներ, Աստրախան), «Նոր սերունդ» (1917 թվական, Թիֆլիս), «Առողջապահիկ» (1920 թվական, Երևան) և այլ պարբերականներում, որոնք էական ազդեցություն ունեցան հայ հասարակության զարգացման առումով:

20-րդ դարասկզբին ի հայտ եկավ նաև բոլշևիկյան մամուլը, որը, փաստորեն գրեթե մինչև դարավերջ տիրապետող էր լինելու հայ իրականության մեջ:

Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի պատմությունը սկսվում է մարքսիստական «Պրոլետարիատ» թերթով, որը Ստեփան Շահունյանի, Բոգդան Կնունյանցի և այլոց խմբագրությամբ լույս տեսավ Թիֆլիսում, 1902 թվականի հոկտեմբերին: «Պրոլետարիատը» հետևում էր լենինյան իսկրայական ուղղությանը: 1903 թվականի ապրիլ-մայիս ամիսներին նրան փոխարինեցին ՌՍԴ(բ)Կ Կովկասյան միութենական կոմիտեի օրգան «Պրոլետարիատի կռիվը» (1903-1905 թվականներ) և «Պրոլետարիատի կռիվ» թերթիկը» (1903-1904 թվականներ), որոնք ևս խմբագրում էին Ստեփան Շահունյանը և Բոգդան Կնունյանցը:

Հետագայում այլ թերթեր ևս համալրեցին այդ շարքը, սակայն դրանց անդրադառնալը հիմնականում իմաստազուրկ է, որովհետև անկախ անվանումից, խմբագիրներից, հրատարակման վայրերից ու տարեթվերից՝ դրանք մի հիմնական խնդիր էին լուծում. բոլշևիկյան գաղափարների քարոզը և ամրապնդումը, այն էլ հիմնականում թարգմանությունների, նմանակումների միջոցով, որոնք պարզապես հարմարեցվում էին տեղական պայմաններին, քանզի այն, ինչ ցանկանում կամ քարոզում էին վերջիններս՝ տեղերում չունեին անհրաժեշտ հիմքերն ու նախադրյալները: Դրանք կամ նոր-նոր էին փորձում ստեղծել կամ էլ, ավելի շատ, ստեղծելու նմանակումներ էին անում՝ արդարացնելու համար «իրենց վրա դրված բարձր վստահությունը»:

19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարակզբին արևմտահայության հասարակական-մշակութային կյանքում ևս էական է եղել պարբերական մամուլի դերը:

Արևմտահայ մամուլն այդ շրջանում նաև տարօրինակ դիրքորոշումներ դրսևորեց. խոսքը, մասնավորապես, «Մանգումեի էֆքյար» («Շար մտածանց») հայատառ թուրքերեն օրաթերթի մասին է, որը մեծ տեղ հատկացնելով գավառների կյանքին, հայության դեմ գործադրվող բազմաթիվ ապօրինությունների հանդեպ անհանդուրժողականություն սերմանելուց զատ, նաև ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին և ընթացքում պայքարում էր հասարակության շրջանում հակառուսական տրամադրություններ տարածողների դեմ, հանդես գալով հայ-ռուսական քաղաքական կապերի պաշտպանությամբ (Հայ ժողովրդի պատմություն, հ.6):

1871 թվականին Մատթեոս Մամուրյանը Չմյուռնիայում հիմնադրում է «Արևելյան մամուլ» հանդեսը, որն ակտիվորեն անդ-

րադառնում էր հասարակական-քաղաքական անցուդարձին, մոռացության չտալով, անշուշտ, դպրոցն ու ընդհանրապես կրթությունը:

80-ական թվականներին սկսում են հրատարակվել «Արևելք», «Բյուրական», «Բուրաստան մանկանց», «Ծաղիկ» պարբերականները:

1890-ական թվականներին ասպարեզ են իջնում «Բյուզանդիոնը», «Լույսը», «Հանրագիտակը», «Սուրհանդակը»: 1891 թվականի հունիսի 13-ից «Հայրենիքը» սկսեց լույս տեսնել Արփիար Արփիարյանի խմբագրությամբ: Առաջին համարում նա գրում էր, որ թերթն առաջին հերթին լինելու է «խրճիթին թերթը, մտքով հետամնացին թերթը»: Թերթին աշխատակցում էին Գրիգոր Զոհրապը, Լևոն Բաշալյանը, Արշակ Չոպանյանը, Տիգրան Կամսարականը, Մելքոն Կյուրճյանը, Հրանտ Ասատուրը, Երվանդ Օտյանը: Նրանց շնորհիվ «Հայրենիքը» ստացավ գրական ուղղվածություն: Տպագրվում էին նաև քաղաքական ու գիտական հոդվածներ: «Հայրենիքը» համագործակցում էր «Մշակի» հետ (նաև պարբերաբար արտատպություններ էր անում «Մշակից»):

1896 թվականին Բյուզանդ Քեչյանը հիմնադրեց «Բյուզանդիոն» թերթը, որը դարձավ ժամանակի ամենապահանջված լրագիրը: Թերթի առաջին համարում Քեչյանը գրում է. **«Ողջամիտ չափավորություն մը, լուսամիտ պահպանողականություն մը թե հանրային գործերու, թե ընկերային ու իմաստասիրական հարցերու և թե գրական խնդիրներու մեջ՝ մեր առաջնորդն եղած են և ասկե ետք ալ պիտի ըլլան»:** «Բյուզանդիոնի» շուրջ համախմբված էր գրողների ու հրապարակախոսների ստվար խումբ՝ Արշակ Ալպոյաճյան, Միքայել Կյուրճյան, Վահան Թեթեյան, Արշակ Չոպանյան, Միսակ Գոչունյան, Գեղամ Բարսեղյան...

19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին աշխուժանում են նաև գրական շաբաթաթերթերն ու ամսագրերը. Հակոբ Պարոնյանի «Նիկարը» (1884-1888 թվականներ), Եղիա Տեմիրճիպաշյանի «Գրական և իմաստասիրական շարժումը» (1883-1885 թվականներ): Համեմատաբար երկարատև էր Անտոն Սագայանի «Ծաղիկ» հանդեսը (1886-1911 թվականներ), որն առավել լուրջ գրական-գրականագիտական դերակատարություն ունեցավ Արշակ Չոպանյանի խմբագրության շրջանում (1895 թվական):

1884 թվականին «Մասիսը» որպես ազգային, քաղաքական, տնտեսական ու բանասիրական թերթ ծուլվեց «Արևելքի» հետ:

Կարապետ Ութուճյանը սկսեց հրատարակել «Մասիս» բանասիրական շաբաթաթերթը, որտեղ տպագրվում էին ժամանակակից հեղինակների արձակ և չափածո գործերը, ժողովրդական բանահյուսության նմուշներ, միջնադարյան բանաստեղծների տաղեր: 1892 թվականին «Մասիսը» սկսում է լույս տեսնել երեք շաբաթը մեկ անգամ, հետագայում նորից դառնում է շաբաթաթերթ և հրատարակվում է մինչև 1908 թվականը: Գրիգոր Զոհրապի, Զրանտ Սաստուրի, Տիգրան Արփիարյանի խմբագրության շրջանում «Մասիսը» դարձել էր առաջատար հանդեսներից մեկը:

1908 թվականին սկսեց հրատարակվել Միսաք Գոչունյանի «Ժամանակ» օրաթերթը, 1909 թվականին Ռուբեն Զարդարյանի «Ազատամարտը»:

1908-1915 թվականներին Թուրքիայում լույս է տեսել 200 հայերեն պարբերական:

1911 թվականի հունվարից Կ.Պոլսում լույս է տեսնում գրական-գեղարվեստական «Ոստան» հանդեսը (խմբագիրներ՝ Միքայել Շամտանճյան և Տիգրան Զյոկյուրյան): Զունիսից Սուրեն Պարթևյանի խմբագրությամբ հրատարակվում է «Շանթ» կիսամյա գրական-գեղարվեստական պատկերազարդ հանդեսը, որի նպատակն էր նպաստել մայրենի գրականության և արվեստի զարգացմանը: Մշակութային կարևոր դեր կատարեց 1911-1914 թվականներին Ջյուլիանիայում Զարեհ Գազազյանի հրատարակած «Հայ գրականություն» գրական-գեղարվեստական հանդեսը: Վահան Թեքեյանը և Միքայել Կյուրճյանը 1905 թվականին Եգիպտոսում հիմնել էին «Շիրակ» գրական-հասարակական ամսաթերթը:

Արևմտահայ մամուլի անբաժանելի մասն էին տարեգրքերը: Եթե նախորդ 40 տարում լույս էր տեսել ընդամենը 10 տարեգիրք, ապա 1908-1915 թվականներին՝ 15: Դրանցից լավագույնը Թեոդիկի (Թեոդորոս Լաբժինյան) «Ամենուն տարեցույցն» է, որի 19 հատորները (1907-1928 թվականներ) հայ մշակույթի պատմության մասին հարուստ փաստագրական նյութ են պարունակում և հանրագիտարանային արժեք ունեն:

Կ.Պոլսում, Ջյուլիանիայում, Արևմտյան Հայաստանում լույս տեսնող պարբերականներից զատ, 1870-1917 թվականներին Ամերիկայում, Անգլիայում, Ֆրանսիայում, Հունաստանում, Եգիպտոսում, Բուլղարիայում հրատարակվել են 200 մեծ ու փոքր պարբերականներ, որոնք արտացոլել են արևմտահայերի

ու գաղութահայերի կյանքը: Արշակ Չոպանյանի «Անահիտ» հանդեսը (Փարիզ) իր գոյության թե առաջին շրջանում (1898-1911 թվականներ), թե հատկապես հետագայում էական ազդեցություն ունեցավ հայ մշակույթի զարգացման վրա, մեծ դեր խաղաց հայ-ֆրանսիական մշակութային կապերի զարգացման և օտարազգի հեղինակների հայագիտական աշխատությունները հայ ընթերցողին ներկայացնելու գործում:

Հայաստանի Առաջին Հանրապետության մամուլը նոր որակական մակարդակ է հայոց ժուռնալիստիկայի պատմության մեջ և նախևառաջ այն պատճառով, որ հայ մամուլը այլևս նաև հայ հողի վրա էր լույս տեսնում՝ հայ պետականության պայմաններում: Իսկ միանգամայն այլ խնդիր է, երբ քո երկրին վերաբերող հոգսերը քննարկում ես քո իսկ երկրում: Հայացքդ ավելի անաչառ է, զգացմունքներից զերծ և հնարավորինս իրատեսական. դու ապրել, ապրում և ապրելու ես այդ հողում:

Հայաստանի առաջին հանրապետության տարիներին հրատարակվող պարբերականներից աչքի էին ընկնում ՀՅԴ «Հայաստանի աշխատավոր», «Հառաջ», մենշևիկյան «Կայծ», էսենական «Սոցիալիստ հեղափոխական», Հայաստանի ժողովրդական կուսակցության «Ժողովուրդ», ՌԱԿ «Հայաստանի ծայն» թերթերը, Հայաստանի Հանրապետության պաշտոնական հրատարակություն՝ «Կառավարության լրատուն», ուր տպագրվում էին խորհուրդների ընդունած օրենքները, կառավարության որոշումները, պաշտոնական և տեղեկատվական այլ բնույթի նյութեր:

Երկրում, ընդհանուր առմամբ, հրատարակվում էին ավելի քան 50 անուն պարբերականներ:

Կուսակցական բանավեճերից զատ թերթերը, յուրաքանչյուրն իր գաղափարական-տեսական մեկնակետից, իհարկե, տալիս էին իրական կյանքի պատկերը, այն, թե ինչ էր կատարվում երկրում:

Օրվա թերթերը տալիս էին օրվա պատկերը: Նրանք հրապարակում էին անգամ, ենթադրենք, Ադրբեջանի կառավարության հաղորդումները, բողոքները, եթե, իհարկե, դրանք վերաբերում էին Հայաստանին: Այսպես, իր 1919 թվականի սեպտեմբերի 27-ի համարում «Աշխատավորն», օրինակ, գրում էր, թե «Ադրբեջանի կառավարութիւնը հաղորդում էր, որ **«1918 թուականի յունւա-**

րից սկսած, նախ քան թիւրքերի Երեւանի նահանգը գալը՝ հայերը քանդեցին աւելի քան 300 գիւղեր՝ կոտորելով այդ գիւղերի մահմետականների մեծ մասը... Թիւրքերի Երեւանի նահանգից հեռանալուց յետոյ, 1918 թի դեկտեմբերին Սասունի գունդը գինաթափեց Երեւանի գաւառի Ղարախաչի եւ Վեդի-Չայի գիւղական համայնքների մահմետականներին և քանդեց Ղաղեղու, Շահաբլու, Ղարախաչ, Դահնագ, Ղարաբէգլեար, Աղասի-Բէգլի և այլ գիւղերը՝ կոտորելով յիշեալ համայնքների բոլոր մահմետականներին: Նոյն ճակատագրին ենթարկեցին Միլլի Դարասի շրջանի մի շարք գիւղերի մահմետականները: Համարեա միաժամանակ, հայ զօրքերը շրջապատեցին Բասար-Գեչարի աւաններն ու կոտորեցին Կրզըլ-Վան, Սուրաթան, Ջագալու, Շահաբ և այլ գիւղերի մահմետականներին՝ բռնաբարելով կանանց եւ Շահաբ գիւղի բազմաթիւ երեխաներին այրեցին թոնիրներում: Բնաջնջեցին եւ Էջմիածնի ու Սուրմալուի գաւառների մահմետականներին... Օգոստոսի 7-ին հայկական վարչութիւնը հայկական միլիցիայի անմիջական մասնակցութեամբ սկսեց բնաջնջել Էջմիածնի, Սուրմալուի, Երեւանի եւ Նոր Բայազետի գաւառների մահմետականներին... Հայկական վարչութիւնը օգոստոսի 17-31-ի կարճատեւ միջոցում կարողացել է ջարդել ու կոտորել Էջմիածնի, Սուրմալուի, Երեւանի և Նոր Բայազետի գաւառների մինչեւ 50 գիւղ մահմետականներին»:

Պարբերականները նաև տեղեկություններ էին հաղորդում, որոնք նույնպես անգնահատելի արժեք ունեին և մանավանդ այն օրերին: Այսպես օրինակ, Ղարաբաղի ազգային կազմի մասին Դավիթ Անանունը հետևյալ տեղեկություններն էր տալիս «Հայաստանի կոոպերացիայի» 1920 թվականի սեպտեմբերի համաբույսում. «Ղարաբաղի լեռնաստանում 1917 թուականի տուեալներով ապրում էին՝ հայեր 150.000 (70 տոկոս), մուսուլմաններ՝ 58.000 (27 տոկոս), մնացած ազգեր՝ 5.000 (3 տոկոս): Այժմ ազգութիւնների թւական յարաբերութիւնը միանգամայն փոխւած է: Ուրիշ ազգերից ռուսները հեռացել են Ռուսաստան: Ապա Լեռնային Ղարաբաղի որոշ գիւղերից հեռացել են նաև թուրքերը: Դրա դիմաց լեռներն են ապաստանել տափաստանում եղած հայ գիւղերի բնակիչները (Ջիվանջիրի գաւառ): Այսպիսով, Հայկական Ղարաբաղում (Ջրաբերդ, Խաչէն, Վարանդա, Դիզակ) հայ տարրը աւելի է ամրացել թւով: Իսկ եթէ սրան աւելացնենք նաև, որ հին Ղարաբաղի անբաժան մասը կազմող Գիւլիստանը վերջին

տարիների անց ու դարձի մէջ վերականգնեց իր կապը նախկին միաւորի հետ և ընթացաւ հայկական քաղաքականութեան հունով, պատկերն աւելի կատարեալ կը լինի»:

Ինչպես տեսնում եք՝ ոչ միայն ուշագրավ տեղեկություններ են, այլև որոշակի մտորումների մղող: Ազգային, պետական, ինչպես նաև լեզվագաղափարական խնդիրներում ևս մեծ տեղ էր տրվում մամուլի նշանակությանը և առավելագույնս օգտագործվում էր նրա ներուժը:

Ահա ինչ է գրում Հայաստանի Առաջին Հանրապետության վերջին վարչապետ Սիմոն Վրացյանն իր «Հայաստանի Հանրապետություն» գրքում. «Կառավարութիւնը աշխատեց աստիճանաբար հայացնել բոլոր պետական հիմնարկութիւնները՝ խուսափելով, սակայն, կտրուկ միջոցներից: Այս պարագան ջղայնացնում էր հասարակութեան որոշ մասերը, մանաւանդ, արեւմտահայերին, որոնք պահանջում էին անմիջապէս հայացնել ամբողջ պետական մեքենան: Մամուլը, մանաւանդ, անողոք քննադատութեան էր ենթարկում այն հիմնարկութիւնները, ուր ազգայնացումը ընթանում էր դանդաղ: Ապրիլի 17-ին Երեւանի քաղաքապետարանում տեղի ունեցաւ հայ թերթերի ներկայացուցիչների առաջին ժողովը՝ մասնակցութեամբ՝ «Աշխատանք»-ի խմբագիր Գ.Մանուկեանի, «Հայաստանի Աշխատաւոր»-ի խմբագիր Վ. Խորէնիի, «Հայաստանի Կօօպերացիա»-յից Զ.Կորկոտեանի եւ «Վան-Տոսպ»-ից Ա. Աւետիսեանի, որ կայացրեց հետեւեալ որոշումները. 1.Կոչ ուղղել պետական, հասարակական ու մասնաւոր հիմնարկութիւններին՝ խօսել ու գրել հայերէնով: 2.Մերժել ոչ հայերէնով գրութիւններ, լուրեր, յայտարարութիւններ ընդունել: Վերջինի համար բացառութիւն համարել միայն այն պարագան, երբ անոր կրնկերամայ հայերէնը եւ կամ թէ երբ ոչ հայերու կողմէ է տրուած: 3.Պահանջել հայերէն լեզւի պաշտօնականացում, իսկ միւսների գործածութիւնը թոյլատրել միայն որպէս օժանդակ լեզուներ: 4.Թերթերի մէջ ունենալ «հայացման» բաժին, ուր տպւելու են լուրեր թէ դրական եւ թէ բացասական, նոյնիսկ ազիտացիոն բնաւորութիւն ունեցող՝ հայ լեզւի գործածութեան շուրջ: 5.Կազմւած հռչակել «Հայացման Կոմիտէ», որի մէջ մտնելու են ներկաները, ինչպէս նաեւ հրաւիրուում են մասնակցելու բացակայ թերթերի, նախարարութիւնների ու քաղաքապետարանի ներկայացուցիչները: Այդ կոմիտէի դուռները բաց պիտի ըլլան. վերոյիշեալներէն ցանկացողները կարող են ներկայացուցիչ ուղարկել եւ

կամ ուզած ժամանակ իրենց ներկայացուցչին յետ կանչել: Կոմիտեն պիտի զբաղւի նաեւ գործնական խնդիրներով՝ ցուցմունքներ անելով և օգնելով ի պահանջել հարկին զանազան հիմնարկութիւնների արագ հայացման: Կոմիտեն ունի իր մնայուն դիւանը՝ վարելու համար ծրագրուած աշխատանքները»:

Խիստ կարևոր պետական միջոցառում, որը իրականացնելու համար զորակոչվում է առաջին հերթին մամուլը, որը հավատարիմ իր լուսավորչական և ազգապահպան առաքելութեանը՝ հնարավորն արեց, սակայն ժամանակներն էին այլ և ընդհանրապես, քիչ ժամանակ էր մնացել: Բայց և այնպես՝ նաև մամուլի արժանիքն ու վաստակն էր, որ դեկտեմբերի վերջին հայերենը հայտարարվեց պետական լեզու:

Եվս երկու մեջբերում Առաջին հանրապետության իշխող կուսակցության պարբերականներից, որոնք պատկերացում կտան ժամանակի ոճի ու գաղափարի, օգտագործվող քարոզչական հնարների ու ձևերի մասին (նույն գրքից). *«Յայ բուրժուազիան իմ աչքում դատապարտութեան արժանի տարր է նրա համար, որ նա իր ստոր ապագային արարքները քողարկում է մտացածին պատճառաբանութիւններով վասն հայ վտանգաւոր սոցիալիստների և այլն: Սուտ է: Յայ Զինզինովի գրոշին ոչ մի վտանգ չի սպառնում Յայաստանում, որովհետեւ բոլոր հայերը մեծ ու փոքր Զինզինովներ են, սեփականութեան մոլի ֆանատիկոսներ: Եւ եթե այնուամենայնիւ հայ Զինզինովը չի բարեհաճում թողնել Թիֆլիսն ու Բագուն եւ իր այդ տատանումը պատճառաբանում է սոցիալիզմի վտանգով - դրա մէջ պիտի տեսնել արբեցողի ծամածռութիւնները լիքը բաժակի առջեւ:*

Թող բուրժուազիան գայ եւ մասնակից դառնայ մեր պայքարին եւ ոչ թե հեռւից հեռու պահանջ առաջադրէ, թէ՛ մաքրեցէք ասպարէզը, որ ես բարեհաճեմ ինձ՝ հայութեանը հարազատ հռչակելու եւ ոտք կոխելու նրա երկիրը: Բուրժուազիայի ո՞ր առաւելութեան համար պիտի տեղի ունենայ այդ մահանջը...

Նորից ու նորից կրկնում ենք, որ Յայաստանը պատկանում է բոլոր նրանց, որոնք անկեղծօրէն ցանկանում են քրտնել նրա վրա եւ նպաստել նրա բարօրութեանը: Թե որ տանջանաց կցորդ լիցիմք, ապա եւ փառաց հաղորդ լինելոց ենք- այսպէս պիտի մայի խնդրին հայ բուրժուազիան: Բայց ոչինչ չարած, պինդ փակած իր գրպանի բերանը՝ նա պատռում է իր կոկորդը լուր փառքի եւ իշխանութեան համար: Այս վերաբերմունքի համար նոյնիսկ քա-

րերը պիտի աղաղակեն, իսկ կենդանի մարդիկ՝ ավելի եւս»: (Դավիթ Անանուն, «Առանց քինախնդրութեան», «Հառաջ», 14 հունվարի, 1920 թվական):

«Երբ մտնում էի Երեւանի ակումբը, տեսայ, որ իմ բոլոր ծանօթները Բագուից, Թիֆլիսից, Ռուսաստանից, բոլորը այնտեղ էին: Տէր Աստուած, ո՞վ չկար այնտեղ... Կազմել էր մի հասարակութիւն, որի անդամները հէնց նոր եկած, իրար գլխի թափւած՝ ուզում էին ստեղծել նոր մայրաքաղաքի բնակչութիւն, նոր պետութեան քաղաքացիութիւն:

Երազ է թոււմ այս բոլորը:

Բայց սա իրականութիւն է: Հայաստանը կայ և պիտի լինի:

Երեւան եկողը առաջին անգամ մի բան կը նկատէ, որ ոչ ոք պարապ չէ: Ամէն մարդ բանի է, ամէն ոք շտապում է հոգածու հապճեպով: Զգիտեմ, Հայաստանի ակերմունքն է շատ եւ հայ ժողովուրդը ջանում է վերաշինել, թէ՞ հարիւրաւոր տարիների խանգարիչ հանգամանքները վերանալուց յետոյ հայը մի հանգիստ սրտով եկել է իր հարազատ տունը եւ իրեն տւել է մի մոլութեան, որ յատուկ է հային. շինել, վերաշինել հէնց միայն կարծես, շինելու համար...

Ամբողջ ճամփան, որով եկայ Հայաստան եւ անցայ նրա մայրաքաղաքը, ակերի հետքեր էին եւ շինող ձեռքի արդիւնքներ: Երեւանի փողոցներում տեսնում ես այդ աշխատաւոր ժողովուրդին: Արեւառ, խստադէմ, տրեխաւոր, կարկատնած, մտահոգ. դա հայ գիւղացին է- գործի է գնում... Այժմ հայ գիւղացին հաց եւ պաշար ունի՝ արիւն-քրտինքի գնով ձեռք բերած»: (Մի ճամփորդի նկարագրութիւն, «Աշխատավոր», 22 հոկտեմբերի, 1920 թվական):

Այս հնարքին մենք անդրադարձել ենք արտասահմանյան ժուռնալիստիկայի պատմութեան 18-րդ դարի մասին խոսելիս:

Խորհրդային կարգերի հաստատմամբ՝ 1920 թվականի դեկտեմբերի 2-ին, փակվեցին բոլոր թերթերն ու ամսագրերը, որոնք տպագրվում էին Առաջին հանրապետութեան օրերին:

Հայաստանի Երկրորդ՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետութիւնը փորձեց ամեն ինչ «սկսել» զրոյից՝ կարծես մինչ այդ ոչինչ էլ չէր եղել և ամեն ինչի սկիզբը «բոլշևիկյան հեղափոխութեան հաղթանակն» էր: Դեկտեմբերի 2-ին Լեզրանի և Դրոյի միջև ստորագրված համաձայնագրի հիման վրա, իշխանափոխութիւն եղավ, այլ ոչ թէ հեղափոխութիւն, սակայն, ինչպէս և

պետք էր սպասել (ինչպես բոլոր իշխանության եկողների հետ է պատահում) իշխանությունը ստանձնած բուլշևիկները չպահպանեցին իրենց խոստումներն ու ստանձնած պարտավորությունները: Երևի թե չէին էլ կարող, քանզի Չայաստանն այլևս ու մինչև 1990 թվականը, մեծ երկրի ծայրագավառ էր պարզապես և պարտ էր պարել ու գործել մեծ երկրի մեծ մայրաքաղաքից տեղ հասնող հրահանգներով ու ցուցումներով:

Նույնը վերաբերում էր նաև մամուլին: Եվ այն, փաստորեն, դարձավ զանգվածների քաղաքական, գաղափարական դաստիարակության միջոցներից մեկը միայն: Խորհրդային հասարակարգը, արտաքուստ մերժելով հանդերձ Աստծուն և հոգևորը, իր հիմքում, սակայն, հոգևոր ու բարոյական այնպիսի արժեքներ դրեց, որոնց մեծ մասը ոչ միայն համահունչ էին, այլև բխում էին բուն քրիստոնեական ոգուց: Նույնիսկ արտահայտություններ էին վերցվել ամբողջականորեն, օրինակ, «Սրերից խոփեր կռենք», որոնք հետո նաև ամբողջական քարոզչական գործունեություն էին դառնում:

1920 թվականի դեկտեմբերի 5-ից Երևանում սկսեց հրատարակվել «Կոմունիստ» թերթը (հետագայում՝ «Սովետական Չայաստան», «Խորհրդային Չայաստան», այսօր՝ «Չայաստան»), որը Չեղկոմի և Չայաստանի կոմունիստական կուսակցության կենտկոմի պաշտոնաթերթն էր: Արդեն 1928 թվականին Չայաստանում հրատարակվում էին 9 թերթ և 22 հանդես, 1932 թվականին՝ 59 թերթ և 19 հանդեսներ շուրջ 400000 ընդհանուր տպաքանակով, որն աննախադեպ էր հայ մամուլի պատմության մեջ: Կատարելով, լենինյան բնութագրմամբ՝ «կոլեկտիվ ագիտատորի, կոլեկտիվ պրոպագանդիստի և կոլեկտիվ կազմակերպչի» դերը՝ մամուլն իսկապես զանգվածներին կազմակերպում էր և մղում կուսակցության և կառավարության որոշումների կենսագործմանը: Հենց այդ գործառույթներով էր պայմանավորված նաև թերթերի, ամսագրերի, հանդեսների ոչ միայն ապակենտրոնացումը, այլև նրանց հատուկ հասցեական տարաբաժանումը՝ ոչ միայն տարիքային խմբերի՝ երիտասարդներ («Ավանգարդ», 1923 թվական, «Կոմսոմոլեց»), պատանիներ («Պիոներ կանչ», «Պիոներ»), մանուկներ («Ծիծեռնակ»), այլև ըստ մասնագիտությունների և սեռերի, ազգային պատկանելության՝ ռուսներ, ադրբեջանցիներ, քրդեր... Մամուլը մայրաքաղաքից տարածվեց նաև դեպի շրջաններ:

1940 թվականին Հայաստանում լույս էին տեսնում 56 թերթ՝ 235000 ընդհանուր տպաքանակով, 40 հանդես՝ 505000 տպաքանակով և 40 շրջանային թերթ:

Այդ նույն ժամանակաշրջանում արդեն իսկ սփյուռքի գաղթօջախներում նույնպես շարունակվում էին հրատարակվել թերթեր, ամսագրեր և հանդեսներ: Հայրենիքի հանդեպ բարյացկամ և չեզոք էին հիմնականում հնչակյան և ռամկավարական հրատարակությունները, մինչդեռ ՀՅԴ-ն «անզիջող» էր:

Ամերիկայում լույս էին տեսնում «Բանվոր» (հետագայում «Նոր աշխարհ»), «Լրաբեր»), «Պրոլետարիատ», Փարիզում «Երևան», «Բանվոր-Պարիզ» և «Վերելք» թերթերը: Կոմունիստական անվանումները նույնը էին ամբողջ աշխարհում և պատահական չէր Բուլղարիայում հրատարակվող ամսաթերթի անվանումը՝ «Կարմիր լուրեր», որ հետագայում դարձավ «Նոր ալիք»:

Հունաստանում լույս էր տեսնում «Երկունք» հնչակյան թերթը (1922-1923 թվականներ), ռամկավարական «Նոր ալիք» պարբերականը (1923 թվական), որոնք լուսաբանում էին Սովետական Հայաստանի առօրյան:

Պարբերականներից շատերը՝ Եգիպտոսի «Արևը», փարիզյան «Ապագան», ռամկավարական «Պայքարը», հնչակյան «Երիտասարդ Հայաստանը» թեև չէին ընդունում մարքսիստական-սոցիալիստական գաղափարախոսությունը, սակայն համարում էին, որ սովետական իշխանության շնորհիվ հայ ժողովուրդը ձեռք է բերել վերջապես կայուն պետություն և ամեն ինչում սատարում էին նրան:

Այդ առումով խիստ ուշագրավ է ռումինահայ «Նավասարդ» հանդեսի խմբագիր Հակոբ Սիրունու դիրքորոշումը. **«Հայրենի հողի վրա է, որ պիտի կենտրոնանան վերջ ի վերջո մեր բոլոր ճիգերը, մեր հայրենի մշակույթը վերստեղծելու համար: Դուրսը թափված սերմերը որքան ալ գորավոր ըլլան՝ չեն կրնար փոթորիկներուն դիմանալ»** («Նավասարդ», հատոր Ա, Պրակ Ը, 1924 թվական):

Այդ ժամանակների սփյուռքահայ մամուլի շրջանակներում ազդեցիկ էր նաև դաշնակցական մամուլը: Նրանք հրատարակում էին «Հայրենիք» օրաթերթը: 1922 թվականի վերջից սկսեց հրատարակվել նաև «Հայրենիք» հանդեսը: Կահիրեում հրատարակվում էին «Հուսաբեր», Փարիզում՝ «Հառաջ», Աթենքում՝ «Նոր օր» դաշնակցական թերթերը: Կային դաշնակցական մա-

մուլի այլ միջոցներ և, սակայն սրանք առաջատարներն էին:

Հրատարակվում էին նաև հայագիտական հետազոտություններ պարունակող («Հանդես ամսօրյա») և գրական ուղղվածություն ունեցող պարբերականներ («Կոչնակ», հետագայում «Հայաստանի կոչնակ», ԱՄՆ), ուր գրական ստեղծագործությունների հետ մեկտեղ անդրադարձներ կային նաև գաղթօջախներում ու մայր հայրենիքում կատարվող իրադարձություններին:

1929 թվականին Արշակ Չոպանյանը Փարիզում վերսկսեց «Անահիտ» հանդեսի հրատարակությունը, հանդես, որն անգնահատելի դեր կատարեց ընդհանրապես հայ մշակույթի և մասնավորապես սփյուռքի մշակութային կյանքում:

Այդ ժամանակներում սփյուռքում նաև բազմաթիվ և բազմապիսի տարեգրքեր էին հրատարակվում:

Հայրենական մեծ պատերազմի տարիների հայ մամուլն իր էությանմբ ոչնչով չի տարբերվում նույն տարիների ռուսական-սովետական մամուլից, որի սկզբունքը միանգամայն օրինաչափորեն և բնականաբար «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» կարգախոսն էր:

Այդ տարիներին ժամանակավորապես դադարեցին լույս տեսնել կուսակցական-սովետական հայ մամուլի հերթագայությանմբ երկրորդ և երրորդ շարքերը կազմող մամուլը, մասնավորապես՝ «Ավանգարդ», «Ստալինեց», «Գրական թերթ», «Պիոներ կանչ», «Խորհրդային մանկավարժ», «Խորհրդային արվեստ» և այլ պարբերականներ և նրանց տեղը գրավեցին գինվորական և ռազմաճակատային հայերեն պարբերականները՝ «Հանուն Հայրենիքի», «Հայկական սնայպեր», «Մարտիկ», «Սովետական ռազմիկ», «Մարտական դրոշով» և այլն:

Խորհրդահայ մամուլի համար առանձնահատուկ էին 20-րդ դարի 60-ական թվականները հատկապես: Դա բացատրվում էր ոչ միայն մամուլի նոր միջոցների ի հայտ գալով (օրինակ՝ «Երեկոյան Երևան», «Հայրենիքի ձայն» թերթերը, «Գարուն», «Գիտություն և տեխնիկա» ամսագրերը, տարբեր հայագիտական հանդեսներ և ճյուղային-մասնագիտական ամսագրերը՝ օրինակ «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում» և այլն), այլև ժուռնալիստների նոր սերնդի երևան գալով, որը ինքը ծնունդ լինելով հասարակության և պետության «ծնիալի», որոշակիորեն կազմակերպում և ուղղորդում էր նաև այն:

Այդ տարիներին հագեցած էին հատկապես երիտասարդական պարբերականները՝ «Ավանգարդը» և «Գարունը», որոնց յուրա-

քանչյուր համարին սպասում էին և կարողում սկզբից մինչև վերջ: Ժամանակի ժուռնալիստական սերունդը, որի ներկայացուցիչներն էին Վարդգես Պետրոսյանը, Մարգո Ղուկասյանը, Անժիկ Հակոբյանը, Սասունիկ Թորոսյանը և այլք, նոր որակական լիցք հաղորդեց հայ մամուլին, որը, սակայն, ողջ երկրում խորացող լճացման և կանգառի երևույթների պատճառով որոշ ժամանակ անց սկսեց որոշակի անկում ապրել: Բայց ոչ թե իր մակարդակի, այլ այն համընդհանուր պատճառով, որ խոսքն էր աստիճանաբար արժեզրկվում: Այդ տարիներին հրապարակախոսներ ու հռետորներ էին դարձել նաև ոչ միայն իրենց ժամանակը բնորոշող գրողները՝ Հրանտ Մաթևոսյանը, Պարույր Սևակը, Մուշեղ Գալշոյանը ...

Հայ լրագրությունը նմանատիպ մեկ վերելք ևս ապրեց 1988-1990 թվականներին՝ Ղարաբաղյան շարժման տարիներին: Այդ տարիներին բնորոշ էր ավելի շատ ինքնահրատ մամուլի գոյությունը, որից իր լայնախոհությամբ, հարցադրումների հրատապությամբ և վերլուծությունների խորությամբ առանձնանում էր «...և այլն» պարբերականը (խմբագիր՝ Ալեքսանդր Արզումանյան), որը լույս էր տեսնում 1989-1990 թվականներին և անդրադառնում էր օրախնդիր բոլոր այն դրսևորումներին, որոնք հետաքրքրում էին հասարակությանը: Առանձնահատուկ հիշատակման է արժանի առաջին տպագիր անկախ թերթի՝ Հայոց Համազգային Շարժման «Հայք» պաշտոնաթերթի լույս ընծայումը՝ հոկտեմբեր 1989 թվական (խմբագիր՝ Սամվել Գևորգյան): «Հայքը» փաստորեն առաջին ընդդիմադիր թերթն էր կոմունիստական իշխող վարչակարգին, որի հրատարակումն իսկ պայմանավորված էր Շարժման հիրավի համազգային (համահայաստանյանը՝ ակնառու էր) բնույթով և իշխող վարչակազմը պարզապես ստիպված էր թույլատրել նրա գոյությունն ու տպագրությունը: Հիշատակման են արժանի նաև «Գործ», «Ուրբաթ», «Մունենտիկ», «Իրավունք» շաբաթաթերթերը:

Սակայն 1988-1990 թվականները հատկանշական են ոչ միայն ինքնահրատ և ազատ մամուլի առաջնեկների ի հայտ գալով: Կուսակցական-սովետական, երիտասարդական և մանկապատանեկան պարբերականները ևս անմասն չէին հայոց համազգային շարժմանը: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է «Երեկոյան Երևան» օրաթերթին, երիտասարդական «Ավանգարդ» և «Գարուն» պարբերականներին և մանկապատանեկան «Պիոներ կանչ» թերթին: Ուշագրավ մի փաստ ևս. Ռուսաստան-

նուն 1917, իսկ Հայաստանում 1920 թվականից մտցված և բավականին խստորեն իր գործառույթներն իրականացնող գրաքննչական մարմիններն այդ տարիներին բավականին լոյալ էին մամուլի միջոցների նկատմամբ, և կարելի է ասել, որ հրատարակվող նյութերը պարբերականների անմիջական ղեկավարների անձնական ընկալումներն էին արտացոլում միայն:

1990 թվականին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրություններից հետո խորհրդարանում զգալի տեղեր զբաղեցրին Շարժման ներկայացուցիչներն ու նրանց հարող ազատական ուժերը, որն էլ հնարավորություն տվեց 70-ամյա ընդմիջումից հետո խաթարել կոմունիստական մենատիրությունը և 1990 թվականի օգոստոսի 4-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց Շարժման առաջնորդ Լևոն Տեր-Պետրոսյանը: 1990 թվականի օգոստոսի 23-ին ընդունվեց Հայաստանի Անկախության հռչակագիրը, որով ազդարարվեց Հայաստան երկրի անկախացման գործընթացի սկիզբը: Վերացվեց նախնական գրաքննությունը, խոսքի և խղճի ազատություն երաշխավորվեց Հայաստանի բուլր քաղաքացիների համար: 1990 թվականի սեպտեմբերի 6-ին արդեն Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց իր պաշտոնաթերթը՝ «Հայաստանի Հանրապետություն» (որն իր կազմում ուներ նաև ռուսերեն «ՀայտոցուՄՈՈ ԸՐՎալՈ՛» տարբերակը) անվամբ հրատարակելու մասին: Թերթի առաջին համարը լույս տեսավ հոկտեմբերի 9-ին:

Գրաքննության իսպառ վերացմամբ հայտնվեցին բազմաթիվ նոր պարբերականներ, որոնցից ոմանք այնքան էլ երկար կյանք չունեցան: Կուսակցությունների մասին ՀՀ օրենքի ընդունումը կուսակցական շինարարության բուռն վերելք արձանագրեց, որպես արդյունք նաև կուսակցական մամուլի առատություն ապահովելով: Կոմունիստական կուսակցության գործունեության հետ մեկտեղ շարունակվեց նաև նրանց մամուլի գործունեությունը, փոքր ինչ փոխված անուններով և բովանդակությամբ արդեն:

Արտերկրից հայրենիք վերադարձող կուսակցությունները իրենց հետ բերեցին նաև իրենց մամուլը, որի ավանդույթները և որակը հետաքրքիր և ուշագրավ էր խորհրդային-կուսակցական մամուլի ձևին ու ոճին վարժված ընթերցողների համար: Այդ թերթերից հիշատակման են արժանի «Ազգը», «Ազատամարտը», «Երկիրը», որոնք թե ձևավորման, թե լեզվաոճական առումներով ուշագրավ էին և հարստացնում էին ոչ միայն ընթերցողների

պատկերացումները, այլև հայաստանյան մամուլն ընդհանրապես: Կուսակցական թերթերին հետևեցին անկախ պարբերականները՝ «Առավոտ», «Լրագիր», «Հայկական ժամանակ», «Չորրորդ իշխանություն», «Նովոյե Վրեմյա» (ռուսերեն):

90-ականների կեսերին վերացավ նաև ռադիոհեռուստատեսային մեծաշնորհը: Ստեղծվեցին նոր, անկախ, մասնավոր հեռուստա և ռադիոկայաններ՝ «Ա1+», «Շանթ», «Ար», «Արմենիա», «Այգ», «ՀայFM»- և այլք, որոնք ևս՝ իրենց հերթին ու չափով, նոր որակ բերեցին հայ լրագրություն:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԻՆՉՈՒ

ԿԱՍ

ՏԵՍԱԿԱՆ ՈՐՈՇ

ԱՆՂՐԱԺԵՇՏ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ «ՏԵՍԱԿՆԵՐԸ»

Միայն և միայն չակերտներով, որովհետև ժուռնալիստիկան մեկ ամբողջություն է:

Այս փոքրիկ «անդամահատումը» պարզապես ավելի կոյուրացնի ընկալումը և որոշակի մասնագիտացումների հիմք կարող է դառնալ:

1. ԻՆՖՈՐՄԱՅԻՆ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱ

Informatio-լատիներեն բառ է, իր բուն իմաստով՝ բացատրություն, շարադրանք, իսկ informare-ն, որը նույնպես լատիներեն է՝ տեղեկացնել, ժանուցել է նշանակում: Ժուռնալիստիկայի այս «տեսակը» նաև «նորությունների լրագրություն» են անվանում:

Ի՞նչ է նորությունը: Տեղեկություն, որը որոշակիորեն ընդլայնում է տվյալ անհատի աշխարհընկալման սահմանները, հարստացնում է նրա մտավոր աշխարհը, նոր մտքերի, որոնումների կամ էլ նորովի ընկալումների խթան է դառնում:

Նորությունների լրագրության առանձնահատկությունը հաղորդվող նյութի հակիրճությունն է, մեկ առանցքային հիմնահարցի ընդգրկումը, փաստի շեշտադրումը. բնականաբար՝ առանց մեկնաբանությունների, գնահատականների, վերլուծությունների կամ պատճառահետևանքային կապի բացահայտման: Դրանք ժուռնալիստիկայի հաջորդ «տեսակների» խնդիրներն են արդեն:

Այսպիսով՝ նորության որակական չափանիշներն են. հրատապությունը, ճշմարտացիությունը, հանրային նշանակությունը, կարևորության հանրային համարժեք գիտակցումը, հանրայնորեն ընդունված չափանիշներին համապատասխանությունը, գործնականությունը (որպես ոչ միայն ուշագրավ երևույթ, այլև խորհրդածությունների, նոր մտքերի և, ինչու ոչ, նաև՝ գործերի մղելը), իրականության չաղավաղված արտացոլումը, մեկնաբանությունների, վերլուծությունների, տեսակետների ի սպառ բացակայությունը (թե բացահայտ, թե թաքնված), չիմացության աստիճանի նվազեցումը, որոշակի կողմնորոշիչների տրամադրումը կամ հստակեցումը:

Մնացյալը՝ ինչպես ժուռնալիստիկական ցանկացած այլ գործուն. ձևակերպումը պետք է համապատասխանի երեք հիմնական չափանիշի՝ ստույգության, տրամաբանվածության, ամբողջականության:

Նորությունների երեք «տեսակ» կարելի է սահմանել.

1. Միանգամայն նոր՝ մինչ տվյալ պահը չտեսնված-չլսված-չկատարված դեմք/դեպք/իրադարձություն:

2. Արդեն իսկ տեսնված-լսված-կատարվածի մեջ նոր շերտ/որակ/դրսևորում բացահայտող կամ ցուցանող տեղեկություն:

3. Արդեն իսկ տեսնված-լսված-կատարվածի մեջ այնպիսի շերտի/որակի/դրսևորման բացահայտում, որն արմատապես ու հիմնովին փոխում է ոչ միայն նույն այդ արդեն իսկ տեսնված-լսված-կատարվածի մասին եղած ողջ պատկերացումներն ու ընկալումները, այլև բոլորովին այլ որակով ու հատկանիշներով է օժտում նրան՝ դարձնելով այն միանգամայն նոր երևույթ:

Իր գործունեության ընթացքում՝ ստեղծելու համար վերոհիշյալ սահմանումներին, չափանիշներին ու արժեքներին համապատասխանող «նորությունը», լրագրողը առնչվում է ինֆորմացիայի բազմաթիվ ու բազմազան աղբյուրների, որոնք ևս կարելի է տարաբաժանել երեք խմբի.

1. Կենդանի, իրական, ընթացող կյանք

2. Իրական շփման միջավայր, որն ընդգրկում է մարդկանց, ուն հետ շփումը ոչ միայն ինֆորմացիաների, նորությունների, այլև դեպի դրանք տանող ճանապարհների բացահայտման աղբյուրներ կարող են դառնալ և՛

3. Տվյալների տարատեսակ բազաներ (վիրտուալ ինֆորմացիոն միջավայր, գրքեր, տեղեկատուներ, հանրագիտարաններ, ժողովածուներ, կատալոգներ եւ այլն), փաստաթղթեր:

Սակայն այս ամենի հիմքն, անշուշտ, ժուռնալիստի պրպտող միտքը, անհանգիստ հոգին եւ «շարժուն ոտքերն են»:

Անհանգիստ հոգի՝ որպեսզի ինքը միշտ միտված լինես ինչոր բան առաջինն իմանալու և այլոց հաղորդելու, պրպտող միտք՝ որպեսզի կարողանաս տարբերակել հինը՝ նորից, արժեքավորն՝ անարժեքից, անհրաժեշտը՝ ոչ պիտանիից, ինչպես նաև՝ նորությունների «ծագման» բուն վայրերում ստեղծել քո «ինֆորմացիոն ցանցը», որը միայն կամ էլ առաջինը՝ գոնե, քեզ կիրազեկի տեղի ունեցած-ուներցող-ուներնալիքը, և «շարժուն ոտ-

քեր»՝ որպեսզի հասցնես լինել հնարավորինս շատ վայրերում, հավաքելով, փնտրելով ու, անգամ՝ ստեղծելով նորությունները:

«Նորությունների լրագրության» հիմնական ժանրերն են, բնականաբար՝ լուրը, ռեպորտաժը, հարցազրույցը, թղթակցությունը և, իհարկե, լուսանկարը կամ լուսանկարային ռեպորտաժը:

Խոսքն, անշուշտ, տպագիր ՏՁՏՄ-ներին է վերաբերում: Ժանրերի ռադիո կամ հեռուստատեսային առանձնահատկություններին՝ առանձին անդրադարձ կա:

2. ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺՈՒՆԱԼԻՍՏԻԿԱ

«Մեկնաբանությունների լրագրությունը» գալիս է շարունակելու «նորությունների լրագրությանը»՝ որոշակիորեն մանրամասնելով, բացատրելով և, անշուշտ նաև՝ ուղղորդելով ընթերցողի-ունկնդրի-ակնդրի ուշադրությունը: Անվանումն արդեն իսկ խոսում է: Առանց նորությունների, ասել է թե հիմքի, բնականաբար, որևէ մեկնաբանություն լինել չի կարող:

Մեկնաբանությունն, ինքնին, հնարավորություն է տալիս առավել ամբողջական և հնարավորինս մանրամասն ներկայացնել այն ամենը, ինչը մի փոքր առաջ նորություն էր: Գուցեն՝ սենսացիոն նորություն: Որպես մեկնաբաններ հանդես են գալիս, սովորաբար, գիտակ եւ պատրաստված անհատները: Առավել արժեքավոր են, իհարկե, հանրահայտ, իրենց արժեքը, անաչառությունը և պրոֆեսիոնալիզմը հաստատած մարդկանց մեկնաբանությունները, ովքեր գրեթե անվերապահորեն ընդունվում են հանրության կողմից: Սակայն որքան էլ կարևոր է վերը հիշատակվածը, շատ ու շատ ավելի կարևոր է կոնկրետ խոսքը՝ մեկնաբանությունը: Որովհետև արդեն իսկ նշված հատկանիշները խաբսխվում են հենց խոսքի վրա: Եվ նման մարդիկ շատ ավելի աչալուրջ ու պատասխանատու պետք է լինեն իրենց խոսքի հանդեպ: Որպեսզի այն չկորցնի իրատապությունը, անկողմնակալությունը և մատչելիությունը, այլապես նույն այդ խոսքի միջոցով և շնորհիվ նորերը կզբաղեցնեն իրենց տեղը՝ բայց ոչ արդեն պարզ և միանգամայն բնական սերնդափոխության միջոցով:

Մեկնաբանությունների լրագրության հիմնական ժանրեր կարելի է համարել «մեկնաբանությունն» ինքը, խոհը, հարցազրույցը՝ դարձյալ, նամակը, օրագիրը, հուշագրությունը, որովհետև սրանցից յուրաքանչյուրն էլ, իր մեծ մասով, մեկնաբանություն է:

Մեկնաբանությունների շարքին կարելի է դասել նաև լուսանկարչական մակագրությունը, երբ այն դուրս է կամ վեր գուտ պատկերվածը արտացոլելու խնդրից («ձախից՝ աջ կամ աջից՝ ձախը») նկատի ունենք):

Մեկնաբանության այս ժանրային տարատեսակն ինքնին շատ հետաքրքիր է և ուշագրավ, որովհետև քեզ արդեն իսկ մատուցվող որոշակի օբյեկտիվ իրողության այնպիսի նոր շերտեր կարող է բացահայտել, լուսանկարը դիտելուց ծնված ինչ-որ մի միտք այնպիսի ուղղությամբ կարող է տանել, որն, առաջին հայացքից, խիստ անսպասելի կարող է լինել:

Որպես ասվածի լավագույն ասպացույց և ժանրի այդ տարատեսակի խիստ հաջող օրինակ՝ «Ավանգարդ» թերթի 1988-89 թթ. համարներում Ջավեն Խաչիկյանի արած լուսանկարներն՝ իրենց մակագրություններով: Եվ, իհարկե՝ Բրեդլի Թրևոր Գրիվի բազմաթիվ ուշագրավ ու հրաշալի գրքերը:

3. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԺՈՒՆԱԼԻՍՏԻԿԱ

Սա լրագրության երրորդ մակարդակն է, որն իր մեջ ամբողջությամբ ներառում է նախորդ երկու մակարդակները: Որովհետև առանց նորության, առանց դրա վրա հիմնված մեկնաբանությունների՝ անհնարին է համադրել-հակադրել-վերլուծել, ասել է թե՛ ամբողջացնել եղածը:

Ակնարկն ու էսսեն, որոնք լրագրության վերին, գրականության՝ ստորին սանդղակն են ներկայացնում իրենցից, նույնպես մաս են կազմում այս լրագրության, և ահա թե ինչու. այնտեղ էս, թող որ գեղարվեստական միջոցների կիրառմամբ, վերլուծություն-ընդհանրացում- եզրահանգումներ են կատարվում:

Վերլուծական լրագրությունը ամբողջականացնում է եղած նախորդ մակարդակները ևս՝ ինֆորմացիա-մեկնաբանություն, ստեղծելով շոշափվող խնդրի իրական և անկողմնակալ պատկերը: Նույն նորության վերաբերյալ բազմաթիվ մեկնաբանություններ կարող են լինել, որոնք, անպայմանորեն համադրել-վերլուծել-ընդհանրացնելու կարիք է առաջանում՝ առկա պատկերը

կամ պատկերաշարն առավել ամբողջական ու լիարժեք ներկայացնելու համար: Չէ՞ որ միայն վերլուծությամբ է, որ հնարավոր է բացահայտել ցանկացած երևույթի պատճառահետևանքային կապակցվածությունը, ցույց տալ ընդհանուր տրամաբանությունն ու առանձնահատկությունները, դրանց հետագա ազդեցությունը կամ ներգործությունը կատարվող կամ դեռևս սպասվող իրադարձությունների վրա:

Վերլուծության արժեքն ու արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է երևույթը/դեպքը/դեմքը բնութագրող **բոլոր** հատկանիշների համադրումը, այլապես ամբողջական, օբյեկտիվ և լիարժեք պատկեր չի կարող ստացվել, հետևաբար և՛ եզրակացությունը չի կարող լինել ճշմարտացի, անկողմնակալ, իրականությանը համապատասխանող:

Վերլուծական լրագրության հիմնական ժանրերը կարելի է համարել, բացի վերը նշվածից, նաև հոդվածը եւ հարցազրույցը, որոնք առավելագույն հնարավորությունն են ստեղծում մեր արդեն իսկ նշած վերլուծությունների, ընդհանրացումների և եզրահանգումների համար:

Ամփոփենք: Դասակարգման այն սկզբունքը, որով փորձեցինք որոշակիորեն «անդամահատել» ժուռնալիստիկան, բնորոշ է ցանկացած երևույթի եւ իրողության:

Արարիչն ինքը հենց այդ սկզբունքով է գործել և թողել իր գործերի հիշատակությունը, այդ իսկ պատճառով էլ մնացյալ ամեն ինչը ենթարկվում է նույն այդ տրամաբանությանն ու օրինաչափություններին:

ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Կատարելով ցանկացած զարգացմանը բնորոշ իր ամբողջական պտույտը, ժուռնալիստիկան ևս վերադարձավ իր հիմնական՝ անաչառ տեղեկատվամիջոցի ներկայիս դերին կամ գոնե ձգտում է դրան, իր մեծ՝ որակյալ մասով, արդեն իսկ կատարում այդ գործառույթը: Մեկ անգամ ևս մշենք այդ տարբեր փուլերը՝ ցույց տալու համար ոչ միայն զարգացման դիմամիկան, այլև այն հիմնական միտումները, որոնք այսօր արդեն ձևավորել են ժուռնալիստիկայի օրակարգը:

Սկսելով որպես ամենաանաչառ և անմեկնաբան տեղեկատվամիջոցը՝ այրապատկերներ, ժայռապատկերներ, անգամ «Acta»-ներ, ժուռնալիստիկան այնուհետև անցավ կարծիքներ համադրողի, տեսակետներ փոխանցողի, բանավեճեր հրահրողի և դրանց միջոցով ճշմարտության որոնումները խթանողի, հասարակական կարծիք ձևավորողի և արտահայտողի, կրթության և դաստիարակության զանգվածային ամբիոնի, քարոզչամիջոցի, մշակութագեղագիտական ճաշակ ձևավորողի, չորրորդ իշխանության և արտադրողի, անգամ կոլեկտիվ պրոպագանդիստի, ագիտատորի և կազմակերպչի փուլերով, այսօր դարձյալ վերադառնալով իր բուն էությանը՝ տեղեկություններ տարածելուն, չկորցնելով, այնուհանդերձ, վերոնշյալ մյուս բաղադրիչները, «պարտավորվելով», սակայն, դրանք խստորեն սահմանազատել միմյանցից՝ ոչ միայն գաղափարական խառնաշփոթ չստեղծելու միտումով, այլև իր իսկ գործառույթների մաքրությունն ու արդյունավետությունը ապահովելու համար:

Նշենք, սակայն, որ դրանք միմյանցից սահմանազատող եզրագծերն այնքան նուրբ են և փոխներթափանցող, որ իրավիճակի ցանկացած նրբամիտ օգտագործումը պարզապես խիստ ցանկալի արդյունքների կարող է հանգեցնել՝ ամենաբարենիտ ու բարեպաշտ ցուցանակի ներքո:

Անդրադառնանք ժուռնալիստիկայի հիմնական գործառույթներին, քանզի ոչ միայն կարևոր են դրանց գործառնական բնութագրումները, այլև ու ավելի այն, որ առանց դրանց ճշգրիտ համադրման հնարավոր չէ իրական արդյունքներ ակնկալել տեղե-

կատվական այն համընդհանուր և օրավուր առավել գլոբալացվող դաշտում, որում յուրաքանչյուրս կամա կամ ակամա հայտնվել ենք, իսկ պրոֆեսիոնալներն էլ՝ պարտ են գործել:

Նախ. անուրանալի է ժուռնալիստիկայի դերը և նշանակությունը մեզ շրջապատող աշխարհին ու միջավայրը ընկալելու և արժևորելու և, ըստ դրանց էլ, յուրաքանչյուրիս որոշակիորեն կողմնորոշվելու առումով: Գիտական, կրթական, դաստիարակչական որոշակի և կայուն չափանիշներ մշակելու և դրանք հանրությանն առաջարկելու և, այնուհետև՝ արմատավորելու առումով ևս ժուռնալիստիկան իր անուրանալի ավանդն ունի: Կարևոր է նրա դերը նաև հասարակական կարծիքի ձևավորման գործում և մանավանդ այն տեսակետից, որը հնարավորություն է տալիս հստակեցնել համամարդկային արժեքային չափորոշիչները և գնահատումները՝ ընդհանուր քննարկում - ընդունելիություն ասպհովելու պարագայում, դրանք տեսական մակարդակից այլևս գործնականի բերելով և դարձնելով կիրառական անհրաժեշտություն:

Ժուռնալիստիկան դարերի ընթացքում, ինքը հետևանք հանդիսանալով, ձևավորել է այսօր արդեն իր հիմնական օրակարգը և որոշակիորեն ու զգալիորեն ինքը ևս կարողանում է էական հասարակական-քաղաքական գործընթացների սկիզբ դառնալ կամ էլ համապատասխան զարգացումներ ապահովել, և, անգամ՝ պարտադրել: Ժուռնալիստիկան նաև մշակութային-գեղագիտական ճաշակ է ձևավորում և տարածում, դրանով իսկ կարծես թե մեկ ընդհանուր շրջագծում պահելով մարդկանց նաև գեղագիտական ընկալումներն ու դրսևորումները: Եվ վերջապես՝ ժուռնալիստիկան ունի նաև «վերականգնողական»՝ զվարճանքի, լիցքաթափման գործառույթ, որի միջոցով ևս հնարավոր է բազմաթիվ այլ գաղափարական խնդիրներ էլ իրականացնել: Բացի այդ՝ ժուռնալիստիկան, անշուշտ, ունի նաև գովազդային, զուտ տեղեկատվական գործառույթ, որը ամբողջացնում է նրա հիմնական գործառույթների արդեն իսկ նշված ցանկը:

Ժուռնալիստիկայի հիմնական այս գործառույթները կարելի է մի քանի խմբերի դասակարգել.

1. Գաղափարախոսական և անմիջականորեն կազմակերպական գործառույթ. այն, որը հստակեցնում է անհատ-Բարձրյալ, անհատ-աշխարհ և անհատ-անհատ հարաբերությունների բնույթը և իր մշտապես բաց օրակարգով գրեթե ամեն պահի պատաս-

խաններ է ենթադրում հիշյալ հարցերին: Ասել է, թե ամենաակտիվ և ամենակենսաթրթիռ խնդիրն է այս, որը ամենժամանակյա արծարծում և ճշգրտումներ է պահանջում: Ամմիջականորեն կազմակերպական գործառույթ կարելի է համարել ժուռնալիստիկայի միջոցով հասարակական կարծիքի ազդեցության ապահովումն ինչպես ընդունվող քաղաքական որոշումների, այնպես էլ դրանց իրականացման ընթացքի վրա, որոնք առավելագույնս փորձում են կազմակերպվել հասարակական կարծիքի ցուցանած ուղիներով՝ առավել քիչ դիմադրության հանդիպելու և հնարավոր արդյունավետություն ապահովելու նկատառումներով նաև:

2. Մշակութագեղագիտական, դաստիարակչական, կրթական գործառույթներ: Սրանք ոչ միայն աշխարհաճանաչողական, այլև արժեհամակարգային և կողմնորոշիչ գործառույթներ են, որոնք գործում են և կիրառելի են ինչպես փոքր հանրույթներում (խումբ, ազգ, ազգություն), այլև շատ ավելի մեծ և բաց համակարգերում և իրենցով պայմանավորում են խորացող համաշխարհայնացման գործընթացները ևս:

Եվ, վերջապես, 3-րդ խոշոր խումբը՝ գովազդատեղեկատվական-զվարճալի-ժամանցային գործառույթների համախումբն է, որից առաջինը եթե ապահովում է սոսկ անհրաժեշտ կողմնորոշիչներ, ապա երկրորդը նաև վերականգնողական, լիցքաթափման գործառույթ ունենալով հանդերձ, լրացնում է նախորդ երկու խոշոր խմբերին՝ ներառելով նաև նրանց վերաբերող որոշակի գործառույթները կամ դրանց տարրերը:

Ժուռնալիստիկայի հիշյալ հիմնական գործառույթների համախումբը հանդես է գալիս ինքնին ոչ միայն որպես սոցիալական կողմնորոշման, այլև՝ որոշակիորեն նաև սոցիալական ձևավորման և սոցիալական կառավարման գործոն:

Նշված երևույթների համախումբը նաև խնդիրներ է առաջադրում ժուռնալիստիկային ընդհանրապես և ժուռնալիստներին մասնավորապես, որոնք կարելի է ընդհանրացնել և ամփոփել մեկ ձևակերպմամբ. առավելագույնս հասկանալ և ընկալել աշխարհը՝ իր երեկ-այսօր-վաղը ամբողջության մեջ և ոչ միայն արտաքին դրսևորումներով, այլև «ստորջրյա» զարգացումներով և միտումներով, դրանք առավելագույն անաչառությամբ և մանրամասնությամբ մատուցել հանրությանը՝ նպաստելով նոր և անհրաժեշտ չափորոշիչների և արժեքների ձևավորմանն ու ամ-

րապնդմանը՝ ոչ միայն տարատեսակ և տարաբնույթ մարտահրավերները դիմակայելու, այլև դրանք որոշակիորեն արտացոլելու և մարդկության համընդհանուր բարեկեցությանը դրանց լուծումները ծառայեցնելու նպատակով:

Ըստ առաջադրված այդ խնդրի իրականացման մակարդակի էլ գլխավորապես որոշվում է մամուլի բուն մակարդակը. որակյալ մամուլ՝ որն աչքի է ընկնում երևույթների նկարագրության ճշգրտությամբ, գնահատականների հավասարակշռվածությամբ, փաստերի և իրադարձությունների համակողմանի լուսաբանմամբ, զանգվածային մամուլ՝ որում նշված չափանիշները այնքան էլ չեն պահպանվում և տուրք է տրվում հիմնականում զվարճանքներին և լիցքաթափմանը, այլ ոչ թե տեղեկատվությանն ու վերլուծություններին, և վերջապես, «դեղին մամուլ»՝ ուր սենսացիաները՝ իրական կամ հնարովի (էական չէ), գերիշխում են ամեն ինչին:

Իսկ ներքոբերյալ մեջբերումը, կարծում ենք, սպառիչ պատասխան է տալիս այն հարցին, թե ինչ է իրենից ներկայացնում իրապես որակյալ տեղեկատվամիջոցը. «Էլիտար մամուլ» գրքի հեղինակ Ջ.Մերիլը առավելագույնս է կարևորում որակյալ հրատարակությունների բովանդակությունը. դրանք, ըստ նրա՝ «առավել նտահոգված են ապագայով, այսօրվա իրադարձությունների վաղվա հետևանքներով: Նրանք հնարավորություն ունեն կանխատեսելու և կանխագուշակելու՝ շնորհիվ իրենց շահագրգռվածության և տեղեկացվածության»:

ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Անհրաժեշտ ենք համարում հստակեցնել նաև ժուռնալիստի հիմնական գործառնությունները, որոնք նա կատարում է իր պրոֆեսիոնալ գործունեության տարբեր փուլերում կամ էլ ողջ ընթացքում (իր իսկ ընտրությամբ կամ, պարզապես, հանգամանքների բերումով):

Այդ գործառնությունները ևս մի քանի հիմնական խմբի կարելի է բաժանել. 1. ինքնուրույն, անհատական, հեղինակային գործունեություն, որը բնութագրվում է գործունեության ոլորտի ինքնուրույնությամբ ու անկախությամբ և պայմանավորված է հիմնականում տվյալ անհատի պրոֆեսիոնալ հատկանիշներով ու կարողություններով:

Ժուռնալիստի հիմնական գործառնությունների հաջորդ խումբը՝ խմբագրական գործունեությունն է, որը ոչ այնքան կազմակերպական-ղեկավար բնույթ ունի (որոնց կանդիդատներն են գործառնությունների հաջորդ խմբում), որքան ստեղծագործական-կողմնորոշիչ:

Խմբագրական գործունեությունն արդեն իսկ ավելի բարձր մակարդակ է ենթադրում հեղինակային-ինքնուրույն-անկախ գործունեությունից՝ համապատասխան պատասխանատվությամբ հանդերձ: Այն անպայման կապված է և առնչվում է տվյալ տեղեկատվամիջոցի վարած ընդհանուր քաղաքականության հետ և նրա բաղկացուցիչ մասն է կազմում: Ստեղծագործական առումով խմբագրական գործունեությունն իրենից ներկայացնում է այն «կողմնակի, շահագրգիռ, առավել բանիմաց, գրագետ» աչքը, որ հնարավորություն է տալիս նկատել-արժևորել-շտկել այն ամենը, ինչը հեղինակի համար անտեսանելի կամ անընկալելի է՝ տարբեր պատճառներով:

Խմբագրական աշխատանքը սկսվում է նյութի (թեմայի, հերոսի, իրադարձության) ընտրությունից: Ակնհայտ է, որ ոչ բոլոր երևույթները, իրադարձություններն ու փաստերն են դառնում լուսաբանման առարկա. այլապես թե տեղեկատվամիջոցների քանակն ու ծավալները չէին բավարարի, թե տեխնիկական միջոցները, իսկ սպառողների լսարանն ընդհանրապես չէր կարողանա ոչ միայն կողմնորոշվել կատարվող իրադարձություններում, այլև, պարզապես, լսել կամ կարդալ դրանց մասին:

Հենց դրանից էլ՝ նյութի ընտրությունից, սկսվում է խմբագրի աշխատանքը:

Հաջորդ փուլը կարելի է բնութագրել որպես «նախնական խմբագրում»: Դա այն փուլն է, երբ ճշգրտվում են նյութի անհրաժեշտ «չափորոշիչները»՝ ինչ-ինչու-ինչպես պետք է ներկայացնել: Սա նաև նյութի պլանավորում կարելի է համարել:

Խմբագրական աշխատանքն, անշուշտ, իր առանձնահատկություններն ունի նաև տպագիր և այլ տեղեկատվամիջոցների առումով, սակայն նրա ընդհանուր բնութագիրը, կարծում են, մեկն է՝ հատիկը զատել որոմից և հանրությանը մատուցել նրան արժանի մակարդակի և որակի տեղեկություններ:

Խմբագրական գործունեության հաջորդ փուլերը արդեն պատրաստի նյութի գաղափարական, տրամաբանական և գրական խմբագրում են ենթադրում, որոնց ընթացքում էլ ամբողջանում և վերջնականապես ձևավորվում է նյութը՝ հանրությանը մատուցվելուց առաջ:

Խմբագրական գործունեությանը ներկայացվող հիմնական պահանջները կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. արդեն իսկ խմբագրված և հանրությանը մատուցելուն պատրաստ նյութը պետք է լինի հստակ, տեղեկատվական առումով՝ հազեցած, որոշակի, միանշանակ հասկացություններ և դատողություններ պարունակող, միանման ոճ ապահովող՝ ողջ տեքստում, զերծ հակասություններից, տրամաբանական, կոմպոզիցիոն-կառուցվածքային առումով՝ առավելագույնս մատչելի, ընկալելի և ամբողջական, լեզվաոճական տեսակետից՝ հնարավորինս անթերի:

Ու նաև՝ բարձր հոգևոր-արժեհամակարգային-բարոյական չափանիշներ ապահովի:

Առանց որևէ մեկնաբանության՝ մեկ օրինակ:

Ավանդազրույցը մեզ է հասցրել Բասյոյի և նրա սիրելի աշակերտ Կիգաքուլին վերաբերող մի հրաշալի պատմություն. Կիգաքուն, ով խիստ զգացմունքային մարդ էր և Բասյոյի աշակերտների խմբից ամենախելացին, մի անգամ վազում է ուսուցչի մոտ՝ ցույց տալու հենց նոր գրված իր լավագույն հոքուն: Կարդում է զգացմունքով՝ ձեռքերի շարժումներով և դիմախաղով լրացնելով գրվածը.

Պոկիր ճպումի
Թևիկները և
Կարմիր մի պղպեղ

Ճապոնիայում մեծ ճպումներ կան, որոնք կարմիր մարմիններ ունեն՝ խիստ մման փոքրիկ կարմիր պղպեղի: Եվ Կիզաքուն իր հոքուն հենց այդ մմանության վրա էլ կառուցել էր: Ուսուցիչը՝ Բասյոն, հանգիստ և մեղմ ժպիտով առաջարկում է այն խմբագրել:

Թևիկներ դու դիր
Փոքրիկ պղպեղին
Ճպում կդառնա

Ժումնալիստական գործունեության հաջորդ աստիճանը, որը մատրյոշկայի սկզբունքով մաս նախորդներն է ներառում, ինֆորմացիոն ընդհանուր քաղաքականության կառավարում-ղեկավարում-համակարգումն է, որը իրենից բազմաշերտ և բազմագործառույթ գործունեություն է ներկայացնում: Այն ենթադրում է ընդհանուր ինֆորմացիոն քաղաքականության մշակումն ու իրականացումը, քարոզչական գործունեություն՝ մրցակցային առանձնահատկությունների շեշտադրմամբ՝ ինքնատիպության պահպանումն ու առավելությունների ընդգծումը, ինչպես մաս հասարակայնության հետ կապերի խորացումն ու ամրապնդումը, որը լրացուցիչ և կարևոր խթան է ընդհանուր հաջողության ճանապարհին:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ առաջադրվող խնդիրներն ու դրանց իրականացման ուղիները ևս տարբեր մակարդակներ կարող են ենթադրել. մասնավոր ՏՁՏՄ-ից մինչև ինֆորմացիոն համապետական կառավարում՝ իր բացահայտ և ոչ այնքան բացահայտ և ակնառու դրսևորումներով:

Նախ՝ ընդհանուր ինֆորմացիոն քաղաքականության մասին, որը սկզբունքորեն պայմանավորված է և որոշվում է նպատակների այն շրջանակով և հարաբերակցությամբ, որոնք դրված են համակարգող կամ կառավարող կոնկրետ սուբյեկտների առջև: Հենց ըստ դրա էլ որոշվում են խնդիրների այն շրջանակները, որոնք անհրաժեշտ է լուծել՝ մշակված նպատակներին առավելագույնս շուտ հասնելու և անհրաժեշտ արդյունք ապահովելու համար: Ըստ որոշարկված խնդիրների շրջանակների էլ որոշվում

կամ ստեղծվում է այդ խնդիրների իրականացմանն ուղղված միջոցների, կարողությունների կամ գործիքների «ստեսականին», որն անհրաժեշտ է սովյալ խնդիրները լուծելու համար:

Այդ երեքը՝ նպատակ-խնդիրներ-միջոցներ, ընդհանուր ինֆորմացիոն քաղաքականության այն հիմնասյուներն են, որոնք ինքնին թե որոշում և թե իրենցով պայմանավորում են նույն այդ ինֆորմացիոն քաղաքականությունը:

Ինֆորմացիոն ղեկավարում-կառավարում-համակարգում հատույթի երկրորդ մակարդակը քարոզչական քաղաքականության իրականացումն է՝ մրցակցային առավել բարենպաստ մթնոլորտ և առավելություններ ապահովելու, ինչպես նաև ընդհանուր ինֆորմացիոն քաղաքականության՝ առաջադրված նպատակն ու իրականացման համար որոշարկված խնդիրներն առավելագույն արդյունավետությամբ իրականացնելու նպատակով:

Այստեղ բնավ էլ պատահաբար չէ նշված «քարոզչական քաղաքականություն» արտահայտությունը՝ որքան էլ բացասական լինի դրա նկատմամբ վերաբերմունքը՝ որպես հանրության կամ նրա որոշակի հատվածի նկատմամբ միտումնավոր, իր մեջ բարոյահոգեբանական բռնության որոշակի տարրեր պարունակող, երբեմն նաև տեղեկատվության ոչ արդար և ազնիվ ձևեր ներառող գործունեության հանդեպ, որը մեկ բառով մեքենայություններ կարելի է անվանել այդուամենայնիվ, քարոզչական գործունեությունը՝ որպես այդպիսին (իր թե թաքնված, թե բացահայտ արտահայտություններով) կա և, երևի թե՝ երկար ժամանակ, կարծում ենք, որ ընդհանրապես այն հնարավոր չի լինի իսպառ բացառել՝ այնքան գայթակղիչ են խոստացվող արդյունքներն ու ակնկալիքները նրանից:

Տեսնենք, թե ինչպես է, օրինակ, «Britanica» հանրագիտարանը բնութագրում այն. *«Տեղեկությունների՝ փաստերի, փաստարկների, ասեկոսեների, կիսաճշմարտության կամ ստի, տարածումը՝ նպատակ ունենալով ազդել հասարակական կարծիքի վրա: Քարոզչությունն իրենից ներկայացնում է առավել կամ պակաս համակարգված ջանքեր այլ մարդկանց համոզումըների, տեսակետների կամ գործողությունների մանիպուլյացիայի համար խորհրդանիշների միջոցով (բառեր, ժեստեր, դրոշներ, հուշարձաններ, երաժշտություն, հագուստ, նշաններ, սանրվածքի ձևեր, դրամների և դրոշմանիշների դիզայն և այլն): Միտումնավորությունը և համապատասխանաբար ուժեղ ճնշումը տարբե-*

րում են քարոզչությունը նպատակամիտված գրույցից կամ գաղափարների ազատ և անկաշկանդ փոխանակումից: Քարոզիչն ունի առանձնահատուկ նպատակներ կամ նպատակների խումբ: Դրանց հասնելու համար նա կանխամտածված ընտրում է փաստերը, փաստարկները ու խորհրդանիշների ներկայացման ձևերը և առաջարկում է այն կերպով, որը, իր կարծիքով, առավել մեծ արդյունք կտա: Ուժեղացնելու համար ներգործությունը, նա կարող է շրջանցել կամ խեղաթյուրել էական փաստերը, նա կարող է ռեակտորների (այն մարդկանց, ում փորձում է ղեկավարել) ուշադրությունը շեղել մնացյալ ամեն ինչից՝ բացի իր քարոզչությունը: Առավել կամ պակաս միտումնավոր ընտրովիությունը և մանիպուլյացիան տարբերում են քարոզչությունը կրթությունից: Դասախոսը ջանում է ներկայացնել խնդրի տարբեր կողմերը՝ իր հայտարարությունների նկատմամբ կասկածների հիմքերը և վստահության հիմքերը հավասարապես: Պետք է, սակայն, նշել, որ որոշակի քարոզիչը իրեն կարող է ընկալել իբրև դասախոս: Նա կարող է հավատալ, որ զուտ ճշմարտություն է արտաբերում, որը սրում կամ աղճատում է ճշմարտության որոշակի կողմերը՝ հաղորդումն առավել ընկալելի դարձնելու նպատակով, և, որ իր առաջարկած պահվածքի ձևերը, փաստացիորեն, ռեակտորի համար լավագույնն են: Այս կերպ նաև ռեակտորը, որ ընկալում է քարոզչի դիմումը իբրև ակնհայտ ճշմարտություն, կարող է դա որպես լուսավորչական գործողություն ընկալել»:

Եվ չնայած Ուինստոն Չերչիլի կանխագուշակումը՝ թե «ապագայի կայսրությունը ինտելեկտի կայսրությունն է լինելու» իրականացել է, մինչույն է, ներկա մրցակցային հասարակության մեջ, երբ մրցակցություն է ընթանում միջանձնային հարաբերություններից սկսած մինչև միջպետական կամ էլ անգամ միջմիութենական ու միջդաշնային հարաբերություններ, քարոզչությունը (հատկապես՝ նրա թաքնված, ոչ բացահայտ տեսակը) ավելի ու ավելի նոր և բուռն դրսևորումներ է ստանում, մանավանդ, ինչպես նշել է Գեորգի Պլեխանովը. **«Սոցիալական հոգեբանության վրա ազդելը նշանակում է ազդել պատմական իրադարձությունների վրա»:**

Քարոզչության իրականացումը, ի վերջո, հանգում է երեք հիմնական «ուղղության», որոնք ընդհանուրի փուլեր կարելի է համարել նաև.

1. Մատուցվող տեղեկությունների նպատակամետ ընտրություն:

2. Տեղեկատվական ընդհանուր հոսքի մեջ տեղեկությունների հստակ տեղաբաշխում և առաջադրված խնդրի իրագործմանը միտված շեշտադրումների կիրառում:

3. Միանգամայն օբյեկտիվ, անաչառ և բազմակողմանի մեկնաբանությունների ու վերլուծությունների միջոցով հանրությանը հուշել, թե. ա. ինչին է պետք ուշադրություն դարձնել, ինչու և ինչպես, բ. ինչի մասին, ինչ և ինչու է պետք մտածել, գ. օբյեկտիվորեն շահագրգռել, որպեսզի տվյալ անհատը ևս դառնա իրեն արդեն իսկ ներշնչված ճշմարտության ջատագովն ու տարածողը:

Հենց այդ, և վերը նշված նաև այլ նպատակներով էլ իրականացվում է քարոզչական գործունեությունը, որը միջանձնային, միջհամայնքային և այլ փոքր ու սահմանափակ հանրություններից վերանալու և միջպետական կամ միջդաշնային հարաբերություններին հասնելու պարագայում այլևս վերածվում է ինֆորմացիոն՝ քարոզչական պատերազմի:

Ու թեև այդ եզրույթը առաջին անգամ 1985 թվականին է կիրառվել ինֆորմացիոն պատերազմի տեսաբան չինացի Շեն Վեյ-հուանի կողմից, սակայն իր արմատներով և էությանը գալիս է հազիվ հիշելի ժամանակներից: Հիմքում «Սուև-ցզի» գիտական-ռազմական շարադրանքն է՝ հին Չինաստանի հայտնի զորահրամանատար Սուև Ուին վերագրվող, ով ապրել և գործել է Ք.Ծ.Ա. 6-րդ դարում և Կոնֆուցիուսի գրեթե ժամանակակիցն է եղել: Մարտավեստի հնագույն դասագրքերից մեկը լինելով «Սուև-ցզի»-ում առաջին անգամ արտահայտված է նաև ինֆորմացիոն ներգործության ազդեցությունը հակառակորդի վրա:

Այդ սկզբունքները հետագայում իրենց զարգացումներն են ստացել Չինական հանրահայտ ստրատեգամներում (Ք.Ծ. 5-րդ դարից ի վեր)։

Թիվ 10. Հասիր հակառակորդի վստահությանը և նրան հանգստություն ներշնչիր: Միայն այդ ժամանակ իրականացրու քո գաղտնի ծրագրերը: Ամեն ինչ նախապատրաստիր ինչպես հարկն է, հարձակվիր առանց երկմտելու և հակառակորդին ուշքի գալու հնարավորություն մի տուր:

Թիվ 21. Միշտ վստահ տեսք ունեցիր: Թույլ մի տուր, որ քո դիրքերում խոցելի տեղեր լինեն: Այդպես հնարավոր է թույլ չտալ դաշնակցին երկյուղել և թույլ չտալ հակառակորդին հարձակման պատրվակ գտնել:

Թիվ 27. Ավելի լավ է ձևացնես, թե ոչինչ չգիտես և ոչինչ չես ուզում անել, քան ձևացնես, որ ամեն ինչ գիտես և անխելամիտ գործես: Նա, ով հանգիստ է, իր ծրագրերը չի բացահայտում:

Ինֆորմացիոն պատերազմի առումով առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում նաև այդ հակամարտության ռազմավարությունն ու մարտավարությունը, որն, ինչպես և ընդհանուր ինֆորմացիոն քաղաքականության դեպքում, իր հիմքում ունի հատուկ նպատակներ և խնդիրներ, որոնց իրականացմանն էլ նպատակաուղղվում են բոլոր անհրաժեշտ միջոցները:

Ավելի նեղ և փոքր իմաստով՝ ներպետական քաղաքական գործունեության համար ժողովրդավարության պայմաններում առանձնահատուկ նշանակություն ունի հասարակական կարծիքը և նրա համապատասխան մշակումը, որը ևս բավականաչափ նրբամտություն և խորամտություն է պահանջում:

Այս առումով արժե հիշատակել Ի. Պանարինի և Լ. Պանարինայի հեղինակած «Ինֆորմացիոն պատերազմը և աշխարհը» գրքից մի հատված. «**ՁԼՄ-ների ոլորտի հետազոտող անգլիացի Ջ. Բրայսը անցյալ դարավերջին հրատարակել է «Ամերիկյան Հանրապետություն» գիրքը, որտեղ բացահայտել է ԱՄՆ-ի հասարակական կարծիքի վրա ներգործության մեխանիզմները:**

Սկզբում կառուցվում է «կարծիքների բազմաթիվությունը» «փաստերի կամ պատմության» օգնությամբ, որպեսզի մարդկանց հոգում այնպիսի զգացում առաջանա, որն ինքնին դուրս է հորդում շուրթերից՝ ստեղծելով այն տպավորությունը, թե այդ փաստի մասին խոսում են բոլորը:

Երկրորդ փուլում թերթերը (առավոտյան և երեկոյան) արդեն առավել որոշակի կարծիք են հայտնում իրադարձության մասին՝ այն հազեցնելով «սպասվող արդյունքներով» և, այդպիսով, «շարքային քաղաքացիների տեսակետները սկսում են խտանալ և ամրանալ»:

Երրորդ փուլում՝ քննարկումներում ու վիճաբանություններում, մի կողմ են մետվում ոչ պետքական փաստարկները հոգուտ մեկ և որոշակի ու անփոփոխ որոշման:

Չորրորդ փուլը իրադարձության փաստի կամ գնահատականի ներդրումն է, որոնք ներկայացվում են իբրև «ձևավորված համոզումներ», «մարդկանց միականության հակվածություն» ի շահ շարքային քաղաքացիների:

Հասարակական կարծիքի մշակման ամբողջ գործընթացը համեմատվում է ճանապարհի վրա հարթիչ գլանի գործունեությանը, երբ «անկյունները համահարթվում են և ճանապարհը դառնում է հարթ ու միատարր»:

Ընդհանուր և հասկանալի միտումնավորության հետ մեկտեղ ու՝ միաժամանակ, ակնհայտ է նաև որոշակի գաղափարատեխնոլոգիական սկզբունքների բացահայտումը, որոնք գրեթե համընդհանուր լինելով հանդերձ, տարբեր պայմաններում ու իրավիճակներում կարող են միանգամայն տարբեր դրսևորումներ ունենալ, սակայն ավելի շատ ընդհանրություններ ունեն. մասնավորապես խոսքը վերաբերում է տեղեկատվության և ապատեղեկատվության չափաբաժիններին, նպատակներին և մատուցման ձևերին, ընդհանուր և մասնավոր քարոզչության ու հակաքարոզչության կազմակերպմանն ու իրականացմանը և մյուս բոլոր մարտավարական խնդիրներին, որոնք ստեղծագործական լինելով հանդերձ, մշտապես զարգացում և փոփոխություններ են ենթադրում ու պահանջում:

Կառավարման համակարգի հաջորդ անհրաժեշտ և կարևոր օղակը՝ հանրության հետ կապերի ստեղծումը, պահպանումն ու ամրապնդումն է: Ինչպես և նախորդ դեպքերում, այն իրենից ամբողջական, սակայն, դարձյալ նախորդների նման, բնավ էլ ոչ ինքնաբավ գործունեության ոլորտ է ներկայացնում, ուր կարևորվում են ինչպես ներքին (մասնավոր) խնդիրներն ու նպատակները, այնպես էլ առավել ընդհանրականները, որոնք ողջ համակարգի արդյունավետությունն են ապահովում:

Հասարակայնության հետ կապերի անհրաժեշտությունն ու կարևորությունը ևս գիտակցվել և արժևորվել է հնագույն ժամանակներից ի վեր:

Մեզ հասած գրավոր և ավանդապատումային-բանավոր վկայությունները փաստում են, որ Ալեքսանդր Մեծն, օրինակ, էական նշանակություն է տվել այդ հանգամանքին և համակողմանիորեն նպաստել է այդ ինստիտուտի կայացմանը:

Ահա թե, հիմնվելով նաև այդ վկայությունների վրա, ինչ է գրում Պիտեր Գրինը իր «Ալեքսանդր Մակեդոնացի. աշխարհի չորս ծագերի տիրակալը» գրքում (Մոսկվա, 2005). ***«Դաշտային ուժերի հետ, Պարսկաստան ներխուժմանը մասնակցում էին շատ մասնագետներ, այդ թվում՝ ինժեներներ, մեխանիկներ, քարտեզագիրներ: Էվեն Բարդիացին գլխավորում էր շտաբը և քարտու-***

դարությունը: Ռազմական արշավանքի արտառոց կողմն էր (բացահայտորեն զգացվում էր Արիստոտելի ազդեցությունը) մեծ թվով գիտնականների մասնակցությունը՝ ճարտարապետների, աշխարհագրագետների, բուսաբանների, աստղագետների, մաթեմատիկոսների, կենդանաբանների: Նրանց ձեռք բերած գիտելիքներով հետագայում մի քանի դար շարունակում էին ձևավորվել եվրոպացիների պատկերացումները Արևելքի մասին:

Ալեքսանդրը հին աշխարհի առաջին հայտնի զորահրամանատարն էր, որ հավաքել էր քարոզիչների խումբ: Աքիլլեսին անմահություն պարգևեց Հոմերոսը, Աքիլլեսի ժառանգը ևս ցանկանում էր, որ իր հաղթանակները փառաբանվեն: Եվմենը վարում էր արշավանքի օրագրերը, իսկ Արիստոտելի զարմիկ Կալիսթենեսին Ալեքսանդրը նշանակել էր իր պաշտոնական պատմագիրը:

Ալեքսանդրը իրեն էր վերապահել Կալիսթենեսի ձեռագրերը վերանայելու իրավունքը և ժամանակ առ ժամանակ սրբագրումներ էր անում, բայց դա չի նշանակում, որ նա բառացիորեն թելադրում էր՝ ինչ գրել: Կալիսթենեսի խնդիրը փաստերի միտումնավոր լուսաբանումը չէր, այլ որոշակի հայեցակարգերի հիմքում դրված գնահատականները տալը: Հենց հայտնի դարձավ, որ Ալեքսանդրը լավ վճարում է իր գործունեության լուսաբանման համար, երրորդ կարգի բազում պատմագիրներ, բանաստեղծներ ու տեսաբաններ ի հայտ եկան, որ ցանկանում էին մասնակցել նրա արշավանքներին: Նրանց թիվը մեծացավ, երբ Ալեքսանդրի նորանոր հաջողությունները մեծացրին թե լուսաբանվող նյութի ծավալները, թե լուսաբանման համար նախատեսված պարգևի չափերը»:

Այս ակնհայտ մեթոդից, Ալեքսանդր Մեծի, օրինակով հետագայում օգտվում էին նաև այլք՝ արքաներ, իշխաններ, երևելի այլ անձինք:

Ուշագրավ է սակայն, որ պատմությունը, դարձյալ գրավոր, մեզ է ավանդել նաև առաջին PR-մենի գործունեությունը լուսաբանող բնավ էլ ոչ երկիմաստ փաստեր:

Նկատի ունեն Եզովպոսին (Ք.Ծ.Ա.6-րդ դար), որը մեկ անձում միավորում էր ինչպես հնագույն և, ամենայն հավանականությամբ, առաջին PR-մենին, այնպես էլ առաջին իմիջմեյքերին և քաղաքական տեխնոլոգին:

Եզովպոսի կենսագրությունից ստորև բերվող հատվածները, կարծում են, կհիմնավորեն ասվածը:

Նախ՝ Քսանթոսի հայտնի գրագի պատմության վախճանի մասին:

«Եզովպոսն ասաց.

-Երբ դատավորը մյուս վիճողի հետ կգա քեզ մոտ և կիրանայի ծովը խմել, դու մի հրաժարվիր քո խոսքից. ինչ որ ասել ես հարբած ժամանակ՝ նույնը կրկնիր: Թող սեղան դնեն և չորս կողմից ստրուկները կանգնեն՝ դա տպավորություն կգործի: Բուրորը կվազեն ծովափ՝ տեսնելու, թե դու ոնց ես ծովը խմելու: Երբ բազմությունը լրիվ հավաքվի, մի գավաթ ծովաջուր լցրու, դիր դատավորի առջև և հարցրու. «Որո՞նք են, ուրեմն, մեր պայմանները»: Դատավորը կասի. «Ծովը խմել»: Դու կհարցնես. «Եվ վե՞րջ»: Դատավորը կպատասխանի՝ «վերջ»: Այդ միջոցին դու դիմիր ներկաներին և ասա. «Իմ թանկագին քաղաքացիներ, բազում գետեր են լցվում ծովը՝ և ջրառատ, և հորդահոս, իսկ ես խոստացել եմ միայն ծովը խմել, բայց ոչ երբեք ծովը լցվող գետերը: Թող իմ ախոյանը բուրր գետերը փակի, որպեսզի ծովը խմեն»: Հնարավոր չէ փակել ծովը լցվող բուրր գետերը, հնարավոր չէ խմել և ծովը-ահա այդպես, չէի դիմաց՝ չէ: Եվ դու կազատվես այդ գրագից:

Քսանթոսը ապշեց նրա հնարամտությունից...»:

Ուշագրավ է նաև Քսանթոսի կնոջ «բաժանվելու» պատմությունը և, իհարկե, այն, թե ինչպես է Եզովպոսը «ետ բերում» նրան:

Ամենատեականն ու ուշագրավը հետևյալն է. ինչպես և նախորդ օրինակում դրվում է հստակ և որոշակի խնդիր. ապա մշակվում է այն իրականացնելու ռազմավարությունն ու մարտավարությունը, որը հետևողականորեն իրականացվում է: Ոչ բռնի, այլ խիստ քաղաքակիրթ մեթոդներով. շեշտը մարդկային ընդհանուր և անհատի հոգեբանության վրա դնելով: Արդյունքն, ինչպես և ակնկալվում է, բացարձակ է, արագ և բուրր առումներով շահեկան:

«...Անցավ մի քանի օր, Քսանթոսի կինը երկու ոտքը մի մաշկիկ մեջ դրեց և տուն չեկավ: Քսանթոսն իր բարեկամներին ուղարկեց նրա մոտ, որ համոզեն վերադառնա, բայց նա մնաց իր ասածին: Եզովպոսը տեսավ, որ այդ փորձանքից տերը գլուխը կորցրել է, մոտեցավ նրան և ասաց.

-Մի տխրիր, տեր իմ, վաղը ես այնպես կանեն, որ նա ինքը իր ոտքով գա քեզ մոտ:

Նա փող վերցրեց, զնաց շուկա, և հավերով ու սագերով բեռնավորված վերադարձավ, իբրև թե պատահաբար անցնելով

հենց այն տան մոտով, որտեղ Քսանթոսի կինն էր ապրում: Այստեղ նա հանդիպեց վերջինիս ծնողների աղախիմներից մեկին ու հարցրեց.

-Լսիր, այս կողմերում հավեր, սագեր և հարսանիքի համար այլ բաներ ծախող չկա՞:

-Իսկ ինչի՞դ է պետք,- հարցրեց նա:

-Իմ փիլիսոփա Քսանթոսը վաղը ամուսնանում է,- պատասխանեց Եզովպոսը:

Աղախինը նետվեց Քսանթոսի կնոջ մոտ և իր լսածի մասին նրան պատմեց: Հենց որ նա այդ լուրը լսեց, շնչակտուր վազեց փիլիսոփայի մոտ ու գոռաց.

-Քսանթոս, քանի ես ողջ եմ, այս տունն ուրիշ կին չի մտնի»:

Եվ վերջապես, Եզովպոսն առակագիր էր նաև, և իր առակներով քաղաքական և քաղաքագիտական լուրջ դասեր էր տալիս իր հայրենակիցներն.

«Քաղաքացի սամոսացիներ, ես պատրաստ եմ հաճույքով մեռնել թագավորի ոտքերի տակ, բայց նախ ձեզ պատմեմ մի առակ, և երբ մեռնեմ, դուք այդ առակը փորագրեք իմ տապանաքարին: Երբ զազանները դեռևս խոսում էին մարդկային լեզվով, գայլերը և ոչխարները պատերազմի մեջ էին: Գայլերը հաղթելու վրա էին, և ոչխարների բանը բուրդ էր, բայց հենց այդ ժամանակ շները օգնության հասան նրանց և գայլերին քշեցին: Գայլերը, վախենալով շներից, ոչխարների մոտ դեսպան ուղարկեցին: Եվ ահա այդ գայլը եկավ ու կանգնեց ոչխարների առջև, և ինչպես մի իսկական հռետոր, ասաց. «Եթե ուզում եք, որ մեր միջև պատերազմ չլինի, շներին հանձնեք մեզ և գնացեք հանգիստ քնեք, չվախենալով ոչ մի բանից»: Ոչխարները հիմար էին, լսեցին և շներին հանձնեցին գայլերին, իսկ գայլերը հոշոտեցին նրանց: Շատ չանցած, գայլերը հոշոտեցին նաև ոչխարներին: Նույնն էլ դուք, դատելով այդ առակից, օգտակար մարդկանց չպետք է հանձնեք թշնամուն»:

Ժամանակակից PR-ի սկիզբը կարելի է համարել 20-րդ դարը, որի ընթացքում երկարատև մոռացությունից հետո սկզբնավորվեցին և ձևավորվեցին այն բոլոր սկզբունքներն ու մարտավարությունները, որոնք հնարավորություն էին տալիս ոչ միայն հստակ խնդիրներ ու նպատակներ առաջադրել, այլև հաջողությամբ իրականացնել դրանք: Եվ դարձյալ, որպես ստեղծագործական մասնագիտություն՝ ամեն ինչ մտքի թռիչքի, երևակայու-

թյան և ստեղծագործական այլ դրսևորումների հետ է կապված և այսպիսով արված է միայն ու միայն դրանցով:

Ու նաև՝ որքան նոր ու անակնկալ լինի «հայտնությունը»՝ այնքան արդյունքն ավելի շոշափելի ու ակնառու կլինի:

Այս առումով արժե մեջբերել Մելվին Մենչերի «Լրագրության հիմունքները» գրքի PR-ին նվիրված օրինակների փոքրիկ ենթագլուխը.

«Ռեստինե կետեր» և «սայլամիի թագուհիներ»

Մամուլը հաճախ էր տպագրում նյութեր այն տարօրինակությունների մասին, որոնք արդյունք էին հասարակական կապերով զբաղվողների (նրանց հաճախ կոչում էին գովազդի մարդիկ կամ մամուլ գործակալներ) հարուստ երևակայության: Նոր բիզնեսի բացմանը նրանք կարող էին փղի ձագ բերել՝ լրագրողներին գրավելու նպատակով կամ, ասենք, մսեղեն արտադրողը հայտարարում էր «սայլամիի թագուհու» ընտրություններ, որի հաղթողը կիսամերկ նկարվում էր բոլոր ցանկացողների հետ:

1920 թվականին մի մամուլ գործակալ հորինեց իր կարծիքով մի հետաքրքիր նորություն՝ գովազդելու համար «Ուորներ բրազերս»-ի նկարահանած «Նավերով դեպի ծովը» ֆիլմը: Նա Փայկ Պիկի վրա մի ռեստինե կետ տեղադրեց և հայտարարեց լրագրողներին, որ լեռներում մարդիկ կետ են տեսել: Նա նաև մի երիտասարդ էր վարձել, որը նստած էր կետի մեջքին և ջուր էր ցայտեցնում:

Երբ կինոաստղ Ֆրենսիս Բ.Բուշամի գործակալը փորձում էր նրա համար կինոստուդիայում աշխատանք գտնել, նա խնդրեց Բուշամին իր հետ ոտքով գնալ կինոընկերության գրասենյակ: Նրանք երկուսն էլ գրպանները լիքը կոպեկներ էին լցրել և այդ կոպեկները գետնին էին թափում, որի պատճառով նրանց մեծ ամբոխ էր շրջապատել ու հետևում: Կինոստուդիայի տնօրենները տպավորված էին Բուշամի թվացյալ ժողովրդականությամբ և նրան գործի ընդունեցին»:

Որքան էլ արտառոց, այնուամենայնիվ, գրեթե դասական դարձած այս օրինակները ցույց են տալիս երևակայության, մտքի, ստեղծագործական կարողությունների թռիչքի անհրաժեշտությունն ու էֆեկտիվությունը այնպիսի մի կարևոր բնագավառում, որը ոմանք հակադրելով ժուռնալիստիկային նշում են, որ եթե ժուռնալիստիկան իրադարձության լուսաբանմանն է նվիր-

ված, ապա PR-ը՝ նույն այդ իրադարձությունը ստեղծելուն:

Ուշագրավ է, որ ստեղծագործական մասնագիտություն լինելով հանդերձ՝ հասարակական կապերն իրենց բնորոշման առումով ևս ստեղծագործական մոտեցում են պահանջում: Եվ չկա մեկ միասնական դիրքորոշում այդ բնութագրերի առումով:

Ահա թե ինչ է գրում Վ. Վորոշիլովը արդեն իսկ հիշատակված իր «ժուռնալիստիկա» դասագրքի համապատասխան բաժնում. **«Ամերիկացի մասնագետ Ռեքս Չարլոուն ուսումնասիրել է PR-ի բնորոշման 472 տարատեսակ և մշակել է 473-րդը՝ սեփականը. «PR-ը կառավարման գործառնություններից մեկն է, որ նպաստում է հաղորդակցության, փոխըմբռնման, բարենպաստ մթնոլորտի կայացմանը և կազմակերպությունների ու հասարակության համագործակցությանը»:** Սեն Բլէքը իր կողմից առաջարկում է մի բնորոշում, որ իր կարծիքով «հակիրճ ու համապարփակ է»՝ **PR-ը փոխըմբռնման միջոցով ներդաշնակության հասնելու արվեստ և գիտություն է՝ հիմնված ճշմարտության և լիակատար տեղեկացվածության վրա»:** Այսօր բանաձևումների թիվը 500-ից անցել է. **հասարակայնության հետ կապերի մասին ամեն մի գրքի հեղինակ իրեն պարտավորված է համարում տալ «հասարակայնության հետ կապեր» հասկացության բնորոշումը: Թվարկենք մի քանիսը: Public relations-ը.**

- **հասարակական կապերի զարգացումն է**
- **կողմնակի գովազդ է**
- **հասարակական կարծիքի կառավարման գիտություն է**
- **թաքնված գովազդի ձև է**
- **բարձրամակարդակ և որակյալ գովազդ է**
- **արվեստ և սոցիալական գիտություն է, որը վերլուծում է ժամանակակից միտումները, կանխատեսում դրանց հետևանքները, խորհրդատվություն է տրամադրում մենեջերներին, անցկացնում է միջոցառումների շարք, որոնցում շահագրգիռ են ինչպես պատվիրատու կազմակերպությունները, այնպես էլ նրանց լսարանները**
- **հեղինակության մենեջմենթ է**
- **հեղինակություն ստեղծող է**
- **նպատակային, ծրագրված, մշտապես աջակցվող ջանքեր են՝ հաստատելու ու սատարելու համար կազմակերպության ու իր լսարանի փոխըմբռնումը**
- **մենեջմենթի գործառնություն է, որը հաստատում և**

- նպաստում է կազմակերպության և այն մարդկանց փոխշահավետ հարաբերություններին, որոնցից կախված է հաջողությունը կամ անհաջողությունը*
- *հաղորդակցության բոլոր ձևերն է ընդգրկում՝ ուղղված ներքին ու արտաքին սպառմանը, կազմակերպության ու իր հասարակության միջև՝ փոխըմբռնման առումով որոշակի նպատակների հասնելու համար*
 - *մենեջմենթի ինքնուրույն գործառնություն է՝ հաղորդակցություն հաստատել ու պահպանել կազմակերպության ու իր հասարակության միջև»:*

Եվ, այնուամենայնիվ, չնայած բնութագրումների այդպիսի բազմազանությամբ, ու դրանով իսկ պայմանավորված, տարընթերցումների մեծ հավանականությամբ, հասարակայնության հետ կապերի էությունը, իմաստն ու նպատակը կրկին եռամիասնական է. որոշակիացնել և հստակեցնել նպատակը, մշակել այդ նպատակին հասնելու համար առաջադրվելիք խնդիրները և ապահովել այդ խնդիրների իրականացումը երաշխավորող միջոցների գործունակությունը՝ նախանշված նպատակին հասնելու համար:

Հավարտ. մասնագետները (ինչպես PR-ի, այնպես էլ՝ գովազդի) լրջորեն կանխատեսում են գովազդի անհետացումը և դրա փոխարեն PR-ի համընդգրկուն տարածումը: Չկիսելով այդ ծայրահեղ մոտեցումը՝ պարտ ենք փաստել, սակայն, որ PR-ի կիրառումը շատ ավելի արդյունավետ ու նպատակամետ է, քան պարզ, թեկուզև բարձրարվեստ գովազդը:

Որպես դասական օրինակ կարելի է բերել 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին հայկական կոնյակի արտադրությունը հիմնադրած Ն. Շուստովի իրականացրած PR-ը: Իր արտադրության գովազդի փոխարեն Շուստովը, վերջին նորաձևությամբ և թանկարժեք հագուստներով հանդերձավորելով շուրջ 100 հոգու, նրանց գրպանի բավարար ծախսեր հատկացնելով, գործուղում է Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ, Փարիզ, եվրոպական այլ մայրաքաղաքներ: Գործուղվածների խնդիրը մեկն էր. մտնել առաջնակարգ ռեստորաններ, պատվիրել ամենաընտիր ուտեստներն ու... հայկական կոնյակ:

-Ի՞նչ, էդպիսի բան չկա,- զարմանում էին բոլոր մատուցողները բոլոր քաղաքներում:

Բանը հասնում էր ռեստորանատերերին, բայց նրանք էլ էին շփոթված տարուբերում գլուխները:

-Վեր կաց, վեր, եթե էստեղ հայկական կոնյակ չկա, իմաստ չունի այստեղ ճաշելը (նախաճաշելը, ընթրելը),- ասում էր շքեղ հագնվածներից մեկն իր ընկերակցին, և նրանք, թողնելով համադամ ուտեստներով ծանրաբեռ սեղանի հեռանկարը՝ հեռանում էին հերթական ռեստորանից:

Ընդամենը կարճ ժամանակ անց... բոլորն արդեն հայկական կոնյակ էին փնտրում...

Ահա, թերևս, և լրագրողի հիմնական գործառույթների համառոտ բնութագիրը:

Սրանով, անշուշտ, ամեն ինչ չի ավարտվում, այլ՝ սկսվում է: Որովհետև յուրաքանչյուր ոլորտ էլ խիստ շահագրգիռ և նպատակային գործունեություն է ենթադրում, դրանով իսկ՝ պլանավորում ու համակարգում, որը ևս խիստ տարողունակ, խորամտություն և նրբամտություն պահանջող աշխատանք է:

ԳՐՎԱԾ, ՉԳՐՎԱԾ, ԵՎ ԳՐՎԵԼԻՔ ՕՐԵՆՔՆԵՐ

Ամենահեշտն, անշուշտ, գրված օրենքների պարագան է. ամեն ինչ հստակ է և որոշակի: Ու, անկախ նրանից՝ համաձայն ես-համաձայն չես՝ պարտավոր ես ենթարկվել. այդ է պահանջում երկրի օրինապահ քաղաքացու կարգավիճակը: Օրենքը, նաև անհամաձայնության դեպքում, փոփոխությունների կանոնակարգված ընթացակարգ է ենթադրում իր հերթին:

«Գրված օրենքները» սկսվում են երկրի Սահմանադրությունից, շարունակվում խոսքի ազատության, մամուլի, գովազդի, քարոզչության մասին օրենքներով, ավարտվում՝ բոլոր նրանցով, ուր այս կամ այն կերպ հիշատակում կա տեղեկությունների զանգվածային տարածման միջոցների մասին: Օրենքների հենց այս համախումբն էլ կանոնակարգում է ՏՁՏՄ-ների գործունեությունը, իսկ դրանց իմացությունը՝ էապես դյուրացնում է այդ միջոցների աշխատակիցների գործը, քանզի նրանց համար պարզ և որոշակի է դառնում այն «տարածքը», որտեղ նրանք կոչված են գործելու: Խոսքն այստեղ, անշուշտ, կայացած և քաղաքակիրթ երկրների մասին է, քանզի հակառակում կամ էլ, անգամ, այդ ճանապարհին գտնվողներում առաջնայինը դառնում է «քաղաքական նպատակահարմարությունը», որն էլ, իր հերթին, որոշվում է իշխողների քմահաճույքով:

Գրվելիք օրենքներն, իրենց հերթին, կոչված են լինելու առավելագույնս կանոնակարգելու և առավել բարձր բարոյական ու արժեքային սանդղակի հասցնելու անհատ-ՏՁՏՄ, ՏՁՏՄ-անհատ, անհատ-ՏՁՏՄ-անհատ, անհատ-ՏՁՏՄ-հասարակություն, ՏՁՏՄ-հասարակություն, հասարակություն-ՏՁՏՄ, հասարակություն-ՏՁՏՄ-անհատ փոխհարաբերություններն ու փոխներգործություն-փոխազդեցությունները, քանզի այդ հարաբերություններում աստիճանաբար նոր նրբերանգներ են ի հայտ գալիս, որոնք էլ, ընդհանուր ներդաշնակությունը չխաթարելու և հանրային առաջընթաց ապահովելու նպատակով անհրաժեշտ է նրբորեն կանոնակարգել:

Դառնանք «չգրված օրենքներին»: Որպես այդպիսիք նկատի ենք առնում համընդհանուր կատարման համար պարտադիր

կարգավիճակ չունեցող, սակայն պրոֆեսիոնալ ինքնակարգավորման համար խիստ անհրաժեշտ կանոնագրերը (մասնագիտական վարքականոցներ, խմբակային կանոնագրեր, ճյուղային կանոնագրեր, գործառնական կանոնագրեր, ներխմբագրային կանոնագրեր), որոնք էապես նպաստում են՝ յուրաքանչյուրն ըստ իր նշանակության, ոլորտի կանոնակարգման ու ընդհանրական խնդիրների լուծմանը: Այդ կանոնագրերից շատերին՝ համախումբ, կարելի է ծանոթանալ Երևանի մամուլի ակումբի հրատարակած «Քաղաքական պայքարը և լրագրողի մասնագիտական բարոյականությունը» ժողովածուում (Երևան, 2000 թ.):

Բայց, ինչպես և օրենքների պարագայում, կանոնակարգային և առանցքային խնդիրն այս պարագայում ևս գրվածի կենսագործումն է: Թեև այս դեպքում արդյունավետությունը անհամեմատ ավելի մեծ է, քանզի վերջիններս ընդունվել և ստորագրվել են կամովին և որևէ կերպ չեն պարտադրվել:

Ստորև այն հիմնական մարդկային, բարոյական ու մասնագիտական հատկանիշների պարզ թվարկումը (որովհետև դրանք մեկնաբանությունների և, առավել ևս, վերլուծությունների, հիմնավորումների ու փաստարկումների կարիք չունեն). ժուռնալիստը պետք է առաջնորդվի բարձր գեղագիտական և մասնագիտական արժեքներով ու սկզբունքներով, նրա ամենօրյա ստեղծագործությունը պետք է բավարարի բարձր ճաշակը, նա պետք է հետաքրքրասեր լինի, ճշմարտությունը անաչառ որոնող, պատասխանատու՝ իր բոլոր հարաբերություններում, ինքնատիպ և վերլուծական միտք ունենա, ինքնուրույն լինի, կարողանա վերլուծել- համակողմանիորեն ամբողջացնել-եզրակացությունների հանգել տվյալ դեպքը կամ երևույթը ընկալել-շարադրելիս, պետք է լայն մտահորիզոն, աշխարհայացք և ինքնատիպ աշխարհընկալում ունենա, պատշաճ հոգեմտավոր դաստիարակություն, լինի ազնիվ՝ ցանկացած փոխհարաբերության պարագայում, ի սպառ զերծ լինի նախապաշարմունքներից, աջակցի և նպաստի կարծիքների ազատ և անկաշկանդ փոխանակմանը, ինֆորմացիան հստակորեն տարանջատի մեկնաբանություններից և գովազդից (ցանկացած փոխհարաբերությամբ), լինի խորամիտ, նրբամիտ, նրբանկատ և նրբազգաց, պաշտպանի անմեղության կանխավարկածը, պայքարի հանրության տեղեկացված լինելու իրավունքի լիարժեք իրացման համար, խուսափի անձնական շահագրգռություններն իր մասնագիտական գործու-

նեությանը զուգակցելուց, բացառի շահերի բախումը, իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս լինի առավելագույնս ճշգրիտ, անաչառ և անկողմնակալ, հարգի մարդկանց անձնական կյանքի անձեռնմխելիության սկզբունքը, մտահոգվի իր մասնագիտական գործունեության բարոյահոգեբանական հետևանքներով, յուրաքանչյուր ցանկացողի կամ շահագրգիռ անձի համար քննարկվող կամ արժարժվող խնդիրների շուրջ արտահայտվելու հավասար հնարավորություններ ստեղծի, արդարամիտ և ճշմարտախոս լինի, խորին հարգանքով վերաբերվի մարդու բոլոր իրավունքներին, նպաստի համամարդկային արժեքների տարածմանը և համերաշխության սկզբունքի արմատավորմանը, լինի անկախ...

Անշուշտ կարելի է շարունակել նաև, բայց սահմանափակվենք սրանով, քանզի թվարկումն առանց այն էլ բավականին երկարեց:

Այս ամենը կարելի է ամփոփել երեք հիմնական «շերտով»:
Անհարժեշտ է լինել.

1. Լավ և բարձր բարոյականության տեր մարդ՝ պարզապես:

2. Բարձր ճաշակի տեր, հոգևոր և մտավոր առունով սեփական անձից մշտապես անբավարար և կատարելության ձգտող:

3. Անաչառ պրոֆեսիոնալ:

Այս երեք շերտերը հենց ընդգրկում են դրանց նախորդած ողջ թվարկումը, որն՝ իդեալ, ինքներդ կարող եք շարունակել նաև:

Անշուշտ այս ամենը, որն անձնական բարձր հատկանիշների համախումբ կարելի է համարել, պրոֆեսիոնալ գործունեության ընթացքում պետք է առավելագույնս համատեղվի և ներդաշնակի այն տեղեկատվամիջոցի որդեգրած հիմնարար սկզբունքների հետ, որին դուք պատրաստվում կամ նախատեսում եք աշխատակցել:

Ստորև բերվող «Վաշինգտոն պոստ» թերթի «Հիմնարար սկզբունքները», կարծում եմ չափօրինակ կարող են դառնալ որակյալ, անկողմնակալ մամուլի համար.

«1933 թվականից՝ երբ թերթը ձեռք բերեց Յուջին Մեյերը, «Վաշինգտոն պոստը» նրա ընտանիքի սեփականությունն է: Թերթը զննելուց անմիջապես հետո նա հրապարակեց հետևյալ «Սկզբունքները».

-Թերթի առաջնահերթ առաքելությունն է՝ գտնել և հաղորդել ճշմարտությունն այնքան, որքան այդ հնարավոր է:

-Թերթը պետք է հրապարակի ցանկացած ճշմարտություն, որ ունի իր տրամադրության տակ՝ Ամերիկայի և աշխարհի իրադարձությունների մասին:

-Տեղեկացնելով նորությունների մասին՝ թերթը պետք է պահպանի պատշաճության այն կանոնները, որ ընդունված են բարեկիրթ հասարակության մեջ:

-Թերթում հրապարակված նյութերը պետք է ընթերցվող լինեն ինչպես երիտասարդության, այնպես էլ ավագ սերնդի համար:

-Թերթը պետք է ծառայի իր ընթերցողներին ու հասարակությանը և ոչ թե իր սեփականատերերին:

-Թերթը պետք է պատրաստ լինի ճշմարտությունը պաշտպանելիս զոհաբերել նյութական շահերը, եթե դա անհրաժեշտ է հանրային բարեկեցության համար: Թերթը չպետք է հանդես գա իբրև որևէ մեկի կողմնակից կամ պաշտպանի հատուկ շահեր: Նա պետք է արդարացի լինի հասարակական և հասարակության անդամների կյանքը լուսաբանելիս»:

ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՅԻՄՆԱԿԱՆ ԺԱՆՐԵՐԸ

Լուր

Լուրը (ինֆորմացիան, նորությունը) ժուռնալիստիկայի հիմքն է: Միայն դրա հիման վրա հետագայում կարող է թղթակցություն կառուցվել, ռեպորտաժ, հոդված կամ ակնարկ: Ցանկացած ժանրի կամ բնագրի հիմքում լուրն է. այսինքն՝ փաստը, նորությունը, որն այդ պահից ի վեր դառնում է յուրաքանչյուրի կյանքի անբաժանելի մասը՝ կամա թե ակամա:

Մինչ նորության ձևակերպման առանձնահատկություններին անդրադառնալը, արժե ձևակերպել գոնե մոտավորապես, թե ինչ է ներկայացնում իրենից նորությունը:

Ի հավելումն նախորդ գլուխներից մեկում ասածի՝ անհրաժեշտ ենք համարում նշել նաև.

նորությունը ընդհանուր գծի՝ անցյալ-ներկա-ապագա, ընթացքում տվյալ պահին ի հայտ եկած նոր երևույթն է, փաստը, դրսևորումը, որի արմատներն, անշուշտ, անցյալում են, դրսևորումն՝ այժմ, հետևանքներն՝ ապագայում:

Լուրն իր առաջին արտահայտությունները գտել է այրապատկերներում և ժայռապատկերներում, որոնցից յուրաքանչյուրը՝ եթե, իհարկե, ռեպորտաժ կամ թղթակցություն չէ՝ լուր է:

Սովորաբար լուրի մատուցման երկու հիմնական սկզբունք է նշվում տեսական գրականության մեջ. «կոշտ» կամ «չոր» լուր, ուր խոսքը միայն կատարված փաստի կամ նորության մասին է. «փափուկ» լուր է կոչվում այն լուրը, որն ընդգրկում է կատարված իրադարձության մանրամասներն ու դետալները:

Առավել արժեք և կարևորություն ներկայացնող լուրը մատուցելու նպատակով հիմնականում դիմում են «շրջված բուրգի» սկզբունքին, երբ սկսում են առավել նշանակալից փաստից (բուրգի հիմքից), իսկ մնացած փաստերը շարադրում են ըստ կարևորության ու հետաքրքրության նվազման: Լուրի փոքր ծավալի պատճառով էական նշանակություն և կարևորություն է ձեռք բերում այն, թե լուրն ինչպես է սկսվում. խոսքն, ինչպես արդեն, կարծում են, կռահեցիք լիդի (lead) մասին է, որի տեսակա-

նին խիստ ընդարձակ է և բազմազան, ուստի դրանից կառանձնացնենք մեր կարծիքով ամենաէականներն ու հիմնականները:

Լրագրության ամերիկյան դպրոցի տեսաբանները «կոշտ» լուրը շարադրելիս հիմնականում խորհուրդ են տալիս կիրառել հետևյալ լիդերը.

- «Մեկ տարրի» լիդ. օգտագործվում է այն դեպքում, երբ լուրը պարունակում է շատ ուժեղ տարր, որը պետք է ընդգծել:
- Լիդ-ընդհանրացում. օգտագործվում է այն դեպքում, երբ տեղեկատվությունը պարունակում է մի քանի հավասարապես կարևոր տարրեր:
- Լիդ-«կախիչ». գործնականում ամփոփում է նորությունը: Հեղինակը առաջին պարբերության վրա «կախում է» միանգամից բոլոր ակնկալվող հարցերի պատասխանները:
- Լիդ-անհապաղ նույնականացում: Միանգամից և հստակորեն տրվում է «ո՞վ» հարցի պատասխանը, ընդ որում տրվում է ճշգրիտ պատասխան, քանի որ նորության առանցքը հանրահայտ անձի մասնակցությունն է նկարագրվող իրադարձությանը:
- Լիդ-հետաձգված նույնականացում. օգտագործվում է այն դեպքում, երբ տվյալ անձը ինքնին կարևոր չէ, բայց կարևոր է դառնում տեղի ունեցող իրադարձությանը:
- Լիդ-«մեկ կրակոց». օգտագործվում է այն դեպքում, երբ գլխավոր նորությունը շատ հակիրճ է, աֆորիզմի պես:

«Փափուկ» նորությունների համար խորհուրդ են տրվում այլ լիդեր.

- Պատմողական լիդ:
- «Հակադիր» լիդ. առաջին պարբերության մեջ հակադրվում են հինն ու նորը, երեկն ու այսօրը:
- Լիդ «ստոկատո». կարճ, ընդհատուն, «հեռագրային» արտահայտություններ՝ կիսաակնարկներ, իմաստի առանձին տարրեր:

- Հասցեագրված լիդ. տեքստի առաջին պարբերության մեջ ուղղակի դիմում կա ընթերցողին:
- Լիդ-հարց. հարցը կարող է լինել և բաց, և քողարկված:
- Լիդ-մեջբերում:

Լուրը (նորությունը, ինֆորմացիան) սրանով իհարկե չի ավարտվում. լիդին հաջորդում է լուրի ողնաշարը՝ այն ինչ դուք ուզում եք անպայմանորեն հայտնել ընթերցողին, որը կարող է, անհրաժեշտության դեպքում, լրացվել որոշակի անհրաժեշտ, իրադարձությունն ինքնին ավելի կարևորող և իմաստավորող մանրամասներով, և անշուշտ, եզրափակումը, որը, բնականորեն, պետք է բխի ողջ շարադրանքից՝ ամփոփի այն:

Ռեպորտաժ

Ռեպորտաժն, ըստ էության, լուրի՝ փաստի, նորության, ինֆորմացիայի կենդանի, հնարավորինս մանրամասն և ընդգրկուն փոխանցումն է ընթերցողին, որը որպես ժանր առանձնանում է մի քանի կարևորագույն հատկանիշներով: Առաջնայինը իրադարձությանը մասնակից կամ ականատես լինելն է կամ էլ, ծայրահեղ դեպքում, ներկայության էֆեկտ ստեղծելը: Ինչպես ցույց է տալիս Բ.Ծ.Ա. նվազագույնը երեք հազարամյակ առաջ արված ժայռապատկերը (նկար 1) ռեպորտաժը ևս այն առաջին ժանրերից է, որոնք կիրառել է մարդը՝ իր տեսածը կամ լսածը այլոց ևս տեղեկացնելու նպատակով: Երկրորդ կարևորագույն առանձնահատկությունն այն է, որ ռեպորտաժի ընթացքում լրագրողը իր ընթերցողին, ակնդրին կամ ունկնդրին պետք է կարողանա առավելագույն կենդանությանը և մանրամասնությամբ ներկայացնել տեղի ունեցած (տպագիր մանուկում) կամ ունեցող (ռադիո, հեռուստատեսություն, մուլտի-մեդիա) իրադարձությունը, որովհետև հենց այդ էական կամ առաջին հայացքից գուցե և ոչ էական մանրամասներն են, որ ամբողջացնում են իրադարձությունը և ընդգրկուն պատկերացում են տալիս նրա մասին: Նախորդ երկու առանձնահատկություններից էլ բխում է երրորդ կարևոր առանձնահատկությունը, որն առնչվում է մատուցման լեզվաոճական համակարգին: Ռեպորտաժի համար գերադասելի է ընտրել կարճ, հատու, ընդգրկուն նախադասություններ,

քանզի հենց դրանք են ապահովում ժանրի առանձնահատկությունների ճիշտ և նպատակային փոխանցումն ու ընկալումը: Ռեպորտաժի առանձնահատկություններից մեկն էլ դիմամիկ զարգացող գործողության նույնքան դիմամիկ «պահպանում»-նկարագրումն է: Ռեպորտաժի մատուցման մակարդակը մեծապես կախված է լրագրողի դիտողականությունից, նրա կողմնորոշվելու կարողությունից, ընկալումների մակարդակից և իր առաջ դրված խնդրից: Ռադիո և հեռուստատեսային ռեպորտաժների համար այս ամենին գումարվում են նաև ռեժիսորի և օպերատորի համանման հատկանիշները և պատահական չէ, որ ստեղծագործական խմբերը ստեղծվում և կայանում են դժվար ու դանդաղ, իսկ կայանալուց հետո գոյատևում են հնարավորինս երկար:

Ժանրերը (այդ թվում՝ ռեպորտաժը) ստեղծվել են շատ վաղուց, պարզապես հետո են իրենց բնութագրումները որոշարկել և գտել իրենց գործնական կիրառությունը՝ թե գրականության մեջ, թե ժուռնալիստիկայում: Ռեպորտաժի առաջին գրավոր վկայություններին կարող ենք հանդիպել ինչպես առաջին ճանապարհորդների և աշխարհագրագետների մոտ՝ Ստրաբոնից սկսած, այնպես էլ առաջին պատմաբանների մոտ՝ Զերոդոտոսից ի վեր:

Ռեպորտաժում խիստ կարևորվում է հեղինակի՝ այն վարողի անհատականությունը, որովհետև նույն երևույթն ու իրադարձությունը տարբեր անձեր տարբեր կերպ կմեկնաբանեն անշուշտ, քանզի նրանցից յուրաքանչյուրը դետալների և մանրամասների իր շեշտադրումները կունենա, որոնք առավել համահունչ են իր անհատական ինչպես մարդկային, այնպես էլ հոգևոր և ինտելեկտուալ կերպին ու նկարագրին:

Որպես ռեպորտաժի դասական օրինակ կարելի է բերել Զիսուս Քրիստոսի «Սերմնացանի առակը» պատմելու և այն մեկնաբանելու նկարագրությունները, որոնք կան չորս Ավետարանիչներից երեթի մոտ և եթե ուշադիր հետևենք, ակնհայտորեն կզգացվեն նաև դրանց ընկալումային և մանրամասների տարբերությունները:

ՍԵՐՄԱՑԱՆԻ ԱՌԱԿԸ

Նույն օրը Հիսուսը տնից դուրս եկավ և գնաց նստեց լճի եզերքին: Նրա շուրջը մի այնպիսի մեծ բազմություն հավաքվեց, որ նա նավակ մտավ և նստեց այնտեղ, իսկ ամբողջ բազմությունը կանգնած մնաց լճի եզերքին: Եվ նա առակներով շատ բաներ էր սովորեցնում նրանց և ասում.

-Մի սերմնացան ելավ սերմ ցանելու: Երբ նա սերմանում էր, հատիկների մի մասն ընկավ ճանապարհի եզերքին, և թռչունները եկան ու կերան դրանք: Ուրիշ հատիկներ ընկան ժայռոտ մի տեղ, ուր շատ հող չկար, և որովհետև հողը խորություն չուներ, իսկույն բուսան, բայց երբ արևը ելավ, խանձվեցին, և քանի որ արմատ չուներին, չորացան: Ուրիշ հատիկներ ընկան փշերի մեջ, և փշերը բարձրացան ու խեղդեցին դրանք: Իսկ ուրիշներն ընկան լավ հողի մեջ և պտուղ տվեցին. մի մասը՝ մեկի տեղ հարյուր, ուրիշները՝ վաթսուս և կամ երեսուն: Ով լսելու ականջ ունի, թող լսի:

ԱՌԱԿՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Այա աշակերտները մոտեցան Հիսուսին և հարցրին.

-Ինչո՞ւ ես առակներով խոսում նրանց հետ:

Հիսուսը պատասխանեց նրանց.

-Դուք պետք է գիտենաք Աստծո արքայության գաղտնիքները, բայց ոչ նրանք, որովհետև ով ունի, նրան պիտի տրվի ավելիով, իսկ ով չունի, նրանից պիտի վերցվի ունեցած փոքր բաժինն էլ: Դրա համար է, որ ես առակներով եմ խոսում նրանց հետ, որովհետև նայում եմ, բայց չեն տեսնում, ականջ են դնում, բայց չեն լսում ու չեն հասկանում: Այսպես է իրականանում նրանց նկատմամբ Եսայու մարգարեությունը, որ ասում է.

«Անդադար կլսեն, բայց չեն հասկանա,
շարունակ կնայեն, բայց չեն տեսնի,
որովհետև այս ժողովրդի միտքը թանձրացել է.
նրանք խցել են իրենց ականջները
և փակել են իրենց աչքերը,
որպեսզի չլինի թե իրենց աչքերը տեսնեն,
և ականջները լսեն,
մտքերը հասկանան ու դարձի գան,
և ես բժշկեմ նրանց»:

Բայց երանի ձեր աչքերին, որովհետև տեսնում եմ, և երանի ձեր ականջներին, որովհետև լսում եմ: Ասում եմ ձեզ, որ շատ մարգարեներ և արդարներ փափագեցին տեսնել ձեր տեսածները, բայց չտեսան, և ցանկացան լսել ձեր լսածները, բայց չլսեցին» (Մատթեոս, 13, 1-17):

ՍԵՐՄԱՑԱՆԻ ԱՌԱԿԸ

Հիսուսը դարձյալ սկսեց ուսուցանել Գալիլեայի լճի եզերքին: Ժողովուրդն այնքան խռնվեց նրա շուրջը, որ նա նավակ մտավ և նստեց այնտեղ, իսկ ժողովուրդը ցամաքի վրա էր, լճի եզերքին: Նա առականերով շատ բան էր սովորեցնում նրանց: Իր քարոզչության ընթացքում նա ասաց.

-Լսեցեք: Ահա մի սերմանող ելավ սերմ ցանելու: Սերմանելու ժամանակ սերմերից մի քանիսն ընկան ճանապարհի եզրին, և երկնքի թռչունները եկան ու կերան դրանք: Ուրիշները ընկան ժայռոտ մի տեղ, որտեղ առատ հող չկար, և իսկույն բուսան, քանի որ հողը խորունկ չէր, և երբ արևը ելավ, այրվեցին, և որովհետև արմատ չունեին, չորացան: Մի քանիսն ընկան փշերի մեջ, փշերը ելան և խեղդեցին նրանց, և նրանք պտուղ չտվին: Իսկ ուրիշներն էլ ընկան լավ հողի մեջ և աճելով պտուղ տվին. մի մասը՝ մեկի տեղ երեսուն, ուրիշները՝ մեկի տեղ վաթսուն և կամ մեկի տեղ՝ հարյուր:

Եվ նա ասաց.

- Ով լսելու ականջ ունի, թող լսի:

ԱՌԱԿՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Երբ Հիսուսն առանձին մնաց, նրան լսողներից ոմանք տասներկու աշակերտների հետ եկան և ուզեցին, որ իրենց բացատրի առակը: Հիսուսն ասաց.

-Դուք պետք է գիտենաք Աստծու արքայության գաղտնիքները, բայց նրանց, ովքեր դրսից են, ամեն ինչ առականերով կհայտնվի, այնպես որ՝

«Անդադար կնայեն, բայց չեն տեսնի,
շարունակ լսեն, բայց չեն հասկանա,
որպեսզի չլինի թե Աստծուն դառնան,
և Աստված էլ ների իրենց»:

Ապա հարցրեց նրանց.

-Չհասկացա՞ք այս առակի իմաստը: Հապա ինչպե՞ս պիտի հասկանաք մյուս բոլոր առակները» (Մարկոս, 4, 1-13):

ՍԵՐՄՆԱՑԱՆԻ ԱՌԱԿԸ

Երբ բազմաթիվ քաղաքներից մարդիկ սկսեցին հավաքվել նրա շուրջը, և խուռն մի բազմություն հավաքվեց, Հիսուսը հետևյալ առակը պատմեց նրանց.

-Մի սերմնացան ելավ սերմ ցանելու: Սերմանելու ժամանակ սերմերից մի քանիսն ընկան ճանապարհի եզրին ու ոտնակոխ եղան, և երկնքի թռչունները եկան ու կերան դրանք: Ուրիշ սերմեր ընկան ժայռոտ տեղի վրա, և երբ բուսան, իսկույն չորացան, քանի որ հողը խոնավ չէր: Մի քանիսն ընկան փշերի մեջ, և փշերը, նրանց հետ միասին բուսեցին, խեղդեցին դրանց: Իսկ ուրիշ սերմեր էլ ընկան լավ և պարարտ հողի մեջ և բուսեցին՝ հարյուրապատիկ պտուղ տվեցին:

Այս առակը պատմելուց հետո նա ասաց.

-Ով լսելու ականջ ունի, թող լսի:

ՀԻՍՈՒՍԸ ՄԵԿՆՈՒՄ Է ՍԵՐՄՆԱՑԱՆԻ ԱՌԱԿԸ

Աշակերտները հարցրին Հիսուսին, թե ինչ է առակի իմաստը: Հիսուսը պատասխանեց.

-Դուք պետք է գիտենաք Աստծու արքայության գաղտնիքները, բայց ուրիշներին առակներով կհայտնվի, այնպես որ «նայեն, բայց չտեսնեն, լսեն, բայց չհասկանան»: Իսկ առակի իմաստը հետևյալն է. սերմը Աստծո խոսքն է: Ճանապարհի եզրին գտնվող հողը պատկերն է այն մարդկանց, ովքեր լսում են, բայց Սատանան գալիս ու նրանց սրտից հանում է Աստծո խոսքը, որպեսզի չհավատան և չփրկվեն: Ժայռոտ հողը նման է նրանց, ովքեր երբ լսում են Աստծո խոսքը, ուրախությամբ ընդունում են այն. սակայն սրանք արմատ չունեն, այսինքն՝ հավատում են մի որոշ ժամանակի համար, իսկ փորձության ժամանակ՝ հեռանում: Փշերով ծածկված հողը նման է այն մարդկանց, ովքեր լսում են Աստծու խոսքը, սակայն երկրային կյանքի հոգսերը, հարստությունը և հաճույքները, որոնցով ապրում են, խեղդում են նրանց մեջ ընկած սերմերը, և անպտուղ են դառնում: Իսկ պարարտ հողը

Նման է այն մարդկանց, ովքեր բարի և ուրախ սրտով լսում են Աստծո խոսքը, ընդունում են այն և հարատևելով՝ պտուղ են տալիս» (Ղուկաս, 8, 4-15):

Տարբերությունները, կարծում են, ակնհայտ են և որոշակի այնքան, որ յուրաքանչյուրը, միանգամայն հանգիստ, ինքն էլ կարող է մեկնաբանել, բացատրել և հիմնավորել:

Հարցազրույց

Հարցազրույցը նյութի, երևույթի, իրադարձության բացահայտումն է գիտակ զրուցակցի հետ հարց ու պատասխանի միջոցով: Սա՝ ժանրի մասին: Հարցազրույցը նաև միջոց է տեղեկանալու համար տեղի ունեցածին, նյութ հավաքելու ու ամբարելու միջոց, որը հետագայում, իր հերթին, կարող է տարբեր ժանրերով հանդես եկող լրագրողի հրապարակումների համար հունք հանդիսանալ: Այնպես որ հարցազրույց ժանրը՝ նպատակը, հարցազրույց-միջոցից՝ մեթոդից մշտապես առանձին է դիտարկվում:

Թե որպես ժանր ինքնին, թե որպես հաղորդակցության միջոց՝ հարցազրույցը կարելի է համարել հնագույնը: Նախ՝ որպես հաղորդակցության միջոց. ակնհայտ է, որ յուրաքանչյուր բանական արարած հարցեր տալու կարիք է ունենում հետևյալ երեք դեպքերում. երբ ինչ-որ բան անհրաժեշտ է իմանալ, երբ ինչ-որ բան է պետք ճշտել, և երբ անհրաժեշտ է, որպեսզի այն, ինչ ցանկանում եք՝ հնչի այս կամ այն անհատի, այլ ոչ թե ձեր շուրթերից:

Մարդկային այսօրվա տրամաբանությամբ և պատկերացումներով զոնե՝ հողաբաշխ լեզվի առաջացումից կամ կիրառումից անմիջապես հետո էլ ծագել են այս նշված անհրաժեշտությունները կամ, զոնե, դրանցից մեկը:

Որպես ժանրային նախահիմք ևս հարցազրույցն ամենահինն է, թեև որպես լրագրային ժանր սկսել է կիրառվել փոքր ինչ ավելի շուտ, քան մեկ դար առաջ:

Հարցուպատասխանի առաջին հիշատակմանը հանդիպում ենք դեռևս մարդաբնակ դրախտի ժամանակներում ու առաջինը, ում ինչ-որ հարց է հետաքրքրել՝ եղել է օձը. **«Օձն ասաց կնոջը. «Ինչու Աստված ասաց, թե դրախտում գտնվող բոլոր ծառերի պտուղներից չեք կարող քաղել»:** Կինը ասաց օձին. **«Դրախտի ծառերի պտուղներից կարող ենք ուտել: Սակայն դրախտի մեջ-**

տեղի ծառի պտղի համար Աստված ասաց. «Դրանից չուտեք և չմոտենաք, որպեսզի չմեռնեք» (Գիրք Ծննդոց, 3, 1-3):

Հարցազրույցը՝ որպես ժանր, ունի իր տարատեսակները. հարցազրույց-մենախոսություն (երբ լրագրողը կամ հարցազրույց վարողը զրուցում է իր հերոսի հետ, նրանք միասին հստակեցնում են ինչպես հանրությանը հետաքրքրող հարցերը, այնպես էլ դրանց անդրադառնալու հերթականությունն ու ձևը, ապա պատասխանները ներկայացվում են մեկ ամբողջական տեքստի՝ մենախոսության տեսքով), հարցազրույց-«բազմախոսություն» (երբ առկա են մեկից ավելի զրուցակիցներ և զրույցն ընթանում է ընդլայնված շրջանակով և յուրաքանչյուրի ասելիքն էլ կարևոր ու անհրաժեշտ է փոխանցել հանրությանը): Այստեղ արդեն լրագրողի վարպետության խնդիրն է՝ ինչպիսի կոմպոզիցիոն մոտեցմամբ նա կմատուցի նյութը՝ հարց ու պատասխանը (հստակ հնչող հետաքրքիր ինչ-որ հարց և նույն հստակությամբ հնչող պատասխան): Թե «հարցազրույց-բազմախոսության», թե երկխոսության դասական օրինակներ կարելի է համարել (բերվող օրինակների հետ մեկտեղ) նաև Պլատոնի (428-347 Ք.Ծ.Ա.) երկխոսությունները՝ «Պետությունը», «Օրենքներ», «Քաղաքագետը» և այլն: Անշուշտ՝ սովորական հարցազրույցը երրորդ հիմնական տեսակն է: Խոսքն այն տարատեսակի մասին է, որի ընթացքում հերոսից իմացվում և բացահայտվում են ինչպես զրուցակցի, այնպես էլ հանրության համար հետաքրքրություն և արժեք ներկայացնող տեղեկություններ, այլապես դրանք չէին հրապարակվի:

Մենախոսության օրինակը՝ Հրանտ Մաթևոսյանի «Ծառեր»-ի մի հատվածով.

«Լավը չես, խեղճ ես, լավը չես, զավակս, որդիս, առաջնեկս, իմ հույսս, իմ թանկս, լավը չես, մեջդ վրեժ չկա: Քո պապ ու իմ հեր Իշխանը արնագույն մի պուճուր ծի ունեք, էնքան պուճուր, որ բանակ չէին տարել-ասում է, չարությունից պայթում էր՝ որ մի ծի իրենից առաջ էր ընկնում: Հևում էր, թոքերը շխկշխկում էին, քթերից կրակ էր թռչում - իր պուճուր տեղով տրաքում էր չարությունից: Քո պապի պահած շունն էլ պիտի էդպես լինեք, նրա զավակն էլ ու չափարի բանջարն էլ ու պապի օձն էլ պիտի էդպես լինեին: Դու լավը չես: Ինչ իմացողի հարցնում եմ՝ գովում ու ծիծաղում է- իբր թե լավն ես, խղճով ես, և էդ ծիծաղն իմ սրտին դա-

նակ է դառնում, զավակս, զավակս: Իմ հեր ու քո պապ Իշխանը խելոք բաներ ոչ ասում էր, ոչ էլ մտածելու ժամանակ ուներ, նա գործի մարդ էր, գետինը նրա ոտի տակ վառվում էր... բայց մի անգամ կիսաբերան ասել է ուսի վրայով իմ մերացվին հացի փող չպրտելու պես, ու ես ասում եմ. մարդ չպիտի էնքան քաղցր լինի՝ որ կուլ տան, չպիտի էնքան դառը լինի՝ որ թքեն: Քեզ կուլ են տվել ու զովում են, զավակս, քեզ կուլ են տալիս: Ասում են խիղճ, բայց խիղճը գիտե՞ս երբ է գեղեցիկ - երբ գազանի մեջ է: Քոնը խիղճ չի, խեղճություն է: Ամբողջ Վանքերը Իշխանից Աստօժ չափ շնորհակալ էր գիտե՞ս ինչի համար-բոլորին կարող էր վնաս տալ: Կարող էր: Նրա վտանգը ծովիանի, ծովիանի նման խաղում ու ցուլում էր Վանքերից Բորչալու ու Բորչալվից Ղազախ բուրդի վրա և ամեն թուփի կայծակ կղառնար ու կտրաքեր ուզածո՞ր խեղճուկրակի գլխին: Բուրդի համար նրա լավությունն էն էր՝ որ չէր տրաքում, թե չէ ուրիշ լավություն ոչ ոքի համար նա չի արել: Լավություն բուրդին քո պապ ու իմ պատրոն Ավետիքն է արել: Ուրիշի համար՝ մեղու, պատվաստ, կացնի կոթ, ուրիշի համար՝ սել, ամուսնացած եղբոր փոխարեն՝ բանակ, եղբոր բանտարկված տղայի համար՝ կառավարչի մոտ կոռի- նա Աստօժ լավությունն էր էս ամբողջ գյուղին, և գիտե՞ս ինչ էր ասել նրա Գիքոր ասպետը. «էդ ոնց է Սարգսի համար կոռի գնաց, ինձ համար ձեռուտոն էդպես կապվել է՝ մի սել չի սարքում» (մի կաղնի կտրելու իրավունքի դիմաց անտառապահը Գիքորից մի եզնասել է ուզած եղել): Քո պապ ու իմ պատրոն Ավետիքի ճիշտ պատասխանը դա է, դու մի կարծիր, թե նրա վարքն ուրիշ պատասխան ունի: Շնորհակալություն ո՞վ էր ասում նրա ծիուն- ոչ մեկը: Բեռն իջեցնում ու քամակին ձեռաց ծիպտում էին - բեռը՝ իրենց, քրտնահոտը՝ տիրոջը-գնա: Խիղճ, խղճի վրա խիղճ- դա խի՞ղճ է, թե փալասե տիկնիկ, զավակս, զավակս, իմ հոգսս, իմ տանջանքս, իմ անհանգստությունս, իմ տառապանքս, իմ բեռս: Աղջիկ եք տեսնում՝ կանգնում նայում եք ու աչքներդ լցվում է, տղա եք տեսնում՝ բերաններդ բաց նայում եք, հիվանդ գառան համար լաց եք լինում, սիրուն հորթի համար լաց եք լինում-ձեր փորում տղամարդու սի՞րտ է, թե՞ սազը ձեռին աշուղ: Քո պապ Ավետիքի քնած, դանդաղ, բարի, էն էլ ես ինչ իմանամ բարի՝ թե վախկոտ չեղած մի պուտ արյունը էդ ոնց կարողացավ կտրել մերանի պես քո մեջ Իշխանի տված էն կատաղի վարար արյունը, անդադար, խաբեբա, շողմքոր, համարձակ, անքուն, վրիժառու, զրնգուն-զվարթ-

ավագակ առնաուտի արյունը քո մեջ էր ոնց կտրվեց Ավետիքի քնած մի պուտ արյունից: Թե՞ էդքան դուրեկան է ծնկներն օջախին դեմ անել, ժպտալով ննջել ու հուսալ ու հավատալ, թե աշխարհը բարի է: Է՞ծր թուփ-գելը է՞ծ: Է՞ծն ես թե թուփը, գե՞լն ես թե է՞ծը, ո՞րն ես: Կամ-կամ: Չէ մի. դուք սպասեք ձեր դրախտին՝ որ վանքի զանգերն իրիկվա մեջ զոնգան, իրիկվա մեջ վանքի աղբյուրը երգի, հոգնած իրիկվա միջով ձեզ բարձած բերեն, վերցնեն ձեր բեռը Քրիստոսի իրիկվա մեջ և ուռչի շնորհակալությունը բկների մեջ, խեղդի- «շնորհակալ եմ, ձի, Բորչավլից, է, մի ձմեռվա հաց բերիր ու երեխեքիս համար, պարտական եմք, ձի»:

Մարդ ու անասուն իրարից ջոկվում են հիշողությամբ: Հիշողությունը դրած է անասունի ու մարդու արանքում: Հիշողության մեջ ես՝ ուրեմն վառվում ես, մարդ ես, հաշիվներ ունես, անհանգիստ ես-հիշողության մեջ չես՝ հրեն բաց դաշտում կովն արածում է առանց հիշողությունների, իսկ հորթին երեկ են մորթել: Էն ծառը թե հիշողություն ունի՝ քոնոնք էլ ունեն: Քոնոնց կտրում են, մորթում են, զրկում են, ծաղրում են- քոնոնք իրենց հիշողությունից փախչում են, և նորից կզրկվեն ու նորից կզրկվեն ու նորից, ու նորից հիշողություն չեն ունենա, որովհետև վախենում են ծաղրին բռունցքով ու զրկվելուն կտրելով պատասխանել... Ասում եք սեր, ասում եք սիրում ենք: Սիրում եք, քանի որ կծելու, կոտրելու, զրկելու, ատելու տղամարդկություն չունեք, -դուք վախենում եք ատելուց: Դուք ձեր սերը թաշկինակ եք անում, կապում աչքներիդ, որովհետև վախենում եք բաց աչքով նայել ու ատել - հանկարծ կտեսնեն, որ ատում եք ու կտան կսպանեն: Մի վախեցեք, մեռնելը դժվար է, ուզենաք էլ՝ չեք մեռնի, մի անգամ ձեր գլխի հետ թող իրենց բռունցքն էլ ցավի-տեսնեն մյուս անգամ կխփե՞ն. տղամարդու պես մի անգամ կանգնեք՝ թող ձեզ զոռով ծալեն, դուք մի կոտրվեք՝ թող ձեզ զոռով կոտրեն-մյուս անգամ տեսնեն կկոտրե՞ն, կծալե՞ն, կմոտենա՞ն: Պե՞ծն աչքը կոխեիր՝ իմ հերը աչքը չէր ճախ: Իմ հերը կմայեր: Իմ հերը կմայեր, կտեսներ ու կպահեր աչքերի ետևում: Իմ հերը չէր մոռանում, իմ հերը մեծ պաշարի տեր էր: Ոսկու պես, ոսկու պես, իր պահած ոսկու պես մեկ աչքառ էր ելնում իմ հոր հիշողությունը, մեկ թաքցվում, բայց երբեք չէր կորչում, երբեք, մի բուռ մարմնի մի ծալքում պահված էր, տեղն եկավ՝ սրբած թրի նման դուրս էր քաշում իմ հերը իր հին հաշիվները: Ահա իմ հերը: Էն քոնոնք, ահա իմ հերը- ո՞րն ես...»:

Այս ժանրին է վերագրվում նաև երկխոսությունը, որը, սակայն, որքան էլ արտաքինապես նման է արդեն իսկ հիշատակված տարատեսակներին, այնուամենայնիվ, բովանդակային և խորքային առումով էապես տարբերվում է հարցազրույցից:

Եթե հարցազրույցի դեպքում զրույցի մասնակիցներից մեկը (տվյալ դեպքում՝ լրագրողը) հստակ գիտի, թե ինչ չգիտի (այլապես կարող էր հանդես գալ մեկ այլ ժանրով՝ թղթակցություն, հոդված և այլն ու բավարարեր խնդրի հետ կապված հանրային հետաքրքրությունը), ինչ է ուզում իմանալ և ումից, և ըստ դրա էլ շարադրում է իր հարցերն ու ակնկալում դրանց համարժեք պատասխանները, ընթացքում էլ ճշգրտում, ավելի ամբողջական և կառուցիկ դարձնելով մտքերի ընթացքը, դրանով իսկ նաև հրապարակունը, ապա զրույցի կամ երկխոսության երկու մասնակիցներն էլ պարտավոր են լավագույնս տիրապետել նյութին. պարզապես ընտրված ձևը (երկխոսությունը) առավելագույն հնարավորությունն է տալիս բացահայտելու խնդրի խորքը, այն ավելի մատչելի ներկայացնելու ընթերցողին, քան, ենթադրենք, դա հնարավոր է անել անզամ գիտահանրամատչելի հոդվածի դեպքում:

Այստեղ զրուցակիցները, խնդրին կամ երևույթին տիրապետելու առումով, պետք է միմյանց գրեթե հավասար լինեն, այլապես երկխոսությունը, որպես այդպիսին՝ չի կայանա, պարզապես չի ստացվի: Այն, լավագույն դեպքում, կվերածվի սովորական հարցազրույցի:

Հարցազրույցի ժանրն էլ (ինչպես արդեն, կարծում եմ, համոզվեցինք) հին և խոր արմատներ ունի: Այսպես օրինակ, կարծում ենք դասական են Կոնֆուցիուսի զրույցները (Ք.Ծ.Ա. 551-479 թվականներ), որոնք թեկուզև հատվածական, կիսմնավոր են նախորդ տեսական դրույթները:

Հարցազրույց-«բազմախոսություն».

«Աշակերտներ Ձգի Լուսն, Ձգե Սին, Ռան Քիուն և Գուն-սի Հունան Ուսուցչի հետ նստած էին բոլորածև: Եվ նա ասաց.

-Մոռացեք մի պահ, որ ես տարիքով ավելի մեծ եմ, քան դուք: Խոսեք միայն դուք, իսկ ինձ մոռացեք: Ընդունենք, որ դուք դառնալու եք ճանաչված և հասարակական որևէ պաշտոն եք ստանալու, և այդ դեպքում ի՞նչ եք անելու:

Ձգի Լուսն պատասխանեց առանց վարանելու.

-Ենթադրենք, թե մի փոքրիկ պետություն, որն ունի ընդամենը հազար մարտակառք, շրջապատված է մի ավելի մեծ պետության կողմից: Դրսից նրան սպառնում են թշնամական բանակները: Ներսում իշխում է քաղցը: Եթե ես կառավարելու լինեմ այս պետությունը, ապա անհրաժեշտ է երեք տարի, որպեսզի մարդիկ նորից ուժ ձեռք բերեն և կարողանան հասկանալ, թե ի՞նչ է պետք իրենց անելու համար:

Կոնֆուցիուսը ժպտաց: Ապա նա դիմեց Ռան Քիուիին.

-Իսկ դու ի՞նչ կանեիր:

Ռան Քիուին պատասխանեց.

-Եթե ես նահանգ կառավարեի, որի սահմանները չորս կողմերում վաթսուհի կամ յոթանասուհի, նույնիսկ մի հիսուհի լի երկարություն ունենային, ապա երեք տարվա ընթացքում նրա մարդիկ կապրեին առատության մեջ: Ինչ վերաբերում է առհասարակ ծիսական և վարվեցողության օրենքների նկատմամբ հոգատարությանը, ինչպես նաև երաժշտությանը, ապա նրանք ստիպված կլինեին սպասել այնքան, մինչև մեկը գար, որ լիներ առավել ընդունակ, քան ես եմ այդ գործերում:

Ապա Կոնֆուցիուսը դիմեց Գուև-սի Յուային.

-Իսկ ի՞նչ կանեիր դու:

Գուև-սի Յուան պատասխանեց.

-Ես կուզենայի լավ հագնված կանգնել նախնիների տաճարում կամ մասնակից դառնալ դիվանագիտական հանդիպումներին: Ես չեմ ասում, թե դրա համար ես արդեն պատրաստ եմ: Բայց կուզենայի սովորել:

Վերջապես ուսուցիչը հարցրեց նաև Ցզեն Սիին: Սա վերջացրեց վին նվազելը, ապա այն մի կողմ դնելով վեր կացավ և ասաց.

-Իմ ցանկությունները մյուս երեքի ցանկություններից մի քիչ տարբերվում են:

-Ի՞նչ կա որ,- նկատեց Կոնֆուցիուսը,- յուրաքանչյուրը ազատ ասում է այն, ինչ ցանկանում է:

Ցզեն Սին շարունակեց.

-Ուշ գարնանը, երբ մարդիկ շոջում են թեթև հագուստով, ես մեծ սիրով մյուսների հետ կլողայի գետում, ինձ կտայի զով քամուն և հետո երգելով՝ կվերադառնայի տուն:

Հառաչելով՝ Կոնֆուցիուսն ասաց.

-Ես էլ այդպես կանեի, Ցզեն Սի...»:

«Սովորական» հարցազրույց.

«Ցզի Չանը հարց տվեց Կունֆուցիուսին.

-Ո՞րն է բարեհաջող կառավարման գաղտնիքը:

Կունֆուցիուսը պատասխանեց.

-Ուշադիր լինել հինգ առաքինությունների նկատմամբ և ընդ-
հակառակը՝ չորս արատները վերացնել:

Այդ դեպքում միայն կարելի է բարեհաջող կառավարել:

Ցզի-չանը հարցրեց.

-Որո՞նք են հինգ առաքինությունները:

-Կառավարել հանուն ժողովրդի բարօրության, բայց չլինել
վատնող:

Պահանջել ժողովրդից, բայց նրան չհասցնել դժգոհության:

Ցանկություններ ունենալ, բայց չափը չանցնել:

Պատիվ և պաշտոն ունենալ, բայց մեծամտության մեջ չընկ-
նել:

Հարգանք պահանջել, բայց չլինել դաժան:

Ցզի Չանը նորից հարցրեց.

-Ի՞նչ է նշանակում՝ կառավարել հանուն ժողովրդի, բայց չլի-
նել վատնող:

Կունֆուցիուսը պատասխանեց.

-Խրախուսել այն, ինչ բարիք է բերում ժողովրդին: Մի՞թե դա
չի նշանակում կառավարել հանուն ժողովրդի և չլինել վատնող:

Եթե ժողովրդից պահանջվի այն, ինչ նա կարող է անել, էլ ին-
չո՞ւ պիտի նա որևէ մեկից դժգոհի:

Ով բարիք է կամենում և հասնում է դրան, ինչպե՞ս կարող է իր
ցանկությունների մեջ անհամեստ լինել:

Ով ոչ մեկին անքաղաքավարի և արհամարհական չի վերա-
բերվում, քանի որ նրա համար գոյություն չունեն մեծ և փոքր
մարդիկ, մի՞թե դրանով նա ձեռք չի բերում պատիվ և աստիճան,
և մի՞թե դա չի նշանակում պատիվ ու աստիճան ունենալ, բայց
մեծամտության մեջ չընկնել:

Ով իրեն պահում է համեստ և արժանապատիվ և դրա համար
ժողովուրդը նրան նայում է հարգանքով, մի՞թե դա չի նշանա-
կում՝ պահանջել հարգանք, բայց չլինել դաժան:

Դրանից հետո Ցզի Չանը ցանկացավ իմանալ, թե որոնք են
չորս արատները:

-Խելք չսովորեցնել, բայց սպանել՝ դաժանություն է:

ժողովրդից պահանջել որևէ բան, սակայն նրան չնախապատրաստել դրա համար՝ նշանակում է նեղության մատնել նրան:

Անփույթ լինել հրամանների մեջ, անճիշտ հրամաններ տալ, բայց պահանջել դրանց անվերապահ կատարում՝ նշանակում է վիրավորել մարդկանց:

Մեկին դրամ պարտք տալ, բայց վերջին պահին ժլատություն անել՝ մանրախնդրություն է»:

Այս երկխոսություն-զրույցն ակնհայտորեն ցույց է տալիս, որ զրուցակիցները լիովին և գրեթե հավասարապես տիրապետում են նյութին՝ գիտեն թե սկիզբը, թե ընթացքը, թե ավարտը, թե նպատակն ու ձևը, և հենց այդ պատճառով էլ մեկը մյուսին առաջնություն է տալիս՝ ավելի ծանրակշիռ դարձնելու համար ասվածը.

«Տզի Գունը հարցրեց, թե ո՞րն է լավ կառավարությունը:

Կունֆուցիուսը պատասխանեց.

-Դա այն կառավարությունն է, որը երաշխավորում է առատ սնունդ. ապահովում երկրի անվտանգությունը թշնամիներից և հող է տանում այն մասին, որ ժողովուրդը հավատա իրեն:

Տզի Գունը կրկին հարց տվեց.

-Եթե անհրաժեշտ լինի այդ երեքից միայն երկուսը թողնել, ապա ո՞ր մեկից կարելի է հրաժարվել:

-Բանակից, -ասաց Ուսուցիչը:

Տզի Գունը հարցրեց.

-Եթե հարկ լինի մնացած երկուսից մեկը թողնել, ապա որի՞ց կարելի է հրաժարվել:

Կունֆուցիուսը պատասխանեց.

-Սննդի մասին հոգալուց: Առանց սննդի մարդիկ կմեռնեն, բայց մահը, ի վերջո, բոլորի ճակատագիրն է: Իսկ եթե ժողովուրդը չհավատա իր կառավարությանը, այն ժամանակ կմեռնի պետությունը»:

Զրույցը կարող է ներկայացվել ոչ միայն հարց ու պատասխանի տեսքով, այլ՝ շարադրանքով, որտեղ լրագրողն արդեն հիմնականում օգտագործելու է զրուցակցի ոչ թե ուղղակի, այլ՝ անուղղակի խոսքը: Դա, կարծես, յուրատեսակ հաշվետվություն է զրույցի մասին:

Ասվածի օրինակներից մեկը լրագրող, գրականագետ, արվեստաբան Պոլ Գզելի գրույցներն են Օգյուստ Ռոդենի հետ, որոնցից մի փոքր հատված.

«Մի երեկո գնացել էի Ռոդենի արվեստանոցը, մութը շատ շուտ ընկավ, բայց շարունակում էինք զրուցել:

-Լապտերի լույսի տակ երբևիցե դիտե՞լ եք անտիկ շրջանի որևէ արձան,-հանկարծակի հարցրեց նա:

-Ինչ մեղքս թաքցնեմ, ոչ,-պատասխանեցի մի փոքր շվարած:

-Ձարմանում եք ու կարծես մտածում. ինչ տարօրինակ միտք՝ ցերեկվա լույսից բացի արձանը այլ լույսով դիտել:

Ծիշտ է, բնական լույսն ավելի մեծ հնարավորություն է տալիս ամբողջության մեջ հիանալու գեղեցիկ ստեղծագործությամբ... Սակայն մի քիչ սպասեք... Հիմա ներկա կգտնվեք մի փորձի, որն, անկասկած, կլուսաբանի ասածս...

Խոսելու ընթացքում լապտերն էր վառել:

Վերցրեց այն և ինձ տարավ մարմարյա մի իրանի մոտ, որն ամրացված էր արվեստանոցի անկյուններից մեկում գտնվող պատվանդանին:

Մեղիչյան Վեներայի անտիկ հրաշալի արձանի փոքրիկ ընդօրինակությունն էր: Ռոդենը այն թողել էր այդտեղ՝ աշխատելու ընթացքում սեփական ներշնչանքը խթանելու համար:

-Մոտեցեք,-ասաց ինձ:

Թրթռացող լույսով լուսավորեց արձանի որովայնը, հնարավորին չափ շատ մոտ պահելով լապտերը իրանին:

-Ի՞նչ եք նկատում,-հարցրեց:

Առաջին հայացքից հայտնաբերածս ցնցեց ինձ: Այս դիրքից ուղղված լույսը մարմարի մակերեսին պարզում էր անթիվ թեթևակի ուռուցիկություններ և գոգավորումներ, որոնց մասին երբեք չէի մտածել:

Ստածածիս մասին հայտնեցի Ռոդենին:

-Իրավացի եք,-հավաստեց նա:

Որից հետո՝

-Լավ նայեք:

Միաժամանակ դանդաղ պտտեցրեց շարժական հարթակը, որի վրա Վեներան էր:

Շարժելու ժամանակ նկատում էի ամբողջ որովայնի վրա գոյացած բազմաթիվ աննկատելի ցցվածքներ: Նախապես պարզ

թվացող այդ պատկերը իրականում աննկարագրելի բարդություն էր ներկայացնում:

Վարպետ քանդակագործին հայտնեցի, թե ինչ եմ նկատել:

Ժպտալով տարուբերում էր գլուխը:

-Յրաշալի է, չէ՞,-կրկնում էր նա,-խոստովանեք, որ անակնկալի եկաք այսքան մանրամասնություններ հայտնաբերելով... Տեսե՞ք անվերջանալի ալիքավորումներով այս փոսը, որը միացնում է որովայնը ազդրերին... Ըմբռնչվե՞նք կոնքի հեշտալի ներկորացումները... Իսկ հիմա այստեղ... կողերի այս բոլոր հրաշալի փոսիկները:

Խոսում էր ցածրաձայն, մեծ ջերմեռանդությամբ: Այնպես էր հակվում այդ մարմարի վրա, կարծես սիրահարված լիներ նրան:

-Իսկական միս ու արյուն,-ասում էր նա:

ճառագայթող հայացքով ավելացրեց.

-Կարծես համբույրից ու շոյանքից է հունցված:

Հետո, հանկարծ՝ ձեռքի ափը դնելով արձանի կոնքին.

-Թվում է՝ այս մարմինը շոյելիս ջերմություն ես զգում»:

Հարցազրույցի տեսակներից է նաև գրավոր հարցերին գրավոր պատասխանները: Ամենանշանավոր մարդկանցից մեկին առաջադրված հարցաթերթիկը՝ որպես օրինակ (հասվածաբար).

ԻՄ ՊԱՂՏՆԻՔՆԵՐԸ

ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ.

ԾՆՆՂԱՎԱՅՐԸ.

ՊԱՂՏՆԻՔՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ

ՏԵՂՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ.

Պոլ Սեզան

Էքս-ան-Պրովանս

Սեն-Լուի փ. 30, 3-րդ հարկ

(Ենթադրաբար՝ 1866-1869 թթ.)

Հ.Ո՞րն է Ձեր նախասիրած գույնը:

Պ. Ընդհանուր ներդաշնակությունը:

Հ.Ո՞ր բույրն եք շատ սիրում:

Պ. Դաշտերինը:

Հ.Ո՞ր ծաղիկն եք համարում ամենագեղեցիկը:

Պ. Այրեծաղիկը:

Հ.Ո՞րն է, ըստ Ձեզ, ամենագնահատելի առաքինությունը:

- Պ. Բարեկամությունը:**
 Հ.Ո՞րն է Ձեր նախընտրած զբաղմունքը:
Պ. Նկարելը:
 Հ.Հանգստի ո՞ր ձևն է Ձեզ համար ամենահաճելին:
Պ. Լողը:
 Հ.Ո՞րն է, ըստ Ձեզ, երկրային երջանկության իդեալը:
Պ. Լավ բանաձև ունենալը:
 Հ.Ո՞ր վիճակն է ամենից ավելի կարեկցանքի արժանի:
Պ. Ջրկանքի մատնված լինելը:
 Հ.Ի՞նչ ազգանուն կվերցնեիք, եթե ընտրելու հնարավորու-
 թյուն ունենայիք:
Պ. Իմը:
 Հ.Ո՞րն է Ձեր գլխավոր հույսը:
Պ. Համոզվածությունը:
 Հ.Հավատու՞մ եք բարեկամությանը:
Պ. Այո:
 Հ.Ո՞րն է Ձեզ համար օրվա ամենահաճելի պահը:
Պ. Առավոտը:
 Հ.Պատմական ո՞ր անձնավորությանն եք ամենից շատ հա-
 մակրում:
Պ. Նապոլեոնին:
 Հ.Իսկ վիպակա՞ն կամ թատերակա՞ն:
Պ. Ֆրենիոֆերին:
 Հ.Առավելապես որտե՞ղ կգերադասեիք ապրել:
Պ. Պրովանսում և Փարիզում:
 Հ.Ո՞ր գրողին եք նախընտրում:
Պ. Ռասինին:
 Հ.Ո՞ր նկարչին:
Պ. Ռուբենսին:
 Հ.Ո՞ր երաժշտին:
Պ. Վեբերին:
 Հ.Ո՞րն է, ըստ Ձեզ, բնության գլուխգործոցը:
Պ. Նրա անհուն բազմազանությունը:
 Հ. Ո՞ր տեղի հետ են կապված Ձեր ամենահաճելի հիշողու-
 թյունները:
Պ. Սեն Մարկի բլուրների:
 Հ.Ո՞րն է Ձեր նախապատվելի կերակուրը:
Պ. Ձեթով կարտոֆիլը:

Յ. Կո՞չտ, թե՞ փափուկ անկողին եք սիրում:

Պ. *Միջինը:*

Յ. Ո՞ր օտար ազգին եք ամենից շատ համակրում:

Պ. *Ոչ մեկին:*

Ձեռագրով գրեք Ձեր մտքերից մեկը կամ որևէ այլ միտք, որի իմաստը հարազատ է Ձեզ:

Տեր, դու ինձ դարձրիր մենակ ու հզոր,

Թույլ տուր, որ քնեն միմյուր երկրավոր:

(Դը Վինյի)

Երբ լրագրողն ավելի է կարևորում իր զրուցակցի անձը, համարելով, որ նրա շուրթերից անմիջականորեն հնչած մտքերն են, որ ավելի էական ու ծանրակշիռ ազդեցություն կարող են գործել՝ նա ընտրում է ուղղակի հարցազրույցի տարատեսակներից որևէ մեկը. այն դեպքում, երբ առավել կարևորում է իր անձը՝ ընտրում է զրույցի «հաշվետվության» ձևը, որը նրան ավելի շատ է ինքնարտահայտվելու հնարավորություն տալիս, իսկ այն դեպքում, երբ առավել կարևորվում է բուն նյութը՝ ճիշտ է ընտրել երկխոսությունը կամ էլ հարցազրույցի մենախոսական տարբերակը:

Թղթակցություն

Թղթակցությունը ոչ միայն ու ոչ այնքան ընդլայնված լուրն է: Լուրն այս դեպքում առիթ է դառնում ոչ միայն ընդարձակ և ամբողջական շարադրման, այլև համեմատությունների, հակադրությունների և համադրությունների համար: Թղթակցության մեջ որոշակիորեն առկա է նաև վերլուծական տարրը, որը ավելի է ընդհանրացնում և ամբողջացնում այն երևույթը, իրադարձությունը կամ փաստը, որին նվիրված է թղթակցությունը: Այն նաև ամենատարածված ժանրն է ժուռնալիստիկայում: Թղթակցությունը հնարավորություն է տալիս նաև վերարժևորել, վերագնահատել այն թեման կամ խնդիրը, որը քննարկում է:

«Մենք, որ կանք...երջանիկ ենք շատերից»

«Եթե ողջ մարդկության թիվը կրճատենք հարյուր բնակիչ ու-

նեցող մի գյուղի չափով՝ հաշվի առնելով բոլոր համաձայնությունները, ահա թե ինչպիսին կլինի այդ գյուղի բնակչությունը.

57-ը ասիացիներ կլինեն, 21-ը-եվրոպացի, 14-ը՝ ամերիկացի (հյուսիսային և հարավային), 8-ը՝ աֆրիկացի: 52-ը կլինեն կանայք, 48-ը՝ տղամարդիկ, 70-ը՝ ոչ սպիտակամորթ, 30-ը՝ սպիտակամորթ, 89-ը՝ հետերասնեռամուկներ, 11-ը՝ արվամուկներ:

6 հոգի կտիրեն համաշխարհային ողջ հարստության 59 տոկոսին և բոլորն էլ կլինեն ԱՄՆ-ից: 80-ը չեն ունենա բավարար բնակարանային պայմաններ: 70-ը կլինեն անգրագետ: 1 հոգի կմեռնի: 2-ը կծնվեն: 1-ը (միայն մեկը) կունենա համակարգիչ: 1-ը (միայն մեկը) կունենա բարձրագույն կրթություն:

Եթե աշխարհին մայնք այս տեսանկյունից, ապա պարզ կդառնա, որ համերաշխության, ըմբռնումի, համբերատարության ու կրթության պահանջարկը չափազանց մեծ է: Յիշիր այդ մասին:

Եթե այսօր առավոտյան դու արթնացել ես առողջ, դու երջանիկ ես այն մեկ միլիոն մարդուց, ովքեր չեն ապրի մինչև հաջորդ շաբաթ:

Եթե դու երբեք չես տեսել պատերազմ, չես զգացել քաղց, բանտարկության միայնությունը կամ խոշտանգումների դաժանությունը՝ դու ավելի երջանիկ ես, քան այս աշխարհի 500 միլիոն մարդիկ:

Եթե դու կարող ես եկեղեցի մտնել առանց վախի և բանտարկության կամ մահվան սպառնալիքի՝ դու ավելի երջանիկ ես, քան այս աշխարհի 3 միլիարդ մարդիկ:

Եթե քո ստոնարանում կա ուտելիք, դու ունես հագուստ, անկողին ու տանիք, ապա դու ավելի հարուստ ես, քան այդ աշխարհի մարդկանց 75 տոկոսը:

Եթե դու բանկում հաշիվ ունես, փող՝ քսակում և մի քիչ մանրադրամ՝ զանճատուփում, դու ապահովված մարդ ես, իսկ այդպիսիք այս աշխարհում 8 տոկոս են կազմում:

Եթե դու կարդում ես այս տեքստը, դու օրհնված ես կրկնակի, որովհետև ինչ-որ մեկը մտածել է քո մասին, և դու չես պատկանում այն 2 միլիարդ մարդկանց թվին, ովքեր կարդալ չգիտեն:

Ինչ-որ մեկն ինչ-որ ժամանակ ասել է.

- աշխատիր այնպես, ասես քեզ փող պետք է
- սիրիր, ասես ոչ մեկը երբեք քեզ ցավ չի պատճառել

- պարիր, ասես քեզ ոչ ոք չի տեսնում
- երգիր, ասես ոչ ոք չի լսում
- ապրիր այնպես, ասես դրախտում ես»:

Լարիսա Սավինա

Թղթակցության առավել դասական մի օրինակ, որը պատկանում է Ժյուլ Զյուլեիին և տպագրվել է «Լ'էո դը Պարի» թերթում, 1891 թ. նոյեմբերի 23-ին.

«ՊՈՒ ԳՈԳԵՆԸ ԻՐ ՆԿԱՐՆԵՐԻ ԱՌՋԵՎ

Մեր ականավոր գործընկեր Օկտավ Սիրբոյի վերջերս տպագրած հոդվածը Պոլ Գոգենի մասին սուր հետաքրքրություն առաջացրեց իմ մեջ Գոգեն-մարդու և նրա գործի նկատմամբ: Մոտ մեկ ամիս առաջ սիմվոլիստների խնջույքի ժամանակ ցույց տվեցին նրան, և ես շատ հստակ մտապահեցի երկար, զանգուր մազերով շրջանակված գեղեցիկ, բրոնզագույն դեմքը. խանդավառված ներհուն աչքեր՝ մաքուր, մեղմ ու տաք լույսով, երազի մեջ սուզված ծովայինի աչքեր:

...Այսպես, երեկ բախտը ժպտաց, ես հանդիպեցի Պոլ Գոգենին՝ իր նկարների առջև, որոնք ցուցադրված են Օթել Դրուոյում, երկուշաբթի օրվա վաճառքի համար:

...Մեր ընդհանուր բարեկամներից մեկն ինձ ներկայացրեց նրան: Մենք կանգնած էինք նրա վերջին ոճով արված մի նկարի առջև. այն նկարներից մեկի, որին անվերջ, ուշադիր անձկությամբ վերադառնում էի՝ բացատրություն գտնելու հույսով: Դա մի անձնավորություն էր՝ կարմիր գլխանոցով, կարմիր մորուքով, վիատ դիրքով ծառի տակ նստած: Նրա ետևում, կապույտ երկնքի ներքո, ծառեր էին: Ետևի ծորակում՝ մարդկային երկու փախչող աղոտ կերպարանք: Ասացին, թե դա Քրիստոսն է Չիթենյաց լեռան վրա: Իսկապես, դեմքը զարհուրելի տառապանք էր արտահայտում, բայց և այդ դեմքը, իբրև Քրիստոսի դեմք, անթույլատրելի կերպով տոգեղ թվաց ինձ, իսկ մորուքը՝ շատ կարմիր. և ինչի՞ համար էին այդ կանաչները, կարմիրները, հոււմ կապույտները, ինչի՞ համար էին այդ արտառոց ծառերը: Եվ ի՞նչ էին նշանակում այդ փախչող մարդիկ: Բացի այդ. որտեղի՞ց էր տազնապի այդ ճնշող զգացողությունը, որ անցնում էր ողնաշարիս միջով:

Գոգենն ինձ պատասխանեց պարզ, համեստ և շոյող տոնով, որ այնքան ներդաշնակ էր նրա աչքերի երազկոտ արտահայտությանը, դեմքի ավետարանական, անասելի մեղմությամբ:

-Դա իմ դիմանկարն է... Բայց դա ներկայացնում է մահ մի գաղափարի խորտակումը, ցավ, որ նույնքան աստվածային է, որքան՝ մարդկային: Հիսուսը՝ մերժված բոլորից և իրեն լքող հետևորդները. պատկեր՝ նրա հոգու նման տխուր...

...-Դուք մեկնում եք Թաիթի,-հարցրի պարոն Գոգենին,-նկարելու՞ համար:

-Մեկնում եմ, որպեսզի հանգիստ լինեմ, որպեսզի ազատվեմ քաղաքակրթության ազդեցությունից: Ուզում եմ ստեղծել պարզ, շատ պարզ արվեստ. դրա համար կարիք ունեմ սուզվելու կուսական բնության մեջ. տեսնել միայն վայրենիներ, ապրել նրանց կյանքով, երեսայի նման ունենալ միայն մի հոգս՝ իրագործել մտահղացումներս բացառապես պրիմիտիվ արվեստների միջոցով, որոնք միակ լավ, ճշմարիտ արվեստներն են»:

Խոհ

Դասական լրագրագիտությունը չի հիշատակում նման ժանր: Սակայն, ինչպես արդեն իսկ նշել ենք, լրագրության թե տեսությունը, թե պատմությունը հիմնվում է գործնականի վրա, այնպես որ առանձնացնելով ԽՈՅԸ որպես ժանր, անհրաժեշտ ենք համարում նշել, որ այն իր արտահայտությունն է գտել տեղեկությունների զանգվածային տարածման բոլոր միջոցներում՝ ինչպես տպագիր, այնպես էլ թվային: Խոհի առանձնահատկություններն են. այն նվիրված է մեկ թեմայի կամ խնդրի, որպես նյութ կառուցիկ է՝ անկախ իր ծավալից, լեզվառճական առումով՝ առավել անմիջականություն և անկեղծություն է ենթադրում և այնպիսի տպավորություն է ստեղծվում, թե այն ոչ միայն մեկ միտք է, այլև մեկ ամբողջական և ընդհանրական նախադասություն է ներկայացնում իրենից:

Որպես այդպիսին կարող է դիտարկվել, օրինակ, Հիսուս Քրիստոսի «Լեռան քարոզը», որն, իր ամբողջության մեջ՝ նկատի ունենք նախաբանն ու վերջաբանը ներառյալ, անշուշտ, ռեպորտաժ է (Ավետարան ըստ Մատթեոսի, 5-7). սակայն հենց նույն այդ քարոզի մեջ էլ կան խոհի առավել ինքնուրույն և ամբողջական հատվածներ: Մի քանիսը՝ ստորև.

ԵՐԱՆԻՆԵՐ
(Ղկ 6.20-23)

- Երանի՜ հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը:

Երանի՜ սգավորներին, որովհետև նրանք Աստծուց մխիթարություն պիտի գտնեն:

Երանի՜ հեզերին, որովհետև նրանք երկիրը պիտի ժառանգեն:

Երանի՜ նրանց, որոնք արդարության քաղցն ու ծարավն ունեն, որովհետև նրանք պիտի հագնենան:

Երանի՜ ողորմածներին, որովհետև նրանք Աստծուց ողորմություն պիտի գտնեն:

Երանի՜ նրանց, որոնք սրտով մաքուր են, որովհետև նրանք Աստծուն պիտի տեսնեն:

Երանի՜ նրանց, որոնք խաղաղության հաստատման համար են աշխատում, որովհետև նրանք Աստծու որդիներ պիտի կոչվեն:

Երանի՜ նրանց, որոնք հալածվում են արդարության համար, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը:

Երանի՜ ձեզ, երբ մարդիկ ձեզ նախատեն ու հալածեն, կամ ստելով՝ ձեր մասին ամեն տեսակ զրպարտություն անեն իմ հետևորդը լինելու համար:

Ցնծացե՛ք և ուրախացե՛ք, որովհետև մեծ է ձեր վարձատրությունը երկնքում: Հիշեցե՛ք, որ նույն ձևով հալածանքի ենթարկվեցին նաև ձեզմից առաջ ապրած մարգարեները:

ԵՐԿՐԻ ԱՂԸ ԵՎ ԱՇԽԱՐՀԻ ԼՈՒՅՍԸ
(Սր 4.21, 9.50, Ղկ 8.16, 11.33, 14.34-35)

- Դու՛ք եք երկրի աղը: Սակայն եթե երկրի աղը իր համը կորցնի, ինչո՞վ պիտի աղեն այն: Այլևս ոչ մի բանի չի ծառայի, այլ դուրս կթափվի և մարդկանց ոտքի կոխան կլինի:

Դու՛ք եք աշխարհի լույսը: Մի քաղաք, որ լեռան վրա է կառուցված, չի կարող թաքնվել: Ոչ ոք ճրագը վառելով կաթսայի տակ չի պահում, այլ այն դնում է աշտանակի վրա, որպեսզի լույս տա տան մեջ գտնվողներին: Այդպես էլ թող ձեր լույսը շողա մարդկանց առջև, որպեսզի նրանք տեսնեն ձեր բարի գործերը և փառավորեն ձեր Հորը, որ երկնքում է:

**ՈՒՍՈՒՑՈՒՄ ԱՂՈԹՔԻ ՄԱՍԻՆ
(Ղկ 11.2-4)**

- Նմանապես, երբ դու աղոթես, չլինեն և կեղծավորների նման, որոնք սիրում են ժողովարաններում և հրապարակների անկյուններում կանգնած աղոթել, որպեսզի մարդիկ տեսնեն իրենց աղոթելը: Վստահ եղեք, դա՛ է միայն նրանց վարձատրությունը: Այլ երբ դու աղոթես, մտի՛ր քո սենյակը, փակի՛ր դուռը և ծածո՛ւկ աղոթիր քո երկնավոր Հորը: Եվ քո Հայրը, որ անտեսանելի է և տեսնում է կատարածդ, քեզ կհատուցի հայտնապես:

Աղոթք անելիս մի՛ շատախոսեք հեթանոսների նման, որոնք կարծում են, որ եթե երկար աղոթեն, լսելի կլինեն: Արդ, նրանց չնմանվե՛ք, որովհետև ձեր Հայրը գիտի, թե ինչ է ձեզ պետք, նույնիսկ երբ դեռ բան չեք խնդրել նրանից: Ուրեմն՝ այսպես աղոթեցեք. -

Հայր մեր երկնավոր,
թող սրբաբանվի քո անունը:
Թող գա՛ քո արքայությունը,
թող կատարվի՛ քո կամքը,
ինչպես որ երկնքում,
այնպես էլ երկրի վրա:
Ամենօրյա մեր հացը
այսօր և՛ս տուր մեզ:
Ների՛ր մեր հանցանքները,
ինչպես որ մենք ենք ներում
նրանց, որոնք մեր դեմ
նույնպես հանցանք են գործել:
Եվ թույլ մի՛ տուր,
որ ընկնենք փորձության մեջ,
այլ ազատի՛ր մեզ չարից.
Քանզի քո՛նն են միշտ
արքայությունը, զորությունը և փառքը. ամեն:

Այո՛, եթե դուք մարդկանց ներեք իրենց հանցանքները, ձեր երկնավոր Հայրն էլ ձեզ կների: Իսկ եթե դուք մարդկանց չներեք իրենց հանցանքները, ձեր Հայրն էլ ձե՛զ չի ների ձեր հանցանքները:

ՉԴԱՏԵԼ ԱԼՅՈՑ
(Ղկ 6.37-38, 41-42)

-Մի՛ դատեք ուրիշներին, որպեսզի Աստված էլ ձեզ չդատի. որովհետև ինչ սկզբունքով որ դատեք ուրիշներին, Աստված նրանով է դատելու ձեզ, և ինչ չափանիշ որ գործածեք, նույնը Աստված գործադրելու է ձե՛զ դատելու համար: Ինչո՞ւ ես տեսնում եղբորդ աչքի մեջ եղած շյուղը և չես անդրադառնում, որ աչքիդ մեջ գերան կա: Կամ ինչպե՞ս ես քո եղբորն ասում. «Թո՛ղ որ հանեմ աչքիդ միջի շյուղը», այն դեպքում, երբ քո աչքի մեջ գերան ունես: Կեղծավոր, նախ հանի՛ր քո աչքից գերանը, որ կարողանաս հստակ տեսնել և ապա՛ միայն հանել եղբորդ աչքի շյուղը:

Որևէ սրբություն չներին մի՛ տվեք, ձեր մարգարիտներն էլ խոզերի առաջ մի՛ գցեք, որպեսզի չլինի թե դրանք կոխտտեն և դառնալով ձեզ վրա հարծակվեն:

ԽՆԴԻՐԵԼ ԵՎ ՓՆՏՐԵԼ
(Ղկ 11.9-13)

- Խնդրեցե՛ք Աստծուց, և նա կտա ձեզ, փնտրեցե՛ք և կգտնե՛ք, բախեցե՛ք, և կբացվի ձեր առաջ. որովհետև խնդրողը պիտի ստանա, փնտրողը պիտի գտնի, և բախողի առջև պիտի բացվի դուռը: Ձեր մեջ կա՞ մի հայր, որի որդին եթե հաց ուզի, նա քար տա նրան, կամ ձուկ խնդրի, և նա օձ տա նրան: Արդ, եթե դուք, որ չար եք, զիտեք ձեր զավակներին բարի պարգևներ տալ, ապա ձեր երկնավոր Դայրը որքան ավելի լավ պարգևներ կտա նրանց, որոնք դիմում են իրեն:

Այն, ինչ ուզում եք, որ մարդիկ ձեզ անեն, նույնը դո՛ւք արեք նրանց. այս սկզբունքն իր մեջ ամփոփում է Օրենքն ու մարգարեների ուսուցումները:

ԾԱՌԸ ԵՎ ՆՐԱ ՊՏՈՒՂԸ
(Մտ 12.33, Ղկ 6.43-44)

- Զգուշացե՛ք սուտ մարգարեներից, որոնք մոտենում են ձեզ ոչխարի կերպարանքով, բայց ներսից հափշտակող գայլեր են:

Իրենց գործերից կճանաչեք նրանց: Մի՞թե փշից խաղող կքաղեն կամ տատասկից՝ թուզ: Լավ ծառը լավ պտուղ է տալիս, իսկ վատ ծառը՝ վատ պտուղ: Լավ ծառը չի կարող վատ պտուղ տալ, և ոչ էլ վատ ծառը՝ լավ պտուղ: Այն ծառը, որ լավ պտուղ չի տալիս, կտրվում և կրակն է նետվում: Ուրեմն՝ իրենց պտուղից կճանաչեք նրանց:

Ինչպես երևում է մեջբերումներից, յուրաքանչյուրն ինքնին առանձին մի խոհ է, որը, սակայն, առնչակցվում է նաև մյուսներին և միասնաբար կազմում են մեկ այլ, առավել ընդհանրական և ոգեղեն ամբողջություն:

Որպես առանձին խոհ կարելի է դիտարկել նաև Մովսես Խորենացու հայտնի «Ողբը...»:

Մի խոսքով, խոհը իր ծավալով մի քիչ մեծ է աֆորիզմից, մի քիչ փոքր՝ ...վեպից: Որպես խոհի ժամանակակից փայլուն օրինակ արժե հիշատակել Վանո Սիրադեղյանի «Խաչակրաց բանակին սպասելիս»-ը.

«Չայը պատմական հայրենիքը գերադասում է իրական հայրենիքից:

Գերադասում է, քանզի պատմական հայրենիքը խնամք չի պահանջում: Այդ հայրենիքը տուրք չի պահանջում, քրտինք չի պահանջում, պաշտպանության կարիք չունի:

Եվ այդ հայրենիքի հմայքն այն է, որ այնտեղ ապրելը պարտադիր չէ:

Եվ հարյուրամյակներ շարունակ մենք մեր հայրենիքը մաս-մաս դարձնում ենք պատմական հայրենիք ու կապվում հավաքական, չպարտավորեցնող, սրտագին սիրով:

Չայը հավաքական գոյությունից վեր է դասում հավաքական սերը առ ոչինչ:

Չարյուրամյակներ շարունակ մաս-մաս մեր հայրենիքը դարձնելով պատմական, մաս-մաս ուժեղացնում ենք մեր հարևանների, ուժեղացնելով՝ հռչակում թշնամի, նեղվում ենք թշնամու հարևանությունից, անիծում ենք մեր իրական հայրենիքի փոքրությունը և երազում մի հզոր, մի խաչակրաց բանակ, որ դարձյալ կգա ու կանցնի մեր հայրենիքի, մեր պատմական հայրենիքի, մեր հարևանների վրայով ու այս անգամ, գուցե, հավերժորեն մնա»:

Հողված

Ի տարբերություն թղթակցության, որը կառուցվում է սոսկական փաստի վրա, հողվածում նույն այդ փաստերն ավելի շատ առիթ ու միջոց են ընդհանրացումներ անելու, խնդրի բուն էությունը վերլուծելու, բացահայտելու և լուծման ուղիները նախանշելու համար: Միով բանիվ, հողվածը տալիս է ներկան՝ փաստը, անդրադառնում և վերլուծում դրա պատճառները, հաշվարկում և կանխատեսում հետևանքները:

Այս բոլոր «փուլերում» էլ կարևոր դեր ունեն փաստարկումն ու հիմնավորումը այն ամենի, ինչը քննարկվում կամ վերլուծվում է, և, իհարկե, նաև՝ հետևությունները:

Հողվածը, մյուս ժանրերի պես, իր տարատեսակները ևս ունի. իհարկե, առաջին հերթին՝ վերլուծական, հրապարակախոսական, ապա և՛ գիտական, գիտահանրամատչելի, ճանաչողական, պորբլեմային և այլն, սակայն դրանք բոլորն էլ, ի վերջո, վերոնշյալ սկզբունքներն են կրում իրենց մեջ և անգամ կառուցվածքային առումով են գրեթե նույնական. հաստատման կամ հերքման «ներկայացվող» հիմնական թեզի առաջադրում, ապա հիմնավորում՝ առավելագույնս բացահայտելով այդ թեզի էությունը, և դրան հաջորդող փաստարկված և հիմնավորված հետևություններ, որոնք ոչ միայն ապացուցում են պնդումների ճշմարտացիությունը, այլև՝ ամփոփում և ամբողջացնում են հրապարակումը:

Հաճախ հողվածի վերլուծական եւ հրապարակախոսական տարրերը համադրվում են՝ ստեղծելով հրաշալի «համաձուլվածք»:

Որպես օրինակ՝ հատվածներ Պարույր Սևակի Կոմիտասին նվիրված «Դիմանկարի փոխարեն» հողվածից.

«...-Ո՞վ է Կոմիտասը:

Ճիշտ է, որ «ամեն համեմատություն կաղում է»:

Բայց կան համեմատություններ էլ, որ ուղղակի աղերսվում են:

Կոմիտասին շատերի հետ են համեմատել՝ Կոմիտաս Առաջինի եւ Նարեկացու, Սայաթ-Նովայի եւ Աբովյանի, Թումանյանի եւ Թորամանյանի:

Ճշմարտության մեծ պատառ կա այդ բաղդատությունների մեջ, թեպետ չհամընկնող եզրերը նույնպես որոշակի են:

Սակայն ամենից ավելի ճիշտ է, ըստ իս, այն համեմատությունը, որը նոր չէ, բայց տակավին չի գիտակցվել խորապես:

Եվ ժամանակը չի ուշացնում իր օգնությունը, որպեսզի քիչ կրկնելով՝ շատ հասկանանք, որ Կոմիտասի գործն ամենից ավելի հիշեցնում է... Մաշտոցի գործը:

Ժողովուրդ կոչվածը, ինչ խոսք, կույր չէ, բայց նաեւ ինքնատես չէ ու չի էլ կարող լինել, քանի որ ժողովուրդը մի անձ չէ, որ կանգնի հայելու առջեւ եւ տեսնի իր կան ու չկան: Ժողովուրդն ինքն իրեն տեսնում է՝ նայելով իր այն զավակներին, որ սերել են նրա ոսկրից ու ծուծից, կաղապարվել ըստ նրա հավաքական կերպարի ու ժառանգել ամենայն ճնողականը: Ժողովուրդն է ստեղծում նրանց՝ ի մի հավաքելով իր ամբողջ ցանուցիր բազմանիստությունը, բայց հենց որ ծնեց՝ ինքը՝ ժողովուրդն էլ, լուսավորվում է այդ բազմանիստի ներքին ճառագայթումից: Այս վերառումով էլ՝ ոչ միայն ժողովուրդն է նրանց ծնում, այլև՝ նրանք են ժողովուրդ վերածնում:

Այսպիսի ծնունդ էր ամենից առաջ Մեսրոպ Մաշտոցը: Այսպիսի ծնունդ է նաեւ Կոմիտասը, եւ նրա պարզեւած լույսն էլ, ինչպես Մաշտոցին, դեռ երկար պիտի անդրադառնա պարզեւողի դեմքին եւ արտացոլվի նրա հոգու մեջ:

Մաշտոցը, ինչպես մեր մանուկներն էլ գիտեն, նախ եւ առաջ գյուտարար էր, ինչպես որ հայտնագործող էր նաեւ Կոմիտասը. մեկը գտավ մեր լեզվի այբուբենը, մյուսը գտավ մեր «երկրորդ լեզվի»՝ մեր երգի «այբուբենը», որ ամոթ է խառնել հնադարյան հայկական խազերի, հայկական ետնադարյան ձայնանիշների կամ ժամանակակից նոտաների հետ:

Եվ ինչպես Մաշտոցը՝ Կոմիտասն էլ «հերթական» մեծություն չէ մեր մշակույթի պատմության մեջ եւ այդ պատմության մատյանում չի զբաղեցնում մի դրվագ միայն: Նա միայն երգահան չէր, թեկուզ եւ դարագլխային՝ մի ամբողջ դպրոցի հիմնադիր:

«Նա ինքն էր ամբողջ մի կոնսերվատորիա»: Եվ միաժամանակ՝ մեծ գիտնական, մեկը այն երջանիկ ու դժբախտ հայտնագործողներից, որոնց հավաքական անունը Կոլումբոս է: Նաեւ հայ երգի լավագույն կատարողը՝ նույնպես սկզբնավորող եւ ոչ շարունակող: Իսկ խմբավա՞րը, նվագո՞ղը, նվագավա՞րը: Իսկ ուսուցիչ-մանկավա՞րժը, բանասե՞րը, բանաստե՞ղծը...

Նայելով ահա այս բարձունքից՝ Կոմիտասին չի կարելի համեմատել իր մեծ ժամանակակիցներից ու նախորդներից եւ ոչ

մեկի հետ: Ըստ իր գործի ու դրա հետեւեաւքների՝ նրան հայր կարող էր դառնալ միմիայն Մեսրոպ Մաշտոցը...

* * *

...Կոմիտասը ամենաապրողն է բոլոր ապրողներիս մեջ: Բայց միաժամանակ նա շատ վաղուց է դարձել նաեւ խորհրդանիշ:

Մեր ժողովրդի համար այդպիսի խորհրդանիշները ընդամենը մի քանի հատ են՝ Մասիս, Էջմիածին, Մաշտոց եւ (իզուր այլ անուն մի փնտրեք)... Կոմիտաս:

Եվ ահա, նկատի ունենալով այն հայտնի իրավիճակը, որի մեջ է գտնվում աշխարհասփյուռ մեր ժողովուրդը, մենք պարտավոր ենք ասել, որ հիմա, տվյալ իրական ու տիրական հանգամանքներում Մայր Չայրենիքի շուրջ համախմբվելու, արտասահմաններում հայ համազգային ոգին կենդանի պահելու խնդրում, Կոմիտասի գործը իր հետեւեաւքներով ավելին է անում, քան մինչեւ իսկ... Մաշտոցի գործը:

«Ինչո՞ւ»-ին պիտի պատասխանել երկու «որովհետեւ»-ով.

որովհետեւ բոլոր հայերը չեն, դժբախտաբար, որ այժմ կարողանում են օգտվել Մեսրոպյան այբուբենից... որովհետեւ հայերեն կարդացողներին էլ բաժանում է մեր հին ու նոր ուղղագրությունը՝ մի իրավիճակ, որ պիտի դառնա օրակարգի հարց, ինչպես Մայր Չայրենիքի, այնպես էլ Սփյուռքի պատասխանատու մարմինների համար՝ մեկ համազգային ուղղագրություն ստեղծելու անհետաձգելի մտահոգությամբ...

Իսկ Կոմիտասի «այբուբենն» ու «ուղղագրությունը», որ կարդացվում է ավելի ականջով, քան աչքով, որ հասկացվում է ավելի հոգով, քան գիտելիքներով, շարունակում է մնալ համազգային եւ համընդհանուր՝ որտեղ էլ որ ապրի հայը, ինչ կուսակցության ու դավանանքի էլ պատկանի...

Էջմիածին՞ը:

Բայց Էջմիածնի կողքին էլ, ցավոք սրտի, դրված է մեկ այլ «ուղղագրություն»՝ Անթիլիասը, այլեւս չխոսելով կրոնական այլ համայնքների մասին:

Իսկ Կոմիտասի գործը դարձյալ համընդհանուր է բոլորի համար եւ ամենքի աչքին...

Մասի՞սը:

Բայց սրա էլ «անունը կա՝ ամանում չկա», մինչդեռ Կոմիտա-

սի անունը բոլորիս շրթներին է եւ ինքն էլ «ամանված» բոլորիս հոգիներում...»:

Ակնարկ, էստե

Ակնարկը և էստեն, անշուշտ՝ իրենց առանձնահատկություններով հանդերձ, որոշակիորեն մերձ ժանրեր են: Նրանք ժուռնալիստիկայի վերին մակարդակն են խորհրդանշում, որը, գրեթե միաժամանակ, գեղարվեստական գրականության նախասկիզբն է: Այսինքն՝ այս երկու ժանրերը որոշակիորեն միմյանց են միացնում հավերժականը հավերժին հանձնող գեղարվեստական գրականությունը, և օրվա խնդիրները նույն օրվա մեջ արժարժող և լուծել փորձող ժուռնալիստիկան: Սակայն, եթե գրողն, ի սկզբանե, կյանքի, իրողությունների և իրականության «խմբագիրն» է, այսինքն՝ եղածը համապատասխանեցնում է իր պատկերացումներին և պատկերում այն, ինչն ու ինչպեսը իր կարծիքով ճիշտ կլիներ, ապա ակնարկագիրն ու էստեագիրը պարտավորված են հիմք ընդունել իրողություններն ու փաստերը, «լավագույն» դեպքում դրանք կարող են ներկայացնել իրենց մեկնաբանությամբ, ոչ ավելին:

Ակնարկը հնարավորություն է տալիս փաստը ոչ միայն ներկայացնել, վերլուծել, այլ նաև գեղարվեստական պատկերման ընթացքում արժևորել այն և արժևորել այնպիսի գեղարվեստական միջոցներով և ձևերով, որոնք համահունչ են տվյալ ժամանակին և առավելագույնս են արտահայտում օրվա պահանջները:

Դիմանկարային ակնարկը բացահայտում է անհատին իր ամբողջության և բազմաբարդության մեջ, քանի որ կենսագրության յուրաքանչյուր արժանահիշատակ չոր տողը՝ ժանրի հրամայականով պետք է դառնա հիմնավորված-պատճառաբանված-գեղարվեստորեն ամբողջացված նրբերանգ՝ դիմանկարի ամբողջականությունն ու ճշմարտացիությունն ապահովող: Ակնարկում և էստեում փաստն ընդհանրացվում է՝ հասնելով ոչ միայն էնոցիոնալ-գեղարվեստական, այլև գաղափարաճեղճորժական խտացման:

Ակնարկի տարատեսակներից են նաև գիտահանրամատչելի ակնարկը, ճամփորդականը, որը շատ հաճախ կարելի է հանդիպել նաև գրողների մոտ, և այսպես ասած՝ ընդհանուր ակնարկը,

որի նյութն ու թեման ինչ-որ մի երևույթ է, իրադարձություն կամ էլ, պարզապես, որոշակի մի ժամանակահատված:

Ակնարկն ու էսսեն, լրագրության բոլոր մյուս ժանրերի նման, չեն կարող հանդես գալ խիստ «մաքուր» տեսքով. այդտեղ շատ ավելի ժանրերի միախառնում կա, քան մյուս դեպքերում: Խոսքն, անշուշտ, ռեպորտաժին, հարցազրույցին, թղթակցությանը, հաշվետվությանը, անգամ հոդվածին բնորոշ տարրերին է վերաբերում, որոնք, սակայն, ակնարկում կամ էսսեում հանդես են գալիս շատ ավելի գեղարվեստականացված՝ ապահովելով ժանրի հիմնական առաքելությունը՝ փաստի, այլ ոչ թե երևակայության հիման վրա, ինչպես գեղարվեստական գրականությունում է, կառուցել մարդու, երևույթի, իրադարձության կամ էլ ինչ-որ մի ժամանակահատվածի գեղարվեստական պատկերը:

Ակնարկագրի կամ էսսեագրի դերը խիստ կարևոր է և որոշիչ, որովհետև առկա փաստերը ի հայտ բերելուց և գեղարվեստորեն շարադրելուց զատ, նա դրանք, փաստորեն, իմաստավորում և արժևորում է ըստ իր ընկալումների, իսկ մնացյալ իրադարձությունների մասին էլ արտահայտում է իր անձնական կարծիքն ու տեսակետը: Ակնարկագրի վարպետությունն, առաջին հերթին, դրսևորվում է մանրամասները նկատելու և դրանք պատկերելու մեջ, ինչպես նաև այնպես «որոշելու» դրանք հերթագայությունը, որպեսզի այն որպես թե ներքին, թե արտաքին կուռ և ամբողջական կոմպոզիցիոն կառույց՝ կայանա:

Ակնարկի դասական օրինակ է Հրանտ Մաթևոսյանի «Ահնիձորը», որ սահմանակցում է գեղարվեստական գրականությանը՝ պահպանելով հանդերձ ակնարկի ժանրային բոլոր պահանջներին իր համապատասխանությունը:

Ահնիձոր (հատվածներ)

Հողը և գյուղը

Օհանես պապը մի հարյուր տարի առաջ թողնում-փախչում է Հաղպատի հողատեր Ջառ-Քարաթով-Աբդուլաշվիլուց: Նրա ետևից գալիս են ուրիշներ՝ փախած սույն կամ ուրիշ իշխանիկից: Իսկ Լոռին լիքը իշխանիկ էր: Գալիս մի տեղ տեսնում են՝ մի գետակ թափով կտրում է պղտոր գետը, մյուս ափով ահագին տեղ քշում իր մաքուր ջրերը և նոր խառնվում-գնում: Բռնում են

այդ գետակի հունը և բարձրանում: Այս, իհարկե, չի նշանակում, թե նրանք Սանասար-Քաղղասար էին և պետք է հիմնենին Սասուն: Խեղճ մարդիկ էին՝ ունեցածը մի իշի վրա, և հիմնում են ընդամենը Ահնիձոր՝ աշխարհի ծայրին: Անտառ, մի կտոր երկինք՝ դիմհարված յոթ ծխի: Չաղպատից բերված միակ շան հաչոց - անտառում խլանալիս, և արջ, և

-Տերիտորիան կազմում է, յոթ հատ դեղին ոսկի:

...Մի քանի անգամ այս ձորերում առողջ զարկերակով տրոփել է կյանքը. եղել են ցորեն, ձեթ, ձեթի լուսի տակ մատենագիրն ուզեցել է թողնել դարերի համար կյանքի գովքը, բայց մահը անցել է ձորերի վրայով՝ որպես համաճարակ կամ Լանգ-Թեմուր, և մնացել են կյանքի հետքեր՝ խաչ, կարաս, կալատեղեր և գերեզմանոց:

...Կոնաս առանց շալակի, զառիվերի գլխին կարտոֆիլի ցանք կա, այնտեղից կշարունակես շալակով: Պահակն Ադամ քեռին է:

Եվ օգոստոսի վերջերից, հենց որ կարտոֆիլը հասնում էր, դաշտը մի կողմից սկսում էր սևանալ. դա մածոնի հատուցումն էր:

Պահակ Ադամ քեռուն ասում են, որ լավ չի պահակություն անում: Չամաձայնվում է: Պարտավորեցնում են, որ աչալուրջ լինի: Պարտավորվում է: Բայց սևը շարունակում է մեծանալ և մինչև քոչի սարից իջնելը բռնում է դաշտի կեսը:

Որոշում են, որ ճամփի վրա, ուրթի տակին, էլ կարտոֆիլ չեն ցանի: Բայց, ախար, սար գնացողը մեղք կլիներ. գյուղից շալակեր տաներ սարը և տարածը լիներ գյուղի դառը կարտոֆիլ: Անխղճություն կլիներ: Նորից ցանում են և, որովհետև ճամփի վրա է լինում, պահակ են դնում: Պահակը նորից լինում է Ադամ քեռին: Եվ՝ անցած, նախանցած, հին տարիների պատմությունը:

...Աղբյուրից քիչ դեմը պահակի քողտիկն է՝ կանաչ խոտով ծածկված, կանաչ աշխարհի հետ ձուլված-կորած: Մոտիկից էլ չի երևում: Կարծես իսկի քողտիկ չկա, պահակ չկա: Կարտոֆիլն առանց պահակի է:

Պահակ, անպայման, կար. գյուղը լուրն ընկավ, որ Դանելանց Ադամ քեռին մեկին բոթել է... Կարտոլ հանելիս է եղել, չի թողել,

իրել է, հետոն էլ ասել՝ «մարդ Աստծո, շառ՞ քաշի, կոլխոզի կարտոլ է, ես էլ պահակ եմ, հո էստեղ խրտովիլա՞կ չեմ...»: Հա, Ադամ քեռին մեկին ծեծել է... Ուզեցին իմանալ՝ ինչ տեղն է խփել, ինչպես է խփել... օգնել էր, միասին համել էին ու միասին հնարել, թե Ադամ քեռին մեկին բոթել է, և նա շատ նեղացած է անհիծորցիներից ընդհանրապես, Ադամ քեռուց մասնավորապես...

...Որջի տեղը գիտեին, գնացին կանգնեցին գլխին:

-Սարսաղը մեջն է,-ասաց Գևորգը: Կարծես երեկ հարբած ու գծություններ արած ընկերոջ մասին էր խոսում:

-Մեջն է՝ կսպանեմք: Թող վնաս չտար, չսպանեինք:-Ու ծերունին տնավարի, կարծես եղբոր մոտ էր մտնում, ներս նայեց: -Հը-ըհը... Կարելի՞ է,-ու մտավ ներս:

Արթնացավ, իրար երեսի նայեցին, ու արջը սուսուփուս դուրս եկավ: Ծերունին ծամփա տվեց, կողքից անցնելիս ականջին ասաց. «Գիտես, չէ՞, որ մեղավոր ես»:

Գևորգը կրակեց բավական ուշ:

Բնի մոտ նստած ծիծաղեցին արջի ետևից, ծխախոտ փաթաթեցին և հնարեցին հաշվետվությունը: «Կրակեցինք, չկպավ, դուք հո կրակոցը լսեցիք»:

Հետո վնասներ արջը էլի էր տալիս, և Գիրիշ քեռին ու Գևորգը գնում կրակում էին: Մինչև որ «Լուսարծակ» թերթի թղթակիցը իմացավ, որ արջի որսն արգելվել է և կրակում են, գրեց թերթին: Շրջկենտրոնից ի գիտություն հայտնեցին արգելքի մասին և ի միջի այլոց՝ տուգանքի չափը:

«Ու-2»-ի լրտես օդաչուի բախտով հետաքրքրվում էին, և մի երեկո ռադիոն բոլոր տներում տեղեկացրեց դատի մասին: Աշխատանքային լարված օրեր չէն նախորդել դրան, և գյուղն ուզեց, «որ սարսաղը սարսաղություն չանի, մեղքն ընդունի՝ չսպանեն»: Մյուս օրը գյուղը հոգնած չէր աշխատանքից՝ սրտի տրոփյունով նստեց 22-30-ի վերջին լուրերը լսելու:

ՈՌԻԴԵՆԿՈՐ. Կարող էր այնպես լինել, որ այդ լծակները միացնելիս լինեին ոչ թե նկարահանող ապարատները, այլ ռուլք: Այն ժամանակ էլ կմիացնեիք-կանջատեիք:

ՊԱՌԻԵՐՍ. Դա կարող էր լինել:

ԱՅՆԻՉՈՐ. Թու... Հիմար դու, հիմար...

Եվ Ահնիժորը մտածեց ու չգտավ, թե դրանից հետո ինչ կասի Ռուդենկոյն:

Վերջին լուրերի առավոտյան հաղորդումը գյուղին մտածել տվեց Պաուերսի ճակատագրի դեպի լավը գնալու մասին, և դուրս եկան խոտհնձի: Շարունակությունը կլսեն երեկոյան: Երեկոյան ոչ մի ընդունիչ չմիացավ վերջին լուրերի համար. աշխատանք՝ և ջղայնություն ճաշի աղիության համար, որ լույսերը Ձորագետից կանոնավոր չեն տալիս՝ դրա համար, որ մի ամիս առաջ գյուղի վրայով կարկուտը սևացնելով անցավ՝ դրա համար, որ դռան տակին մի տեղ պահվել է ծղրիդն ու հա ճռռում է՝ դրա համար: Աշխատանք՝ և Պաուերսի ամբողջ խելացի, հանցանքի գիտակցությամբ ներծծված պատասխանները մոռացվեցին: Մնաց այս. Պաուերս. Դա կարող էր լինել:

-Թող սատկացնեն շանորդուն:

Յետո, երբ անձրևոտ օր էր և գյուղը տանն էր, հանգստանում էր, անդրադարձավ.

-Օղաջուկ գործն ի՞նչ եղավ:- Ու հիշեց.- Յա, ասենք՝ տասը տարի: Լավ եղավ: Սարսաղն էն խոսքը չէր ասել, ավելի լավ կլիներ:

...Մարդը, անձրևից, ցուրտ քամուց ծեծվող մարդը, կատարում է իր հասարակական պարտքը՝ մեզ համար բազմացնելով ոչխարներ: Ու այդքանով՝ մեզ հետ քվիթ: Իսկ իր համար ունի իր անկյունը մեզ չվերաբերող, նույնիսկ իր կնոջը չվերաբերող, նույնիսկ իր մտքին չվերաբերող, սրտի անկյունը: Ինչու ենք անպայման ուզում կարմիր անկյուն դարձնել այդ անկյունը: Գոնե դարձնեինք: Ախար ոչինչ չենք դարձնում, ավերում թողնում ենք»:

Էսսեն ակնարկից տարբերվում է առաջին հերթին նրանով, որ այնտեղ ավելի ցայտուն է արտահայտված հեղինակի անհատականությունը, որն արտահայտվում է ինչպես գրելածևում՝ հնարավորինս մատչելի լեզվի օգտագործում, այնպես էլ մեկնաբանություններում ու վերլուծություններում: Էսսեն նաև իրապարակախոսական որոշակի ուղղվածություն ունի: Մյուս առանձնահատկություններից են. մեկ կոնկրետ երևույթի կամ թեմայի ընտրությունը, հակվածությունն ավելի խոհափիլիսոփայական և գեղագիտական ընկալումներին և ընդգրկումներին, որը որպես կա-

նոն արտահայտվում է, առաջին հերթին, ընտրված թեմատիկայով. գրականություն, արվեստ, մշակութային իրողություններ, որոնց գեղարվեստական վերարժևորումը, վերագնահատումը կամ էլ, պարզապես, վերարժարծումն էլ դառնում են էսսեի հիմնական թեման: Մեկ այլ առանձնահատկություն ևս, որ բնորոշ է էսսեին. այն հիմնականում անդրադառնում է պատմությանը (հեռու կամ մոտ) և այն «բերում-տեղադրում է» մեր օրերի մեջ, ի տարբերություն իրեն խիստ մերձ ակնարկի, որը տալիս է ներկայան` որպես խնդիր բնավ չունենալով այն առնչել երեկվա կամ վաղվա հետ, և եթե առնչում էլ է` ապա, միշտ, այսօրը առավել հիմնավոր ու փաստարկված ներկայացնելու համար: Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ բնավ էլ պարտադիր չէ (ինչպես մյուս ժանրերի դեպքում էր), որ նշված բոլոր հատկանիշները համախումբ և միաժամանակ հանդես գան: 20-րդ դարավերջի հայ ժուռնալիստիկայի ակնարկների և էսսեների լավագույն նմուշներից կարելի է համարել Սասունիկ Թորոսյանի «Ափնարոտիկ» երկհատոր ժողովածուում ընդգրկվածները: Էսսեն սովորաբար նաև ավելի ընդգրկուն և ծավալուն է, քան ակնարկը և շատ ավելի կուռ է ու ամբողջական:

Նշանավոր լուսանկարիչ և գրաֆիկ ժորժ Բրասսայի «Զրույցներ Պիկասոյի հետ» գրքի սկիզբը` մինչև բուն` 40-ականների զրույցներին անցնելը, մի յուրահատուկ նախաբան-էսսե է, որից մի հատված միայն.

«1932 թ. մի օր Պիկասոյի տանը հանդիպեցի մի արտասովոր զույգի. տղամարդը գեղեցիկ էր, նիհար, թուխ ու գունատ դեմքով, բարակ բեղերով. նրա մեծ, ցնորական աչքերը կայծկլտում էին, զնչուի երկար մազերը փայլում էին բրիլյանտինից: Կապույտ զուլերով դնովի օձիքը, կարմիր թելամման փողկապի հանգույցը երևան էին հանում աչքի ընկնելու հակումը: Անորոշ տարիքի, տղայի կազմվածքով կինը բարալիկ էր, փոքր-մոքր և շատ թուխ: Խորաթափանց հայացքով նրա շագանակագույն աչքերը դեմքին հաղորդում էին յուրօրինակ հմայք: Պիկասոն ներկայացրեց.

-Բրասսայ, ճանաչու՞մ եք Գալային և Սալվադոր Դալիին:

Ինձ անծանոթ էր արդեն հռչակավոր դարձած այդ զույգը, բայց շատ էի լսել նրանց մասին:

...Մեկ ժամ Գալայի և Դալիի հետ աչքի անցկացրեցի Պիկասոյի վերջին փորագրությունները: Պիկասոն Դալիի ստեղծա-

գործությունները առաջին անգամ տեսել էր վեց տարի առաջ, Բարսեղունի ավանգարդիստական մի պատկերասրահում, երբ վերջինս եղել էր քսաներկու տարեկան: Այդ գործերը Պիկասսոն համարել էր խոստումնալից: Առանձնապես նրան ցնցել էր կտավներից մեկը՝ «Աղջկա մեջքը» նկարը, և նա խոսել էր Պոլ Ռոզենբերգի ու Պիեռ Լյոթի հետ: Վերջինս անմիջապես մեկնել էր Կատալոնիա՝ երիտասարդ նկարչին հանդիպելու: Սակայն որոնումները ոչնչի չէին հանգել: Միայն 1929 թ. Միրոյի դրողմով Դալին առաջին անգամ եկավ Փարիզ: Մնաց լուր մեկ շաբաթ: Այցելեց Վերսալ, Գրեննի թանգարան և Պիկասսոյին, որին գերադասեց, ինչպես ասել էր նրան սիրաշահելու համար, Լուվրի թանգարանից: Պիկասսոյի նկատմամբ ցուցադրել էր աներևակայելի մեծարանք և հաճկատարություն, ինչին միայն իր անսահման նախանձն ու ատելությունը կարող էին գերազանցել: Նա անհանդուրժելի բան է համարում, որ իրենից զատ մեկ այլ արվեստագետ կարող է լինել «խսպանացի ամենամեծ նկարիչը»: Պիկասսոն նրան ընդունել էր շատ լավ: Մեծ հետադրություն էր ցուցաբերել նրա գործերի և անձի նկատմամբ: Պիկասսոն շարունակել էր օգնել, հովանավորել նրան և ծանոթացրել էր Գերտրուդ Ստայնի ու այլ բարեկամների հետ»:

Մեկնաբանություն

Մեկնաբանությունը՝ ինչպես և բառիմաստն է հուշում, որևէ երևույթի, փաստի, իրադարձության կամ էլ արտահայտության մեկնաբանությունն է՝ լրագրողի կամ էլ այն անհատի տեսանկյունից, ով իր ասելիքն ունի տվյալ խնդրի առնչությամբ կամ էլ՝ ում դիմել է լրագրողը: Որպես ժանրային տարատեսակ՝ մեկնաբանությունը ավելի շատ փոքրիկ հրապարակախոսական հոդվածի է նման: Այն մի շարք ձևերով է հանդես գալիս, որոնցից հիմնականներն են՝ որոշակի սյունակը, որը հեղինակային է կամ էլ թեմատիկ և մվիրված է հենց այդ բնույթի հրապարակումներին, խմբագրականները, որոնք արտահայտում են ինչպես ողջ խմբագրության, այնպես էլ այն անմիջականորեն զրոհների տեսակետը կամ էլ, պարզապես, ամփոփում են օրը կամ համարը, և ըստ անհրաժեշտության տպագիր մամուլի էջերում կամ էլ եթերում հայտնվող հրապարակումներ, որոնք դարձյալ արձագանքային և ուղղորդող գործառույթ են կատարում:

Ժանրին բնորոշ ընդհանրությունը մեկն է՝ կարծ, դիպուկ և հրատապ մեկնաբանությունը, որը նպատակաուղղված է ձևավորվող հասարակական կարծիքն ամբողջացնելուն կամ էլ հակառակը՝ այն ուղղորդելուն:

Մեկնաբանության տարատեսակ որպես՝ կարելի է մշել դիտարկումը, որն իր խորքում մեկնաբանություն լինելով հանդերձ, առավել լակոնիկ է, դիպուկ, և, միաժամանակ, տարողունակ. շատ դեպքերում անգամ՝ լրացուցիչ մեկնաբանություն պարտադրող:

Ստորև՝ Ալբերտ Էյնշտեյնի դիտարկումներից երեքը.

«Աստժո առջև մենք բոլորս միանման ենք խելացի, ավելի ստույգ՝ միանման խելագուրկ ենք:

Ես նայում եմ նկարին, բայց իմ երևակայությունն անզոր է վերարտադրելու այն արարողի արտաքինը: Ես նայում եմ ժամացույցին, բայց ի վիճակի չեմ պատկերացնելու, թե ինչ տեսք ունի այն ստեղծող վարպետը: Մարդկային գիտակցությունն անկարող է ընկալել չորս չափում: Ինչպե՞ս այն կարող է ըմբռնել Աստժուն, ում համար հազար տարին և հազար չափումը՝ մեկ կարող են հանդիսանալ:

Ձանգվածների հոգեբանությունը՝ ըմբռնելու առումով, խիստ բարդ երևութ է: Վախենամ՝ պատմաբանները պատմությունը շարադրելու ընթացքում հաշվի չեն առել զանգվածների հոգեբանությունը: Իրադարձություններին նրանք նայում են հետահայաց, առանցքում ունենալով այն գաղափարը, թե իբր իրենք կարող են հստակ որոշել այն պատճառները, որոնք դարձել են այս կամ այն նշանակալից իրադարձության շարժառիթը: Իրականում, ակնհայտ պատճառներից զատ, գոյություն ունեն զանգվածների հոգեբանության որոշակի ձևակերպման չենթարկվող գործոններ, որոնց մասին մենք շատ քիչ բան գիտենք կամ էլ՝ ոչինչ իսպառ չգիտենք»:

Մեկնաբանության փայլուն օրինակ է Վազգեն Սարգսյանի

«Պատմության սկիզբն ու շարունակությունը», որը, փաստորեն, նվիրված է մամուլում Մեդրիի խնդրի արծարծմանը.

...Եվ նրանց ոտնահետքերով սկսվում է պատմությունը:

Այս նախադասությունը հազար անգամ հազար մարդու մասին հազար տարում կարող էր գրվել: Չի գրվել: Այս նախադասության տեր կարող էին լինել ոչ միայն անհատները: Այս նախադասությանը թիկունք էր պետք՝ ժողովուրդ էր պետք, որ պատմությանը տեր է ու այդ պատմության տակ այլևս չի ճկմելու, ճկվելու, ճոճվելու: Այս նախադասությունը չի գրվել նաև այլ պատճառով՝ գրող չի եղել: Գիտակցություն չի եղել, որ պատմությունը պիտի իմաստավորվի, որ պատմության դիմաց և պատմության համար կա պատասխանատվություն, որ պատմությունը քո, իմ, նրա կյանքի շարադրանքը չէ: Գիտակցություն չի եղել, որ պատմությունն ունենում է ոտնահետքեր: Ու մենք հեռացել ենք մեզնից, մեզ խլել են մեր բուն կերպ ու կերպարից, մեզ հագցրել են իրենց կերպարը, որ ապրենք իրենց հաճո ու հարմար կյանքով: Եղել է: Եվ եղել է, որ մեր ձեռքով բացել ենք մեր անառիկ ամրոցների դարպասները ու մեր սիրելի թշնամուն ասել ենք՝ արի, քոնն է, արի ու կեր մեզ, մեր բարիքը, վառիր մեր տունը, մենք քեզ արժանի ենք: Թե ինչ-որ խելառ էլ հանկարծ որոշել է դիմադրել, մեր ձեռքով հերն անիծել ենք:

Ու հիմա՝ Մեդրիին: Աշխարհագրական տարածք չէ Մեդրիին, հայրենիքի մի բուռ հողը չէ: Մեդրիին քո տան դուռն է, հայ: Մեդրիին քո հացի մայան է: Եվ երբ դու Մեդրիին տալիս ես օտարին, քո տան դուռը փակում ես քո վրա: Չգիտեմ՝ ներսից, չգիտեմ՝ դրսից: Ու բանալին կախում ես կրծքիցդ: Քանի բանալի կար կախված 1915 թվից: Քանիսը կորավ: Քանիսը մնաց: Իսկ դռները՝ բաց... Տանը հայ չկա: Թուրք-մուրք չգիտեմ, պատերազմ-մատերազմ չգիտեմ, համաշխարհային-մամաշխարհային՝ արդարացում հնարեցինք, թիկունքում պահվեցինք, որ չխոստովանենք՝ 1915 թվից առաջ ու հետո ու հիմա տեր չէինք, չեղանք, տեր չենք դառնում մեր տանը: Մենք վախենում ենք մեր ուժից: Մեզ վարժեցրել ենք ուրիշի ուժին: Մենք ընտիր-ընտիր հպատակ ենք, մենք խելոք-խելոք կատարող ենք, մենք հայտնագործություն ենք ուրիշի ձեռքի տակ:

Չայ մարդ, հիմա ուրիշը դու ես: Քո ուրիշը դու ես: Ու ոչինչ, որ սկզբից, հիմ սովորույթի, վախի, անվստահության, չգիտեմ էլ

ինչի պատճառով դու քո մեջ քեզ թշնամի ես որոնում, գտնում ու ուրախանում, որ մեղավոր կա: Ոչինչ, բայց թող դա արագ անցնի, դու դրան մի հավատա, դու ճանապարհ ունես, դու տուն ունես, դու որդի ունես: Մի հավատա, թե քո թշնամին քեզնից ուժեղ է: Թշնամուդ ուժեղացնողը քո վախն է, քո ցավն է, քո հիմարությունն է:

Ու հիմա՝ Մեղրին: Ասել, ասում եմ՝ Մեղրին ավելի կարևոր է քան ցանկացած տարածք՝ նույնիսկ Ղարաբաղը: Մեղրին իր քար ու քոայով այս երկիրը դարձնում է աշխարհի հզորներին իր դուռը բերող: Եվ այսօր տալ Մեղրին, թեկուզ դիմացը ծովի ճանապարհ ստանալը՝ սուտ է: Մեծ, համաշխարհային սուտ: Նախ՝ չեն տա, հազար ու մի ձև կա չտալու: Ղարաբաղը ապացույց, որ հողը գրիչով չեն վերցնում: Չեն տա: Եթե տան, ավելի վատ: Որովհետև իրենք շատ են, իրենք այսօր մեզնից ուժեղ են: Տվեցին, գալու են ու մեզ ուտեն: Իրենց թվով: Իրենց տնտեսությամբ: Իրենց փողով: Իրենց խելքով: Իրենց շահով:

Ես չեմ վախենում: Ես ոչ մեկից չեմ վախենում:

Ես զգուշացնում եմ՝ պատմությունը մաս ավարտվում է ոտնահետքերով: Մեր ոտնահետքերով մեր պատմությունը չպիտի ավարտվի: Եթե տաք Մեղրին, ձեր արյանը խառնում եք այն բեռզինը, որը չի թունավորելու, պայթեցնելու է ձեր գանգը: Ես զգուշացնում եմ՝ Մեղրին մի օր պայթելու է հենց Երևանի կենտրոնում:

...Եվ նրանց ոտնահետքերով պատմությունը մեռնում է:

Դարերի մեռած պատմությունը թափ տվեք ձեր հոգուց, մի մեռեք ձեր տան մեջ: Ձեր հոգու մեռելներին թաղեք: Ես երկիրը ձերը չէ: Դուք գալիս-անցնում եք: Ձերը էս երկրի սիրտը պահելն է: Սիրտը: Ես ձեզ չեմ հասկանում: Ես ձեզնից վախենում եմ, դուք կզնաք ու ձեր զավակների վզից կկախեք Մեղրիի ձեր տան բանալիները, լաց կլինեք, կենաց կխմեք ու կսատկեք կարոտից, բայց զենք չեք վերցնի: Ես ձեզնից վախենում եմ, դուք մեռնին թույն կխառնեք...

Նամակ, օրագիր, հուշագրություն

Սրանք ժուռնալիստիկայի «ամենամանկեղծ և ամենաբաց» ժանրերն են, որոնք հնարավորություն են տալիս առավելագույն

ընդգրկումով ներկայացնել ինչպես տեղի ունեցածը, այնպես էլ տվյալ պահի կամ էլ ընդհանրական խոհն ու մտորումը և այն էլ՝ ամենաամփջական ձևով:

Նամակն ամենահին ժանրային տեսակներից է և հայտնի անհիշելի ժամանակներից, երբ առաջին անգամ անհրաժեշտություն առաջացավ գրավոր տեսքով ինչ-ինչ մտքեր կամ գաղափարներ փոխանցել որոշակի տարածությունների վրա կամ էլ՝ այս կամ այն նպատակով, պարբերական կամ մշտական կապ հաստատել ու պահպանել:

Նամակի ժանրին բնորոշ են առավելագույն անկեղծությունն ու անմիջականությունը, ազատ և դինամիկ շարադրանքը, խնդրի բազմակողմանի և ամբողջական արծարծումը: Նյութը, բովանդակությունը կախված է տվյալ պարագայից. այն կարող է լինել ինչպես հասարակական-քաղաքական հնչեղության, այնպես էլ անձնական, մշակութային կամ այլ բնույթի: Որպես կանոն ուշադրության և հանրային ճանաչման են արժանանում այն նամակները, օրագրային գրառումները և հուշագրությունները, որոնց հեղինակները հասարակայնորեն ճանաչված և արժևորված են: Բացառիկ դեպքերում՝ նամակում, օրագրում կամ հուշագրություններում խիստ կարևոր, գեղարվեստորեն և փաստագրորեն շատ արժեքավոր, պատմական վկայագիր հանդիսացող գրառումների պարագայում է, որ գնահատվում է նաև ոչ հայտնի հեղինակների գիրը, սակայն դրան էլ գրեթե անմիջապես հաջորդում է նրանց հանրային ճանաչումը և գնահատանքը (Աննա Ֆրանկի օրագիրը): Առաջին դեպքում, որը մեզ հայտնի դեպքերի գերակշիռ մեծամասնությունն է կազմում, հեղինակը կամ կանխապես նախատեսում է իր այդ անձնական գրառումների հրապարակայնացումը կամ էլ, չբացառելով դրա հավանականությունը, հենց այդ կանխավարկածով էլ գրի է առնում թե իր նութերը, թե հուշերը, թե նամակները:

Օրագիրը մեկ այլ առանձնահատկություն ևս ունի. այնտեղի սեղմ, հաճախ նաև՝ առաջին հայացքից կեսիմաստ կամ էլ միանգամայն անհասկանալի գրառումները հետագայում առավել մեծ ամբողջականությունների համար որպես հույժ են ծառայում:

Նամակի, որպես լրագրային ժանրի տարատեսակներից է նաև բաց նամակը, որը սակայն լիովին նման լինելով ընդհանրապես նամակի ժանրին, առանձնանում է արծարծվող մեկ սկզ-

բունքային թեմայով և նշանակետով: Բաց նամակի բովանդակությունն ու էությունը կախված է նրա թեմայից և հասցեատիրոջից:

Արժե, անպայման, հիշատակել, որ «Բաց նամակը», որպես հասարակական կարծիք ձևավորելու և այն որոշակիորեն ուղղորդելու միջոց առաջին անգամ կիրառել է իշխան Յաննետի հաջորդներից մեկը՝ Դանեմարքի տիրակալ Քրիստիան VIII-ը 1846 թվականին: Իր այդ նամակում արքան թե իր երկրի հասարակության, թե «ողջ աշխարհի առաջ» հիմնավորել է իր հավակնությունները էլբայի հերցոգությունների նկատմամբ:

Որպես օրինակ մեջբերենք Յրանտ Մաթևոսյանի «Ահնիծոր» ակնարկում գետնդված «Բաց նամակը».

«Բաց նամակ

Ալավերդու շրջանի Աթանի-Ահնիծորի Ստ.Շահումյանի անվան սովխոզի դիրեկտոր ընկ. Գ.Եղիկյանին, Սովխոզների վարչությանը, Ալավերդու շրջանի ղեկավարներին, բայց ամենից շատ՝ Ստ.Շահումյանի անվան սովխոզի դիրեկտոր ընկ.Գ.Եղիկյանին

Դուք բյուրոկրատ չեք իհարկե, տեսել եք, համաձայն եք, որ սապրոզները ավելորդ են լինում հնձից հետո: Համաձայն եք նաև, որ ավելորդ չպետք է լինեն, և աշխատանքը, թեկուզ և ամենածանրը, պետք է երգ լինի, թեթև լինի ինչպես խոտհունձ վերարտադրող սյուլիտում: Դուք գիտեք նաև, որ այդպես կլինի միմիայն սյուլիտում, որովհետև իրականությունը սյուլիտ չէ: Բայց, ախար, պե՞տք է գոնե այնպես լինի, որ սյուլիտի տարրերը իրականության մեջ լինեն: Ախար այդպես դարձնելու հնարավորությունը դուք լրիվ ունեք, ընկեր Եղիկյան: Ախար դրա համար չնչին բան է պահանջվում, ընկեր Եղիկյան: Ասեն թե ինչ:

Թույլ տաք, որ մարդիկ ձի ունենան, աշխատանքի ձիով գնան-գան, քանի որ «Կուզա» կամ տրամվայ չունեք: Եթե ձիուց, որպես կապիտալիզմ ծնողից, շատ եք վախենում, անցկացրեք ուրեմն տրամվայի գծեր՝ գյուղից դեպի բոլոր հանդերը:

Թույլ տաք, որ մարդիկ, ձեր սովխոզի մարդիկ, ունենան տասական ոչխար: Ես սա ասում եմ առանց չար դիտավորության. ասում եմ զուտ նրա համար, որ մածունը լավ ուտելիք է և հնձվորին, ձեր խոտհարքը հնձողին, վնաս չէր տա: Եվ, ազնիվ խոսք, ձեզ էլ վնաս չէր տա: Կով, փառք Աստժո, թույլատրում եք. թույ-

լատրեք նաև խոտ՝ այդ կովի համար. թույլատրեք ոչ թե իրիկուս-
առաւիտ, խորոմ-խորոմ և ջլատելով հնծվորին, այլ՝ սեզոնում
երեք-չորս օր: Այդպես՝ պետականորեն մտածող մարդուդ համար
էլ լավ կլիներ, մասնավոր կովի մզզոցով դես-դեն ընկնող բանվոր-
ի համար էլ: Գիտեք ինչ հանգստություն էր աշխատավորի հո-
գուն այս ձմեռ դռներին այնպես ծանր-ծանր նստած խոտի դեզե-
րը: Եվ գիտե՞ք այդ հանգստությունն ինչքան մեծ կլիներ, եթե
անհանգիստ դես-դեն ընկնելով չէին հավաքած եղել այդ դեզերը:
Հետո՝

Դուք իսկի չե՞ք մտածել, որ ձեր անտառները ուղղակի խոզա-
բուծարան են, և խոզ պահելը ոչ ձեզանից, ոչ բանվորից ոչինչ
կխլեր: Ինչո՞վ վատ կլիներ, ասացեք խնդրեմ, եթե անտառի մար-
դիկ ձմեռը ուտեին խոզ՝ անտառի բարիքը: Փորձեք ինքներդ էլ,
խանձած խոզը գինու հետ՝ լավ է, և այնքան գոհ ես լինում աշխար-
հից. ուրեմն այդ խոզը քեզ վրա նստած է լինում կոպեկներ և մի
ամբողջ ձմեռվա կուշտ կյանք է տալիս: Թույլատրեք խոզ պահել:
Այսքան:

Շատ չեղավ, չէ՞: Ձի, խոզ, ոչխար: Եթե հաշվի առնենք, որ
դուք ապրում եք անասնակերի անսպառ ծովի մեջ, շատ չեղավ:
Դուք հնծում եք խոտհարքների երեք մասի մե՞կ մասը: Թե՞՞ ավե-
լի քիչ: Իսկ մնացածը: Մնացածը ոտքի վրա փտում-կորչում է:
Թողեք հնծեն: Սովխոզը դրանից ինչո՞ւ պիտի տուժեր: Դուք ապ-
րում եք աճարկուտում: Եվ աճարկուտը կա իր համար առանձին,
դուք ձեզ համար առանձին: Ինչո՞ւ պիտի աճարկուտը ծաղկի,
բերք տա ձեզ համար:

Հետո, տնամերձ հողերը վերցրել քչացնում եք: Ախար շատն
են քչացնում, ընկեր եղիկյան, դուք քիչը ո՞նց եք քչացնում, ո՞ր
խղճով: Ապա մի տեսեք այդ «շատով» այնքան կարտոֆիլ տա-
լի՞ս է, որ մի ձմեռ ընտանիքի բավարարի: Եղա՞վ այդպես: Եթե
եղավ, ապա խնդրեմ, բանվորին այնքան աշխատավարձ տվեք,
որ և կարտոֆիլ գնի, և կաղամբ, և յուղ, միս, և հագուստ: Դուք
երկու-երեք ամիսը մեկ անգամ եք աշխատավարձ տալիս,
տվածներդ էլ միայն հագուստի գին, և չեք թողնում, որ մարդիկ
ունենան կարտոֆիլ, միս, յուղ, չեք թողնում, փաստորեն, մար-
դիկ ուտեն: Ինչո՞ւ չեք թողնում: Նրա համար, հա՞, որ սովխոզնե-
րի կանոնադրության մեջ չի թույլատրվում խոզ պահել, ձի պա-
հել, 1500 մետրից ավելի հող ունենալ: Ասացեք, խնդրեմ, իսկ այդ
կանոնադրության մեջ զրվա՞ծ է, որ երկու-երեք ամիսը մեկ ան-

զամ են աշխատավարձ ստանալու և ամբողջ երեք ամսվանը հազար ռուբլի է լինելու: Չի գրված: Այդ դուք եք հնարել: Եվ՝ ո՞ր օրենքով: Սովխոզների կանոնադրության տառով, հա՞:

Այսբան:

Ես շատ բան չեմ ուզում. մի ժամանակ մարդիկ այդքան ուզել են և վերցրել զոռով: Չիմա քիչ բան է մնում. այդ էլ պիտի տրվի: Ես ուզում եմ... այ դուք ունեք կարմիր երես և կլորիկ փոր... Ես ուզում եմ, որ բոլորն էլ դրանցից ունենան: Այսինքն՝ սյուիտի տարրերը՝ իրականության մեջ»:

Ժամրի մյուս տարատեսակը ընթերցողների կամ էլ այլոց ընդհանրական բնույթի նամակներն են, որոնք իրենցից այս կամ այն երևույթի, մեկնաբանության, լուսաբանման կամ էլ գործունեության այս կամ այն ոլորտի արձագանքներն են:

Մեծերի նամակներն անգնահատելի փաստաթղթեր են իրենցից ներկայացնում, քանզի, ցանկացած պարագայում՝ վեր լինելով նեղամտական վավերագրումներից՝ տալիս են ոչ միայն ժամանակաշրջանի կամ իրավիճակի պատկերը, այլև՝ սկզբունքներ, և խոհափիլիսոփայական նոր երևույթներ կամ էլ դրանց նոր շերտեր են բացահայտում:

Որպես օրինակ՝ Անաքսիմենեսին (շուրջ 585-525 թթ. Ք.Ծ.Ա.) և Պյութագորասին (576-496 թթ. Ք.Ծ.Ա.) վերագրվող նամակները.

ԱՆԱՔՍԻՄԵՆԵՍԸ՝ ՊՅՈՒԹԱԳՈՐԱՍԻՆ

Դու շատ ավելի խելամիտ վարվեցիր, քան մենք, երբ Սամոսից Քրոտոն տեղափոխվեցիր բնակության, ուր ապրում ես անդորրի մեջ: Իսկ այստեղ էակոսի որդիները անտանելի չարագործություններ են գործում և էսիմները հանգիստ չեն տալիս Միլեթի քաղաքացիներին: Մեզ սպառնում է նաև միդիացոց արքան, եթե հրաժարվենք տուրք վճարելուց: Իոնացիք մտադիր են ապստամբություն բարձրացնել միդիացիների դեմ, որպեսզի վերանվաճեն իրենց ընդհանուր ազատությունը և, թե իրականացնեն դա, մեզ փրկության ոչ մի հույս այլևս չի մնա: Ինչպես կարող է Անաքսիմենը դատողություններ անել երկնային գործերի դրվածքի շուրջ, երբ նրան սպառնում է ստրկացումն ու մահը: Իսկ դու, ընդհակառակը, ուրախությամբ ես ընդունվել Քրոտոնի և ողջ

Իտալիո բնակիչների կողմից և դեպի քեզ են գալիս բոլոր հետաքրքրասեր մարդիկ՝ անգամ Սիցիլիայից:

ՊՅՈՒԹԱԳՈՐԱՍԸ՝ ԱՆԱՔՍԻՄԵՆԵՍԻՆ

Եթե դու, մարդկանցից լավագույնը, չգերազանցեիր Պյութագորասին տոհմով և փառքով, իրավ, դու էլ վեր կկենայիր և կլքեիր Սիլեթը. քեզ դրանից ետ է պահում քո նախնիների բարի փառքը, ինչպես որ ինձ այն կկաշկանդեր, եթե ես նման լինեի Անաքսիմենեսին: Բայց եթե դուք՝ լավագույն այրերդ, լքեք ձեր քաղաքները, ապա ողջ կարգուկանոնն այնտեղ կկործանվի, և միդիացիների սպառնալիքն առավել կահագնանա: Միշտ չէ, որ լավ է միտքը սևեռել միայն եթերին, երբեմն շատ ավելի լավ է ստանձնել հոգսը հայրենյաց... Ես էլ հո միայն իմ մտահայեցումներին չեմ տրված. նաև այն պատերազմների մեջ եմ, որոնք չեն դադարում իտալացիների միջև:

Միաժամանակ՝ խիստ ուշագրավ և հետաքրքիր է խոշոր անհատների, այսպես ասած՝ գետնամերձ երևույթների և դրսևորումների հանդեպ վերաբերմունքը, նաև՝ բարերար, հարեհաս ու բարեգործ լինելու ցանկությունը, որը ևս, մեծավ մասամբ, արտահայտվում է նամակներում: Ինչու՞ է հետաքրքիր: Որովհետև մեզ հիմնականում թվում է, որ ՍԵԾԵՐԸ գործեր ունեն միայն երկնամերձ ուղեծրերում, մինչդեռ նրանք էլ են մահկանացուներ և ոչինչ երկրային՝ իրենց խորթ չէ, այդ թվում և կարեկցանքը: Եվ այդ դեպքում նրանց խոսքը ոչ թե ինչ-որ մանրուքների է վերաբերում, այլ ՍԿԶԲՈՒՆՔԻՆ:

Միքելանջելո Բուոնարոտիի՝ զարմիկին՝ Լեոնարդոյին ուղղված նամակներից.

«Յուլիս 1540, Յոռն

Լեոնարդո

Քո նամակի հետ մեկտեղ ստացա երեք շապիկ, որոնք ինձ խիստ զարմացրին: Դրանք այնպիսի կոպիտ քաթանից էին, որ ոչ մի գեղջուկ չէր հագնի դրանք՝ առանց կարմրելու: Եվ եթե անգամ քաթանը բարակ էլ լիներ, ես չէի ցանկանա դրանք ստանալ ձեզնից. եթե ինձ շապիկներ պետք զան՝ ես փող կուղարկեմ, որպեսզի դուք զնեք դրանք ինձ համար»:

«Օգոստոս 1547, Յոռն

Լեոնարդո

Տեղ հասավ քո ստացականը 550 դուկատ ստանալու մասին, որը ես կարգադրել էի հանձնել քեզ բանկիր Բերտոլոմյոյի միջոցով: Դու գրում ես, որ դրանցից 4-ը տվել ես մի աղքատ կնոջ՝ հանուն Աստոծո հանդեպ սիրո. դա ինձ դուր է գալիս: Ես ցանկանում եմ, որ դու էլի 50-ը բաժանես՝ հորդ հոգու և ինձ համար: Գտիր կարիքավոր քաղաքացիների, ովքեր ամուսնության շեմին կանգնած աղջիկներ ունեն, և տուր նրանց այդ փողերից. բայց արա դա ծածուկ և զգուշացիր խաբված լինելուց: Խնդրիր նրանց, որ ստացականներ տան և ուղարկիր դրանք ինձ: Ես խոսում եմ, անշուշտ, Ֆլորենցիայի քաղաքացիների մասին, ովքեր, ինչպես հայտնի է, կարիքավոր են, և ովքեր ամաչում են ողորմություն խնդրել:»:

Հատված մեկ այլ նամակից.

«Ինչ վերաբերում է ողորմությանը, ինձ թվում է, որ դու դրան անհրաժեշտ ուշադրություն չես դարձնում: Եթե դու իմ փողերից չես տալիս հորդ հոգու հիշատակին, քո փողերից չես տա ու չես տա»:

Միքելանջելոյի նամակները, ինչպես և նրա ստեղծած ցանկացած այլ ինչ՝ ևս հանճարեղ են: Այնտեղ այնպիսի մտքեր ու բնորոշումներ կան, որ կցնցեն յուրաքանչյուրին: Ջորոլինակ. «...Ուշադրություն մի դարձրու օժիտին, որովհետև օժիտը միշտ էլ մարդուց լավն է», կամ՝ «Ինձ թվում է՝ Լեոնարդոն չպետք է այդքան ուրախանար նոր լույս աշխարհ եկած երեխայով: Անհրաժեշտ է այդ ուրախությունը պահել այն մարդու մահվան համար, ով լավ է ապրել իր կյանքը»: Կամ՝ ահա թե ինչ է գրում նա իր վերջին նամակներից մեկում՝ 1562-1563 թթ., Ջորջո Վազարիին (խոսքը, միանգամից փորձեմ կանխել ցանկացած թյուրմբռնում՝ վերաբերում է հոգևորին, ոչ բնավ՝ նյութականին). «Ես ձեզ պարտք եմ շատ ավելին, քան կարող եմ տալ: Քանի որ ես ծեր եմ, ապա հույս ունեմ իմ պարտքերը մարել ոչ թե այս, այլ ապագա կյանքում: Եվ ուրեմն՝ համբերություն ունեցեք»:

Էլի°...

Կարդացեք ու կգտնեք ինքներդ: Ու կարդացեք ոչ միայն նամակները: Եվ՝ ոչ միայն Միքելանջելո:

Եվ վերջում. ինչպես վերը հիշատակված նամակների, այնպես

էլ, ենթադրենք, Պլատոնի, Վան Գոգի, Թոււմանյանի, Կոմիտասի, Ֆոլկների, Բուլգակովի, Արշիլ Գորկու նամակները հիմքում ունենալով, նույն՝ նամակի ժանրով պատմեք նրանց մասին:

Որպես ժանրի տարատեսակ կարելի է նշել քաղաքական բնույթի նամակները, որոնք մեծապես որոշում են նաև տվյալ հանրության քաղաքական ապագան: Որպես այդպիսի նմուշ բերենք Ֆուլադ փաշայի նամակը Աբդուլ Յամիդին (հատվածաբար).

«...Երբ գրությունս դրվի Ձեր վեհափառության աչքերի առաջ, ես այլևս այս աշխարհում չեմ լինի: Դրա համար էլ դուք ինձ պետք է ունկնդրեք վստահությամբ ու առանց կասկածի: Շիրիմից եկած ձայնը միշտ անկեղծ ու անխարդախ է:

...Ձեր տերությունը, մահացու վտանգի հարկադրանքով, պարտավոր է ունենալ այնքան դրամ, որքան Անգլիան, այնքան գիտություն, որքան Ֆրանսիան և նույնքան զինվորներ, որքան Ռուսաստանը: Մեզ համար այլևս ակնհայտ պետք է լինի ունենալու այնքան առաջադիմություն, որքան Եվրոպայի մյուս ազգերն ունեն: Մեր հրաշալի տերությունը պետք է անցնի Եվրոպական բոլոր ուժերից: Սակայն այդ անելու համար կա մի բան, որը բացարձակապես կարևոր է: Պետք է փոխենք մեր բոլոր օրենքները: Կան շատ օրենքներ, որոնք անցյալում օգտակար էին, սակայն ներկայիս հասարակական պայմաններում անգործադրելի և անօգուտ են:

Ձերդ Վեհափառությունը պետք է տքնի անընդհատ բարելավելու մեր ամենաանհրաժեշտ միջոցները: Ով գիտե, մեր դաշնակիցները միշտ ազատ լինելու են ժամանակին օգնության հասնելու: Եվրոպայում մի ներքին վեճ, Ռուսաստանում մի Բիսմարկի փոխելու են աշխարհի դեմքը:

Կառավարությունների շատ հիմար արարքները հասկանում են: Սակայն մտածում են, որ ես, թերևս, ընդունակ չեմ եղել թափանցելու կառավարությունների անհատակ իմաստությունների մեջ, որոնք անտարբերությամբ բռնապետություն են թույլ տալիս աշխարհում, իրենց հույսը դնելով 100 միլիոն բարբարոսների վրա և նրանց օգնելով ունենալու քաղաքական բոլոր հնարավորությունները: Եվ վերջիններիս ամեն անգամ կուլ են տալիս Ֆրանսիայի չափ տարածք ունեցող թագավորություն կամ նահանգ:

Մեր համընդհանուր գործերում և մեր բոլոր ձգտումներում միայն մեկ խնդրի պետք է ուշադրություն դարձնենք, դա մեր երկրի այլազան ցեղերի ծուլումն է: Առանց այս ծուլում-միացման մեր տերության պահպանումը ինձ ակնհայտ անհնարին է թվում:

...Մի Մոնթենկս, մի Սերբիա, մի Հայկական թագավորություն, առանց իրենց կամ աշխարհին շնորհելու չնչին առավելություն, այլ բան չեն, եթե ոչ առասպելական պետություններ, թշվառ մնացորդներ մարդկության վաղեմի ցնորումի, նորանոր աշխարհակալների համար անխուսափելի ավարներ, մարդկային ցեղի առաջադիմության վնասակար տարրեր և աշխարհի խաղաղությանը վտանգ սպառնացողներ:

...Մեր քրիստոնյա ժողովուրդները շուտ մխիթարվեցին այն շարժումից, որ իրենց ենթակաների տեղ դրեց: Նրանք պատրաստ էին նախկին ուսուցիչների տեղը գրավելու: Մասնավորապես հայերի վարմունքը տիրակալական բնույթ ստացավ, սակայն ճիշտ կլինի, եթե նրանց եռանդը չափավորենք: Բնական է, լավագույնն այն է, որ քաղաքական ասպարեզներն այնպիսիներին հանձնենք, որոնք անկեղծորեն կհետևեն մեր տերության միադավան սկզբունքներին: Մեր բոլոր քրիստոնյա ժողովուրդները ընդհանրապես ունեն երկու այլադավան կրոններ՝ մեկը՝ բարոյական, իսկ մյուսը՝ քաղաքական: Նկատի առնելով բարոյական կրոնը՝ մեր կառավարությունը պետք է ամբողջովին այն ճանաչի: Սակայն մյուս կողմից պետք է շատ ուշադիր լինենք նրանց քաղաքական կրոնի հարաբերությունների նկատմամբ: Երբեմն տեսակետներ են մշակվում, որոնք մերժում են մեր գոյությունը:

Մի աստվածապաշտ փաշա համաձայն է Մովսեսի կամ Քրիստոսի օրենքներին, դա պատճառ չէ նրան պաշտոնագրկելու, բայց եթե այդ փաշան անտեսում է մեր երկրի միասնությունը, ոգևորվում է բյուզանդական տերության երազով, և կամ տենչում է Կիլիկիական թագավորությանը ծառայել, այդ դեպքում դադարում է հավատարիմ ծառայող լինելուց և նրան պետք է վտարել»:

Խիստ հետաքրքիր, ուշագրավ և տարողունակ են ռուս երեք հանճարների՝ Ալեքսանդր Պուշկինի, Ֆյոդոր Դոստոևսկու, Լև Տոլստոյի օրագրերը: Մեկը մյուսից խիստ տարբեր, սակայն ընկալումների դիպուկությամբ, բազմաթեմայնությամբ և դիտարկումների խորքով, որոնք բոլորը համախումբ և առանձին-առան-

ծին, միևնույն է՝ հանճարեղության կնիքն ունեն՝ համահունչ:

Ամենաբազմազանը Պուշկինի օրագրային գրառումներն են. անեկդոտից, ասեկոսեններից, խոհերից սկսած մինչև՝ նոր ստեղծագործություններ նախատեսող նշումներ:

«1815 թ. ...Դավիդովը ներկայանում է Բենիզսենին.«Իշխան Բագրատիոնը,-ասում է,-ուղարկել է ինձ զեկուցելու Ձերդ գերազանցությանը, որ թշնամին քթներիս տակ է...»

-Ու՞մ քթի տակ, Դենիս Վասիլևիչ,-հարցնում է զեներալը:- Եթե Ձեր՝ ապա նա իսկապես արդեն մոտ է, եթե իշխան Բագրատիոնի՝ ապա մենք դեռ կհասցնենք ճաշել...»

«1830 թ. 19 հոկտեմբերի. Հարզանքն անցյալի հանդեպ՝ ահա չափանիշ, որը տարբերում է կրթվածությունը վայրենություն-նից...»:

«1834 թ. 22 դեկտեմբերի, շաբաթ. Չորեքշաբթի օրը Խիտրովայի մոտ էի: Երկար զրուցեցի Մեծ Իշխանի հետ: Սկսվեց ամսագրերից. «Պատկերացնում ես՝ ինչ անհեթեթություն են հրապարակել «Հյուսիսային մեղու»-ում. խոսքը Տիրակալի Մոսկվա այցի մասին է: «Մեղուն» ասում է. «Տիրակալ Կայսրը, շրջելով տաճարները, վերադարձավ պալատ և կարմիր առնուտքի բարձունքից խորը (խորը!) խոնարիվեց ժողովրդին»: Դա էլ հերիք չի, տխմար ժուռնալիստը շարունակում է. «Ինչ հրաշալի էր Մեծ Տիրակալին տեսնել սրբազան գլուխը Մոսկվայի քաղաքացիների առաջ խոնարհած»: Մի մոռացիր, որ դա կարդում են խանութպանները»: Մեծ Իշխանն իրավացի է, իսկ ժուռնալիստն, իրոք, տխմար է»...

«1836 թ. -Դելվիզը մի անգամ Ռիլենկին հրավիրում է աղջիկների մոտ: «Ես ամուսնացած եմ»,- ասում է Ռիլենը: «Հետո ինչ,-ասում է Դելվիզը,-մի՞թե դու չես կարող ճաշել ռեստորանում միայն այն պատճառով, որ տանը խոհանոց ունես»...

Անչափ հետաքրքիր և տարողունակ է Ալբեր Քամյուլի նոթատետրը նաև: Որպես ապացույց՝ հետևյալ նոթերը միայն. «Ապրել և մեռնալ հայելու առջև»,-ասել է Բողլերը: Բոլորը կարծես թե մոռանում են «Եվ մեռնել»-ը: Հայելու առջև ապրելու պատրաստ է յուրաքանչյուրը: Ամենադժվարը սեփական մահվանը տեր դառնալն է»:

«Փոքրոգությունը միշտ էլ իր համար փիլիսոփայական արդարացում կգտնի»:

«20-րդ դարի ամենամեծ կիրքը՝ հաճկատարությունն է»:

Եվ վերջապես՝ «Ինքներդ ձեզ համար պարզեք, թե ինչ եմ ուզեցել ես ասել «Ժամատախտ»-ում»:

Բազմաթիվ հայտնի մարդիկ են օրագիր պահել: Որոշ մեջբերումներ նաև Ֆրանց Կաֆկայի օրագրերից.

1921 թ. հոկտեմբերի 19.

Անապատով անցնող ճանապարհի խորհուրդը: Մարդը, որն իբրև ժողովրդական առաջնորդ, անցնում է այդ ճանապարհը՝ գիտակցության վերջին փշրանքներով (ավելին տրված չէ) ըմբռնելով կատարվածը: Ամբողջ կյանքում նրան ցնորքի պես երևում է Քանաանի մերձավորությունը. մտածել այն մասին, որ ինքն այդ հողը տեսնելու է միայն մահից առաջ, անհավատալի է նրա համար: Այդ վերջին հույսը կարող է ունենալ միայն մեկ իմաստ՝ ցույց տալ, թե որքան անկատար ակնթարթ է մարդկային կյանքը, անկատար այն պատճառով, որ եթե նույնիսկ ձգվեր անդադար, միևնույն է, լինելու է սոսկ ակնթարթ: Սովսեսը Քանաանին չհասավ ոչ թե այն պատճառով, որ նրա կյանքը շատ կարճ էր, այլ այն, որ դա մարդկային կյանք էր: Սովսեսի Յնգամատյանի ավարտը նման է «Ջգացական դաստիարակության» վերջին պատկերին:

Նա, ով կենդանության օրոք գլուխ չի հանում կյանքից, կարիք ունի մեկ ձեռքի՝ հեռու քշելու հուսահատությունը ծնված իր իսկ ճանապարհից, ինչը շատ դժվար է գլուխ բերել, և մեկ այլ ձեռքի, որով կարող է գրի առնել այն, ինչ տեսնում է ավերակների ներքո, քանզի նա տեսնում է այլ կերպ և ավելին, քան շրջապատողները, չէ՞ որ նա մեռած է՝ կենդանի լինելով, և այդուհանդերձ ողջ՝ աղետից հետո: Եթե միայն հուսահատության դեմ կռվում նրան հարկավոր են ոչ երկու ձեռք և ոչ ավելին, քան նա ունի:

Յոկտեմբերի 21.

Ամեն ինչ երևակայության խաղ է, ընտանիք, աշխատանք, ընկերներ, փողոց, ամեն ինչ խաղ՝ հեռավոր կամ մոտիկ, և կինը նույնպես խաղ է, մերձավորագույն ճշմարտությունը լուր այն է, որ գլխով խփում ես խցի պատերին, որ չունի դուռ և ոչ էլ պատուհան:

Նոյեմբերի 7.

Ինքնագնման անխուսափելի անհրաժեշտություն. եթե ինչ-որ մեկը հետևում է ինձ, ապա բնականաբար ես ինքս էլ պարտավոր եմ հետևել ինձ, իսկ եթե ինձ ոչ ոք չի հետևում, պարտավոր եմ ավելի ուշադիր հետևել ինձ:

1922 թ. փետրվարի 19.

Յուլյան ֆ:

Մարտի 7.

Երեկ ամենասահավոր երեկոն էր, թվաց՝ եկել է վերջը:

1923 թ. հուլիսի 12.

Մարսափները վերջին օրերի, անհաշիվ, գրեթե չընդհատվող: Զրոսանքներ, գիշերներ, ցերեկներ, ամեն ինչի համար անընդունակ եմ, բացի ցավից:

Գրելիս ավելի ու ավելի վեհերոտ եմ դառնում: Դա հասկանալի է: Յուրաքանչյուր բան, որ շրջվել է ոգիների ձեռքով, ձեռքն այդպես թափով վեր բարձրացնելը ոգիներին բնորոշ շարժում է, վերածվում է նիզակի՝ ուղղված խոսողի դեմ: Չատկապես նման կարգի դիտողությունները: Եվ այսպես անվերջ: Լոկ մի բան է սփոփում. դա լինելու է՝ ուզես, թե չուզես: Իսկ եթե անգամ ուզում ես, դա քեզ կօգնի միայն շատ քիչ: Բայց ահա ինչն է ավելին, քան սփոփանքը, դու նույնպես զենքեր ունես:

Չատվածներ ոչ այնքան հայտնի մարդու օրագրից, որը, սակայն, պատմում է հանրահայտ մարդկանց, նրանց կեցվածքի, երևույթների նրանց ընկալումների ու ձևակերպումների մասին:

Դարձյալ ժողով Բրասսայ. «Զրույցներ Պիկասսոյի հետ».

«Փարիզ, 15 մայիսի 1945 թ.

Լուսաճածանչ եղանակ, առավել զվարթ դեմքեր... Ակներևորեն Փարիզն ապաքինվում է երկարատև հիվանդությունից և սկսում է ապրել իր կյանքով:

...Մարտելը հայտնում է մեր մասին: Մինչև գոտկատեղը մերկ, կարճ կապույտ տաբատով երևում է Պիկասսոն.

-Դուք մենակ չե՞ք: Ներեցեք ինձ... Տեսքս ներկայանալի չէ... Մերկ դուրս գալ ջահել աղջկա առջև...

Նա ասում է սա շինծու ամոթխածությամբ և ծնացնում, թե շրջվում է կիսով չափ: Բայց մնում է տեղում:

Ժիլբերթն աշխուժացել է. «Ինչ պարզ մարդ է... Ես նրան այսպիսին չէի պատկերացնում...»: Մենք արվեստանոցում ենք, և նրա հայացքը բևեռվում է այստեղ հավաքված քանդակներին:

...Երևում է Պիկասսոն՝ առաջվա պես մերկ: Հագնվելու, հարդարվելու փոխարեն նա մի տուփ շոկոլադ է հայթայթել ժիլբերթի համար:

Ներս է մտնում մի սպա: «Գնդապետ Բերժեն» է, ինտերնացիոնալ բրիգադների նախկին գնդապետը: Եվ Պիկասսոն համբուրվում է Անդրե Մալրոյի հետ:

ԱՆԴՐԵ ՄԱԼՐՈ - Ինչ հաճույք է Ձեզ նորից տեսնելը... Եվ այսքան լավ տեսքով... Անհանգիստ էի, երբ իմացա, որ մնացել եք օկուպացված Փարիզում...

ՊԻԿԱՍՍՈ – Վերջին անգամ ե՞րբ ենք տեսնվել... Չորս տարի առա՞ջ... Այդ օրվանից շատ բաներ են անցել մեր գլխով... Հաճախ եմ հիշել Ձեզ... Ի՞նչ եղավ Անդրե Մալրոն... Վախենում էի, թե հայտնվեք նրանց շարքերում, ովքեր չեն վերադառնում... Դուք սիրում եք արհամարհել ճակատագիրը... Վտանգի հետևից եք վազում... Իսկական պատուհաս եք...

ԱՆԴՐԵ ՄԱԼՐՈ - Երբեք չեմ մոռանա հուլիսյան այդ գիշերը, երբ լսեցիմք ԲիԲիՍի-ի արձակած մարտական պատրաստության հիսուն ազդանշանները, և մենք վերջապես գործի անցանք... Գերմանիայում ամեն տեղ զոջում են, որ Հիտլերի դեմ կազմակերպված զինվորական խռովությունը ծախողվել է: Պատերազմն ըստ էության արդեն տանուլ էր տրված: Այլևս ոչ մի հույս չկար: Որքան գերմանական քաղաքներ կարող էին փրկվել... Անցել եմ բոլոր մեծ քաղաքները՝ Բեռլին, Համբուրգ, Ֆրանկֆուրտ, Սյունխեն... Բոլորն էլ ավերված... Տեսնել էր պետք... Երևակայությունից դուրս բան է... Վերադառնում եմ Նյուրնբերգ: Հիտլերի մեծ շքերթների այդ քաղաքից դժնդակ կմախք է մնացել միայն...

ՊԻԿԱՍՍՈՒ – Պատկերացնում եմ, ինչ մղձավանջ է...

ԱՆԴՐԵ ՄԱԼՐՈՒ – Այո, մղձավանջ... Դժոխային տեսարան... Փողոցներ չկան... Սոսկ ճանապարհ հիշեցնող տարածքներ, որոնց միջով հսկա բուլդոզերները ուղի են հարթում... Ասես ծյուն մաքրող մեքենաներն են անցնում քար ու փոշու վերածված տների կույտերի միջով: Օրինակ, տեսա Բնագիտության թանգարանը: Կանգուն էին մնացել պատերի ինչ-ինչ հատվածներ... Պայթյունները ցաքուցրիվ էին արել շուրջը մարդու և կենդանիների կմախքները... Նրանք քեզ էին նայում անսպասելի այս ու այն դիրքերից, երբեմն պատուհանների փշրված ապակիների միջից: Թանգարանը դարձել էր սարսափի տուն: Մահվան տուն: Գիտե՞ք, թե ինչ էր հիշեցնում ինձ. Գոյա...

ՊԻԿԱՍՍՈՒ - Իսկ նացիստական պարագուլխնե՞րը:

ԱՆԴՐԵ ՄԱԼՐՈՒ - Նրանցից յուրաքանչյուրը իրեն վայել ճակատագրի արժանացավ. Հիտլերը անհետացավ բեռլինյան դժոխքի շանթ ու որոտի մեջ. վագներյան մահ, արժանի «Աստվածների մթնշաղիմ», ստալինյան երգեհոնների նվազակցությամբ: Նույնիսկ խղճուկ Եվա Բրաունը Հիտլերի հետ գործած ինքնասպանությամբ «Նիբելունգների» հերոսուհու հովեր է առել... Գյոթբելլը՝ մոլեռանդ ու կատաղի այդ կաղը, նույնպես ինքնասպանություն գործեց, կնոջն ու հինգ երեխաներին սպանելուց հետո... Ինչ վերաբերում է հաստափոր Գյորինգին, քե՛ք քաշող ու ժպտերես Գյորինգին, նա շարունակում է ապրել, ուտում-խմում է, փոխում է հագուստ-կապուստը, հարցազրույցներ տալիս, թույլ տալիս, որ լուսանկարեն ցանկացած ձևով...

ՊԻԿԱՍՍՈՒ - Իսկ Մուսսոլինի՞ն... Ինչ դաժան վախճան ունեցավ: Ոտքերից կախված մնալ մսագործի կողմից մորթագերծված եզան պես... Ամեն անգամ, երբ տեսնում էի նրան բազմության առջև ելույթ ունենալիս, կուրծք ծեծելիս, գլուխը ետ տանելիս, այն տպավորությունն էի ունենում, թե ինչ-որ մեկը քացիներ է տալիս նրա հետևին...

ԵՍ - Ձեր առափնյա բնանկարների մեջ ինձ հրապուրում է նրանց զարմանալի մմանությունը, թեև պատկերվածը չես կարող իսկական տեղը բերել...

ՊԻԿԱՍՍՈՒ - Ես միշտ ձգտում եմ նմանության... Նկարիչը պիտի դիտարկի բնությունը, բայց երբեք այն չչփոթի գեղանկարչու-

թյան հետ: Բնությունը նկարչության մեջ թարգմանվում է միայն նշանների միջոցով: Բայց նշան չես հորհինի: Պիտի անչափ ձգտես նմանության, որ հասնես նշանի: Ինձ համար գերհրակամությունը այլ բան չէ և չի էլ եղել, քան ձևերից ու գույներից այն կողմ եղած խոր նմանություն, ձևեր ու գույներ, որոնց ներքո ներկայանում են իրերը...

Ներս են մտնում Պոլ էյուարը ու մի գրքասեր, վերջինս առաջարկում է Բոնեի կազմած գիրքը: Եվ Պիկասսոն գնում է իր իսկ նկարազարդումով այդ հազվագյուտ գիրքը...

Պիկասսոյի վերջին նկարը անկողնու վրա պառկած մի խոշոր նյու է, գրեթե միագույն, փոքր ինչ կապտամոխրագույն: Թեև մարմնի մասերն ամբողջապես գլխիվայր են ներկայացված, ստիմքները գրեթե կպած են կոնքերին, նրանից հեշտասիրություն է տարածվում:

ՊՈԼ ԷԼՅՈՒԱՐ (թեքվում է դեպի ինձ և ասում) - Եթե ընտրության հնարավորություն ունենայի, բոլոր կտավներից կընտրեի այս նյուն: Անշուշտ, ինձ հիացնում են մոմակալներով, պրասներով նատյուրմորտները, բայց մոմակալներն ու պրասները քիչ են հուզում... Մինչդեռ այս նյուն ալեկոծում է...

Պիկասսոն ինձ ու Պոլ էյուարին տանում է հարակից փոքրիկ սենյակը և առեղծվածային ժպիտով ասում.

-Ուզում եմ ձեզ մի բան ցույց տալ...

Դարակից հանում է իր «ինտիմ» բլոկնոտը: Այդ տետրին է հանձնում իր ներշնչանքների ամենաառաջին պոռթկումները և մանավանդ սեքսուալ մտահածությունները: Անշուշտ տղամարդկային այդ մտասևեռումները շատրվանում են էրոսի նշանի ներքո գտնվող նրա ստեղծագործությունների մեջ: Ընդգծված ճեղքով, սրածայր, ազրեսիվ ստիմքներով, խոշոր խաղացող գավակներով կանացի մարմիններ, մարմին շոշափող տղամարդու մատներ, ցանկասիրությունից հևասպառ մինոտավրոսներ՝ այս ամենից կարելի է կազմել զարմանալի անթուղոգիա: Նույնիսկ «Ավինյոնի աղջիկները»՝ կուբիզմի «դասական» դարձած այդ մայր ստեղծագործությունը, պիտի տեղ գրավեր այնտեղ: Մի՞թե

նա չէր ստեղծվել անհամեստ երազից և նախապես չէր կոչվում «Ավինյոնի հասարակաց տունը»: Եվ սակայն ցանկասիրական այդ բոլոր պատկերներում ամոթխածության մի թեթև քող ծածկում է մտասևեռումները և փոխադրում դրանք խորհրդանշակա՝ նի, կախարդականի, առասպելականի աշխարհ... Միայն ինտիմ տեսողություն է Պիկասսոն ազատություն տալիս իր էրոտիզմին... Մեծ վարպետներից շատերի նման իր ստեղծագործության լուսանցքում նա սնում է իր «դժոխքը»: Բարակ տետրը միշտ ձեռքի տակ է և պահպանում է նրա անմիջական և խիստ անձնական գաղտնիքները: «Արվեստը երբեք անկեղծ չէ», -ասաց մի օր ինձ՝ ցույց տալով Ուտամարոյի էրոտիկ նկարները...

Յուշագրությունը նույնպես ժանրային տեսակ է, որը երկու արտահայտություն ունի. երբ պատմում ես հասարակության համար կարևոր և գնահատելի երևույթի կամ էլ անհատի մասին, և երբ վերհիշում ես ինքդ քո կյանքը՝ կարևորելով կամ էլ պարզապես նկարագրելով տեղի ունեցած իրադարձությունները: Դրանք ոչ միայն անփոխարինելի վկայություններ են, այլև ուրույն գրած՝ առավելագույն անկողմնակալություն և փաստավավերագրական հավաստիություն ապահովող:

Յատված Մարկ Շագալի «Իմ կյանքը» գրքից.

Սենյակում սեղանն ամբողջովին ծածկված է գրություններով, թղթի կտորներ՝ խնդրանքներով ու աղերսներով: Ռաբբին մենակ մատել է սեղանի մոտ, դիմացը՝ մոմ: Կարդում է գրությունը, նայում է ինձ:

-Նշանակում է՝ ուզում ես Պետերբուրգ գնալ: Դե ինչ, եթե քեզ համար այնտեղ ավելի լավ կլինի՝ գնա: Օրհնությունս քեզ:

-Այո, ռաբբի, բայց այնպես տխուր է, որ հարազատներիս թողնում եմ այստեղ:

-Նշանակում է՝ ուզում ես Վիտեբսկում մնա՞լ: Օրհնությունս քեզ:

Իսկ ինձ թվում էր՝ երկար գրույց կունենանք. ես այնքան կարևոր հարցեր ունեի: Ես ուզում էի նրա հետ խոսել գեղանկարչության մասին, իմ մասին: Նա, հնարավոր է, կարողանար ոգևորել ինձ, ոգեշնչել... Ես ցանկանում էի նրան հարցնել ընտրյալ լինելու մասին, հրեական Աստծո, Աստվածաշնչի մասին: Եվ ի՞նչ է մտածում ինքը Քրիստոսի մասին, ում պայծառ կերպարը վաղուց արդեն խռովում էր հոգիս...

*Ես բաց արի դուռն ու ելա փողոց: Տանն ինձ են սպասում...
Լուսնալույսը հեղեղել էր շրջակայքը, շների հաչոց էր լսվում...
Տեր իմ, ինչ ռաբբի է, ինչ ռաբբի է այդ հռչակավոր ռաբբի
Շնեերսոնը:*

Եվ մի հատված էլ Ֆեդերիկո Ֆելլինիի «Կինոարարուն» հուշագրական գրքից.

«Մի քանի ամիս անց ես կրկին տեսա Տոտոյին. պետք է մի կարճ հարցազրույց անցկացնեի հետը: Այն ժամանակ ես ռեպորտյոր էի և տպագրվում էի «Չինեմագածինոյի» կինոէստրադայի բաժնում. փոքրածավալ մի լրագիր էր դա, որը սկզբից մինչև վերջ պատրաստում էր Ռեանդա ազգանունով մի դերձակ, ում վրա, ուր ասես, ասեղներ էին խրված, և միշտ թելեր էին կպած բաճկոնին: Այդ լրագրում աշխատելու շնորհիվ էլ ես մի անգամ հայտնվեցի Չինեչիտայում, որտեղ պետք է հարցազրույց վարեի Օսվալդո Վալենտիի հետ: Յնց ես էլ դերձակ խմբագրին առաջարկել էի հարցազրույցներ հրապարակել լրագրում, ըստ որում միշտ աշխատում էի ընտրել այն դերասանուհիներին, ովքեր դուր էին գալիս ինձ. ասենք՝ Լեդա Գլորիային կամ Էլլի Պարվոյին: Հատկապես անտարբեր չէի Գրետա Գոնդայի հանդեպ: Սակայն գլխավոր խմբագիրը սիրում էր ինքը հարցազրույցներ անցկացնել դերասանուհիների հետ, այնպես որ ես ստիպված էի Տոտոյի հետ հարցազրույց անել: Այդ նպատակով գնացի «Յուլիոս Կեսար»՝ հսկայական մի կինոթատրոն, որտեղ ֆիլմեր էին ցուցադրում և էստրադային համերգներ տալիս: Օրը կիրակի էր, և սովորականի պես կինոթատրոնի առջև խմբվել էին կիրակնօրյա ներկայացումների բազմաթիվ սիրահարներ. հավանաբար ընդմիջում էր... բայց չէ, ավելի շուտ սպասում էին սեանսի սկսելուն, որովհետև Տոտոն կանգնած էր դրամարկոյի մոտ, բազմության ճնշումը պահող ճաղապատնեչի ետևը. կանգնել էր մարմարե պատին հենված և գլուխը թեթևակի կողմ թեքած՝ կահավորման համար նախատեսված առարկայի, ամուր արձանիկի նման: Բարձր օձիք, օժված մազեր... վրան ամեն ինչ տեղը տեղին էր ու պճնագարդ: Ծիտում էր ծանրուլուրջ պարոնի տեսքով՝ մտասույզ ու վերացած: Երբ Տոտոյին հայտնեցին, որ իրեն ժուռնալիստ է ուզում տեսնել, նա բարձրացրեց աչքերն ու ձեռքի նշանով ինձ մոտ կանչեց: Ասացի, որ ուզում եմ հարցազ-

րույց վարել իր հետ: Կոպերի թեթև շարժումով նա հասկացրեց, որ համաձայն է, իսկույն էլ հանգիստ ու վճռականորեն ասաց. «Գրեք, որ սիրում եմ կանանց և փող: Դուք ինձ հասկացա՞ք»: Ճիշտ է, նա ասաց ոչ թե «կանանց», այլ ուրիշ բառ՝ մեապոլյան բարբառով, որ առաջ երբեք չէի լսել, և այդ բառի հնչողության մեջ ինչ-որ փաղաքուշ ու անվայելուչ, մանկամիտ ու միստիկական բան կար. վանկերի մի հավաքածու էր դա, որը հիանալիորեն վերարտադրում էր նրբին, մեղմիկ, տաք մի կերպար: Իմ շփոթմունքը նկատելով, Տոտոն հետաքրքրվեց. «Ինչ է, նրանք ձեզ դուր չե՞ն գալիս», և ինձ նայեց զվարթ ու զննող հայացքով: «Իսկ դուք արդեն դիտե՞լ եք համերգը»,-վերջում հարցրեց նա բարի քեռու տոնով, որն իր նվերով որոշել է երջանկացնել քեզ և կարգադրեց ինձ դահլիճ թողնել: Ես գրեցի հարցազրույցը, իհարկե, չհիշատակելով այն երկու-երեք արտահայտությունները, որ մենք փոխանակեցինք. ամբողջ տեքստն ինքս հորինեցի և նույնիսկ պատկերազարդեցի ինչ-որ զծանկարով: Երբ լրագրի համարը լույս տեսավ, անմիջապես տարա Տոտոյին, այս անգամ՝ «Բրանկաչո» կամ գուցե՝ «Պրինչիպե»՝ արդեն մոռացել եմ, թե որտեղ էր նա համերգներ տալիս: Հիշում եմ, այնտեղ մի երգ էին կատարում. «Ես սիրում եմ խարտոյաշ կանանց՝ երկար-երկար թարթիչներով»: Կամ՝ նման մի բան: Երբ Տոտոյին ցույց տվեցի լրագրի համարը, որտեղ տպագրված էր հարցազրույցը և իմ փոքրիկ զծանկարը, նա ինձ նայեց զարմացած. «Մի՞թե սա դուք եք նկարել»: Երևում է՝ նա ինձ չհավատաց: Հետո հարցրեց՝ դիտե՞լ եմ արդյոք համերգը, և ինձ ուղարկեց ներքև՝ պարտեր, մի անգամ էլ իրեն նայելու»:

Խոսքը 1938 կամ 1939 թվականին է վերաբերում, երբ Ֆելլի-
գին 18 կամ 19 տարեկան էր:

ԺԱՆՐԵՐԻ ՌԱԴԻՈԱՌՎԱՆՁՆԱՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռադիոյի առաջին և կարևոր առանձնահատկությունը ծայրն է, կենդանի խոսքը:

Ռադիոյում կարևոր է ոչ միայն այն, թե ինչ է ասվում, այլև՝ ինչպես: Եվ այս կանոնը գործում է բոլոր ժանրերի համար էլ: Ռադիոյում կարևորություն են ձեռք բերում բոլոր հնարավոր ելևէջները, նաև դադարները:

Հանրահայտ է Ուիլսոնը Չերչիլի նշումը իր ռադիոէլույթներից մեկի վրա. «Փաստարկը թույլ է՝ ուժեղացնել ծայրը»:

Ռադիոյում ժանրային առումով առանձնապես չի տարբերվում իր տպագիր տեսակից, պարզապես էական դեր են սկսում խաղալ բանավոր խոսքի առանձնահատկությունները՝ շեշտադրումները, դադարները, անհրաժեշտության դեպքում՝ նաև կրկնությունը:

Ռադիոհարցազրույցի առանձնահատկություններն ակնհայտ են. տպագիր՝ մշակված (ինչպես հեղինակի, այնպես էլ հերոսի կողմից) տեքստի փոխարեն եթերում հնչում է կենդանի խոսքը: Անշուշտ այստեղ իր դերը կարող է ունենալ մոնտաժը, որը, սակայն, զուտ կառուցվածքային առումով կարող է բարելավել նյութը և «ծայրամասային» թրությունները վերացնել:

Ռադիոռեպորտաժի տարբերությունը իր տպագիր տարբերակից ևս ակնհայտ է. այն, ինչ հնարավոր չէ արտացոլել տեղեկությունների տարածման տպագիր միջոցներում օբյեկտիվ պատճառներով (ծայրեր, աղմուկ, իրականությունն ու տվյալ իրավիճակը բնութագրող այլ հնչյունային արտահայտություններ) միանգամայն բնականորեն արտացոլվում է ռադիոռեպորտաժում՝ ոչ միայն հավաստիությունն հաղորդելով նկարագրվող իրադարձությանը, այլև այն իր առավելագույն օբյեկտիվությամբ հասցնելով ունկնդրին, որպեսզի վերջինս իրեն եթե ոչ մասնակիցը, ապա գոնե կատարվող իրադարձության ականատեսը զգա (այս էֆեկտին հնարավոր է հասնել լրագրողի վարպետության շնորհիվ. ծայրային էֆեկտներին հավելելով լրագրողի իրադարձության էական

մանրամասների նկարագրությանը վերաբերող ակտիվ խոսքը, որոնց համադրությամբ էլ կարելի է տեղի ունեցողի կամ ունեցածի թեկուզև վիրտուալ ականատեսը պատկերացնել իրեն):

Ռադիոթղթակցությունը ևս առանձնանում է իր «ծայնային» հատկանիշներով, որը հնարավորություն է տալիս «անկենդան» խոսքի փոխարեն լսելի դարձնել խոսքը, մեկնաբանությունը, գնահատականը, որն էլ գումարվելով հնչյունային այլ էֆեկտների հետ՝ առավել մատչելի և ամբողջական ընկալում է ապահովում:

ԺԱՆՐԵՐԻ ՀԵՌՈՒՄՏԱՏԵՍԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հեռուստալուրը իր ռադիո և տպագիր համարժեքից միանգամից տարբերվում է նրանով, որ այն սկզբունքորեն երկու կերպով է հանդես գալիս. որպես բանավոր հաղորդագրություն և տեսալուր: Եթե առաջինը որոշակիորեն նման է ռադիոլուրին (բացառյալ հոգեբանական՝ ընկալման առանձնահատկություններն ու հաղորդող-ընկալող կապի առավելագույն անմիջականությունը), երկրորդն իր ազդեցիկությամբ որևէ նախադեպ չունի: Երեք բաղադրատարրերի միաժամանակ հանդես գալը՝ տեքստ, ձայնային իրողություններ, տեսանյութ՝ հեռուստադաշտը դարձնում է ամենամբողջականը, ամենաընկալելի և ամենաազդեցիկը: Ի դեպ. այս եռամիասնությունը մնացյալ բոլոր ժանրերի պարագայում ևս նույն էական դերակատարումն ունի, և հենց դրանով էլ պայմանավորված է հեռուստատեսության՝ որպես ամենաազդեցիկ տեղեկատվամիջոցի թե համբավը, թե իրողությունը:

Վերադառնալով հեռուստալսարանին՝ արժե նշել մեկ կարևոր հանգամանք ևս. ցուցադրվող կադրերը՝ իրենց ամբողջության մեջ, հնչող տեքստի տրամաբանական շարունակությունը պետք է դառնան՝ նպաստելով հաղորդվող լուրի տրամաբանական զարգացմանն ու ամբողջացմանը, հակառակ դեպքում (երբ ցուցադրվող կադրերն ու հնչող տեքստը պարզապես կրկնում են միմյանց՝ էապես նվազում է ընկալման ազդեցիկությունը):

Հեռուստատեսային մեկնաբանությունը իր ռադիո և տպագիր տեսակներից առանձնանում է նաև այդ մեկնաբանությունն ավելի հիմնավորող և փաստարկող տեսաշարով, որը, դարձյալ, ինչպես հեռուստալուրի պարագայում, պետք է ամբողջացնի, ավելի ընկալելի և հիմնավոր դարձնի մեկնաբանությունը՝ խոսքի և պատկերի առավելագույն օպտիմալ համադրմամբ՝ երբ մեկը մյուսի շարունակությունն ու հետևանքն է, այլ ոչ թե պարզապես կրկնությունը, որը թուլացնում և անարդյունավետ է դարձնում սովյալ դեպքում մեկնաբանությունն ամբողջապես:

Հեռուստահարցագրույցը հերոսին իր ամբողջության մեջ տեսնելու և գնահատելու հնարավորություն է տալիս. միմիկան,

շարժումներ, արտաքին տեսքը, անմիջական հաղորդակցման տպավորություն ստեղծելուց զատ հնարավորություն են ստեղծում ընդհանուր-տեսանելի հատկանիշներով զոնե գնահատել նրան, ում կարծիքը և տեսակետը նախապես կամ ընթացքում կարևորում է հեռուստադիտողը: Հենց այդ գնահատականն էլ ի վերջո էական նշանակություն է ստանում նյութն իր ամբողջությամբ մեջ ընկալելու և գնահատելու առումով: Սովորաբար մեկերկու հաղորդաշարից զատ (երբ կարևորվում են որոշակի թեմաներ կամ մարդկանց խմբեր՝ և այն էլ հիմնականում ուղիղ եթերում) հեռուստատեսային հարցազրույցն իր տարբեր տեսակներով և ընդգրկման ոլորտներով՝ ավելի շատ կիրառվում է այլ ժանրերի հեռուստահաղորդումներում՝ առավել արժանահավատ դարձնելով այդ հաղորդումներն իրենց ամբողջության մեջ:

Հեռուստահարցազրույցի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ անհրաժեշտության դեպքում, իհարկե, այն կարող է ուղեկցվել կամ երբեմն-երբեմն ընդհատվել տեսաշարով՝ քննարկվող կամ մեկնաբանվող նյութին առավելագույն հավաստիություն հաղորդելու նպատակով:

Հեռուստատեսային ռեպորտաժը ևս ունի իր առանձնահատկությունները. ի տարբերություն տպագիր կամ ռադիոռեպորտաժի, հեռուստալրագրողին դարձյալ օգնության է հասնում տեսաշարը, որը նրան հնարավորություն է տալիս ոչ միայն մեկնաբանել այն ամենը, ինչ տեսնում է հեռուստադիտողը, ոչ միայն նրա ուշադրությունը հրավիրել առաջին հայացքից աննկատ կամ էլ ոչ համարժեք դրսևորվող մանրամասներին, այլև խոսել այն ամենի մասին, ինչը մնում է կադրից դուրս, սակայն նպաստում է լուսաբանվող իրադարձության կամ միջոցառման ամբողջական ընկալմանն ու արժևորմանը:

Հեռուստատեսային հաղորդումը, որն ամենատարածված ժանրն է հեռուստալրագրության մեջ և նույնական է տպագիր թղթակցությանը կամ ռադիոհաղորդմանը՝ ընդգրկում է ինչպես տեղեկությունների ընդարձակ հաղորդումը, այնպես էլ դրանց որոշակի ընդհանրացումն ու վերլուծությունը: Երբ այս վերջին բաղադրատարրը ավելի մեծ տեղ է գրավում՝ հեռուստատեսային հաղորդումը կարելի է նույնացնել արդեն տպագիր հոդվածի հետ: Հեռուստատեսային հաղորդումն իր մեջ նաև լրագրողական հետաքննության, հետազոտության կամ էլ ուսումնասիրության տարրեր կարող է պարունակել: Այստեղ ևս տեսաշարը,

տեքստը և ձայնը պետք է լրացնեն միմյանց՝ մեկը մյուսի սկիզբն ու շարունակությունը դառնալով, այլ ոչ թե «ծածկեն» իրար: Որքան քիչ են փոխադարձ «ծածկումները», այնքան ավելի ամբողջական, կառուցիկ և արդյունավետ է հաղորդումը և, բնականաբար, հակառակը:

Հեռուստատեսային ակնարկի հնարավորություններն ու պատկերամիջոցները գրեթե անսահմանափակ են: Բացառությամբ համի, հոտի, օդի և ջերմաստիճանի տատանումների, գործնականում մնացյալ ամեն ինչը, հնարավոր է այսօր ապահովել ժամանակակից հեռուստատեսության շնորհիվ: Իսկ մշված անհնարինն էլ, համոզված ենք, հնարավոր կդառնա մոտ ապագայում:

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԻՆՉՊԵՍ

ԿԱՄ

ՈՐՈՇ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԻՆՔՆԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Մի շտապեք հանիրավի մեղադրել ինձ՝ ձեր մեջ դեռևս չբացահայտված մազոխիստական հակումներն արթնացնելու համար:

Այդպես չէ: Պարզապես մշտապես հիշեք, որ ձեզնից յուրաքանչյուրի բարձր հոգևոր-մտավոր-գեղագիտական մակարդակը, ձեր մտքի թռիչքը, ինքնուրույնությունն ու ինքնատիպությունը՝ շահեկան են միայն ձեզ, ուստիև՝ հենց ինքներդ էլ պետք է շահագրգիռ լինեք դրանք ապահովելուն:

Ժուռնալիստիկական ստեղծագործական մասնագիտություն է և անգամ ծանոթ երևույթը, միևնույն է, նոր մոտեցումներ է պահանջում ամեն անգամ: Կարծում ենք՝ ճիշտ չեն այն տեսաբանները, ովքեր «մեթոդական ուղեցույց» և կաղապարներ են առաջարկում-պարտադրում, ենթադրենք, հրդեհներ նկարագրելու համար: Հրդեհներն, անշուշտ, ինչ-որ չափով մնան են միմյանց (պատճառներ, ընթացք, հետևանքներ, կրակ, ծուխ, տուժածներ, հրշեջներ՝ սթրեսային իրավիճակ...), սակայն, նվազագույնը նույնքան էլ տարբեր են միմյանցից (պատճառներ, ընթացք, հետևանքներ, կրակ, ծուխ, տուժածներ, հրշեջներ՝ սթրեսային իրավիճակ...), ուստիև, կարծում ենք, որ ուշադրություն պետք է դարձնել ոչ թե ընդհանրություններին՝ դրանք ինքնին հասկանալի են և չեն կարող դուրս մնալ շարադրանքից, այլ՝ տարբերություններին, որովհետև տարբերություններն են, որ տալու են նախ՝ երևույթի ինքնատիպ պատկերը, ապա՝ տարբերակելու են ձեր ոճը, դիտանկյունն ու մոտեցումները ձեր գործընկերների նույնատիպ հատկություններից և, վերջապես, ձեր նյութն արժևորվելու է իր յուրահատկությամբ և մյուս նմանատիպ նյութերից ունեցած իր տարբերություններով: Եվ որքան շատ լինեն մնան տարբերությունները՝ այնքան շահեկան է թե նյութի, թե ձեզ համար:

Ֆուտբոլը, ենթադրենք, միշտ և ամենուրեք էլ՝ նույնն է: Սակայն հաշվի առեք, որ խաղային իրավիճակները երբեք չեն կրկնվում: Տուգանային և ազատ հարվածներն էլ երբեք նույն դիրքից ու նույն հեռավորությունից չեն լինում: Բացի, իհարկե, 11 մետրանոցից: Այսինքն՝ դու պետք է պատրաստ լինես ոչ թե ինչ-որ բեմադրված կամ արդեն իսկ եղած իրավիճակներից լավագույն

ելքը գտնելուն, որովհետև դրանք, արդեն գիտենք, չեն կրկնվելու, այլ պարզապես՝ լավ խաղալու ցանկացած իրավիճակում, որում կարող ես հայտնվել: Դրա համար պետք է ոչ թե իրավիճակներն անգիր անել, այլ մշտապես մարզվել և գտնվել լավագույն մարզավիճակում:

Մեր դեպքում՝ խոսքը միտքը մշտապես մարզելու մասին է:

Հենց դրան էլ պատրաստվում ենք անցնել:

Լավ գրելու հիմքը, ինչպես արդեն «պայմանավորվել ենք»՝ լավ մտածելն է:

Ինքնուրույն: Ինքնատիպ: Ստեղծագործաբար: Առանց որևէ մեկի գեղագիտահոգեմտավոր մակարդակին ու ճաշակին հարմարվելու: Առանց որևէ մեկին հաճոյանալ փորձելու: Առանց բարդույթների:

Ազնիվ ու անկեղծ եղեք նախ՝ ինքներդ ձեր, ապա՝ այլոց առջև:

Գյոթեն անտարբեր ու սառը լռությամբ է արձագանքել Բեթհովենի «Լուսնի սոնատի» հեղինակային կատարմանը: Անգամ հեղինակի «վրդովմունքից» հետո: Եվ ի՞նչ: Ոչ մեկը, ոչ էլ մյուսը չեն դադարում հանճարեղ մահկանացուներ լինելուց:

Բայց, կարծես թե, շեղվեցինք: Մենք պետք է գոնե փորձեինք մտածել սովորել:

Մտածողությունը, մանավանդ ինքնուրույն, ինքնատիպ, ստեղծագործական՝ անպայմանորեն որոշակի մարզումների կարիք ունի: Թե գրավոր, թե բանավոր (և բարձրաձայն, և մտքում): Ուստի՝ ստորև, բացի տարբեր բաժիններում տեղ գտածներից, առանձին՝ «իրար գլխի հավաքած» մի քանի «ինքնաառաջադրանքներ», որոնք, կարծում եմ, որոշակիորեն կնպաստեն վերը նշված խնդիրների լուծմանը:

I

Սկսեք ամենապարզ բաներից: Վերցրեք մի քանի ասացվածքներ կամ/և թևավոր խոսքեր և աֆորիզմներ ու փորձեք «շուռ տալ» դրանք. բայց, իհարկե, տրամաբանված և թե ինքներիդ ձեզ, թե շրջապատի համար՝ հիմնավորեք:

Օրինակ՝ «Ասողին լսող է պետք»-ը դարձրեք «Լսողին ասող է պետք» և հիմնավորեք հայտնի ասացվածքը շրջելու ձեր «որոշումը» և հիմնավորեք այնպես, որ ձեր ստեղծագործությունը, ոչնչով, նվազագույնը, չզիջի բնօրինակի հիմնավորվածությանը:

II

Լուր գրեք: Բայց ոչ թե այն մասին, ինչ արդեն կատարվել է կամ կատարվում է, այլ այն մասին, թե ինչ ինքնեդդ կցանկանալիք, որ տեղի ունենար: Բնականաբար պատասխանելով ինչու, ինչպես, երբ և՛ ցանկացածը լիարժեքորեն արտահայտելուն նպաստող այլ հարցերի:

Նույն բնույթի ռեպորտաժներ արեք: Հարցազրույցներ վարեք: Նաև՝ ինքնեդդ ձեզ հետ:

Այլ բնույթի և ռեպորտաժներ արեք: Ենթադրենք. նույն տեղից-նույն ժամին-տարբեր օրեր: Կամ՝ նույն տեղից-տարբեր ժամերի-նույն օրը: Ինքնեդդ ևս փնտրեք հետաքրքիր դիտանկյուններ:

III

Գրեք ինչ-որ բան՝ լուր, ռեպորտաժ, մեկնաբանություն կամ, պարզապես, օրագրային գրառում կատարեք՝ ինչ-որ մի իրադարձության կամ երևույթի անմիջական տպավորության տակ:

Հետո, վերադառնալով նույն թեմային, գրեք ևս մեկ անգամ՝ բայց արդեն 3-7 ամիս անց: Այա՛ ևս մի այդքան անց: Համենատեք դրանք միմյանց հետ: Դա էլ կարող է նյութ դառնալ:

IV

Վերցրեք ձեզ դուր եկած ցանկացած լուսանկար կամ էլ լուսանկարների մի շարք (միմյանց առնչվող կամ ոչ) և մակագրություններ արեք: Փորձեք դրանցով նաև ընդհանուր մի պատմություն սարքել: Երկար: Կարճ: Հումորային: Լուրջ:

Կստացվի:

V

Հայտնի է, որ Էլդար Ռյազանովը հրավիրել էր Ֆրունզիկ Մկրտչյանին՝ «Գարաժ» ֆիլմում նկարահանվելու: Սակայն այլ ֆիլմում զբաղված լինելու պատճառով, նա ստիպված է եղել հրաժարվել այդ գալթակղիչ առաջարկից:

Մի պահ պատկերացրեք, որ նա տվել է իր համաձայնությունը. ըստ ձեզ՝ ուն դերը կմարմնավորեր Ֆրունզիկ Մկրտչյանը (կարող էք նաև նոր կերպար առաջարկել, բայց «հների» պարագայում խուսափեք խիստ էպիզոդիկ դերերը նշելուց. Ֆրունզիկին դրա համար չէին հրավիրի), ինչ կփոխվեր նրա խաղով այդ կերպարի մարմնավորման մեջ, ինչ կփոխվեր դրանից ողջ ֆիլմում. գրեք ձեր նախընտրած ժանրով դրա մասին, անպայմանորեն պատասխանելով վերը նշված երեք հարցերին:

VI

Այս առաջադրանքը պայմանականորեն կարելի է վերնագրել այսպես՝ «Դեմքով դեպի հանդիսատեսը» (այս բառի ամենալայն ու ընդգրկուն իմաստով): Գնացեք կինոթատրոն, ցուցասրահ, թատրոն, համերգասրահ կամ այլ հանդիսավայր, բայց տեղի ունեցողի մասին գրեք ոչ թե ձեր անմիջական ընկալումներով, այլ՝ համադրելով դրա ակնդիրների ընկալում-արձագանքները (ինքներդ մի դիտեք կատարվողը, դուք դիտեք և նկարագրեք դիտողին ու նրա «դիտածը»): Ծայրահեղ դեպքում՝ կարող եք օգտագործել ձեր ընտանիքի անդամների հեռուստադիտումները:

VII

Կարդացեք Ռիչարդ Բախի «Մեսիայի գրպանի տեղեկատու» իսկապես հանճարեղ գիրքը: Կարդացեք քանի անգամ ուզում եք, բայց մի նպատակով՝ գրքին նոր նախաբան գրելու: Եվ՝ գրեք:

Եվ քանի որ անդրադարձանք գրքին. անշուշտ, ունեք ձեր սիրած ստեղծագործությունը՝ վեպ, վիպակ, պատմվածք, որի ընթերցումն ավստասանքով եք ավարտել: Շարունակեք այն, թե ձեզ, թե ընթերցողների համար:

VIII

- «Կործանելով հուշարձանները՝ պահպանեք պատվանդանները. միշտ կարող եմ պետք գալ:
- Միշտ էլ կգտնվեն եսկիմոսներ, ովքեր Բելգիական Կոնգոյի բնակիչների համար ցուցումներ կգրեն՝ ինչպես իրենց պահել սաստիկ շոգին:
- Դեպի աշխարհ դուրս բերող պատուհանը կարելի է փակել թերթով:
- Եթե քավության նոխազին հնարավոր լիներ նաև կթել...
- Երբեմն բումերանգը չի վերադառնում՝ նախընտրում է ազատությունը:
- Ծերանալով՝ ասեկոսները դառնում են առասպելներ:
- Հատակ զոյություն չունի: Կան միայն խորության արգելքներ:
- Երագում տեսա հակաբեղմնավորիչի զովազդ. «Չծնվածները երախտապարտ են ձեզ»:
- Իսկ ձկները, որ անցնում են որսացանցի անցքերով, անլիարժեքության բարդույթ ունե՞ն:

- Նախավերջին մոհիկանը հաճախ սպառնում է վերջինին, որ ինքը վերջինը կդառնա:
- Ասա ինձ՝ ում հետ ես քնում, և ես կասեմ՝ ում ես տեսնում երագում:
- Եթե ինչ-որ ժամանակ ճանաչել ես բորենում, իսկ մի քանի տարի անց նրան հանդիպել ես սկյուռիկի տեսքով՝ մտածիր տեսածիդ մասին:
- Ես միշտ վախեցել եմ չլիցքավորված զենքից՝ դրանով են գլուխներ ջարդում:
- Գեղեցիկ ու բարոյական չէ կասկածել ինչ-որ մեկին, երբ լիովին համոզված ես:
- Մսակերներ, չուտեք բոլոր ճագարներին, որովհետև երբ այլևս փորձաճագարներ չմնան... Ինքներդ եք հասկանում...
- Ինձ դուր են գալիս նրանք, ովքեր կլինեին, եթե նրանց չծնեին անգամ:
- Երբ քաղաքական առակներում խոսում են կենդանիների մասին, նշանակում է՝ անմարդկային են ժամանակները:
- Սովորաբար նախկին ավանգարդի արիերգարող դառնում է նոր արիերգարդի ավանգարդ:
- Որքա՞ն սոխակ պիտի կուլ տա գիշատիչը, որպեսզի սկսի երգել:
- Մարդ լինենք այնքան ժամանակ գոնե, քանի դեռ գիտությունը չի բացահայտել, որ մենք ինչ-որ այլ կենդանի ենք:
- Ոմանք պետք է երկրորդ անգամ ապրեն՝ իբրև պարզև, ոմանք՝ իբրև պատիժ:
- Գայլերը, այնուամենայնիվ, ոչխարներից բարեկիրթ են և կյանքն առանց նրանց չեն պատկերացնում:
- Վհա և ճակատով ջարդեցիր ու անցար պատը: Հետո՞. ի՞նչ ես անելու մյուս սենյակում:
- Խեղճ երկրագունդ. մեր բոլորի սովերները ընկնում են նրա վրա:
- Մարդու արարումից ի վեր նրան կատարելագործում են միայն... պրոթեզներով:
- Մեքենայի նկատմամբ մարդը մի առավելություն էլ ունի՝ կարող է ինքն իրեն վաճառել:

- Ճշմարտությունը հաճախ հաղթում է, երբ դադարում է ճշմարտություն լինելուց:
- Ազգային որոշ ողբերգություններ ընդմիջումներ չունեն:
- Մութ է այն պետությունում, որտեղ սրիկաները լուսատու են դարձել:
- Բարիկաղներ կան, որոնց մի կողմում ոչ ոք չկա և երբեք էլ չի եղել:
- Եթե միայն լսվեր վետերանների հոգու կանչը՝ «Ետ, դեպի հաղթանակներ»:
- Քաղաքականությունը տրոյական ձիերի մրցարշավ է:
- Ոմանք բեմից հեռանում են, երբ վերջանում են ուրիշի գրած խոսքերը»:

Սրանք Ստանիսլավ Եժի Լեցի մտքերն են: Ըստ այդ դիտարկումների և օգտագործելով դրանք՝ ժուռնալիստիկայի որևէ ժանրով (բացի լուրից) նյութ գրեք հեղինակի մասին: Ու նաև՝ ընթացքում (էլի տարբեր ժանրերով) նյութեր գրեք՝ որպես բնաբան ընտրելով այդ մտքերից մեկը:

IX

«Կ'ուզեմ աշխարհի մէջ ունկն ուժ մը տեսնել, որ փճացնէ այս ցեղը, այս փոքրիկ, անարժէք մարդոց ցեղը, որուն պատմութիւնը լրացած է, որուն պատերազմները բոլորը մղուած եւ կորսուած են, որուն ճարտարապետութիւնը խորտակուած է, որուն գրականութիւնը չէ կարդացուած, որուն երաժշտութիւնը չէ լսուած, որուն աղօթքները այլևս չեն արտասանուիր:

Աշխատեցէք, կործանեցէք այս ցեղը: Կործանեցէք Հայաստանը: Դրկեցէք զանոնք իրենց տուներեն դէպի անապատ: Թոյլ մի տաք, որ անոնք ոչ հաց և ոչ ալ ջուր ունենան: Վառեցէք անոնց տուններն ու եկեղեցիները: Տեսէք որ դարձեալ պիտի չխնդա՞ն անոնք»:

Բոլորիդ կամ, նվազագույնը, շատերիդ է հայտնի Ուիլյամ Սարոյանի այս միտքը: Փորձեք մեկնաբանել՝ ընտրելով «մեկնաբանությունների լրագրությանը» բնորոշ ժանրերից ցանկացածը:

Ես նվազագույնը երեք տարբեր, անգամ միմյանց հակասող մեկնաբանություններ կարող եմ անել:

Դուք՝ ավելին: Հաստատ:

X

Կարդացեք Չեմինգուեյի «Ծերունին ու ծովը»: Բայց ոչ սուկ գեղագիտական մեծ բավականություն ստանալու համար:

Այնտեղ բազմաթիվ հատվածներ կան, երբ նկարագրվում է իրավիճակը ու, միաժամանակ, տրվում են ծերունու խոհերը:

Դուք փորձեք մտածել մեծ ձկան «փոխարեն»:

Գրեք այդ ամենը:

Եվ, ընդհանրապես, հաճախ կիրառեք «Եթե ես լինեի...» սկզբունքը և ձևը: Ինչպես, պարզապես, մտածելու, այնպես էլ՝ գրելու առումով:

XI

Գրեք պատասխաններ՝ առանց հարցերի: Չետո միայն, ինչոր ժամանակ անց՝ ձևակերպեք հարցերը: Նույնը առաջարկեք այլոց ևս: Այնուհետև՝ համեմատեք դրանք:

XII

Եկեղեցու ամենանշանավոր հայրերից և ամենախմաստուն աստվածաբաններից մեկի՝ Յովիան Ոսկեբերանի ստորև բերվող խոսքի օրինակով, բայց՝ ի լրացումն դրա՝ հիմնավորեք Աստծո գոյությունը. «...Ասաց անմիտը իր սրտի մեջ, թե Աստված չկա»... Չկան հիմնապատերը, հապա ինչի՞ վրա է հաստատված շինությունը: Չկա հաստատուն հատակը, հապա ի՞նչ ամրության վրա է հենվում առագաստանավը: Չկան նավաշինարարները, իսկ ինչպե՞ս է կառուցվում նավը: Չկա շինարար-վարպետը, հապա որտեղի՞ց տունը: Չկա ճարտարապետը, իսկ այդ ու՞մ մտահղացումով կառուցվեց քաղաքը: Չկա հողի մշակը, հապա այդ ինչպե՞ս է բերք ու բարիք տալիս հողը: Չկան երաժիշտներ, հապա այդ որտեղի՞ց ներդաշնակ հնչյունները քնարներին աշխարհի: Չկա նախասահմանողը, իսկ ինչպե՞ս է ամեն բան ենթարկված նախասահմանությանը: Չկան կառապաններ, իսկ այդ ո՞նց են ընթանում անկառավար կառքերը: Չկա քանդակագործ, հապա այդ ովքե՞ր են աշխարհը լցրել-ասես կենդանի արարածներ - մարդկանց անդրիններով: Չկա ստեղծողը երկնականարի, հապա ո՞վ կապեց քո գլխավերևում զարմանալի կամարը երկնի: Չկան զարմանահրաշ գործերը Վարպետի, իսկ այդ ո՞վ դրեց այդպես քո դիմաց՝ երկնքի վերում Արեգակը մեծ, որն ասես ոսկուց կերտված սկուտեղ լինի՝ սեղանին անսահմանի: Չկա կառավար լուսատուներին, իսկ այդ ո՞վ է ասես պայծառ կանթեղ տվել քեզ

Լուսինը՝ դնելով գիշերի մեջ: Չկա Լուսաբաշխը, հապա ո՞վ տվեց քեզ լուսատուն, լուսի ու ճաճանչի այդ անսպառ աղբյուրը: Չկա Միակը՝ Արարիչը մեծապար երկնալույսերի, իսկ ո՞վ շնորհեց քեզ կայծկլտուն փայլը աստղերի և երկնի բարձրերից ցած առաքեց, ինչպես մարգարեն է ասում. «Ստեղծեց մեծ լուսատուները... իբրև իշխան ցերեկվա՝ Արևը դրեց... Լուսինը և աստղերը՝ իշխան գիշերվա» (Սողոմոն. 136, 7-9): Չկա Ստեղծողը, հապա այդ ո՞նց է կառույցի գեղեցկությունը լուռ վկայում մեծությունը կառուցողի. «Քանզի վեհությունից կառույցի գեղեցկության՝ ճանաչվում է մեղավորը հորինվածքի»: «Ասաց անմիտը իր սրտի մեջ, թե՛ չկա Աստված»: Նշանակում է՝ աշխարհում կատարվող ամեն բան, որ լինում է, ստեղծվում, կառուցվում, ունենում է իր արարողը ու կարգադրողը. բայց ահա. միայն այս ձախավեր աշխարհն է, որ չունի կառավարիչ: Եթե չկա Աստված՝ դու այդ ո՞նց ես բնակվում նրան պատկան տիրույթներում: Դու առաք-փառաք օթևանել ես Աստծո տանը և ցանկություն չունես ճանաչելու նրա տիրոջը: Արդ, դու կամ շնորհակալ եղիր կացարանի համար, կամ հեռացիր այնտեղից»:

ԺՌՌՆԱԼԻՍՏԱԿԱՆ ՓԱՍՏ, ԴԻՏԱՆԿՅՈՒՆ, ՁԵՎ

ԵԶՐՈՒՅԹՆ ԻՆՔՆԻՆ

Եզրույթը, որպես այդպիսին, չկա, սակայն եզրույթի գիտակցությունն «առկա է օդում»: Իդեալ, «օդում» և ոչ միայն այնտեղ կան աշխարհի բոլոր հարցերի պատասխանները. որքան փականք՝ նույնքան էլ բանալի: Այո, բոլոր հարցերի պատասխանները կան: Ինչու՞ չենք գտնում հաճախ կամ ինչու է երկար թվում փնտրու՞թք: Որովհետև ճիշտ չենք ձևակերպում մեզ մտահոգող հարցը: Հենց որ ճիշտ ձևակերպենք՝ այն անպայման կգտնվի:

Ասածիս նյութական և միանգամայն երկրային հավաստումը. ինտերնետային տարատեսակ որոնողական ծրագրերում բացարձակ ստույգությամբ ձևակերպված հարցն է, որ ստանում է իր պատասխանը:

Աստժո «ինտերնետում» էլ է այդպես: Ի վերջո. չէ՞ որ մենք պարզապես անհաջող փորձում ենք կրկնել այն, ինչ ԻՆՔՆ արել է:

Դառնանք «ժուռնալիստական փաստին»: Մեր գործը դյուրացնելու համար ենք «փաստ» երևույթն «անդամահատել»: Մեր կարծիքով՝ փաստերի հիերարխիայում «ժուռնալիստական փաստ»-ը միջանկյալ դիրք է գրավում: Նրանից վար «կենցաղային փաստն» է, որը զուրկ է հանրային որևէ արժեքից և հետաքրքրությունից, վեր՝ գիտապատմականը, որն, իր ամբողջության մեջ, շատ ավելի բարդ և բազմաշերտ երևույթ է, ենթադրում և պարտադրում է համապարփակ վերլուծություններ և պատճառահետևանքային կապերի բացահայտում, ինքնին շատ ավելի մեծ հանրային արժեք ու նշանակություն ունի, քան ժուռնալիստական փաստը: Այլ կերպ՝ գիտապատմական փաստը կարելի է (իր համապատասխան ընդգրկմամբ՝ աշխարհ, տարածաշրջան, երկիր) օրակարգ ձևավորող, զարգացումներ և ապագա կանխորոշող, տարատեսակ փոխազդեցություններ և փոխներգործություններ ենթադրող փաստ համարել նաև:

Այս դասակարգման շնորհիվ ստեղծված շերտերն, անշուշտ, ստերիլ և ինքնաբավ չեն, այլ՝ հաղորդակից: Եվ երկու դեպքում էլ փոխներթափանցող: Բացի այն, որ նույն երևույթի տարբեր

շերտեր կարող են տարատեսակ փաստեր ներկայացնել միմյանցից, նաև՝ կենցաղային փաստը կարող է վերածվել ժուռնալիստականի, այն էլ, իր հերթին, գիտապատմականի: Ժուռնալիստական փաստը կարելի է բնորոշել որպես հրատապ, խիստ ուշագրավ և նոր շերտեր բացահայտող ինֆորմացիա: Այս հատկանիշներից ցանկացածի առկայությունն ինքնին արդեն իսկ բնորոշում է ժուռնալիստական փաստի առկայությունը, ասել է, թե՛ ժուռնալիստի առկայության անհրաժեշտությունը նաև, որը պետք է լայն զանգվածներին հասցնի հիշյալ փաստը: Ժուռնալիստական փաստեր են իրենցից ներկայացնում ոչ միայն արդեն իսկ հիշատակված նորությունները, այլև՝ «լավ մոռացված հինը» կամ մինչ այդ խիստ նեղ շրջանակի սեփականությունը հանդիսացած ինչ-որ փաստ, որը իր նորահայտության, հրատապություն ձեռք բերելու առումով կամ էլ «լրացվելու» պարագայով սկսել է արդեն համապատասխանել նշված չափանիշներին:

Ժուռնալիստական փաստերը, կրկնում ենք՝ նորություններից զատ, բազմաթիվ են և բազմաբնույթ: Յուրաքանչյուր ժուռնալիստական փաստ պետք է, անպայման, ունենա իր սկզբնաղբյուրը, հիմնավորված լինի և իր մեջ, անշուշտ, լայն հանրության համար անակնկալ պարունակի:

Զորօրինակ. «Իրադարձությունների փոքր հանրագիտարանը» (Խարկով, 1999 թ.. «Յեռացող հազարամյակ» մատենաշար, «Տորսինգ») օգոստոսի 17-ին տեղի ունեցած իրադարձությունների թվարկումը սկսում է հետևյալով. «Ք.Ծ.Ա. 1042 թ. Յայաստանում ընտելացվել է առաջին այծը»: Փաստի աղբյուրը կոնկրետ չի նշված, սակայն գրքի վերջում նշված են հիմնական 16 աղբյուրներ (ինչպես նաև՝ ՁԼՄ-ների հաղորդում-հրապարակումները): Բնականաբար՝ այդ ծավալի մեջ դժվար է փնտրել-գտնել սկզբնաղբյուրը, սակայն հանրագիտարանն ինքը կամ էլ որևէ այլ հիշատակում կարող է ժուռնալիստական փաստի սկզբնաղբյուր դառնալ՝ հղման պայմանով, իհարկե:

Նվազ կարևոր կամ հետաքրքիր ժուռնալիստական փաստ չէ նաև, օրինակ, որ դարձյալ Ք.Ծ.Ա. 709 թ. չինացի Չու Ֆուն է աշխարհում առաջինը նկարագրել արևի խավարումը:

Ժուռնալիստական փաստ է նաև այն, որ, օրինակ, Ալեքսանդր Պուշկինը իր օրագրում 1821 թ. հուլիսի 18-ի էջում ֆրանսերենով նշել է, որ ստացել է Նապոլեոնի մահվան լուրը: Սա ինքնին ոչինչ չէր նշանակի սովորական մարդու համար: Բայց ժուռնա-

լիստն այնքան էլ սովորական մարդ չէ (ոչ մեկը այդպիսին չէք, չէ՞): Ժուռնալիստը այս կամ նմանատիպ այլ փաստերի կամ էլ դրանց արձանագրումների հանդիպելիս պետք է, համենայն դեպս, ինչ-ինչ համադրումներ կատարի, փորձի հետաքրքիր ինչ-որ բան գտնել իր համար: Տվյալ դեպքում, համենայն դեպս, մայի Նապոլեոնի կենսագրությունը. ու իր համար կհայտնաբերի, որ վերջինս իր մահկանացուն կնքել է 1821 թ. մայիսի 5-ին: Պատկերացրի՞ք, թե որքան «մեծ» է եղել աշխարհը ընդամենը երկու դար առաջ: Եվ՝ ոչ միայն: Փակագծերի մեջ. մտածեք-գտեք-գրեք, թե, ըստ ձեզ, ինչ գործոններ են այդքան «մեծացրել» մեր երկրագունդը:

19-րդ դարի վերջերին ժուռնալիստ Ուիլյամ Սթեդը մի պատմվածք է գրում հսկայական մի նավի կործանման մասին, որը ջրասույզ է լինում՝ ապրիլյան մի գիշեր զարնվելով այսբերգին: Որպես հիմք ընդունելով հիշյալ պատմվածքը՝ ամերիկացի ֆանտաստ գրող Մորգան Ռոբինսոնը նույն սյուժեով և ֆարուլայով մի վեպ է գրում: Վեպում նկարագրված հսկայական նավն ուներ 70 հազար տոննա ջրատարողություն, 245 մետր երկարություն, տեղափոխում էր շուրջ 3 հազար ուղևոր, և կրում էր «Տիտան» անունը: Այս երկու գործերը շատ ավելի հանրահայտ և փնտրվող դարձան շատ տարիներ անց, երբ 1912 թ. ապրիլին Ամերիկայի ափերի մոտ այսբերգին զարնվելով ջրասույզ եղավ «Տիտանիկը», որի բոլոր չափանիշները գրեթե համընկնում էին պատմվածքում և վեպում նկարագրվածին: Եվս մեկ ցավալի փաստ. ժուռնալիստ Ուիլյամ Սթեդը, որի պատմվածից էլ, փաստորեն, սկսվել էր ամեն ինչը, կործանված նավի շուրջ 1.500 զոհերից մեկը դարձավ...

Ժուռնալիստական փաստերի շարքին կարելի է դասել այն բազմաթիվ մոլորությունները, որոնց գերին կամ զոհն ենք դառնում մենք հաճախ: Միայն մեկ օրինակ՝ «կոկորդիլոսի արցունքներ» արտահայտությունը բոլորիդ է հայտնի: Դա ինչ-որ ձևական կարեկցանքի, սեփական մեղքի գիտակցության, ճարահայտյալ ինչ-որ քայլի գնալու հոմանիշ է դարձել: Մինչդեռ դա բնավ էլ այդպես չէ: Խնդիրը շատ ավելի պարզ է. այդ ազահ գիշատիչները մեծ մսակտոր են պոկում, որը դժվարությամբ են փորձում տեղավորել իրենց ամենակուլ երախում: Այդ ժամանակ ու դրա պատճառով նրանք տենդորեն սկսում են օդ կուլ տալ, որը ճնշում է նրանց արցունքագեղձերը, որից էլ այն տպավորությունն է ստեղծվում, թե նրանք լաց են լինում:

Աշխարհում տեղի ունեցած մեծագույն, թեկուզև ժամանակավոր սխալներն էլ են ժուռնալիստական փաստեր: Ամենաարտառոցը. Հարավային Աֆրիկայում առաջին անգամ հայտնաբերված ալմաստի հանքավայրերին ոչ ոք երկար ժամանակ ուշադրություն անգամ չէր դարձնում. ալմաստի բնակտորները համարում էին ... ջայլամի արտաթորանք:

Նույն շարքին կարելի է դասել նաև աշխարհում այսօր էլ չեղյալ չհայտարարված բազմաթիվ անհեթեթ օրենքներ: Ջորջիանակ. «Ֆրանսիայի ողջ տարածքում՝ խաղողի այգիներում խստիվ արգելվում է թռչող ափսեների վայրէջքը կամ կանգառը»: Չինաստանում էլ դարեր շարունակ ապօրինի է համարվում խեղդվող նարդուն փրկելը. դա դիտարկվում է որպես միջամտություն նրա ճակատագրին: Թաիլանդում հանցանք է համարվում առանց ներքնահագուստի տանից դուրս գալը: Կանադացիներն էլ օրենքով արգելել են թռչող ինքնաթիռ բարձրանալը: Նոր Շոտլանդիայում (Կանադա) արգելվում է գազոններ ջրել անձրևի ժամանակ: Կալիֆորնիայում որսորդական արտոնագիր չունեցողներին արգելվում է մկան թակարդ դնելը: Ինչ-որ մի քաղաքում էլ արգելվում է ձուկ որսալ՝ ընձուղտի մեջքին նստած: Միսսուրիում արգելվում է սկյուռիկներին բարկացնելը: Մասաչուսեթսում հոգեհանգիստներին մասնակցողները իրավունք չունեն երեք սենդվիչից ավելին ուտել: Քլիվլենդում կանանց արգելվում է լաքապատ կոշիկներ հագնել, քանի որ տղամարդիկ կարող են տեսնել նրանց ներքնազգեստի արտացոլանքը: Թեննեսիում արգելվում է լասո օգտագործելը՝ ձուկ որսալիս:

...Կանգ առնենք, այլապես այսպես կարելի է գրեթե անվերջ շարունակել: Որը, իմ կարծիքով, դուք ինձնից շատ ավելի լավ կանեք՝ սա ևս համարելով «ինքնաառաջադրանք»:

Հավարտ, նշենք նաև, որ գրքի առաջին՝ պատմական մասում, դարաշրջանների ընդհանուր բնութագիրը ևս հիմնականում տրված է ժուռնալիստական փաստերի միջոցով:

ԴԻՏԱՆԿՅՈՒՆ

Խիստ կարևոր է փաստին, երևույթին և նյութին մերձենալու ճիշտ դիտանկյունը: Հիշեք, որ ամեն ինչ էլ՝ հարաբերական է: Որպես դրա ամենաակնառու օրինակ. աֆրիկյան սևամորթների մոտ սատանան ... ճերմակ է:

Ճիշտ դիտանկյունը մի դեպքում միայն կարող է ապահովվել. երբ դուք ազնիվ, անաչառ, համապարփակ հայացք ունեք: Եվ, հիարկե, մշտապես նտածում եք...

Նախ. ժամանակը դիտարկեք ժամանակակիցների հայացքով: Եվ լավ կլինի՝ ոչ մեկ: Վերցնենք, օրինակ, Խորենացու «Ողբ...»-ը: Անշուշտ պատմական և անաչառ փաստաթուղթ է, բայց երբ այն «ամրապնդում ես» նրա իսկ ժամանակակցի՝ Փավստոս Բուզանդի, ենթադրենք, հետևյալ արտահայտությամբ. «Իրավունքը մեռավ. եթե այն գոյություն ունենար, բայց կորած լիներ՝ կփնտրեինք և կգտնեինք...», ժամանակաշրջանի բնութագիրն առավել ծանրակշիռ է դառնում և շատ ավելի հավաստի:

Ընդհանրապես ժամանակակիցների գրածը՝ անգնահատելի փաստաթղթեր են տվյալ ժամանակաշրջանը խորապես ըմբռնելու, գնահատելու և վերարտադրելու առումով: Միխայիլ Լերմոնտովը «ժուռնալիստը, ընթերցողն ու գրողը» վերնագրով մի բանաստեղծություն ունի, որն էական պատկերացում կարող է տալ 19-րդ դարի կեսերի ռուս գրականության, ժուռնալիստիկայի և դրանց ընկալումների մասին՝ իր իսկ խոսքերով ասած՝ «անվավա Ռուսաստանում»:

Բոլորիդ է հայտնի հետևյալ արտահայտությունը. «1492 թ. Քրիստափոր Կոլումբոսը հայտնագործեց Ամերիկան»: Ու՞մ համար հայտնագործեց: Եվրոպացիների: Որովհետև Ամերիկայի բնակիչների համար Ամերիկան, պարզապես, իրենց տունն էր: Սա եվրոպակենտրոն հայացք է աշխարհին, որին փոխարինելու պետք է գա աշխարհաքաղաքացու ընդգրկում հայացքը: Նույնը՝ փոքր-ինչ այլ դիտանկյունով վերաբերում է նաև այլ «հայտնագործությունների». մոլորակ, նյութ, հատկություն... Անհեթեթ է պարզապես: Արարիչն այդ ամեն ինչը ՍՏԵՂԾԵԼ է, միմյանց հետ հստակ փոխկապակցություններով հանդերձ, ու մենք ոչ մի բան չենք հայտնագործում, այլ, պարզապես, դրանք կամ էլ դրանց մի մասը գտնում-բացահայտում ենք ինքներս մեզ համար: Հայտնագործում են՝ չեղածը: Եղածը, լավագույն դեպքում, բացահայտում են, փորձում հասկանալ, նկարագրել... Այնպես որ՝ միակ հայտնագործողն Արարիչն է:

Ճիշտ դիտանկյունը հիմնվում է ամբողջական ընկալման վրա նաև: Ֆրագմենտար ինչ-ինչ պատկերներից կամ դիտարկումներից ամբողջական-ընդհանրական եզրակացության հանգել հնարավոր չէ: Դարձյալ դիմենք դասականներին. հանճարեղ Լե-

ոնարդոյի «Կանխագուշակումներում» կարդում ենք. «872. Ամենահեռավոր երկրների մարդիկ միմյանց հետ կխոսեն և կպատասխանեն միմյանց»: Եթե սահմանափակվենք այսքանով՝ միանգամայն օրինաչափորեն կարելի է ենթադրել, որ Մեծ Լեոնարդոն XV դարում մեզ համար կանխագուշակել է հեռախոսը, ռադիոն, ինտերնետը... Գուցե: Բայց այդ երկտողը վերնագրված է «Մի երկրից մյուսը նամակներ գրելու մասին» և միայն վերնագրով հանդերձ մենք կարող ենք օբյեկտիվ և ճշմարտաման գնահատական տալ ողջ մտքին:

Անհրաժեշտ է գերծ լինել և վեր մնալ ցանկացած նախապաշարմունքից և կանխակալությունից ու բացարձակապես անաչառ, անկողմնակալ լինել: Հիշում եք գրքի «Հյուսիսսփայլին» նվիրված հատվածն անշուշտ: Եղած ողջ ինֆորմացիային հավելենք նաև «Ս.Նազարյան. «Կենսագրական ակնարկ»-ի հեղինակ Նիկոլ Աղբալյանի հետևյալ փաստագրումը. «Նրա (Ս.Նազարյանի) թաղումը կատարվեց մեծ շուքով: ...Բազմաթիվ պսակներ կային: Ներկա էր մեծ բազմություն...»: Կարելի՞ է, արդյոք, այս ամենի համադրումից գալ այն եզրակացության, որ մենք միայն «մեռել ու ճոխ թաղումներ սիրող և կազմակերպող ազգ ենք», մանավանդ որ մերն ու մերն է «Գնա մեռի՝ արի սիրեն» արտահայտությունը:

Ոչ, երիցս ոչ: Փաստերն այլ բան են ասում: Եվ ահա թե ինչու:

«Հյուսիսսփայլի» տպաքանակն, իրոք, երբեք 500-ի չի հասել: Որպես ելակետ ընդունենք բաժանորդների 350-400 թիվը: Ընթերցողների մոտավոր թիվը ստանալու համար անհրաժեշտ է այդ թվերը բազմապատկել նվազագույնը 3-ով: Կստանանք 1050-1200 ընթերցող: Թող դրանց ընդամենը 5-10 տոկոսը պսակ բերած լինի: Իսկ այդ թվերը միանգամայն բավարար են՝ հիմնավորելու համար «մեծ շուքով»-ը, «մեծ բազմություն»-ը և «բազմաթիվ պսակներ»-ը: Այսինքն՝ այս հիմքերով անհնարին է, օբյեկտիվորեն, գալ այն եզրակացության, թե մենք մեռել ու թաղումասեր ազգ ենք:

Դիտանկյունը տեսնել-հասկանալ-գնահատելու ևս մի օրինակ. համճարեղ Իսահակ Նյուտոնը ոչ միայն իր բուն գիտությամբ է զբաղվել. այլև գրել է հին աշխարհի պատմությունը: Ֆանտաստ գրող Հերբերտ Ուելսը՝ աշխարհի համառոտ պատմությունը՝ մինչև XX դարի սկիզբը:

Անշուշտ հետաքրքիր է կարդալ՝ համեմատելով դրանք պրոֆեսիոնալ պատմաբանի դիտանկյունների հետ: Համոզված եմ՝ խիստ հետաքրքրաշարժ և ուշագրավ փաստերի ու մեկնաբանությունների կհանդիպենք:

Մեր օրերում, երբ ՏԶՏՄ-ներն են, ըստ էության, ձևավորում հանրային օրակարգը՝ որոշելով, թե մենք «ինչ», «ինչպես» և «երբ» պետք է իմանանք և մտածենք, դիտանկյան համակողմանիությունը առավել մեծ նշանակություն և արժեք է ձեռք բերում: Նույն լուրի մեջ անգամ տարբեր շեշտադրումները կարող են էապես ուղղորդել ընթերցողի-ունկնդրի-ակնդրի մտածողության վեկտորը: Ամենապարզ լուրի մեջ անգամ: Ենթադրենք՝ տարերային աղետից գյուղական որևէ անհատական տնտեսության կրած վնասների մասին: Դրա մեղավորը կարող է լինել ինչպես բնությունը, այնպես էլ տեղական իշխանություններից մինչև կառավարություն ու խորհրդարան, մինչև գլոբալացման մարտահրավերները, մինչև... ազարակատերն ինքը:

Այնպես որ՝ խոսելով փաստերը տեսակետներից և մեկնաբանություններից խստիվ տարանջատելու անհրաժեշտության մասին, չմոռանանք, որ նրբամտության դեպքում համապատասխան դրված շեշտն անգամ իր մեջ լուրջ քարոզչական լիցք է կրում և, անկախ իր թաքնված բնույթից, էապես ազդում է մարդկանց գիտակցության, հոգևոր աշխարհի վրա՝ որոշակիորեն կանխորոշելով նրա հետագա դիրքորոշումներն ու կենսագործունեությունը նաև: Քարոզչական լիցք ունի անգամ լուրերի հերթականության որոշումը:

Ի դեպ. ՏԶՏՄ-ների քարոզչական-գիտական-կրթական գործունեությունը կազմակերպվում է, հիմնականում, երեք հարթություններով: Խոսքն, անշուշտ, միջին և ստորին խավին է վերաբերում, որովհետև էլիտան՝ ընտրախավը, իր պահանջմունքները բավարարելու համար խիստ լայն ընտրության հնարավորություն ունի՝ ողջ աշխարհը, այնպես որ նրանք տեղական-գավառական-ոչ այնքան որակյալ տեղեկատվամիջոցների հույսին չեն բնավ:

I ճանապարհ. իջնում են հասարակությանը բնորոշ մակարդակի և փորձում են, խաղալով նրան հատուկ բնագոյների, կիսատեղեկացվածության վրա՝ լուծել քո առջև դրված խնդիրները:

II ճանապարհն այն է, երբ տեղեկատվամիջոցները զնուն են իրենց, հասարակությունն էլ՝ իր ուղիով: Ե՞րբ կհանդիպեն՝ Աստված գիտի:

III ճանապարհն այն է, երբ որակյալ լրատվամիջոցն իջնում է հասարակության մակարդակին, հետագայում աստիճանաբար նրան բարձրացնելով անհրաժեշտ ու պատշաճ հարթություն:

Ամենաճիշտն ու բարոյականն, անշուշտ, երրորդ ճանապարհն է, որն անպայման պետք է զուգակցվի գիտակրթական անհրաժեշտ գործունեությամբ, քանզի միայն այդ դեպքում է, որ թե երկիրը, թե քաղաքացին, թե հասարակությունը իրական առաջընթաց և ապագա կարող են ունենալ:

Անաչառ, օբյեկտիվ, անկողմնակալ դիտանկյան լավագույն օրինակներից է Ակուտագավայի «Թավուտուն» պատմվածքը, որն իր ձևով թեկուզ՝ խիստ ինքնատիպ ու աննախադեպ է ողջ գրականության համապատկերում:

ԶԵՎԻ ՈՐՈՆՈՒՄՆԵՐԸ

Տրամաբանորեն՝ հասանք ձևին: Ժուռնալիստական փաստը իր ճշգրիտ արտահայտությունը կարող է գտնել և, դրանով իսկ՝ արդյունավետ լինել ճիշտ ձևի մեջ միայն: Որովհետև այդ դեպքում է սոսկ, որ կարելի է երաշխավորված համարել նաև ճիշտ, համապարփակ և ամբողջական ընկալումը:

Մեծ առումով՝ ձևն այսօր շատ բան է որոշում. նյութի, ստեղծագործության արժեք և ապագա, ընկալում և տարածում: Որովհետև, նույնպես մեծ հաշվով, մարդկությունը բովանդակության հետ իր հաշիվներն արդեն վաղուց փակել է:

Մարդկության հիշելի պատմությունից մինչև Օծյալ Փրկչի ծնունդը բովանդակությունը ձևավորվել և Նոր Կտակարանով իր լրումին է հասել: Դրանից հետո արդեն՝ միայն ձևի որոնումների խնդիրն է հուզում համայն մարդկությանը: Եվ արդեն իսկ ավարտուն բովանդակության մեկնությունները, որոնք երբեմն-երբեմն որպես «նոր բովանդակություն» են ներկայացվում նաև: Միայն չկայացած լսարանը կարող է դա որպես այդպիսին ընկալել և ընդունել:

Եվ միշտ հիշեք. մեկ ճանապարհ գոյություն չունի: Ցանկացած պարագայում միշտ փնտրեք ու կգտնեք նաև մյուսները: Անգամ Արարիչը իրեն «հասնելու» երեք ճանապարհ է տվել. հավատքը, զգացողությունները, գիտելիքը:

Որպես ձևի իսկական հայտնագործություն ստորև՝ չեխ բանաստեղծ Պավել Վաշակի «Միլիոնի սոնետը», որը, ավելի հան-

ճարեղ հայերենի է թարգմանել Հովհաննես Հարությունյանը (Չեխ Հովիկը).

ՄԻԼԻՈՆԻ ՍՈՆԵՏ

1	6	2	9	3
7	5	3	9	6
6	8	8	0	6
9	0	4	5	3
8	3	5	2	4
9	3	3	4	2
8	2	3	1	2
2	9	1	3	4
3	7	2	8	8
7	7	3	9	8
9	6	5	2	5
7	5	6	5	7
8	0	9	6	7
9	2	9	0	5

1000000

Ձևի որոշակի փնտրտուք է նաև պարադոքսը: Որպես օրինակ՝ դրա վարպետներից մեկի՝ Ֆրանց Կաֆկայի պարադոքսներից մեկը.

«ԲԱԲԵԼՈՆԻ ԱՇՏԱՐԱԿԸ

Եթե հնարավոր լիներ կառուցել Բաբելոնի աշտարակը՝ առանց այն դեպի վեր բարձրացնելու՝ թույլ կտրվեր...»:

Ասելիքի ձևն անվրեպ գտնելու այսքան համճարեղ ձևերի հետ շփումը, անշուշտ, գեղագիտական և ստեղծագործական հաճույք պատճառեց ձեզ:

Փոխհատուցեք այն՝ հերթական ինքնաառաջադրանքով:

Եվ այսպես՝ նյութը:

Հավի կամ ձվի առաջնայնության պատմությունը (հավն է ձվից, թե՛ ձուն հավից) անհիշելի ժամանակներից է գալիս, և անլուծելի խնդիր է թվում:

Այո, թվում է: Ռոբվիետս, օրինակ, հավատացյալի համար խնդիրը շատ պարզ և լուծելի է. ձուն է հավից: Ռոբվիետս. «Աստված ասաց. «Թող ջրերն արտադրեն կենդանության շունչ ունեցող գեռուներ, և երկրի վրա և երկնքի տարածության մեջ թող թևավոր թռչուններ լինեն: Եվ եղավ այդպես: Աստված ստեղծեց ... ամեն տեսակ թևավոր թռչուններ՝ ըստ տեսակների: Աստված տեսավ, որ լավ է: Աստված օրհնեց դրանց և ասաց. «Աճեցեք, բազմացրեք և լցրեք ծովերի ջրերը, իսկ թռչունները թող բազմանան երկրի վրա»: Եվ եղավ երեկո, և եղավ առավոտ՝ օր հինգերորդ» («Գիրք Ծննդոց» 1, 20-23): Ասել է, թե՛ թռչունն է ստեղծվել:

Ու, բացի այս, քանի որ նախորդ՝ երրորդ օրվա Արարչագործությունը ևս, կողմնակիորեն՝ թեկուզ, հաստատում է մեր պնդման ճշմարտացիությունը, մեջբերենք նաև այն. «Աստված ասաց. «Թող երկիրը իր տեսակի և իր նմանության սերմը պարունակող, իր տեսակի միրգ տվող պտղաբեր ծառ աճեցնի երկրի վրա»: Եվ եղավ այդպես. հողը ամբողջ երկրի վրա ցանելու սերմը իր մեջ պարունակող դալար բույս և իր տեսակի սերմը իր մեջ պարունակող, միրգ տվող ծառ աճեցրեց: Աստված տեսավ, որ լավ է» («Գիրք Ծննդոց», 1, 9-12): Այսինքն՝ հավն է ստեղծվել, իր տեսակի սերմը՝ ձուն իր մեջ պարունակելով:

Ահա և ողջ նյութը՝ փաստ-դիտանկյուն-մեկնությամբ հանդերձ: Եզրակացությամբ՝ նույնպես: Գտեք այն մատուցելու լավագույն ձևը և ձեր դասախոսներն այն ըստ արժանվույն կգնահատեն:

Ֆելլինին իր հարցազրույցներից մեկում խոստովանել է, որ այն պահից ի վեր, երբ ինքն իրեն որպես ստեղծագործող է ընկալել՝ իր հետ, այսպես ասած, պարկ է ման ածել: Հոգևոր պարկ: Ռոբուն ամբարել է հանկարծակի ծնվող գաղափարները, դիտարկումները, մտքերը, որոնք հետո՝ ինչ-որ մի ժամանակ անպայմանորեն պետք են եկել իրեն: Ձեզ համար այդպիսի «պարկ» «կարեք» անպայման: Էլեկտրոնային կամ՝ ոչ: Միևնույն է: Կարևորը դրանում հավաքվող նյութն է, որը հետո, ինչ-որ մի ժամանակ, ձեզ անպայման պետք է գալու:

ԳՐԱՎՈՐ ԵՎ ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ժուռնալիստիկան փաստերի «հայտնաբերման», դրանց հետագա նշակման և շրջանառության մեջ դնելու առումով (այստեղ, ինչպես և նախորդ դեպքերում՝ նորությունները նկատի չունենք) կարևոր են, անշուշտ, աղբյուրները և դրանց հանդեպ եղած մոտեցումները:

Աղբյուրները երեքն են. կենդանի իրավիճակ՝ որը դիտարկում-պարզաբանում-արտապատկերում է ենթադրում. գիտակ-իրազեկ-մասնակից անձինք, ում հետ զրույցը միջոց է եղածը վերականգնելու-մեկնաբանելու-մատուցելու, և գրավոր աղբյուրներ, որոնք համադրական-հետազոտական-բացահայտող գործունեություն են ենթադրում՝ ժուռնալիստական այս կամ այն ժանրի ստեղծագործությունը մտահղացումից մինչև մատուցում հասցնելու համար:

Առաջին դեպքում հիմնականում գործում է ռեպորտաժի, երկրորդում՝ հարցազրույցի մեթոդը, իսկ երրորդ պարագայում ժուռնալիստի աշխատանքը մոտենում է հետազոտողի աշխատանքին:

Սակայն, մեծ մասամբ, այս երեք աղբյուրները՝ այս կամ այն հարաբերակցությամբ, համատեղ են հանդես գալիս:

Եվ եթե առաջին երկուսի պարագան շատ ավելի պարզ է ու հասկանալի, ապա երրորդի վրա արժե որոշակիորեն կանգ առնել:

Գրավոր աղբյուրները՝ փաստաթղթերը, արդեն իսկ տպագրված ինչ-որ նյութեր, օրագրեր, գրառումներ և այլն, օգտագործելու դեպքում և դրանից առաջ, լուրջ և մանրակրկիտ հետազոտության կարիք են զգում: Որովհետև միշտ չէ, որ այնտեղ արտահայտված այս կամ այն նկարագրություն-միտք-գաղափարը համարժեք է արտացոլված իրականությանը:

Խոսքն, անշուշտ, մեկնաբանություն-ընկալում-վերլուծությանը չի վերաբերում, այլ, ընդամենը, երևույթի, իրավիճակի կամ այլ նկարագրությանը: Որովհետև եթե առաջինը, բնականորեն սուբյեկտիվ պետք է լինի և է, ապա երկրորդը հստակ օբյեկտիվություն է պահանջում: Պլուտարքոսն, օրինակ, գրում է. «Ասում են՝ Կեսարն առաջինն է եղել, ով հանգել է այն մտքին, թե կարելի է բարեկամների հետ անհետաձգելի գործերի մասին խոսել նամակների միջոցով, երբ քաղաքի մեծությունը և բացառիկ

զբաղվածությունը հնարավորություն չեն տալիս անձամբ հանդիպել»:

Այս փաստի այլ հավաստումներ ևս պետք է փնտրել-գտնել Կեսարի կամ Պլուտարքոսի ժամանակակիցների մոտ, որպեսզի հնարավորություն ունենաս լիարժեքորեն պնդելու վերոհիշյալ վարկածը, քանզի հստակ նշված է.«ասում են»: Կամ ստիպված ես փաստելու, ուսումնասիրություններից հետո, իհարկե, որ այդպես միայն Պլուտարքոսին են ասել և այդ լուրերին, փաստորեն, միայն ինքն է վստահել:

Մեկ այլ տիպի օրինակ:

Անտոնիո Պիզաֆետտան, ով ֆլորենտացի ծովագնաց էր և մասնակցել է Ֆերնան Մագելլանի առաջին շուրջերկրյա նավարկությանը, Չարավային Ամերիկա այցելության մասին՝ Գաբրիել Գարսիա Մարկեսի խոսքերով, թողել է խիստ հավաստի վավերագիր հաշվետվություն, ուր, մասնավորապես, այսպիսի նկարագրություն կա. «Ես տեսա բազմատեսակ թռչուններ, այդ թվում և այնպիսիք, որոնք ընդհանրապես պոչ չունեին. ուրիշներն էլ կային, որոնցից էզը, պատրաստվելով ձու ածել՝ դա անում էր արուի մեջքին և այնտեղ էլ թուխս էր նստում: Այդ թռչունը ոտքեր չունի և նա մշտապես ապրում է ծովում: Ես տեսա նաև այնպիսի թռչունների, որոնք սնվում են միայն այլ թռչունների արտաթորանքով, և բացի այդ, որևէ այլ սնունդ չեն ընդունում: Ես հաճախ էի հետևում, թե ինչպես էր այդ թռչունը, որին «կազասելա» էին կոչում, թռչում ուրիշ թռչունների ետևից այնքան ժամանակ, մինչև վերջինս բաց չէր թողնում իր արտաթորանքը, որը և առաջինն անմիջապես բռնում էր և դրանից հետո հանգիստ էր թողնում հետապնդողին»:

Ի դեպ. այս և Պիզաֆետտայի այլ նկարագրությունները Մարկեսն իր Նոբելյան դասախոսության հենց սկզբում համարել է լատինամերիկյան գրականության ելակետերից:

Վերադառնա՞նք մեր խնդրին: Ինչպես արդեն նշեցինք, սա Մագելլանի առաջին շուրջերկրյա նավարկության մասնակից Անտոնիո Պիզաֆետտայի գրչին է պատկանում, վերաբերում է 1519 թվականին և կարող է նաև ռեպորտաժատիպ նյութ թվալ՝ նույն Լատինական Ամերիկայից: Գրառման թվականը պատահականորեն չնշեցինք: Օբյեկտիվ լինելու համար արժե նշել, որ եթե մենք նկարագրվածի հավաստիությունը փորձենք ճշտել այսօրվա մեր պատկերացումներով ու չափանիշներով՝ կարող ենք և սխալվել: Մի շատ պարզ պատճառով. անցած շուրջ 500 տարվա

ընթացքում կարող են Պիզաֆետայի տեսած և նկարագրած թռչունները, պարզապես, վերացած լինել և այս հիշատակումները նրանցից պահպանված միակ վավերագրերը կարող են հանդիսանալ: Այդ իսկ պատճառով էլ աղբյուրների, տվյալ դեպքում՝ Պիզաֆետտայի նկարագրածի հավաստիությունը հարկ է ճշտել նրա ժամանակակիցների թողած այլ հիշատակությունների համադրությամբ:

Խորհենք միասին. որտե՞ղ փնտրենք այլ վկայություններ: Ակնհայտ է, քանի որ խոսքը ծովային թռչունների մասին է՝ ծովերի մասին պատմող վկայագրերում: Ու՞մ մոտ. բնիկների վկայություններում կամ գրավոր այլ հաղորդագրություններում դրանք փնտրելը իմաստագուրկ է: Եվ ոչ միայն այն պատճառով, որ նրանք գիր չեն ունեցել: Հաղորդակցության և հիշատակումների այլ միջոցներ նրանք, անշուշտ, ունեցել են, և կարելի է փնտրել դրանցում: Սակայն իմաստ չունի, քանի որ դրանք նրանց համար խիստ սովորական և առօրյա երևույթներ են եղել, որոնք դժվար թե նրանք որոշեին «հավերժացնել»: Ուրեմն՝ ու՞մ մոտ փնտրել:

XV-XVII դարերը եվրոպացիների համար աշխարհագրական մեծ բացահայտումների դարեր էին: Ուստի միակ ճիշտ ճանապարհը նրանց մոտ փնտրելն է: Սկսենք ամենահանրահայտից՝ Քրիստափոր Կոլումբոսից ու եթե նրա մոտ որևէ հիշատակում չգտնենք, նոր միայն կանցնենք նվազ հռչակավորներին:

Հատված Քրիստափոր Կոլումբոսի առաջին ճանապարհորդության օրագրից: «(1492 թ.) Շաբաթ, սեպտեմբերի 29: Նավարկում էինք մեր ճանապարհով դեպի արևմուտք: Անցանք 24 լիգա, իսկ մարդկանց հայտնեցինք՝ 21 լիգա: Եղանակը հանդարտ էր, այդ պատճառով էլ ցերեկվա ու գիշերվա ընթացքում քիչ ճանապարհ անցանք: Տեսանք մի եղանապոչ (robitorcado) թռչուն: Այդ թռչունները ստիպում են հիմարուկներին (ծովային թռչունի տեսակ-հեղ.) ետ տալու կուլ տված ձուկը՝ այնուհետև իրենք են կուլ տալիս դա և միայն դրանով էլ սնվում են»:

Ակնհայտ է, որ խոսքը նույն թռչունների և նույն երևույթի մասին է: Պարզապես երկրորդ դեպքում՝ Կոլումբոսի պարագայում, այն նկարագրված է իրականությանը միանգամայն համապատասխան (այդպես եղել է և 500, և 1500, և 2500 տարի առաջ, այդպես եղել է և այսօր), մինչդեռ առաջին դեպքում, չնայած այն հավաստիացումներին, թե ինքը բազմիցս հետևել է դրանց, Պիզաֆետտան էապես շեղվել է իրականությունից: Կամ՝ միտումնավոր է խեղաթյուրել այն:

Որովհետև բացի իրենից՝ ոչ մի այլ ոք նման «հեքիաթներ» չի գրել: Այս մեկ փաստը բավարար է, որպեսզի մյուս հիշատակումների հավաստիությունը ևս կասկածի տակ դրվի:

Այստեղ շատ կարևոր է փնտրել նաև նույն այդ գրառումների տարբերակները, դրանց խմբագրումները և կամ նորովի մեկնաբանությունները: Դրանք կարող են իրենց առաջին տարբերակից էապես (շահեկանորեն կամ ոչ՝ դա միանգամայն այլ խնդիր է) տարբերվել և դրանց համադրումը շատ բան կարող է տալ՝ ճիշտ ճանապարհի փնտրել-գտնելու առումով: Տվյալ դեպքում տարբերակներ չկան:

Գրավոր աղբյուրները, սովորաբար, իրենց մեկնաբանական-վերլուծական մասով են հիմնականում փոփոխություններ կրում, սակայն դրանք էլ հենց իրենց հակառակ էֆեկտը կարող են ունենալ. չհանգելով այս կամ այն նախատեսված եզրակացությանը, կարող է ճշգրտվել-վերանայվել նաև հենց դրա փաստական-նկարագրական հիմքը՝ սկզբունք և մոտեցում, որին էլ հենց խորհուրդ է տրվում հետևել:

Խիստ կարևոր նշանակություն ունեն նաև ցանկացած բնույթի ծանոթագրությունները, որոնք ոչ միայն երևույթն ամբողջությամբ վերհանող մանրամասներ կարող են պարունակել, այլև հենց իրենք էլ իրենցից ժուռնալիստական փաստ կարող են ներկայացնել:

Երեք հանգամանք ևս՝ դարձյալ գրավոր աղբյուրների հետ կապված:

Առաջին. բերված օրինակների հերթականությունը սույն տեքստում պատահական չէ ընտրված: Իմաստը մեկն է: Եթե Պիգաֆետտան ծանոթանար իրենից շուրջ երեք տասնամյակ առաջ գրվածին՝ էապես կնվազեր նրա սխալվելու հավանականությունը: Խոսքն այստեղ հենց միայն Պիգաֆետտային չէ, որ վերաբերում է: Որովհետև վերջինս բազմաթիվ օբյեկտիվ պատճառներ ուներ Կոլումբոսի օրագրին ծանոթ չլինելու: Այսօր որևէ մեկս փոքր-ինչ օբյեկտիվ արդարացում իսկ չի կարող գտնել նախորդ նյութերին ծանոթ չլինելու համար: Ամեն ինչ էլ ու ամեն լեզվով էլ կա:

Երկրորդը. Կոլումբոսից օրվա գրառման գրեթե ամբողջական մեջբերումը ևս պատահական չէ: Այնտեղ խոսք է գնում ...խաբեության մասին. «Անցանք 24 լիգա, իսկ մարդկանց հայտնեցինք՝ 21 լիգա»:

Օրագրերը, սովորաբար, եթե խիստ լուրջ և հետևողական-
ժամանակագրական ուսումնասիրության մասին չէ խոսքը, այլ
ազատ ընթերցանության կամ էլ որևէ բան փնտրելու՝ սկզբից
մինչև վերջ չեն կարդում: Բացում են ինչ-որ էջ, հետո մյուսը և
այդպես շարունակ: Բայց, անգամ այդ դեպքերում, պարտավոր
ես բոլոր հարցերը մախ ինքդ քեզ համար, ապա և՛ քո ընթերցող-
ունկնդիր-ակնդիրի համար առավելապես մատչելի և համակող-
մանիրեն լուսաբանել:

Ենթադրենք բացել են հենց այդ էջը և գտել քո ուզածը, ինչ-
պես և մենք ենք արել: Քեզ մտահոգող հարցի պատասխանը՝
գտար, բայց և՛ լրացուցիչ հարցեր առաջացան: Առաջինը՝ ինչու՞
էին խաբում մարդկանց: Գրեթե անհնարին է, որ ծագող հարցերի
պատասխանները չգտնես նույն այն փաստաթղթում, որից օգտ-
վում ես:

Ետ գնանք. «Կիրակի, սեպտեմբերի 9:... Ծովակալը վճռեց
անցած ճանապարհը «ավելի պակաս հաշվել, քան գնում էինք
իրականում՝ այն նկատառումով, որ եթե ճանապարհորդությունը
երկարատև լինի, մարդիկ չսարսափեն և խուճապի չմատնվեն»:

Ճերմակ սուտ, որը ոչ թե մարդու բարոյական նկարագրի, այլ
հոգեբանական կերպի հետ առնչություն ունի:

Պետք չէ, ամենաանհույս դեպքերում անգամ, հուսահատեց-
նել մարդկանց. նրանց պետք է, ընդհակառակը, հույս և հավատ
ներշնչել, քանզի միայն այդ դեպքերում է, որ նրանք ընդունակ
են անհնարին անգամ հնարավոր դարձնելու:

Եվ Կոլումբոսը հրաշալիորեն գիտակցել է դա: Այդ է վկայում
նաև սեպտեմբերի 22-ի գրառումը. «Չենց իմ ուզածով է այս հան-
դիպակաց քամին, որովհետև իմ մարդիկ շատ են հուզվում՝ կար-
ծելով, թե այս ծովերում չեն փչում (բարենպաստ) քամիներ՝ Իս-
պանիա վերադառնալու համար»:

Ակնհայտ է, որ Կոլումբոսը ժամանակավոր դժվարությունը՝
հանդիպակաց քամու պատճառով իր դանդաղ ընթացքը դեպի
Յնդկաստան, էապես ստորադասում է կարևորագույնին՝ վերա-
դարձի հույսին, հավատին, հնարավորությունը:

Եվ, վերջապես, երրորդը, ինչ մնաց մեզ որոշելու. ի՞նչ է «լի-
զա»-ն:

Դե, դա արդեն դուք ինքներդ կանեք: Առանց ինձ:

Փակագծերի մեջ. նույն սկզբունքայնությամբ և հետևողակա-
նությամբ վերաբերվեք մյուս աղբյուրներին ևս:

ԻՆՉԻՑ, ԻՆՉՊԵՍ ԵՎ ԻՆՉՈՒ Է ՍԿՍՎՈՒՄ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Ժ ուռնալիստիկան, աներկբա, ստեղծագործական մասնագիտություն է: Սակայն՝ ամենօրյա, հարատև ստեղծագործություն, որը որևէ պահ չի դադարում: Ստեղծագործությունը սկսվում է նյութի գաղափարից և, ըստ նրանում դրված ստեղծագործական լիցքի՝ շարունակվում նաև... «սպառողի» մոտ և համար:

Ստեղծագործություն է նաև, որովհետև յուրաքանչյուր նյութ իր ուրույն մոտեցումն ու իրականացումն է պահանջում, որը, ինչպես արդեն ասացինք, պարզապես, չի կարելի կրկնել այլ, թեկուզ և՛ համանման նյութերի դեպքում: Որովհետև չկան բացարձակապես նման թեմաներ: Եվ նյութը հետաքրքիր, ուշագրավ ու գնահատելի է դառնում սոսկ այն դեպքերում, երբ ժուռնալիստն ընդգծում է ոչ թե թեմաների-երևույթների-դեպքերի ընդհանրությունները, այլ բնութագրական տարբերությունները:

Այնպես որ՝ նույն հնարքը բազմիցս մի օգտագործեք: Կծանձրանաք ինքներդ և՛ կծանձրացնեք սպառողին:

...Շատերն են ականատես, թե ինչպես, օրինակ, խոշոր մարզական մրցապայքարների ընթացքում (թե թիմային՝ ֆուտբոլ, հոկեյ և այլն, թե անհատական մարզաձևերի դեպքում) բազմաթիվ մարզասերներ «զինված են» ռադիո կամ էլ անգամ փոքրիկ հեռուստաընդունիչներով: Ի՞նչ եք կարծում՝ ինչ են դիտում կամ լսում նրանք: Այն, ինչ տեղի է ունենում հենց նույն այդ մարզահրապարակում՝ իրենց իսկ աչքի առաջ: Պարզապես «դեպքի վայրից» ուղիղ ռեպորտաժ հաղորդող ռադիո կամ հեռուստատեսային լրագրողը սովորական հանդիսատես-մարզասերի ուշադրությունը կարողանում է վարպետորեն կենտրոնացնել այն էական ու կարևոր հանգամանքերի վրա, որոնք առանց ժուռնալիստական միջամտության կարող էին հավուր պատշաճի չկարևորվել կամ էլ՝ ընդհանրապես չընկալվել: Սովորական հանդիսատեսի ուշադրությունը «ցրվում է» ողջ համապատկերի վրա՝ էապես դժվարացնելով առաջնային-կարևորը երկրորդականից ու անկարևորից տարբերակելը. բազմաթիվ դրվագներ նրանց անհասկանալի ու անընկալելի կմնան այդպես էլ՝ խաղի կանոնների

խախտումներ, անհրաժեշտ և արժեքավոր զուգահեռներ, և այլն, որոնք էլ, ի վերջո, ամբողջացնում և արժևորում են տվյալ դեպքում մարգախաղի պատկերը: Եվ դա շատ բնական է. ամեն ոք չէ, որ քաջատեղյակ է ամեն ինչին և ինքնուրույն կարող է կողմնորոշվել տվյալ իրավիճակում և նրան օգնության է հասնում ժուռնալիստ-մեկնաբանը՝ կողմնորոշելով իր փորձով, գիտելիքներով և այնքան անհրաժեշտ մեկնաբանություններով:

Սա՝ առօրյա և ոչ այնքան էական իրավիճակներում: Հարցն առավել բարդանում է այն դեպքերում, երբ քննարկման կամ դիտարկման առարկան է բարդանում և մեծանում, երբ խնդիր է առաջանում հասարակական կարծիքի ձևավորման և այն հաշվի առնելու առումով, որը ժողովրդավարության պայմաններում առաջնահերթ ուղենշային նշանակություն և արժեք ունի:

«Մեր կառավարությունը հիմնված է մարդկանց կարծիքի վրա,-գրում էր ԱՄՆ հիմնադիր հայրերից մեկը՝ Թոմաս Ջեֆերսոնը 1787 թվականին,- և ամենից առաջ մենք պետք է հետևենք այդ կարծիքին, և եթե ինձ իրավունք վերապահվի որոշել, թե մեզ ի՞նչ է պե՞տք. կառավարություն առանց թերթերի, թե՞ թերթեր՝ առանց կառավարության, առանց մի պահ անգամ վարանելու կընտրեն վերջինը»:

Ժամ առ ժամ խտացող և փոքրացող աշխարհում, ուր գրեթե միաժամանակ միլիոնավոր իրադարձություններ են տեղի ունենում, անգամ ֆիզիկապես դժվար է դրանք պարզապես ընկալելը կամ՝ դրանց տեղեկանալն ընդամենը, ուր մնաց համադրել-հակադրել-վերլուծելը և ինչ-ինչ եզրահանգումների գալը: Եվ հենց նշված առումներով էլ խիստ կարևորվում և արժևորվում է ժուռնալիստի մասնագիտությունը՝ անկախ նրանից, թե ինչ բնութագրում է տրվում նրան. «կամո՞ւրջ», «միջնո՞րդ», թե՞ «սպասարկու»:

Ցավոք, չեն հիշում ով, բայց, կարծում են, շատ դիպուկ և տարողունակ է բնութագրել ժուռնալիստի առաքելությունը. ***«Լուսավոր ապագայի մասին մտահոգվում են քաղաքական գործիչները, լուսավոր անցյալի մասին՝ պատմաբանները, լուսավոր ներկայի մասին՝ ժուռնալիստները»:***

Եվ եթե առաջին երկուսի հաջողությունը կարող է և կասկածների տեղիք տալ, ապա ժուռնալիստի պարագայում դա պետք է պարզապես բացառվի. նրա առաքելությունն ակնհայտ է և իրագործվում է բոլորի աչքերի առջև և արդյունքներն էլ էական կաս-

կածների տեղիք չպետք է տան: Չէ՞ որ հայելին անդրադարձնողի իր գործառույթը չի կարող որևէ այլով փոխարինել, քանզի, այդ դեպքում, ինքն արդեն իսկ կդադարի հայելի լինելուց և կվերափոխվի բոլորովին ուրիշ բանի: Այլ անունով, բնականաբար:

Իսկ ինչի՞ց է սկսվում, ի վերջո, ստեղծագործությունը:

Ինչո՞ւ:

Եվ որ նվազ կարևոր չէ՝ ինչպե՞ս:

Այդ «գործընթացի» փայլուն բնութագիրը կարելի է գտնել հանրահայտ Ջանի Ռոդարիի «Երևակայության քերականությունը» գրքում: Ահա թե ինչ է գրում նա գրքի երկրորդ «Լճակի մեջ նետված քարը» գլխում.

«Եթե լճակի մեջ քար նետես, ջրի մակերևույթի վրա կառաջանան համակենտրոն շրջանաձև ալիքներ՝ իրենց շարժման մեջ առնելով տարբեր հեռավորությունների վրա գտնվող, տարբեր հետևանքներ հարուցող ծաղիկներ ու եղեգներ, թղթե նավակներ և ձկնորսական խայծեր: Առարկաները, որ գոյություն ունեին ինքնին, անդորրի կամ նիրհի վիճակում, կարծես թե կենդանանում են, նրանք հարկադրված են արձագանքել, իրար հետ փոխգործակցության մեջ մտնել: Շարժումը տարածվում է լայնքով ու խորքով: Քարը, սլանալով ներքև, դետուղեն է հրում ջրիմուռներին, վախեցնում է ձկներին. հասնելով հատակին, քարը տարտղնում է տիղմը, բախվում է ջրի հատակին վաղուց մոռացված իրերին, որոնցից ոմանք բացվում են, մյուսները, ընդհակառակը՝ պատվում են ավազով: Մի կարծ ակնթարթում տեղի են ունենում բազում իրադարձություններ կամ միկրոիրադարձություններ: Ցանկության ու ժամանակի առկայության դեպքում իսկ հազիվ հնարավոր է այդ բոլոր իրադարձությունները առանց բացառության արձանագրել:

Այդպես էլ **ԲԱՌԸ**, որ պատահաբար լսվել է, մարդու ուղեղում տարածվում է լայնքով ու խորքով, հարուցում է շղթայական արձագանքների անվերջ շարքեր, իր «հարձակումով» դուրս նետելով ձայներ ու կերպարներ, զուգորդումներ և հիշողություններ, պատկերացումներ ու երազներ: Այդ գործընթացը սերտորեն առնչվում է փորձի ու հիշողության, երևակայության ու ենթագիտակցության հետ և բարդանում է նրանով, որ բանականությունն անտարբեր չի մնում, անընդհատ խառնվում է, վերահսկում, ընդունում կամ մերժում, ստեղծում կամ կործանում»:

Մեկ վերապահում ընդամենը. ընդգծված «ԲԱՌԸ» բառից հետո փակագիծ դրեք և ավելացրեք՝ միտք, գաղափար, թեմա բառերը և ամեն ինչ իր տեղը կընկնի. ահա հենց այդպես էլ սկսվում է ստեղծագործությունը:

Մնացյալն արդեն դիտողականություն է կոչվում, վերլուծելու ունակություն, փորձ, շահագրգռություն, պատասխանատվություն, ինքնուրույն մտածելու կարողություն, համոզմունքներ և այլն, որոնք, սակայն, զալիս են լրացնելու և ամբողջացնելու այն, ինչն անընդմեջ ստեղծագործական գործընթաց ենք անվանել արդեն:

ԵՐԵՔԱԿԱՆ ԴԱՍ

Երեք սկզբունքային դաս...

... **Ո**րոնք չնայած նրան, որ անձնական են, սակայն չէին ներկայացվի, եթե համընդհանուր և կողմնորոշիչ բնույթ չունենային:

Դաս առաջին. դասընկերոջս հետ Մոսկվայում պայմանավորվեցինք Սուրեն Քոչարյանի հետ՝ հարցազրույցի համար: Նոր էր հիվանդանոցից տուն եկել: Հանդիպմանը նախորդող օրերին նստեցի ու մի, երկի թե երեք կամ չորս գիրք կարդացի. երկու-երեքն իր մասին, մյուսը՝ իր կազմած կոմպոզիցիաների գիրքը: Հասավ հանդիպման օրը: Սուրեն Քոչարյանը պառկած էր անկողնում: Ամենայն հավանականությամբ դեռ վատառողջ էր, բայց, երկի թե, չէր կարողացել մերժել հայ ուսանող պատանիների խնդրանքը: Բարևեցինք: Նստեցինք:

Ու...ես...սկսեցի...

Հիշեցնեմ, որ երեք թե չորս գիրք էի կարդացել հենց այս հանդիպման համար ու հարցս, որը ձևակերպեցի, տևեց երկի թե մի հինգ րոպե: Գուցե ավելի, գուցե մի քիչ պակաս՝ արդեն չեմ հիշում...

Սուրեն Քոչարյանը համբերատար լսեց ինձ ու հանկարծ մի հարց տվեց.

-Իսկ ինչո՞ւ չեք հարցնում, թե բժիշկներն ինչ են ասել, ե՞րբ կարող եմ բեմ ելնել....

Էդ պահին միակ ցանկությունս գետնի տակ անցնելն էր, ու ողջ «զրույցի» ընթացքում ու դրանից ահագին հետո էլ բառ իսկ չեմ արտասանել:

...Հարցազրույցը, այդպես էլ, իհարկե, չգրվեց ու չտպագրվեց, սակայն Սուրեն Քոչարյանի այդ դասն ինձ համար առանցքային էր. ամենակարևորը՝ *մարդկայինն է ու, նաև, այն, որ զրույցը սկսես դիմացինիդ, այլ ոչ թե քեզ մտահոգող հարցով...*

Դաս երկրորդ. Հրաշալի մի ավանդույթ կար. մասնագիտական վարպետության դասախոսները երկի թե ամիսը նվազագույնը մեկ անգամ հրավիրում էին որևէ հայտնի լրագրողի կամ մաս-

նագետի, որը զրուցում էր ուսանողներին հետ, պատասխանում մեզ հետաքրքրող հարցերին:

Այդ անգամ մեր հյուրը հանրահայտ ամերիկանագետ, քաղաքական մեկնաբան Վալենտին Ջորինն էր: Չեմ հիշում, թե ողջ «զրույցի» ընթացքում ինչի մասին խոսեցինք, ինչ հարցեր տվինք և ինչ պատասխաններ ստացանք, բայց մեկ էլ հանկարծ լսեցի.

-...Երեխեք (էդպես, կամ մոտավորապես էդպես) էս վերջին մի տասը-տասնհինգ տարին անընդհատ «ԹՐԱՎ՛» եմ նայում: Ու ամեն տարի աշնանը անպայման ասում եմ, թե մենք էս տարի բերքը մի ամիս ավելի շուտ հավաքեցինք ու ամբարեցինք, քան նախորդ տարի: Է, հետո՞... Ի՞նչ է ստացվում: Ստացվում է, որ մենք էս տարի պիտի հավաքենք էն բերքը, որը եկող տարի կամ էլ էն մյուս տարի ենք ցանելու...

ՄՏԱԾԵԼՈՒ ԴԱՍ: Դաս՝ ցանկացած լսած իմաստավորելու, հակադրելու, համադրելու, ընդհանուրի մեջ դիտարկելու և այդպես միայն ընկալելու...

Դաս երրորդ. Ցավոք, ամենայն հարգանքի արժանի այդ կնոջ ոչ անունն եմ հիշում, ոչ ազգանունը: Տասը տարուց ավելի է անցել: Մի նյութ էր բերել և անձամբ ինձ մոտ, որի իմաստը հետևյալն էր. Աստված մարդկությունը այս երկրագնդի վրա ստեղծել է մի նպատակով միայն՝ ԱՐՎԵՍՏ ԱՐԱՐԵԼՈՒ: Երևի թե ցանկացած գլխավոր խմբագրի մման կարդացի միայն այն բանից հետո, երբ տիկինը զանգեց, երբ ես ասացի, որ կարդացել եմ, հավանել եմ, բայց զրուցելու բաներ կան (ցանկացած նյութի մասին կարելի է էդ շաբլոն բաներն ասել և միշտ էլ ճիշտ դուրս կգաս. բայց՝ չարժե: Ճիշտը ազնիվ և անկեղծ լինելն է):

Եկավ: Ջրուցեցինք: Երևի թե մի երկու ժամ: Չտպագրելու իմ փաստարկները հետևյալն էին. խնդիրը, տեսեք-տեսեք, միակողմանիորեն է դիտարկված: Բա սա՞: Բա էն մյուսը: Բա երրորդը: Հանգիստ զրույց էր, որն անցավ փոխըմբռնման ու բարեկամական մթնոլորտում: Ես համոզեցի տիկնոջը...Չտպեցինք: Չնեղացավ: Բարեկամաբար բաժանվեցինք:

Եվ միայն տարիներ անց ես հասկացա, որ ինձ վրա, միանգամայն չհիմնավորված, շատ ու շատ ծանր բեռ էի վերցրել. որոշելու՝ ինչ, ինչպես և ինչու: Եվ՝ այն էլ՝ Ո՞ՒՄ փոխարեն... Իսկ ո՞վ ասաց, որ ոչ...

Վարպետության երեք դաս

...Որոնց հեղինակները (երկու դեպքում գոնե) թե ժամանակաշրջանով, թե նկարագրված իրավիճակներով, թե ընտրված ձևերով ու մեթոդներով էապես տարբերվում են միմյանցից:

Հատված Էրիկ Ֆիլսթեյլիուսի «Լրագրության տասը ոսկե պատվիրանները» գրքից.

«Լիտերատուրայա գազետա»-ի թղթակից Անատոլի Ռուբինովից հաջողվել է կոնկրետացումը լրագրողի հզոր զենք դարձնել անգամ խորհրդային ամենալճացած տարիներին: Կապի նախարարության աշխատանքի նրա քննադատական վերլուծությունը կոնկրետացման ուժը հաստատող դասական օրինակ է:

Փոստի աշխատանքը ստուգելու նպատակով Ռուբինովը ինքն իրեն հարյուր մամակ ուղարկեց: Նա մամակները փոստարկղ գցեց Մոսկվայի տարբեր մասերից՝ գրանցելով յուրաքանչյուրի առաքման ժամը: Փորձի նպատակն այն կարգի գործելը ստուգելն էր, ըստ որի մինչև առավոտյան ժամը 10-ը ուղարկված մամակները հասցեատիրոջն են հասնում նույն օրը: Ռուբինովը (ինչպես Մոսկվայի ցանկացած այլ բնակիչ) հիանալի գիտեր, որ այդ կարգն իրականում չի գործում, սակայն նրան ապացույցներ էին անհրաժեշտ:

Հարյուր մամակից ոչ մեկը նույն օրը լրագրողին չհասավ: Դրանց մեծ մասը նա ստացավ երրորդ օրը միայն, իսկ մնացածը՝ ևս մի քանի օր անց: Ամենաուշը Ռուբինովին էին հասել կապի նախարարության մոտակայքի փոստարկղեր նետված մամակները: Այժմ հեղինակը կոնկրետ տվյալներ և մանրամասներ ուներ, սակայն հողված գրելու համար նրան ֆաբուլա էր անհրաժեշտ:

Լև Տոլստոյի թանգարանում գրողի բազմաթիվ գրառումներ ու մամակներ են պահպանվում: Ռուբինովին հաջողվեց այնտեղ գտնել փոստային պարզորոշ շտամպով մի մամակ, որը 1890 թվականի հունվարի 22-ին Տոլստոյը Մոսկվայից ուղարկել էր Պետերբուրգի հանրային գրադարանի տնօրենին: Փոստային շտամպը վկայում էր, որ մամակը հասցեատիրոջն է հանձնվել հաջորդ օրը, չնայած այն ժամանակ շոգեքարշով գնացքը Մոսկվայից Պետերբուրգ էր գնում 14 ժամում: Ռուբինովի փորձի օրե-

րին արդեն գործում էր «Մոսկվա-Լենինգրադ» ծեպընթաց գնաց-քը: Ռուբինովը մի նամակ էլ ուղարկեց այն փողոցից, որտեղ ժամանակին ապրել էր Տոլստոյը: Լենինգրադի գրադարանի տնօրենին հասցեագրված նամակը վերջինիս հասավ միայն չորրորդ օրը:

Ռուբինովի լրագրողական հետաքննությունը ցույց տվեց, որ փոստը Տոլստոյի ապրած տարիներին ավելի արդյունավետ է աշխատել, քան խորհրդային ժամանակաշրջանում: Նամակն այն կոնկրետ փաստն էր, որի վրա աչք փակել հնարավոր չէր»:

Հատված Վալերի Ագրանովսկու «Երկրորդ հնագույնը» գրքից.

«Շատ տարիներ առաջ (1964 թվականին) ես աշխատում էի «Լիտերատուրնայա զագետա»-յում և գործուղման մեկնեցի Դուբնայի ֆիզիկոսների մոտ. ակադեմիկոս Գ. Ֆլերովի խումբը սինթեզում էր Մենդելեևի աղյուսակի 104-րդ տարրը: Հիշում եմ, երբ ես տեղ հասա և մտա Ֆլերովի ընդունարանը, այնտեղ արդեն տասնյակ լրագրողներ կային: Ես սարսափով էի նայում, թե ինչ է կատարվում. լրագրողները մտնում էին ակադեմիկոսի առանձնասենյակը, ստանում էին ՏԱՄՍ-ի գիտական մեկնաբանի արդեն մեքենագրված տեքստը և հինգ րոպեից դուրս գալիս: Չէի ասի, թե շատ գոհ, բայց նաև ոչ այնքան վշտահար:

«Ի՞նչ անել» լարված մտածում էի՝ աստիճանաբար մոտենալով Ֆլերովի դռանը: Ինչպե՞ս գրավել նրա ուշադրությունը, որպեսզի թերթի համար գոնե մի քանի բառ ասի: Ինչպե՞ս տարբերվել մյուսներից, ինչպես նրա ուշադրությունը բևեռել իմ անձին: Գլխիվայր կանգնե՞լ: Ինչ-որ տեղից կիթառ գտնել ու երգե՞լ նրա համար: Գերմաներե՞ն խոսել, այն էլ՝ չափածո: Հերթն աստիճանաբար «հալվում» էր, և ահա իմ առաջ բացվեց դուռը: Ներս մտա: Ֆլերովը գրասեղանի առաջ նստած բավականին սիրալիք ժպտում էր: Ես անմիջապես նկատեցի ՏԱՄՍ-ի տեքստերի տրցակը, որ դրված էր նրա առաջ: «Նստեք», - ասաց Ֆլերովը: Ես ներկայացա: Նստեցի: «Ինձ դուր է գալիս ձեր թերթը: Եթե ձեզ հետաքրքրում են մանրամասներ, խնդրեմ» ասաց նա և ինձ պարզեց թերթիկը: «Ներեցեք, իսկ հեղինակների խմբում քանի՞ գիտնական կա» հարցրեցի ես ընկճված ձայնով: «Ամեն ինչ գրված է», - մեղմ ժպիտով պատասխանեց Ֆլերովը:

Եվ վերջ: Ես կարող էի հանգիստ խղճով դուրս գալ: Դպրոցում ֆիզիկայից ստացած գիտելիքներիս «բավարարից» ավելին չէին: Իմ ու ակադեմիկոսի միջև անդունդ կար: Սակայն ելքը, ինչպես հայտնի է, պետք է որոնել անդունդի հատակին: Եվ ես ասացի. «Միայն մի հարց, Գեորգի Նիկոլակիչ»: Ակադեմիկոսը գլխով արեց: «Ասացեք, ինչո՞ւ եք դուք ատոմը նկարում շրջանաձև, այլ ոչ թե բրգաձև կամ ստորակետանման» և ձեռքս պարզեցի դեպի նրա թիկունքում կախված գրատախտակը: Նա ևս նայեց գրատախտակին, որը ծայրից ծայր պատված էր ֆորմուլաներով. ակադեմիկոսի դեմքին հայտնվեց բժիշկ-հոգեբույժի ներողամիտ ժպիտը. բժշկի, ով գործ ունի անբուժելի հիվանդի հետ: Նա ասաց. «Ինչու շրջանաձև»: Այդպես հարմար է՝ ահա թե ինչու: Վերցնում ես ու հենց այդպես էլ զծում ես՝ շրջանակ»: «Թույլ տվեք,- ասացի ես մոլագարի համառությանը,-բայց ստորակետ «նկարելն» ավելի հեշտ է»: «Դուք այդպե՞ս եք կարծում»,-նկատեց նա և թղթի վրա նկարեց սկզբից շրջանակ, հետո ստորակետ: «Թերևս,-համաձայնեց:- Այդ դեպքում զուցե զուգորդության կարգով, հավանաբար, մոլորակային համակարգի հետ...»: Նրա ձայնի մեջ արդեն ոչ քամահրանք կար, ոչ էլ նույնիսկ վստահություն: Նա որոշակիորեն զարմացած էր: «Հիշո՞ւմ եք,- ասաց նա,- ինչ է Բյուտսովը գրել: Եվ զուցե այս էլեկտրոնները աշխարհներ են, որտեղ հինգ մայրցամաքները... Թեպետ, իհարկե, մոլորակային համակարգի հետ զուգորդումը այնքան էլ կոռեկտ չէ, քանի որ ատոմը կլոր չէ, ավելի շուտ էլիպսաձև է, բայց նույնիսկ դա ոչ ոք չգիտի: Հըմ: Ինչո՞ւ ենք մենք շրջանաձև նկարում»: Նա ոտքի կանգնեց, զնաց-եկավ առանձնասենյակում ու զանգի կոճակը սեղմեց: Քարտուղարուհին ներս մտավ: «Ինձ մոտ հրավիրեք Հովհաննիսյանին, Դուզինին և Լոբանովին,-ասաց Ֆլերովը,- և մեկ էլ Պերելիզինին»:

Մի քանի րոպեից հայտնագործության նրա համահեղինակները եկան: Ակադեմիկոսը խորամանկ նայեց նրանց, ու ինձ ասաց. «Այա մի կրկնեք ձեր հարցը»; Ես կրկնեցի: «Ընկերներ,-ասացի ես,- ինչո՞ւ եք դուք ատոմը նկարում շրջանաձև, այլ ոչ թե բրգաձև, խաչաձև կամ էլ ստորակետանման»: Նրանց դեմքին էլ սկզբում հայտնվեց «հոգեբուժական» ինչ-որ արտահայտություն, իսկ Ֆլերովը գոհունակ շփեց ձեռքերը, ինչպես կաներ կրկեսային հաջողակ ռեպրիզի հեղինակը: Տասը րոպե անց նրանք արդեն կատաղի բանավիճում էին՝ մոռացած իմ գոյությունը: Նրանց հա-

մար դա հետաքրքիր էր: Չէ՞ որ աստուծը, որ պարունակում է 10-ի միմուս 13 աստիճան սանտիմետրանոց միջուկ, մարդուն տեսնել դեռ տրված չէ, նա կարող է միայն պայմանականորեն պատկերացնել արտաքին տեսքը, իսկ եթե պայմանականորեն, ապա ինչո՞ւ հենց շրջանակի տեսքով: «Հիմա ես գիտեմ՝ ինչ տեսք ունի աստուծը»՝ ասում են, միջուկը հայտնագործելով, բացականչել է Ռեզերֆորդը, բայց իրականում, համոզվելով, որ աստուծը պարզունակ շրջանակ չէ, այլ, անհավանական բարդ աշխարհ, մեծագույն ֆիզիկոսը հասկացել է՝ ինչ տեսք չունի աստուծը:

«Ի՞նչ եք անում այսօր երեկոյան,- հարցրեց ինձ Գեորգի Նիկոլակիչը, երբ նրանք դադարել էին վիճել՝ այդպես էլ որևէ եզրահանգման չզալով: Ինչ են անո՞ւմ... Երեկոյան, ակադեմիկոսի հրավերով, ես նստած էի նրա կոտեջում, հետո եղա լաբորատորիայում, ամբողջ ցիլլոտրոնը «ուսումնասիրեցի» և արդյունքում գրեցի ոչ տեղեկատվություն թերթի համար, ոչ էլ նույնիսկ հոդված, այլ՝ վավերագրական վիպակ:

Այդ ժամանակից, պաշտպանվելով «ամենագետ» գրուցակիցներից, ես, իբրև ամենահզոր զենք, օգտագործում եմ ավագ եղբորս խորհուրդը՝ չամաչել չիմանալու համար, որն, իհարկե, և ավելի արժանապատիվ է, և ավելի օգտակար, քան թաքցնել չիմանալը: Իսկ եթե լրագրողին հաջողվում է խոստովանությունն անել գրուցակցի հետաքրքրությունը կամ գոնե ժպիտը հարուցող ձևով, ընդհանրապես կարող է իրեն հաղթող համարել»:

Հատված Դ.Սատուրիների «Ակնարկ Անգլիայի մամլո պատմության» ուսումնասիրությունից.

«Ցույց տալու համար, թե ինչպիսի մարդիկ կարող են լինել լոնդոնյան թերթերի ռազմական թղթակիցներ, համառոտ պատմենք Ջոն Դիլոնի կյանքի ու գործունեության մասին, որ հիմա էլ «Daily Telegraph»-ի թղթակիցն է, իսկ նախկինում Խարկովի համալսարանի արևելյան լեզուների պրոֆեսոր էր:

1894-1895 թվականներին, իր «Daily Telegraph» թերթի առաջարկով նա մեկնեց Հայաստան՝ տեղում ստուգելու այն լուրերը, որ շրջում էին Եվրոպայում թուրքերի զագանությունների մասին:

Լսենք նրա սեփական պատմությունն այդ ճանապարհորդության մասին (մեջբերվում է 1901 թվականի հուլիսյան «Review of Reviews»-ից). «Հայաստան գնալու առաջարկ ստանալով՝ ես

ճանապարհ ընկա առանց որևէ նախնական պատրաստության: Հասնելով Թուրքիա, ես լավ ընդունելություն գտա մեծ վեզիրի մոտ, որն էլ ինձ տեղնուտեղը առաջարկեց ծանոթանալ նյութերին: Ես խնդրեցի սուլթանի ընդունելությունը: Վեզիրն ասաց, որ ինձ համար հնարավորը կանի, բայց մի քանի օրից ինձ կանչեց և ասաց, որ սուլթանը չի կարող ինձ ընդունել, քանի որ ինձ ընդունելով, հարկադրված կլինի ընդունել նաև այլ թղթակիցներին»:

Մեծ վեզիրը վերստին Դիլոնին առաջարկեց ուսումնասիրել գրավոր փաստաթղթերը և նույնիսկ առաջարկեց իր հետ վերցնել՝ համոզվելու համար դրանց իսկությանը: Բայց Դիլոնը կտրականապես հրաժարվեց:

-Ես պիտի ամեն ինչ տեսնեմ սեփական աչքերով, այլ ոչ թե միջնորդավորված: Ես ցանկանում եմ Հայաստան գնալ, պատասխանեց վճռական թղթակիցը, որն այդ ժամանակ բոլորովին չէր հավատում թուրքերի դաժանություններին հայերի նկատմամբ:

Թուրք նախարարը նրան շքանշան առաջարկեց Հայաստան մեկնելու փոխարեն, բայց Դիլոնը հրաժարվեց այդ պատվից ու հայտարարեց, որ մեկնում է Հայաստան:

-Բայց մենք հրաման ենք տվել, որ ձեզ թույլ չտան սահմանն անցնել:

-Այնուամենայնիվ, ես գնում եմ,-հանգիստ ասաց Դիլոնը:

-Բայց ձեզ թույլ չեն տա անցնել:

-Հոգ չէ, մի անհանգստացեք:

Նույն երեկո Դիլոնը հեռացավ Կոստանդնուպոլսից՝ ոչ մեկին չասելով, թե ուր է գնում:

«Ես գնացի Թիֆլիս, այցելեցի Կովկասի փոխարքային, ում հետ անձնապես ծանոթ էի և նրանից անցագիր ստացա, որն ինձ հնարավորություն էր տալիս Կովկասի ու Անդրկովկասի բոլոր ռազմական օկրուգներում լինել: Հասնելով Կարս, ես մի քանի օր մնացի, որպեսզի ամեն ինչ նախապատրաստեմ լեռներով Հայաստան գաղտնի անցնելուս համար: Բայց այդ պատրաստությունները, պարզվեց, իզուր էին, քանի որ մինչև նշանակված ժամկետը ինձ հաջողվեց իբրև կազակ սպա այնտեղ մեկնել բացահայտ: Սահմանի վրա թուրքերը ինձ դիմավորեցին ռազմական պատիվներով, իսկ հայ կանայք՝ նզովքներով»:

Նրան հաջողվեց հասնել Էրզրում, որտեղ նրա ժամանումը մեծ տազնապ առաջացրեց, նրան տարան քաղաքապետի մոտ:

«Երբ ես ներկայացա,-պատմում է Դիլոնը,- նրա ձեռքին Կոստանդնուպոլսից ստացված երկար հեռագիրն էր, որտեղ թուրքերենով իմ անուն էր գրված: Ծխախոտը քիչ էր մնում ընկնել նրա ձեռքից, երբ ես ներկայացա: Նա հարցրեց՝ երբ եմ ես մեկնում, ես ասացի, որ չեմ շտապում»:

Թուրքական կառավարությունը չհամարձակվեց ձերբակալել կամ արտաքսել Մեծ Բրիտանիայի քաղաքացուն, քանի որ Անգլիան կարողանում է պաշտպանել իր քաղաքացիների ազատությունը: Այդ պատճառով մեծ վեգիրը դիմեց Կոստանդնուպոլսում Բրիտանիայի ներկայացուցչին՝ խնդրելով Դիլոնին հեռացնել Թուրքական կայսրության տարածքից: Ներկայացուցիչը, իհարկե, մերժեց: Քանի դեռ ծավալվում էր նրանց նամակագրությունը, Դիլոնը ժամանակ չէր կորցնում: Գիշերները, շենքերի տանիքների վրայով, վերահանդերձավորված կամ կանացի հագուստով կամ իբրև քուրդ, նա հասնում էր ժամոթ հայ ընտանիքի տուն և այնտեղից անցնում այն հայ փախստականների մոտ, ում ընտանիքները թուրքերը կամ քրդերը կոտորել էին: Այդ փախստականների պատմածները նա գրի էր առնում ու ուղարկում «Daily Telegraph», իսկ փախստականներին ուղարկում էր Մուշ, որտեղ այդ ժամանակ միստեր էր գումարում հետաքննչական հանձնաժողովը: Այդ ժամանակ հատկապես փառաբանված էր քուրդ ցեղապետերից մեկը, որի հայերի նկատմամբ գործադրած զազանությունների մասին ամենասարսափելի լուրերն էին պատվում: Դիլոնը վճռեց գտնել այդ քրդին, որպեսզի ստուգի լուրերը: Բայց պարզվեց, որ նա բանտարկված է ու սպասում է մահապատժի՝ թուրքական ուղեկալի վրա հարձակվելու և թուրք զնդապետի կնոջը վիրավորելու մեղադրանքով: Սակայն դա Դիլոնին չկասեցրեց. «Ես մի քանի փորձեր արեցի այդ քրդի հետ կապեր հաստատելու համար, բայց դա չափազանց դժվար էր: Ես կաշառեցի բանտապետին, որ թույլ տա երկու ժամով հանդիպեմ: Պայմանավորված ժամին ինձ հասկացրին, որ շատ քիչ փող եմ տվել, քանի որ ռիսկը մեծ է, և եթե ես ավելացնեմ գումարը ու երկու պատանդ էլ թողնեմ, քրդին կբերեն ինձ մոտ: Ես կատարեցի պահանջը, և քուրդը եկավ: Ամբողջ գիշեր ես նրան պահեցի, քանի որ զգուշանում էի, որ Եվրոպայում ինձ չեն հավատա, թե տեսել եմ նրան: Առավոտյան, երբ արդեն ձեռքիս տակ ունեի քրդի հետ համատեղ լուսանկարը, նրան թողեցի բանտախուց տանեն: Այդ քրդի ցուցմունքների վրա հենվելով՝

Գլադստոնն ունեցավ իր հայտնի ելույթը Չեստերում, որտեղ մարտահրավեր նետեց թուրքերին՝ ապացուցելու իր ելույթում բերված փաստերի հավաստիությունը: Ժամանակ առ ժամանակ ես հայերի հետ հանդիպում էի թուրքերի տանը, ուր ծպտված գնում էի: Այդ տներից մեկում, պետք է որ տեղյակ լինեիմ, թե ով եմ ես, որովհետև ինձ առաջարկված սուրճը թունավորված էր: Բարեբախտաբար, ես ընդամենը երկու կում էի արել. այնուամենայնիվ՝ ստիպված եղա երեք շաբաթ պառկել: Իմ ծառան էլ էր թունավորվել, բայց նա էլ կենդանի մնաց: Մի քանի անգամ ինձ նախազգուշացրին, նաև պաշտոնապես, որ ես երկրից կենդանի դուրս չեմ գա: Այնուհանդերձ քաղաքակիրթ աշխարհ ես վերադարձա առանց լուրջ փորձությունների, թեպետ և ոչ առանց արկածների»:

Շնորհիվ Դիլոնի «Daily Telegraph»-ում և «Contemporary Review»-ում տպագրված հոդվածների՝ Թուրքիայի՝ Չայաստանում իրագործվող անհավանական դաժանությունները հայտնի դարձան քաղաքակիրթ աշխարհին: Անգլիայում դրանք բարձրացրին զայրույթի այնպիսի փոթորիկ, այնպես սրեցին հասարակական կարծիքը՝ Գլադստոնի առաջնորդությամբ, որ այն ժամանակ վարչապետ լորդ Սոլսբերին պատրաստ էր Թուրքիայից պահանջել Չայաստանի ազատագրումը: Դժբախտաբար, մեծ տերությունների հակամարտությունները ուժասպառեցին արդեն իսկ մահվան եզրին գտնվող Գլադստոնին և Սոլսբերիին հնարավորություն տվեցին լվանալ Պիդատոսի իր ձեռքերը և մոռանալ՝ միջազգային քաղաքականության այն ժամանակվա մյուս ղեկավարների հետ, Չայաստանի առջև իրենց պարտավորությունները և ստորագրել բեռլինյան տրակտատը: Թեպետ Դիլոնի սխրանքը ուղղակի արդյունքներ չունեցավ Չայաստանի համար, նա մեծ ծառայություն մատուցեց քաղաքակրթությանը՝ առաջադեմ մարդկանց հնարավորություն տալով ըստ արժանվույն գնահատել միջազգային դիվանագիտության ղեկավար շարժառիթները:

Չայաստանից Դիլոնը, նույն «Daily Telegraph»-ի հանձնարարությամբ մեկնեց Իսպանիա՝ հենց իսպանա-ամերիկյան պատերազմի նախօրեին և այնտեղ անցկացրեց մի քանի ամիս՝ իսպաներեն գրուցելով արմատում գեներալ Վեյլերի հետ, ուսումնասիրելով իսպանական քաղաքականությունը ու դրան ծանոթացնելով Անգլիային: Իսպանիայից նա մեկնեց ապստամբած Կրետե, ուր արգելված էր արտասահմանցիների մուտքը՝ կղզին շրջա-

փակած եվրոպական նավերի ծովակալների կողմից: Կղզի հասնելու համար Դիլոնը հանդերձավորվել էր իբրև հույն հոգևորական (հոգևորականները մարտնչում էին ապստամբների շարքերում): Նրան հաջողվեց միանալ առաջնորդներին, որոնց հետ բանակցում էին ծովակալները: Յոթ առաջնորդներին ծովակալները հանձնարարեցին կրետացիներին փոխանցել, որ իրենց ինքնավարություն կտրվի (իսկ կրետացիները ցանկանում էին միանալ Գունաստանին), և նորաթուխ հույն հոգևորականը հրացանն ուսին ու փամփուշտներով զոտևորված՝ համոզում է կրետացի առաջնորդներին, որ իրեն էլ կղզի տանեն: Բնականաբար, նա ջանում էր ծովակալների աչքին չերևալ: Բայց «Դժբախտաբար, -պատմում է Դիլոնը,- իտալացի ծովակալը որոշեց կիրակնօրյա մի առավոտ մեզ այցելել, երբ մենք մեր նեղուցում խարխալս գցած նավակում էինք, և ասաց, որ ցանկանում է մեզ հետ խոսել հարցի մասին: Նա և ավստրիացի ծովակալը երկար զրույց ունեցան մեզ հետ, և ես նրանց միջև միջնորդ էի ծառայում: Ծովակալ Կանևարոն վերցրեց իմ հրացանը, մեզ տարավ իր մոտ ու սուրճ հյուրասիրեց: Ես կրետացիների անունից մերժեցի ինքնավարությունը և պնդեցի միավորումը: Մեզնից բաժանվելով՝ Կանևարոն ինձ ասաց, որ շատ է սիրում հոգևորականներին, և երբ վերադարձրեց իմ հրացանը, ես նրան օրհնեցի այնքան աստվածավախորեն, որքան կարողացա»:

Դրանից հետո Դիլոնը ներկա է գտնվում Դաազայի նշանավոր «խաղաղության համաժողովին», ապա Փարիզից ու Ռենից «Daily Telegraph» -ին նյութեր է ուղարկում Դրեյֆուսի դատավարության մասին, իսկ 19-րդ դարի վերջին դաշնակցային զորքերի հետ մտնում է Պեկին, որտեղից «Contemporary Review» -ին է ուղարկում հոդված՝ աշխարհին հայտնի դարձնելով այն ահավոր բարբարոսությունների մասին, որով իրենց ներխուժումն էին նշանավորում այդ անպաշտպան արևելյան երկիր մտած քաղաքակիրթ արևմտյան երկրների զորքերը:

Այսպիսին է անգլիացի ռազմական թղթակիցներից մեկի կարիերան: Դավելենք, որ Դրեյֆուսի դատավարության ժամանակ Դիլոնն ամեն օր «Daily Telegraph» էր ուղարկում 10-20 տպագիր էջ հաշվետվություններ: Այդպիսին էր անգլիացի լրագրողի աշխատունակությունը»:

Եվս երեք դաս. այս անգամ՝
զրույցի արվեստի մասին

Դասերի հեղինակը հանրահայտ Լարի Քինգն է, ում անունն արդեն, կարծում եմ, ամեն ինչ է ասում: Իսկ դասերը կարևորվում են ոչ միայն դասավարի անձով, այլև նրանով, որ զրույցը՝ թե որպես ժանր և թե որպես մեթոդ, առանցքային դեր և նշանակություն ունի ժուռնալիստիկայում: Եվ՝ բացի այդ. հետաքրքիր է լսել ժուռնալիստիկայի ամերիկյան դպրոցի ներկայացուցչի ամնիջական խոսքը, հետո այն համադրել ռուսական դպրոցի ներկայացուցչի խոսքի հետ:

ԴԱՍ Ի. ԱՋՆՎՈՒԹՅՈՒՆ

Այդ առավոտ Մայամի Բիչում ես ինչ-որ բան պարզեցի խոսելու արվեստի մասին՝ եթերում լինի, թե ոչ: Ազնիվ եղեք: Այդ սկզբունքը երբեք ձեզ չի դավաճանի ոչ ռադիոժուռնալիստիկայում, ոչ հաղորդակցության որևէ այլ ոլորտում: Նույնն ինձ ասաց Արթուր Գոդֆրին. եթե ուզում ես եթերում հաջողություն ունենալ, ունկնդիրներիդ կամ ակնդիրներիդ հաղորդակից դարձրու այն ամենին, ինչ քեզ հետ կատարվում է և ինչ ես այդ պահին դու զգում:

Նման մի բան եղավ ինձ հետ, երբ առաջին անգամ հանդես էի գալիս իբրև հեռուստատեսային թրք-շոու վարող Մայամիում. իմ առաջին ռադիոնյութից հետո դա միակ դեպքն էր, երբ եթերում ես նյարդայնանում էի:

Մինչ այդ երբեք հեռուստատեսությամբ ելույթ չէի ունեցել, և դա ինձ անհանգստացնում էր: Պրոդյուսերը ինձ նստեցրեց պտտվող բազկաթոռում: Դա լուրջ սխալ էր՝ հուզմունքից ես անընդհատ պտտվում էի, և դա տեսնում էին բոլոր հեռուստադիտողները:

Էլի մի քիչ՝ և ես ավելի ծիծաղելի վիճակում էի հայտնվելու, բայց ինձ փրկեց բնագոյս: Ես հեռուստադիտողներին խնդրեցի ճիշտ հասկանալ ինձ: Ես խիստ ազնվորեն ասացի, որ հուզվում եմ, որ արդեն երեք տարի աշխատում եմ ռադիոյում, բայց հեռուստատեսությամբ առաջին անգամ եմ ելույթ ունենում, ու հիմա ինձ նստեցրել են այս դժբախտ բազկաթոռին...

Ու երբ բոլորն իմացան, թե ինչ վիճակում եմ հայտնվել՝ ես դադարեցի նյարդայնանալ: Իմ խոսքն ավելի լավ, ավելի համոզիչ դարձավ, և առաջին երեկոն հեռուստատեսությամբ բավականին հաջող անցավ, որովհետև ես անկեղծ էի այն մարդկանց հետ, ում դիմում էի:

Վերջերս ինձ հարցրին. «Պատկերացրեք, որ գնում եք NBC-ի նորությունների ստուդիայի միջանցքով, ինչ-որ մեկը քաշում է ձեր թևքից, նստեցնում է բազկաթոռին ու ինչ-որ թղթեր ձեզ տալով ասում է. «Բրոկաուն հիվանդ է: Դուք եթերում եք», և ստուդիայում վառվում է լույսը: Ի՞նչ կանեք դուք»:

Ես պատասխանեցի, որ բացարձակապես անկեղծ կլինեմ: Ես կնայեմ հեռուստախցիկի ոսպնյակին ու կասեմ. «Ես գնում էի NBC-ի միջանցքով, երբ ինչ-որ մեկը թևքիցս բռնեց, քարշ տվեց այստեղ, նստեցրեց բազկաթոռին, տվեց այս թղթերը և ասաց. «Բրոկաուն հիվանդ է: Դուք եթերում եք»...

ԴԱՍ II. ԽՈՒՍԱՓԵՔ ՄԻԱՆՇԱՆԱԿ ՅԱՐՑԵՐԻՑ

Հարցերը, որոնց կարելի է պատասխանել «այո» կամ «ոչ»՝ լավ գրույցի գլխավոր թշնամիներն են: Դրանց բնույթն այնպիսին է, որ հնարավոր է պատասխանել մեկ կամ մի քանի բառով.

Սարսափելի շոգ է, ծի՞շտ չէ:

Ի՞նչ եք կարծում՝ մեզ նոր տնտեսական անկու՞մ է սպառնում:

Ձեր կարծիքով՝ «Ռեդկլինսին» նորի՞ց անհաջող սեզոն է սպասվում:

(«Վաշինգտոն Ռեդկլինսը» ամերիկյան ֆուտբոլի թիմ է):

Ձրույցի ծիշտ կառուցվածքի դեպքում այս բոլոր հարցերը տեղին են, բայց, եթե առաջադրեք դրանք պարզ ու միանշանակ ձևով՝ կստանաք նույնքան միանշանակ պատասխան՝ «այո» կամ «ոչ», որը կսպառի թեման, թերևս՝ նաև ողջ խոսակցությունը:

Սակայն եթե դուք հարցերը կառուցեք առավել հիմնավոր, այնպես, որ նրանք ակնկալեն ավելի ընդարձակ պատասխան, խոսակցությունն այդքանով չի ավարտվի:

Օրինակ.

Իմ կարծիքով՝ վերջին տարիներին ամառները շատ շոգ են լինում ու գլորալ ջերմացման մասին տարածված խոսակցություններում ինչ-որ ծիշտ բան կա: Դու՞ք ինչ եք կարծում...

Ֆոնդային շուկայում արժեթղթերի այս կտրուկ տատանումներից հետո, ինչպես այս տարի է, ակամայից մտածում ես՝ արդյո՞ք այնքան կայուն է մեր տնտեսությունը, ինչպես մենք կուզեինք, որ այն լիներ: Ձեր կարծիքով՝ որքա՞ն է հավանականությունը, որ հերթական ճգնաժամի մեջ կարող ենք հայտնվել:

Այն ժամանակից, ինչ տեղափոխվել են Վաշինգտոն, «Ռեդ-կինսի» երկրպագուներից են, բայց պիտի խոստովանեն, որ նրանք չեն կարող այդպես շարունակել, վերափոխվել է պետք, «Կովբոյներն» էլ լուրջ մրցակից են: Ի՞նչ եք կարծում՝ «Ռեդ-կինսն» այս տարի ի՞նչ շանսեր ունի:

Երկրորդ խմբի բոլոր հարցերը վերաբերում են նույն խնդիրներին, ինչ առաջին խմբի: Սակայն առաջին տարբերակում յուրաքանչյուր հարցին կարելի է պատասխանել «այո» կամ «ոչ», մինչդեռ երկրորդ տարբերակում պատասխանն ավելի երկար կլինի, խոսակցությունն՝ ավելի բովանդակալից:

ԴԱՍ III. ԲՈԼՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՄԵԾԱԳՈՒՅՆ ՀԱՐՑՆ

Հիշեք՝ զրույց վարելու գաղտնիքը հարցեր տալու կարողությունն է: Շուրջբոլորս ինձ ամեն ինչ հետաքրքրում է, և նույնիսկ կոկտեյլների ժամանակ ես հաճախ եմ տալիս իմ սիրած հարցը՝ «Ինչու»: Ասենք՝ ինչ-որ տղամարդ ասում է ինձ, որ ընտանիքով որոշել են ուրիշ քաղաք տեղափոխվել: Ինչու: Ինչ-որ կին փոխում է աշխատանքը: Ինչու: Ինչ-որ մեկը ցավում է «Մեթսի» համար: Ինչու:

Իմ թոք շոունների ժամանակ ես, հավանաբար, այս բառն ավելի հաճախ եմ գործածում, քան ցանկացած այլ բառ: «Ինչու»՝ ամենամեծ հարցն է, որ կարողացել եմ տալ ժամանակների սկզբից և կտան մինչև ժամանակների ավարտը: Եվ հասկանալի է, որ այս հարցը ամենաճիշտ ձևն է զրույցը կենդանի ու հետաքրքիր դարձնելու համար:

Սրանք, անշուշտ, Լարի Քինգի բոլոր դասերը չեն: Այլ, մեր կարծիքով՝ ամենասկզբունքայինները: Մնացյալը.«Larry King with Bill Gilbert «How to Talk to Anyone, Anytime, Anywhere» The secrets of good communication, Three Rivers Press, New York» գրքում:

**ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ
ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ-
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ-ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ՝
ՈՐՊԵՍ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՓՕՐԻՆԱԿ**

Ժ ուռնալիստիկայի պատմությանը նվիրված հատվածում մենք արդեն իսկ անդրադարձել ենք լրագրողական հետաքննության-հետազոտության-ուսումնասիրության սկզբնավորմանը, որոնց նախածեռնողներին ԱՄՆ նախագահ Թեոդոր Ռուզվելտն անվանեց «մաքրեյքերներ»:

Սակայն ինչպես և ամեն ինչ, այն իր արմատներն ունի, որոնք այս անգամ էլ կրկին գալիս են դարերի խորքից:

Հիշատակենք թեկուզև Պրոկոպիոս Կեսարացու (6-րդ դար) «Գաղտնի պատմությունը»: Ահա թե ինչպես է սկսվում այն.

«Այն, ինչ ցայսօր պատերազմներում անցավ-դարձավ հռոմեական ժողովրդի գլխով, ես պատմեցի այնպես, ինչպես դա հնարավոր էր անել՝ բոլոր անցքերը ներկայացնելով ժամանակագրական ու աշխարհագրական սկզբունքով: Սրանից հետո շարադրանքը այլ կերպ է ընթանալու, այստեղ պետք է գրի առնվի այն ամենը, ինչ տեղի ունեցավ Հռոմեական պետության բուսման-դակ տարածքում: Նախորդ գրքերում հնարավոր չէր ճշմարտությունը գրել, քանզի դեռևս կենդանի էին կայացած իրադարձությունների դերակատարները: Եվ անհնարին բան էր աննկատ մնալ վխտացող լրտեսներից, իսկ բացահայտվելու դեպքում խուսափել ահասարսուռ մահապատժից: Ես չէի կարող վստահել ամենամերձավոր ազգականներիս անգամ: Նախորդ գրքերում ես ստիպված էի հաճախ լռության մատնել բազում եղելությունների պատճառները: Արդ, այստեղ անհրաժեշտ է գրի առնել մինչև օրս չասվածը, ինչպես և նշել նախորդ գրքերում հաղորդվածների պատճառները»:

«...Ինձ այս պատմությունը շարադրել դրդեց մի հանգամանք. այն, որ անհրաժեշտ է, որպեսզի ապագա բռնակալներին պարզ ու հստակ դառնա, որ իրենց վատ արարքների համար չեն

կարող պատժից խուսափել, մի բան, որ կատարվեց հիշելիքս մարդկանց հետ: Բացի այդ, եթե նրանց արարքները և այդ արարքներն իրականացնելու միջոցները լռության չմատնվեն, դա, հնարավոր է՝ պատճառ դառնա, որ նրանք այնքան էլ եռանդ չցուցաբերեն անօրինականություններ գործելու: Չէ՞ որ, եթե հների կողմից գրի չառնվեին և որպես հիշատակ չթողնվեին Շամիրամի անառակ կյանքը, Սարդանապալոսի և Ներոնի խելակորույս արարքները, ապա այդ մասին հետագա մարդկանցից ո՞վ պիտի գիտենար: Բռնակալների այդ արարքները հայտնի լինելը ժողովրդի համար օգտակար է և այն իմաստով, որ դժբախտ մարդիկ մխթարվելու բան կունենան, տեսնելով, որ նման փորձությունները միայն իրենց գլխին չէ, որ եկել են»:

Ընդամենը մեկ օրինակ այն օրերի՝ բացահայտումներից.

«...Ծագումով կիլիկեցի ոմն Լևոն կար, անասելի արծաթասեր, աշխարհի խոշորագույն շողոքորթը: Սա մեծ կարողություն ուներ տխմարներին իր կամքը թելադրելու, բռնակալի բթամտությունը, ի կորուստ մարդկանց, իր կողմը թեքելու: Դեմք այս մարդն էր առաջինը, որ Դուստինիանոսին համոզեց դատավճիռը վաճառքի առարկա դարձնել, և քանի որ մարդը այս ճանապարհով սովորեց դրամ գռփել, այլևս կանգ առնել չուներ: Այս չարիքը գնալով ծովացավ: Ով ջանում էր ի վնաս արդար մարդկանց անօրեն դատ շահել, ուղիղ Լևոնի մոտ էր գնում, նրան ու բռնակալին կաշառք խոստանում և, անարդար կերպով դատը շահելով, պալատից ազատ էր արձակվում: Լևոնն այս ճանապարհով հսկայական հարստություն դիզեց, ընդարձակածավալ կալվածների տեր դարձավ, բայց նաև՝ հռոմեացիների պետության ծնկի գալու ամենագլխավոր պատճառը: Եթե Լևոնին ու թագավորին դրամ չես տվել, ապա քեզ պաշտպանող գոյություն չունի՝ ոչ օրենք, ոչ երդում, ոչ գրավոր պարտավորագիր, ոչ պատիժ, ոչ մի բան: Սակայն դա էլ դեռ առիավատչյա չէր Լևոնի վճռի հուսալի լինելու, քանզի նա դրամ էր պահանջում նաև հակառակ կողմից: Կողոպտելով իր վրա հույս դրած վիճող երկու կողմերին էլ, նա ամենակն նախատինք չէր համարում նրանց անգոսնելն ու հակառակ գործելը: Օգուտ քաղելու նպատակով մեկ սրա, մեկ մյուսի կողմն անցնելու մեջ ոչ մի ամոթալի բան չկա, դատում էր նա»:

Ահա և փաստորեն լրագրողական հետաքննություն-հետազոտություն-ուսումնասիրության պատմական գրավոր հիմքերը: Ակնհայտ է, որ երևույթն այս շատ ավելի վաղ արմատներ և

դրսևորումներ ունի, որոնք, սակայն, ըստ էության այս ամենի երկրորդումներն են, որոնցից խնդրի էությունը չի փոխվում, ուստի և սահմանափակվենք այսքանով:

Այժմ եզրույթի մասին: Սովորաբար ընդունված է «ժուռնալիստական հետաքննություն» եզրը, որը, սակայն, միշտ չէ, որ արտահայտում է խնդրի բուն էությունը:

Նախորդ գլխում բերված ժուռնալիստական մեթոդի և վարպետության օրինակները կարելի է տարաբաժանել հետևյալ կերպ. Անատոլի Ռուբինովի ձեռնարկը ուսումնասիրություն կարելի է համարել, Վալերի Ագրանովսկունը՝ հետազոտություն, իսկ ահա Ջոն Դիլոնինը՝ հետաքննություն, որը իր տարբեր դրսևորումներով իհարկե, հետազոտությունների և ուսումնասիրությունների տարրեր է պարունակում, որոնք, սակայն, լրացնում և ամբողջացնում են հիմնական գործելաձևը՝ հետաքննությունը:

Եզրույթները, ակնհայտորեն, բացահայտում են գործելաձևի էությունը, այնպես որ երկի թե տարբերություններն առավել մանրամասն վերլուծելու անհրաժեշտություն չկա:

Այս տիպին է պատկանում նաև ժուռնալիստական գործունեության այն տեսակը, որը երկի թե ավելի ճիշտ է իր խորագրային բնութագրմամբ էլ անվանել. «ժուռնալիստը փոխում է մասնագիտությունը»: Ըստ էության հենց դրանից էլ իր գործունեությունն է սկսել լրագրողական հետաքննության-հետազոտության-ուսումնասիրության 20-րդ դարի դասական, գրող Գյունտեր Վալրաֆը: Նա մի անխախտ սկզբունք ուներ՝ հանրահայտ «Նպատակն արդարացնում է միջոցները»: Սկսած իր արտաքինը փոխելուց, վերջացրած համապատասխան և իրեն անհրաժեշտ իրավիճակները ստեղծելով՝ Վալրաֆը դրանք ծառայեցնում էր իր նախանշած բացահայտմանը: Նվազ դասական չէ նաև նրա ինքնախոստովանանքը. **«Ես չեմ արդարացնում իմ մեթոդները: Ես դրանք անհրաժեշտ եմ համարում»:** Նրա մեկ այլ արտահայտությունը, որը ևս վերաբերում է իր մեթոդին, դարձյալ դասական և աֆորիստիկ կարելի է համարել. **«Ես խաբում եմ, որպեսզի ինձ չխաբեն»:**

Ինչի՞ց է սկսվում հետաքննությունը: Ինչպե՞ս վարել այն: Ինչպե՞ս հավաքված նյութը ներկայացնել ընթերցողին: Ահա երեք ամենահիմնական ու ամենաէական այն հարցերը, որոնց կամա թե ակամա բախվում է ցանկացած ժուռնալիստ, ով ձեռնամուխ է

լինում հետաքննության-հետազոտության-ուսումնասիրությանը:

Միանգամից արժե արձանագրել, որ ցանկացած կոնկրետ դեպք իր առանձնահատկություններն ու նրբությունները և հետևաբար՝ միմյանցից տարբերվող պատասխաններն ունի: Սակայն կան մեթոդաբանական բնական ընդհանրություններ:

Նախևառաջ՝ դա գաղափարն է: Հետաքննության-հետազոտության-ուսումնասիրության նյութը, առարկան: Վերհիշենք Ջաննի Ռոդարիի փայլուն ձևակերպումը լճակի մեջ նետված քարի մասին, որից էլ, փաստորեն, սկսվում է ամեն ինչ:

Առարկան հստակեցնելուց հետո անհրաժեշտ է որոշակիացնել այն նպատակը (կամ նպատակները), որոնք դրվում են տվյալ հետաքննության (հետազոտության, ուսումնասիրության) հիմքում: Այսինքն ինչ նպատակի (նպատակների) է ծառայելու բուն գործունեությունը. պարզապես ընթացքի նկարագրությամբ, ինչ-որ բանի սոսկ բացահայտման, իրական պատկերի ամբողջական վերականգնման, թե՞ մեկ այլ նպատակի: Ի դեպ. նշված կամ ենթադրվող ցանկացած ՆՊԱՏԱԿ՝ իր ուրույն հետևանքը կարող է ենթադրել, դրանով իսկ պարտադրելով գործողությունների և դրանց լուսաբանման ու արդյունքի ներկայացման այնպիսի միջոցներ և մեթոդներ, որոնց առանձնահատկությունները յուրաքանչյուր դեպքում այնքան անհատական և միմյանց հետ անգամ չհատվող կարող են լինել, որ, արտաքննապես գոնե, կարող է թվալ, թե խոսքը միմյանցից էապես տարբերվող երևույթների մասին է:

Հաջորդ քայլը խնդիրների հստակեցումն է, որոնք լուծելով հնարավոր է հասնել նշված նպատակի իրականացմանը: Մյուս քայլը՝ հնարավոր բոլոր վարկածների դասակարգումն է թե ըստ կարևորության և թե ըստ հավանականության աստիճանի և դրանցով ընթանալու որոշակի ժամանակացույցի կամ պլանի կազմումը, առանց որի կարելի է պարզապես խճճվել փաստերի և երևույթների ենթադրելի բազմազանության և զանգվածայնության մեջ, որը ոչ միայն կոժվարացնի աշխատանքը, այլև կարող է պարզապես արգելակել այն կամ էլ բոլորովին այլ՝ ոչ ճիշտ և ոչ արդյունավետ հուն մղել:

Այս փուլում էլ հենց կարևորություն է ստանում միջոցների՝ գործիքների ընտրության և դրանք համակարգված կիրառելու խնդիրը, քանզի հենց դրանց արդյունավետ կիրառումից է կախված հաջողությունը:

Իսկ միջոցները տարբեր, սակայն միմյանց լրացնող պետք է լինեն. խոսքն, առաջին հերթին, փաստաթղթերի մասին է, որոնք պետք է հավաքվեն, ուսումնասիրվեն և պահպանվեն ամենայն բժախնդրությամբ: Լրագրողին բնավ էլ չի խանգարի, եթե, օրինակ, իր անձնական դիտարկումներից զատ նա յուրաքանչյուր փաստաթղթի կցի նաև մասնագետի մեկնաբանությունն ու կարծիքը: Դրանք փաստաթուղթն ավելի ծանրակշիռ, մատչելի, «բաց» և հիմնավոր կդարձնեն: Եվ, բացի այդ. անհրաժեշտ է ծայրահեղ խնամքով վերաբերել ցանկացած փաստաթղթի. անգամ նրանց, որոնք այսօր կամ էլ, պարզապես, առաջին հայացքից իրենցից «ոչինչ չեն ներկայացնում»։ ոչ ոք դեռևս չգիտե, թե հետաքննության (հետազոտության, ուսումնասիրության) ընթացքի որ պահին և ինչպես կարող են կարևորվել կամ արժևորվել այն ամենը, ինչը նշված է տվյալ փաստաթղթում: Մանավանդ՝ հաշվի առեք, որ ձեր ձեռնարկած խնդրի դեռևս բոլոր վարկածներն էլ ուժի մեջ են:

Յուրաքանչյուր վարկածի համար առանձին «գործ» բացեք, այն խնամքով և հետևողականորեն լրացրեք ձեր նպատակային զրույցների, դիտարկումների, մեկնաբանությունների և բացատրությունների գրավոր տեքստերով: Այդ գրավոր տեքստերը պետք է առավելագույնս ընդգրկուն լինեն. հագեցած մանրամասներով, դիտարկումներով, տվյալ պահին ծնված ենթադրություններով, զրուցակցի նշած բոլոր մանրամասներով ու նաև նրա ենթադրություններով, նրանից ստացած տպավորություններով, որովհետև դրանք խիստ անզնահատելի ծառայություն կարող են մատուցել հետագայում՝ երբ դուք որևէ փուլ ավարտելուց հետո փորձեք վերլուծել անցած ճանապարհը՝ որպեսզի մախանչեք անցնելիքը կամ էլ վերջում՝ երբ ձեզ համար մոռացված բաներ ի հայտ կգան, որոնք կարող են և ստիպել որոշակի լրացումներ և ամբողջացումներ կատարել:

Հին և «արխիվացման» ենթակա աղբյուրներ չկան: Եվ հենց այդ առումով էլ կարևորվում է յուրաքանչյուր զրույցի մանրամասն գրավոր հաշվետվությունը. միշտ էլ ինչ-որ թերասացությունների կամ էլ այլ պատճառներով կարող է լրացուցիչ հարցերի, պարզաբանումների կարիք առաջանալ, առանց որոնց թերի կլինի ողջ գործընթացը, դրանով իսկ՝ անարդյունավետ: Սակայն եթե առավելագույն մանրամասնությամբ չեն նշված պատասխաններն ու տպավորությունները՝ այդպիսի «բացերը» կարող

են և չգտնվել: Եթե անգամ մնան «բացեր» չկան էլ, փորձեք «երկրորդ պտույտը» կատարել՝ անհնարին է, որ նոր բացահայտման, փաստի, դիտարկման կամ էլ որևէ այլ արժեքավոր ու անհրաժեշտ գնահատականի չհանդիպեք:

Մի բացահայտեք ձեր աղբյուրները, և ոչ միայն այն պատճառով, որ դրանք կարող են հետազայում ևս պետք գալ, այլ որպեսզի նրանք շատ ավելի անկեղծ լինեն՝ ապահովության երաշխիքներ ունենալով ձեզնից: Երբեք չարժե խախտել խաղի այն կանոնները, որոնց շուրջ դուք որոշակի պայմանավորվածություններ եք ձեռք բերել ձեր գրուցակցի հետ: Դա ոչ միայն անվստահություն է ծնում, այլև, պարզապես, բարոյական չէ: Միաժամանակ՝ բացարձակապես մի վստահեք և ոչ մեկին. յուրաքանչյուրի տված տեղեկությունը փորձեք ճշգրտել և վերահաստատել նաև այլ աղբյուրների միջոցով:

«Ալիբի» գտեք ձեզ համար: Ենթադրենք՝ դուք հետաքննում (հետազոտում, ուսումնասիրում) եք այն գործը, որը, բնականաբար, որոշակի գաղտնիության և խորհրդապահական բնույթ է ենթադրում: Ոչ միայն բուն գործը, այլև՝ գործընթացը: Անմիջապես «հորինեք»-գտեք X մի թեմա, որը միանգամայն անվտանգ է, սակայն գրեթե նույն աղբյուրները կամ նույն ճանապարհներն է ենթադրում: Աշխատեք ձեռք բերել ղեկավարության հավանությունն այդ թեման վերհանելու առումով և առերևույթ զբաղվեք հենց դրանով, մյուսը՝ բուն թեման, մշակեք «հընթացս»:

Եվ՝ վերջինը, որը կարելի է նաև հաջողության առաջին ու պարտադիր նախապայմաններից մեկը համարել. կարդացեք այլոց կատարած հետաքննությունները, և ընդհանրապես՝ շատ կարդացեք: Դրանք ձեզ ոչ միայն նոր մեթոդներ, ձևեր ու ճանապարհներ կհուշեն, այլև կծնեն նոր վարկածներ, նորովի կստիպեն արժևորել ձեր արդեն իսկ կատարած աշխատանքը, կօգնեն այն ավելի ամբողջական և լավը դարձնելուն:

Ուշագրավ, հետաքննող լրագրողների մասնագիտական և մարդկային ինքնասիրությունը շոյող և նրանց տրված գնահատականներն ամբողջացնող բնութագրում ունի կանադահայ անգլիագիր գրող Արա Բալիոզյանը. **«Ջետաքննող լրագրողները ազգի աչքերն ու ականջներն են: Սրա վրա պետք է դրվի շեշտը: Առանց հետաքննող լրագրողների ազգը կարող է կույր, խուլ և համր լինել»:**

Եվ, իհարկե, մշտապես հիշեք փաստերի մասին: Ինչպես նշել է տեսաբան Ջեյմս Բարնետը. **«Չետաքննություն վարող մարդը պետք է կառուցի հետաքննության փաստերի կարևոր գործերի շղթան, որը կհանգեցնի նրան փաստերի հաջորդ շղթային, և այդպես՝ մինչև հետաքննության հաջող ավարտը: Բայց եթե փաստեր չկան, հետաքննությունը քանդվում է»:**

Իսկ այդ դեպքում հանրությունը չի ների ոչ դրա հեղինակին, ոչ էլ այն տեղեկատվամիջոցին, որը նման արտադրանք կփորձի մատուցել:

Ցանկացած բան կարող է հետաքննության-ուսումնասիրության-հետազոտության առարկա դառնալ. կարևորը՝ ճիշտ դիտանկյուն ընտրելն է: Օրինակ՝ ցանկացած հին հեռախոսագիրք կամ տեղեկատու. ու՞ր են հիմա նրանք, ովքեր ինչ-որ ժամանակ լուրջ պաշտոններ էին զբաղեցնում: Ի՞նչ են անում, ինչու՞, ինչպե՞ս: Ինչու՞ և ինչպե՞ս են կատարել այդ «անցումը». այնքա՞ն հետաքրքիր բաներ կարող են բացահայտվել:

Վերցրեք տասնյակ տարիներ առաջ տպագրված այլ տեղեկատուներ ևս. օրինակ՝ «Ով ով է համաշխարհային քաղաքակա-նության մեջ» կամ «Ինչն ինչ է համաշխարհային քաղաքակա-նության մեջ»: «Ով»-ի հարցը պարզ է՝ նախորդ մեթոդիկայով: Նվազ հետաքրքիր չէ նաև «ինչ»-ի հարցը: Ինչպե՞ս, ինչու՞, ի՞նչ հանգամանքների պատճառով և ազդեցությամբ է փոխվել այս կամ այն հասկացությունը, եզրույթը, ընկալումը, օրենքը...

Անգամ ձեզ հետաքրքրող գիրքը հրատարակած հրատարակչությունը կարող է դառնալ ժուռնալիստական փաստ, և այն էլ՝ շատ հետաքրքիր...

Դե իսկ ժանրային առումով՝ ժուռնալիստական հետաքննու-թյունը (հետազոտությունը, ուսումնասիրությունը) ամենասինթե-տիկն է. ժամանակագրությունից, լուրից սկսած մինչև ակնարկի և էսսեի տարրեր՝ ահա նրա ժանրային ընդգրկման շրջանակը:

Եվ վերջում. ի լրացումն նախորդների՝ մեկ «ինքնաառաջադ-րանք» ևս, որը լուրջ ժուռնալիստական ուսումնասիրություն է պահանջում:

Այսօր գործող տոների և հիշատակի օրերի մասին ՀՀ օրեն-քում մայիսի 28-ը նշված է որպես «Հանրապետության տոն»՝ համարվելով Առաջին հանրապետության ծնունդ, անկախության և պետականության վերականգնում: Միանգամայն ուրախալի և հիրավի երջանկահիշատակ փաստ: Բայց դուք արդեն գիտե՞ք,

չէ, որ անգամ հանրահայտ փաստերին հավատ ընծայելուց առաջ արժէ, համեմայն դեպս, ծանոթանալ նաև նրանց փաստագրված հիմքերին. ցանկացած դեպքում էլ որևէ մի հետաքրքիր «ժուռնալիստական փաստ» կհայտնաբերվի, նվազագույնը՝ մեկնաբանություն:

Մենք ևս զնանք այդ ճանապարհով: Այստեղ շատ կարևոր է ելակետ(եր)ի ճիշտ ընտրությունը: Ճիշտ ելակետեր կարող են հանդիսանալ տվյալ ժամանակահատվածը բնութագրող պետական-կառավարական փաստաթղթերը, որոնք մեր քննարկելիք պարագայում միանգամայն օբյեկտիվորեն բացակայում են: Որովհետև «պետականը» դրա հռչակմանը կարող է հաջորդել միայն: Մնում է այլ ճանապարհ. տվյալ ակտի հռչակման համար պատասխանատու, տվյալ ժամանակահատվածում իշխող (կառավարող) կուսակցության կամ այլ հանրային միավորի ընդունած փաստաթղթերը: Մեզ այժմ փաստն է հետաքրքրում, քանզի մեկնաբանությունները՝ թե այն ժամանակ, թե այժմ, թե այդ երկուսի միջակայքում ընկած ժամանակահատվածում բազում և բազմաթիվ կարող են լինել: Բարեբախտաբար՝ այդ փաստաթուղթը պահպանվել է: Հատվածներ Հայաստանի Առաջին հանրապետության վերջին վարչապետ Սիմոն Վրացյանի «Հայաստանի Հանրապետությունը» գրքից (Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1993 թ.):

«Մայիսի 26-ին (խոսքը 1918 թ. մայիսի մասին է.-հեղ.) կեսօրին ցրվեց Սեյմը, իսկ հինգ ժամ վերջը, նույն սրահում գումարվեց Վրաց ազգային խորհրդի նիստը՝ Ն.ժորդանիայի նախագահությամբ, որ և բեմադրեց Վրաստանի անկախության հայտարարության ծիսակատարությունը:

...Մայիսի 26-ի երեկոյան, Հայոց ազգային խորհուրդը, բուռն վիճաբանություններից հետո, ծայների ճնշիչ մեծամասնությամբ, որոշեց բողոքել վրաց գործիչների ընթացքի և Վրաստանի անկախության դեմ:

Մայիսի 27-ին Ազրբեջանի Ազգային խորհուրդն էլ որոշեց հայտարարել Ազրբեջանի անկախությունը:

...Ազգային խորհուրդը արավ վճռական քայլ և մայիսի 30-ին հրատարակեց հետևյալ հայտարարությունը, որը, թեև իսկական

առունով անկախության հռչակում չէր, բայց դեպքերի բերումով դարձավ այդպիսին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծումով և Վրաստանի ու Ազրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր դրության հանդեպ, Հայոց ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն: Որոշ ժանրակչիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերը ազգային կառավարության կազմումը, Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական գավառների քաղաքական և վարչական դեկր վարելու համար:

*1918 թ. մայիսի 30, Հայոց ազգային խորհուրդ
Թիֆլիս»*

Այստեղ, ինչպես նկատեցիք, բաց են թողնված բոլոր մեկնաբանությունները, որոնք լրագրողական ուսումնասիրությունը շեղել կարող են միայն: Երբ լրագրող-ուսումնասիրողը փաստերը մեկ ամբողջական շղթայի կբերի՝ նոր միայն արժե անդրադառնալ տարամետ մեկնաբանություններին և՛ դրանք անաչառորեն շարադրելուց հետո միայն՝ եզրակացության հանգեցնելով:

Ի՞նչ է ակնհայտ.

1. Այն, ինչ տեղի է ունեցել՝ տեղի է ունեցել ոչ մայիսի 28-ին:

2. Հայտարարության մեջ «հանրապետություն» բառը բացակայում է:

3. «Անկախություն» բառը՝ նույնպես: Որոնք, իդեպ, ընդունում է նաև գրքի հեղինակը:

Լրագրող-ուսումնասիրողի խնդիրը, կարծում եմ, շատ պարզ է. 1918 թ. մայիսի 30-ից (հայտարարությունն ընդունելու օրը) մինչև 2001 թ. հունվարի 24-ը (օրենքն ընդունելու օրը) ընկած ժամանակահատվածում՝ երբ, ինչպես և ինչու են փաստերի կամ դրանց ընկալումների նման փոփոխություններ տեղի ունեցել:

Գրականությունը. բոլոր այն գրքերը՝ պատմա-գեղարվեստա-փաստավավերագրական, և այն բոլոր հրապարակումները, որոնք առնչվում են տվյալ խնդրին: Գրականությունը, ինքնին,

մարդկանց դիմելու համապատասխան անհրաժեշտություններ կառաջացնի, որոնք էլ առավել լիարժեք կդարձնեն ուսումնասիրությունը: Եվ այստեղ, ինչպես արդեն իսկ նշեցինք, արժե անպայման կարծիքներ և տեսակետներ բերել նաև, որոնց համադրման-հակադրման-վերլուծության ճանապարհով է, որ կարող ենք հանգել օբյեկտիվ եզրակացության:

Եվ ուրեմն՝ ի գործ:

ԱՄԵՆՕՐՅԱ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Ելակետը

...Ինչպես արդեն իսկ նշել ենք՝ ստածողությունն է: Որը մշտապես սննդի ու խթանների կարիքն ունի: Ուրեմն՝ շատ կարդացեք, ուսումնասիրեք մեծերի կյանքը, գործը, փորձը: Դա ձեր մտքին, անպայմանորեն, նոր և թարմ սնունդ կտա: Նոր հայտնությունների կմղի և կփորձի, գոնե, ետ պահել արդեն իսկ իրենց ոչ պիտանելիությունն ապացուցած ճանապարհներից:

Այս առումով միանգամայն արդարացի է Գյոթեն. *«...Հիմա այլևս մոլորվելու ժամանակ չկա, մենք՝ ծերերս հենց դրա համար ենք ապրում: Էլ ինչի՞ համար են եղել մեր որոնումներն ու մոլորությունները, եթե դուք՝ երիտասարդներդ, նորից ուզում եք նույն ճանապարհով քայլել: Այդպես, իհարկե, մենք երբեք առաջ չենք գնա: Մեր՝ ծերերիս, մոլորվելը ներելի էր. մենք չունեինք հարթված ճանապարհ: Իսկ ով ավելի ուշ է կյանք մտել՝ նրանից ավելին է պահանջվում: Նա չպետք է նորից մոլորվի ու որոնի, այլ, ծերերի խորհուրդը օգտագործելով, առաջ ընթանա: Բավական չէ այնպիսի քայլեր անել, որոնք երբևէ կմոտեցնեն նպատակին. մարդու կատարած յուրաքանչյուր քայլը պետք է նպատակ լինի և, միաժամանակ, առաջ տանի նրան»:*

Գյոթենի կարծես «շարունակում է» Լեոնարդո դա Վինչին, ով ոչ միայն հստակ խորհուրդներ է տալիս եկողներին, այլև, կարծես, ցուցումներ՝ ինչն անել և ինչու անել իր բուն ոլորտում, իհարկե. *«Հաղթողներին ու հաղթվածներին պատկերիր զունատ, ունքերը վեր, իսկ աչքերի տակի մաշկը՝ վշտահար ծալքերով պատված, քթի վրա պետք է մի քանի կնճիռներ լինեն, որոնք աղեղնաձև սկսվում են քթանցքներից ու ավարտվում աչքերի մոտ... Ատամները՝ բաց ինչպես տնքոցի կամ ճչալու պահին, ձեռքերից մեկը պետք է պաշտպանի սարսափով լեցուն աչքերը, ավիր շրջելով դեպի թշնամին, մյուսը պետք է հենվի գետնին, որպեսզի պահի իրանը... մեռյալներին պատկերիր՝ մի մասին կիսով չափ փոշու մեջ, մյուսներին՝ հողի... Փռչին, խառնվելով թափված արյանը, պիտի կեղտոտության վերածվի»...*

...Կասկածեք ամեն ինչին, որպեսզի գտնեք ճշմարտությունը: Ինքներդ մտածեք, վերլուծեք, փորձեք լիովին ձերը դարձնել կամ հերքել մատուցվող տարբեր փաստերն ու տեսակետները: Օրինակ. *«Եգիպտական բուրգերը կառուցելու համար հսկայական բազմատոննանոց քարաբեկորները հարյուրավոր կիլոմետրեր՝ քարհանքից մինչև շինարարության վայր բերում էին գլորվող գերանների վրա»*, - ասում է տարածվող տեղեկությունը կամ էլ վարկածներից մեկը: Սա կարելի է ընդունել որպես 100 տոկոսանոց ճշմարտություն, բայց կարելի է նաև կասկածել՝ փորձելով գտնել իրական ճշմարտությունը: Ճշտեք, թե ի՞նչ ծառեր էին աճում այդ ժամանակ Եգիպտոսում: Ինչպիսի՞ դիմացկունություն ունեին դրանք: Այդքան տոննա կշռող քարի տակ քանի՞ պտույտ կամ քանի՞ մետր կդիմանային: Յաշվարկները կարելի է խնդրել, որ մասնագետները կատարեն՝ հավաստիության համար: Եվ հենց այդ պահին կարող է պարզվել, որ, ենթադրենք մի քանի տասնյակ մետրից տվյալ ծանրության տակ այդ գերանները տաշեղներ կդառնային: Բաժանեք տեղափոխվող ճանապարհի երկարությունը այդքան մետրի վրա, բազմապատկեք քարերի ու ծառերի քանակով և գուցե պարզվի, որ ոչ թե Եգիպտոսում, այլ ամբողջ մայրցամաքում դժվար թե, տեսականորեն անգամ, այդքան ծառեր լինեին, իսկ Եգիպտացիների թիվն էլ ընդհանրապես չբավականացներ նման մասշտաբի ծառահատումներ իրականացնելու համար: Գուցեն՝ հակառակը:

Ամեն դեպքում մտածեք-հաշվարկեք-ինքներդ հասեք ճշմարտությանը, ոչ թե ամեն ինչ «հալած յուղի տեղ» ընդունեք: Մանավանդ այն, ինչը ձեզ համար ինչ-որ բանի ելակետ կարող է դառնալ կամ էլ ինչ-որ կերպ կարող է օգտագործվել:

Կամ. եթե ձեզ հրապարակով հրավիրում են ինչ-որ վայր որևէ բան նշելու և վաղօրոք էլ հայտարարում են, թե պիտի այնպես անենք, որ այդինչ օրը այդքան մարդ հավաքվի՝ համենայն դեպս, մինչ այդ գնացեք նշված վայրը և փորձեք հաշվել՝ տեսականորեն զոնե հնարավո՞ր է դա, թե՞ ոչ... Մանավանդ՝ եթե ինչ-որ կերպ արձագանքելու եք դրան:

Երբ ինչ-որ մեկի մասին ինչ-որ բան եք լսում՝ հավատալուց առաջ ձեզ մի պահ դրեք նրա տեղը և տրամաբանեք, թե որքանով է հավանական հենց այն պահվածքը, որի մասին քիչ առաջ լսեցիք և այն էլ «առաջին ձեռքից»...

Ցանկացած բան դիտեք-կարդացեք-ընկալեք խստապահանջ խմբագրի, շահագրգիռ քննադատի, ամեն ինչը ամենայն մանրամասնությամբ ու տրամաբանվածությամբ հասկանալ փորձող Homo sapiens-ի աչքերով-ականջներով-մտքով:

Հիշեք, որ ձեզ համար ամենակարևորն ու ամենաանհրաժեշտը ՍՈՎՈՐԵԼ ՍՈՎՈՐԵԼԸ է:

Ու՛ որ ոչ ոք, բացի ձեզանից, մեծ հաշվով՝ դրանում շահագրգիռ չէ: Որովհետև յուրաքանչյուրն էլ ձեր պոտենցիալ մրցակիցն է: Որովհետև՝ դա ձեզ է անհրաժեշտ: Իրենց՝ անհրաժեշտ է հակառակը:

Կա գիտելիք, և կա ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ, որն անշուշտ, շատ ավելին է, քան կուտակած ողջ գիտելիքը՝ համախումբ: Թե անհատի և թե ողջ մարդկության համար: Իմացությունն այդ տրվում է Արարչից, բայց միայն այն դեպքերում, երբ դու սովորել գիտես, երբ ձգտում ունես, և երբ ստույգ ես ձևակերպում քո ցանկությունները... Ազնիվ ես, անմիջական ու անկեղծ:

Ոչ այս ճանապարհին, ոչ էլ ցանկացած այլ՝ մի վախեցեք սխալվելուց, շեղումներից, անհաջողություններից: Ոչ մի մահկանացու անսխալական չէ: Չի սխալվում նա՝ ով ոչինչ չի անում, թեև հենց դա էլ՝ ոչինչ չանելը, մեծագույն սխալ է: Եվ՝ աններելի:

Սխալներից ոչ ոք ապահովագրված չէ: Կարևորը՝ դրանք չկրկնելն է: Անթույլատրելի է ժամանակ վատնել սխալները կրկնելու վրա, երբ կարելի է ... նորերն անել:

«Անհաջողությունները,-ասել է հանրահայտ Յոնի Ֆորդը,- սոսկ առիթ են ամեն ինչ նորից, բայց ավելի խելամտորեն սկսելու համար»: Եվ իր անուրամալի հաջողությունները պայմանավորված են մշված սկզբունքի անշեղ կիրառմամբ: Դուք ևս կիրառեք այն՝ երբեք չհուսահատվելով:

Մեկ խորհուրդ ևս. ցանկացած, ամենավատ իրավիճակից անգամ ջանացեք շահած դուրս գալ: Մի հրաշալի, դասական դարձած օրինակ կա. Հուլիոս Կեսարը մավից ափ է իջնում Աֆրիկայում: Հանկարծ՝ ափ դեռ չհասած, փայտե կամրջակի վրա գայթոն է և «սկսում» ընկնել: «Սկսում է»՝ շատ է ասված: Ընկնելն ի՞նչ է՝ վայրկյաններ: Բայց հենց այդ մեկ-երկու վայրկյանի ընթացքում էլ նվազագույնը երեք միտք է անցնում նրա գլխով. ինքն իր զինվորների մոտ խայտառակ լինելու իրավունքը չունի, իր զինվորներն այս «տապալունը» որպես վատ կանխանշան կդիտեն և աֆրիկյան արշավանքը կտապալվի և՛ ոնց դուրս գալ

այս վիճակից... Հիշեք, որ նա արդեն ընկնում է... Յուրաքանչյուր հասարակ մահկանացու էդպես անփառունակ էլ կտապալվեր գետնին՝ շրջապատի քրքիջների կամ էլ, լավագույն դեպքում, կարեկցական հայացքների ու բացականչությունների ներքո: Հասարակ մահկանացուն՝ անշուշտ, բայց նա Հուլիոս Կեսարն էր: «Աստվածային Հուլիոսը» ավելի լայն է բացում ձեռքերը ու, շրմփալով գետնին, բացականչում. «Դու իմ ձեռքերում ես, Աֆրիկա...»: Սրան, անշուշտ, հետևում են ավիին շարված լեգիոներների հիացական, մարտաշունչ, Կեսարին փառաբանող բացականչությունները...

...Այս անգամ էլ չարժե խուսափել «ինքնաառաջադրանքներից»:

Ընդամենը երեքը, որոնք առավելագույնս են համապատասխանում ենթավերնագրին:

Վերցրեք Խորենացու «Ողբը». համեմատեք այնտեղ նկարագրվածը այսօրվա իրավիճակի հետ, տրամաբանորեն, նաև՝ որոշ աղբյուրներից օգտվելով, գտեք նմանություն-տարբերությունների պատճառները: Նաև՝ մինչև այսօրը հասցրած ընթացքի: Ինչպես այս, այնպես էլ բազմաթիվ այլ վերլուծություններ կատարեք «երեք զրուցակցի» սկզբունքով. երեքն էլ դուք եք, սակայն խնդրին մոտեցեք նախ՝ լավատեսի. ապա՝ վատատեսի և, վերջապես՝ իրատեսի դիրքերից: Համոզված եղեք՝ շատ հետաքրքիր բաներ կստացվեն:

Ուսումնասիրեք, ենթադրենք մեկ ամսվա մամուլը և նյութեր գրեք. «Ինչի մասին ենք լռում. ինչու» և «Ինչի մասին ենք խոսում. ինչու» վերնագրերով:

Բոլոր երեք նյութերի ժանրերն էլ ընտրեք ինքներդ:

Ինքնատիպ մտածողությունից- ինքնատիպ արտահայտամիջոցներ

Ինքնատիպ մտածողությունն ու երևակայությունը ինքնին նաև, որպես տրամաբանական արդյունք, ինքնատիպ արտահայտչամիջոցներ են ենթադրում: Վերջիններս ևս որքան աստվածատուր են և ինքնաբուխ, նույնքան էլ որոշակի «մարզանք» են նախատեսում:

Լավագույն «մարզանքն» այս դեպքում ևս կարդալն է: Ինչպես գեղարվեստական, այնպես էլ փաստավավերագրական

գրականություն: Որովհետև կարդալը ոչ միայն հնարավորություն է տալիս անմիջականորեն ընկալել և արժևորել կարդացածը, այլև միանգամայն նոր, գուցե՝ անսպասելի մտքերի, պատկերների, ձևակերպումների ծնունդ է դառնում:


Այս առումով ևս արժե ականջալուր լինել Գյոթեին. *«...Արվեստի իսկական կյանքն առանձնահատուկի ընկալման և պատկերման մեջ է:*

Եվ հետո. այնքան ժամանակ, քանի դեռ մենք կվերարտադրենք ընդհանուրը՝ ամեն ոք կարող է մեզ ընդօրինակել, մինչդեռ առանձնահատուկը ոչ ոք չի կարող մեզնից փոխառնել: Ինչո՞ւ: Որովհետև ուրիշ ոչ ոք այդ բանը չի վերապրել: Այնուհետև՝ չպետք է վախենալ, որ առանձնահատուկը չի անդրադարձվի: Յուրաքանչյուր բնավորություն, որքան էլ նա ինքնատիպ լինի, և յուրաքանչյուր նկարագրվող առարկա, փայտից մինչև մարդը, իր մեջ ընդհանուր մի բան ունի, որովհետև ամեն ինչ կրկնվում է և աշխարհում չկա մի բան, որ միայն ՄԵԿ ԱՆԳԱՄ եղած լինի»:

Սա, իհարկե, արվեստի՝ հավերժականի մասին է, սակայն որպես ելակետ և սկզբունք վերաբերում է ամեն ինչին, այդ թվում և՛ ժուռնալիստիկային, քանզի առանց այս սկզբունքների և ընկալումների երբևէ և որևէ մնայուն արժեք չի կարող ստեղծվել:

Ու նաև՝ զուգահեռներ փնտրեք: Արմատներ: Շատ կարդալու և ուշադիր լինելու դեպքում՝ դրանք ինքնաբերաբար կգտնվեն: Մանավանդ մարդկությունն իր հստակ հիշվող հազարամյակների ընթացքում գրեթե էական բարոյահոգեբանական փոփոխություններ չի կրել և այդ առումով մեծ առաջընթաց չի արձանագրել, ուստի այն, ինչ այսօր է արվում և ստեղծվում, իր նախատիպն ունի ոչ շատ վաղ անցյալում անպայման: Նորից մտաբերեք Գյոթեին *«...ամեն ինչ կրկնվում է և աշխարհում չկա մի բան, որ միայն ՄԵԿ ԱՆԳԱՄ եղած լինի»:*

Բերեմ իսկապես արտառոց մի օրինակ. շատերն են հիշում Կոռնեյ Չուկովսկու ստեղծագործությունը՝ լուսատու կուլ տված կոկորդիլոսի մասին: Ստորև բերվող պատկերը, կարծես թե դրա ձևավորումներից լինի: Բայց՝ «կարծես թե» միայն: Որովհետև եթե Չուկովսկին դա գրել էր 20-րդ դարում, ապա «ձևավորումն» արվել է մեզ արդեն հայտնի «պատի» թերթերից մեկում տես նա-կագրությունը (նկար 7):



*Շիշկինո, Արևելյան Սիբիր. Վաղ քարե դար
Մինչև VI հազարամյակ Ք.Ճ.Ա*

Կարդացեք մեկ անգամ ևս Չուկովսկուն, նորից նայեք նկարին՝ ուշադրություն դարձնելով մակագրությանը. հնարավոր է, որ ոչ միայն նոր ու ինքնատիպ մտքեր ծնվեն, այլև՝ ձևակերպումներ: Կամ՝ կարդացեք այս փոքրիկ առակը.

«Առակ գիշատիչ գառնուկի մասին

Խոտերի ցողունների վրա ապրում էին պատլիկ որդեր: Նրանցից ավագները ուսուցանում էին կրտսերներին. «Նայեք այն վագրին, որ պառկած է այնտեղ: Նա ամենաբարի արարածն է, նա երբեք մեզ ոչ մի վատություն չի արել: Իսկ ահա գառնուկը վտանգավոր գիշատիչ է. եթե նա գար այստեղ, հիմա խժռած կլիներ բոլորիս այն խոտերի հետ, որտեղ մենք ապրում ենք: Բայց վագրն արդարամիտ է՝ նա մեր բոլորի վրեժը կլուծեր»:

...եվ պարզապես մտածեք: Ու ոչ միայն հարաբերականության տեսության մասին կամ էլ, որ ամեն ինչն էլ, ի վերջո, անցողիկ է, այլ, պարզապես... մտածեք:

Ու հաստատ, նոր ու հետաքրքիր զուգահեռներ, մտքեր ու ձևակերպումներ կծնվեն:

Ինչից սկսել

...Այդ մտքերն ու ձևակերպումները, ինչպես նաև առօրյա դիտարկումները գրի առնելուց՝ «Ֆելլիսիի պարկը» լցնելուց: Դրանք այսօր կարող են և պետք չգալ, սակայն վաղը՝ ո՞վ իմանա... Գուցե առաջանան այնպիսի խնդիրներ, որոնց լուծումներն այսօր իսկ կան կամ գտնվել են:

Անչափ հետաքրքիր են հայտնի մարդկանց նոթատետրերը. Պուշկին, Դոստոևսկի, Տոլստոյ, Բլոկ, Քամյու, Մոեմ, Տվեն, Ստենդալ, Ֆիցջերալդ, Ստանիսլավսկի, Վոլոշին, Իլֆ...

Մի դեպքում նոթագրությունը ինչ-որ բանի հիմք է, մյուս դեպքում՝ ինքնուրույն գործ, մեկ այլ դեպքում՝ քարեր, որոնք հետո տարբեր մատանիների «վրա են դրվելու», մեկ այլ դեպքում... Ոչ մի շարադրանք կամ վերարտադրություն չի կարող փոխարինել անմիջական ընթերցումի հնայքին ու կարևորությանը, այնպես որ ինքներդ վայելեք դրանք:

Հանրահայտ լրագրող Անատոլի Ագրանովսկին, օրինակ, իր նոթատետրում գրեթե շարադրում էր իր ապագա նյութերը և այն տպավորությունն է, թե այն պահին, երբ հեղինակը կորոշի ձեռնամուխ լինել նյութի «մաքրագրությամբ», նրան մնում է ընդամենը բացել նոթատետրը և սկսել... արտագրել:

Բոլորովին այլ է Իլյա Իլֆի նոթատետրը: Այնտեղ աֆորիզմի հասցված գրառումներ կան, որոնք, սակայն, հետագայում իրենց տեղն են գտել գեղարվեստական և այլ ստեղծագործությունների մեջ:

Ահա որոշ օրինակներ.

- *Բարձրագույն մաթեմատիկայի գիրքը սկսվում է այս բառերով. «Մենք գիտենք...»:*
- *Երեկոյան թերթը արևի խավարման մասին գրել էր այնպիսի հպարտությամբ, կարծես դա ինքն էր կազմակերպել:*
- *Պետք է հարամենս հաճույքդ,-ասում էր ծեր րաբին,-չի կարելի այսքան լավ ապրել:*
- *Այսպիսի մոլորակում ապրելը՝ ժամանակի ապարդյուն վատնում է:*
- *Հոգեբուժական հիվանդանոց, որտեղ բոլորն առողջ են:*
- *Ստավարժանքներով չհյուժված դեմք:*

- *Ես կմեռնեմ երջանկության շեմին՝ կոնֆետներ բաժանելուց մեկ օր առաջ:*
- *Նկարվել էր գրապահարանի խորապատկերին ու այնպիսի տեսք ուներ՝ կարծես այդ բոլոր գրքերի հեղինակն ինքն էր:*
- *Այն ժամն էր, երբ սիրահարները իրար հրաժեշտ են տալիս մուտքերի առաջ:*
- *Հրամայված է քաջ լինել:*
- *Իր ճամպրուկի բոլոր խռիկներով ձգտում էր դեպի արտասահման:*
- *Կապիկներից գողանում են բանանը ու մատակարարում Մոսկվան:*

Մեկ ինքնաառաջադրանք ևս. վերցրեք հենց թեկուզ մեջքերված նմուշները և փորձեք դրանք «տեղադրել» ընդհանուր ինչ-որ մի տեքստի մեջ, այսինքն՝ մնացյալն ինքներդ գրեք՝ ապավինելով ձեր երևակայությանը: Ծավալային սահմանափակումներ չկան և չեն էլ կարող լինել. կարևորն այն է, որ տվյալ դիտարկումը դառնա ինչ-որ տեքստի օրգանական մաս՝ ամբողջացնելով այն: Այնուհետև գտեք հեղինակի օգտագործած տարբերակը և համեմատեք: Դրանից հետո մտածեք և գրեք ... երրորդ տարբերակը:

Ու նաև՝ տամահոջիներ հնարել պետք չէ. և ոչ միայն այն պատճառով, որ դրանք արդեն իսկ կան: Իրական կյանքն այնքան հարուստ է և բազմազան, իրական հույզերի ու հոգատարության արժանի և կարոտ առարկաներն՝ այնքան բազմաթիվ, որ, փոքր ինչ դիտունակ լինելու դեպքում, «Ֆելիմիի պարկն» ամեն օր կլցվի այնպիսի դիտարկումներով, որոնք վաղն անպայման մոր ու հրատապ թեմա կարող են դառնալ կամ՝ խորհրդածությունների նյութ և կամ՝ միանգամից ակնարկ ու էսսե:

Մինչեւ «դեպքի վայր» մեկնելը

Լրագրողի և նյութի «հանդիպման» երեք հիմնական տարբերակներ կան. լրագրողին պարզապես հանձնարարում են տվյալ թեմայի մշակումը կամ լուսաբանումը, լրագրողն ինքն է գտնում նյութը և այն համաձայնեցնում է ղեկավարության հետ, և, վերջապես՝ «նյութն» է գտնում լրագրողին: Վերջին տարբերակն ամենացանկալին և իդեալականն է. դա նշանակում է, որ տվյալ լրագրողն իսկապես իր ոլորտի կամ բնագավառի վարպետնե-

րից է ու դրա համար էլ հենց նրան է «գտել» տվյալ նյութը: Նմանատիպ «հանդիպումները» նաև կազմակերպվում են: Դուք տարբեր տեղերում ունեք ձեր տեղեկատուները, որոնք էլ անհրաժեշտ ինֆորմացիա են տալիս ձեզ, որից էլ դուք ընտրում եք ձեզ հուզող թեման կամ էլ այն, ինչը ձեր կարծիքով կհուզի նաև այլոց:

Երկրորդ տարբերակի դեպքում՝ երբ լրագրողն ինքն է նյութ փնտրում, նա պետք է օգտագործի բոլոր հնարավոր՝ բաց և փակ աղբյուրները. սկսած կառավարության որոշումներից մինչև ամուսնական հայտարարություններ և անշարժ գույքի առ ու վաճառք կամ հեռուստառադիոժրագիր. դիտումնակ, խորամիտ և նրբամիտ լինելու դեպքում լրագրողն այդ սպեկտրում օրական տասնյակներով նյութեր կգտնի: Ավելին՝ պարտավոր է: Սակայն ինչպես էլ որ «հանդիպեն» նյութն ու լրագրողը, միևնույն է՝ այդ պահից ի վեր մինչև պատրաստի ստեղծագործությունը հանրությանը ներկայացնելը այն, պարտադրաբար, անցնելու է որոշակի փուլերով, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկություններն ու սկզբունքները:

Այդ առումով առաջին փուլը, բնականաբար, նախապատրաստական աշխատանքն է, որն անմիջականորեն նախորդում է «դեպքի վայր» մեկնելուն:

Սկսեք ճշգրտումներից. ինչ իրադարձություն է լուսաբանելու, որն է լուսաբանման նպատակը, ինչ ծավալ և տեղ են նախատեսում դրա համար, որ դիտարկումներին է նախապատվություն տրվում. սրանք կարևոր խնդիրներ են, որոնք անպայմանորեն կնպաստեն նախնական իրավիճակին առավելագույնս տիրապետելուն:

Բացեք «Ֆելինիի պարկը»: Եթե դուք հետևել եք նախորդ խորհուրդներին և ձեր ամենօրյա ստեղծագործական գործունեության ընթացքում պարբերաբար գրառումներ եք կատարել (և դա անկախ նրանից, որ դուք աշխատում եք ձայնագրիչով), ապա ձեր նոթատետրում որևէ համապատասխան և արժեքավոր բան անպայմանորեն կգտնվի: Գոնե որևէ կողմնորոշիչ կգտնեք, որը և ձեզ հաստատապես վստահություն կներշնչի, որ դուք պատրաստ եք հանձնարարությունը կատարելուն:

Պլանավորեք «դեպքի վայրում» ձեր անելիքը: Մտովի պատկերացրեք անելիքների հերթականությունը, դասդասեք դրանք, ապա հստակեցրեք և կանոնակարգեք, որպեսզի առավելագույն արդյունավետությամբ օգտագործվեն թե ժամանակը, թե ջանքերը:

Որոշակիացրեք պատրաստելիք նյութի մասին ձեր նախնական պատկերացումները՝ ժանր, տրամաբանություն, ոճ, ծավալ, զուգահեռներ և այլն...

Եթե, իհարկե, ինչ-որ ժամանակ ունեք մինչև «դեպքի վայր» մեկնելը, փորձեք գտնել և կարդալ ձեզ առաջադրված թեմային առնչվող հնարավոր բոլոր գրվածքները կամ էլ դրա հետ որոշակի առնչակցություններ ունեցող նյութեր. դրանք անպայմանորեն կնպաստեն խնդրի առավել ամբողջական ընկալմանն ու պատկերացմանը, ինչպես նաև էապես կօգնեն այն լուսաբանելու ընթացքում. բազմաթիվ նրբություններ, որոնք դուք կարող է և չնկատելիք կամ չարժևորելիք՝ ձեր նախորդները կհուշեն ձեզ: Նման նյութերին ծանոթանալը ևս մեկ շատ կարևոր առավելություն ունի. ճանապարհներ են ի հայտ գալիս, ուղիներ, որոնք կարևոր են ցանկացած առաջաքայլ ճիշտ կատարելու համար:

Շատ հնարավոր է, սակայն, որ դուք այլոց փորձին ծանոթանալու անհրաժեշտ ժամանակը չունենաք: Այդ իսկ պատճառով էլ ցանկացած պահին, երբ դուք որևէ արժեքավոր բան եք կարդում, որը ձեզ համար ինչ-որ անհայտ, նոր շերտեր է բացահայտում կամ էլ մինչ այդ ձեզ համար գոնե անհայտ հարթություն՝ նշեք դրանք ձեր նոթատետրում, որպեսզի հետո, որքան էլ կարճ ժամանակ ունենաք, միայն նոթատետրը թերթելը բավարար լինի որոշակի առանցքային դրույթներ վերհիշելու և ըստ դրանց նաև անելիքները պլանավորելու ու իրականացնելու համար:

Որպեսզի ցանկացած պահի դուք պատրաստ լինեք «դեպքի վայր» մեկնելու:

«Դեպքի վայրում»

Ահա և դուք «դեպքի վայրում» եք: Նախապատրաստված և՛ պատրաստ: «Դեպքի վայրում» դրան անպայմանորեն պետք է ավելանա դիտողունակությունը, ամեն մի մանրամասն նկատելու, իմաստավորելու, գնահատելու կարողությունը, դրանցից յուրաքանչյուրը ձեր ապագա նյութի արդեն իսկ պատկերացրած

կոնցեպցիայի մեջ իր արժանի տեղը դնելու ունակությունը:

Եվ ճկուն միտքը:

Որովհետև ցանկացած նոր մանրամասն, որն անգամ մեծ հաջողությամբ տեղավորվում է ձեր նախօրոք պատկերացրած կոնցեպցիայում, միևնույն է՝ որոշակիորեն փոխում է այդ կոնցեպցիան, և դուք հընթացս ստիպված և պարտավոր եք ճշգրտել ոչ միայն խնդրին «մոտենալու» ձեր մարտավարությունը, այլև տեղեկություններ ամբարելու և ամբողջացնելու ռազմավարությունը:

Ի դեպ. «դեպքի վայրում» ժուռնալիստիկայի երկու հիմնական մեթոդներն են սկսում աշխատել. ռեպորտաժը և հարցազրույցը: Սակայն արդեն ոչ թե որպես ժանր, այսինքն՝ նպատակ, այլ որպես միջոց՝ տեղեկություններ հավաքելու համար:

«Ռեպորտաժատիկա» մոտեցումը հնարավորություն է տալիս մանրամասների, ընթացքի ներկայացման, նյութի բուն էությունը բացահայտող և առավել ակնառու դարձնող երբեմն մաս կողմնակի, առերևույթ անմիջական կապ չունեցող դետալների միջոցով նպաստել անհրաժեշտ նպատակի իրականացմանը: Աշխատեք նշել ցանկացած մանրամասն, անգամ՝ մանրուք, որն այս պահին ձեր կարծիքով, բացարձակապես կապ և առնչություն չունի խնդրո առարկայի հետ: Նշեք դա և հիշեք. մախ դրանք միշտ էլ կարող են պետք գալ և, վերջապես, վաղը կամ մյուս օրը ինչ իմանաս, թե այդ մանրուքներն ինչ էական դեր կարող են կատարել ինչ-որ մի բան նորովի կամ էլ ընդհանրապես բացահայտելու գործում:

Մտապահեք ևս մի բան. մարդ արարծն իր ինֆորմացիայի 85 տոկոսը ստանում է՝ նայելով և տեսնելով...

Հարցազրույցի մեթոդն իր հերթին հնարավորություն է տալիս առավելագույն մասնակիցների ընդգրկմամբ՝ իրադարձության մասնակից-դիտորդ-դեկավար-կատարողներ-ընդդիմախոս-մասնագետ-հերոս-վկաներ-հանդիսական-քաջատեղյակ անձնավորություն-հեղինակավոր կարծիք և տեսակետ ունեցող անհատ-մարդ, որին կարող է և հետաքրքրել տվյալ իրադարձությանը-կողմնակի անձեր (շղթան կարելի է կամովին շարունակել, որովհետև ցանկացած կոնկրետ իրավիճակում այս շղթան իր հստակ առանձնահատկությունները և ընդգրկումը կունենա) շղթայի յուրաքանչյուր օղակից կարծիքներ-տեսակետներ-մեկնաբանություններ ստանալ՝ դրանով իսկ ամբողջացնելով բուն նյութը կամ իրադարձությունը:

Նշված շղթայի յուրաքանչյուր օղակի հանդեպ հարցազրույցի միջոցով տեղեկություններ հավաքելու մեթոդը ևս պետք է ինքնատիպ լինի. ցանկացած անհատի հարցերը պետք է այնպես տրվեն, որ նրանցից յուրաքանչյուրը շահագրգիռ լինի պատասխանելու դրանց:

Բացի այդ, խիստ ուշադիր լսեք զրուցակցին, որովհետև նրա պատասխանների մեջ շատ ու շատ դեպքերում նոր հարցերի մոլոր ինֆորմացիաներ են լինելու և միայն ձեր ուշադրությունից ու ճկուն մտքից է կախված զրույցը ճիշտ հունով տանելու, զրուցակցից առավելագույնը «քամելու» ունականությունը:

Խիստ ուշադիր եղեք ձեր զրուցակցի ցանկացած արտահայտության նկատմամբ և ոչ միայն դրանք ճշտորեն փոխանցելու նպատակով, այլ նաև՝ դրանց միջոցով համեմատությունների կամ էլ մանրամասների շերտեր բացահայտելու: Իրավիճակն այնքան ունիվերսալ է, որ օրինակներ կարելի է բերել անգամ գրականությունից.

«Քեզ կարող էր նկարել նրբին

Վրժինով - միայն Ֆրագոնարը...»

Եվ այս դեպքում, եթե ծանոթ չես ժան Օնորե Ֆրագոնարի արվեստին, ապա դժվարությամբ կպատկերացնես Չարենցի նայդքան հուզած Մագդալի դեռատի գեղեցկությունը, որը փաստորեն խելքահան է արել հանճարեղ բանաստեղծին, մինչդեռ եթե ծանոթ ես կամ՝ ասելուց հետո ես ծանոթանում Ֆրագոնարի, ասենք, «ճոճանակ», «Հանդիպում» և, առավել ևս՝ «Գիրք կարդացող աղջիկը» կտավներին, ապա շատ ավելի նյութական կպատկերացնես պոետի տվյալանքների աղբյուրն ու միաժամանակ, ինքդ էլ ոչ միայն ինչ-ինչ ենթադրություններ ու եզրակացություններ կարող ես անել, այլև ճշտել ու ճշգրտել որոշակի մանրամասներ, որոնք անպայմանորեն կհարստացնեն քո նյութը: Ինչպես, ենթադրենք, շատ ավելի հասկանալի կարող է լինել Իսահակյանի «Աբու Լալա Մահարի»-ն այն դեպքում, երբ դու ծանոթ ես Աբու-լ-Ալլա ալ-Մահարիի բուն ստեղծագործությանն ու կենսագրությանը, որում, ի դեպ, անկարևոր չէ նաև ենթադրենք այն, որ դա Ահմադի մականունն է և նշանակում է՝ «Բարձունքի հայր» Մահարիից:

Եվ վերջապես. իրադարձության գլխավոր հերոսի պատասխանները, ի վերջո, կարող են և պարզապես փոխել նախապես մտածված և պլանավորված կոնցեպցիան, որի դեպքում ձեր ուշադրությունն առավել է կարևորվում:

Մշտապես հիշեք. դուք «դեպքի վայր» եք եկել ոչ թե դեպքերն ու դեմքերը ձեր պատկերացումներին հարմարացնելու համար, այլ՝ իմանալու ճշմարտությունը, այն, ինչ տեղի է ունեցել: Հենց այդ սկզբունքն էլ պետք է դրված լինի ձեր գործունեության հիմքում:

Շարժվեք և խոսեք ձեր գրուցակիցների հետ հավասարը հավասարի պես՝ պահպանելով բարեկրթության և միջանձնային հարաբերությունների էթիկետի բոլոր կանոնները. երբեք ձեզ ցածր կամ բարձր մի «դասեք» ձեր գրուցակցից՝ այդ դեպքերից ցանկացածի պարագայում զրույցը, պարզապես, չի ստացվի:

Հարգեք թե ձեզ, թե ձեր գրուցակցին նաև հարցերը ձևակերպելու և դրանք առաջադրելու ժամանակ, ինչպես նաև ձեր գրուցակցին լսելիս: Ժուռնալիստիկայի տեսության ռուսական դպրոցի բավականին հայտնի ներկայացուցիչներից մեկը՝ Վ.Գորոխովը ճշգրիտ բնութագիր է տվել. **«Լսելու ունակությունը բնատուր ծիրք չէ, այլ՝ բարձր զարգացած ինտելեկտի և զգացումների կուլտուրայի արդյունք»:**

Առաջադրվող հարցերի որակին և ձևին անդրադառնալուց առաջ, արժե, որպեսզի ինքներդ ձեզ համար մի շատ կարևոր հարց ճշտեք՝ ե՞րբ են առաջանում իմաստալից հարցերը: Միանշանակ է, որ երբ ոչինչ չգիտես, կարող են զուտ հետաքրքրասիրությունը բավարարող կամ էլ ինֆորմացիոն բնույթի հարցեր առաջանալ, որոնք իմաստալից հարցերի հիմք կարող են դառնալ միայն, իսկ երբ գիտես ամեն ինչ՝ հարցեր չեն կարող առաջանալ: Օբյեկտիվորեն:

Հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցեր առաջանում են այն ժամանակ, երբ դուք ինչ-որ բան գիտեք, սակայն գիտեք նաև, թե ինչ չգիտեք և ինչու եք ուզում ձեր չիմացածը իմանալ: Կամ էլ՝ պետք է ամբողջացնել ձեր պատկերացումները և ճշգրտել որոշակի խնդիրներ: Կամ էլ՝ դուք պարզապես ցանկանում եք, որ ձեր գրուցակիցն ինքն արձանագրի որոշակի ճշմարտություններ:

Ցանկացած դեպքում, որպեսզի կարողանաք ստանալ ձեզ հետաքրքրող հարցի լիարժեք և թե ձեզ, թե հասարակությանը բավարարող պատասխանները, դուք պարտավոր եք ոչ միայն ճիշտ առաջադրել ճիշտ հարցերը, այլև շահագրգռել ձեր գրուցակցին, որ նա ոչ միայն անկեղծ, այլև հնարավորինս ամբողջական պատասխաններ տա:

Օրինակ. «Ինչո՞ւ և ինչպե՞ս ընտրեցիք ժուռնալիստի մասնագիտությունը» հարցը շատ քչերին կստիպի անկեղծանալ և հնարավորինս ամբողջական և հետաքրքիր պատասխան տալ: Մինչդեռ եթե դուք դրան հավելեք (հետո՝ հրապարակման մեջ, դուք դա կարող եք նաև չհիշատակել), որ, ենթադրենք, այսինչ կամ այնինչ հեղինակությունները այս հարցին այսպիսի հետաքրքիր և ուշագրավ պատասխաններ են տվել, ձեր գրուցակիցն արդեն խիստ նյութականացված շահագրգռություն կունենա՝ այդ հեղինակություններից ետ չմնալու: Ու ստիպված կլինի իմաստալից ու խելոք տարբեր ձևակերպումներ գտնել իր ընտրությունը որպես առանցքային նշանակության խնդիր ներկայացնելու համար:

Եվ, համոզված եղեք, նա ջանք ու երևակայություն չի խնայի խնդրի լուծման ողջ ընթացքը առավելագույն պատկերավորությամբ նկարագրելու և հիմնավորելու համար:

Զրույցի նրբությունների մասին մենք արդեն «լսեցինք» Լարի Քինգին, իսկ հիմա, ահա թե ինչ է մտածում նույն այդ հարցադրումների մասին ռուս ժուռնալիստիկայի վարպետներից մեկը՝ Վալերի Ագրանովսկին.

«Ճակատային» հարցը գրուցակիցի մտածել չի պահանջում նաև այն պատճառով, որ պատասխանելը հետաքրքիր չէ: Ընդունենք, թե որոշ կենսագրական տվյալներ են պետք.

-Բարի եղեք, պատմեք ձեր կենսագրությունը:

-Ես ծնվել եմ 1940 թվականի հոկտեմբերի 14-ին Յարցևո շրջանի Բերեզովկա գյուղում: Դպրոցն ավարտել եմ 1956 թվականին: Ապա ընդունվել եմ...

Տաղտկալի է, մտքեր չկան, գրուցակիցը նայում է ժամացույցին և այդ հայացքը չի վրիպում լրագրողի աչքից:

Միևնույն հարցի մեկ այլ տարբերակ.

-Եթե կարող եք, հիշեք այն բարի մարդկանց, ովքեր հանդիպել են ձեզ կյանքում, իսկ հետո նրանց, ում չեք էլ ուզում հիշել:

Այս դեպքում գրուցակիցը պատուհանից դուրս կնայի, հոգոց կհանի, ծխախոտ կվառի և երկար դադար կվերցնի, և, ես համոզված եմ, որ կսկսի խոսել և լրագրողին անհրաժեշտ կենսագրական բոլոր տեղեկությունները այդ պատմության մեջ կլինեն:

-Մեր գյուղում մի մարդ կար, մինչև կյանքի վերջը տրեխ էր հագնում, թեպետ շուրջբոլորը կրունկներն էին կտկտացնում,

բայց նա սկզբունքորեն տրեխները չէր հանում. քաղաքը՝ քաղաք, բայց գյուղը պիտի մաքուր լինի: Մի անգամ, ես չէ որ գյուղից եմ, ընդամենը 12 տարի է, որ քաղաք եմ եկել, վերադարձա իմ Բերեզովկան, իմ Յարցկյան շրջանը և գյուղկոտպի մոտ հանդիպում եմ Ալյոշա պապին, նրան մինչև 80 տարեկանը, մինչև մահը այդպես էլ ասում էին՝ Ալյոշա...

Այն ամենը, ինչ վերաբերում է մարդու կենսագրությանը, ես երբեք չեմ հավաքում «ծննդից սկսած», այլ միայն «կցկտուր մեթոդով»: Իսկ հետո, երբ անհրաժեշտություն է առաջանում, միշտ կարելի է միացնել. ճիշտ է, նման անհրաժեշտություն, համարյա չի առաջանում, որովհետև ընթերցողի համար ձանձրալի է «հարթ» կենսագրությունը, նա նախընտրում է կենդանի պատմածը:

-Ձեզ վիճակվե՞լ է ինչ-որ մեկին փրկել: Փրկե՞լ է ինչ-որ մեկը ձեզ ինչ-որ բանից: Եթե երազներ եք տեսնում, զերազանցապես ի՞նչ երազներ: Կամ՝ քանի անգամ են կրկնվում այդ երազները: Ու՛ չե՞ք մտածել, թե ինչո՞ւ:

Այս հարցերից ցանկացածը անպայման իր հետևից բերելու է կենսագրական տվյալներ: Ահա ևս «ոչ ճակատային» խոսակցության մի օրինակ: Ընդունենք, որ ձեզ պետք են տեղեկություններ գրուցակցի մասնագիտական գործերի մասին: Կարելի է հարցնել.

-Պատմեք, խնդրում եմ, ինչպե՞ս եք դուք աշխատում:

-Ա, ինչպե՞ս եմ աշխատում: Ոչինչ,- 100-ից 99 դեպքում կատանաք պատասխանը: -Նորմալ: Պլանը 103 տոկոսով կատարում եմ, որակից չեն բողոքում, 180 ռուբլի՝ առանց պահումների վաստակում եմ:

Եվ՝ վերջ: Ոչ մի կենդանի մանրամասն, ոչ մի միտք, ոչ մի զգացում, ի՞նչ անի լրագրողը՝ հայտնի չէ... հարցը կրկնի՞: Բայց կարելի է նաև այսպես.

-Եկեք միասին հաշվենք՝ մի հերթափոխում քանի՞ քայլ եք անում:

-Իսկ ինչո՞ւ:

-Ասում են՝ ինչքան շատ եք քայլում, սիրտն այնքան լավ է աշխատում:

Մի խոսքով՝ հաշվում եք: Եվ ամեն ինչ կասվի՝ ո՞ւր են ուղղվում քայլերը, ինչո՞ւ, լա՞վ է դա, թե՞ վատ է, ինչպե՞ս է անդրադարձնում աշխատավարձի վրա, այդ քայլերի պատճառով

որակը չի՞ տուժում, քայլերի թիվը ավելացնե՞լ է պետք, թե՞ կրճատել, աշխատավարձը դրանից կբարձրանա՞, թե՞ կիջնի՝ գրուցակցի ամբողջ մասնագիտական գործունեությունը փաստացի ներկայացված է, և լրագրողն արդեն չի կարող նրա խոսքը կտրել»:

Շատ կարևոր է, սակայն, որ այդ «հաշվարկների» ընթացքում դուք ոչ մի էական դետալ կամ մանրամասն անուշադրության չմատնեք, որովհետև հենց այդ դետալներից ու մանրամասներից է գոյանալու, կառուցվելու, ամբողջանալու նյութը: Օրինակ, եթե դուք ակնարկ եք որոշել գրել գյուղի մասին, երբեք էլ անկարևոր չէ այն, թե ով է առաջինը արթնանում այդ գյուղում. հացթուփը, զանգահա՞րը, քահանա՞ն, գյուղապետը, թե՞ ուսուցիչը... Կամ էլ՝ հովիվը: Կամ էլ՝ որևէ մեկ ուրիշը: Եվ դա ոչ միայն, ու, անգամ, ոչ այնքան պարզ հիշատակման համար է, որքան նյութի, տվյալ դեպքում՝ ակնարկի կոնցեպցիայի:

Գնահատելով Լեոնարդո դա Վինչիի բազմաշերտ հանճարը՝ Ջանի Բոդարին ուշադրություն է սևեռում դրա դրսևորումներից մեկի վրա. *«Լեոնարդոյի հանճարի բնորոշ կողմերից մեկն այն է... որ նա, պատմության մեջ առաջին անգամ մեքենան սկսեց դիտարկել ոչ թե որպես ինչ-որ մի օրգանական ամբողջություն, այլ՝ ավելի պարզ կառուցվածքների համադրում:*

Լեոնարդո դա Վինչին մեքենաները «մասնատեց» առանձին տարրերի՝ «գործառնությունների». օրինակ՝ *նա հատուկ ուսումնասիրեց շփման գործառնությունը, որը նրան հնարավորություն տվեց գծագրել առանցքակալ՝ գնդաձև և կոնուսային, նա նույնիսկ հնարեց մի սարք, որը սկսել է միայն վերջերս արտադրվել ավիացիայում կիրառվող գիրոսկոպների համար»:*

Անդրադառնալով իրերի բնությանը՝ Լեոնարդո դա Վինչին խորհուրդ է տալիս նաև. *«Որևէ իր չի կարելի ոչ սիրել, ոչ էլ ասել, քանի դեռ այն մենք չենք ճանաչել ու հասկացել»:* Որովհետև հենց այդ ճանաչման ու հասկանալու ընթացքն է, որ բերելու է երևույթի ամբողջական ընկալմանը:

Դեռնց այդպես՝ դետալ առ դետալ մշակելով և ապա դրանք ճիշտ համակցելով է ամբողջանում նաև նյութը՝ անկախ նրանից, թե ինչ ժանրով է այն գրվում կամ ինչ ոճով:

Առավելագույն օբյեկտիվություն, անկողմնակալություն և անաչառություն հանդես բերեք: Զրուցեք բոլոր շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի հնարավորություն ունենաք ի վերջո բացա-

հայտելու ճշմարտությունը: Եվ այս դեպքում խոսքը բնավ էլ կոնֆլիկտային իրավիճակներին չի վերաբերում միայն: Դրանք ինքնին հասկանալի են: Խոսքը «նույն ուղղությամբ նայող» մարդկանց է վերաբերում նաև: Որովհետև որքան էլ նրանք նույն ուղղությամբ են նայում, միևնույն է, տարբեր բաներ են տեսնում. որովհետև, նախ՝ տարբեր ելակետեր ու նախատրամադրվածություններ ունեն, ապա՝ տեսնելու ու ընկալելու միմյանցից տարբեր կարողություններ և վերջապես՝ իրենց ինքնատիպ աշխարհայացքն ու արժեհամակարգը, որոնք էլ ի վերջո վճռական դեր են կատարում ընկալումների և գնահատումների առումով:

Եվ վերջում՝ «դեպքի վայրից» հեռանալուց առաջ ձեր դիտարկումների, ձեր լսած-իմացածների հիման վրա, համենայն դեպս, մտովի «քննչական փորձարարություն» անցկացրեք. հնարավոր էր այդ բանը այստեղ և այդպես: Ինչո՞ւ: Ինչպե՞ս:

Թե՞...

«Դեպքի վայրից» մինչև գրասեղան

«Մինչև»-ը թե ժամանակային, թե, առավելևս՝ տարածական իմաստով, հարաբերական է: Երկու կարևոր՝ նախապատրաստական և «տեղազննական» փուլերն այլևս ավարտվել են, իսկ դրանց, բնականաբար, հաջորդում է գնահատումների և արժևորումների փուլը, որն էլ հենց «դեպքի վայրից» մինչև գրասեղան (անկախ նրանից, թե դրա վրա ինչ է դրված. համակարգիչ, թե թուղթ ու մատիտ) ընկած թե տարածքն է, թե ժամանակը:

Մտովի ի մի բերեք ձեր տեսածն ու լսածը: Ակնհայտ է, որ նյութի այն նախնական կոնցեպցիան, որը ձևավորվել էր նախապատրաստական փուլում, որոշակի, գուցեև էական փոփոխություններ է կրել՝ այն ամենի ազդեցությամբ, ինչ լսել կամ տեսել եք «դեպքի վայրում»: Դա ճշգրտումների և ամբողջացումների սկիզբն է հանդիսանում:

«Դեպքի վայրից» մինչև գրասեղան ընկած ճանապարհին ամենակարևոր հարցը, որը վերջնական պատասխանի կարիք ունի, հետևյալն է. «Անհրաժեշտություն կա՞ վերադառնալու»:

Եթե կա՝ ինչո՞ւ, ինչի՞՞ համար, ի՞նչ արդյունքի ակնկալիքով:

Եթե չկա՝ հետո, գրասեղանի մոտ կարո՞ղ է, արդյոք, առաջանալ այդ անհրաժեշտությունը:

Սրանք են այն ամենակարևոր հարցերը, որոնք վերջնական ճշգրտման կարիք ունեն:

Հարցազրույցի պարագայում «վերադառնալը» միանգամայն արդարացված ու հիմնավոր կարելի է ներկայացնել՝ տեքստը հեղինակագործելու անհրաժեշտությամբ:

Վերլուծությունների, հետաքննության, հետազոտության կամ ուսումնասիրության դեպքում ևս «արդարացումներ» կան. նոր ի հայտ եկած հանգամանքները՝ վարկածների, հարցերի, նոր պարզաբանումների անհրաժեշտության տեսքով:

Ակնարկի կամ հոդվածի դեպքում ևս «վերադարձն» արդարացում ունի. մեկ անգամ ևս ցանկանում ես վերապրել այն միջավայրը, այն մթնոլորտը, որի մասին գրելու ես:

Եվ, հրնթացս էլ, կատարում ես քո ճշգրտումները, տալիս այն հարցերը, որոնք ինչ-ինչ պատճառներով մոռացել էիր կամ էլ անհրաժեշտ ու նպատակահարմար չէիր համարել. միով բանիվ փորձում ես առավելագույնս ամբողջացնել այն նյութը, որը ավարտին ես պատրաստվում հասցնել շատ շուտով՝ գրասեղանի առջև:

«Վերադարձի» խնդիրը բարդանում է ավելի «թեթև» ժանրերի՝ լուրի, ռեպորտաժի, թղթակցության, հաշվետվության դեպքերում: Բայց, քանի որ պարտավորված եք նաև ազնիվ լինել, վերադառնում եք, որովհետև ձեզ պատասխանատու եք զգում ձեր իսկ լսարանի առջև. նրանք ձեր պատճառով չպետք է տուժեն և մյուս ՏՁՏՄ-ներից օգտվող այլ անձանցից նվազ տեղեկություններ չպետք է ստանան:

Ետ դառնալ-չդառնալու «ենթափուլի» հետ ձեր հարցերն ավարտելուց հետո, երբ արդեն ավելի է որոշակիանում դեպի գրասեղան անցնելիք ձեր ճանապարհը և ետ նայելու խնդիր այլևս չկա, մտածեք արդեն նյութի նոր ձևավորված կոնցեպցիայի շուրջ. առավելագույնս ջանացեք պլանավորել այն, պատկերացրեք հնարավոր մանրամասներով, որովհետև ցանկացած նյութ նախևառաջ գրվում է մտքում և ապա նոր միայն հանձնվում թղթին:

Փորձեք: Ու կհամոզվեք, որ գրել-ջնջել-փոխելու պրոցեսը մտքում շատ ավելի արդյունավետ և արագ է ընթանում, քան թղթի կամ համակարգչի վրա:

Ու, բացի այդ. մինչև գրասեղանին հասնելը մտածեք, թե ինչպիսի նյութ կցանկանայիք կարդալ ինքներդ՝ այն աստիճան տի-

րապետելով իրավիճակին և փաստերին, որքան որ տիրապետում էք այժմ: Ինչ ժանրով: Ինչպիսի մեկնաբանություններով ու մատուցմամբ:

Սա մինչև գրասեղանի առջև նստելը վերջին ու կարևորագույն հարցն է, որը ինքներդ պիտի տաք ձեզ և առավելագույն օբյեկտիվությամբ ու արագ գտնեք դրա պատասխանը:

Եվս մեկ խորհուրդ. հոգեբանները հայտնաբերել են, որ մարդ արարածին շատ ավելի հետաքրքրում է ոչ թե բացարձակապես ՆՈՐԸ, այլ հին, արդեն վաղուց իսկ ծանոթ երևույթի, իրադարձության, փաստի մեջ հայտնաբերված նոր շերտը կամ՝ մեկնաբանությունը:

Հիշեք դա և երբ մտքում կառուցում եք ձեր ապագա նյութը, աշխատեք առանձնացնել այդպիսի հատվածներ՝ ցանկացած ժանրի ձեր պատումն ավելի ուշագրավ, ինքնատիպ և հետաքրքիր դարձնելու նպատակով:

Գրասեղանի առջև

Եթե դուք արդեն նստել եք գրասեղանի առջև, նշանակում է դուք արդեն նաև հոգեբանորեն պատրաստ եք ավարտին հասցնելու ձեր աշխատանքը:

Սա ձեր գործունեության եզրափակիչ ու վճռական փուլն է:

Բայցև, միաժամանակ, ամենամահատական, ամենաներքին, ամենաներանձնական փուլը: Որին, ինքդ քեզ հետ մենակ մնալով, իսկապես պետք է պատրաստ լինես:

Եվ այսպես դուք երկուսով եք. դու և սպիտակ թուղթը կամ՝ համակարգիչը:

Քո մեջ՝ նաև քո ամբարած նյութը, որը պետք է թղթին կամ համակարգչին հանձնես:

Ավելորդ չենք համարում մեկ անգամ ևս հիշեցնել, որ ժուռնալիստիկան իր ամբողջության մեջ բնորոշող պատմություն-տեսություն-պրակտիկա եռամիասնության մեջ վճռողն ու ամենակարևորը վերջին օղակն է: Որովհետև բարձր ստեղծագործությունն է, որ դառնում է պատմություն, իսկ լավագույնը՝ տեսություն նաև:

Սա, այսպես ասած, որպես մուտք:

Հիմա՝ ելքի մասին:

Նյութի մոտավոր պլան ուրվագծեք ձեզ համար, անպայմանորեն գրավոր:

Կրկին բացեք «Ֆելիցիի պարկը». լրացրեք այդ պլանը, ինչպես նաև նոթատետրից այնտեղ փոխանցեք ձեր մտքերը, ձևակերպումները, նկատառումները՝ մի խոսքով այն ամենը, ինչը վերաբերում է տվյալ նյութին: Այս գործընթացը մի քանի եական առավելություններ ունի. նախ՝ ձեր «սկզբնաղբյուրը» դառնում է մեկը և ինչ-որ բան մոռանալու, չարտահայտելու հավանականությունը էապես նվազում է: Երկրորդ՝ «փոխանցման» ընթացքում դուք ևս մեկ անգամ վերապրում եք «փոխանցվող» դիտարկումների հետ կապված պահերը և կարող եք եական, սկզբունքային սրբագրումներ և խմբագրումներ կատարել «փոխանցվող» նյութի մեջ: Եվ վերջապես, նոր մտքեր, ձևակերպումներ կարող են ծնվել այդ ընթացքում:

Այս ամենը դասակարգելուց հետո դուք արդեն կարող եք «հանգիստ խղճով» ձեռնամուխ լինել շարադրմանը: Ինչպես Յորաքիոսն է ասել՝ երբ գործի էությունը մտածված է, բառերն իրենք իրենց էլ կգան:

Գրելն, անշուշտ, ստեղծագործական պրոցեսի գագաթնակետն է, և խիստ անհատականացված երևույթ է: Ոչ միայն լեզվի, ոճի կամ շարադրանքի առումով: Բոլոր առումներով: Ու՝ միաժամանակ: Սակայն քանի որ դուք ստեղծագործում եք հանրության համար, իսկ այն, ինչպես հայտնի է, միմյանցից խիստ տարբերվող շերտերից է կազմված, ուրեմն և դուք պետք է հետևեք որոշակի հոգեբանագեղագիտական կանոնների և սկզբունքների, որպեսզի հանրությանն ամբողջությամբ, այլ ոչ թե սոսկ ընտրյալներին հասանելի և մատչելի լինի ձեր ստեղծագործությունը:

Այնպես որ որոշ գործնական խորհուրդները ձեզ բնավ էլ չեն խանգարի: Մինչև «խաղի սեփական կանոններ հաստատելը»՝ սեփական ոճ պարտադրելն ու այն որոնելի դարձնելը, ստիպված եք օգտագործել այլոց արդեն իսկ արմատավորած որոշակի սկզբունքներ, որոնք մատչելի և ընկալելի կդարձնեն ձեր գործը:

Լուրի, թղթակցության, ռեպորտաժի, հարցազրույցի պարագաները պարզ են և որոշակի. կան յուրաքանչյուր ժանրը բնորոշող ձևեր և արտահայտչամիջոցներ, որոնք նաև հստակ կառուցվածք են ենթադրում:

Թեման և հավաքված նյութը ևս հուշում կան պարտադրում են իրենց ժանրային արտահայտչաձևերը:

Բացի այդ՝ արդեն իսկ առիթ ենք ունեցել խոսելու ժուռնալիստիկայի «թեթև» ժանրերը նյութականացնելու թե հոգեբանական, թե պրոֆեսիոնալ հնարքների մասին, ուստի ստորև կկենտրոնանանք վերլուծության (հոդված, ակնարկ, էսսե) վրա, որոնք չնայած իրենց ժանրային էական տարբերություններին և առանձնահատկություններին, ներքին կառուցվածքային և տրամաբանական ոչ նվազ էական ընդհանրություններ ունեն մաև:

...Գտեք լիդը: Այս դեպքում, ճիշտ է, այն նույն նշանակությունն ու ծավալը չունի, ինչ նորության պարագայում, բայց և նվազ կարևոր չէ: Ձանագեք, որ այն ինքնատիպ լինի. մանավանդ՝ ծավալի առումով սահմանափակված չեք: Ոչ ինքնատիպ սկիզբը նույնքան տաղտուկ շարունակություն կարող է ենթադրել անգամ ինքնաբերաբար, մինչդեռ գտնված մուտքը նորի որոնումներ, բացահայտումներ և հայտնություններ կպարտադրի:

Գտեք ճշգրիտ բառերը: Որոնք ստույգ կբնութագրեն ինչպես իրավիճակը, որը դուք ցանկանում եք նկարագրել, այնպես էլ՝ ձեզ, ձեր ոճը, ձեր ընկալումները: Ստույգ բառ, որը կոչված է նույնքան ստույգ նպատակի: Հոմանիշները հենց դրա համար են. ընտրություն կատարելու հնարավորություն տալու: Ու, քանի որ արդեն սովոր ենք ցանկացած տեսական միտք օրինակով ամբողջացնելու՝ չխուսափենք դրանից և այժմ:

Այս անգամ մեր աղբյուրը Նապոլեոնն է: Խոսելով Կեսարի դեն Բ.Օ.Ա. 47 թ. վետերանների բարձրացրած խռովության մասին, Բոնապարտը նշում է, որ զորքի դժգոհությունն ու զայրուքը այն աստիճան էր, որ ցանկացած բանագնացի, անկախ նրա աստիճանից ու զբաղեցրած դիրքից, սպանում էին: Եվ, վերջապես, այդ ցասումնալից, զինավառ ամբոխը հավաքվում է Մարսյան դաշտում: Կեսարը դուրս է գալիս նրանց առաջ ու բարձր ձայնով, ու խիստ չոր տոնով, անկարեկից հարցնում. «Ի՞նչ եք ուզում»:

-Մենք վիրավոր ենք ու հոգնած,-պատասխանել են նրան,-բավական երկար է արդեն, որ թափառում ենք աշխարհով մեկ ու արյուն ենք թափում. մենք հեռանալ ենք ուզում:

Կեսարը կտրուկ պատասխանել է.

-Համաձայն են:- Փոքր ինչ լռելուց հետո նա ավելացրել է, որ մի քանի շաբաթից նոր արշավանքի է մեկնում և երբ նոր հաղթանակներ կտոնի նոր զինվորների հետ՝ կանի մաև իր նախապես

խոստացածը: Ելնելով տեղից՝ նա դրանով էլ մտադիր է եղել սահմանափակել իր խոսքը, բայց նրա մերձավորագույն զինակիցներն ու օգնականները խնդրել են մի քանի բարի խոսք ասել հին ընկերներին, ում հետ այդքան փառք է վաստակել և այդքան փորձություններ հաղթահարել: Կեսարը նստել է կրկին և սկսել. «Քաղաքացիներ...» (սովորաբար նա նրանց «զինվորներ» կամ «ընկերներ» էր կոչում): Ջինավառ ամբոխը հազարաձայն առարկել է. «Մենք բնավ էլ քաղաքացիներ չենք, մենք զինվորներ ենք»: Ի վերջո, գրում է Նապոլեոնը, այդ հուզիչ տեսարանն ավարտվեց նրանով, որ նրանք խնդրեցին Կեսարին շարունակել իրենց ծառայությունը: Կեսարը ներեց նրանց բոլորին, բացի տասներորդ լեգեոնից, սակայն նա էլ հետևեց նրան դեպի Աֆրիկա իր արշավանքի ընթացքում, բայց ասես՝ առանց հրամանի:

Համոզվեցի՞ք բառի ստույգության ազդեցության մեջ: Այնպես որ՝ ընտրեք միայն այն բառերը, որոնք ձերն են և ձեր նկարագրած երևույթինը միայն:

Ստույգ բառերի կապակցությունն էլ իրենից ստույգ միտք-ձևակերպում է ենթադրում: Միայն այդպես կարող եք դուք ձեր ոճը նախ ստեղծել, ապա՝ պարտադրել լսարանին: Իդեալ՝ ոճի մասին: Այն ևս պետք է ընտրել նույն ստույգությամբ, որպեսզի չխաթարվի առայժմ ձեր մտքում եղած, բայց շուտով թղթին հանձնվելիք ամբողջական կառույցը:

Լավ, գտնված, ընթերցողի ուշադրությունը գրավող լիդից հետո հնարավորինս արագ անցեք բուն նյութին՝ նյութի «ծանր» հատվածներին:

Դինամիկ, աշխույժ և կենդանի պատում ապահովեք ողջ նյութի համար:

Դրան կարելի է հասնել կարճ նախադասություններ, ակտիվ պատկերներ և կենդանի խոսք օգտագործելու միջոցով:

Մանրամասներն ու դետալները վերջնականապես ընտրելու պահն է: Վերհիշեք, թե ինչ և քանի «մաղերով» են անցել դրանք մինչև «սպիտակ թղթի առաջ» հայտնվելը: Թող այդ զգացողությունները ձեզ հնարավորություն տան վերջնականապես խմբագրելու և հղկելու օգտագործվելիք մանրամասները, որովհետև այլևս դրանց այս կամ այն կերպ անդրադառնալու հնարավորությունը չեք ունենալու:

...Տեսակետների բախման պահն է: Առանց որևէ մեկին նախապատվություն տալու, անկիրք և անկողմնակալ շարադրեք եղած կարծիքներն ու տեսակետները: Հիշեք, որ դուք առաջինը չեք այդ գործում: Որպես «մխիթարանք» մեջբերենք պատմահայր Չերոդոտոսին (Ք.Ծ.Ա. 5-րդ դար). «...Պարսից գիտունները պատմում են, թե թշնամության պատճառը եղել են փյունիկեցիները: Սրանք եկել են Կարմիր կոչված ծովից մեր ծովը և բնակեցրել այն երկիրը, որտեղ մինչև այժմ էլ ապրում են: Նրանք անմիջապես ձեռնարկել են հեռավոր ծովագնացություններ: Եգիպտական և ասորեստանյան ապրանքները փոխադրելիս, նրանք, այլ երկրների թվում, ժամանել են նաև Արգոս. Արգոսն այդ ժամանակ ամենահայտնի (քաղաքն) էր այժմ Չելլադա կոչվող երկրում: Փյունիկեցիներն, ահա, ժամանելով Արգոս, ափ են դուրս բերում իրենց բեռը: Իրենց ժամանման հինգ թե վեցերորդ օրը, երբ արդեն համարյա իրենց ամբողջ ապրանքը վաճառվել էր, ծովափ է գալիս, բազում այլ կանանց հետ, նաև արքայի դուստրը. նրա անունն էր, ինչպես իրենք՝ հելլենները ևս ասում են՝ Իո՝ դուստր Ինաքոսի: Կանայք, կանգնած նավախելի մոտ, գնում էին իրենց առավել հավանած իրերը, երբ փյունիկեցիները, տրված հրահանգի համաձայն, նետվում են նրանց վրա: Կանանց մեծ մասը, իհարկե, կարողանում է փախչել, բայց Իոն և մի քանի ուրիշները առևանգվում են: Փյունիկեցիները նրանց տանելով նավ, շտապում են մեկնել Եգիպտոս:

Պարսիկները պատմում են, թե Իոն այսպես է բերվել Եգիպտոս, մինչդեռ հելլենները այլ կերպ են պատմում, և այդ էլ դառնում է անարդարությունների սկիզբը: Այնուհետև, ինչպես պատմում են նրանք, ինչ-որ հելլեններ,-նրանք չեն կարողանում ամուսնանալ տալ,-ժամանում են փյունիկյան Տյուրոս (քաղաքը) և առևանգում արքայի Եվրոպե դստերը: Սրանք էլ, հավանաբար, կրետացիներ էին: Սրանով նրանք հավասարը հատուցում են փյունիկեցիներին: Բայց հետագայում հելլենները երկրորդ անարդարությունն են պատճառում (բարբարոսներին): Ռազմանավով նրանք նավում են դեպի Այա, Կոլխիսում և Փասիս գետը. այստեղ նրանք, վերջացնելուց հետո բոլոր այն գործերը, ինչի համար ժամանել էին, առևանգում են արքայի դուստր Սեդեային: Երբ կոլխերի արքան դեսպան է ուղարկում Չելլադա, հատուցում խնդրելով վիրավորանքի համար և ետ է պահանջում իր դստերը, հելլենները պատասխանում են, թե՝ քանի որ իրենք արգիվուհի

Իոյի համար հատուցում չեն ստացել, ուստի և իրենք (կոլխերին) ոչ մի հատուցում չեն տալու:

...Բայց փյունիկեցիները նույնը չեն պատմում Իոյի առևանգման մասին, ինչ պարսիկները: Նրանք ասում են, թե Իոյին իրենք բռնի չեն առևանգել ու տարել Եգիպտոս, քանի որ նա դեռևս Արգոսում սեռական կապ էր ունեցել նավատիրոջ հետ: Երբ նա զգացել է, թե հղի է, ամաչելով իր ծնողներից, ինքը կամովին մեկնել է փյունիկեցիների հետ, որպեսզի իր արարքը չբացահայտվի:

Այսպես են պատմում պարսիկները և փյունիկեցիները, ինչ վերաբերում է ինձ, ապա ես համձն չեմ առնում ասելու, թե այդ ամենը իրո՞ք այդպես է կատարվել, թե՞ այլ կերպ»:

Հանդգլեցի՞ք: Ուստի դուք էլ հետևեք Հերոդոտոսին և հնարավորինս անաչառ ներկայացրեք տեսակետները՝ թող ընթերցողը ինքը կողմնորոշվի: Ծիշտ է, դուք ևս ձեր տեսակետն ու կարծիքն ունենալու իրավունքն ունեք և դա են պահանջում ու ապահովում նաև ժանրային առանձնահատկությունները, սակայն դրանք արժե հայտնել հնարավորինս նուրբ և չպարտադրող ոճով՝ առանց բռնանալու յուրաքանչյուրի ընկալման ազատության վրա ու նաև՝ եղած բոլոր տեսակետները ներկայացնելուց հետո միայն:

Իսկ առավելագույն անաչառություն և բազմակողմանիություն ապահովելու համար մեկ անգամ ևս կարդացեք Ակուտազավայի «Թավուտում»-ը:

Տարբեր դիրքորոշումներ ներկայացնելուց հետո գուցե արժե զուգահեռներ՞ր անցկացնել: Չէ՞ որ դրանք անպայմանորեն լրացնելու և ամբողջացնելու են նյութը, ավելի են հստակեցնելու և որոշակիացնելու ձեր բուն ասելիքը:

Կարծես թե հասել ենք արդեն որոշակի հաստատում-հերքումների «փուլին»: Աշխատեք դրանք տալ ոչ թե վերաշարադրանքով, այլ ուղղակի խոսքով՝ համապատասխան հղումով իհարկե, որովհետև խոսքի այդ տեսակը ոչ միայն ավելի համոզիչ և կտրուկ է հնչում, այլև որոշակի հստակ պատասխանատվություն է ենթադրում, որը վերաշարադրանքի դեպքում պարզապես տարրալուծվում է, իր հետ մեկտեղ անորոշ դարձնելով թե խոսքը, թե նյութի տվյալ հատվածի ողջ տրամաբանությունը:

Նյութի հաստատում-հերքումների հատվածին, բնականաբար, պետք է հաջորդեն մեկնաբանությունները, որոնք ևս ցանկալի է, որ հնարավորինս որոշակի և հստակ լինեն՝ ճիշտ կատա-

րելու համար իրենց կողմնորոշիչ գործառույթները: Որովհետև հենց դրանց վրա է հիմնվելու նաև վերլուծություն-եզրակացություն-ամբողջացումը:

Հետևողականորեն մոտենում ենք վերջաբանին, որն իր ամփոփիչ գործառույթը կատարելուց զատ, պետք է ընթերցողի համար ամփոփի և արժևորի երևույթը կամ իրադարձությունը, մարդուն կամ գործը, պատճառը կամ հետևանքը:

Ինչպես և նախաբանի դեպքում՝ ինքնատիպ ավարտ պետք է գտնեք. այնպիսին, որը արժանիորեն ոչ միայն նյութը կամբողջացնի, այլև տվյալ նյութին նվիրված ձեր ողջ աշխատանքը:

«Նայել-տեսնել-ընկալել-տեղեկությունների ամբարել-մտածել-արժևորել-պատկերել» շղթան ամբողջանալով՝ պետք է փակվի: Մինչև հաջորդ նյութ:

Բայց մինչ այդ արժե խստապահանջ խմբագրի օտարոտի և անկիրք հայացքով մեկ անգամ ևս կարդալ նյութը. ներքին և արտաքին կոմպոզիցիոն վերջին անհրաժեշտ շտկումները և լրացումները կատարելու նպատակով:

Դա ձեզ համար ևս էական ու կարևոր փուլ է, որովհետև անկախ նրանից, որ նյութը ձերն է, միևնույն է՝ դուք նյութն առաջին անգամ եք իր ամբողջության մեջ տեսնում...

...Հիմա արդեն հանգիստ խղճով կարող եք վեր կենալ գրասեղանի առջևից:

Ազատ եք:

Մինչ այն պահը, իհարկե, երբ հերթական «քարը» կընկնի «լճակի» մեջ...

ԱՅԴԻՆ ՄՈՐԻԿՅԱՆ

ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱ

*ԻՆՉ
ԻՆՉՈՒ
ԻՆՉՊԵՍ*

AYDIN MORIKIAN

JOURNALISM

*WHAT
WHY
HOW*

Ծավալը՝ 18.75 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 500

«ՎԵԼԱՍ ՊՐԻՆՏ» ՍՊԸ
Եր-ան 375012 Վաղարշյան 12
Հեռ. +37410 27 38 10